Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

U.t.
1349

1999

Ա.Ե.
1349

ԾԵՐԵՆՑԻ

ԵՐԿՈՒՆՔ

Թ. ԴԱՐՈՒ.

---

*Եւ նշան մեծ երեւեցաւ յերկինս,
կին մի . . . էր յղի եւ ճչէր յերկնելն
եւ բազում վշտօք մերձ էր 'ի ծնանել
. . . Եւ ծնաւ կինն արու, որ հանդեր-
ձեալ է հովուել զհեթանոսս գաւազա-
նաւ երկաթեաւ։*

Յայտնութիւն.

ՏՓԽԻՍ.
'Ի Տպարանի Յովհաննիսի Մարտիրոսեանց։
1879

Дозволено цензурою, Тифлисъ, 16 Іюня 1879 г.

2Ֆ-1357

Тип. И. Мартиросіанца, на Орбеліан. улицѣ, д. 5 №

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Гос. Библиотека ՀՍՍՌ-Арм. ССР им. А. Мясникяна Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
1349-81

Քեզ որդեակ իմ սիրելի, ուրախութիւն իմ և մխիթարութիւն, որ երբեմն 'ի սուգ՝ 'ի լռութիւն և 'ի միայնութիւն մեր երկուսին կենաց տխրութեան, հօրդ հեղգ գրիչը ոգևորեցիր գրելու գիրքս, առ ընդունէ 'ի նուէր՝ յոր գիս յորդորեցիր՝ այս Երկասիրս, ձայն սրտի հայրենի հառաչանաց Տերենցիս։

1879 Յունիս 1. Տփխիս.

ԵՐԿՈՒՆՔ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ.

ՍԱՍՈՒՆ.

Հայոց Յ. Թուականին և Քրիստոսի Թուականն 851-ին սաստիկ ձմեռ պատել էր Տարօնոյ գաւառը, դաշտը ձիւնը ծածկել ճերմկցուցել էր բոլորովին, իսկ Սասնոյ լեռը ձեան և սառուցի զանգուած մ'էր ահարկու: Ո՜վ կըսէր թէ այդ բարձրութեան մէջ՝ այդ սառնամանեաց մէջ կեանք՝ և մարդկութիւն կը շնչէին:

Վարը դաշտը՝ Մուշ քաղաքին մէջ մահ և լռութիւն կը տիրէին, և Տօրոսի այդ սարը լի էր կենօք և շարժմամբ: Բուքը օդին մէջ շրջմոլիկ կը հոլովէր, մարդ ձիւներուն մէջ կ'ելնէր՝ կ'իջնէր՝ կը սողար՝ կը սահէր՝ և այնպիսի եղանակին այնպիսի շարժմունք ընել այն լեռնաբնակ ժողովուրդը միայն կրնար, ժողովուրդ՝ որ ցրտին սաստկութեան և ամառուան տաքութեան դէմ մի և նոյն բուրդէ զգեստը միայն ունէր և այծի մորթէ կօշկաձև օդ ոտից. գարի և մանաւանդ թէ կորեակ իրեն հացը կը մատակարարէին,

վասն զի այդ բարձրութիւնն և ժայռերուն հողէ սակաւութիւնն այն միայն կուտար իրենց աշխատութեանց և սաստիկ տառապանաց: Իրենց բնակութիւնները հեռի էին 'ի միմեանց, և այդ պատճառաւ շատ անգամ իրարու լեզուն հազիւ թէ կ'իմանային, և լեզու թէպէտ հայ՝ բայց օտարացեալ կը համարուէր, 'ի շրջակայից՝ և թարգմանի կարօտ իմանալի լինելու համար: Եւ այդ սարերու բարձրութեան մէջ ժողովուրդը անբաժանելի ունէր իւր նիզակը, որ իւր զօրութիւնն էր ընդդէմ գազանաց և ընդդէմ թշնամեաց և 'ի պաշտպանութիւն իւր իշխանաց՝ որ 'ի Մուշ կը նստէին և որոց ակնարկութեան անմռունչ կը հնազանդէր տիրասիրութեամբ:

Բայց ի՞նչ էր պատճառ որ այդ մրրկային ժամանակին բոլոր Խութ լեռը կը շարժէր: Մութը արդէն սկսեր էր իջնել, և բոլոր Սասունցիք կը դիմէին լերան հիւսիսային կողմը որ դէպ 'ի դաշտ կ'իջնէր: Այն տեղ եկեղեցւոյ մը առաջ կանգնած էին երիտասարդ տղայք և տխուր դաշտին կը նայէին. շատին աչքերը արտասուք կը փայլէր, և ցուրտին հետևանք միայն չէր այդ արտասուքը. դաշտեցիք էին այդ երիտասարդքը, շղթայից և գերութեանց ազատեալ լեռը ապաստաններ էին, ոմանք զէնք ունէին, իսկ ոմանք անզէն էին:

Նոյն միջոցին Տէրտէրը եկեղեցւոյ դռնէն կ'ելնէր, ուրիշ Քահանայի մը ընկերակցութեամբ և մեծ ձայնով կ'ըսէր իւր լեռնցւոց:

— Տղա՛յք, շո՛ւտ, հիւրանոցը կրակ վառեցէք, այդ եղբարց ուտելիք բերէ՛ք. չէ՞ք տեսներ որ դոքա դաշտեցի են, այս մեր ցրտին չ'են դիմանար. մենք էլ ձեր ետևէն կուգանք:

Իսկ միւս քահանան լուռ՝ անխօս կանգնեցաւ դէպ 'ի դաշտն ակնարկ մը ձգեց՝ ուր բուքէ ամպէն բան մը չէր տեսնուել, վերջը դառնալով երիտասարդներուն որ գլխիկոր և յուսահատ՝ աչքերնուն ծայրով իրեն կը նայէին,

— Մե՜ծ է Աստուած, մեծ է Լուսաւորչայ բարեխօսութիւնը, ո՜վ տղայք, ըսաւ. ի՛նչ կը յուսահատիք, այսօրուան յաղթողը վաղուան գերին կրնայ լինիլ, քաջ եղէ՛ք, յանցանքը մեր իշխաններուն է որ անհաւատին խօսքին և երդման կը վստահանան, և յիմարաբար կ'երթան նոցա ճանկը կը մտնեն, և ժողովուրդն էլ այդ անզգամներուն աւար կ'ըլնին: Բայց Աստուած մեծ է մի՛ յուսահատիք:

Եւ կէս մը քայլելով՝ կէս մը վազելով ամենքը կը հետևէին լեռնցի Տէրտէրին որ առջևէն կ'երթար և կ'առաջնորդէր հիւրանոցը:

Այս շէնք մ'էր մասամբ հողի մէջ թաղեալ և մասամբ հողէն դուրս, բաւական ընդարձա-

կութեամբ, որ դուռ մը միայն ունէր և մէկ կողմը կրակարանը, ուր արդէն քանի մը ահագին կոճղ տաքութեան լոյս սկսեր էին ծաւալել իրենց մօտը՝ որ մեր կէս սառած երիտասարդաց մխիթարութիւն էր։

«Հիւրասէր՝ օտարընկալ և պատուադիր» Սասունցիք իրենց աղքատիկ գարւոյ և կորեկի հացը՝ տաք թան ապուրը՝ չոր և աղի պանիրն ու լերան մեղրը առատաբար դաշտեցի եղբարց առջև դրին՝ լցուցին, և իրենք ալ մէկ մէկ պատառ առնելով խեղճերուն քաջալեր կը լինէին որ ուտեն զօրանան. «Ո՞ գիտէ, ե՛ղբարք, կ՚ըսէին, կարելի է վաղն աշխատիլ պէտք լինի և դուք զօրութեան պէտք ունիք։ Կերէ՛ք, եղբարք, համարեցէք թէ բուն ձեր տանն էք։»

— Այո՝ կ՚ըսէր երիտասարդ դաշտեցի մը դառն ծիծաղով, բուն մեր տունն հիմա բաց երկնքին տակն է, իսկ մեր ընտանիքը, ո՜ գիտէ Արաբից որ կողմն կը գտնուին՝ եթէ ո՞ղջ են։

Եթէ ո՜ղջ են — կրկնեցին քանի մը երիտասարդք, և քանի մի ձեռք բռնցի աչք կը սըրբէին և ոմանք հացին պատառը արտասուաց աղով կը թանային։

Էլ ժամ էր, վասն զի այդ վայրկենին ոչ մէկուն քով ախորժակ չի մնայ բերանը հացի պատառ դնելու, և հիւրընկալ քահանան կանգ-

նեցաւ «Զկերողս Աստուած օրհնեսցէ.» ըսաւ ու խաչակնքեց. և աչքը դէպ 'ի սրահին խորութեան դարձուց և մութին մէջ զննեց տեսաւ բազմութիւն աշտէից որ իրենց փայլէն կը նշմարուէին, և բազմութիւնն այնչափ սկսեր էր շատնալ որ մարդկային շունչի ամպ կը ձեւացընէր։

— Գիւղապետ եղբարք, մօտ եկէ՛ք, ըսաւ Տէրտէրը, ի՛նչ մթութեան մէջ կը ծածկուիք, երևալու օր է, Սուրբ Կարապետ՝ Տարօն՝ նախարարք՝ իշխանք՝ քահանայք և ժողովուրդք մեր Սասնոյ լեռն 'ի վեր կը նային. ահա մեծ վանքէ եկած կոնդակը, — և ձեռը ձգեց՝ ցցուց ժողովրդեան կրկին կնիքներով մագաղաթ մը, — ես այս գիրը եթէ կարենամ ալ կարդալ անօգուտ է, և դուք լեզուն չ՚էք իմանար. բայց իմաստը ամենքս գիտենք, այսօրուան բան չ՚է, հին պատմութիւն է. հարիւր տարի և աւելի է որ այդ նզովեալ Արաբը մեր դաշտերը կ՚իջնայ՝ կ՚ողողէ եթէ Ս. Կարապետի օրհնենք չը լինէր՝ եթէ Լուսաւորչայ զօրութիւն չ՚լինէր՝ այդ դաշտի երես մէկ Քրիստոնեայ չէր մնալ, հայու անուն ոչնչացել էր Տարօնոյ մէջէ։ Բայց մե՛ծ է զօրութիւն Քրիստոսի, այս օր Արաբ կուգայ՝ կը ջարդէ գերի կը տանի Հայը, վաղը Հայը կ՚իջնէ Արաբին վրայ՝ ամենքը կը ջարդէ՝ կիրճերը կ՚առնու մէկ հատ չի փախ-

ցընէր, բայց ի՛նչ օգուտ, երկու տարի չի տևեր այդ նզովք ազգը դարձեալ կուգայ և աւելի զօրութեամբ և անհամար. Հայը պէտք է համբերէ մինչև որ գայ՝ դանակը ոսկրին կրթնի՝ է՛լ համբերելու ճարը հատնի, այն ատեն սքած գառը առիւծ կը դառնայ, լեռն ու դաշտը կը գոռան. Հայը յանկարծ կանգնեցաւ, մեռելն էր յարութիւն առաւ, անհաւատը դաշտը գլխակով կը պարպտացնէ։ Հարիւր տարի ըսի, հարիւր յիսուն էլ կայ որ մենք այդ խաղը կը խաղանք, ոչ նոքա ձանձրացան զմեզ զերելէ և ջարդելէ, ոչ մենք զանոնք կոտրելէ ու անհետ ընելէ։ Բայց Աստուծոյ կամքը պէտք է կատարի, մինչև որ Ս. Կարապետ իւր զօրութիւնը ցընէ և մեզ կարողութիւն տայ բոլորովին ջնջելու այս անօրէն ժողովուրդը։ Դուք գիտէք եղբա՛րք և որդեա՛կք, թէ մեր Բագարատ իշխանը ելաւ գնաց այդ անհաւատ Արաբին, որ բարեկամ ինքզինք կը ցընէր՝ որ երդում կ՚ընէր իր մարգարէին վրայ՝ իր օրէնքին վրայ որ նորա վնաս ամենևին չ՚հասցնէ, և գիտէք ի՞նչ եղաւ. որովհետև մարգարէն սուտ էր՝ օրէնքն անօրէնութիւն էր, երդմունքին դրժեց. Բագարատը զաւկըները՝ ընտանիք՝ ամէնքը շղթայեց, ղրկեց Արաբստան, և ինք նստեր՝ նորա Մշու պալատն սառած մարմինը կը տաքցնէ, Լուսաւորչայ հա-

ւատքը օրը հինգ անգամ կը հայհոյէ և ա՛յդ Ս. Կարապետի աչքի առաջ՝ քթին տակ. Աստուած այդպիսի բան չի ներէր, դորա վրէժը կը լուծէ։ Մինչև ե՞րբ ուրեմն քնենք, Սասնցին ե՞րբ ցրտէն թմրած է որ հիմա թմրի. եթէ արևուն ճառագայթ այդ սևերես ազգը կը զօրացընէ՝ ցուրտն էլ հայուն զօրութիւն պէտք է լինի։ Գիւղապետ եղբա՛րք, խորհեցէք և ի՛նչ ընելիքնիդ որոշեցէք, վասն զի Ս. Կարապետ վտանգի մէջ է։

Քահանային այս երկայն քարոզէն վերջ խոր մռնչիւն մը ելաւ հիւղական սրահին մէջ, ամէն մարդ իւր ընկերոջ հետ կը խօսէր եղածին և ընելիքին վրայ, բայց ոչ ոք մեծ ձայն մը չ՚էր արձկեր, իբրև թէ ամէն ոք կարծիք ունէր, բայց ոչ ոք քաջասրտութիւն զայն համարձակ խօսելու։

Վերջապէս երիտասարդ մը ելաւ ուժով ձայն մը ձգեց. — Եթէ, ամէնքդ կը խօսիք և ոչ մէկդ կը խօսիք. ո՞ւր է Յովհան գիւղապետը, նա ինչո՞ւ չի խօսիր, միթէ նա կարծիք չ՚ունի՞, եթէ նա կարծիք չ՚ունի՝ ի՞նչ ենք կեցեր. երթանք ամէն մարդ իւր տունը։

— Տղա՛յ, դու լուռ կա՛ց, ըսաւ ծեր մը սաստելով. խօսքը քե՞զ ընկաւ։

— Մկր եղբայր, մի՛ սատէր, տղան լաւ խօսեցաւ.

— Ո՞ւր է Յովնան, Յովնա՜ն, Յովնա՜ն — գոչեցին քառասուն ձայն միաբան. և ահա սրահին մէկ կողմէն դուրս եկաւ միջահասակ մարդ մը, որ երեսին գոյնով տարբերութիւն չունէր յոչ ոքէ. արևը՝ քամին՝ տաքն ու ցուրտը փչեր էին այդ երեսին վրայ. բայց երկու խոր աչքեր ունէր որ երկու փայլուն սլաք էին երկաթեայ և թափ կ՚անցնէին՝ երբ նկատէին դիմացնին սրտին խորը իբր թէ կը տեսնէին։ Կլոր գլուխ՝ քառակուսի դէմք՝ ջղային՝ մուտ կազմուածք քառասնի չափ տարիք, ահա՛ մարդը որ Յովնան կը կոչուէր։

Յովնան ոչ միայն Սասունցւոց անբաժանելի աշտէն ձեռքն ունէր, այլ մէջքն երկայրի սուր մը գօտւոյն մէջ կ՚երևէր։

— Խօսէ՛ Յովնան, դո՛ւ խօսէ, ըսաւ ժողովուրդը միաբերան, և երբ ամէնքը լռեցին՝ այսպէս խօսեցաւ Յովնան.

— Մտիկ ըրէ՛ք ինձ, ով Խոյթի ժողովուրդ, եթէ դուք կ՚ուզէք Ս. Կարապետ փրկել այդ նզով Արաբներէ, եթէ դուք կ՚ուզէք Բագարատայ վրէժը հանել՝ այս Ս. Սարգսի շաբաթը մի՛ կորսնցնէք՝ անհոգ մի՛ նստիք. այս բուքը ո՜ գիտէ թերևս վերջինն է այս ձմրան, քանի որ

այդ տաք դժոխքի սատանաները սառած՝ թմրած՝ ընդարմացած նստել են մեր խեղճ քաղքցւոց տուները, քանի որ վառարանէն չեն կրնար հեռանալ անօրէնները, ժա՛մ է նոցա վրայ յարձըկելու. փառք Աստուծոյ մենք լաւ անդամներ ունինք որ ցրտուն ալ կը դիմանան տաքուն ալ. իսկ թէ հարցնէք թէ ե՛րբ պէտք է յարձակիլ քաղքին վրայ՝ ես կ՚ըսեմ թէ հիմա՛ այս բուքին՝ այս ձիւնին. ասկից մինչև Մուշ կը հասնինք չորս ժամու մէջ և մենք քաղաք կը մըտնենք՝ երբ աւազակները թմրած՝ առաւօտու քունին են ընկղմած. իսկ երբ քաղաք մտնենք ամէն մարդ խղճմտանքին հարցնէ թէ ի՞նչ պէտք է ընել։ Ահա՛ ես վերջացուցի։

Լռութիւն մը տիրեց աս խօսքերուն վրայ և ոչ ոք ձայն չի հանեց, միայն բարի Տէրտէրը ան ատեն պարտք համարեց ըսել.

— Յովնան եղբայր դու տեղեկութիւն ունի՞ս այդ մարդկանց սովորութեան վրայ՝ նոցա զօրութեան վրայ որ այդպէս համարձակ կը խօսիս։

— Ի՞նչպէս չունիմ. ես երկու ժամ չի կայ որ տունս եմ մտեր, այն օրէն որ Բագարատ իշխանը անօրինաց գերի գնաց ես հանգստութիւն չունիմ. ամէն կողմ շրջեցայ՝ ամէն տեղ դիտեցի թէ հնարք կա՞ր զնա ազատելու. քսան երսուն հոգի լաւ հայ՝ լաւ Քրիստոնեայ հետս

առած ուժ օր շարունակ նորա շաւղին հետեւեցայ. բայց տեսայ ճար չ'կայ, ամեն ջանք անօգուտ պիտի երթայ և մեր կորիճ տղայք փուճ զոհ պիտի երթան. դարձայ իմ ճամբէս, եկայ Ս. Առաքելոյ եկայ գիտելու համար թէ ի՛նչ կ'ընեն անօրէնները տեսայ որ անհոգ և անփոյթ կը նստին. չ'է ո՞ր Տարօն գերեզման կ'ընեն, չ'է՞ որ կենդանի ոչ ոք չի կայ: Եթէ իմ ձեռքին այս առտու հինգհարիւր մարդ լինէր՝ մէկ շնչաւոր այդ աւազակներէն չ'էր ազատեր:

— Տէ՜, տղա՛ք, ի՛նչ կեցեր ենք . . երթա՜նք, երթա՜նք ուր որ Յօհան մեզ կը տանի, երթա՜նք գոռաց մէկը. —

— Երթա՜նք . . . կ'ըսէին հարիւր ձայն մէկտեղ, և ժխոր մը տիրեց այդ ամբոխին մէջ որուն մէկ մասը ներս չի կարենալով մանել՝ դռնեն դուրս մնացել էր:

ԳԼՈՒԽ Բ.

ԺՈՂՈՎՈՒՐԴԸ.

Ձիւնը իւր մըրըկան հեղեղը կը շարունակէր, քամին զանի կը տարուբերէր, և մարդոց շատ դիւրին չ'էր այդպիսի ժամանակին տնէ դուրս ելնել. ուստի երբ կէս գիշերն անցաւ և հա-

զարի չափ նիզակաւորք ժողովեցան Սարասեպ գիւղին դիմաց որ դէպ 'ի Մուշ կը նայէր, էլ չի համբերեց Յօհան, և առջևէն սկսաւ սահիլ փայտեայ ոտնամաններով որ այդ լերան բնակչաց յատուկ էր 'ի վաղ ժամանակաց հետէ որով չ'են խրիր ձիւնին մէջ: (1) Ինք լաւ գիտել էր թէ քամին իրենց ետևէն կը փչէր, ուստի այս էլ բաւական դիւրութիւն մ'էր այդ սոսկալի ճամբորդութեան՝ մանաւանդ երբ գրեթէ ապահովութիւն կար 'ի չիք դարձնելու բոլոր այդ Իսմայէլեան բանակը՝ ամեն դժուարութիւն իրեն համար ուրախութիւն էր և բոլոր Սասուն գիտէր թէ այդ մարդը յոգնիլ՝ վհատիլ չ'էր գիտէր, վտանգ զէնքն երբէք ահաբեկել չ'էր, ուստի ինք կը սահէր և ետևէն ամենքը կը քայլէին. և վերջը՝ ըստ հին սովորութեան՝ այս ձիւնի վրայի ճամբորդութեան մէջ կռունկներու պէս առջինները քիչ քիչ ետ կը մնային, վերջինները առաջ կ'անցնէին: Տխուր լուսին առանց երևելու աղօտ լոյս մը կը ձգէր երբեմն սպի-

---

(1) «Իսկ վասն ձեանն անկայուն զօրութեան որ այն ինչ «յանկարծ 'ի վայր գեղեալ լինէր, հնարաւորեալ խորհեաց «փայտս երկս զանուլս չուանօք պարանակեալ շուրջ զո- «տամբք՝ դիւրաւ ընթանան 'ի վերայ ձեան երկս ընդ- «ցամաք երկիր:»

Թովմա Արծրունի

տակ ձիւնին վրայ և ամեն սեւնիւթն տեսանելի կ՚ըլլէր՝ թէպէտ բան մը չի կար որ ճերմկած չըլլէր։ Մեր խումբը լռիկ կը շարունակէր իր ճամբան, ժամերն կ՚անցնէին՝ գիշերը կը կար-ճէր, արշալոյսը հեռու չէր՝ երբ յանկարծ մեր խմբին պարագլուխը որ երբէք չէր նահանջեալ՝ կանգ առաւ որ ամեն մարդ որ նորա ետին էր ինքնիրեն կը հարցնէր թէ ի՛նչ արգիլք կրնայ ըլլիլ։

Յովնան իւր ճամբուն վրայ տեսաւ անսովոր ձիւնադէզ բարձրութիւն մը, առջի մտածու-թիւնը նիզակի հարուած մը տալ եղաւ, բայց շուտ մը խելաբրեց և նիզակին բունը երբ ձիւնի դէզին մէջ մխեց՝ դիմադրութիւն մը զգաց, և մարդկանց աղաղակի ձայն՝ ձիոց փռնչել՝ զէնուց շառաչիւն ու ձեան դէզին ցիրուցան փլչիլ յայտնի եղաւ, ձեան տակէն չորս ձի և չորս մարդ դուրս ելան։

— Մարդի՛կ, դուք ո՞վ էք, բարեկա՞մ եթէ թշնամի, հարցուց Յովնան ուժով ձայնով մը.

Եւ այս խօսքին բարձրաձայն ծիծաղով պա-տասխանեց մարդ մը որ իւր ընկերներէն բարձր էր հասակաւ։

— Եթէ բարեկամ չըլլէինք՝ միթէ՞ ձեր ճամ-բուն վրայ՝ թէպէտ եղանակը այսչափ զուար-ճալի և այս վարդենեաց պարտէզս այսչափ գե-

ղեցիկ՝ կը յուսա՞ք թէ այս ձիւնէ տաղաւարիս տակ բնակէինք որ զձեզ դիմաւորենք. հա՜. հա՜. հա՜. հա՜։

— Կատակի ժամանակ չէ, ըսաւ Յովնան, ի՞նչ բան ունիք դուք հոս։

— Ես ալ ձեզ նոյն իրաւունքով կը հարցնեմ թէ դուք ի՛նչ բան ունիք հոս, մանաւանդ ես իրա-ւունք մը աւելի ունիմ ձեզմէ համար պահան-ջելու որ մեր տունը փլուցիք և թերևս մեզ մահուանէ ալ ազատեցիք. վասն զի ո՛ գիտէ թէ այս ձիւնը ո՞րչափ պիտի տևէ։ . . . Բայց դուք, բարեկամք, բաւական բազմութիւն էք, ո՞ւր այսպէս կ՚երթաք, այս ձիւնիս՝ բուքիս՝ հարսնիքի՞ ուրախութեան ըսեմ, սխալ չէ, վասն զի քաջ Սասնցիք իրենց սիրական զէնքէն չեն բաժնուիր ո՛ և իցէ առթի մէջ։

— Այո՛, հարսնիքի կ՚երթանք, Գուրգէն իշ-խան,, ըսաւ Յովնան լաւ մը զննելէն վերջ բարձրահասակ մարդուն դէմքը, և ժամանակ չի կորսնելու և մեր զուարճութեան մասնակից ըլլելու համար հրամայեցէք մեկտեղ երթալ։

— Ո՞ւր է ձեր արշաւանքը, եղբայր, ըսաւ իշխանը լրջաբար և կամաց ձայնով։

— Մուշ։

— Մօ՞տ ենք։

— Քանի մը քայլ մնաց, և ես լուսէն կը

վախեմ որ Իսմայէլի զաւկընները չիմանան։

— Ես հազիւ թէ զքեզ կը տեսնեմ որ առջեւս կը քալես, այդ անօրէնները ի՛նչպէս զքեզ կրնան տեսնել։

Իսկ Յովնան է՛լ պատասխան չի տուաւ, այլ սկսաւ քայլերը երագել վասն զի երեւակայեց թէ Գուրգէն բռնուած լինելով բուքի եւ այդ վիճակի մէջ ուրիշ ճար չի գտնելով ձիերը իրարու քով շարած՝ վրանին ծածկոցով ծածկելով տաղաւար մը շինած էին ձիւնին տակ, որ ձիով եւ իրենց շնչով զիրենք անվնաս պահած էր մինչեւ նոյն վայրկեան եւ ըստ բաւականին ալ ուրախ։ Իսկ հիմա ազատելով այն բանտէն բնական էր թէ հետեւէին այն խումբին որ կ'երթար հայ ազգին եւ կրօնին թշնամեաց դէմ։

Վերջապէս Յովնանու աչքերը նշմարեցին Մշոյ բարձրաբերձ եկեղեցւոյ գմբէթը որ քաղքին մէջ շինած էր Բագարատ իշխանը, ուստի կանգնեցաւ եւ երբ զօրքը շուրջ բոլորեցան, երեք խումբի բաժնեց զանոնք. մէկ մասը որուն ինք առաջնորդ կեցաւ՝ քաղքին հարաւային կողմէն պիտի մտնէր, մէկը արեւելեան կողմը պիտի շրջէր, իսկ միւսը դէպ, արեւմտեան հիւսիս։ Եւ այսպէս երեք խումբերն ալ յարձակեցան մտան քաղաք։ Երբ Սասնցւոց աղաղակը գոռաց քաղքին մէջ, երբ Արաբք յիմարեցան անխու-

սելի վտանգը հասած տեսնելով եւ իրենց թշուառութեան ձայնը ձգեցին, երբ գերինները որ նոցա խիստ ծառայութեան դատապարտուած էին ջուր եւ փայտ կրելու համար, ազատութեան եւ ուրախութեան ձայն բարձրացուցին, Եւսուֆ ոստիկանը, որդի Ապուսէթի, որ Բագարատայ պալատին մէջ երջանկաբար ցուրտէն լաւ պատըսպարեալ փետրայարդար անկողնոց եւ բարձից տաքուկ հանգստութիւնն կը վայելէր, այս խառնաշփոթ ժխորէն ընդոստուցեալ՝ շուարեցաւ մնաց. կը հարցնէր՛ կ'ուզէր իմանալ թէ ի՛նչ էր պատճառը։ Երբ իրեն իմացուցին թէ «գազանաբարոյ եւ արիւնարբու» լեռնցիք քաղաքը պաշարեր ներս են մտեր, շփոթութենէն թօղուց պալատը, փախաւ վազեց մտաւ Փրկչի եկեղեցին, եւ մինչեւ գմբէթին մէջ ելաւ, եւ տեսնելով թէ այդ բարձրութեամբ էլ ապահովութիւն չի կար իւր անձին՝ կը սառսրէր կը դողար, երբ Սասնցի խումբը պաշարեց զեկեղեցին, եւ մտնելով ոմանք գմբէթին մէջ եւ մերձենալով՝ մէկը նիզակով կռնկէն զարկաւ եւ թեւին տակէն թոքերն հանելով սատակեց։

Իսկ Գուրգէն իշխան նոյն միջոցին իւր ազգականները՝ Արծրունեաց պատանդները գտնելով, զանոնք բանտէն կը հանէր եւ ուրախութեան ու զուարճութեան օր մը այդ տխուր

օրուան մէջ կը կատարէին Սասունցիք թշնամեաց դիակաց և ճապաղեաց մէջ, և նոցա աւարը մէջերնին կը բաժնէին։ Ուրախութիւնը կը տիրէր, և խեղճ Խութեցին Արաբէն դիզած աւարը մէկդի՝ Բագարատ իշխանին գինուով ոչ միայն տաքցել այլ և թեթևել էր։ Երգերու ձայներ ամէն տեղ կը լսէին, մինչ փոքրիկ խումբ մը մարդկան Յովնանու ազդեցութեամբ և վրակեցութեամբ Փրկչի եկեղեցին կը մաքրէին բարբարոսաց գարշութիւնէն՝ դիակներէն և արիւնէն։ Եւ երկրորդ առաւօտուն եկեղեցւոյն գմբէթը կը բարձրանային փոխանակ Եուսուֆի՝ արաբացի մաղթանաց Խութեցւոց Սաղմոսերգութիւնք 'ի փառս Աստուծոյն տուողին յաղթութեան։ (1)

Նոյն օրն արևը վճիտ երկնից վրայ կը փայլէր, և ձեան անդրադարձութիւն աչքերը կը շլացնէր. Սանասնայք՝ բոլոր Մուշ քաղաքը 'ի խոյթ կը կրէին. Յովնան ձեռքերը ծալած այս տեսարանին կը նայէր, և յանկարծ այդ արթուն մարդը անձայն իրեն մօտեցող մը իմանալով գլուխը ետին դարձուց։

(1) «Եւ գիտեն զՍաղմոսն զՀէին Թարգմանեալն մարգարէացն Հայոց, զոր հանապազ 'ի բերան ունին։»

Թ. Արծրունի.

— Յովնան եղբայր, ըսաւ Գուրգէն, դու անգո՞րծ կը կենաս երբ աշխարհք կ'աշխատի։

— Աստուած զիս այդ աշխատութենէն պահէ, իշխան, պատասխանեց Յովնան, այդ բոլորն որ կը կրեն հայու ապրանք է. բարբարոսները ի՞նչ կը բերեն երբ Հայաստան կուգան. — իրենց սև երեսը՝ իրենց. գարշ կրօնքին քարոզութիւնն ու խաբէութիւնը և իրենց սուրը։ Բոլոր այդ աւարը Վասպուրականի և Տարօնի հայուն ստացուածքն է. Սանասնայք իրաւունք ունին իրենց սեփհականելու, որովհետև տէր չէ մնացել. բայց ես եթէ կարելի լինէր այդ ամէնը այս խեղճ ազատեալ գերեաց կը բաժնէի, որոնք ամէն բան կորուսած են և ո՜ գիտէ ո՛ւր և ո՛րոնց ստացուածքը եղել են իրենց կանայքն ու զաւակները.

Եւ այս խօսքերը զրուցելուն՝ գլուխը անդին կը դարձնէր կորովի մարդը ծածկելու համար երկու կաթիլ արտասուք որ իւր աչաց մէջ փայլեցան՝ բայց հոն մնացին գամուեցան, վասն զի իշխանութիւն ունէր նա իւր անձին մինչև իւր արտասուաց վրայ։ Ուստի Գուրգէն այս միջոցիս սկսաւ քննել այդ անսովոր մարդը որ հայ ժողովրդականի տիպն էր. դէմքին վրայ հաստատամտութիւն և կորով յայտնի կ'երևէին. և որ տեսնելով թէ դիտողութեան նպատակ է դի-

349-81

տացնէին՝ իւր սուր աչքերը իշխանին վրայ ձգեց շէշտակի և մեկ հայեցուածքով տեսաւ երիտասարդութիւն՝ վստահութիւն մինչև յանդգնութիւն և անհոգութիւն իւր քաջութեան և զօրութեան։ Պարզ երեսին վրայ փոքրիկ կնճիռ մը նաև չէր երևէր, երկու լուսալիր՝ զուարթ և մեծ սև սև աչքեր ուրախութեան փայլ կը սփռէին ո՛ւր որ նայէին. ամէն անդամները համեմատ էին և վայելուչ. հագուստը թէպէտ պարզ՝ ունէր իր պերճութիւնը, զէնքերը և սպառազինութիւնը թէպէտ երկաթեայ՝ բայց ունէին իրենց զարդերն ոսկւոյ և արծաթի. ձին՝ որ ծառայ մը բռնած կ'սպասէր քիչ մը հեռու Հայաստանի նժոյգ մ'էր անխառն և հարազատ՝ որ իւր տիրոջմէն աչքը չէր զատեր և փոքրիկ խնինջիւններով կ'իմացնէր իւր ներկայութիւնը։ Իսկ իշխանը դառնալով «Հիմա, Ցոլակ, հիմա» կ'ըսէր, և նա կը հանդարտէր։

— Երթալու միտք ունի՞ս, Գուրգէն իշխան, հարցուց Ցօնեան իւր անտարբեր կերպով։

— Այո՛, Ցօնեան եղբայր, պատասխանեց Գուրգէն, բայց մեր առջի խօսակցութիւնը այնչափ կարևոր է, որ չեմ կրնար առանց քանի մը հարցմունք ընելու քեզմէ բաժնուիլ։ — Հիմա դուք Սասնեցիքդ այդ քաջութեան գործը կատարեցիք, բայց վաղը ի՞նչ պիտի ընէք երբ

Ամիրապետը այդ Եուսուֆի տեղ նաղուպը՝ Իպրահիմը՝ Աբդլան յուղարկէ և ձեր Խոյթը 150,000 զօրք պաշարէն։ Ես այդ մտածութիւնն ունիմ երեկուընէ 'ի վեր, և կը վախեմ որ այս ուրախութիւնը տրտմութեան դառնայ և այդ աւարը տարին չի լրացած Արաբիոյ ճամբան բռնէ։

— Շատ կարելի է որովհետև մեր Հայը մարդ չէ։

— Է՜հ, ես ձանձրացեր եմ լսելէն թէ «Հայը անմիաբան է», «Հայը ազգատեաց է», «Հայը օտարասէր է», «Հայը անպիտան է», «Հայը վախկոտ է» և այլ այսպիսի սերտեալ խօսքեր, իբրև թէ նոքա որ այս խօսքերը կը զրուցէին Հայ և Հայու որդի չ'լինէին. իբրև թէ ուրիշ ամէն ազգ.ք՝ Ցոյն, Պարսիկ, Ասորի, Արաբ նաև միաբան և միահոգի լինէին. աշխարհիս երեսը ինչպէս մարդիկ դէմքով տարբեր են՝ նոյնպէս շահերով՝ գիրքով՝ բնաւորութեամբ տարբեր են. յիմար նաէ որ կ'ուզէ անկարելին կարելի ընել։ Ես գործադրելու բուն բանը քեզ կը հարցնեմ, որ ոչ միայն գործի մարդ ես այլ և կը տեսնեմ թե շատ խելօք մարդ ես։ Հայը եթէ մարդ լինէր՝ ի՞նչ պէտք էր ընել. այն զրուցէ՛։

— Հարցմունքը լաւ է, պատասխանն ալ պատրաստ է, բայց քեզի պէս պատուական և քաջ

երիտասարդ իշխանի մը կրնայ սիրտը վիրաւորել և զայրացնել, անոր համար չեմ ուզեր զրուցել:

— Խնդրեմ, և Հայութեան և Քրիստոնէութեան սիրոյն համար պարտք կը ձգեմ զրուցել:

— Ուրեմն զրուցեմ. Ո՛ւր որ Հայ կայ պէտք է միաբանին և առանց նախարարաց իրենց գլուխն ճարը տեսնեն ան ատեն թերևս Հայ ազգը իր փրկութիւնն գտնէ:

Այս անկարծելի խօսքին վրայ զարմացած մնաց իշխանը և կարմրութիւն մը ելաւ երեսին՝ բայց դարձեալ առանց կիրք յայտնելու ըսաւ:

— Քու այդ աստիճանի ատելութեանը արժանանալու համար ի՛նչ յանցանք ըրած են նախարարեանք. ես գիտեմ թէ մենք և մեր նախահարքը շատ պակասութիւն ունեցեր են, յիմար և անպիտան մարդիկ նախարարական ցեղերու մէջ շատ գտնուեր են, բայց ինչ մեծ մարդիկ ալ նոցա քով կան, որ էն մեծ ազգաց պատմութեանց փառք և պատիւ կրնային համարուիլ: Եւ եթէ զանոնք վտարել օգտակար և փրկաւէտ լինէր իմ ազգին, Աստուած ի՜նձ վկայ որ հաւանութիւն կուտայի այդ արիւնախանձ վճռին և յանձն կ'առնուի. բայց շատ կը կասկածիմ թէ այդ իշխանազանց կոտորա-

ծէն վերջ բնաջինջ ընողքն նոցա տեղ կանգնին և նոցանէ լաւը չի գործեն . . . Քու փափաքդ երբեմն կատարուեցաւ Նախիջևան և այդ Տաճկին՝ որ դու այսօր նիզակահար կորուսիր, ո՜ գիտէ պաշտն էր թերևս Կաշմ կամ Աբդլա որ Հայոց նախարարքն ու քաջերը այրեց. այն հանգիսին այն միայն կը պակսէր որ Տաճկաց խարոյկին Հայ ձեռքեր կրակը արծարծէին: Բայց ես անխնայքութիւն մ'ըրի և չի համբերեցի, պէտք էր քու պատճառներդ մտիկ ընէի՝ թէ ինչո՞ւ համար իշխանաց և ազատաց այսչափ թշնամի եղած ես դու, որ շատ անգամ նոցա գործին և ծառայութեան մէջ գտնուեր ես, նոցա հացը կերեր ես և նոցա տանը բնակեր ես: Եւ ես գիտեմ թէ Բագարատ զքեզ այնչափ կը սիրէր:

— Նախ պէտք է գիտնաս, իշխանդ, թէ ես օրերով տունս ոտք դրած չունէի, որպէս զի եթէ կարելի էր Բագարատ ազատէր. պէտք է գիտնաս նաև թէ երբ ամէնքը խորհուրդ կուտային իշխանին, ստիկանին կոչէն երթալ և նորա բարկութիւնը չի գրգռել, ես միայն էի որ խնդրեցի՝ աղաչեցի կրկին և կրկին անգամ չերթալ և զգուշանալ այդ ուխտադրուժ մարդկանէն որ պարծանք և պատիւ և առաքինութիւն անձանց կը համարին ոչ միայն Քրիստոնէից

արիւնը թափել՝ զնա գերութեան մատնել՝ նորա ստացուածքը յափշտակել՝ այլ նաև խաբէութեամբ, ստերդութեամբ զնա դաւաճանել. և մտիկ չի դրա։ Աս խօսքերը ոչ իմ հաւատարմութիւնս հաստատելու համար էր, և ոչ իմ հեռատեսութիւնս քեզ իմացնելու՝ այլ անոր համար կ'ըսեմ թէ ես թշնամութեան հոգի չունիմ ոչ իշխանաց՝ ոչ ազնուականաց և ոչ ազատաց դէմ, ես իմ լեռներուս մէջ՝ իմ գիւղիս մէջ հանգիստ և երջանիկ ապրած եմ միշտ և կ'ապրէի եթէ Բագարատ զիս չի փնտռէր և իբրև թէ բռնի զիս իրեն չի կապէր և բռնի ինձ չ'ուսուցանէր թէ՝ Հայ ժողովրդեան [illegible] է: Այո՝ երկայն դիտողութեամբ սաս երկու տարի է ականատես՝ այդ համոզման մէջ հաստատուեցայ. վասն զի երբ ազգի մը գլուխ կ'անցնին մարդ մը՝ դաս մը մարդիկ, և ամենէն պատիւ՝ փառք՝ յարգանք՝ հարկ կ'ընդունին փոխարէն պարտականութիւն մը կայ զանի ո՛չ միայն պաշտպանելու՝ այլ և [illegible]: Այդ պարտքը՝ մի՞թէ կատարեր է նախարարութիւնը՝ իշխանաց՝ ազատաց՝ ազնուականաց խումբը . . . Ես պատմեմ քեզի թէ ի՛նչպէս կատարեր է և սրտիս ցաւով պատմեմ, ո՜վ Գուրգէն: Օր մը գէշայոց թագաւորը դաւաճանութեամբ Պարսից թագաւորը սպաննել տուեր է, նախարարները

առանց դիմադրութեան դաւաճանին հնազանդեր են։ Թագաւորին մէկ տղան կոտորածէն ազատել՝ մեծցել՝ օտարին օգնութեամբ եկել թըշնամին վռնտել՝ երկիրը և ժողովուրդը պահել. է՝ ազգին երկրորդ Լուսաւորիչն է եղել. Նախարարները՝ այդ մարդը որ իրենցմէ զզուելով թողել աթոռը գնացել է՝ աղաչել, դարձուցել և թունաւորել սպաննել են։ Լաւ թագաւորին այսպէս են ըրել։ Ետքը օր մը անպիտան թագաւոր մը ունեցել են, յիմար՝ անառակ տղայ մը, գնացել օտարին՝ անհաւատին՝ Պարսկին մատնել են, թագաւորն ու թագաւորութիւնը վերջացուցել են։ Կը թողում յիշել Մերուժաններ՝ Վասակներ՝ Գդիհոններ որ ժողովրդեան արեան հեղեղներու և գերութեան պատճառ եղած են։ Այլ կուգամ կը հանիմ մեր այս օրերուն թէ ի՛նչ ըրած են այդ նախարարները և ի՛նչպէս կառավարած են ժողովուրդը: Հիմա աս միջոցին Վասպուրական անհաւատից ընծայներ՝ պատարագներ՝ պատանդներ կուտայ՝ Տարօնոյ երկիրը արեանց լիճ մ'է եղած. սուրէն ազատողն գերութեան և շղթայներու է մատնուած, աս այս միջոցիս Գրիգոր Սիւնեաց Տէր և Բաբկէն Սիսական նահապետ տարի կայ որ իրարու հետ կը պատերազմին, իբրև թէ օտարի հետ պատերազմի նիւթ կը պակսէր:

Դու շառաւիղ երկուց մեծ նախարարու-
թեանց՝ Արծրունեաց և Մամիկոնէից. դու պէտք էիր լաւ գիտել թէ ինչո՞ւ Բագարատ անյոյս իւր դրացիներուն օգնութենէն գնաց թշնամեաց ծունգը ինկաւ, վասն զի Աշոտ Արծրունեաց Տէր վստահ չէր իւր նախարարց հաւատարմութեան վրայ, և թէ վաղը նոյն բաղդը կ'սպասէ բոլոր այդ իշխանաց որ այս խեղճ Հայաստանի ո՛չ Տեարքն են՝ այլ բռնաւորք. վասն զի չեն կարող զնա պաշտպանել օտարէն և ոչ իրենց կոյր կիրքերէն, այլ անարգ և փոքրիկ փառասիրութեամբ անձանց և ազգին խորխորատ կը փորեն: Քաջք՝ անպարտելիք միմեանց դէմ. անխիղճ կը թափեն իրենց հպատակաց արիւնը, կ'աւարեն հակառակորդին երկիրը՝ որ դարձեալ Հայ է: Բայց ի՞նչ է Հայը դոցա աչքին, ոչինչ
— Աս բաները տեսնելուս համար է, իշխան քաջ, որ դառնացեալ այս աղէտից վրայ այդպիսի ծանր խօսքեր ըսի. ո՛չ, հաւատա՛ թէ ոչ նախանձ մեծութեան, ոչ փափաք իշխանութեան երբէք զիս չեն փորձել. միայն կը ցաւիմ աս իմ ազգիս վրայ որ հլու հնազանդ իւր մարմնաւոր և հոգևոր իշխանաց ամեն օր կը կորչի մարմնով և հոգւով:

Լռութիւն մը տիրեց այս երկայն խօսակցութեան վրայ, ժողովրդեան մարդը այս խօսքերը

զրուցելէն վերջ, գետին սևեռեալ կը նայէր, ազնուական երիտասարդը նոյնպէս աչքերը գետնէն չէր վերցներ: Պահ մը այսպէս կենալէն վերջ իշխանը իբր թէ քունէ զարթած՝ միտքը ուրիշ բան մը եկաւ. առանց պատասխան տալու՝ հրաժարական ողջոյնը տուաւ, ձեռքը կուրծքին դրաւ, և ակնարկի հրաման ըրաւ, ձին մերձ բերուեցաւ՝ հեծաւ Ցոլակին վրայ և դէպ՝ արևելք շրջեց նորա գլուխը. և իւր ետևւէն կ'երթային երեք սպասաւորներն և Արծրունեաց ազատեալ պատանդներն նոյն ճամբան:

ԳԼՈՒԽ Գ.

ՄՈԳԱԿԱՆ ՀԱՅՑԵԼԻ.

Ցովնեան պահ մը այդ խմբակին ետևէն նայեցաւ, կրթնած իւր նիզակին, և կ'ըսէր ինքն իրեն:

«Է՜հ, շատ կարելի է որ Գուրգէն իմ այս խօսքերուն զայրացա՝ առնուեցաւ, բայց միթէ ամեն ինչ որ ըսի ճշմարտութիւն չէ՞ր: Այո՛ կրնար ինք իրաւամբ ինձ պատասխանել՝ եթէ նախարարք և իշխանք անպիտան և յիմար էին, ժողովուրդը աւելի անպիտան և յիմար էր որ նոցա քմաց և հաճոյից անասնաբար կը հնա-

ղանդէր։ Այո՛ այդ է իրաւացի պատասխան իմ ըղձներուս, բայց ի՛նչ ընել. գրգռել ժողովուրդը ընդդէմ իւր դարաւոր տեարց և իշխանաց, և այսպիսի ժամանակ երբ Արաբը մէկ կողմէն՝ Յոյնը միւսէն աս խեղճ երկիրը ոտնակոխ ընել և Հայութեան անունը ջնջել սովորութիւն ըրած են. Մահմէտ կը յորդորէ իր աշկերտները անգութ և անողորմ լինել Քրիստոնէից դէմ, և այս Քրիստոնեայ Յոյները չեն արգիլեր ոչինչ հարստահարութիւն ընդդէմ Քրիստոնեայ Հայուն։ Այո՛ երկու ազգաց թագաւորներն իրարու հետ կը պատերազմին և Հայաստան կը կործանեն։ Երէկ անդիէն Թէոփիլոս մը եկաւ ջարդեց՝ գերեց ու քանդեց, այսօր Աբուճաֆար մը ասդիէն կը բուսնի՝ որ նոյնպէս և աւելի կը կոտորէ՝ կ՚աւարէ և կ՚անապատացնէ։ Եւ այս չի բաւէր, մեր նախարարք փոխանակ ընդհանուր վիճակին դարման մը ընելու՝ յիմարաբար ողորմելի փառասիրութեամբ կամ անմիտ շահասիրութեամբ իրարու հետ կը կռուին և զիրար կը դաւաճանեն։ Եւ այս թշուառութեան տեսարանին դու վկայ եղիր, դո՛ւ Հայ, դո՛ւ Քրիստոնեայ, դո՛ւ խեղճ Յովհան, և անտարբեր կա՛ց իբրև քարէ արձան որ քու եղբայրդ տանջանաց մէջ մեռնի, քու զաւակդ մոռնայ իր Լուսաւորիչը՝ իր Հայութիւնը, կորչի երկուքին

համար, քու կինդ և աղջիկդ երթան օտար երկիր աղախին և հարճ լինին սպաննողին և բռնաւորին և շլթայներու մէջ հառաչանաց և արտասուաց ձայներ խղդեն։ Այդ է ահա այս քանի հարիւր տարիներ են խեղճ Հայուն բաղդը. և նախարարին ընկեր ու բարձակից եկեղեցականը «Այս բոլոր մեր քաշածը մեր մեղքն է» կ՚ըսէ։ Միթէ՞ այս Հայոց ազգին մեղքը միայն կը տեսնէ և չի քաւէր Աստուած։»

Այսպէս խօսելով և խորհրդածելով Յովհան, սկսաւ երթալ դէպ ՚ի քաղաքը դառն և տխուր սրտիւ, ո՛չ թշնամւոյն կոտորածը՝ ո՛չ գերելոց ազատութիւնը՝ ո՛չ պատանդաց փրկութիւնը իր երեսին ուրախութիւն չի բերին. մանաւանդ թէ շարունակ Գուրգէնի չարագուշակ մարգարէութիւնն կը յիշէր և կը դառնանար։ Եւ գլուխը երբեմն կը դարձնէր ակամայ կամօք դէպ՝ այդ փոքրիկ խումբը որ վասպուրականի ճամբան բռնած էր։

Ամէնքը զբաղեալ էին աւարին և ուրիշ ոչինչ բանի ուշադրութիւն չէին ըներ. շատ ջանքով ժողվեց զանոնք և երբ իրենց միտքը ձգեց թէ իրենք պարտք մ՚ալ ունէին Սուրբ Կարապետ ազատելու՝ նոքա վեր թռան, որոտմանց ձայներու պէս ձայն մը բարձրացաւ, և ամէնքը ամեն բան թողած «Սո՜ւրբ Կարապետ երթանք,

Սուրբ Կարապետ» ըսին և հազարաւոր նիզակներ ճօճեցին, և սկսան հետևիլ Ցօլինանու որ առջևէն կ՚երթար իւր հաստատ քայլերով, միայն իւր ձեռքը ճակտին կը տանէր ՚ի բաց վարելու համար խորհուրդ մը որ յաման՝ միշտ ետ կը դառնար և իւր մտքին կը տիրապետէր. Երբեմն վեր երկինք կը նայէր. երկինք որ գեղեցիկ էր և պայծառ և արև մը ամառուան արևուն պէս զայն կը լուսաւորէր՝ բայց հազիւ թէ ակար ջերմութիւն մը ունէր: Իսկ Սասունցի զինուորները այս դիտողութիւնը չէին ըներ, նոցա միտքը Ս. Կարապետի փրկութիւնն էր որ Արաբներէ պաշարեալ էր. ուստի չի մթնցած հասնիլ կը ջանային, միայն իրենց առաջնորդը Ցօլինան երբ երկինք կը նայէր՝ յԱստուծոյ այն կը խնդրէր որ Գուրգէնի մարգարէութիւնը չի կատարուի, և այդ խօսքերը շարունակ իւր մտքին մէջ կը դառնային. «Տէ՛ր Աստուած, կ՚ըսէր, միթէ՞ ես թափուելիք Հայ արեան պատճառ պիտի լինիմ, ես որ իմ ազգիս ինկած վիճակին դարման միայն ընել մտածեցի, և շահ ամենևին մտքէս չանցուցի:» Թէպէտ այս խորհրդածութիւնը զինք կը տանջէր, բայց քայլ մը պակաս չէր առնուր, և լեռնական խումբը իւր ետևէն կը սահէր, վասն զի ինչպէս երևցաւ՝ այդ մարդուն վրայ մեծ համարմունք ու-

նէնին իւր հայրենակիցք. և առանց ընտրութեան՝ առանց ժառանգական իրաւանց՝ առանց հարստութեան մեծ ազդեցութիւն ունէր Սիմ լերան վրայ այդ եզական մարդը, վասն զի ամենքը գիտէին և կը խոստովանէին նորա անշահասիրութիւնը՝ որ իրենց պէս և իրենցմէ շատերէն աւելի աղքատ էր մնացել՝ թէպէտ Բագարատ իշխանի սիրելի անձ մ՚էր տարիներէ ՚ի վեր — նորա ձեռնտուութիւնը բանիւ և գործով խեղճերու և անտէրներու, և նորա ահարկու խստութիւնը անիրաւներու և հարստահարողներու դէմ յայտնի էր: Այս յատկութեանց վրայ պէտք է յիշել իւր կարդալու և գրելու կարողութիւնը, որ շատ քիչ մարդկանց տրուած էր այն դժուար ժամանակին, և որ այդ լերանց մէջ գերբնական բան մը կը համարուէր. շատ անգամ երբ քահանան Փարապէան կ՚ըսէր հիւանդին վրայ, հիւանդին տէրը կ՚երթար Ցօլինանու ալ աղաչելու որ գայ Աւետարան մը կարդայ իւր հիւանդին վրայ, և շատերը կը պատմէին թէ ի՛նչպէս և քանի՛ քանի՛ անգամ Ցօլինան ընթերցմունքը չի վերջացած բժշկութեան նշաններ կը տեսնուէին հիւանդաց վրայ: Եւ միշտ այսպիսի պարագայներու մէջ կը տեսնուէր որ Ցօլինան կ՚ոգևորէր, աչուըները կը ձկտէին և այդ զօրաւոր մարդը մեծ յօգնութիւն մը

կ՚իմանար այդպիսի դիպուածներու մէջ ու խոնարհաբար կ՚ըսէր թէ կ՚զգամ Քրիստոսի խօսքին ուժը թէ «Զօրութիւն ել յինէն:» Վերջապէս Յովնան. եղբայր՝ Սասունցուն համար տեսակ մը Սուրբ էր, որ երբ կը հեռանար գործի մը համար իր լեռնէն, կարելի է թէ շատերը նոյն մտածութիւնը ունէին ի՛նչ որ երբեմն Իսրայէլացիք Մովսէսի համար՝ երբ Սինա լերան ամպամած գլխուն վրայ կ՚աներեւութանար: Եթէ մէկ քանի նախանձոտ և անպիտան մարդիկ ալ կային, ինչպէս միշտ չ՚են պակսիր ամեն տեղ ու ամեն ժամանակ, չ՚էին համարձակեր բերան բանալ և խօսք մը ըսել:

Արեւը մօտ էր մտնելու երբ յանկարծ խումբ մը Արաբացի ձիաւորաց երեւցան որ մեր Սասունցւոց կուգային իբրեւ թէ դիմաւորելու, առժամայն Յովնանի մէկ ակնարկութեամբ սոքա փոքրիկ գունդերու բաժնուեցան և քառակուսիներ կազմելով՝ աշտէներու դուրս ցցուած անտառ մը ձեւանալով որ կը քալէր՝ ջանացին պաշարել և արգիլել այս ձիաւորաց յախուռն ընթացքը, թէպէտ շատերը կործանեցին իրենց ձիերէն, և ձեան ճերմկութիւնը 'ի կարմիր ներկեցին նոցա արիւնով, բայց մէկ մաս մը ձիաւորաց յախուռն յարձակմամբ ճղքեց անցաւ այս լեռնական հետեւակազօրը և սաստիկ արա-

գութեամբ կրցաւ Հայաստանի սահմաններէն ինքզինքն ազատել և գոյժ տանիլ թէ ի՛նչպէս Սիմ լերան ապստամբները, Տաճկաց բանակը ջնջեցին և ամիրապետին փոխանորդը սպաննեցին:

Ե՛ւ Ս. Կարապետն ազատած էր բոլորովին, ուստի մէկ մասը բանակին ետ կը դառնար, երբ Յովնան մտախոհ՝ շարունակեց իր ընթացքը ու մտաւ երկրպագել տաճարին դրան առջեւ: Ազնիւ մարդուն բոլոր մտածութիւնը և պաղատանքը ուրիշ բան չ՚էր, այլ միայն թէ Աստուած Գուրգէնի գուշակութիւնը հեռի ընէ իւր խեղճ հայրենեաց վրայէն, վասն զի սիրտը կը դողար թէ ինք մարդու մը պատճառաւ մի՛ գուցէ ազգին թշուառութեան պատճառ լինի:

Վերջապէս վանահայր և միաբանք գոհութեան աղօթքներ կատարեցին 'ի փառս փրկողին և տարին Յովնան իւր բոլոր ընկերաց հետ, սեղանատուն ընթրելու, ուր բնականաբար խօսքերը բոլոր կը դառնային այն դիպուածոց վրայ որոնք յաջողեցան մեր լեռնականաց: Յովնան միայն շատ քիչ կը խօսէր և իւր յոգնութիւնը պատճառ բռնելով գնաց երկնցաւ խոտի դէզի մը վրայ. քանի մը ժամ քունէ վերջ, ելաւ կանգնեցաւ այնպէս առոյգ՝ իբրեւ թէ ոչինչ աշխատութիւն չ՚էր ունեցել:

Կոչնակը յեկեղեցին կը հրաւիրէր միաբանքը,

Յովնան արդէն ամէնէն առաջ եկեղեցւոյ դուռը կանգնած էր նոյն միջոցին և սկսած էր սաղմոսերգութեան՝ երբ յանկարծ զգաց որ ձեռք մը իր ուսին վրայ յեցաւ։ Երբ գլուխը դարձուց՝ տեսաւ երկայնահասակ չոր ծեր մը, որուն ձիւնի պէս ճերմակ մօրուքը մինչև գօտին կ'իջնէր, լայն մոխրագոյն բուրդ վերարկու մը մինչև ոտքերը կ'իջնէր, թխամորթ էր իր խորշոմեալ երեսին գոյնը, իր սև և մեծ աչքերը փայլ և հրապուրիչ քաղցրութիւն ունէին միանգամայն, առանց խօսք մը արտասանելու ձեռքէն բռնեց, առաւ դուրս հանեց, և երբ լուսնին աղօտ լուսով երկու հոգի միայն գտնուեցան. «Ե՛կ, Յովնան, իմ ետևէս, ըսաւ, եթէ կ'ուզես որ ապագային վարագոյրը պատռի և ցոյց տայ քեզի հանդերձեալը՝ գաղտնիք Աստուածային, ե՛կ մի՛ վախեր։

— Ե՞րբ վախեր եմ ես որ հիմա պիտի վախեմ, ըսաւ Յովնան, զինուոր՝ Սանցի մը երբէք չ'է վախցեր։

— Բայց դու խառնուրդ ես զինուորի և քահանայի, դու խառնուրդ ես հաւատոյ և թերահաւատութեան դու խառնուրդ ես քաջութեան՝ և եթէ ոչ երկիւղի՝ գոնէ կասկածանաց։

— Ես հաստատ եմ իմ հաւատքիս վրայ՝ ես զինուոր եմ . . .

— Ինձ զքեզ մի՛ ճանչնէր. դու տղայ էիր, զքեզ տեսայ, հեռացար դու աս լեռներէն, իմ աչքերս քեզի հետ էին և զքեզ կը տեսնէին և քու ամեն գաղտնիքդ կը նշմարէին. ուստի քալէ՛ երթանք, չե՞ս ուզեր դու իմանալ ապագան, միթէ՞ դորա համար չէր որ դու կ'աղօթէիր, միթէ՞ երկիւղը որ մի՛ գուցէ Հայաստան երկրի թշուառութեան պատճառ եղար այդ հրոսակին կոտորածովը՝ միթէ՞ այդ չէ որ զքեզ կը տանջէ։

Ծերուն ցուրտ երկաթեայ ձեռքը կը սառեցնէր Յովնանու ձեռքը և իրենք կը քալէին ձիւնին վրայ որ կը ճռնչէր իրենց ոտքերուն տակ, և անխօս կը շարունակէին իրենց ընթացքը։ Կը բարձրանային՝ կ'իջնէին և դարձեալ կ'ելնէին, սառած առուակներ և գետակներ կ'անցնէին. անցան նաև մեծ գետ մը որու սառոյցին ընդարձակութիւնը իմացուց Խութեցւոյն թէ Արածանին էր որ կ'անցնէին և դեռ իրենք կ'երթային լուսնին աղօտ լուսով մինչև բլուրներու՝ ժայռերու՝ կիրճերու՝ դահավէժներու և պափարներու մէջ դարձեալ այս ուղեգնացութեան ծրագիրը կորսնցուց Յովնան, մինչև քարայրի մը մուտքն ներկայացաւ իրենց և ծերը առանց իր ընթացից արագութիւնը թողլու մտաւ մութուն մէջ ուր խաւարը շօշափելի

եղաւ և է՛լ աւելի ամուր սղմելով իւր ընկերին ձեռքը՝ կը քաշէր՝ կը տանէր խորէ 'ի խոր, վասն զի շարունակ կ'իջնէին: Յովհան առանց երկիւղ զգալու կը խորհրդածէր ինքնիրեն. «Չորս ժամ է և աւելի որ մենք այդ ծերուն հետ կ'արշաւենք և դեռ նա յոգնութեան փոքրիկ նշան մը չէ ցոյց տալ, իւր ձեռքը ոչ կը դողայ և ոչ կը տաքնայ, սառ լինէր իմ ձեռացս տաքութեամբ կը հալէր, իսկ ինք իմ ձեռքս կը սառեցնէ:»

— Յովհան, ծռէ՛ և այնպէս հետեւէ ինձ, ըսաւ ծերը, մի՛ շտկուիր մինչև որ ես քեզ իմաց չի տամ:

Եւ այնպէս մի փոքրիկ ժամանակ երթալէն վերջ, ծերուն յորդորով շտկուեցան և Յովհան զգաց որ աւելի համարձակ շունչ կ'առնուր՝ թէպէտ միշտ գետնափորներու մէջ էին և ոչ նշոյլ կար ոչ բնական և ոչ արհեստական լուսոյ: Բայց վերջապէս հասան այնպիսի տեղ մը ուր հեռուն նշոյլ մ'սկսաւ երեւալ և մտան ընդարձակ՝ լուսաւորուած սրահ մը, ուր ոսկեձոյլ աշտանակներու վրայ մեղրամոմներ և բազմաթիւ արծաթի կանթեղներ իրենց լոյսը կը ցոլացնէին, և հրաշալի արձան մը կանգնած էր պղնձէ պատուանդանի մը վրայ. այն համբաւաւոր ոսկիածին և ոսկիամօր Անահտայ արձանն էր

նա՝ պաշտպանի հին Հայրենեաց, և իւր աջ կողմը վահագնի և ձախը Աստղկան արձաններ կանգուն էին, աս երեք արձաններուն պատուանդաններուն յեցեալ եռոտանի մը կար դարձեալ ոսկեձոյլ. չէր կարելի իմանալ թէ այս տաճարը՝ վասն զի իրօք տաճար մ'էր սա՝ իւր գմբէթովը՝ որու չորս կողմ դեռ ուրիշ փոքր գմբէթներ կային, գետնին տակն է՞ր թէ գետնէն դուրս բարձրացած. վասն զի պատերը բոլոր արձաններով և քանդակներով էին զարդարած և վրայի գմբէթէն կախ էր ահագին ապակեայ ճրագարան մը, ո՛ գիտէ ո՞ւստի և ո՞ր հեռաւոր երկրէ բերուած այդ տեղ՝ այդ անդնդախոյս աստուածութեանց պաշտօնը և նախնեաց խաւարը չքաւորելու համար:

Այս տեսարանը յանկարծ այնչափ զարմացուց և շլացուց զՅովհան, որ և ոչ զգաց թէ ինչպէս և երբ հեռացաւ իրմէ իւր ծեր առաջնորդը, ուստի սկսաւ նայիլ և զննել այդ հին յիշատակաց և արուեստներու. հրաշալիքը որոնց նմանութիւն կը մտածէր թէ ո՞ւր տեսած էր ինք, 'ի Կոստանդնուպոլի՞ս թէ 'ի Բաղդատ:

Եւ երբ այս մտածութեան վրայ էր, յանկարծ իւր ուշադրութիւնը շարժեցաւ վասն զի երգերու ձայներ սկսան լսուիլ, և տաճարը լցուեցաւ Արաբիոյ և Հնդկաց անուշահոտ խըն-

կերով և եռոտանին իբրև թէ խնկաման կամ բուրվառ մը լինէր՝ դուրս կը փչէր զմայլեցուցիչ մուխ մը որ զարմանալի ազդեցութեամբ այդ մարդուն երկաթէ ջիղերը կակուղ ոսկւոյ սկսաւ դարձնել: Դուռ կը փնտռէր Յովնան, և ահա չէր կարող նշմարել նաև այն դուռը ուսկից ինք ներս մտեր էր. և իր սուր աչքերը շփոթեցան վասն զի մուտքը կարող չէր նշմարել, և իրօք կը տեսնէր թէ բանտի մը մէջ էր՝ բայց փառաւոր բանտի մէջ:

Հազիւ թէ այս խորհրդածութիւնը մտքէն անցաւ և ահա Վահագնի և Աստղկան պղնձէ պատուանդաններուն անյայտ դռները բացուեցան և երգեցիկ քրմայ ու քրմուհեաց բազմութիւն մը զոյգ զոյգ սկսան դուրս ելնել և արձաններուն առջև շարուիլ. իրենց հարուստ և ճոխ ոսկեթել և նկարէն զգեստները, հանդիսական էին աչաց, և երբ Յովնան անոնց մանրամասն դիտողութեան զբաղած էր՝ ահա Անահտայ պատուանդանին դռնէն դուրս ելան մեծ քրմապետը և մեծ քրմուհին և երգերը լռեցին: Մեր լեռնցին քրմապետը մէկէն ճանչեց թէպէտ զգեստներուն պերճութենէն փոխուած՝ բայց նոյն ծերն էր որ զինքն հոն բերել էր. իսկ քրմուհին երիտասարդ և շատ գեղեցիկ կին մ'էր, որ երբ եռոտանւոյն առջև կանգնեցաւ

թալուկ եկաւ երեսին: Նոյն վայրկենին երգերն լռեցին և եղեգնեայ սրինգներ սկսան փափուկ և տխուր երաժշտութիւն մը հնչեցնել, որ մտիկ ընողին հեշտալի եթէ չէր գալ, վայրկենէ մը վերջը շատ ազդու և սրտաճմլիկ բերկրութիւն մը կը բերէր անձին: Քրմապետը այն ատեն ձեռք տուաւ և հրաւիրեց քրմուհին՝ որ անցնի նստի ոսկի եռոտանւոյն վրայ, և ինք շրջապատեալ իր խումբէն՝ կանգնեցաւ իւր աստուածութեանց առաջ թևերը տարածելով և անձայն աղօթելով, հազիւ թէ շրթունքը կը շարժէին: Եւ ահա քանի մը րոպէ չեղած ամեն աչք որ եռոտանւոյն պշուցեալ էին՝ կը տեսնէին փոքրիկ՝ ջղային ցնցմունքներ մեծ քրմուհւոյն վրայ, անոնց յաջորդեց վիճակ մը՝ որ իբրև թէ մարմարէ արձան յեղափոխեց այդ եռոտանւոյն վրայ նստողը, մինչև որ աչքերը սկսան բացուիլ անսովոր և սևեռ նայուածքով. անատեն քրմապետին բերին գիրք մը որուն թերթերը արծաթեայ բարակ տախտակներ էին և նա բացաւ էջ մը ուր ոչինչ չի կար գրուած և ներկայեց քրմուհւոյն. «Կարդա՛, ներշնչեալ յԱստուածոց» ըսաւ հզօր ձայնով. երաժշտութիւնն դադրեց, և այնպիսի լռութիւն մը տիրեց և ամեն շունչ այնպէս կեցաւ որ մէկ բան մը միայն կը լսուէր՝ քրմուհւոյն շնչառութիւնը.

և ամէն աչք իրեն կը նայէր: Իսկ նա քանի
նայէր այդ էջին վրայ, իւր երեսին գոյնը՝ իւր
ակնարկը՝ իւր շարժմունքը շարունակ կը փոփո-
խուէին, և 'ի վերջոյ մեռած աչքերը կենդա-
նութիւն և հետաքրքրական փայլ մը առին.
իբրև թէ անյայտ կը կարդային՝ և վերջը վերջը
այդ աչքերը լիճ մը դարձած արտասուաց հե-
ղեղներ կ'իջեցնէին, կղպուած ծնօտները կը
բացուէին և հառաչանաց ձայներ՝ եղուկներ՝
աւաղներ իրարու կը յաջորդէին: Այն ժամ
քրմապետը «Կարդա՛, ո՜ ներշնչեալդ յԱստուա-
ծոյ» կրկնեց, «Բարձր ձայնիւ, կարդա՛:» —

Եւ քրմուհւոյն հեկեկանաց ձայնը այսպէս
խօսեցաւ. «Քի՛չ են Հայաստան քու չարչարանքդ,
«քի՛չ են քու տանջանքներդ, դեռ կանգուն են
«քու քաղաքներդ, դեռ կանգուն են քու տա-
«ճարներդ, դեռ հարսի և փեսայի ձայներ կը
«լսուի 'ի քեզ, դեռ տղայն օրրանին մէջ կը
«ճուայ, դեռ հուրը վառարանին մէջ կը ճար-
«ճատէ, դեռ մուխը երդեաց վրայէն կը բարձ-
«րանայ: Դեռ քու որդիքդ բարձրավիզ կը քալ-
«լեն, դեռ երկաթը իրենց ձեռքին և իրենց
«մէջքին վրայ կը փայլի, դեռ սաղաւարտը
«իրենց գլխին վրայ կը ճաճանչէ. դեռ քու աղ-
«ջիկներդ ծիրանիներով կը զարդարուին, դեռ
«նոցա վզին վրայ ոսկի մանեակ և թևերնին

«ապարանջաններ կը նշուլեն. բայց այդ ամե-
«նուն վերջն է՝ քու քաղաքներդ պիտի անմար-
«դանան, քու շէներդ անշէն պիտի մնան, քու
«տաճարներդ կիսակործան, քու տուներդ ան-
«կենդան, ուրախութեան և հարսանեաց ձայ-
«ներուդ ողբերու և լալերու ձայներ պիտի յա-
«ջորդեն, քու զէնքերուդ շկահմանց՝ շղթայնե-
«րու ձայներ, քու մանեակներուդ և ապարան-
«ջաններու հնչմանց՝ գերութեան խարազաննե-
«րու ճարճատմունք. այո՛, քու կորիւններդ գերի
«իրենց երկրին մէջ՝ գերի օտարութեան մէջ,
«քու աղջիկներդ աղախին իրենց հայրենի տան՝ և
«դառն պանդխտութեան մէջ: Երբ արևելք երեսդ
«դարձնես՝ թշնամի պիտի գտնես, երբ արև-
«մուտք դառնաս թշնամի պիտի տեսնես. օգ-
«նութիւն պիտի խնդրես՝ նախատինք՝ արհա-
«մարհանք պիտի գտնես, երկինք աչքերդ պիտի
«դարձնես՝ նա կայծակ և կարկուտ քեզի պիտի
«տեղայ, քու զաւկներդ նաև շատ անգամ եղբայ-
«րասպան՝ իրենց մօր սիրտը պիտի վիրաւորեն:»

Ձեռքերը ծալլած փայտ կտրեր մնացեր էր
Յովհան, կը նայէր այդ կնկան երեսին գոյնին,
կը նայէր աչքերուն մարմրուկին և վերջը ար-
ցունքներուն, կը լսէր այդ անսովոր ձայնը՝ կը
խորհրդածէր ինքնիրեն և կ'ըսէր: «Այդ կինը
եթէ դերասան էլ է, շատ լաւ կը խաղայ իւր

դերը, եւ Յոյն թատերականաց մէջ նաեւ այդ-
պիսի մը չեմ տեսած. եթէ բառերը ճշմարիտ
են. վա՜յ է մեզի, վա՜յ մեր Հայ ազգին. ի՞նչ
ապացոյց կրնայ տալ իր գուշակութեանց ճըշ-
գըրտութեան այդ անսովոր մարգարէուհին:»
Այս միջոցին քրմուհին գլուխը կուրծքին վրայ
իբրեւ թէ խոր քուն էր, սրինգներն իրենց
տխուր երաժշտութիւնը դարձեալ կը շարունա-
կէին, երբ յանկարծ ցնցուեցաւ նա եւ եռանդա-
նին սարսեցաւ, աչքերը բացուեցան լի տխուր
սրտմտութեամբ եւ ցուցամատը կարկառ դէպ
Յովհան. «Ո՜վ դու, գոչեց, ապացո՜յց կ՚ուզես
«դու, սպասէ՛ լսէ՛ ինչ որ Արտեմիս անցեալ մը
«իմ աչացս առաջ կը բերէ 'ի հանդէս: Կը տես-
«նեմ սիրուն պատանեակ հագեալ արքունի հա-
«սեալ՝ եռանդուն՝ այ՛, հուր է դորա բնութիւն՝
«եւ սիրտը սիրոյն բոցով է շրջապատեալ իբրեւ
«լուսինը բակով: Բայց ի՜նչ յիմարութիւն լե-
«ռընցի՛ խե՜ղճ Խութեցի, ո՞ւր աչքերդ կը բարձ-
«րացնես, ո՞ւր յոյսերդ կ՚ամբառնաս, թագադիր
«իշխանազանց օրիորդին դու կը համարձակիս
«այդ տոչորեալ սիրտդ մերկացնել:»
Յովհան այս վերջին խօսքերուն այնպէս սաս-
տիկ ցնցուեցաւ իբրեւ թէ իժ մը զինք խած-
նէր, եւ դէպ 'ի մուտքը նայեցաւ որ չէր ե-
րեւէր:

«Ո՜ւր կը նայիս, ո՜ւր կ՚ուզես փախչիլ, կը
«կրկնէր քրմուհին, ապացոյց կ՚ուզէիր. յիշէ՛
«գիշերները՝ լուսնին գարնան գեղեցիկ գիշերը,
«այն վարդենեաց պարտէզը ուր փոքրիկ բանալի
«մը ձեռքդ դողդոջուն կը մտնէիր, այդ սիրոյ
«առաջին գիշերը որու քաղցրութեան չի կայ
«բան մը աշխարհիս վրայ որ կարենայ բաղդա-
«տուիլ. երբ սիրած անձի բերնէն կը լսէ «կը
«սիրե՛մ» բառը, եւ որ քեզ համար դառն եւ բազ-
«մաչարչար կենաց պատճառ պիտի լինէր. այո՛,
«այդ առաջին գիշերն էր երբ դու ծառայ՝ շի-
«նական՝ լեռնական, քեզ տարեկից ազնուազարմ
«օրիորդի մը առջեւ ծունր դնել եւ նորա ձեռ-
«քերուն վրայ համբոյր եւ դգուանք դրոշմել կը
«համարձակէիր: Բայց երջանկութեան գաղա-
«գողն կրկին տարիներն շուտով անցան. օրիորդը
«քողածածուկ յարեմուտս Յունաց սահմանները
«ղըկուեցաւ աքսորելու եւ դու դանակոծ՝
«բանտարկեալ՝ շղթայակապ գիշերուան մութուն
«գաղտնեայ մէջ յարեւելս աշխարհիս կը ղըր-
«կուէիր վանքի մը մէջ աքսորելու այդ
«եղեռնալի ժպրհութեան վրայ որ չի ճանչէիր
«ընդարձակ սահմանը որ կը բաժնէ ազատը՝
«անազատէն, ազնուատոհմը՝ անտոհմէն, նախա-
«րարը՝ շինականէն, հարուստը՝ աղքատէն: Այո՛
«այդ յանցանքին համար որ առանց յանցանքի

«սիրել և պաշտել համարձակեցար օրիորդ մը
«որու ո՛չ իշխանական թագը՝ այլ գեղեցկու-
«թիւնը տեսար, իւր սրտին ազնուութեան թա-
«փանցեցիր, և մոռցար զքեզ՝ ողորմելի՛ սողուն
«և ուզեցիր արծուոյ պէս արևուն բարձրանալ։
«Ահա տարիներով խորհրդածութիւնքդ որ այդ
«բերդական վանացդ միայնութեան մէջ կ՚անց-
«նէիր մտքէդ, և ուր ուրիշ բան չ՚էիր երազեր՝
«այլ սլանալ այդ պարիսպներու բարձրութենէն
«և իմանալ թէ ի՛նչ եղաւ քու սրտիդ աստուա-
«ծուհին։»

Ամէն աչք պշուցեալ այս երկու անձանց կը նայէին. կինը՝ գերբնազանց էակ մ՚էր, իւր ամէն մէկ բառը մէկ մէկ սլաք էին որ կը վիրաւորէին խեղճ լեռնցին, իւր ամէն մէկ խօսքերը մէկ մէկ լախտ էին փշրելու համար այդ կորովի մարդուն հին վէրքերով լի սրտին բեկորներ, այդ թշուառ մարդը որ կը կարծէր թէ է՛լ վէրքերը գոցուած էին սրտին մէջ, վասն զի սրտի վէրքերէն վերջ՝ մարմինը սպիացեր էր պատերազմներու մէջ, այդ մարդը որ շատ ցաւոց տարեր էր ստոյիկեան համբերութեամբ առանց իւր մռնչման ձայնը լսեցնելու՝ հիմա հոգւոյն խորերէն կը հառաչէր և պաղ քրտինք կը թափէր. մարմինը արձան էր եղած և ոտքերը իբր թէ բևեռեալ էին գետնին։ Այդ առաջին և հրա-

բորբոք սիրոյն ժլշտակը որ ինք մարած կը կարծէր, վասն զի զանազան և զառն արկածներ անցեր էին վրայէն. հիմա իբրև օտար չնչէ մոխիրներ փչուած՝ փայլուն կրակ մը կ՚արծարծէր։ Կ՚ուզէր գոչել և հարցնել և իմանալ թէ ի՜նչ էր կամ ի՜նչ վերջ պիտի ունենար իւր սրտին Աստուածուհին, բայց իր ձայնը իրեն չ՚էր հնազանդեր, և բերանը չ՚էր կարող բանալ, վասն զի պապանձեր էր։ Բայց քրմուհին որ այդ խեղճ սրտին գաղտնիքը կը կարդար և կը տեսնէր նորա վիճակը, ձայնեց դարձեալ.

«Դու կ՚ուզես իմանալ թէ ի՛նչ կը խորհի և
«ի՛նչ կը մտածէ նա՝ որ բնութիւնը քեզի համար
«էր ստեղծել և մարդկային օրինաց անզգամու-
«թիւնը քեզմէ բաժնեց. անհոգ եղի՛ր կուգայ
«տարին՝ կուգայ օրը, և թերևս շատ հեռու էլ
«չ՚է, որ դարձեալ մօտէն զինք պիտի տեսնես,
«դարձեալ արցունքներովդ իւր ոտքերը պիտի
«բթանաս. . . . . Բայց պէտք է մինչև այն ժամը
«աշխատիս, պէտք է ցոյց տաս՝ օրինակ լինիս
«Հայ թշուառ աշխարհի թէ ժողովուրդը ողոր-
«մելի՝ արհամարհելի էակ մի չ՚է, թէ իւր
«արիւնը ունի այն ամէն առաքինութիւն որով
«կը պարծին նոքա որ իրենց հարց անուան
«վրայ կը գոռոզնան և շատ անգամ զուրկ են
«նոցա առաքինութենէն. . . . դնա՛, ասպարէզն

«ընդարձակ է, գալիք պատուհասը սոսկալի է,
«զօրացի՛ր՝ վասն զի հեռի չ՛է օրը որ վահան-
«ները պիտի ջախջախեն՝ նիզակները կոտրտին՝
«սուրերը փշրին, գնա՛, ժողովրդեան զինուո՛ր,
«երկնային զօրութիւնք քեզի օգնական թող
«լինին:»

Եւ ահա բուրմունք ամպ մը պատեց դարձեալ եռոտանին, լոյսերը ամէնքը մէկէն խաւարեցան և Յովհան բեկեալ՝ խորտակեալ և վերջի խօսքերէն սակաւ ինչ կենդանացեալ, թանձրամած խաւարին մէջ կը խարխափէր՝ երբ օգնական ձեռք մը զգաց թէ իւր ձեռքէն բռնեց:

— Ե՛կ Յովհան, հետևէ ինձ, ըսաւ ծանօթ ձայնը:

Եւ սկսան քալել այդ մթութեան մէջ և մի և նոյն կերպով ինչպէս առաջ մտեր էին: Ծեր քրմապետն էր որ կ՛առաջնորդէր. մինչև վերջապէս հասան այն քարայրին բերանը՝ լուսնի լուսոյն տեղ արևու լոյսը ամէն բան կը լուսաւորէր:

— Գնա՛, որդեա՛կ Յովհան, երկնային զօրութիւնք քեզի օգնական լինին, ըսաւ ծերը, և քարայրին մթութեան մէջ թաղուեցաւ: Իսկ Յովհան քիչ մը տեղ անզգայ քալելէն վերջ՝ արթնցաւ և ճանչեց թէ Աշտիշատի աւերակներէն էր շրջապատեալ: Ան ատեն իմացաւ թէ

Հայկական հին կրօնքը 550 տարի վերջը, անհետ եղած երկրի վրայէն, դեռ գետնի տակ կ՛ապրէր յանծանօթս:

ԳԼՈՒԽ Դ.

ԱՐԾՐՈՒՆԻ ԻՇԽԱՆ ՄԸ.

Թողունք Յովհան իւր խոր մտածութեանց մէջ, Աշտիշատայ աւերակաց վրայ, Մեծին Սահակայ գերեզմանին մօտ որ խորհրդածէ իւր բաղդին և իւր հայրենեաց վրայ և ջանայ ուղղութիւն մը տալու իր բռնելու ընթացքին, դառնանք այդ Գուրգէն իշխանին որ տեսանք և որ երևելի դիւցազն մ՛է այդ ժամանակի պատմութեան մէջ և որ զարմանալին է՝ գրեթէ անծանօթ մնացած:

Գուրգէն՝ արծրունի էր հօր կողմանէ՝ Մամիկոնեան մօր կողմանէ. բաղդը զինքն այդ երկու ազնուատոհմ ընտանեաց զաւակ ընելով, և ամէն անձնական բարեմասնութեամբ զարդարելով՝ այնպիսի վիճակի մը մէջ դրած էր, որ չուզեց՝ մանաւանդ թէ չի կրցաւ պատասխանել Յովհանու ծանր ամբաստանութեանց ընդդէմ նախարարական սերնդին: Եւ բաւական հեռանալէն վերջ նաև Մշոյ քաղաքէն, միտքը միշտ

ժողովրդական մարդուն ըամծնիրուն վրայ կը շրջէր և իբրև թէ նորա վերջին խօսքերուն արձագանքը դեռ իւր ականջին կը հնչէին։

«Այդ մարդը հասարակ մարդ մը չէ, և ինք իրաւունք ունի գանգատելու մեզմէ . . . բայց միթէ՞ մենք չունի՞նք իրաւունք գանգատելու, ո՞վ է իշխանական ցեղի մարդ որ սրոյ հարուածի մը՝ դաւաճանութեան մը՝ ոտնգայթի մը՝ յափշտակութեան մը ենթակայ եղած չ'լինի իւր համանման սերնդակից ազատէն։ Միթէ իմ հայրս բռնի մահուամբ չի զրաւեցա՞ւ իւր տոհմակից Արծրունիներէն և իմ ժառանգութիւնս ամբողջ նոցա ձեռք չ'անցա՞ւ։ Ո՞ւմ՝ ուստի՞ գանգատիմ։ Ահա ութը տարի է որ կը թափառիմ թողած իմ հայրենի Վասպուրական երկիր. և ի՞նչ տեսայ, ամեն տեղ մարդ նոյն գազանը տեսայ, վատ՝ յաջողկոտ՝ շողոքորթ՝ անգութ՝ գոռոզ յաջողութեանց մէջ՝ անարգ ձախորդութեան մէջ, վերջապէս մարդ՝ ողորմելի կենդանի։ Այն օրը որ դիւցազն մը տեսայ՝ Մանուէլ Մամիկոնեան որ փախստական կ'երթար Յունաց կայսեր ձեռքէն որու կեանքն ազատեր էր, և նորա թշնամեաց գիրկը կ'իյնար որպէս զի իւր կեանքն էլ ազատէր, զզուեցայ մարդիկներէն, և առանց քոռոտ՝ բորոտ ու վիրալից լինելու Յոբայ հետ՝ իրաւունք ունի ամեն մարդ

անիծելու օրը յորում ծնաւ։ Ահա Արծրունեաց և Մամգունեաց ճշմարիտ շառաւիղ մը՝ ես Գուրգէն որդի Ապուպէլճի, ես ազատ՝ ազնուատոհմ որ իմ հայրենի ժառանգական երկիրս կը մտնեմ իբրև անազատ՝ իբրև գերի՝ իբրև ճորտ որ չ'ունի գլուխ դնելու տեղ մը և բոլոր իմ ստացուածքս՝ իմ հարստութիւնս՝ իմ կալուածքս սա սուրը և սա ձին է։ . . . Այլ միթէ՞ նա որ ինձ կ'սպասէ . . . Ահա միմիայն բարիք, միմիայն գանձ, միմիայն կեանք, դո՛ւ՝ իմս Հեղինէ։ Ես, այո՛ երջանիկ եմ քան զԱշոտ և իմ Հեղինէն չ'եմ փոխեր Արծրունեաց իշխանին փառաւոր գահին հետ։ Իմ Թորթումի փոքր բերդը իւր գեղեցիկ լճակով՝ իւր գետոց խոխոջներով՝ իւր պտղազարդ ծառաստաններով չ'եմ փոխեր Վասպուրական աշխարհի Վանայ մեծատարած բերդին՝ ծովակին՝ կղզիներուն և լայնարձակ անտառներուն հետ։ Փոխանակ նախարարաց բազմագլխեան ապստամբութիւնքն հարուածելու՝ բազմապատիկ դաւադրութեանց դէմ հնարքներ հնարելու՝ Տաճկաց անգութ սուրերու և բիւր խաբէութեանց դէմ միշտ արթուն գտնուելու, շատ աւելի կը նախադասեմ իմ խեղճուկ Թորթումի գիւղապետներս, իմ թեթևամիտ Յոյներս՝ որոնցմէ երբ յիմար չ'ես և ուզես այն ատեն միայն կը խաբուիս։ Այո՝ Հեղինէիս

հետ ինձ համար ամեն տեղ երջանիկ կարելի է լինիլ: Ի՛նչ ըսի իրեն երբ թողի հայրենի երկիրը և գնացի: «Կամ այն է որ ես կը մեռնիմ՝ «կամ այն է որ քեզ՝ Ռշտունեաց Օրիորդ, կը գտա-«նամ փոքրիկ գաւառ մը բերելու, ուր հեռի 'ի «հոգոց և թախծութեանց մեր զրկեալ գլուխներն «կարենանք հանգչեցնել, հեռի և անտես այդ «ազնուատոհմ ազգականաց որ սպանութիւն՝ «դաւ՝ սուտ վկայութիւն՝ վերջապէս ամեն ա-«նարգ միջոցներ չի խնայեցին յափշտակելու «համար երկու որբոց հայրենի ժառանգու-«թիւնը:»

«Ի՞նչ ըսաւ ինձ Աշոտ մեծ իշխանը երբ վերջի «այցելութեամբ իրմէ խնդրեցի որ իմ հայրենի «ժառանգութիւնս ինձ դարձնէ. «Ես լաւ հա-«մոզուած եմ թէ իմ պապս մեծ անիրաւու-«թիւն մ'ըրած է հայրդ սպաննելով և նորա եր-«կիրները գրաւելով, բայց եթէ ամեն նախարար «իւր կալուածոց անիրաւ մասը հարազատ տի-«րոջը դարձնէր՝ մէկ արտավարի հող և հիւղիկ «մը չ'էր ունենար. երիտասարդ մարդ ես և «ազնուական, քաջ և կորովի, ծառայէ՛ ինձ հա-«ւատարմութեամբ, ես զ.քեզ լաւ կը վարձա-«տրեմ. տուն՝ տեղ՝ այգի կ'ունենաս և եթէ զիս «գոհ ընես ամրոցի և գիւղերու տէր նաև կ'ը-«նեմ .քեզ, բայց հայրենի ժառանգութեան և

«անցեալ անիրաւութեանց եթէ խօսքը կրկնես, «գիտցի՛ր որ չ'եմ կրնար ներել, զգուշացի՛ր. . .» Այդչափ փոքր առատաձեռնութիւն և այդչափ մեծ սպառնալի.ք իմ ախորժակաց յարմար չ'ե-կան: Փոխանակ .քեզ ծառայելու այդ գինով՝ կ'երթամ կայսեր կը ծառայեմ, ըսի մտքէս, և և անցայ Արածանին և Եփրատ, ճիշտ նոյն ատեն երկու բանակ իրարու դէմ կը գտնուէին, մտայ Յունաց բանակը, և զարմանալի՜ յարմա-րութիւն: Յունաց մեծ Սպարապետը ոչ միայն Հայ մ'էր, այլ և Մամիկոնեան էր. Մանուէլ զօ-րավար երևելի իւր .քաջութեամբ որ զԹէոփիլոս կայսրը ազատեր էր մահուանէ ու գերութենէ: Երբ զիս տեսաւ տասնութ տարեկան անմօրուս տղայ մը, և հարցուց և իմացաւ իմ ազգս, պապս և .քերիս ճանչեց, նայուացքով զիս անգամ մը չափեց, ըսաւ. «Թէպէտ դեռ պատանի ես՝ բայց «Արծրունեաց և Մամիկոնեաց արեան ծնունդ լինիլ և քաջ չ'լինիլ անկարելի է, քայլէ՛, որ-«դեակ, բաղդաւոր էլ ես, փառաց ասպարէզը՝ «պատերազմի դաշտը առջևնիս է ահա. դու «խաչի կողմը կը գտնուիս, այդ նաև բարեբաղ-«դութիւն մի է:»

«Երթանք Ռշտունեաց ոստանը, երթանք ժամ առաջ դառնալու շուտով մեր նոր հայրենիքը Թորթում, ուր ամեն բան պատրաստեցի գեղե-

ցին և փայլելուն քաղցրացնելու համար իմ Հե-
ղինէիս այդ օտարութիւնը. ո՛հ, եթէ ինք նոյն
սիրով՝ նոյն սրտով զիս սիրէ, ինչպէս ես զինք,
անշուշտ ինձ հետ երջանիկ պիտի լինի, հեռի
նաև Վասպուրական ծովուն եզերքէն»։

Այսպէս ժամերով կ'երթային այս մեր հե-
ծեալքը և Գուրգէնի լռութիւնը ամենուն լռու-
թիւն կը հրամայէր. մանաւանդ օդին ցրտու-
թիւնը ամենուն հոգին և ջերմութիւնը ամփո-
փելով ընտանութեանց համարձակութիւնը կը
սեղմէր։ Բայց կար բան մը որ կարելի չէր այդ
վիճակը չ'ընդհատել, և այդ բանը անօթու-
թիւնն էր. ուստի երբ Առաքելոց վանքն անցան,
և Մորխայ ճամբան սկսան, և արևը սկսաւ իջ-
նել, այն ատեն իբրև թէ քունէ զարթած Գուր-
գէն դարձաւ.

— Տղա՛ք, ըսաւ, դուք անօթի չէ՞ք և բան
ամենևին չէք խօսիր։ Լաւ ճամբայ առի՞նք
թէ ոչ, Վահրի՛ճ, դու այս տեղուանքը լաւ կը
ճանչես՝ ո՞ւր ես, ձայնդ էլ չ'ելնէր, ցուրտէ լե-
զուդ սառեր է, բերնիդ կպեր է որ չ'ես խօսիր.
հաց ալ պիտի չ'ուտե՞ս։

— Տէ՛ր իշխան, ըսաւ Վահրիճ մօտենալով,
այսպիսի ձիւնով շատ ճամբայ առած կը համա-
րուինք. կարելի է այսպէս շուտով հասնինք Նո-
րաշէն և եթէ վաղն էլ այսպիսի եղանակ ունե-

նալու չափ բաղդաւոր լինինք՝ անկից շուտ կը
հասնինք Դատվան և ալ ճամբան կը դիւրանայ։

— Միթէ՞ Նորաշէնէ մինչև Դատվան ճամբան
այդչափ դժուար և երկա՞յն է։

— Ոչ դժուար և ոչ երկայն է, իշխան, այլ
սաստիկ վտանգաւոր ձմեռ ժամանակ։ Եթէ Ա-
րևելեան փոքր քամի լինի, կորած է ամեն ուղ-
ևոր, վասն զի ծովուն վրայէն տկար քամի որ
կը փչէ դիւական մրրիկ կը դառնայ Գրգուռ և
Նեբրովթ լեռներու մէջ։

— Ե՞րբ կը յուսաս որ հասնինք Նորաշէն։

— Եթէ քիչ մը աւելի ուժով քշենք ձիերը
արևը մանելէն վերջ կը հասնինք։

— Քշե՛նք ուրեմն, երբ դու ոչ վաստակած
ես և ոչ անօթի։

— Ինձ համար շատ դիւրին է, բայց աս իշ-
խանազուն տղայք կարծեմ անօթի և վաստա-
կած են, թէպէտ ձայն հանելու կ'ամաչեն։

— Տէ՛, Վահրի՛ճ, ի՞նչ կ'ըսես, Արծրունի
չ'են դոքա։

— Այո՛ Արծրունի են, Տէր, բայց ամեն
Արծրունի Գուրգէն չ'է։

— Իշխանք, ձայնեց Գուրգէն, լաւ չ'լինի՞
որ ձիանքը քշենք և ժամ առաջ հասնինք Նո-
րաշէն. ձիուն վրայ մէկ քիչ բան ծամելով՝ մեր
ախորժը խաբելով որպէս զի երեկոյեան լաւ

ընթրենք և լաւ հանգչինք։ Տէ՛ Վահրիճ, իշխանաց մէջ մէկ պատառիկ տո՛ւր, թէ՛ ուտենք՝ թէ՛ երթանք։

— Իշխանաց ոչ հացի պատառիկը և մսի պատառիկը միայն, այլ ահա ուժպ մի գինի ալ կրնամ տալ, յիմար Արապները ամեն բան աւարեր՝ գինին մոռցեր էին, Տարօնոյ պատուական գինին է. Ս. Կարապետ իրա՞ւ է թէ այս գինին միայն կը խմէր արքայութիւն չ՚ուղևորած, չ՚գիտեմ, բայց գիտեմ թէ ես իմ տիկսակից լեցուցի։

— Տեսնեմ սա գինին։

— Շնորհք ըրէ. Տէ՛ր, ըսաւ Վահրիճ և բաւական մեծութեամբ տիկ մը երկնցուց իշխանին, և նոյն միջոցին լաւաշներ կը հանէր պայուսակէն և մսի կտորին հետ կը բաժնէր ամենուն. Իսկ Գուրգէն քմծիծաղով,

— Քո Ս. Կարապետի գինին լաւ է, բայց պէտք էիր այդ տիկը ամբողջ լցնել և դու անհոգ գտնուեր ես, Վահրիճ։

— Ո՛չ Տէր, ես ամբողջ լցուցի, բայց ցուրտին գինի՞ կը դիմանայ, կեցած տեղ կը պակսի։ . . .

Այս հրաշքին վրայ ծիծաղելով՝ սկսան քշել ձիանքը, և չի մթնցած հասան Նորաշէն. որ բաւական մեծութեամբ գիւղ մ՚էր ան ատեն,

և գիւղացիք տեսնելով իշխանազուն մարդիկ մեծարեցին զանոնք ըստ իրենց կարի, հայկական հիւրասիրութիւնը չափէն աւելի 'ի գործ դնելով։ Աւելորդ է ըսել թէ մեր Վահրիճի տիկը սմքեցաւ բոլորովին, 'ի մեծ ցաւ իրեն և յուսահատութիւն ամենուն։

Մութ էր դեռ երբ Գուրգէն ամենուն զարթեցուց և լուսնի լուսով հասան Դատվան, և առանց թոյլ ու դադար տալու կ՚անցնէին՝ կ՚ոլորվէին Վանայ ծովուն շուրջը, և այսօր իշխանը ոչ կը խօսէր՝ ոչ կ՚անօթենար՝ այլ Ցոլակին վիզը ծեծելով, «Ապրի՛ս Ցոլակ, դու յիմար մարդէ լաւ ես, դու կ՚իմանաս իմ սիրտս» կ՚ըսէր։ Եւ ձին որ իրօք շատ խելօք նժոյգ մ՚էր աւելի եռանդով կ՚արշաւէր. իսկ միւսները քիթ բերան թթուեցուցած կը քշէին կը մտրակէին իրենց անասունները, երբ Վահրիճ ամենէն ետ մնացած, կը մռմռար ինքնիրեն իր տիկի մնացորդը բերանը մզելով։

— Աստուած յաջողութիւն տայ, Տէր Գուրգէն, չ՚գիտես թէ սատանան քո՞ւ փորդ է մտեր թէ Ցոլակին, բայց թէ խեղճ Ցոլակին փորն լինէր դու զանի շատոնց կը հանէիր, ըսել է թէ քու փորդ է, որ այս օր մարդն ու ձի կ՚սպաննես։ Վահրի՛ճ, դու դարձեալ պէտք է խօսիս այդ մարդու հետ, ամենքը իրմէ կը խորշին։

Այսչափ օր է, երբէք այսպէս դիւահարած չ'ունէր, շէնք շնորհք ուղեգնացութիւն կ'ընէինք, մինչև երեկ շատ լաւ էր, միայն՝ երեկ չ'էր խօսեր՝ կը մտածէր. այս օր ետին անգամ չի նայիր, չ'իմանար թէ ուրիշներն ի՛նչ եղան։ Տէ՛, Վա՛հրիճ հասնինք ետևէն։

Եւ ոտքով ձեռքով իւր գրաստին խօսք հասկըցնելով, ի՛նքն ալ՝ խեղճ կենդանին ալ շընչասպառ մօտեցան իշխանին։ Բայց ո՛չ Յօլակ ոչ իշխանը խօսք հասկնալու վիճակի մէջ չ'էին. Յօլակ իւր բոլոր իմաստութեամբ դարձեալ ձի էր և ձիու բնութիւն ունէր և չ'էր կրնար ներել որ ձի մը զինքն անցնի, երբ իւր Տէրը «Աշլէ՛ս Յօլակ» ըսած էր անգամ մը, ուստի ձիու ոտքի մը ձայն առնելուն արշաւը մոռացած՝ սկսաւ սրանալ. իսկ Գուրգէն որ դիւահարեալ էր արդէն՝ ինչպէս կը դատէր Վահրիճ, ամենևին ուշ չ'էր դներ թէ ի՜նչ կար առաջն և թէ ի՜նչ կար ետին։

— Ահա իշխան մարդու ամենէն լաւը, կ'ըսէր Վահրիճ յուսահատ և յոգնած. ի՞նչ հոգն է եթէ աշխարհք՝ մարդն ու ձին կը կորսուի ետևէն, խելքին այնպէս փչեր է որ երթայ, իր նժոյգը թև ունի՝ կը թռչի, ո՛վ չի հասնիր, ճամբան կը մնայ՝ թո՛ղ մնայ։ . . . Լա՛ւ, թո՛ղ երթայ ո՛ւր որ ուզէ, ես ալ կ'երթամ հոն ուր իմ ձին մնայ։

Եւ սկսաւ հանդարտ քայլել իսկ Գուրգէն անհետ եղաւ առջևէն։

ԳԼՈՒԽ Ե.

ՌՇՏՈՒՆԵԱՑ ՕՐԻՈՐԴԸ.

Ո՛չ ցուրտը՝ ոչ ճամբուն երկայնութիւնը և օրուան կարճութիւնը և ոչ վերահաս գիշերուան մութը չ'էին արգիլեր Գուրգէն իւր ճամբան շարունակելէ. միշտ ձախ թևին վրայ երբեմն հեռուէն և քիչ անգամ մօտէն տեսնելով Աղթամարայ ծովակը, և կոխուած ձիւնի արահետ ճամբէն անխոտոր երթալով հազիւ թէ երբեմն կը կենար գիւղի մը՝ աւանի մը քով՝ հարցնելու անուն մը՝ և ձիուն շունչ առնել տալու համար։ Ուստի այսպէս անդադար ձիաւորելով հասաւ Ռշտունեաց Ոստանն, և կէս գիշերուան մօտ էր երբ ձիէն ցատկեց միջնաբերդին դրանն առջև։ Եւ սկսաւ երկաթի դուռը ծեծել անխնայ՝ որ գերեզմանական լռութենէն յայտնի էր թէ բացուելու միտք չ'ունէր։ Բայց Գուրգէն դիւրաւ յուսահատեցող մարդկանցմէ չ'էր. և ձմեռ օրով տասը չորս ժամ ճամբայ կտրելով և Յօլակը կիսամեռ ընելով, այժմ բերդին առաջ ետ չ'էր կրնար դառնալ երբ սիրտը կը տրոփէր Հեղինէի

յիշատակաւ: Եւ ո՜րքան բան ունէր նորա ըսելիք: Ուստի այնպիսի դոփիւն՝ դնդիւն և շառաչիւն հանեց, և այնչափ դղրդեց բերդին դուռը, որ մօտակայ բնակիչքը, սկսան իրենց դռներէն գլուխնին դուրս երկնցնել՝ կարծելով թէ բազմութիւն մը հասած էր, և կը զարմանային տեսնելով լուսնի աղօտ լուսով մարդ մը միայն և ձի մը: Այս միջոցին էր որ վերջապէս դրան քովէն նաև ձայն մը ելաւ, որ բերդապահին դիտանոցն էր, ուսկից ինք առանց տեսնուելու դուրսի մարդը կը տեսնէր:

— Ա՛յ մարդ, ո՞վ ես, ի՞նչ կ՚ուզես, միթէ՞ այս ժամուս հիւրընկալութիւն կը լնի:

— Գուրգէն Արծրունի եմ, բա՛ց, բերդապա՛հ կանչեց ձայնը դուրսէն:

— Տէ՛ տղաք, լոյս բերէ՛ք, իշխանին եղբայրն է, շուտ ըրէ՛ք. և ներսը շարժմունք սկսաւ:

Իսկ Գուրգէն կ՚ըսէր. Ո՞ւմ հոգն է թէ ո՞ր Գուրգէնի համար ներսը կը կոտրտին, բա՛ւ է որ դռները բացուին:

Ուստի երբ դուռը բացուեցաւ՝ տեսան Գուրգէն բարձրահասակ երիտասարդ՝ որ անխռով և զուարթ ներս մտաւ և Ցոլակն ալ իւր ետևէն, և ուրիշ ոչ ոք չի կար միատեղ, և որ անգամ մը ձեռքը կուրծքին դնելով բարև մը տալէ վերջ՝ շտկուեցաւ անվրդով դէպ 'ի սանդուխը,

և ոտքը վրան չի դրած՝ «Տղա՛ք. դուք, ձիուն լաւ հոգ տարէք, կ՚ընդունիք ձեր վարձքը» և առանց ուրիշ բան խօսելու երբ երկու երեք ոտք սանդուխ միատեղ առնելով մտաւ զինուց սրահը և անցնելով ընդունելութեան դահլիճը ուր ցրտութիւն մը կը տիրէր, դարձաւ տղուն որ լապտեր մը ետևէն կը բերէր,

— Տղա՛յ, ըսաւ, միթէ՞ ամէնքը քներ են, Տիկինը՝ Օրիորդը քաշուեր են իրենց սենեակները և ոչ ո՞ք չի կայ:

— Ոչ ոք չի կայ, իշխան, պատասխանեց պատանին, հիմա բերդապահն կուգայ, ես նորեկ եմ, տեղեակ չ՚եմ:

Այս միջոցին Գուրգէն ուրախ՝ զուարթ կը շրջագայէր իւրաքանչիւր առարկայի վրայ աչքերը պտըտցնելով, երբ տղայն կանթեղները կը վառէր՝ բազմոցներու՝ գորգերու փոշին կը մաքրէր. և ուրիշ երիտասարդ մը նոյն միջոցին վառարանին մէջ դիզուած փայտերուն կրակ կ՚ուտար: Եւ ահա բերդապահը եկաւ, միջահասակ մարդ մը իւր քառակուսի մօրուքով, և կանգնեցաւ անշարժ, սպասելով որ նախ իշխանը խօսի. իսկ Գուրգէն իւր արծուի աչքերը նորա վրայ շտկելով.

— Խուրէն եղբայր, ըսաւ, զիս չ՚ե՞ս ճանչեր, հին բարեկամները ա՞յսչափ շուտով կը մոռնաս:

— Կը ներես, իշխան, պատասխանեց Խուրէն կասկածոտ կերպով մը, մենք մեծ իշխանի Աշոտոյ եղբայրը միայն կը ճանչենք Գուրգէն Արծրունի։

— Մոռցա՞ր ուրեմն դարձեալ Արծրունի՝ Ապուպէլճի որդի Գուրգէնը, որ այս ամրոցիս մէջ ութը տարի անցուց Ռշտունեաց Մուշեղին հանձնուած։

— Ինչպէ՜ս մոռցայ, ինչպէ՜ս չեմ յիշեր իշխանիկը, գոչեց Խուրէն մօտենալով զարմանքով և երեսին վրայ զուարթութիւն գալով, ո՜հ, ի՜նչպէս փոխուեր է, տէ՜ր Աստուած, տղայն՝ ահագին հսկայ մ՚է եղեր, այս ի՜նչ կերպարանք է, սուրբ խաչն քեզ օգնական . . .

— Լա՛ւ, լա՛ւ, հերիք է, Խուրէն եղբայր, ահա ես այն տղայն եմ, հիմա զրուցէ ինձ Ռշտունեաց Տիկինն ու Օրիորդը որ քաշուեցան իրենց սենեակները՝ կարելի չէ՞ իրենց իմացնել թէ Գուրգէն եկաւ։

— Իշխան, դու չե՛ս իմացեր որ մեր Տիկինն, Աստուած լուսաւորէ հոգին, վախճանեցաւ ահա տարի ու կէս է։

— Ուրեմն Օրիորդը ո՞ւր է, ըսաւ իշխանը առաջ վազելով և աչքերէն փայլակներ ցատկելով։

— Օրիորդը՞, չե՛ս իմացեր, անմխիթար՝ ան-

տէր և անտէրունջ մնալով, վերջապէս կամայ ակամայ Անձևացեաց Մովսէս իշխանին հարսնացաւ։

— Ի՞նչ կ՚ըսես, Խուրէն . . . ի՞նչչափ ժամանակ է։

— Ուղղորդ կ՚ըսեմ, իշխան, խեղճ Օրիորդը՝ «Թողէք զիս իմ հօրս տունը, ես ո՛չ իշխանութեան փափաք ունիմ՝ ոչ ամուսնութեան, ամեն բան ձեզ լինի, միայն զիս հանգիստ թողէք» կ՚ըսէր, ոչ ոք չէր ուզեր մտիկ ընել. մեծն ու պզտիկ վրան ինկան, ամենքը՝ Աշոտ մեծ իշխանէն սկսեալ խորհրդական դարձան, այդ Անձևացեաց Տէրն էլ շարունակ անձանձիր խնդիրք խնդիրքի վրայ կ՚ուղարկէր։ Իսկ Արծրունիք բաւական չէր որ բոլոր բերդերն կը գրաւէին մէկ կողմէ, բաւական չէր որ ամեն տուրքերը կը սեփհականէին՝ ամեն ջանք ՚ի գործ կը դնէին որ Օրիորդը հարսնանայ այդ իշխանին հետ, մենք իմացանք որ պատճառը այն էր թէ Մովսէս խօսք տուած էր երդմունքով և դաշնագրով որ եթէ Օրիորդը իրեն հետ ամուսնանար՝ ոչինչ պահանջմունք պիտի չ՚ընէր Ռշտունեաց մեծ ժառանգութենէն, այլ ամեն բան Արծրունեաց մեծ իշխանին պիտի թողնէր։ Ահա բուն պատճառը այս անօգուտ յորդորանաց։ Օրիորդը ազատ չէր դուրս ելնելու, կին և

մարդ պահապաններ էին, ետեւէն կ'ելնէին որ յանկարծ չի փախչի, վերջապէս խեղճ աղջիկը իր հօր տան մէջ՝ պատուաւոր բանտի մը մէջ էր: Շատ անգամ՝ լուռ և անմռունչ ժամեր կ'անցնէր սարաւանդի հովանոցի մէջ ծովուն և ճամբուն վրայ սեւեռեալ աչքերը, և երբ խաւարը տիրէր՝ փոքր հառաչանք մը միայն կը ձգէր և իր սենեակները կը քաշուէր: Իբրև թէ ատելի եղած էին իրեն ամեն մարդ, ամեն այցելութիւն կը մերժէր, վասն զի մինչև Ռշտունեաց Եպիսկոպոսն ուրիշ բան չ'ունէր իրեն քարոզելու՝ այլ թէ լաւ կը լինէր եթէ ամուսնանար Անձևացեաց իշխանին հետ: Մի միայն մխիթարութիւն կար իրեն որ երբեմն նուիրակ մը յանկարծ կ'երևէր, Ս. Կարապետի վարդապետ մը որ տարին մէկ կամ երկու անգամ կուգար՝ նամակ մը կը յանձնէր որ Օրիորդին կուտայինք. այդ օրհնութեան գիրն էր որ իր երեսին զուարթութիւն կը բերէր: Բայց վերջապէս այս աշնան ետքերը՝ յանկարծ օր մը նոյն վարդապետը երևցաւ՝ իւր նամակը տուաւ և գնաց. ահա այդ նամակը այս անգամ որ առաւ Օրիորդը՝ քանի մը օր ամենևին չերևցաւ և դուրս չ'ելաւ իւր սենեակներէն: Երբ չորս հինգ օրէն վերջը զինք տեսանք, աչքերը խորն էին մտած՝ աննկարագրելի տխրութիւն մը նորա

մէջ կ'երևէր, և նորա շուրջը կապոյտ գիծ մ'էր պլորած: Էլ սարաւանդի հովանոցը չ'ելաւ, իր ծանր և ազնուական ժպիտը մէկ մ'էլ չի տեսնուեցաւ, և իւր անուշութիւնը՝ խստութեան և արհամարհանաց փոխուեցաւ: Մենք՝ իւր հայրենական հաւատարիմներն չ'էինք կրնար մօտենալ այդ Օրիորդին որ գրկերնիս մեծցեր էր, քաղցրութեան աղբիւրն էր, ո՛չ ժպիտ մը և ո՛չ խօսք մը ունէր մեզ համար: Եւ այդ վիճակի փոփոխութեան վրայ ամիս մը հազիւ անցաւ, տեսանք որ օր մը փառաւոր խումբ մը եկաւ հասաւ Ոստան, Վասպուրականի բոլոր իշխանք՝ Անձևացեաց Նախարարը գլուխնին, և մենք ապուշ մնացինք երբ լսին թէ Օրիորդը հարս տանելու եկեր էին, մենք որ ամենևին պատրաստութիւն չ'ունէինք: Զարմանքով տեսանք որ Տիրուհին ելաւ իւր սենեակներէն խրատիւ քօղարկեալ. բոլոր իւր հայրենի ծառայներն ժողվուած՝ ամենքս կուլայինք, չի տեսանք իւր երեսը. միայն սպասուհիներն ափսէներով բերին իր ընծայներն, այսինքն բոլոր ստացուածքը ծրարներ ըրած և անունները վրան նշանակուած և իր ձեռօք բաժնեց. մենք կը հեկեկայինք, իսկ նա անխռով և խիստ ձայնով՝ «Մի՛ լաք, գնա ձեր աղօթքին մէջ յիշեցէք, Աստուած ձեզ երջանիկ ընէ,» ըսաւ՝ հեծաւ և

գնաց։ Ասոնք եղան իր վերջին խօսքերը և այսպէս ահա գոցուեցաւ՝ վերջացաւ Ռշտունեաց նախարարութեան տունն։ . . . . — Ու խեղճ մարդն սկսաւ հեկեկալ և է՛լ արցունքը զինք կը խեղդէր և կարողութիւն չունէր դիտելու և տեսնելու Գուրգէնի երեսը որ երբեմն կը ճերմկէր, երբեմն կը կարմրէր այս երկայն և սոսկալի պատմութեան ժամանակ, և չէր իմանար թէ իր ամեն մէկ խօսքերը մէկ մէկ սլաք էին վիրաւորելու թշուառ երիտասարդին սիրտը։

— Բայց ես յիմար մ՚եմ, իշխան, որ փոխանակ քեզի կերակուր պատրաստել տալու՝ կեցեր այսպիսի տխուր պատմութիւն կը պատմեմ, դու որ յոգնած՝ ճամբէ կը հասնիս.

Եւ Խուրէն դուրս ելաւ, և իրօք ատենն էր, վասն զի Գուրգէն որ այդ պատմութենէն շանթահար եղած էր, երբ դուռը գոցուեցաւ և մինակ մնաց, ինքնիրեն ապշութիւնը թօթափել սկսաւ և հարցնել թէ իրա՞ւ էր ինչ որ լսեց. միթէ՞ երազ չէ՞ր այդ սոսկալի պատահարը, միթէ՞ ներսի սենեակներն եթէ մտնէր արդեօք Հեղինէ դեռ հոն չէ՞ր, զինք չպիտի՞ դիմաւորէր։

Ցաւն անտանելի էր, բայց մեծ մխիթարութիւն մը կար իր սիրող սրտին համար՝ Հեղինէ զինք կը սիրէր, և բոլոր սրտանց կը սիրէր.

բայց ի՜նչ օգուտ, Հեղինէ հիմա ուրիշինն էր, վասն զի Հեղինէ խաբուած էր. և սոսկալի դաւ մը կար այդ դառն պատմութեան մէջ։ Մեծ մեծ հառաչանքներ կ՚ելնէին իր լայն կուրծքէն, ձեռքը շարունակ ճակտին կը տանէր վասն զի գլխուն երակները սաստիկ կը բաբխէին, իր աչքերը չէին տեսնէր Խուրէն և իր տղաքը որ իրեն կերակուր կը բերէին և սեղան կը շտկէին։ Յանկարծ թողուց դահլիճը վասն զի կը խեղդուէր, բացաւ քովնտի դուռը որ սարաւանդը կը հանէր և ափով ձիւնը ճակտին և գլխուն կը զարնէր և այդպէս քիչ մը իբրև թէ հանդարտեցաւ և զովացաւ։ Երբ Խուրէն քովն եկաւ հրաւիրելու թէ կերակուրը պատրաստ էր, իշխանը խնդրեց որ զինքը մինակ թողուն, և այնպիսի հրամայական ձայնիւ՝ որու պատասխան կարելի չէր։

Հոն՝ այդ սարաւանդին տափին վրայ Գուրգէն իր հառաչանաց ձայները ծովուն մռնչմանց ձայնին մէջ կը խեղդէր, ձիւնախառն քամին իր սև և երկայն մազերուն հետ կը խաղար և որովհետև այն բաւական չէր՝ ուստի ինք շարունակ ձիւն կ՚ածէր գլխուն. Հայուն առակը վրայ կը ճշգրտէր և կը խորհրդածէր.

«Ա՜յս է եղեր ուրեմն իմ ութ տարուան արեանց և քրտանց նպատակս, ինձ որ ամեն

բան կը դիւրանար. վասն զի Հեղինէի երջանիկ օրերու յուսով կ՚ապրէի, և նոր կեանքը կարծէի թէ աս գիշեր պիտի սկսի ինձ համար. այո՛ կ՚սկսի նոր կեանք՝ կեանք դառն հառաչանաց և տխրութեանց, դրախտ կ՚երազէի երբ սա դահլիճէն ներս մտայ և դժոխք իւր բոլոր տանջանքներով ու բոցերով զիս՝ իմ սիրտս կը շրջապատէին։ . . . . Բայց իմ նամակներս ամէնքը հասեր են Հեղինէին և վերջինը . . . ահա այդ մասին է բոլոր դաւը . . . փոխեր են իմ նամակս, փոխեր են մէջի գրութիւնը, ո՜ գիտէ ի՜նչ զրուցել տուեր են ինձ . . . ո՜հ Արծրունիք, անիծեալ դուք՝ ձեր սերունդը, Մերուժաններու ծնունդք . . . ի՜նչ անյագուրդ փափաք տիրելու և մեծնալու . . . Բայց միթէ՞ ես Արծրունի չեմ, տոհմը՝ սերունդը ի՞նչ ընէ։ . . . Բայց ես այսպէս անգործ պէտք է մնամ, ո՜հ, ո՛չ երբէք. պէտք է, այո՝ պէտք է վրէժխնդրութիւն, և այդ վրէժխնդրութիւնը պէտք է որ լինի սոսկալի՝ գազանային՝ արիւն-ռուշտ, այնպէս որ բոլոր Վասպուրական ՚ի հիմանց սասանի, բերդերը կործանին՝ քաղաքները հրդեհին, գիւղերն աւերին, և ամէն անցնող ըսէ. Ահա՛ այդպէս են Արծրունիք, միշտ առաջինք քանդելու և կործանելու համար և իրենց անզգամութեան համար. երբ մէկը դաւաճա-

նութիւն՝ խարդախութիւն՝ բանսարկութիւն կը գործածէ, միւսը հուր՝ սուր՝ թոյն և մատնութիւն ՚ի գործ դնելէ չի խորշիր . . . բայց ի՜նչ կ՚ըսեմ ես, ո՜վ Աստուած իմ, ա՛ռ իմ սրտէս այդ ցաւը, հանէ՛ ինձմէ այդ ատելութեան և վրէժխնդրութեան հոգին, ես որ մինչև այսօր անզգամութենէ զզուեցայ հիմա երբ բաղդը և մարդկանց անիրաւութիւնն կը յափշտակէ ինձմէ ամէն երջանկութիւն՝ ամէն յոյս բարօրութեան, պէ՞տք է որ իմ խղճմտանքս աղտոտեմ, քա՛ւ, մի՛ լիցի. աւելի լաւ է անիրաւութիւն կրել քան թէ անիրաւութիւն ընել. . . Տէ՛ Գուրգէն, մի՛ մոռնար ի՛նչ դու կ՚ըսէիր քու աղայութենէդ մինչև այսօր. աւելի լաւ է որ քու հայրդ դաւաճանեալ մեռեր է Աշոտոյ հօր ձեռքէն, քան թէ ինք զնա դաւաճաներ եղբայրասպան լինելով, աւելի լաւ են որ քու կալուածքդ ու ստացուածքդ յափշտակեալ են քան թէ յափշտակութեամբ ժառանգութիւն թողնէր . . . բայց . . . այդ որդւոյն ըրածը, ո՜հ սոսկալի է, աւելի լաւ էր զիս սպաննէր քան թէ այդ հարուածը ինձի տար սիրտս սպաննելով՝ Հեղինէն ինձմէ յափշտակելով . . . Ո՜հ, Հեղինէին արցունքը, Հեղինէին այդ չարչարանքը ինձ դառն է քան թէ իմ ցաւերս . . . բայց Հեղինէ ինձ հաւատարիմ

մնացեր է . . . ո՜ գիտէ ինչ գրեր են իրեն, անշուշտ զրուցեր են թէ Գուրգէն մեռաւ. . . . խեղճ Հեղինէ, թաղեր է զիս սրտին մէջ, տուեր է իր մարմինը Անձեւացեաց իշխանին, և ազատեր է Արծրունեաց յափշտակիչ բռնութենէն. թողեր է նոցա իւր բոլոր ժառանգութիւնը և ինք էլ գնացեր է թաղուիլ Անձեւացեաց քարայրներուն մէջ:»

Այսպէս և ասոր նման խորհրդածութեամբք և մռնչելով ծովուն մռնչմանց դէմ՝ ժամեր անցնելով քիչ քիչ հանդարտեցաւ Գուրգէն, բայց թունաւոր նետը՝ սրտին մէջն էր, վէրքը՝ սրտին խորն էր:

Նոյն միջոցին Խուրէն վարը՝ իր սենեակը նստեր էր շրջապատեալ իւր ընտանիքէն. ամէնքն, կին՝ զաւկներ և հարսներ իւր ակնարկութեան կը մնային. որովհետև ամէնքը քուներնէն զարթած էին այս նոր Արծրունւոյն գալստեամբ: Եւ կինը որ բնականաբար երբ զաւկներու և հարսներու տէր է բաւական իշխանութիւն կ'առնուր Հայ ընտանեաց մէջ, կը հարցնէր իւր էրկան.

— Խուրէն, այդ Գուրգէն իշխանն, այդ Արծրունի Աշոտ իշխանին եղբայր Գուրգէն չէ, այդ ո՞վ է որ զինք Արծրունի կ'անուանէ. գեղեցիկ փառաւոր պարթև երիտասարդ է, բայց կ'ե-

րևի թէ բերդի դուռը բանալ տալու համար զինք Արծրունի անուանեց:

— Ո՛չ, Սեթա, այդ երիտասարդը Գուրգէն՝ Արծրունի է հարազատ ճիշտ միւս Արծրունեաց պէս, սա եղբօր թոռն է Աշոտ իշխանին, որուն պապը՝ սորա հայր Ապուպելճը սպաննեց ժառանգութիւնը գրաւելու համար. այս որբ տասը տարու տղան Գուրգէնը՝ մեր Ռշտունեաց իշխանն Ատոմ՝ Աստուած լուսաւորէ հոգին՝ որ խելօք և յարգոյ մարդ էր, սպաննողին ձեռքէն խլեց և յՈստան բերաւ և իւր տունը կը մեծցնէր զաւկի պէս: Մեր օրիորդը և սա միատեղ կը խաղային եղբօր քրոջ պէս, ես շատ անգամ զիրենք կ'առնուի՝ կը տանէի զբօսանքի երբեմն ձիով, երբեմն նաւակով: Մեր տիկինը՝ իշխանին մահուանէն ետք, Արծրունեաց պահանջմանց դէմ կեցաւ, որ այդ Գուրգէնը կ'ուզէին իրենց քով պահել: Վասն զի իշխանուհին շատ խելօք կին էր, «այո՛ կուզեն. կ'ըսէր, հայրը սրով սպաննեցին, տղան էլ տամ որ թունաւորեն. քանի որ պատառ մը հաց կայ Ռշտունեաց տունը այդ տղան իմ զաւկիս պէս կը պահեմ. իշխանը մահուան անկողնին մէջ դա էլ ինձի յանձնեց. նորա կամքը ինձի համար անդառնալի է:» Վեց եօթը տարի աս տունը ապրեցաւ, իբրև թէ Օրիորդին եղբայր լինէր,

եւ ես այնպէս յարմար կը տեսնէի թէ պէտք էր զիրենք ամուսնացնել, երբ յանկարծ ելաւ եւ Յունաստան գնաց, եւ էլ լուր չ՚առինք իրմէ. ահա յանկարծ կուգայ դարձեալ. բայց շատ սիրտը նեղ երիտասարդ է ըսեմ, թէ ցուրտէն յանկարծ վառարանին տաքը գլուխը զարկաւ ըսեմ՝ չ՚եմ գիտեր. սարաւանդին վրայ ելեր վեր վար կը պտտի, եւ ինծ էլ հրամայեց որ քիչ մը ժամանակ միայն թողում զինքը:

— Թէ այսպէս է՝ մէջ մը գնա տես, կարելի է որ հիմա քեզ ուզէ:

— Տղան Գրիգորը հոն թողէ, նա կ՚սպասէ վերը, երբ ներս գայ ինծ իմաց կուտան:

Այսպէս սոքա ժամ մը եւ աւելի Գուրգէնի պատճառաւ անցեալի վրայ կը խօսէին եւ դեռ Գրիգոր չէր երեւար, ուստի Խուրէն կնոջը յորդորմամբ երբ ելաւ վեր եւ տեսաւ որ Գուրգէն նստած սեղանին առջեւ կ՚ընթրէր՝ եւ Գրիգոր էլ մէկտեղ նստած կը մասնակցէր՝ լի բարկութեամբ սկսաւ տղուն մօտենալ:

— Կա՛ց, Խուրէն եղբայր, ես հրամայեցի տղուն որ ինծ ընկերանայ, ըսաւ Գուրգէն, եւ թեւէն բռնելով նա էլ իւր միւս քովը նստեցուց:

Գուրգէն ինքն էլ կը զարմանար թէ ի՞նչպէս կերակուր կ՚ուտէր, այնպիսի յուզմունքէ մը

վերջ. բայց այդ զօրաւոր կազմուածքը այդ տաժանելի ճամբորդութենէն ետքը, նիւթական սնունդի պէտք ունէր, եւ իւրաքանչիւր հացի պատառին կը մտածէր թէ երբ մինակ մնար բոլոր գիշերը եւ յետագայ գալիք գիշերներն՝ բաւական էին իւր սրտի վէրքին հետ զբաղելու: Բայց կերակուրը իր համն ու զուարճութիւնը կորուսեր էր իրեն համար, ուստի շուտ մը կշտացաւ եւ ելաւ սեղանէն եւ երբ լուացուեցաւ, հարցուց թէ՝

— Արծրունիք կ՚ուգայի՞ն երբեմն այս իրենց նոր կալուածի այցելութեան:

— Օրիորդին երթալէն վերջ գրեթէ չորս ամիս կը լինի եւ դեռ ոչ ոք չ՚երեւցաւ. ինծ յանձնեցին բերդին բոլոր կառավարութիւնը՝ ինծ տուին բոլոր բանալիքները եւ ահա առաջին անգամն է որ աս դահլիճին դուռը բացուեցաւ եւ սա վառարանը մխաց:

— Ուրեմն անկողնոյ սենեակներն էլ քեզ յանձնուած են, Խուրէն եղբայր:

— Դու քուն ունիս, իշխան, եւ իրաւունք էլ ունիս, ըսաւ Խուրէն, եւ շուտ մը բանալիքներու տրցակ մը հանեց եւ ուղղեցաւ դէպ 'ի հիւրի սենեակներն:

— Խուրէն եղբայր, ըսաւ իշխանը, դու գիտես թէ երբ ես տղայ էի այս Ռշտունեաց տան

մէջ տարիներով բնակեցայ և իմ սենեակս ունէի. միթէ կարելի՞ չէ, նոյն սենեակը աս գիշերս անցնեմ։

— Ինչպէս որ կամենաս, իշխան, միայն ան քու սենեակը քու երթալէդ քիչ վերջը Օրիորդը իրեն սենեակ ըրած էր, և մենք այն օրէն մինչև հիմա սրտերնիս վիրաւոր չի կրցանք մաքրել ու շտկել։

— Ի՞նչ վնաս, Խուրէն եղբայր, իմ տղայութեան յիշատակները նորա յիշատակաց հետ շաւղուած են. երթանք ուրեմն անգամ մ՚ալ այդ երջանիկ օրերը յիշելու։

Եւ Խուրէն շտկուեցաւ հոն ճրագն ՚ի ձեռին. և իրօք երբ ներս մտան՝ միայն խորազնին ակնարկ մը ձգողը կրնար երևակայել թէ բոլոր կահ և կարասիքը առանց պերճութեան՝ կնոջ մը քնքուշ ընտրութեամբ զետեղեալ էին։ Գորգեր՝ բաստեռունք՝ բազմոցք՝ վարագոյր՝ արկղ՝ գզրոց ամենայն յարմար և հաճոյ էին աչաց։

— Ուրեմն, իշխան, քեզ համար երթամ անկողին մը բերեմ, ըսաւ Խուրէն։

— Ոչ, պէտք չի կայ, ըսաւ իշխանը վճռական և հրամայական ձայնիւ։

Խուրէն ան ատեն ակնարկ մը ձգելով անգամ մը անկողնին փոքրկութեան վրայ՝ և ակնարկ մը Գուրգէնի վիթխարի հասակին վրայ՝

լաւիկ բաղդատութիւն մ՚ընելով մաքէն, գլուխը քովնտի մը շարժեց, և երկու ճրագները վառելով և Գրիգորի ձեռքի ջուրի փոքրիկ կուժն ալ դնելով կարասիքի մը վրայ։

— Գիշեր բարի, ըսաւ և քաշուեցաւ, միայն թողլով իշխանը իւր վիրալից սրտին ամենատխուր ուրախութեան մէջ որ Հեղինէի սենեակը ան գիշեր պիտի անցնէր։

Մենք ալ կը թողունք իշխանը այդ սենեկին մէջ, կը թողունք հոն իր բոլոր հակասական դառն խորհրդածութեանց և կրից հետ, ուր սէր՝ ատելութիւն՝ վրէժխնդրութիւն՝ ներողամտութիւն՝ արհամարհանք՝ անցելոյն տղայութեան քաղցր յիշատակք իրար կը խառնուէին՝ կը կռուէին փոթորկացեալ ալեաց պէս, և ուր վերջապէս բնութիւն յաղթող ամենայն կրից իր իրաւունքն ՚ի գործ դրաւ, և Գուրգէն խոր քունի մը մէջ ընկղմեցաւ։

ԳԼՈՒԽ Զ.

Գ Ի Ւ Ղ Ա Ց Ի Ն.

Բայց մենք թողինք մեր ուղևորները ճամբան, որոնք ամենքը պակաս բեռնաւորեալ քան Վահրիճ՝ առաջ անցան հետևելով Գուրգէնի

օրինակին. սա միայն մնաց վերջապահ կարաւանին, և վերջապէս վախնալով որ իւր ձին է ալ մնայ բոլորովին՝ ձիուն սանձը ձեռքն սկսաւ կամաց կամաց հետի քալել և այսպէս մութը կոխեց երբ անցաւ Թուխայ դետը, և միշտ ծովը ձախ թևին ունենալով հասաւ Խարդիթ։ Քիչ մը մրսած՝ քիչ մը յոգնած՝ քիչ մը անօթի՝ քիչ մ՚ալ ծարաւ վասն զի իւր Ս. Կարապետի գինւոյ տիկը բոլորովին ցամքեր էր, «Եթէ իշխանը հոս չէ, կ՚ըսէր, աւելի լաւ, նա իւր հանգստութիւնն արդէն գտած է։ Արծրունի իշխանի մը ո՞վ չ՚ուզէր ծառայել, ո՞վ կրնայ չի ծառայել մանաւանդ այսպիսի իշխանի, որ մեղրի պէս քաղցր է՝ երբ լաւ վարուիս, Աստուծոյ կրակն է երբ գէշ վարուիս։ Յոգնած դադրած՝ աս գիշեր Արծրունի եմ, իմ հանգստութիւնս կը գտնեմ աս գիւղը, փա՛ռք Աստուծոյ, բարեկամ՝ խնամի չի պակսիր, երթանք մեզի տեղ ճարենք թէ որ իշխանը այս տեղ չէ դադրեր։

Ուստի երբ գիւղին մէջ հասաւ և շուները շրջապատեցին զինքը՝ հաչելով և վրան ցատկելով, նա վայրկեան մը կեցաւ մտածելով թէ ո՞ւր լաւ ընդունելութիւն և վայելք կրնար գտնել, և այսպէս հաշուելով ու կշռելով որոշեց որ Գէորգ կնքահօր հիւր լինի, ուստի շտկուեցաւ նորա տունը։

Բայց երբ դրան առաջ հասաւ և դուռը զարնելու եղաւ՝ դուռն ինքնիրեն հազիւ թէ դպաւ՝ բացուեցաւ, ներս մտաւ տեսաւ որ մարդ չկար, զարմացաւ մնաց, «Գէորգ կնքահայր գնացեր է, լա՛ւ, մեռեր է, լա՛ւ, միթէ՞ տղաքն ալ, կինն ալ, ամենն ալ մեռան»։ Ուստի որոշեց աւելի անդին, հին բարեկամ Կարապետին երթալ. այս անգամ դուռը պէտք եղաւ ծեծել և երկայն ծեծել, որ վերջապէս մարդ մը եկաւ բացաւ, մրմռալով և գանգատելով քթին տակէն, բայց երբ հիւրը՝

— Բարի երեկոյ, եղբա՛յր, ըսաւ, շուտ մը՝

— Աստուծոյ բարին գայ վրադ, բարի եկար պատասխանեց, և դարձաւ, տղա՛ք, լոյս բերէք, սենեակը կրակ վառեցէք, հրամայեց։ Եւ երբ ճրագն եկաւ և երկու հին բարեկամք իրար ճանչցան ու պագտուեցան։

— Եղբա՛յր, ինչո՞ւ ձայն չես հաներ, կ՚ըսէր Կարապետ։

— Ձայն չեմ հաներ իմանալու համար թէ այս քանի մը տարուան միջոցին Հայ հիւրընկալութիւնը փոխուե՞ր է. բայց՝ փա՛ռք Աստուծոյ, նոյնը կը տեսնեմ իրաւ, տան տէրը դուռը չի բացած կը մրմռայ, բայց եկողին՝ Բարի ես եկեր, հրամմէ՛, կ՚ըսէ։ Դարձեալ կը զրուցեմ, կեցցէ՜ մեր Հայաստան և Հայ, եղբա՛յր,

Եփրատն ու Ճորոխ կ՚անցնիս, փողը ձեռքդ գլուխ դնելու տեղ չ՚ես գտներ, այս օրհնած հողին վրայ կէս գիշերուն քեզ կուգան դուռ կը բանան և ոչ միայն դուռ կը բանան՝ այլ գիւղէն կ՚իջնեն քեզ ձիւնին՝ բուքին մէջէն կ՚ազատեն կը հանեն։ Աստուած Հայուն բարի տա՜յ։

— Աստուած ձայնիդ լսէ, եղբայր, բայց քանի տարի է մեր մեղքերը միայն տեսար, մեր գլխէն պատիժ պատուհասն անպակաս չ՚ըներ, դու քանի տարի է օտարութեան ես, չ՚ես գիտեր. ի՞նչ քաշեցինք աս անօրէն անողորմ ազգին ձեռքէն որ Յոյնն ու Պարսիկ մոռացուց, ոտքին հասած տեղն աւերակ դարձուց։

— Ի՞նչպէս չ՚գիտեմ, մէկ քանի հատը՝ Մուշ՝ երէկ չէ առջի օր այս ձեռօքս հաւու պէս մորթեցի։

— Աստուած ձեռքերուդ մէջէն այսպիսի գործ պակաս չ՚ընէ։ Տղ՚աք, բեռները վար առէք, ձին ախոռ քաշեցէք։

— Բայց դու Կարապետ եղբայր, զրուցէ՛ թէ գիւղին մէջ իշխաններ հիւր եկա՛ն։

— Մենք իշխան չ՚տեսանք, եղբայր։

— Կէս օրին մէկ փառայեղ՝ մեծ երիտասարդ մը անցաւ, ըսաւ Կարապետի տղայն, քանի մը վայրկեան կեցաւ եկեղեցւոյ առաջ. իբրև թէ

մտածէր իջնել և վերջը միտքը փոխէր, շտկուեցաւ ձիուն վրայ՝ քշեց և գնաց։ Ձին Ճերմակ պիսակաւոր էր, լա՜ւ ձի էր։

— Նա է՝ Գուրգէն իշխանն է. հիմա նա... Մոխրաբերդ իջած կը լինի։

— Ի՞նչ կ՚ըսես, եղբայր, կարելի՞ բան է։

— Գուրգէն անկարելին կարելի կ՚ընէ։ Տեսնէի՜ք թէ ի՛նչ էր նա կայսեր քաղաքը, Յունաց բանակներուն մէջ, ամենքը կը սիրէին։ Մեր Հայերը շատ պատիւ ունին զինուորաց մէջ. քսան տարի առաջ Յունաց կայսրը Հայ է եղեր և Արծրունի մը. մեծ զօրապետը Մամիկոնեան էր. մենք Թորթում էինք երբ նորա մահը իմացանք. ի՞նչ քաջ՝ ի՞նչ խելօք ծեր էր։

Այս միջոցին վառարանը սենեակը լուսաւորեց, և մեր Վահրիճ եղբայր «Փա՜ռք քեզ Աստուած» ըսելով տարածուեցաւ կրակին քով, տանտէրն ալ դիմացը նստած կը հրամայէր տղոց որ կերակուր բերեն՝ գինի հանեն՝ ձիուն ուտեստ տան։

— Բայց դու, եղբայր, կ՚ըսէր Վահրիճ, ինձ զրուցէ՛ թէ ի՞նչպէս են Տէր Սահակ Աւագերէց, մեռա՞ւ, ո՞ղջ է, ի՞նչ կ՚ընէ. ո՞ւր են մեր բարեկամները. ձեզ մինակ և տխուր կը տեսնեմ. մեր կնքահայր Գէորգը՝ սանահայր Պետրոսը, ի՞նչ կ՚ընեն լա՞ւ են։

— Այս տեղ, Վահրիճ իւր բոլոր հնարիմացութիւնն 'ի գործ դրած էր հարցմունքին ձեւին մէջ. չ'ուզելով կնքահայր Գէորգի անունն առաջ դնել, որ նա նախադասելով կասկած չի տայ թէ առաջ Գէորգի տուն գնացել էր:

— Ի՞նչ կը հարցնես, Վահրիճ, պատասխանեց Կարապետ, դու չե՞ս իմացեր թէ մենք այս քանի տարի է ի՞նչ կը քաշենք, Աստուած մեզ երեսէ թողուց, այդ անիրաւ Տաճիկը կուգայ այս տարի հոս կը զարնէ, դալ տարի հոն կ'աւարէ, կը սպաննէ, կը գերէ, կը քանդէ: Խեղճ Գէորգը բոլոր ունեցածը ծախեց, տուն տեղ ամեն բան թողուց, Բաղդատ գնաց կինն ու քսան տարու տղան գերութենէ ազատելու համար, թէ որ ողջ առողջ կարենայ գտնել անօրինաց ձեռք: Գեղին կէսը աւեր է. մենք էլ չ'ենք գիտեր թէ գարնան ի՞նչ կը մնայ մեզ լինել. զարմանք հոն է որ դու ողջ հասեր ես այդպէս մինակ. դուք որ Հոռոմց երկրէն կուգաք Տարօնոյ անցաք, ես կը զարմանամ ի՞նչպէս անցաք. մենք կը լսենք թէ բոլոր այդ երկիրը Արաբացիք զարկեր կը բնակին, ժողովուրդը եթէ չ'սպաննեն՝ գերի կ'ընեն: Արդէն քու խօսքդ քանի տարի է չէ կար, երկու անգամ որ ես Մոկս գնացի՝ քեզ հարցուցի, քանի տարիէ պանդխտութիւն գնացել է ըսին: Հիմա որ

եկար՝ կերակուրդ կեր և մեզ պատմէ քու ճամբորդութիւնքդ՝ քու տեսածներդ՝ քու այդ Գուրգէն իշխանդ, թէ նա ա՞յնպիսի մարդ է որ մեր ցաւոց դարման լինի, թէ ցաւ մ'ալ ինք պիտի աւելնայ մեր վրայ:

Կերան խմեցին մեր հիւր և տանտէր, և երբ հանգչեցան, մեր բարեկամ Վահրիճ սկսաւ խառնաբնդոր իւր պատմութիւնը պատմել. թէ ի՛նչպէս մէկ երկու Քուրդ սպաննելով իւր Մոկաց երկիրը և տեսնելով թէ վրէժխնդրութեամբ զինք կը փնտռեն նոցա ազգականները, խոհեմութիւն համարեր էր քիչ մը ատեն քաշուիլ և դէպ 'ի Սպեր ուղեւորիլ. թէ ինչպէս ճամբան հանդիպեր էր Գուրգէն և տեսնելով երիտասարդ տղայ մը ազնուական և անփորձ, որ ամենեւին առանց իւր ոտքի տակ գտնուած աշխարհքը ճանչելու՝ կ'երթար հեռու աշխարհք բաղդ փնտռելու. և կարծելով թէ միամիտ տղու մը հետ գործ ունի՝ ինք՝ հասուն երիտասարդ և քիչ մը սրիկայ՝ և թէ այդ վիճակէն օգուտ քաղել ուզելով՝ նորա ծառայութեան մէջ մտեր էր. «Վասն զի, կ'ըսէր Վահրիճ, ես փախստական մը՝ միտք ունէի երթալ ո՛ և իցէ իշխանի մը ծառայութեան մէջ մտնել. իսկ այս տասնեօթը տարեկան տղուն ծառայութեան մտնելով՝ ինքնիրենս կ'ըսէի. ո՛վ որ զմեզ տեսնէ,

նախ իմ վրաս համարում կ՚առնու՝ զիս սորա դաստիարակը կը կարծէ. երկրորդ, երբ սա սկսի իւր գործը կարգին դնել և քիչ մը դրամի տէր լինիլ, բնականապէս ես գանձապետ լինելով իրմէ աւելի հարուստ պիտի լինէի. երրորդ, ես զօրաւոր և արդէն քանի մը պատերազմ տեսած՝ քանի մը Քուրդ սպաննած՝ զէնք գործածելու մէջ յաջողակ, այդ տղայ իշխանն պիտի ահաբեկէի երբ մինակ լինէինք և բնապէս աւելի տէր ես պիտի լինէի քան թէ նա։ Ուստի Տարօնոյ սահմանագլուխը իրեն հանդիպելով՝ այս խորհրդածութեամբք խնդրեցի զիս սպասաւոր ընդունիլ. իսկ նա որ իր միամիտ հարցմունքներով և պատասխաններով զիս զուարճացուցեր էր, երբ պարզ կերպով ընդունելով իմ խնդիրքս աւելցուց թէ սուտի և անիրաւութեան թշնամի լինելով՝ պէտք էր զգուշանալ այդ բաներէն, վասն զի չ՚էր կրնար ներել և անպատիժ թողուլ, ծիծաղս հազիւ բռնեցի, վասն զի ես փորձ էի և եռեսունը անցած. լա՛ւ՝ շատ լաւ ըսի և ընդունեցայ։ Մեր դաշնադրութեան երկրորդ օրը Եփրատայ մօտեցեր էինք, գիւղ մը գիշերը օթևանելով, երբ առաւօտուն իշխանը ձի կը հեծնէր, գիւղացի մարդ մը եկաւ գանգատելու թէ ինչպէս ես անառակութեամբ ուզեր էի բռնի գգուել և համբուրել դեռահաս աղջիկ մը,

և նորա աղաղակներէն բռնադատեալ միայն թողլու էի պարտաւորել և ծանր նախատինքներ ըրած էի տարեց կնանց որ նորա պաշտպանութեան դիմեր էին. իշխանը որ ես տղայ կը համարէի հանդարտութեամբ ինձ հարցուց թէ իրա՞ւ է այս ամբաստանութիւնը. իսկ ես քմծիծաղով մը՝ Այո՛, ըսի. վասն զի ո՞վ կրնար վախել այդ աղջկան նման պատանիէն, ան ատեն դարձաւ գիւղացւոյն ըսաւ. Հայրիկ, կը տեսնես որ իմ ծառան սուտ չի զրուցեր, և ուրիշ անգամ այդպիսի բան ալ չ՚ընէր, ես քեզ կ՚ապահովեմ։ Ես ալ հեծայ և գնացինք։ Երբ Եփրատն անցանք, և երեկոյի ժամանակ էր, և գիւղը ուր պիտի օթևանէինք մօտ էր՝ հասանք աղբիւրի մը գլուխ ուր մարդ չի կար, տեսնեմ իշխանը ձիէն վար թռաւ, ինձ էլ լրջաբար վար իջնել հրամայեց, ձին ծառի մը կապեց, ինձ նոյնը հրամայեց, ես ալ իմ ձին կապեցի։ Չ՚էի հասկնար թէ ի՛նչ ըսել կ՚ուզէր. բայց երբ տղայական հանդարտութեամբ ըսաւ թէ՝ «Դու խոստովանեցար առաւօտ քու յանցանքդ՝ քու անիրաւութիւնդ, և որովհետև ես խօսք տուի որ ուրիշ անգամ այնպիսի չարութիւն պիտի չ՚ընես, պէտք է զքեզ պատժեմ։» Եւ հազիւ թէ ծիծաղի ժամանակ ինձ թողլով՝ ձախ ձեռօքը իմ ծոծրակս բռնեց այնպիսի զօ-

րութեամբ որ կարծեցի թէ երկաթ մը գլխ յափշտակեց և գետին զարկաւ, ու մէկ ծունկը մէջքիս վրայ դրաւ և աջ ձեռքի խարազանաւ ա՛յնպիսի ծեծ մը ինծ զարնել սկսաւ որ ես շարժելու անկարող՝ պարտաւորեցայ աղաչել պաղատիլ որ թողու։ Իսկ նա անխնայ կը զարնէր մինչև որ տղու պէս «Մէյ մ՚ել չ՚եմ ըներ» ըսի, վայրկենին թողուց և ինծ զրուցեց ամենայն հանդարտութեամբ՝ իբրև թէ մեր մէջ ամենևին բան մը չ՚էր անցած, «պէտք էր որ քիչ մը առաջ խօսք տայիր ուրիշ անգամ այդպիսի անիրաւութիւն չ՚ընելու, ես քեզ այսչափ դիւրին չ՚էի թողուր բայց յիշեցի որ իմ առաջին պատուէրս չ՚էիր մոռցեր և սուտ չ՚ըսիր՝ չ՚ուրացար։ Տէ՛, ե՛լ ՚ուրեմն և զգուշացիր։»

Կ՚ուզէի ելնել, բայց մէջքս ուր ծունկը դրեր էր կարկամել էր, ծոծրակս ուր իւր երկաթէ ձեռքերը անցեր էին՝ չէի կրնար շարժել. իսկ խարազանի հարուածները ո՛ւր ընդուներ էր այնպիսի վիճակի մէջ էր որ ձի նստելն անկարելի էր. ուստի ամօթէս վերջի ճիգն թափելով՝ խուրտուխաշ մարդ մը՝ ելայ կանգնեցայ. Իսկ սարսափելի իշխանը՝ որ ես քառորդ մը առաջ իբրև ալյա կը ծաղրէի՝ քակեց ձին, հեծաւ վրան և գնաց գիւղ։ Հոն՝ աղբիւրի գլուխ կեցած՝ սկսայ մտածել թէ այդպիսի վը-

տանգաւոր տղու մը ծառայութեան մէջ կենալէն աւելի լաւ էր թողուլ երթալ։ Գիւղը չ՚էի ուզեր մտնել, բայց վիճակիս դարման գտնելու համար պէտք էր, ուստի քառորդուան մը ճամբան ժամու մը մէջ առնելով մտայ գիւղ, և առաջին տունը որ հասայ հիւրընկալութիւն խնդրեցի. մեր Հայ գիւղացիք լաւ մարդիկ են, երբ իմ վիճակս տեսան և իմացան թէ ծեծ եմ կերած, պառաւ մը բերին որ դեղ շինէ ինծ. ո՛հ, այդ պառաւին դեղը իմ կերած ծեծես աւելի սարսափելի էր, վասն զի չի կրնալով դիմանալ կովու պէս կը պոռայի, երբ յանկարծ՝ «Վահրի՛ճ, չ՚ե՞ս ամչեր որ տղու պէս կը կանչուըռտես» ըսաւ ձայն մը գլխուս վերև, որ լաւ ճանչեցի, իշխանին ձայնն էր և իրօք ամչեցի։ Իսկ պառաւը բժշկի անգթութեամբ և անհոգութեամբ՝ «Որովհետև շուտ առողջանալ ուզեցիր, կ՚ըսէր, մեծ դեղն ընել պէտք էր, դու յանձն առիր. վաղն առաւօտ հեծիր ձին՝ գնա՛, բան չի կայ ամենևին, մի՛ վախեր։» Երեսի վրայ պառկած էի, վասն զի ուրիշ դիրք կարելի չ՚էր, երբ ինծի քիչ մը բան ուտել հրաւիրեցին. իւրաքանչիւր պատառ դժուար վար կ՚երթար. ուստի պառաւին դիմեցին, նա ելաւ՝ ծոծրակս տեսաւ, «Հը՛, երեք հոգի են եղեր սա ծեծողները, մէկը գլուխն է բռներ՝

մէկը մէջքէն է կոխեր՝ մէկն ալ զարկեր է. հոգ չ՛է, սա ալ կ՚անցնի» ըսաւ, դեռ մ՚ալ ծոծրակիս դրաւ, և ես մտքալով քուն մտայ, առաւօտուն արթնցայ որ աղէկ եմ։ Պառկած տեղս սկսայ խորհրդածել և կ՚ըսէի — այո՛ իշխանը, (որ էլ տղայ չ՛էր), այս սոսկալի ուժով շատ առաջ կերթայ, և նա երբ մեծնայ՝ բնականապէս մեծութեան մէկ մասն ալ իմ կը լինի, խելօք եղի՛ր, Վահրի՛ճ, այդ մարդուն քովէն մի՛ զատուիր, սուտ մի՛ զրուցեր . . . բարեբաղդաբար որ սուտ չ՛էի զրուցեր, այդ տղան . . . այդ իշխանը զիս անտարակոյս կ՚սպաննէր ծեծի տակ . . . բայց անիրաւութիւն բառին մէջ աղջկան երես պաղնելը կա՞յ . . . ես այս օր ճամբան պէտք է երեսս անդացնեմ և իրմէ մեկնութիւն խնդրեմ և իմանամ թէ անիրաւութիւններն քանի՞ են։ Ո՞վ կ՚ըսէր թէ այդ աղջկան պէս տղուն քով այդչափ ուժ կայ . . . մեր Հայկն է այնքան ուժ ունեցել՝ մէկ մ՚էլ Տրդատ թագաւոր, սա էլ երբ քսան տարեկան լինի լեռներ պիտի փրցնէ։ Ես այս իշխանէն չ՛եմ զատուիր, երբ ուրիշ անգամ սատանան զիս սխալեցնէ՝ «մէկ մ՚էլ չ՛եմ ըներ, մեղայ» կը գոչեմ ու կազատիմ։ Ուստի ելայ պառկած տեղէս, տեսայ որ կրնամ շարժիլ, փառք տուի Աստուծոյ, պառաւին ձեռքն համբուրեցի (այս

համբոյրին վրայ ծեծի վտանգ չի կար), նա ալ «ապրիս» ըսաւ, և ելանք ճամբայ։ Այն օր՝ այս օր, ութ տարի եղաւ անցաւ ոչ ծեծ՝ ոչ ծանր խօսք մը չ՛եմ լսած։ Բայց գիտնալու է բնութիւնը, դէմ տալու չի գար։» Վերջն սկսաւ պատմել Մանուէլ Մամիկոնեանի բանակը մտնելն՝ և թէ ի՛նչպէս փոքրիկ գունտի մը զօրապետ անուանեալ՝ շատ քաջութիւններ ընելով Թորթումի գաւառը պարգև ընդունեցաւ կայսրէն, և շատ դրամ Մանուէլի միջնորդութեամբ՝ որ անբաժանելի կ՚ուզէր քովը պահել զինքն և աղջկան մէկը իրեն տալ, և որ Գուրգէն չ՛ընդունելով ամէնքը զարմացան և կարծէին թէ Մանուէլ զինք պիտի արհամարհէր, բայց նա դարձեալ կը սիրէր, մինչև որ նա մեռաւ և իրենք գնացին Թորթում, ուր իշխանը գեղեցիկ ամրոց մը նորոգեց և գրեթէ շինել տուաւ լճին վրայ և վայելուչ ամարանոց մը ջրվէժին քով, և բոլոր կահ կարասիքը բերել տուաւ թագաւորական քաղաքէն։ Թէպէտ չի խօսիր և չի զրուցեր՝ բայց կ՚երևայ թէ նշանած է օրիորդի մը հետ, և սիրածը շատ հեռու պէտք չ՛է լինի, վասն զի այս օր դիւահարի պէս ձին կը քշէր, մինչև որ բոլորովին անհետացաւ. ո՞վ գիտէ թերևս Ցոլակն էլ սպաննեց։

— Իշխանի՝ Նախարարի՝ Եպիսկոպոսի՝ վար-

դապետի գործն շատ դիւրին է, եղբայր, մենք ժողովուրդս մտածենք որ իշխանին էլ՝ քահանային էլ՝ աւազակին էլ՝ հանելու ենք՝ տալու ենք։ Դու այդ մարդուն ծառայելովդ ի՞նչ օգուտ ունեցար, այդ պատմէ մեզի։

— Վրանիս Աստուած կայ, ես այդ մարդէն երկրէ երկինք գոհ եմ. ամեն տարի իմ ու տանս պէտքը կը հոգար, մինչև իմ թուղթերս տարին անգամ մը ինք կը գրէր և կ՚ուղարկէր, պատասխանները ձեռքս կը հասցնէր, հիւանդ որ լինէի կը նայէր կը հոգար, միայն ինձի չ՚է՝ ամեն իւր ծառայողներուն հետ այսպէս կը վարուէր։

— Այդ մարդը Արծրունի՞ է։

— Այո՛։

— Ինչո՞ւ Հայաստան կը թողու կ՚երթայ, մենք այդպիսի իշխանի մը պէտք ունինք, այդպիսի քաջ մը և լաւ մը երկիրը կը պահէր թշնամիներէն՝ աւազակներէն. և քեզի պէս որիկայ երիտասարդներն էլ՝ կը խելօքցնէր, մարդ կ՚ընէր։

— Ուղորդ է, Կարապետ եղբայր, շատ ճշմարիտ ասացիր։ Հիմա ձեր իշխանն ո՞վ է։

— Աշոտն է, Արծրունին. վատ մարդ չ՚է, բայց ի՞նչ կարող է անել. երկիրը չի կրնար պաշտպանել. երբ թշնամին քիչ է՝ սակաւա-

թիւ է այդ իշխանները կը վազեն վրան՝ կը ցրուեն, իսկ երբ շատ է կը քաշուին իրենց բերդերն՝ իրենց ամրոցներն, վերէն կը նային թէ անօրէնը ի՞նչ կ՚ընէ, ի՞նչպէս կ՚սպաննէ, ի՞նչպէս գերի կը տանի, ի՞նչպէս կ՚այրէ, ի՞նչպէս կը յափշտակէ։ Եւ երբ նա կ՚երթայ, կ՚իջնեն իրենց ծակերէն, ժողովուրդը կը կրակրծան և կը յորդորեն որ նորէն ցանեն՝ նորէն հնձեն՝ նորէն շինեն։ Ահա մեր վիճակը։ Այդ անիծած Արաբը դեռ երեկ էր որ եկաւ քանդեց՝ ապականեց երկիրը. ի՞նչ ըրաւ Աշոտ մեծ իշխանը, գնաց ամրացաւ բերդերը, ընծայներ՝ պատանդներ ղրկեց Արաբին, ինքզինքը ազատեց, ճշմարիտ է, մեզ ալ ազատեց, բայց բանը բանէն անցնելէն վերջը։

— Մա՛րդ մա՛րդ Սասնցիք են, եղբա՛յր, նախարարներու՝ իշխաններու՝ Արծրունեաց՝ Բագրատունեաց ընէն չի եղածը ըրին մարդիկը՝ գլուխ հանեցին։ Տարօն հիմա՝ Արաբ մը չի կայ։

— Ի՞նչ կ՚ըսես, եղբայր, երկու շաբաթ չի կայ, դեռ հոս էին Տարօնոյ եկած, Սասնկ զարկին, մենք իմացանք պատրաստուեցանք որ էշնահատակ չ՚լինինք. եթէ մեռնել է՝ գոնէ մեռցնենք այնպէս մեռնինք ըսինք, մէկ մ՚էլ իմացանք որ անհետացեր են։ Այս անօրէնները այս կողմ՝ այն կողմ կը զարնեն։ Լաւ

ծեծ մը պէտք է ուտեն որ մէյ մ՚էլ չի գան։

— Եթէ լաւ ծեծ մը այս անօրէնները խելօքցնէր որ էլ չի գան, Սասնցիքներէն երեք օր առաջ կերածնին պիտի լնի, վասն զի մէկ հատ չի մնացին. Ոստիկան՝ զօրապետ ձիաւոր՝ հետեւակ՝ ամէնքն էլ մինչեւ վերջինը ջարդուեցան Մշոյ մէջ։

— Ի՜նչ, եղբայր, երա՞զ կը տեսնես։

— Ի՜նչ երազ, Ս. Կարապետ վկայ որ հատ մը չի մնացին։

— Դու ուստի՞ գիտես, ո՞վ քեզ պատմեց։

— Ես հոն էի, ես միասին էի. ես իմ աս ձեռօք քանի հատ հաւու պէս մորթեցի, ըսի քիչ մը առաջ. խո՞ւլ էիր, չ՚իմացար։

Ան ատեն Վահրիճ սկսաւ ծայրէ ծայր պատմութիւնն ընել։ Բոլոր ընտանիքը ժողվուած ուշադրութեամբ մտիկ կ՚ընէին. եւ երբ թշնամւոյն կոտորածին հասան՝ երբ Ոստիկանին մահուան պատմութիւնն լսեցին, էլ ուրախութիւնը իր վերջին սահմանները գտաւ. Կարապետը իւր տղայքը վազցուց Տէրտէրին՝ դրացւոյն՝ ազգականին՝ խնամիին ու սանահօրին տունը՝ թէպէտ ձիւնը կուգար բայց դարձեալ սենեակը բազմութեամբ լցուեցաւ, եւ երբ Սասնցւոց քաջութիւնն երկրորդ անգամ եւ աւելի զարդարուն պատմեց Վահրիճ, ամէնքն զմայլե-

ցան, գինին ծածկած կարասներէն յայտնի եղաւ՝ դուրս ելաւ, երգող բանաստեղծը իր եռաթելեան պարզ նուագարանը ձեռք առած երգեց Սասնցւոց գովաբանութիւնը, ուրախութիւնը մինչեւ կէս գիշեր տեւեց, եւ ամէնքը «Գիշեր բարի» եւ «Լոյս բարի» մաղթելով իրարու ելան գնացին իրենց տեղ, մեծ մեծ շնորհակալութիւն ընելով Վահրիճի, որու պատմական աշխոյժը մինչեւ փառաւորեցաւ բանաստեղծներու երգերուն մէջ։ Կային երիտասարդներ, որ երբ մեծերը տուներնին մտան ցրուեցան, իրենք փողոցին մէջ ձիւնին տակ կեցած՝ «Եղբա՛րք, մենք էլ Սասնցւոց պէս ինչո՞ւ չ՚լնինք, վտանգի օրը երբ կը հասնի՝ յիմար հաւուն պէս գլուխնիս փոխանակ ծածկելու տեղ ինչո՞ւ չ՚ելնենք, թշնամւոյն դէմ չի յարձակինք. մինչեւ ե՞րբ Հայուն անունը վատութեամբ աղտեղենք։ . . .» եւ այսպիսի խօսքեր ըսելով գնացին իրենց տները։

Իսկ նոյն միջոցին Վահրիճ օրուան յոգնութեան եւ գինւոյն զօրութեան օգնութեամբ մեռելի պէս կը քնէր եւ որ աւելին է սաստիկ կը խորդար Կարապետ եղբօր անկողնով սենեկին մէջ։ Եւ երբ առաւօտ եղաւ՝ հեծաւ իր գրաստին վրայ եւ կ՚երթար գիւղ գիւղ հարցնելու իր իշխանը մինչեւ որ Մութուն հասաւ. Ուշաու-

նեաց Ոստանն։ Եւ ի՞նչ եղաւ իր զարմանքն երբ իմացաւ թէ իւր իշխանը առանց հրաման մը ձգելու՝ առանց իւր խօսքը նաև ընելու, հեծեր Ցոլակին վրայ՝ ելեր գնացեր էր։

Ան ատեն ձիու գլուխը դարձուց, «երթամ Մոկս տեսնեմ թէ տունը կին և տղաք ինչ կ'ընեն։» Եւ իրօք երբ Մոկաց սահմաններն մտաւ, ամեն բան լաւ և երջանիկ վիճակի մէջ էր. վասն զի հոն Սմբատ Բագրատունի Սպարապետին հովանաւորութեան տակ հանգստութիւն և խաղաղութիւն կը տիրէր։

ԳԼՈՒԽ Է.

ՀՌԻՓՍԻՄԷ ՏԻԿԻՆ.

Բզնունեաց ծովուն Արեւելեան հիւսիսային ծայրը Առբերունի գաւառին գլխաւոր քաղաքը Բերկրի, այն մեր յիշեալ ժամանակներս գեղեցիկ քաղաք մ'էր իր զօրաց բերդովը որ բլրոյ վրայ կը բարձրանար։

Այդ բերդը բնակութիւն էր Արծրունի իշխանաց որ կը տիրէին Վասպուրականի ընդարձակ գաւառին, և օր աւուր կ'ընդարձակէին իրենց տէրութիւնը փոքրիկ նախարարութիւններն անհետացնել ջանալով։ Դիւանագիտութիւն

բառը նեթէ չի կար՝ բայց իրը միշտ կար, և Արծրունի ժառանգ իշխանը իր խանձարուրներէն գիտէր թէ ի՞նչ պէտք էր ընել ըստ պարագային յափշտակելու իւր դրացեաց ժառանգութիւնը և զօրութիւնը օր աւուր մէկ ձեռաց մէջ ամփոփելու համար։ Եւ քանի որ Հայաստան երկրի վրայ թշուառութիւն կը զեղանէր, այդ տիրապետութեան ոգին Արծրունեաց մէջ կ'աճէր՝ կ'ուռճանար։ Եւ այս ժամանակներուս մէջ կը տեսնուի յայտնի պատմութիւնը ունել ուզողին որ Հայաստան երեք մեծ նախարարութեանց սկսեր էր բաժնուելու. Բագրատունեաց՝ Արծրունեաց և Սիւնեաց։ Մամիկոնեանք անունով միայն կային։ Իսկ Վասպուրականի մէջ Ռշտունիք սեւանք ո՛ւր հասեր էին։ Ամատունիք, Ընտրունիք, Գնունիք, Բաջբերունիք, Հաւնունիք, Վահեւունիք, Անձեւացիք հարկատու ծորտեր էին դարձել Արծրունեաց Աշոտ մեծ Նախարարին որ յանդուգն՝ փառասէր երիտասարդ մ'էր։ Իւր մայրը՝ Հռիփսիմէ մեծ Տիկին հռչակաւոր սրամտութեամբ՝ խոհեմութեամբ՝ ճարտարութեամբ և բարեպաշտութեամբ, քոյր Բագրատունի մեծ իշխանացն Սմբատայ և Բագարատայ։ Եւ այն օրէն որ եղբայրն ընտանեօք գերի գնացեր էր 'ի Բաղդատ՝ շատ տխուր էր և անհանգիստ, վասն զի 'ի

բաց առեալ որ այնպիսի մեծ իշխան շղթայներու մէջ կը գտնուէր, կը վախեր նաև ուրացութենէ, ուստի առանց իր զաւակաց բան մը իմացնելու, իրեն հաւատարիմ իշխան մը՝ Խոսրով Անեցին՝ հնարագէտ և իմաստուն մարդ՝ ղրկած էր նամակաւ վիճակը և ճար մ՚ընելու նորա ազատութեան։ Ուստի մտատանջ՝ Բերկրուց ապարանից մէջ նստած՝ ամեն օր կ՚սպասէր Խոսրովի գալուն և ահա երեք ամիս էր որ նա չ՚էր երևած։

Հռիփսիմէ Տիկինը երբ վտանգն սպառնար՝ խելքը չ՚էր շփոթէր, մանաւանդ թէ շատ անգամ երբ այս մարդիկ իրենց գլխուն ղեկը կը կորուսէին՝ նա իրերը և պարագաները կշռել և համեմատել գիտէր, և ըստ այնմ շարժիլ խորհուրդ կ՚ուտար, և միշտ երբ իր խորհուրդներուն հետևած էին իւր այրը՝ Տէրն Արծրունեաց, և հիմա որդին Աշոտ՝ ամենևին վնաս չ՚էին կրած։ Ինք արենակցութեան կապ լինելով ՚ի մէջ Բագրատունեաց և Արծրունեաց, զայն նիզակակցութեան դաշամբ նաև ամրացուցեր էր. իր փափաքն էր նոյն դաշնակցութեան մէջ մտցնել Սիւնեաց երկու մեծ նախարարներն, և թերևս անօգուտ լինէին իւր ջանքերը եթէ Արաբաց արշաւանքներով դառն կերպարանք չ՚առնուին. ինք էր որ երբ ամենքը

յուսահատած էին և լեռնային բերդերը քաշուիլ կը մտածէին՝ անձամբ երթալով ընծայիւք և պատանդներով Եուսուֆ Ոստիկանը համոզեր էր խաղաղութեան իւր տղուն Աշոտի հետ։ Իսկ հիմա միշտ Բագարատայ վրայ էր միտքը. երբ իրեն լուր բերին թէ Խոսրով Անեցի եկեր կ՚սպասէր։ Շուտ հրաման ըրաւ որ մտնէ. և ինչպէս սովորութիւն է այսպիսի պարագայի մէջ՝ դեռ Խոսրով դահլիճ՚ին դռնէն միայն տեսնելով՝ տիկնոջ երեսը պարզեցաւ։

— Բարի է գալուստդ, Խոսրով իշխան, Բագարատը տեսած ես, երեսէդ յայտնի է ըսաւ։

— Այո՛ տիկին, տեսայ, տեսնուեցայ հետը, և յուսալի է Ամիրապետին խստութիւնը կակղնայ քիչ ատենէն, վասն զի երկրին մէջ խռովութեան շատ սերմունք կան. ես արդէն հոն եղած ժամանակս դաւադրութիւն մը յայտնուեցաւ, շատ մարդիկ մահուան դատապարտուեցան։ Զանազան գաւառներ կը խլրտին և ապստամբութեան նշաններ կան. եթէ մենք Քրիստոնեայ հայկական ժողովուրդք հանդարտ և խելօք համբերենք՝ Մահմետականաց մէջ քաղաքական պատերազմը կ՚սկսի։ Իսկ եթէ խլրտինք՝ առիթ տանք, նոցա կրօնամոլութիւնը կը զայրացնենք և կը միաբանին մեզի դէմ իրենց կատաղութիւնն ՚ի գործ դնելու։

— Ես միշտ այն խորհուրդն եմ տուեր որ այս անօրէն ազգին հետ խոհեմութեամբ վարուինք, առանց գրգռելու, և ջանանք միանալու և միացնելու մեր մեծ իշխանները և միւս կողմէն երկիրը լաւ կառավարենք՝ զօրացնենք. բայց ո՞ւմ կ'ըսես. մեր տղաքը խօսք չ'են հասկընար. «լա՛ւ կ'ըսես, մայրիկ, դու շատ խելօք կը մտածես» կը գովեն, դարձեալ խելքերնին մտքերնին իրենց կրից՝ իրենց զուարճութեանցն է. և իմ խորհուրդներէս տասնին՝ քսանին մէկն 'ի գործ չի դրուիր:

— Ճշմարիտ է, Տիկին, բոլոր ըսածներդ, և Բագարատ իշխանը՝ իւր բոլոր մեծամտութեամբ խոստովանեցաւ. թէ՝ «իմ գլուխս այս փորձանքը չ'էր գալ եթէ երկու հոգւոյ խորհուրդ մտիկ ընէի. Աստուած երկու խելք միայն ստեղծեր էր Հայաստանի մէջ, և ան խելքերու մէկը կնկան մը գլուխը լեցուցեր էր, միւսը լեռնցի չինականի մը:

— Ո՞վ է եղեր այդ լեռնցին, հարցուց Տիկինը սուր աչքերը փայլեցնելով:

— Սասունցի Յովնան մը:

— Յովնանը՞:

— Դու Յովնանը ուստի՞ կը ճանչես, Տիկին ես ամենևին չ'էի լսեր այդ անծանօթ անունը:

— Ի՞նչպէս չ'եմ ճանչեր: Ահա մեր մեծա-

մեծ իշխանաց հազար մէկ յիմարութեանց առաջիններէն մէկն էր. կ'արհամարեն՝ ոչինչ կը համարին իրենցմէ շատ վար դրուած ժողովրդեան մարդը. նորա խելքէն՝ քաջութենէն՝ կարողութիւններէն օգուտ քաղել ամենևին չ'գիտեն: Հազար անգամ ըսեր եմ եղբարցս էլ՝ զաւկներուս էլ, որ օրինակ պէտք է առնուլ նոյն իսկ Արաբներէն՝ նոյն իսկ Յոյներէն որ ամէն մարդու՝ հասարակ զինուորին՝ նաև օտարականին մտաւոր և մարմնաւոր զօրութիւնը չ'են արհամարհեր՝ կը վարձատրեն, փառաց և մեծութեան կը հասցնեն. իսկ տղաքս նախատինք կը համարին անձանց, ո՛չ իբրև հաւասարի՝ այլ իբրև մարդու վրայ նայիլ՝ ժողովրդեան մէջէն ելած մարդուն վրայ, որ խելք և յաջողակութիւն ցոյց կուտայ, և զանի ոտնակոխ ընել՝ ոչինչ դարձնել իրենց պարտք կը համարին: Չ'են տեսներ յիմարները որ մեր Հայաստանեայց եկեղեցին եթէ այսչափ հալածանաց կը դիմանայ, այսչափ ներքին և արտաքին բռնութեանց կը տանի՝ այն պատճառաւ միայն անկործան կը մնայ՝ որ անխտիր մտաւոր կարողութեանց իր դռները բացեր յետին ողորմելի գիւղացին՝ շինականը՝ անազատը կ'առնու իւր ծոցը՝ կը սնուցանէ՝ կը մեծցնէ և կաթողիկոսական գահոյից վրայ նաև կը բարձրացնէ:

— Բայց այդ Յովնան կը ճանչեմ ըսիր, Տիկին, ուրեմն երեւելի մարդ է։

— Եթէ իւր զգեստներն նկատենք, եթէ իւր ազգային անունը նկատենք, եթէ իւր հարըստութիւնն ու կալուածները նկատենք՝ ամենաոչինչ մարդ է. իսկ և եթէ իբրև քաջ և խելօք մարդ նկատենք՝ մեր բոլոր իշխաններու՝ ոչ Վասպուրականի համար կ'ըսեմ, այլ բոլոր Հայաստանի իշխաններու մէջ տասն հոգի չ'եմ գտներ նորա հետ բաղդատելու համար։

— Բայց ի՞նչպէս կարելի է Արծրունեաց Տիկնոջը այսպէս լաւ ճանչել յետին շինական մը. զիս այդ կը զարմացնէ։

— Ես երբ զինք ճանչեցի Արծրունեաց Տիկին չ'էի՝ այլ Բագրատունեաց Օրիորդ։ Հօրեղբօրս պալատն 'ի Տարօն այդ տղան կը տեսնէի. տարեկից իշխանազուններուն հետ կը խաղար՝ կ'իյնէր՝ կ'ելնէր յաջողակ՝ զօրաւոր՝ առաջին ամէն մասնաւոր կրթութեան և մարզերու մէջ։ Նոյնպէս մտաւոր կարողութեան կողմանէ կը զարմացնէր նաև այն վարդապետը որ վարժապետելու և ատենադպրութեան պաշտօն ունէր հօրեղբօրս քով։ Եւ այն ատենուան իւր յաջողակութիւնը յայտնի էր ամենուն որ դեռ 15-16 տարեկան, ո՞ և իցէ դժուար պարագայի իրեն կը դիմէր ամէն մարդ։ — Ատենադպիր վարդա-

պետը հիւանդ էր՝ Յովնան կը կատարէր նորա պաշտօնը։ Գաղտնի խօսք մը կար մէկուն տանելիք՝ Յովնանու կը յանձնուէր նոյն պաշտօնը։ Հօրեղբօրս տղաքը վտանգաւոր՝ անել ճամբու մը մէջ մնած էին՝ Յովնան կրնար զիրենք հանել՝ ճողոպրել։ — Մէկ մ'էլ յանկարծ օր մը խոր լռութիւն տիրեց Յովնանու անուան և անձին վրայ որ անհետացաւ մէջտեղէն. բայց եթէ Յովնան միայն անհետանար զարմանք չ'էր՝ այլ մի և նոյն ժամանակ հօրեղբօրս աղջիկներէն սրամիտն ու ծնողաց սիրականը Վասկանուշ, Յունաց սահմանները կ'ուղարկուէր կուսանաց վանքի մը մէջ իւր կեանքը մաշեցնելու։ Ամենուն զարմանք պատճառեց այս դիպուածը բաց 'ի ինձմէ. վասն զի ես գիտէի թէ Բագրատունի Օրիորդը և Յովնան իրար կը սիրէին, և մէկ քանի անգամ իրենց տեսութեան ներկայ գըտնուեցայ ծաղկոցին մէջ՝ ուր գիշերները ժամդիր էին իրար տեսնելու համար այդ երկու սիրահարները։ Հետևանքը սարսափելի երևցաւ ինձ, յորդորեցի Վասկանուշ մոռնալ այս սէրը, հեռացնել իրմէ այս երիտասարդը՝ որ թէպէտ ամեհի արիւծ՝ բայց նորա քով ամենախոնարհ և քծուն շուն էր. իսկ Օրիորդը թէ և իրաւացի կը գտնէր իմ խորհուրդս՝ բայց սրտին սիրածէն բաժնուիլ շատ դժուար էր. ուստի

երբ յանկարծ այս աքսորները լսեցի՝ չէ զարմացայ, այլ զառնացայ՝, մանաւանդ երբ այս դիպուածէն վերջ հօրեղբօրս հրաւէրին հնազանդուելու համար գնացի, և տեսայ որ զաւկին հետ ինքն էլ պատժուեր էր և երեք ամսու միջոցին մէջ՝ ժամանակէն առաջ ծերացեր էր: Խե՜ղճ հայր, զիս զաւկին պէս կը սիրէր՝ իւր զաւկին սիրոյն համար՝ վասն զի գիտէր թէ նորա շատ սիրական էի և կերպարանօք էլ նման. յանձն կ'առնուր հալել՝ մաշել՝ զաւակն սպաննել և ինքն էլ մեռնիլ, որպէս զի իւր յիմար ազնուատոհմական ամբարտաւանութենէն բան մը զոհած չ՚ըլնի: Արթալէս քանի մը օր վերջը, զիս տարաւ նոյն ծաղկոցը ժամեղ Օրիորդին սիրոյ վայրկեաններուն. շրջան մ'ըրինք մէկտեղ. և այն խիստ մարդը, յանկարծ թուլցաւ, արտասուքը գետօրէն աչքերէն իջեցընելով, «Թշուառ հայր եմ ես, Հռիփսիմէ՛, ողբա՛ իմ վրաս» ըսաւ: Իսկ ես նոյն վայրկենին երբ առանց անմեղադրելի ընելու իմ բարեկամուհիս, խնդրել համարձակեցայ որ բաւական համարի եղած պատուհասը, թոյլ մարդը դաղան դարձաւ, արտասուքը վայրկենին չորցաւ և երկու շանթաձիգ աչքերով «մի՛ խօսիր, մահը միայն զանոնք իրենց արգելանէն կրնայ բաժնել, վճիռն անդառնալի է՜» գոչեց: Ես մեր

տունը դարձայ սրտաբեկ և դառնացեալ: Հօրեղբայրս օր աւուր տկարացաւ՝ բայց այնչափ տարի ապրեցաւ որ երբ մեռաւ և Վասկանուշէ հրաւէր գնաց տուն դառնալ երբ կամենար, նա այսչափ միայն պատասխաներ էր թէ «Շատ երջանիկ էր կրօնաւորութեան հաւասար կեանքի մէջ ուր ազնուատոհմութիւն չէ կար և Աստուծոյ արարածներն հաւասար էին:»

Այս տեղ դադրեցաւ իշխանուհին: Իսկ Խոսրով հետաքրքիր՝ չէ կրցաւ համբերել և հարցուց:

— Իսկ Յովհան ի՞նչպէս մէկտեղ ելաւ նորէն:

— Այդ երկաթէ մարդը սպաննել միայն կարելի էր, բայց մշտնջենաւոր բանտի դատապարտել յիմարութիւն էր: Հօրեղբայրս՝ նա էլ Շիրակայ գաւառը՝ որ իր սեփհականութիւնն էր՝ վանքի մէջ բանտարկել հրամայած էր, և ամենայն խստութեամբ պահել. և իմանալու համար թէ իւր հրամանը ճշդութեամբ կը պահուէ՞ր յանկարծ երկու տարի վերջը ճանապարհորդութիւն յանձն առնելով կ'երթայ աչօք տեսնելու իւր կալանաւորը, որ բաւական նկուն չէ գտնելուն համար՝ կը հրամայէր աւելի խիստ բանտի մը դատապարտել, և գտնելով այդ վանքին ընդարձակութեան մէջ գետնափոր սենեակ մը խոնաւ և մահաբեր, հոն նետել կուտար

այդ անզգամը որուն եղեռնն էր սիրել գեղեցիկ սիրուն և սիրոյ արժանի աղջիկ մը, և որուն վեհանձն բարձրութեան և հեռատեսութեան միջոցը խեղճ լեռնցին չէր կրցեր չափել: Բայց կ՚երևի թէ Աստուած կ՚ուզէ երբեմն մեր յիմարութեան աստիճանը մեր երեսին յայտնել. այդ մթին և խոնաւ սենեակը որ խոր վերապ կը նմանէր անծանօթ գետնափոր ճամբու մը սկիզբն էր, ուսկից նոյն գիշերը սողալով ելեր գնացեր և ազատեր էր Յովհան: Իսկ Բագրատունեաց իշխանը իւր վրէժխնդրութեան մէջ սխալեալ՝ լի ատելութեամբ եկաւ Տարօն և հոն քանի մը տարիէն մեռաւ, իւր երկու երիտասարդ զաւակաց մահն էլ տեսնելով: Իսկ Յովնան ութ տասը տարիէ վերջ լսեցի թէ եկեր էր Սասուն, քաշուած կեանք մը կը վարէր իւր լեռներուն և իւր հայրենի գիւղին մէջ, նոյն գեղացիներուն պէս պարզ ապրելով. ետքը զէնքը տեսայ մէկ երկու անգամ եղբօրս՝ Բագարատ իշխանին տուն, ուր նորա հրաւիրելով կուգար, և կ՚իմանայի թէ Սասունցիք յայտնի իմացուցեր էին, թէ ո՛ և իցէ բանի համար երբ պէտք ունենար իրենց իշխանը՝ Յովհան եղբօր միջոցաւ և ձեռօք կ՚ուզէին որ կարգադրէր: Եւ այս կը նշանակէր թէ ո՛վ ուզէր Սասունն իրեն ունենալ՝ պէտք էր Յովհան միջնորդ ունենար: —

Իսկ դու Խոսրով, նամակ մը՝ գրութիւն մը չ՚ունեցա՞ր եղբօրմէս:

— Ոչ Տիկին, անկարելի էր, վասն զի շատ խստութեամբ կը պահէին իշխանը. ես երբ հոն հասայ դեռ կրկին շղթայիւք կապուած էր, բայց վերջը կապանքը թուլացուցին, և բանտը փոխեցին, և հրաման եղաւ որ ընտանիքը երբեմն երթան զինք տեսնեն. կրօնափոխութեան յորդորանք և սպառնալիք դադրեցուցին. այս ժամանակ էր որ ես էլ բանտապետին ձեռք կաշառք խթելով՝ կրցայ զինք երթալ տեսնել. ուրախ էր և յոյս ունէր բոլորովին ազատիլ, ինձ յանձնեց աղաչել Տիկնոջդ որ ամենքը հանդարտութեան յորդորես, որպէս զի այս անգամ և անհանդարտ ժողովրդոց մէջ ծագելիք խռովութեան արգելք չ՚լինի:

— Արդէն իմ փափաքս էլ այդ է, և միշտ Աշոտի այս յորդորն եմ տուեր և նոյն խրատը կը շարունակեմ: Բայց դու, Խոսրով իշխան, յոգնութիւնդ ա՛ռ, ետքը ժամանակ մի՛ կորսընցներ, գնա՛ Մոկս, եղբօրս Սմբատ Սպարապետին, պատմէ ի՛նչ տեսութիւն որ ունեցար Բագարատայ հետ:

— Գլխուս վրայ քու հրամանքդ, Տիկին, ըսաւ Խոսրով՝ ձեռքը պագաւ, և հազիւ թէ դահլիճին դռնէն դուրս ելաւ, ընդարմա-

ցաւ՝ փայտ կտրեցաւ՝ մնաց՝ և ետ ետ քա-
շուելով դարձեալ ներս մտաւ։

— Այդ ի՞նչ է, Խօսրով, ի՞նչ կը նշանակէ քու ետ դառնալդ, ըսաւ Տիկինը բազմոցէն ելնելով։

— Նայէ՛, Տիկին, տե՛ս պատասխանեց Խօսրով։

Եւ իրօք Տիկինն ալ ապուշ մնաց տեսնելով Արծրունեաց պատանիները՝ որ զուարթերես՝ մէկիկ մէկիկ ներս կը մտնէին իրենց յարգանքը մատուցանելու մեծ Տիկնոջն Արծրունեաց։

— Այս ի՞նչ է, այս ի՞նչ յետադարձ է, կ՚ըսէր Տիկինը զայրացեալ, այսպէս դուք մեզ կը խաբէք. ձեր փախուստը չէ՞ք իմանար թէ Ոստիկանը խաբել չէ՝ այլ զմեզ։

— Բայց չէ, Տիկին, Ոստիկանը՝ ձեզի օրեր՝ ինքն էլ և բոլոր իր զօրքն էլ չի կան՝ կոտրուեցան ամենքն էլ։

— Ի՞նչ կ՚ըսէք. ո՞վ էին այդ յիմար գործողութիւնն ընողներն։

— Սասունցիք։

— Սասո՞ւնցիք։

— Այո՛ Սասունցիք իրենց գլուխը Յովնան ունենալով եկան Մուշ կոխեցին, Արաբները բոլոր ջարդեցին, Յուսուֆ Ոստիկանն սպաննեցին, մեզ էլ ազատեցին և իրենք գնացին Ս. Կարապետի վրայ յարձակող խումբին դէմ։

— Յովնանէն զատ ուրիշ գլուխ չի կա՞ր այս Սասնցւոց։

— Գուրգէն իշխանն էլ միատեղ էր, բայց նա չէր հրամայէր։

— Գուրգէ՞ն, Արծրունի՞ն, ի՞մ տղաս, նա՞ այդպիսի յիմարութիւն ըրաւ։

— Ո՛չ, Տիկին, մեր Գուրգէն իշխանը չէր. ուրիշ Գուրգէն մ՚էր սա։ Մենք զինք չէինք տեսած, բայց սա էլ Արծրունի էր։

Եւ այս խօսքերն պատանիքը ամէնքը մէկտեղ կը զրուցէին, իսկ Տիկինը որ գունատեալ և մինչև հիմա կանգնած՝ կիրքով կը խօսէր, նստաւ իբրև յոգնած, իբրև թէ ինքնիրեն՝ «Տէ՜ր Աստուած, աս ի՜նչ խառնակութիւն է, աս ի՜նչ շփոթութիւն է, կ՚ըսէր, և երիտասարդաց մէկուն ակնարկ ընելով, Գրիգոր իշխան, մօտ ե՛կ և դու միայն պատասխանէ, ըսաւ։ Ո՞վ է այդ Գուրգէն Արծրունին, կրցա՞ք իմանալ։

— Այո՛ Տիկին, պատասխանեց պատանի իշխանը, ես իր ծառային հարցի, իմացայ թէ նոր կը հասնէր Յունաց երկրէն, թէ ինք Արծրունի է հօր կողմէ, Մամիկոնեան մօր կողմէ. գեղեցիկ՝ պարթև՝ սև աչք՝ սև ընքուի՝ սև մօրուք՝ քանը հինգ երսուն տարու երտասարդ մ՚է, թէ Կոստանդնու Պոլիս կայսրը աս տղան շատ կը սիրէ եղեր իր քաջութեանց համար, և թէ իրեն երկիր էլ տուեր է, և թէ աղջիկ

էլ ուզեր է տալ, բայց սա թողեր ամեն բան հիմա հայրենիք կը դառնայ։

— Սորա հօր անունը իմացա՞ր։

— Այո՛ Տիկին, Ապուպէլճի մը տղայ է եղեր։

— Աս գեղեցիկ պարագայներուն մէջ միայն այս կը պակսէր, ըսաւ Տիկինը ցաւագին՝ Խօսրովի դառնալով։ Այս Դուրգէն հետը զօրք էլ ունէ՞ր։

— Ո՛չ Տիկին, երկու թիկնապահ երիտասարդ և ծառայ մը։

— Սասունցիք իրեն կը հնազանդէի՞ն։

— Ո՛չ Տիկին, սա և ոչ գործողութեան մէջ խառնուեցաւ, և բաց 'ի Յովնանէ մարդու հետ նաև չի խօսեցաւ։ Մէկ օր մը միայն մեզ հետ ճանապարհորդեց, հազիւ թէ մէկ երկու խօսք մեզի ըսաւ։ Իսկ երկրորդ առաւօտուն, բարի՛լոյս մը միայն ըսաւ, և ձին քշեց գնաց. մենք կարծէինք թէ զինք նորէն պիտ գտնէինք, իսկ նա անհետ եղեր էր միայն գիշեր մը Ոստան հանգչեր էր։

— Լա՛ւ, իմացայ, գնացէ՛ք հանգչեցէ՛ք, տղա՛ք, ըսաւ Տիկինը։ Եւ երբ ամենքը գնացին, Տե՛ս, Խօսրով, մարդս հիմա ի՞նչ ընէ. մենք ինչ բանէ որ կը վախէինք ահա այն կատարուեցաւ, մեր վերջը հիմա ո՞ւր պիտի երթայ՝

Աստուած միայն գիտէ։ Սա միջոցիս Ապուպէլճի տղան էլ մէջտեղ ելնելն միթէ՞ Աստուծոյ պատիժն չէ՞։ Ես այնչափ աղաչեցի իշխանին որ խնայէ այդ մարդու կենաց, իրեն ազգակիցն ու արենակիցն էր. բայց կնոջ խօսք ի՞նչ նշանակութիւն ունի, կնոջ խելք ո՞ր բանի կը հասնի. մարդուն արիւնը թափեց անխիղճ, և անիրաւութիւն անիրաւութեան վրայ աւելցնելով իմ որդիս Աշոտ՝ հօրը յաջորդելով՝ որբ տղուն ժառանգութիւնը բոլորովին յափշտակեց։ Հիմա իմ միտքս շփոթեցաւ. եթէ այդ Դուրգէն երիտասարդ՝ պատերազմի մէջ մեծացած, որ միայն հանդիսատես եղեր է կոտորածին, միթէ՞ Արաբին գործիք պիտի չըլլնի՞ մեզ դէմ։ Արդար դաւաճան մը՝ իրաւարար մատնիչ մը մեզի կը պակսէր, փա՜ռք Աստուծոյ նա էլ գտնուեցաւ։

— Ի՞նչ կ'ըսես, Տիկին, վերջապէս, այդ երիտասարդը Արծրունի արիւն ունի երակաց մէջ. այդպիսի անզգամութիւն չի կրնար ընել։

— Ի՜նչ յիմար խօսք զրուցեցիր, Խօսրով, այդ խօսքդ զիս աւելի կը վախցնէ հին յիշատակներ միտքս բերելով։ Մեծին Ներսէսի ժամանակից մատնիչ՝ ուրացող՝ դաւաճան Մերուժանը մոռցա՞ր՝ Բագրատունի Ասպետին շամփուրով պսակուած սատկեցաւ։ Նոյնպէս ուրացող դաւաճան Նաւասպ Արծրունին մոռցա՞ր որ

Մեծին Վարդանայ սուրով սատկեցաւ, և դրեթէ մեզ ժամանակակից երկրորդ Մերուժանը որ Մահմէտի կրօնքն ընդունեցաւ և կորաւ: Ես Արծրունիներէն իրաւունք ունիմ վախելու. այս Արծրունեաց տուն սովորաբար միջին կարգի մարդ չ'ունի, Խոսրով, կամ լաւ մարդիկ կը բերէ, կամ անօրինաց անօրէն կը բուսցնէ:

Այս խօսքերը երբ լսեց Հռիփսիմէ Տիկին, ոտք ելաւ. թէպէտ յիսունն անցած՝ բայց դարձեալ իւր գեղեցիկ հասակաւ և կենդանի վսեմ նայուածքով ամեն աչքի ակնածութիւն և պատկառանք կը բերէր: Խոսրով այս խօսքերուն պատասխան չի տուաւ, և լռութիւն մը տիրեց մինչև Տիկինը իբր քունէ արթնցած՝.

— Խոսրով, գնա՛ հանգի՛ր, եթէ ես պէտք ունենամ քեզ կ'իմացնեմ, ըսաւ. և երբ Խոսրով գնաց՝ մնաց իւր սենեակին կից մատուռը աղօթելու:

Թերևս բոլոր իւր տան մէջ այս արթուն կինը միայն ունէր սրամտութիւն գուշակելու համար փոթորիկը որ պիտի հանէր, և որովհետև մարդկանց վրայ յոյս չ'ունէր, նա մանաւանդ և յերաւի կը կասկածէր ու կ'երկմտէր, ինկաւ Աստուծոյ առջև ողբալու իր երկրին կորուստը:

Այս միջոցին Աշոտ իշխանը և իւր եղբարք

Գուրգէն և Գրիգոր որսի՝ խաղերու՝ անառակութեանց և զուարճութեանց միայն զբաղեալ էին, և երբ պատահարն իմացան և պատանդներն տեսան, ոչ միայն իրենց մօտ հոգերն ու կասկածները չ'ունեցան, այլ ուրախութեամբ իրենց խրախճանութիւնքն աւելցուցին: Իսկ Գուրգէնի գալուստը բոլորովին արհամարհեցին, տղայ տեսեր էին զինք և իրենց միտքը չ'էր կրնար համոզուիլ թէ տղայն երիտասարդ և մարդ էր դարձեր:

Ի՜նչ մեծ տարբերութիւն այս աշխարհի Տէր նախարարաց և խեղճ Յոհաննու մէջ. լեռնցի մարդը նոյն միջոցին ժողված իւր եղբայրները՝ Արաբաբացւոց աւարեալ զէնքերուն կը կրթէր զիրենք և Մուշ գտնուած պաշարը չ'էր թողուր որ խառն 'ի խուռն անհետանայ, այլ խոյթի անառիկ տեղուանքը պահպանել կուտար, լեռան դիւրամատոյց գիւղերը ամրացնել կ'աշխատէր, և այս գործողութեանց մէջ ոչ իշխանական ոչ հրամայական ձև չի կար իր քով, այլ ինք առաջինն էր իբրև մշակ գործելու և իր բարի օրինակը միայն կը պարտաւորէր ուրիշներն աշխատելու:

ԳԼՈՒԽ Ը.

ԿԱՆԳՈՒՍԱՐԻ ԱՄՈՒՐԸ.

Այն միջոցին որ Բերկրայ Արծրունեաց ապարանից մէջ, Հռիփսիմէ Տիկին իւր ցաւած սիրտը Աստուծոյ առջև կը տարածէր, Աշոտ Իշխան իւր զուարճութեանց և իւր գինարբուաց մէջ կը հրճուէր, Յովհան իւր լեռներուն ամրութիւնը բաւական չի գտնելով կ'աշխատէր, Վահրիճ ուրախ զուարթ իւր կնոջ և զաւկներուն հետ կը պտըտէր՝ Վարագայ լերան ստորոտէն բաժնուած հեծեալ մը իւր լայն մոխրագոյն վերարկուին փաթթուած որ իւր սպառազինութիւնքն կը ծածկէր և ցուրտէն կը պահպանէր՝ ծանր և մտախոհ կ'երթար դէպ 'ի Խոյ: Թէպէտ եկեղեցի՝ խորան՝ սեղան չի կար իւր առաջ՝ այլ երկինք ամպամած և գետին ձիւնամած, բայց այդ մարդը երբեմն գլուխը երկինք կը վերցնէր, և իւր լայն կուրծքէն մեծ հառաչանք մը կը հանէր, ապահով որ ոչ ոք չ'էր կրնար լսել իւր սրտին տխուր ձայնը: Գուրգէնն էր այդ մարդը, որուն ծանր էր Վասպուրականի օդը, և որոշեր էր վայրկեան մը առաջ

ձգել՝ հեռանալ այն երկրէն որ իրեն թշուառութեանց աղբիւր մը եղած էր: Թէպէտ անբըժըշկելի էր իր սրտին վէրքը, և իրեն համար չի կար բան մը բնութեան մէջ որ զայն դարմանէր, բայց դարձեալ ինքնիրեն կ'ըսէր. «Անգամ մը եթէ զինք տեսնէի, անգամ մը եթէ սրտիս սա վէրքը նորա առջև դնէի և նորա սիրտն էլ անգամ մը տեսնէի, և այնպէս հեռանայի սա երկրէն, երթայի Թորթում՝ փոխանակ երջանկութեան որ երազեցի՝ ցաւագին կեանքս անցնելու, հեռու աշխարհքէն որ զիս ծնաւ, հեռու անձէն՝ առանց որոյ կեանքը տանջանք է մշտնջենական:

Այդ եղանակին ուղեգնացութիւնը թէև զուարճալի չ'էր, բայց խանծեալ սրտի մը համար մարդկանցմէ հեռաւորութիւնն ու միայնութիւնը ա'յնչափ փափաքելի էր, որ երբ ճանապարհին վրայ գիւղ մը կը հասնէր Գուրգէն՝ ժամ առաջ հեռանալ կը ջանար, որպէս զի խօսելու՝ պատասխանելու յարաբերութիւններէն ազատ մնայ: Երկու երեք գիշեր աննշան գիւղերու մէջ անցնելէ վերջը իւր ուղեգնացութիւնը՝ երբ Խոյի մօտեցաւ և ճանապարհն երկուքի կը բաժնուէր, փոխանակ արևելք երթալու դարձաւ դէպ, հիւսիս և մտաւ Անձևացեաց ժայռոտ գաւառը:

Հեղինէն անգամ մը տեսնելու փափաքը ո՛ր-
չափ զօրաւոր էր սրտին մէջ՝ այնչափ էր իրմէ
փախչելու մտածութիւնն ալ՝ որպէս զի նորա
կեանքին մէջ դժբաղդ պարագայ մը չ'աւելցնէ՝
իւր միտքը կը տատանէր, բայց դարձեալ սիրոյ
զօրութիւնը որ կը ձգէր զինք դէպ 'ի Հիւսիս՝
դէպ 'ի Կանգուար ամուրն՝ շատ աւելի բուռն
էր։ Թէպէտ մեծ և բարձր էր սիրտը՝ սակայն
չ'էր կրնար անցնիլ և արհամարհել տեղեկու-
թիւն Մուշեղի՝ Անձևացւոց իշխանին վրայ որ
կարելի էր առնուլ առանց խոյզ և խնդիր ը-
նելու այդ երկրին մէջ՝ վասն զի իւր Հեղինէի
կեանքը կապուած էր նորա կենաց։

Այսպէս կը մտածէր նա Հոգեաց վանքի
շրջակայքը, որ շատ հեռի չ'էր Կանգուարէ,
և ուսկից կը նշմարէր ամրոցին երկնաբերձ աշ-
տարակները։ Այս աՀաւոր բերդը Անձևացեաց
ժայռերուն մէջ նաև ամենէն անառիկ համա-
րուած էր, նախ որ՝ քարայրներէ 'ի քարայր
իբրև թէ լաբիւրինթոսի մը մէջ պէտք էր պտըլ-
տիլ հասնելու համար աՀագին ժայռի մը ստո-
րոտը, երկրորդ՝ ժայռին բարձրութեան վրայ
արհեստական պարիսպներուն և աշտարակնե-
րուն պատճառաւ՝ ուր ոչ պատերազմական հա-
րուած և ոչինչ չ'էր հասնէր հողի կտոր մը
հանելու։ Եւ երրորդ՝ միմիայն ճանապարհ կար

այդ ժայռին գլուխը դրան հասնելու համար,
ճանապարհ որ Թշնամւոյն դէմ բազմատեսակ
արգելքներ ունէր։

Այդ կէտին վրայ կանգնած Գուրգէն՝ սրտա-
տրոփ կը նայէր ամրոցին. ո՛չ անոր բարձրու-
թեան և ոչ շինութեանց վրայ ապշեալ, այլ
միայն անոր համար որ Հեղինէ այդ ամրոցին
մէջ կը բնակէր և իրեն շատ դժուարին էր
հասնիլ նաև անգամ մը հետը առանձին տե-
սութեան համար։

Երբ այս մտածութեանց մէջ շփոթած՝ չ'էր
կրնար որոշել թէ ո՛ր կողմն երթայ, ուղղակի
ամրոցը՞ թէ վանքը կամ թէ գեղերուն մէկը որ
ժայռերու մէջ կը ծածկուէին, յանկարծ մէկ
երկու հոգի տեսաւ որ փախչելով դէպ իրեն
կը վազէին և երբ իրեն մօտեցան՝ «Փախի՛ր
եղբայր, փախի՛ր։» Մէկն անցաւ, և միւսն ալ
կ'անցնէր՝ Գուրգէն նորա թևէն բռնեց և ար-
ձանի մը պէս կեցուց։ «Ա՜յ եղբայր, թևս կոտ-
րեցիր» կը գոչէր մարդը. իսկ Գուրգէն թուլ-
ցընելով, «Մա՛րդ, ինչո՞ւ կը փախչիս, պատճառն
զրուցէ՛» ըսաւ։

— Պատճառն այն է որ աւազակ Քուրդերն
դարանի էին և բազմութեամբ մեզ զարկին,
իշխանը վիրաւորեցին, և այս ճամբով կուգան,
քեզ ալ՝ մեզ ալ եթէ չ'սպաննեն՝ գերի կը տա-

նին։ — Եւ դարձեալ կը ջանար փախչելու ձեռքէն։

Իսկ Գուրգէն դարձեալ ամուր սղմելով թեւը՝

— Մա՛րդ, կ՚ըսէր, սա իշխանին անունը տուր եթէ կ՚ուզես որ քեզ թողում։

— Ա՛յ, թեւս կոտրեցիր, Մուշեղ, Մուշեղ է անունը. Անձեւացեաց իշխանն է . . . . . ահա՛ եկան անօրէնները . . . . .

Վայրկենին Գուրգէն թողուց մարդը, «Տէ՛. հիմա փախի՛ր, անպիտան մարդ» ըսաւ, և աչքով կշռեց ձիաւորաց խումբը որ կուգար՝ տասնութը քանի չափ նիզակաւոր, սոցա կերպարանքէն և ըրած գործողութիւններէն յայտնի էր թէ մօտ գտնուած Խոյայ Տաճիկ Ամիրայի զօրքերէն էին, որ դարանի մտած Կանգուառ ամրոցին շուրջը՝ Մուշեղ իշխանը ձեռք անցնելով փրկանք առնուլ՝ ամրոցին տիրել իրենց նպատակ ունէին։ Իսկ Գուրգէն վերարկուն վար առաւ, փոքրիկ վահանը ձախ ձեռք, աջով երկայն սրով զինեալ. «Տէ՛, քեզ տեսնեմ, Ցոլակ» ըսաւ, և երասանակը սղմեց՝ ու թողուց. փոթորիկ մը եղան մարդ ու ձին, և իբրև թէ թռչելով յարձակում մ՚ըրին խումբին դէմ որ կուգար։ Ահագին սուրը կը շողար յաջ ու ձախ, փայլականման լոյս մ՚էր որ կը ցոլար, և այս ու այն կողմ մեռեալ և վիրաւոր թապլտկէին.

և հազիւ թէ քանի մը վայրկեան՝ ոչ ոք ոտքի վրայ շուրջը չի կար, այլ ո՛վ որ կեցեր էր՝ փախեր էր, և միայն մէկ մարդ մը կար ձիու մը վրայ՝ ձեռքերը իրարու կապած և ոտքերը ձիուն փորին տակէն շղթայած. Մուշեղ Անձեւացւոց իշխանն էր այդ մարդը որ զարմանքով կը նայէր եղածին։ Առանց խօսք մը զրուցելու մօտեցաւ Գուրգէն, իջաւ ձիէն, և երկայրի դաշոյն մը հանելով մէջքէն ձեռքին կապերը կըտրտեց, իսկ ոտքին շղթաները զննեց տեսաւ որ կղպակով էին, պէտք էր կամ բանալին գտնել՝ կամ դարբինի մը կոտրել տալ։ Այն միջոցին ամէն կողմէն վազող վազողի կը հասնէին, ոմանք զինեալ՝ ոմանք անզէն, և մեծ փութով և եռանդեամբ իրենց ազատեալ իշխանին շուրջը կ՚առնուին, մէկն իր գլխարկը կը գտնէր կը բերէր, միւսի իւր սուրը, ուրիշ մը իւր աջ ուսին վրայի վէրքը կը պատէր։ Իսկ Գուրգէն իբր թէ լոկ հանդիսատես մէկ կողմ կեցեր էր, մինչև որ Մուշեղ իւր ապշութիւնը թօթափելով՝ դարձաւ,

— Ո՜վ քաջ, ըսաւ, խնդրեմ շնորհել ինձ քու անունդ որ իմանամ թէ ո՞ւմ շնորհապարտ եմ այս ազատութեան. որպէս զի արժանաւոր փոխարէն ընեմ։

— Սուրէն Շաղգումեցի կ՚անուանիմ, ըսաւ Գուրգէն։

— Շատ լաւ, Տեար Սուրէն, եթէ կը հաճիս իմ ամրոցս կը բնակիս՝ եթէ ոչ պարգեւներ կ՚ընդունիս այս մեծ ծառայութեան փոխարէն: Երթա՛նք հիմա:

Իսկ Գուրգէն առանց պատասխանի անգամ արժանի համարելու այս խօսքերը՝ կը դիտէր Մուշեղի կերպարանքը. լաւ, միամիտ մարդ մը կը նշմարէր չափաւոր կարողութեամբ թէ մտքի և թէ մարմնոյ կողմանէ, ոչ սիրելի և ոչ ատելի իր ժողովրդեան, քառասնամեայ գրեթէ՝ բայց յոգնած 'ի զուարճութեանց՝ 'ի դինարբուաց և 'ի մոլութեանց. կատարեալ պատկեր ժամանակի իշխանաց: Եւ այս դիտողութեամբ, «Մե՜ղք, մե՜ղք հազար անգամ մեղի՝ իմ Հեղինէին» կ՚ըսէր մտքէն և լռիկ կը հետեւէր ամբոխին, որ յարգանօք մեծ շրջանակ միջոց մը կը թողուր իւր Ցոլակին չորս կողմը, և մօտ եկողները փսփսուքով կ՚ըսէին իրարու. «Սա՛ է մարդը որ քսան երեսուն հոգին ցրուեց և իշխանն ազատեց:» Իսկ նոքա որ հեռուէն կուգային աւելի բարձր ձայնով կը խօսէին իրենց մէջ, իշխանը թողլով փախչողները՝ Քուրդաց խումբը հարիւրէն աւելի կը պատմէին: Իսկ նա որ զԳուրգէն փախչելու յորդորեր էր իւր թելին կապոյտը ցոյց տալով:

— Տեսէ՛ք, կ՚ըսեր, սա մատներուն տեղը,

եթէ քիչ մ՚ ել սղմէր՝ ոսկորս կը փշրեր, ի՜նչ զարմանք եթէ այդչափ ուժ ունեցող մարդ այս կոտորածն ըրաւ:

Իսկ կոտորածը՝ չորս մեռեալ երեք վիրաւոր էին, որ իրօք մեռելէ տարբերութիւն չ՚ունէին, վասն զի ոչ ոք մէջերնէն ապրանաց չէր. ոչ միայն իրենց վէրքի ծանրութեան համար, այլ նաև անխնամ մնալէ զատ ձիւնին վրայ՝ պէտք էր որ անցնող դարձնողին ոտնահարութիւնն ալ ընդունէին: Ժամանակի՜ սովորութիւն որ դեռ մինչև հիմա ոչ միայն Ասիոյ՝ այլ և քաղաքականացեալ Եւրոպայի շատ տեղուանք թերևս կը տիրէ.

— Վանքը ետ թողուցին և ուղղութեան դէպ՝ ամուրը, որու բոլոր ժողովուրդը պատահարը լսելով՝ գունդագունդ վար կ՚իջնէր դիմաւորելու եկող խումբը, ուր քանի մը ձիաւորներու մէջէն կ՚երթար բարձր 'ի գլուխ Մուշեղ քանի որ իւր իշխանական գլխարկը գտեր գլուխը դրեր էին իւր հաւատարիմ հպատակները: Իսկ Գուրգէն քիչ մը հեռուէն կը հետեւէր դարձեալ ժողովրդէն շրջապատեալ՝ որ միշտ զօրութեան և յաջողութեան երկրպագուն է ամէն տեղ և ամէն ժամանակ:

Երբ Կանգուարի ժայռին գլուխն միջնաբերդին առջև հասան՝ որ իշխանական ընդարձակ ապարանը կը կազմէր, ժողովուրդը քիչ քիչ

սկսաւ եւ քաշուիլ և ցրուիլ։ Իսկ ազատաց խումբը իւր սմբակաց արձագանքներով կը մըտնէր պարսպաց ներքին գաւիթն ներս ուր իշխանը պարտաւորեալ էր կտրել տալու իւր ոսկին շղթան որու բանալիքը չ՚էին գտած, և հոնկից դիմեց իւր պալատը որպէս զի սփոփի իւր վէրքերէն ու ցաւերէն։

Գուրգէն իւր Ցոլակին վիճակը նախ ապահովեց, վասն զի աւելի կը վախէր թէ իշխանական պալատի մը մէջ անհանգիստ լինի կենդանին քան թէ գիւղացւոյ տան մը։ Երբ իւր միմիայն շնչաւոր ընկերին հանգստութիւնը հոգաց, էլ ժամանակ չ՚ունէր ակնարկ մը ձգելու այդ սոսկալի ժայռերու՝ քարափներու վրայ որ Անձևացեաց գաւառն կը կազմեն։ Իւր միտքը հոն էր՝ ուր Հեղինէ էր, ուստի հառաչանքները խեղդելով՝ մտաւ դահլիճը որ դարերէ 'ի վեր Անձևացի նախարարաց զինարան և հիւրընկալութեան դահլիճն էր, բայց որովհետև ժամանակը ձմեռ էր՝ աւելի տաք սենեակ մը իրեն ցոյց տուին։ Հոն՝ զէնք զրահ թողուց և տխուր խորհրդածութեանց մէջ թաղուեցաւ, առանց տեսնելու թէ դրան առջև կախուած վարագուրին ետին ամեն Անձևացեաց տան սպասաւոր և աղախին կուգային այդ նորահրաշ դիւցազնը տեսնելու։

Այս միջոցիս Մուշեղ կը տքար՝ ոչ վէրքին, այլ դարմանին առջև. թէպէտ վէրքը վտանգաւոր չ՚էր, բայց ուսին գլուխը շատ զգայուն տեղ մ՚էր, և պառաւ կինը (պէտք է գիտնալ թէ սովորաբար բժշկութիւնը միայն դոցա վերապահեալ էր այն ժամանակ 'ի Հայաստան) առանց փաղաքշանաց իր ասեղը իշխանական մարմնոյն կը մխէր և կը կարէր և վէրքին երկու բերանը միացնելէն վերջ՝ հին գինւով, մեղրով ու զանազան խնկեղէններով շինած զանգուած մը վրան կը տարածէր և սովորական առածը կը կրկնէր. «Օգտակար է Թէ Աստուած կամի։»

Մուշեղ թթու երեսով՝ հառաչանօք և գրեթէ արցունքը աչքին այդ դարմանին տարաւ, միշտ «Անիծած պառաւ, շուտ ըրէ» ըսելով։ Իսկ Անձևացեաց Տիկինը ամեն պէտք եղածը բերել տալէ վերջ՝ մարմարէ արձանի մը պէս կեցած էր։ Խեղճ իշխանը երբեմն աչքը իրեն կը վերցնէր, իբրև թէ ողորմութեան փշրանք մը հայցելով նորա նայուածքէն, իսկ նա՝ ամենևին անզգայ՝ յայտնի էր հեռաւորին աչքի մը թէ իւր քով սիրտը մեռած էր։ Նշանաւոր կերպարանք մը ունէր այդ կինը, և որ ամեն բանէն աւելի դիմացինին կ՚ազդէր իւր աչքերն էին՝ որոնց խորութիւնը և արտևանանց երկարութիւնը և նոցա գոյնը կը ծածկէին և սև կը

կարծեցնէին, երբ բո՛ւն լոյսը իր ծովուն ծիրանի գոյնն ունէին: Գեղեցիկ ճակատը սև ագռաւի մազեր կը պսակէին, երեսը դժգոյն ճերմկութիւն մը կար ուր ծիծաղ կ՚ըսէիր թէ ամենևին չ՚է ծագած. ամէն տեսնող այդ սակաւախօս կինը կը յարգէր և կ՚ակնածէր իրմէ, բայց շատ քիչ մարդ կրնար սիրել, վասն զի անթափանցելի էր ամէն տեսակ բարեկամութեան և ընտանութեան: Հիմա էլ նոյն անտարբերութեամբ կեցած էր իշխանի առջև, ինչպէս անտարբերութեամբ լսած էր նորա գերի երթալը և հրամայած ամէն մարդ զինելու և աւազակաց ետևէն արշաւելու՝ ինչպէս անտարբերութեամբ և անուշադիր մտիկ ըրած էր օտարականին քաջութեան պատմութիւնը, և ամենևին հետաքրքրութեան չ՚էր ցոյց տուած զնա տեսնելու:

Երբ իշխանը հանգարտեցաւ և հոգի առաւ,

— Տիկին, ըսաւ, մենք հոս բարերար մ՚ունինք, աննշան մարդ էլ լինի՝ ա՛ն ստաճանի է նորա ըրած ծառայութիւնը, որ կարելի չ՚է զինք մեզի սեղանակից չ՚ընել. ուստի փրկանաց իրաւունք՝ եղբօր և հաւասարի պէս զինք պատուել ինձ կ՚իյնայ. և ներս հրաւիրել:

— Քու գիտնալու բանդ է այդ, իշխան, դու ես տէր:

— Զարմա՞նք է որ սա ամբոխի մէջ ես և

դու լինելով այս քանի ամիս է, և ուրիշ մէկ անձ մը չ՚ունենալով օր մը՝ անգամ մը սխալէիր և կարծիք յայտնէիր . . . բայց երբ կին մը այդչափ անփոյթ է՝ յայտնի է որ եթէ իր սրտին մէջ գաղտնի խորհուրդ մը չ՚ունի՝ սոսկալի անտարբերութիւն ունի: Արդէն ես լաւ գիտեմ թէ ի՞նչչափ ակամայ յանձն առի այս ամուսնութիւնը, և թէ բռնադատեալ պարագայներէ . . . .

— Ինչո՞ւ կեցար, շարունակէ՛, ըսաւ Տիկինը նոյն անդրդուելի ձևը անսասան պահելով:

— Ո՞ւմ համար շարունակեմ, ես այսչափ կին տեսած էի, այսպիսի անզգայ արձան մը ուրախութեան և տրտմութեան չ՚էի կրնար երևակայել: Յանցանք ոչ իմս է և ոչ քու, այլ Արծրունեաց:

— Եթէ իմ քովս յանցանք չ՚ես գտներ, ուրիշներունը իմանալու հետաքրքիր չ՚եմ: . . .

— Ո՞ւր կ՚երթաս, հրաւէր ըրէ՛ սա մարդուն որ գայ, սեղան պատրաստել տո՛ւր, մարդկութիւն չ՚է՞ մնացեր աշխարհիս վրայ:

Դարձեալ Տիկինը ելաւ դուրս, կանչեց աղախինները, պէտք եղած հրամանները տուաւ: Եւ ահա քանի մը վայրկեան վերջը Գուրգէն կը մտնէր իշխանին քով, որ իր անկինը բազմեալ ըսաւ

— Այո՛, Տիար Սուրէն, նստէ՛ և ներէ թէ որ մինչև հիմա զքեզ թողինք; բայց մենք ալ զբաղած էինք մեր վէրքերով. Ո՞ւստի է քու գալուստդ, այսպիսի վտանգաւոր ժամանակներով քու զօրութիւնդ և քաջութիւնդ ունենալու է որ մարդ համարձակի առանց թիկնապահի՝ առանց ծառայի՝ առանց ընկերի ուղեւորիլ:

Այս խօսքերուն տարտամ պատասխաններ տուաւ Գուրգէն և ամենայն ուշադրութեամբ և գաղտնութեամբ սենեկին ամենայն մութ խորշերը՝ վարագոյրները և վանդակները կը դիտէր: Սեղանը եկաւ. իշխանը Տիկինը հարցուց, բայց նա անհանգիստ էր, Մուշեղ ինք ալ ախորժակ չ՚ունէր և կը զարմանար որ Գուրգէն հազիւ թէ քանի մը պատառ առնելով քաշուեցաւ: Իշխանն էլ իր անկողնոյ սենեակները մտաւ: Եւ բոլոր Կանգուարի բնակիչները քուն եղան: Հեղինէ Տիկինը, պառաւին հրամանն ՚ի գործ դնելով՝ բերաւ տեսակ մը օշարակ, որ լաւ քունի համար պատրաստեր էր, և նա էլ «անիծե՜ալ պառաւը» կրկնելով գաւաթը պարպեց և խոր քունի մէջ թաղուեցաւ:

Ան ատեն կանչեց Հեղինէ իր միմիայն աղախինը որ Ռշտունեաց երկրէն հետը բերեր էր, ոչ միայն հաւատարմութեան՝ այլ նաև քիչ

խօսելուն համար՝ և հրամայեց որ իշխանին ամենափոքր շարժմունքին իրեն իմաց տայ, և ինք ուղղեցաւ համարձակ Գուրգէնի սենեակը: Եւ ինչպէս կ՚երևակայէր երբ դուռը բացաւ՝ նա արթուն էր և նստած վառարանին բոցին կը նայէր խոր մտածութեանց մէջ ընկղմած:

Իսկ երբ առջև կանգնեցաւ Հեղինէ, ահագին սարսուռ մը անցաւ Գուրգէնի մարմնոյն վրայէն և ելաւ կանգնեցաւ. երբ ոտքն առաջ նետեց մօտենալու համար, նա ետ ետ քաշուելով՝

— Մի՛ մօտենար ինձի, ըսաւ. մարդ մը միայն իրաւունք ունի ինձ մօտենալու, իսկ նոքա որ իրենց խօսքին կը դրժեն՝ տարիներով որբերը և անտէրները կը խաբեն՝ կը մատնեն, այդպիսիները արհամարհանաց են արժանի:

Կանգ առաւ իշխանը՝ և իր բոլոր եռանդը սառելով՝

— Թշուա՛ռ Հեղինէ, քեզ խաբեր են, և դու շատ շուտ յուսահատեր ես, և մեզ երկուքնիս էլ այս յուսահատ վիճակին մէջ դրեր ես:

— Ի՞նչ կ՚ըսես դու, այդ գիրը քո՞ւկդ չէ:

Եւ այս ըսելով լի բարկութեամբ նամակ մը երեսին նետեց:

Իշխանը քննիչ աչք մը ձգեց և շուտ մը կարդալով վերէն վար այդ համառօտ նամակը, որ

քանի մը բառէ կը կազմուէր, երկրորդ անգամ բարձր սկսաւ կարդալ։

«Ազնուատոհմ Օրիորդ Ռշտունեաց.»

«Կը փափաքէի քու և իմ կամաց յարմար «նամակ մը գրել, բայց նախախնամութիւնն «Աստուծոյ ուրիշ կերպ սահմաներ է։ Այս վայր-«կենիս որ ձեռքդ կը հասնի այս իմ գիրս ես «արդէն Կայսեր պալատան մեծամեծաց մէկուն «աղջկան հետ ամուսնացեալ կը լինիմ։ Նոյն «բաղդը քեզ ալ կը մաղթեմ։ Ռշտունեաց Օրի-«որդի փեսայ չի պակսիր։ Իսկ ես այնպիսի «պարագայներու մէջ գտնուեցայ որ այս ամուս-«նութիւնն ընդունելով կեանքս ազատեցի։»

«Գուրգէն Արծրունի Ապուպէլճ»

— Անիծեա՜լ այն խարդախ ձեռքը որ այս նամակը գրեր է։ Այս գիրը իմս չ՚է, այս ստորագրութիւնը իմս չ՚է. այս կնիքը իմս չ՚է։ Մէջի իմաստը իմս չ՚է, վասն զի մինչև Ռշտունեաց ոստանը ոչ ձիւն՝ ոչ ցուրտ՝ ոչ բուք՝ ոչ թշնամեաց բազմութիւն զիս չ՚արգիլեցին իմ Հեղինէի հասնելու ճանապարհս ընդհատելու։ Ութ տարի քրտինք արիւն թափեցի՝ ամէն տեսակ արշաւանք յանձն առի՝ անկարելի կարծուածը կարելի ըրի, որ իմ և քու հայրենի ժառանգութեան փոխարէն մը ստեղծեմ. փոքր գեղեցիկ գաւառ մը խընդրեցի՝ վասն զի լիճ մը ունէր, վասն զի գետակ

մը ունէր, որպէս զի իմ Հեղինէս հայրենի երկրին նմանութեամբ գոնէ օտարութեան մէջ մխիթարուի. և երբ նպատակիս հասած կարծէի ինքզինքս և երջանիկ՝ Ոստանը գլխուս վրայ եթէ կործանէր ոչինչ էր։

— Այդ նամակը քու գիրդ չ՚է՞։

— Իրաւ ջանացեր է գրողը նմանեցնելու, կնիքը ջանացեր են նմանցնել. բայց տե՛ս, բաղդատէ՛ սա երկու կնիքները։

Եւ ծոցէն կնքեալ թուղթ մը հանելով ցոյց կուտար Հեղինէին որ բաղդատէ։ Իսկ նա երբ սուր աչք մը նետելով որոշ տեսաւ խարդախութիւնը, փոխուեցաւ բոլորովին. և այդ կորովի կինը ձեռքը աչքերուն դրաւ և լալիկ յորդահոս արտասուքներ սկսաւ թափել։

— Զրուցէ՛, Հեղինէ՛, ո՞վ կարծես այդ դաւաճանը՝ գոնէ ես զանի պատժելով մխիթարուիմ։

— Ի՞նչ օգուտ դաւաճանը պատժելէն, միթէ եղածը չ՚եղած կրնա՞յ լինիլ. այս յուսահատ խօսքը զրուցելով խեղճ կինը նստաւ բազմոցին վրայ, վասն զի էլ ծունկերը զինք չ՚էին կրնար վերցնել։ Իսկ Գուրգէն նորա ոտքերուն քով նստած գետինը կը մտածէր. երկայն լռութիւն մը տիրեց։

— Այդ արցունքը կը վկայեն որ դու զիս կը

սիրես, Հեղինէ. Աստուած արդար է, վերջապէս իր արդարութիւնն կը հասնի այդ անզգամները պատժելու համար. ես դարձեալ քեզ խօսք կուտամ հաւատարիմ մնալու, չ'եմ էլ զղջար այս օր այս մարդը ազատելուս: Բայց այդ նենգաւորը որ իմ գիրս՝ որուն մէջ իմ գալուստս քեզ կ'իմացնէի՝ փոխեր խարդախեր է, այդ մարդուն ձեռքը կտրել իմ պարտքս լինի:

— Դու աւելի երջանիկ ես, որ ազատ ես և ամենևին պարտականութիւն մը չ'ունիս միշտ անձի մը քով լինելու, որուն համար ոչ սէր և ոչ համակրութիւն ունիս: Իսկ ես : . . .

— Իրաւունք ունիս, քու վիճակդ աւելի դառն է, ինձ համար մեծ ազատութիւն կայ. բայց միթէ՞ նոյնն է վիճակը այսուհետև ինձ համար. երբ երբեմն ես թշնամեաց վրայ կը յարձակէի՝ ամբողջ գունդեր իբրև փոթորկէ պաշարեալ իմ սուրիս առջև կը սարսէին՝ կը շփոթէին և խառնափնդոր կը փախչէին. կայսրը և Մանուէլ Սպարապետը զուարթ աչքով ինձ կ'ակնարկէին, Մանուէլ «Կեցցէ՛ մեր արծիւը» կ'ըսէր, իսկ ես հազիւ զիրենք կը տեսնէի, իմ միտքս քու քովդ էր և ամեն բան ինձ դիւրին էր, վասն զի քեզ արժանանալու և քու երջանկութեանդ համար էր այս իմ բազկացս զօրութիւնը: Հիմա ոչինչ չէ կայ ինձ համար.

թէ՛ նիւթական կեանք՝ թէ բարոյական կեանք կորուսած են իրենց քաղցրութիւնը:

— Դեռ այսօր միթէ՞ Մուշեղ ազատելդ մոռցա՞ր:

— Այդ ամեն Հայու համար պարտականութիւն մ'էր անպիտան աւազակներու ձեռքէ ազատել Հայ իշխան մը որ գերի կը տանէին 'ի նախատինս ազգիս:

— Ուրեմն, իմ ազնիւ Գուրգէնս, իմ սիրելի Գուրգէնս, ապրէ՛ ազգիդ համար՝ ապրէ՛ ժողովրդեանդ համար՝ որուն պատիւը՝ կեանքը՝ ստացուածքը՝ շատ ժամանակներէ 'ի վեր արհամարհեալ՝ ոտնակոխ եղած է և կը լինի: Ես լաւ կը յիշեմ ամեն գանգատ՝ ամեն պարագայ ուր ժողովուրդը կուգար մօտ՝ Ուշտունեաց Տիկնոջ տրտնջելու իւր կրած անիրաւութեանց համար. խեղճ սուրբ կին, ինքզինքը կը զըկէր որպէս զի այդ դառնացեալ շինականները մխիթարէ, վասն զի եղած անզգամութեանց դէմ բան մը ընել կարող չ'էր, վասն զի ամեն յափշտակութիւն՝ նաև իրեն դէմ գործելու չ'էին ամաչեր՝ նոքա որոնց պաշտօն էր արդարութեան հսկելու: Ուստի դու հիմա սրտիս միմիայն սիրելին, գնա՛ քաջ եղիր՝ արդար եղիր՝ հասիր զըկելոյն՝ հայր եղիր որբոյն և մխիթարիչ այրւոյն. Աստուած քեզ վարձատրէ, և երբ

ես լսեմ քու անուանդ օրհնութիւնը, երբ իմանամ թէ սրտիս Գուրգէնն է որ հայր և պաշտպան եղեր է ժողովրդոց, մխիթարութիւն պիտի իմանամ իմ ցաւած և վիրաւոր սրտիս։

— Օրհնեա՜լ է քու սրտիդ փափաքը, իմ հրեշտակս, տարին չի կատարած պիտի լսես իմ անունս, վասն զի Աստուած պահէ՝ բայց ես շատ կը վախեմ թէ այս գարունը՝ սոսկալի գարուն մը պիտի լինի, և Հայաստան արիւններու աւազանն մը։

— Աստուած ինք հասնի՜ այս թշուառ հայրենեաց։

Եւ Հեղինէ կանգնեցաւ ու պատրաստուեցաւ երթալու։

— Ուրեմն այս մեր առաջին և վերջին տեսութիւնն է ութը երկայն տարինէ վերջ, ըսաւ Գուրգէն։

— Այո՛ Աստուած որ այսպէս ուզեց, նոյն Աստուած քեզ օգնական լինի

— Մնաս բարեաւ, հրեշտակդ իմ, գոչեց Գուրգէն, և իւր թեւերուն ու կուրծքին մէջ սղմելով ծածկեց նորա սիրուն գլուխը համբոյրներով։ Իսկ Հեղինէ անշարժ՝ անասան իբրև արձան՝

— Աստուած քեզի օգնակա՛ն, իմ սրտիս միայն սէրը, ըսաւ և աներևոյթ եղաւ։

Երկրորդ առաւօտուն երբ Կանգուարի բնակիչքը մեծ և փոքր ելան այդ Շաղգումեցի Սուրէնը փնտռեցին, տեսան և իմացան որ չի կար, զարմացան թէ այդչափ մեծ ծառայութիւն ընելով և փոխարէն մը չ՚ընդունած իշխանէն ի՛նչպէս ելեր հեռացեր էր։

ԳԼՈՒԽ Թ.

ՂԵՒՈ՜ՆԴ, ՂԵՒՈ՜ՆԴ։

Կ՚երթար Գուրգէն տխուր՝ բայց ոչ որպէս առաջ, սրտին վրայէն սոսկալի բեռ մը թեթևցեր էր, վասն զի Հեղինէի վերջին խօսքերը իւր վրայ ազդեցութիւն ըրած էին։ Ուստի ծանր և դանդաղ կը ճանպարհորդէր, ո՛ւր որ խեղճ գիւղեր գտնէր այն տեղուանք կ՚իջնէր, սիրով շինական մարդկանց հետ կ՚ընտանենար, որոնք սկզբան կասկածանօք իրեն կը նայէին, բայց վերջը բարեկամ դառնալով իրենց քաշածները նորա առջև կը դնէին։ Այսպէս օրերով՝ երբեմն մինչև շաբաթով կը դանդաղէր իւր ուղեգնացութիւնը, ո՛ւր որ իշխանական ամրոց մը տեսնէր՝ շուտ կանցնէր, ո՛ւր որ գիւղական պարզութիւն կար՝ նոցա գարի հացը, նոցա մածունն իբրև թէ իրեն քաղցր էին։

Այսպէս անցաւ Սրտազ գաւառը՝ Աւարայրի ընդարձակ դաշտը ուր իւր նախահօր Վարդանայ հսկայ յիշատակը կանգուն էր Հայ սրտերու համար. կը տեսնէր հեռուէն Մասիս լերան գլուխը՝ ուր տեղացի ժողովրդոց համար միշտ կար և մնար Նոյա տապանը. ուստի այս խորհրդածութեամբք կը մօտենար իւր դէմ եղեալ նպատակին՝ Բագրեւանդայ գաւառը՝ ուր իւր ձեռքին Քուրդիկ իշխանը կը տիրէր։ Օդը արդէն սկսած էր մեղմանալ, ձիւները սկսած էին հալիլ, առուներն ու վտակները մէկ մէկ աճապին գետ դառնալ, երբ տեսաւ մարդ մը որ գլուխը կախած կ'երթար առջևէն նիզակն 'ի ձեռին, հաստատ և ամուր քայլերով. այդ քալուածքը և այդ շարժմունքը իր կը յիշեցնէր ուրիշ յատուկ անձ մը որ չ՛էր կրնար մտաբերել, ուստի ձիուն ձայն մը հանեց և նա քանի մը ոտք առնելով, մարդուն քով գտնուեցաւ։

— Դո՞ւ ես, Յովնան եղբայր, ըսաւ։ Իսկ նա առանց գլուխը վեր վերցնելու՝

— Այո՛ Քուրդէն իշխան, ես ինքս Յովնանն եմ.

— Առանց գլուխդ վերցնելու զիս իմ ձայնէ՞ս կը ճանչես։

— Ժամ մը կայ որ ես արդէն զքեզ տեսայ

երբ բլուրին գլուխն էի և դու դեռ դաշտն էիր։

— Ուսկի՞ց այսպէս կուգաս.

— Տարօնոյ.

— Բայց այնչափ համառօտ պատասխաններ կուտաս որ պէտք է դադրեցնեմ խօսիլս։

— Ինչո՞ւ, իշխան, ե՞րբ ինձի հետ խօսեր ես և առանց պատասխանի ես մնացեր։

— Կ'ուզէի հարցնել թէ ո՞ւր կ'երթաս։

— Լա՛ւ, քեզի այդ էլ նաև զրուցեմ, Հայոց Կաթողիկոսը տեսնելու կ'երթամ։

— Անշուշտ իրեն առաջարկութիւն մը ունիս։

— Ի՛նչպէս չ'ունիմ. կ'ուզես ա՛յն էլ իմանալ, լա՛ւ, - այն պիտի առաջարկեմ որ կոնդակ մը հանէ բոլոր Հայաստան, ամէն տեղ նուիրակներ՝ քարոզիչներ յուղարկէ որ սուրբ պատերազմի ժամանակը եկած հասած է, և նզովէ այն ամէն մարդ որ կարողութիւն ունի զէնք վերցնելու և չի շարժիր, այն ամէն Հայ ո՞ր հաց կրնայ տանիլ պատերազմողին և չի տանիր, նա՝ որ ձի և զէնք ունի՝ չի գործածէր՝ կը պահէ և ուրիշի չի տար։ Վերջապէս պիտի յորդորեմ զինք որ առանց դանդաղելու գայ նստի Ս. Կարապետ, իւր բոլոր եկեղեցական դասով, և թէ իշխանները չի շարժին՝ ինք ձայն արձակէ և ժողովուրդք կը շարժին։

— Այդ բանի՞ն համար կ'երթաս, ապրի՛ս.

Յովհան, շատ պատուական Հայ ես, և բոլոր Հայաստանի մէջ թերևս քեզմէ աւելի հայրենասէր մարդ չի կայ այս օր։

— Դու իշխան, ուրեմն համամիտ ես այս խորհրդիս։

— Բոլոր մտքով ու սրտով։

— Եւ կը հաւտա՞ս որ կաթողիկոսը ընդունի իմ առաջարկութիւնս։

— Մեր եկեղեցականաց թուլութիւնը և անհոգութիւնը ճանչելով կը կասկածիմ, բայց չ՚եմ կարծեր թէ մերժէ, կը խոստանայ, հաւանութիւն ցոյց կուտայ . . .

— Այս միջոցիս Գուրգէն ալ իջեր էր ձիէն և երկու հոգի այսպէս խօսելով կ՚երթային և Յոլակ իւր տիրոջ ետևէն հանդարտ կը քայլէր. երբ Յովհան բոլորովին իւր սովորութեան հակառակ հարցական ձև առնելով,

— Իսկ դու ո՞ւր կ՚երթաս իշխան, ըսաւ։

— Բագրևանդ կ՚երթամ՝ քեռայս Բուրդիկ իշխանին։

— Այդ մարդը Մամիկոնեան է. բայց Վարդան չ՚է։

— Դու Ղևոնդ մը միայն գտիր, ես քեզի տասը Վարդան կը գտնեմ։

— Ճշմարի՜տ որ, եթէ Ղևոնդը գտնեմ՝ Վարդան Մեծը նաև չ՚եմ փնտռեր։

Գուրգէն շուտ մը յիշեց այդ մարդուն խելատութիւնը ընդդէմ նախարարեան խումբին, և ամենևին պատասխան չի տալով շարունակեց ճամբան մինչև որ մութը սկսաւ և գիւղը երևցաւ։ Երբ հասան ճամբան որ գիւղին յատուկ էր, տեսաւ իշխանը որ իւր ընկերը չ՚էր զատուեր մեծ պողոտայէն, այլ կ՚ուզէր դեռ շարունակել։

— Յովհան եղբայր, մի՛ գուցէ իշխանազուն մարդու հետ նոյն տան՝ նոյն գիւղի մէջ միատեղ չի գտնուելու համար ուզես ճամբադ շարունակել։

Գիւղ մ՚էլ առջևնիս կայ, և ժամ մը չի քշեր. ես որ օր առաջ կ՚ուզեմ Սասուն դառնալ չ՚եմ կրնար դանդաղել. բայց որպէս զի իմացնեմ թէ Գուրգէն իշխանը սխալ կարծիք մը ունի իմ վրաս, իրեն ընկերակից կը լինիմ և կ՚իջնեմ գիւղս։

Եւ քանի մը վայրկեան ետքը այս մեր երկու բարեկամները նստած էին կրակին քովի անկիւնը, և շատ դիւրութեամբ իրարու կը համոզուէին և շատ նիւթերու վրայ համամիտ ալ էին, վասն զի երկուքն ալ ապահով էին թէ գարնան Հայաստանի վրայ փոթորիկ կար հասնելու, թէ Հայաստան միահամուռ և միահոգի կրնար վանել ո՛ և իցէ յարձակումն, թէ այդ բանի համար հոգևորական իշխանութիւնն պէտք էր շարժիլ և շարժել, և թէ պէտք չ՚էր սպասել բարբարոս թշնամւոյն որ երկրին կեդրոնը հասնի այլ խելօք շարժիլ, պէտք էր սահ-

մանագլուխը անցած չանցած թշնամին դիմաւորել ինչպէս քանի մը տարի առաջ Աղձնեաց պատերազմին մէջ ըրած էին Հայք, և խորտակեր էին Տաճիկը, և թէ ո՛վ որ թշնամւոյն հետ բանագնացութեան մտնէր քանի որ նա Հայաստանի գաւառի մը մէջ կը բանակէր՝ նա էլ թշնամի հայրենեաց պէտք էր համարիլ և ամեն մարդ իրաւունք ունենալով ո՛ և իցէ միջոցաւ զանի անհետացնել։

Այսպէս երկար խօսակցութիւն մը ունենալով այս երկու մարդիկը, համարմունք առին իրարու վրայ, և խոստացան ո՛ և իցէ պարագայի մէջ յաջողութեան և ձախորդութեան իրարու տեղեկութիւն տալ և օգնել։ Եւ նոյն գիշերը Բագրեւանդայ անուշան գիւղին մէջ անցնելով, երկրորդ օրը միատեղ ճանապարհորդելէ վերջը մինչև Բլուր ուր իշխանը իւր քեռին պիտի գտնէր, Յովհան կը շարունակէր իւր ճամբան՝ կ՚անցնէր Երասխ՝ կ՚երթար Դուին և իմանալով թէ Կաթողիկոսն Յովհաննէս ժողով ունէր քանի մը երևելի նախարարաց հետ, կը փութար ժամ առաջ հասնելու քանի որ չ՚էին ցրուած։

Թէպէտ շատ լուրջ մարդ էր Յովհան և երկայն տարիներու փորձն ու տառապանք զինք ամեն արկածից դէմ ամրացուցեր էին, բայց

դարձեալ երբ մտաւ Դուին և մօտեցաւ կաթողիկոսարանին և տեսաւ բոլոր նախարարաց գունդագունդ ծառայները և թիկնապահ հեծելազօրքը հրապարակին առջև, որոց առջին Սասնցի լեռնականն անարգ արարած մ՚էր երբ դռնէն ներս մտնելու համար պէտք էր խօսք չի հասկցող ամրագլուխ դռնապանին հետ վիճել և համոզելու համար շատ մը լեզու թափել, և երբ մեծ դահլիճին դրանն առջև հասնելով նոյն արարողութիւնը աւելի հնարագիտութեամբ պէտք եղաւ գործածել՝ ան ատեն ճշմարտապէս յոգնութիւն իմացաւ։

Բայց արդար լինելու համար պէտք է ըսել՝ թէ այդ դահլիճին մէջ գումարեալ ժողովը գոնէ ըստ երևութին շատ ծանրակշիռ էր, հոն ժողովեալ էին բաց ՚ի կաթողիկոսէն՝ Սմբատ Բագրատունի Սպարապետ Հայոց և իր որդին Աշոտ իշխան, և նոյն Բագրատունեաց տոհմէն Աշոտ և Դաւիթ որդիք Բագարատայ՝ որ ՚ի Բաղդատ կալանաւոր էր, Վասպուրականի Արծրունեաց տունէն Աշոտ մեծ իշխանին տեղ իւր եղբայրը Գուրգէն եկած էր փոխանորդաբար։ Սիւնեաց նախարարութեան տունէն Վասակ մեծ նախարարը ներկայ էր իւր իշխանօք. հոն էին իշխանն Գարդմանաց կորիճ, իշխանն Աղուանից Եսայի, իշխանն Ուտէացւոց Ստեփաննոս, իշխանն Արցախայ Ատրներսեհ Տէրն Խաչենոյ, և

ուրիշ երեւելի իշխանք և իշխանազունք և շատ Արքեպիսկոպոսք՝ Եպիսկոպոսք զանազան գաւառաց Հայաստան երկրի:

Կաթողիկոսն Յովհաննէս իւր աջ կողմը Սմբատ Սպարապետ և ձախը Վասակ Սիւնին ունելով, սկսաւ երկայն պատմութիւն մը ուր գլխաւոր և տիրող իմաստն էր թէ՝ «Աստուած զայրացեալ Հայաստանի բնակչաց չարագործութեանց և մեղաց համար, իւր բարկութիւնն անպակաս էր ըրեր Հայ ազգին վրայէն, ուստի պէտք էր ապաշխարել և մեղայ գոչել, և շուտով դեսպան ղրկել Բաղդատ Ամիրապետին որ Աստուծոյ բարկութեան գաւազանն էր, և հանդարտեցնել զանի ընծայիւք ու պատարագօք, որպէս զի Սասնցւոց գործած յիմարութեան պատիժը չի տուժէ բոլոր Հայաստան:» Այս ատենաբանութեան վրայ՝ իւրաքանչիւր ոք նոյն խօսքերը մի և նոյն կերպով կը կրկնէր և նոյն դարմանը կը յեղյեղէր երբ երիտասարդ եկեղեցական մը մերձենալով կաթողիկոսին յայտնեց թէ Սասնցի լեռնական մը կ՚ուզէր և թախանձանօք կը խնդրէր որ ներս մտնէ ամենակարևոր առաջարկութիւն մ՚ընելու համար: Կաթողիկոսը որ առանց Սպարապետին խորհրդեան և ինքնիրեն բան մ՚ընելու անկարող մարդ էր, նորա երեսը նայեցաւ՝ և նա հրաման տուաւ ներս մտնելու

մարդը: Եւ Յոհան երբ ներս մտաւ նիզակն ՚ի ձեռին և անկեան մը զանի կրթնցնելով աջ առաւ և դահլճին մէջտեղ կանգնեցաւ իւր Խութեցի պարզ հագուստներով և իւր պարկեշտ ու համեստ կերպով՝ նախ ամէն աչք զինք դիտեցին, և վերջը իւրաքանչիւր ոք սկսաւ հծծել իւր ընկերին այդ կէս վայրենիներուն վրայ որ գազանի պէս լեռներու մէջ կը բնակէին և անսովոր կեանք կ՚անցնէին:

Վերջապէս կաթողիկոսը ձայնը բարձրացընելով՝

— Դու ուզեր և խնդրեր ես այս ազնուակազմ ժողովին ներկայանալ և առաջարկութիւն մ՚ընել, մենք այնպէս կարծէինք թէ դուք անպիտան Սասնցիքդ երես պէտք չ՚էք ունենալ և համարձակիլ ազգին առաջ ելնելու, վասն զի ձեր յիմար գործողութիւնը շատ գէշ հետևանքներ պիտի ունենայ ազգին համար. բայց դուք կը տեսնեմ թէ այդ էլ իմանալ չի կարենալով ելեր եկեր էք մեզի խորհուրդ տալու: ուստի զրուցէ՛ տեսնենք ինչ որ քու Սասնի մտքիդ մէջ կրցեր ես ձևակերպել:

Իսկ լեռնցին ան ատեն իւր խոնարհ գլուխը երբ վեր առաւ՝ իւր երկայն մազերը ցնցեց և իւր փայլակնացայտ աչքերը երբ ժողովականաց վրայ պտըտցուց՝ արհամարհանաց զգացմունքը

փոխուեցաւ, խոր լռութիւն մը տիրեց ամենուն քով, լռութիւն նշան ուշադրութեան, որով և յատակ ձայնով այսպէս խօսեցաւ Յովհան.

— Հոգևոր Տէր և մեծապօր իշխանք աշխարհաց Հայոց, կը ճանչեմ մեծ շնորհքը որ կ՚ընէք ինձ պէս ողորմելի ծերունւոյ մը ունկընդիր լինելով։ Ես եկայ իմ լեռներէս մեր գործքերուն համար ոչ թողութիւն խնդրելու՝ այլ ազգը փրկելու համար վերահաս վտանգէ առաջարկութիւն մ՚ընելու, բայց հիմա կը տեսնեմ թէ նախ պէտք է Սասուն արդարացնեմ, վերջը առաջարկութիւնն ընեմ։ — Ի՞նչ ըրին Սասունցիք. — այն՝ ինչ որ հինգ վեց տարի առաջ ըրին Բագարատ իշխան իշխանաց և Աշոտ Տէր Վասպուրականի։ Ապուսէթ ոստիկանական իշխանութիւնը յանձներ էր Մուսէի, և այս մարդը՝ ինչպէս սովորութիւն է Տաճկաց՝ յանկարծ օր մը ելաւ Աղձնեաց որջերէն ստուար զօրքով մտաւ Տարօն։ Բագարատ Արծրունեաց օգնութեան դիմեց, և Աշոտ իւր եղբայրներով և բոլոր Վասպուրականի զօրութեամբ հասաւ Բագարատայ. ես ներկայ էի պատերազմին և Գուրգէն իշխան՝ ներկայ հոս այս ժողովիս՝ նոյն պատերազմին երիտասարդ զօրավարաց մէկն էր, ուր զարկին կոտորեցին թշնամին, բանակը աւարեցին, փախստականքը բերդերու և ան-

տառներու մէջ հալածեցին և մինչև Ճահաստան սկսան պաշարել։ — Այս պատերազմէն քիչ մը ժամանակ վերջը նոյնպէս նոյն Ապուսէթ Ալի անուն Ամիրայ մը կ՚ուղարկէր Վասպուրական շատ զօրքով որ արքունի տուրքերը հաւաքէ, նա էլ ըստ սովորութեան անօրէն ազգին, Աղեակ գաւառը դրած բանակը՝ հոնկից ապստամբ կը սփռէր բոլոր Վասպուրական, կը գերէր՝ կ՚աւերէր՝ կը յափշտակէր՝ կապուտ կողոպուտ կը գործէր ընչից և ստացուածոց՝ այդ աւազակները կը յափշտակէին այր և կին նոցա ժառանգութիւնը՝ և նոցա զօրքը իրենց անգթութիւնը մինչև Անձևացեաց Տէրութեան կողմն կը հասցնէին։ Արծրունեաց Տէրը դեսպան ղրկեց, հարկերը տուրքերը տալ խոստացաւ, որպէս զի դադրի աւերմունքը և անգթութիւնը, և երբ դեսպանը արհամարհեցաւ և անօրէնութեան գործը կը շարունակուէր, յարձակեցաւ բոլոր Վասպուրականի զօրութեամբ անօրինաց վրայ, Ամիրան հազիւ թէ քանի մը հոգւով կրցաւ ազատիլ պատերազմէն, իւր զօրաց բազմութիւնը իւր եղբայրն էլ միատեղ սուրի բերան ջարդուեցան և երկիրը իրենց դիակամբք ծածկեցին. դարձեալ նոյն պատերազմին մէջ աջ թևի հրամանատար սա՝ այս Գուրգէն իշխանն էր՝ եղբայր մեծի իշխանին։ — Ի՞նչ ը-

րին ուրեմն Սասնցիք, Հոգեւոր Տէր և մեծազօր իշխանք, երբ տեսան Բագարատ դաւաճանութեամբք գերի և կապեալ ընտանեօք յուղարկեալ 'ի Բաղդատ, երբ տեսան բոլոր Տարօնոյ գաւառը աւար և յափշտակութիւն անօրինաց, կոտորածի և գերութեան առջ՝ կանայք և աղջայք մատնեալ, Ս. Կարապետ պաշարեալ բարբարոսներէ և բոլոր յոյսը Սասնցւոց մնացեալ, իջան իրենց լեռներէն և նոյնը ըրին ինչ որ Բագարատ՝ Աշոտ և Գուրգէն իշխաններն ըրած էին։ Յանցա՞նք էր Հայ Քրիստոնէայ եղբայրը 'ի սրոյ՝ 'ի շղթայից ազատել, յանցա՞նք էր Քրիստոսի մզկիթ դարձած եկեղեցիները Քրիստոսի դարձնել, յանցա՞նք էր Ս. Կարապետի վրայ հրով և սրով եկողները սուրի մատնել։ Եթէ Սասնցւոց ըրածը յանդիմանութեան արժանի է, ուրեմն արդար և իրաւացի են այս անզգամ ժողովրդեան մեզ դէմ գործած ամեն չարութիւնքը։ Բայց ան ատեն հետեւանքը մտածեցէք, Տեարք մեծազօրք, հետեւանքը որ Հայ ազգին մէջ կրնայ փճացնել մինչեւ վերջին սերմունքը որ Թադէոսի՝ Բարթուղիմէոսի և Լուսաւորչայ արիւնով ուռճացաւ այս Հայաստան աշխարհիս վրայ։

— Մեզի այդչափ երկայն քարոզութեան պէտք չի կար, ըսաւ Սմբատ Սպարապետ հան-

դարտ խստութեամբ, դու առաջարկութիւնդ ըրէ, մեր հոգեւոր Տէրը քեզ այդ բանին համար հրաման տուաւ խօսելու, և նայէ՛ որ ինչչափ կարելի է շուտ և համառօտ կատարես խնդիրքդ։

Աս խօսքերը և գլուցուածքին եղանակը կը յայտնէին որ Ցամկան փուճ տեղ կ'աշխատէր համոզել այնպիսի մարդիկ որ իրենց մտքի դրածէն անդին բան մը չ'ունէին ընելիք, բայց որովհետեւ սրբազան պարտականութիւն մը կար այդ յիմար մարդկանց ճշմարտութիւն մը գլուցելու և զիրենք կորստենէ ազատելու, սկսաւ խօսիլ երկրորդ անգամ։

— Մենք լեռնցի պարզ մարդիկ ենք, Տեարք, աշխարհիս կառավարութենէն չ'ենք հասկնար, բայց ցաւով սրտի կը տեսնենք որ նոքա որոնց ձեռքն է ամեն կառավարութիւն՝ շատ անգամ թշնամւոյն խաբէութեան զոհ կ'երթան. իրենք մեծ մարդիկ են՝ իմաստուն են՝ իրաւունք ունին իրենց անձը և իրենց ունեցած գանձերը պահպանելու, մենք այնպէս կարծենք թէ լաւ կ'ընեն որ քաշուին իրենց ամրոցները վտանգի ժամանակ, թող տան ժողովրդեան և քահանայից հաւատքի պատերազմը պատերազմիլ։ Ուստի այդ նպատակաւ Սասնոյ ժողովուրդը կը խնդրէ հոգեւոր Տեառնէս որ օրհնութեան կոն-

դակ մը հանէ բոլոր Հայաստանի ժողովրդոց, զէն 'ի ձեռին յարձակելու ընդդէմ անօրինաց որ կը պատրաստուին մտնել աշխարհքս բնաջինջ ընելու համար Քրիստոնէութիւն և Հայութեան անունը, կը հրաւիրէ իւր Սրբութիւնը գալ բնակելու Ս. Կարապետի վանքը մինչև պատերազմի վերջը, նուիրակներ հանելու ամեն տեղ որ դրամ՝ ձի՝ զէնք՝ պաշար ժողվեն բոլոր Հայոց երկրէն և հոն հասցնեն ուր որ Հայ զօրքը կեցեր կը պատերազմին ընդդէմ անհաւատից, կը խնդրէ խոնարհաբար . . . .

— Այս ի՞նչ խնդիրներ, այս ի՞նչ հրաւէրներ են որ այդ յիմար լեռնցի մարդը եկեր այս տեղ այսպիսի ժողովքի մը կը համարձակի առաջարկել և մենք հազար անգամ աւելի յիմար կը լինինք եթէ այդպիսի առաջարկութեանց համբերենք: Մե՞նք երթանք նստենք ամրոցները և մեր շինականքը զինուորին պատերազմին որպէս զի զէնքերնին վաղը մեզի դէմ դարձնեն. և դուք այդպիսի խօսքեր լսելու համբերութիւն ունի՞ք:

Այս խօսքերը զրուցողը Գարդմանացւոց կրտրիճ իշխանն էր և արդէն ոտք ելնել և երթալ կ'ուզէր երբ զէնքը խնդրանօք և բռնի նստեցնել տուին: Իսկ Սմբատ Սպարապետ դարձաւ այն ատեն Ցօփանու և ըսաւ խստութեամբ.

— Որովհետև մենք ներողամիտ գտնուեցանք,

դու էլ դորա փոխարէն համարձակութիւնը յանդգնութեան տարիր, և այսպիսի մեծ նախարարներ այդ խօսքերովդ նախատեցիր. եթէ իրօք այդպիսի խորհուրդներու կը համարձակին Սասնեցիք մեզ նախ պարտականութիւն կայ զերենք պատժելու: Ուստի այդ քննութիւնքը մինչև որ կատարուին պէտք է դու այս տեղ պահուիս, վասն զի կ'երևայ թէ դու ես այդ կարծիքները ժողովրդեան մէջ տարածող: — Պահապա՛նք, այդ մարդը զգուշութեամբ պահեցէ՛ք:

Եկան զինուորներ և առին դուրս հանեցին Ցօփան և իջուցին կաթողիկոսարանին բանտը, և վերը Հայոց իշխանք և նախարարք Ցօփանու խօսքերը մեկնելով սոսկալի հետևանքներ կը հանէին իրենց իշխանութեան համար և ամեն խօսքերուն տակ դաւաճանութիւն կը տեսնէին:

Իսկ Թշնամւոյն դէմ գործելու մասին ոչ ոք իր ընկերոջ հետ միաբան չ'էր, ոչ ոք չ'էր ուզեր իւր անձնական զինուորները իւր անձէն հեռացնել, ոչ ոք իւր սահմաններէն հեռանալ: Ուստի ինչպէս անօգուտ մտած էին ժողովքի, անօգուտ դուրս ելան, հեծան իրենց ձիերը՝ առին իրենց թիկնապահները, գնացին իւրաքանչիւր ոք իւր ընկերոջ դաւաճանութենէն կասկածելով և ցրուեցան իրենց գաւառները:

Բայց այդ բազմութեան մէջ որ դահլիճին մէկ կողմը կեցած խօսքի չ'էին խառնուէր՝ կային երիտասարդ իշխանազունք, որոնց պարտականութիւն էր լուռ միայն կալ և յարգել իրենց հարց՝ հօրեղբարց կամ մեծ եղբարց ներկայութիւնը և լսել: Սոցա մէջ ծանրագլուխ երիտասարդ մը կար նաև որ ուշադրութեամբ ամէն բան կը դիտէր և մտիկ կ'ընէր: Երբ ամէնքը ցրուեցան՝ մօտեցաւ Սմբատ Սպարապետին:

— Հայր, ըսաւ միթէ՞ բաւական չ'եղաւ այդ Սամնցւոյն պատիժը, եթէ հրաման տաս արձակեմ զինքը որ երթայ իւր ճամբան:

— Այո՛, շատ և շատ եղաւ, բայց ճշմարտութիւններն նաև ամէն տեղ պէտք չ'է խօսիլ: Հօրեղբօրդ սիրական Յովհանն է դա:

— Կը ճանչեմ, հայր, երթամ ուրեմն:

Շուտ մը վար իջաւ Աշոտ և հրաման ըրաւ պահապանաց իրեն բերել Յովհան. և առանձին սենեակի մը կը շրջագայէր, երբ Սամնցին եկաւ նոյնպէս անխռով ինչպէս բանտ գնացած ժամանակ անխռով էր:

— Յովհա՛ն եղբայր, ըսաւ Աշոտ, ի՛նչ պէտք կար այս իշխանաց ժողովքին մէջ քու բոլոր կարծիքներդ յայտնել. միթէ՛ աւելի լաւ չ'է՞ր լռիկ մնջիկ գործել՝ պատրաստել ժողովուրդը և

վտանգի օրն ու ժամը հասնելուն գործի սկսիլ:

Յովհան պարզ էր բայց պարզամիտ, չ'էր երիտասարդին որ այսպէս քաղցրութեամբ կը խօսէր՝ նայեցաւ աչքին խորը հետաքննին կերպով և ամենայն ցրտութեամբ ու տխրութեամբ ըսաւ,

— Իշխան, դու շատ սրամիտ երիտասարդ մը կ'երևաս, ինձ հետ այդպիսի խորախորհուրդ հնարիմացութեամբ խօսելու պէտք չի կայ. եթէ կարենայի այդ քու ըսածդ ընել՝ ժողովուրդը պատրաստել և կարևոր ժամուն ոտք հանել թէ՛ այդ իւր յիմար տէրանց դէմ, թէ՛ այդ օտարահաւատ բռնաւորաց դէմ՝ այս րոպէիս կ'ընէի, բայց այդ լեռը շարժելու հաւատք և կարողութիւն վերի զառամեալ և ողորմելի ծերուն ձեռքն է. ի՜նչ օգուտ, նա էլ այդ իւր զօրութիւնը չի ճանչէր և չի գիտէր ազգին օգտակար ընել: Իսկ այդ յիմար իշխանները որ ինձի դէմ կը գոռային կամ կը մռնչէին, հինգ տարի ժամանակ չ'եմ տար իրենց, մէկ հատ մը պիտի չի մնայ, որ Բաղդատու ճամբան չափած չ'լինի, և չ'եմ գիտէր քանի՞ հատը իւր Քրիստոսը Մահմէտի հետ չի փոխէ: Ղեւո՜նդ, Ղեւո՜նդ, ո՜ւր ես, Հայաստան քեզ պէս մեծ մարդ՝ մեծ քահանայ՝ մեծ Քրիստոսի ծառայ մէկ հատ մը միայն բերաւ, ափսո՜ս, և հոն իւր ծննդական կարողութիւնը դադրեցաւ:

— Յովնա՛ն եղբայր, ըսաւ երիտասարդ իշխանը, ինչո՞ւ այդպէս կը յուսահատիս, համբերէ՛ սպասէ՛ պարագայներէն օգուտ քաղել իմաստուն և հեռատես մարդուն առաքինութիւնն է։ Տե՛ս, ահա այդ մեր օտարահաւատ թշնամին թէպէտ զօրաւոր օր աւուր կը հալի՝ թէպէտ ահագին աշխարհաց ընդարձակութեան վրայ կը տարածէ իշխանութիւնը՝ բայց օր աւուր կը տկարանայ, և իւր մէջէն բաժնուելով պիտի կործանի։

— Ո՜վ երիտասարդ, դու կը տեսնես թշնամւոյն իյնալը, կը մոռնաս չ'ես տեսներ քու փճանալդ՝ քու ոչնչանալդ, դու՝ թէ որ միջոց ունենայիր ինքզինքդ անվթար պահպանելու՝ ես ալ քեզի հետ նոյնպէս կը մխիթարուէի։ — Թողունք այս ողբալից խօսակցութիւնը, 'ի գործ դիր ինչ հրաման որ ունիս մեծաւորներէդ։

— Ազատ ես երթալու ո՛ւր որ կամք ընես, ընելու ի՛նչ որ ուզես։

— Լաւ, իմ ժամանակս դեռ չ'է հասած ուրեմն։

Եւ ամենայն հանդարտութեամբ աս խօսքերն ըսելով, աչքերը չորս կողմը պտտցուց իբրև թէ բան մը կը փնտռէր։ Աշոտ իւր շարժմունքէն իմանալով փնտռածը՝ շուտ մը քակեց մէջքէն սուրը և ներկայացնելով Յովնանու,

— Թէպէտ սորա տէրը մինչև այս օր այնպիսի քաջ մէկը չ'է եղեր որ պատիւ բերէ, բայց իբրև բարեկամական յիշատակ խնդրեմ որ յանձն առնուս գործածել։

— Բագրատունի իշխանի մը սուրը միշտ պատիւ կը բերէ։

Այս խօսքը զրուցեց սուրը կապելով, և երբ բերին տուին իրեն իւր նիզակն ալ, ձեռքը կուրծքին դրաւ, մնաս բարեւն ըսաւ, և ուղղուեցաւ դէպ 'ի դուռը։

— Ահա երիտասարդ մ'ալ որ կը խոստանայ, կ'ըսէր ինքնիրեն Յովնան, բայց ի՞նչ օգուտ, իւր սրամտութիւնը կրնա՞յ արգիլել որ Հայաստան արիւններու մէջ չի թաթխուի, իբրև հնձան չի տրորուի։ Երթանք, Յովնան, մեր Սասնոյ լեռները, սպասենք ինչ որ վճռուած է «Բարկութեան որ գալոց է» և յուսանք յԱստուած և ոչ 'ի մարդիկ։

Այսպէս Յովնան ինքնիրեն իւր նիզակին վրայ յեց կ'երթար՝ կը շարունակէր իւր յետադարձն անխռով և անսասան՝ բայց տխուր վասն զի չէր կրցած շարժել եկեղեցական խումբը՝ ուսկից ինք յենակէտ մը շինել կը յուսար։

ԳԼՈՒԽ Ժ.

ԻՇԽԱՆԱԶԱՆՑ ԺՈՂՈՎ ՄԸ.

Հասաւ դարձեալ Երասխայ ափանց վրայ, որ դարիւ դարիւ կուգար իւր խորոտ ընթացիւք, սիրտը այնչափ տխուր էր որ առաջ քան անցնիլը Նստաւ Ճանապարհէն հեռու նոյն ափանց վրայ. ի՜նչ կը մտածէր այդ մարդը որ քսան չորս ժամը անցեր՝ բերանը բան չէր դրած ուտելու և ոչ ախորժ ունէր։

Այդ Երասխայ դիմացի գետեզրը, Բագարանէ շատ վար՝ փոքրիկ վանք մը կը տեսնէր, ճիշտ նոյն միջոցին ուր Ախուրեան Երասխ կը թափէր և իր աչքը անկից չէր կարող բաժնել. այդ վանքը երկու երկայն տարիներ իրեն բանտ էր եղած, կը նայէր այդ աշտարակին՝ ուր կը յիշէր թէ անքուն գիշերներ անցուցեր էր, կը տեսնէր այն փոքրիկ երկաթապատ լուսամուտը ուսկից առանց երկաթի արգելքին դարձեալ մարդ չէր կրնար անցնիլ՝ ծակը ուսկից շնորհեալ էր տեսնել երկինք իւր պայծառութեան և իւր տխրութեանց մէջ, երբ իր սրտին այն օրերէն սկսեալ մինչև սոյն այս վայրկեան օր

մը ուրախութեան արև չէր ծագած՝ քսան՝ քսան հինգ տարիներու ժամանակ։ Եւ որ աւելին է կը յիշէր այն սրտի համար սոսկալի վայրկեանները որ չարչարանաց երկար տարիներ էին, յորում հոգին կը տոչորէր և նորա տանջանքները բացատրելու համար չի կար բառ վասն զի մարդկային լեզուն շատ աղքատ է յայտնելու այդ վիճակը և նա միայն կ՚զգայ որ սիրեր է անյոյս, որ սիրեր է թշուառ, և որ խնդրեր է յԱստուծոյ հազար բիւր անգամ ազատել զինք 'ի սիրոյ և 'ի կենաց, որուն երկնային քաղցրութիւնը դառնացուցեր՝ լափլիզեր է բաժանման և անյուսութեան դժոխային հուրը։ Կը յիշէր այն տխուր գիշերներու անհանգիստ քունը, ուր հրեշտակային և պաշտելի կերպարանքը Վասկանուշին կ՚երևար փայլակի մը պէս և խեղճ բանտեալն հազիւ աչքերը յագեցնել փափաքեր՝ աներևոյթ կը լինէր և ինք խոտէ խշտեայն վրայ ամբողջ ժամեր կը տապլտկէր։ Վերջապէս յոգնած այդ յիշատակներէն ձեռքը ակամայ ճակտին դրաւ մեկդի վարելու համար ամէն խորհրդածութիւն, թէպէտ այնչափ տարիներէ վերջը սրտի սպիացեալ վէրքը ձայն կուտար թէ չէր բժշկուած, և այս այն վայրկենէն որ քրմուհին գուշակեր էր թէ դարձեալ պիտի տեսնէր իր սրտին սիրելին։

Ցնցուեցաւ ելաւ, հանեց զգեստներն ու զէնքերը՝ կապեց գլխուն վրայ և առանց ուշ դնելու Երասխայ մռնչիւններուն և բարկացայտ յարձակմանց նետուեցաւ մէջ, և նորա ընթացքին հետ կը սրանար կ'իջնէր միշտ հանդէպ կողմը մինչև որ ափունքը գտաւ, և երբ վրայէն ջուրը ցնցեց, իր պարեգօտը դարձեալ հագաւ և ուղղուեցաւ դէպ 'ի նոյն վանքը՝ որ իբրև թէ մագնիսական զօրութեամբ առ ինքն կը ձգէր, վասն զի Վասկանուշի համար բանտին յիշատակը նաև քաղցր էր, և նոյն միջոցին մտածութիւն չի կար մտքին մէջ այլ միայն Վասկանուշ, վասն զի այս սիրոյ հսկայ ուրուականին առջև ամէն բան ազգ՝ Սասուն՝ Արաբ՝ Նախարար՝ կաթողիկոս՝ անհետացեր էր մտքէն, այս մտածութեամբք երբ կ'անցնէր առաջին գիւղին քովէն, երկու պատանիք իրեն մօտենալով և ակնածութեամբ, իրարու երես նայելէ և աչքով խորհրդակցելէ վերջ՝ մին աւելի համարձակ՝ հարցուց.

— Եղբայր, Խութեցի Յովհան դո՞ւ ես։

— Այո՛ որդեակ, ես եմ։

— Խնդրեմ մեզ հետ գալ վասն զի տունը մարդ մը քեզ կ'սպասէ։

— Լա՛ւ որդեակ, պատասխանեց Յովհան քիչ մը մտածելէն վերջ և առանց հետաքրքրութեան նշան կերպարանքին վրայ ցոյց տա-

լու, լռիկ սկսաւ երթալ պատանույն հետ, որու միւս ընկերը միշտ պատկառանօք իրեն կը հետևէր։

Եւ երբ պատանին դրան մը առջև կեցաւ, մտաւ Յովհան և առաջին աչք նետելուն տեսաւ Գուրգէն Թիկնաւէտ որ դէպ' իրեն քալելով։

— Ե՛կ, ըսաւ, եղբայր, հազիւ թէ իմացայ քեզի եղած այն վատթար և յիմար ընդունելութիւնը սիրտս տրոփեց և վախելով որ առանց քեզ տեսնելու ձեռաց կը հանեմ և դու կ'երթաս Տարօն, բոլոր սա գետեզրը գիւղացւոց ապրսպրեցի որպէս զի տեսնուինք և եթէ կարելի բան մի կայ՝ գործ դնենք։

— Ի՞նչ մնաց ընելիք, եղբայր, պատասխանեց Յովհան տխրութեամբ և հանդարտութեամբ, յոյս չի կայ ոչ Կաթողիկոսէ՝ ոչ Եպիսկոպոսէ՝ ոչ իշխանէ՝ և ոչ Նախարարէ. իսկ ժողովուրդը՝ «ոչխար որուն հովիւ չի կայ»՝ որ վաղը պիտի մատնուի բարբարոսաց ձեռքը սրոյ և գերութեան։ Եթէ կաթողիկոսը միայն ուզէր շարժիլ, եթէ իմ խորհրդոյս ուզէր հետևիլ, գար Ս. Կարապետ, հանէր ռոք եկեղեցական բանակը՝ ժողովրդոց բանակը հարիւր հազարներով կը կանգնէր անմիջապէս, և մենք Հայքս ան ատեն ոչ վատ կը լինէինք՝ ոչ անմիաբան՝ ոչ նախանձոտ, այլ քարով միայն զինեալ՝ շուներու պէս

կը հալածէինք Թշնամին որուն անարգ ոտից տակ կը հեծեն գերութեամբ մեր զաւկները՝ մեր կանայքը՝ մեր իշխանքը՝ մեր եկեղեցին մեր՝ հաւատքը։ . . . Աստուած մեղք չի համարի, Գուրգէն, բայց սրտիս դառնութենէն առջի անգամ չ՚է որ խնդրեր եմ իրմէ առնուլ՝ վերցնել աս կեանքը որ չի տեսնեմ միմիայն Քրիստոնեայ Ասիական իմ ազգիս վիճակը որ օր աւուր կը վատթարանայ՝ ծաղր ու ծանակ կը լինի անհաւատից և կարճամիտ Քրիստոնէից։ Եւ այն կը ցաւիմ որ մենք կրնայինք անկարօտ և առանց ուրիշի օգնութեան այս երկու ինքնակալութեանց նաև դիմադրել և մեր երկիրը պաշտպանել եթէ մեր այդ յիմար նախարարական և ազնուապետական կառավարութեան ձևը՝ չ՚ունենայինք, որ մեր ազգը հարիւր կտոր ընելով, բիւր բռնաւորաց գերի է ըրեր։

Աս խօսքերը զրուցելով Յովհան՝ իբրև թէ յոգնութիւն իմացաւ և նստաւ։ Գուրգէն տեսնելով այս երկաթի մարդուն գունատութիւնը՝ հարցուց.

— Յովհան, ե՞րբ ելար Դունէն։

— Երեկ երեկոյ։

— Ոտքո՞վ եկար մինչև հոս և առանց դադրելու, այնպէս չ՚է՞։

— Այո։

— Ի՞նչ կերար։

— Ոչինչ։

Կը մտածէր Գուրգէն թէ այդ մարդը քսան չորս ժամու մէջ երեք օրուան ճամբայ էր քալած և անօթի, և հացի խօսք չ՚էր ըներ ամենևին, ուստի շուտ մը ուժեղ ձայնով կանչեց.

— Վահրի՛ճ։

— Հրամայէ, Տէր, ըսաւ մեր հին ծանօթ Վահրիճ։

— Զրուցէ մեզի շուտ կերակուր բերեն։

Վահրիճ գնաց կերակուր ուզելու. Յովհան անշարժ նստէր աչքերը գետին սևեռեալ կը նայէր. իսկ Գուրգէն սենեակին մէջ վեր վար կը շրջագայէր, եղած վիճակին վրայ խորհըրդածելով և այդ ժողովրդեան մարդուն, ինք նախարարական՝ ամօթալից ակնարկ մը նետելով, իբր թէ իր Արծրունի և Մամիկոնեան լինելուն ամաչէր, մոռնալով թէ այդ նախարարական իշխանութեան առաջին զոհերուն մէկն ինքն էր։

Լռութեամբ կերակուր կերան գրեթէ առանց խօսելու։ Գուրգէն Յովհանու երեսը նայեցաւ։

— Դու պէտք է քնանաս քիչ մը, Յովհան, վասն զի քեզի հետ ետքը գործ ունինք։

— Եթէ գործը կարևոր է, հոգ չ՚է։

— Ո՛չ, պէտք է հանգչիս, և կէս գիշերէն վերջ քեզ հետ կ՚երթանք:

— Լաւ, ըսաւ Յովնան և Գուրգէն տեսաւ որ քանի մը վայրկեան ետքը իր անուանակից մարգարէին նման կը քնէր, թէպէտ մենք գիտենք որ իւր սիրտը նաև նորա նաւուն պէս ալէկոծեալ էր: Կէս գիշեր չի կար երբ ելաւ կանգնեցաւ Յովնան. այդ զօրաւոր կազմուածքը պէտք չ՚ունէր երկայն հանգստեան, արդէն բոլորովին կազդուրել էր. նոյնպէս ելաւ Գուրգէն և ահա քիչ մը վերջը մեր երկու բարեկամները ձիարշաւ կերթային Ախուրեանն ՚ի վեր Բագրանու ճամբան, և մեր հին ծանօթ Վահրիճ կը ջանար իւր գրաստով նոցա հետևիլ և հասնիլ ոչ միայն զանոնք չի կորսնցնելու՝ այլ նաև իւր հետաքրքրութիւնը գոհ ընելու համար. վասն զի պատուական մարդը որ շատ քիչ միջոց երբեմն Գուրգէնի դաստիարակ լինելու փառաւորութիւն ունեցեր էր, հիմա շատ քիչով էլ գոհ լինելու կամք ունէր իր հետաքրքրութիւնը լցնելու համար, մանաւանդ քանի որ տէրը կորուսել և ոտք՝ ոտք, գիւղ՝ գիւղ հարցնելով կրցեր էր հետևիլ նորա շաւղաց և գտնել զինք Բագրևանդ: Բայց ի՜նչ փոփոխութիւն այդ մարդուն վրայ, մէկ քանի շաբաթուան հեռաւորութեամբ Գուրգէն փոխուէր էր, տխրութիւն

նկարուած կերպարանաց վրայ՝ քիչ և միավանկ կը խօսէր, ծիծաղ եթէ ծագէր երեսին՝ այն էլ հեգնական էր գրեթէ, Թորթումի անունը և հոն դառնալու խօսք չի կար ամենևին: Հիմա էլ իւր սովորական ձին Յովնանու տալ պարտաւորեալ՝ ինք անտանելի գրաստի մը վրայ ցնցուելով ոսկորները խուրտ ու խաշ կը հետևուէր, նզովելով Յովնան և բոլոր Սասունցիք, Յոլակ և բոլոր աշխարհիս ձիանք, կը նզովէր նաև բոլոր աշխարհիս տէարք և խանք և Գուրգէն նաև, բայց այնպէս կամաց մէջէկ ձայնով որ ոչ ոք՝ և սատանան անգամ կարող չ՚էր լսելու, վասն զի մեր Վահրիճ շատ խորագէտ մարդ էր և վտանգաւոր բառ բերնէն չ՚էր հանէր՝ եթէ մտքէն անցնէր:

— Գրո՜ղ տանի այդ Խուլթեցին, իր լեռներուն վրայ ձիու երես տեսած ունէ՞ր որ իմ ձին կը հեծնայ, և ես այս անիծած կենդանւոյն կը դատապարտուիմ, ուստի՞ այս մարդն ելաւ մեր դիմաց, քանի որ դա տեսանք, մեր գործը յաջող չի գնաց, մա՛րդ որ կեանքին մէջ երեսին ծիծաղ չ՚է եկել, մա՛րդ որու բերանը ամենևին չի բացուիր՝ և երբ յանկարծ բացուի ամենևին չի գոցուիր, մինչև չի հարցնես չի պատասխանէր . . . այդ մարդը կախարդ է, վեցհազարեայի կը ծառայէ . . . ահա քանի որ

իշխանը այդ մարդը տեսաւ, ինք էլ տխուր է, խելքին եկաւ։ Երէկ յանկարծ խաղաղ նստած էինք բլուր, ի՞նչ եղաւ, սատանան դրդեց, վազէ՛ Երասխայ ափունքը, ամէն գեղացւոց իմաց տո՛ւր. ո՞ւմ համար . . . «Խուլթեցի Յոհան եղբայր հրաւիրել ամենայն ակնածութեամբ որ շնորհք ընէ՝ գայ մեր տեսութեան» . . . և Գուրգէն իշխան ընդ առաջ կ՚ելնէ՝ լեռնցի մարդուն ձեռքերը կը բռնէ . . . հին բարեկամ եղած իրարու Յոհա՛ն Գուրգէ՛ն, իբրև թէ եղբօր զաւկներ լինէին։ . . . Անիծա՜ծ կենդանի, աղւէսներս վեր վար դարձաւ, . . . իմ պատուակա՜ն ձին, տե՛ս ինչպէս լաւ կ՚երթայ Ցոլակին հետ . . . բայց դոքա ի՞նչ կը խօսին, մենք ո՞ւր կ՚երթանք, այս ճանապարհը դեռ ի՞նչչափ կը քշէ, ասոնք ամենը խնդիր են, բայց ո՞ւմ հարցնես։ Իրաւ որ Վահրի՛ճ, դու մեծ յիմարութիւն ըրիր՝ թողիր տուն տեղ ելար իշխանին ետևէն . . . բայց միթէ գիտէի՞ թէ զիս այսպէս պիտի ընդունի. ոչ ընտանութիւն, ո՛չ ի՞նչ ըրիր, ո՛չ ընտանիքդ ի՞նչպէս են, ոչինչ հարցմունք չի կայ, այլ միայն «բարի ես եկեր» մը և ետքը գնա՛ այդ կախարդը փնտռէ, տո՛ւր ձիդ որ վեցհազարեայի մարդը նստի, և դու հեծի՛ր վայրենի կենդանւոյն վրայ որ բոլոր աղւէսներդ վեր վար շրջէ և զքեզ սպաննէ։

Եւ յանկարծ այս ամեն խորհրդածութիւնք ընդհատեցան, Բագարան և իր կաթողիկէին տուները երևցաւ մութուն մէջ և մեր երկու ձիաւորք կեցան և իջան ձիերնէն. Վահրիճ իջաւ նոյնպէս և կաղնիկաղ ամենաթթու կերպարանքով եկաւ ձիերը առնլու։

— Դու այս աղբիւրին քով մեզ սպասէ, ըսաւ Գուրգէն, առանց գլուխ անգամ դարձնելու Վահրիճի տխուր երեսին որ այդէն տեսնել կարելի չ՚էր մութուն պատճառաւ, և շարունակելով Յոհանու հետ իւր ճամբան դէպ ՚ի քաղաք։ Թէպէտ դժգոհ որ այս արշաւանքէն բան մը չիմացաւ, թէպէտ զկծեալ որ զինք քաղաք մտնելու արժանի չ՚էր համարեր իշխանը՝ բայց մխիթարեալ որ ազատեցաւ ցընցմունքէ և ոսկորներու ցաւէ, կապեց երկու ձին ծառի մը, Ցոլակին էլ ապսպրեց հսկել և ինք վերարկուին փոթոթեալ երջանիկ քունի մը մէջ ընկղմեցաւ։ Խեղճ Վահրիճ հազիւ թէ քառորդ մը կրցաւ քնանալ և ահա զգաց թէ տաք շունչ մը և երկու ահագին շրթունք իւր երեսը կը գգուէին, Ցոլակ իրեն իմաց կուտար. ցատկեց ելաւ, և կը լսէր քանի մը հեծելոց ոտից թոփիւն. կորովաբար իւր երկու ոտքին վրայ հաստատուն կանգնեցաւ, և կրցաւ որոշել որ իշխանական խումբ մ՚էր որ կանգնէր.

դարձեալ առաջին դիրքը առաւ, իր քարէ բարձին վրայ սկսաւ քնանալ, բայց հազիւ աչքերը կը գոցէր՝ Յովակ հաւատարիմ պահապան զինք կ՚արթնցնէր։ Երկու երեք անգամ նոյն դիպուածը նորոգուեցաւ, միշտ նոյնանման փոքրիկ գունդեր էին որ քաղաք կը մտնէին։

Թողունք Վահրիճ իր քունին, երթանք մեր երկու ընկերաց հետ որ ուղղուեցան հեռի դէպ ՚ի Բագարան։

— Լաւ կը խօսիս, կ՚ըսէր Յովհան, կ՚ուզես յոյս ունենալ այդ երիտասարդին վրայ. այնպիսի յուսահատ վիճակի մէջ է մեր խեղճ ազգը որ ո՛ւմ ըսես օգնութեան ձեռք պիտի երկնցնէ. ես տեսայ զինք, շատ խելօք և ուշիմ կ՚երեւայ, բայց ժամանակը միայն կրնայ յայտնել թէ երեւոյթը պիտի իրագործի՞ թէ ոչ։

— Տեսնենք ի՞նչ է իր առաջարկութիւնը, ինքն է որ զմեզ կը խնդրէ, ինքն է որ ինձ մասնաւոր իմացուցեր էր որ զքեզ առնում և գամ Բագարան և թէ շատ կարեւոր խնդրոյ վրայ կը փափաքի խորհրդածել. ես որ աշխարհքէս զզուած կը խորհէի առնուլ գլուխս՝ անցնիլ Յունաց բաժինը, այս լուրիս վրայ զարմացայ՝ ուզեցի այս երիտասարդը տեսնել որու վրայ ամեն մարդ գովութեամբ կը խօսի։

— Ամե՛ն մարդ, կը նշանակէ՝ ո՛չ մէկ մարդ։

Եթէ ես ալ ամենուն պէս ո՛վ որ իմ երեսիս ծիծաղէր նա գովէի, եթէ ես ալ ամենուն պէս որ անիրաւութեան մը փոխարէն նշոյլ մը տեսնելնուն՝ արդարութեան արեւ ծագեցաւ գոչէի, անշուշտ այդ երիտասարդը պիտի գովէի վասն զի զիս անիրաւ բանտէ մը ազատեց. բայց ինձ եղած մէկ դիպուած և ուրիշներուն եղած հազար դիպուած բաւակա՞ն են ըսել տալ թէ Հայ ազգին փրկութիւն ծնաւ, որովհետեւ Բագրատունի Սմբատ Սպարապետի որդի Աշոտ իշխան մը կայ։ Տեսնե՛նք զինք հիմա փորձով թէ ի՛նչ է, և մինչեւ ո՞ւր կ՚երթայ իւր գործունէութիւնը ազգին ընդհանրութեան համար։

Այս միջոցիս ձիերու ոտից տրոփ լսուեցաւ և քանի մը հեծեալք անցան և ուղղուեցան դէպ ՚ի վերին բերդը որ Ախուրեանի բարձրաւանդակը կը տանէր, հազիւ թէ քանի մը վայրկեան անցաւ ուրիշ փոքրիկ խումբ մը դարձեալ տեսնուեցաւ երբ մեր երկու բարեկամք արդէն բերդին դրան հասեր էին։ Յայտնի կ՚երեւէր լռութենէն որ կը տիրէր թէ գաղտնութեան կարգադրութիւն մը կար. հեծելոց ձիերը անմիջապէս պատրաստ ձիապանք կ՚առնուին իրենց սահմանեալ ախոռները կը տանէին, լռիկ սպասաւորներ հիւրերուն կ՚առաջնորդէին դահլիճը՝ ուր երկու երկու՝ երեք երեք՝ չորս չորս խմբիկներու բաժնուած հրաւիրեալք կամաց

ձայնով կը խօսէին. քանի մը կանթեղ աղօտ լոյս կը ձգէին ժողովականաց վրայ։

Յովնան հեռազօտ աչք մը ձգելով տեսաւ որ բոլոր երիտասարդ իշխանազունք էին անդ, իրեն տարեկից քառասունն անցած մարդ չէր գտներ և ոչ մէկ հատ. կը փնտռէր և չէր տեսնէր զԱշոտ, և ինքնիրեն՝ «Լա՛ւ, տիրաբար թող վարուի, հո՛գ չէ, միայն թէ գիտնայ կառավարել» կ'ըսէր, և առանձին անկիւն մը քաշուած կը ծածկուէր։

Իսկ Գուրգէն նոյն միջոցին արդէն յայտնի ամենուն ոչ անուամբ այլ իւր հսկայ հասակաւ, համարձակ կերպիւ կը մտնէր իւրաքանչիւր խումբի, իւր մեծ աչքերուն հայուացքը ձգելէն վերջ կ'անցնէր ամենուն քովէն՝ սրահին մէջ կեցած զՅովնան կը փնտռէր, երբ դռան երկու փեղկերը միանգամայն բացուեցան և Աշոտ Բագրատունի երեցաւ իւր եղբօր Շապհոյ և քանի մը Բագրատունի իշխանաց հետ մէկտեղ։ Ամենքը ոտք ելան. իսկ նա քաղցր և ծանր քաղաքավարութեամբ, ձեռքը սրտին վրայ դնելով զամենքը ողջունեց, անցաւ նստաւ և ձեռքով զամենքը հրաւիրեց նստելու։ Նոյն միջոցին տեսնելով զԳուրգէն որ չէր ճանչեր, այլ երեւակայեց, ելաւ տեղայ «Գուրգէ՞ն իշխան» ձայնեց իւր խոշոր ու փայլուն ձայնով. իսկ նա՝

«Աւասիկ եմ, իշխան քաջ, միայն թէ ընկերս կը փնտռեմ» պատասխանեց և տեսնելով զՅովնան քաշուած մէկ կողմ, մօտեցաւ բռնեց ձեռքէն՝ բերաւ և իւր և Աշոտոյ մէջ նստեցուց։

Գուրգէնի այս ըրածը ամենուն և Աշոտոյ անգամ զարմանք պատճառեց. միայն ինք Գուրգէն էր որ անխռով աչք պտտցնելով կ'իմացնէր թէ իր տուած պատիւը այդ լեռնականին՝ այդ շինականին՝ արժանաւոր հարկ մի էր։

Երբ հետաքրքրութեամբ ամենը խոր լռութեան մտան, այսպէս խօսեցաւ Աշոտ Բագրատունի։

«Ո՜վ ազնիւ և պատուական բարեկամք իմ և իշխանազունք, հայրենիք և կրօնք կարելի է այնպիսի ծանր և վտանգաւոր վիճակի մէջ չէին գտնուած ինչպէս այսօր. Վարդանանց ժամանակի վտանգը հիմկուանին հետ բաղդատելով շատ ոչինչ է. Թէպէտ ան ատեն Պարսից մեծազօր արքայից արքայն էր, բայց Հայաստան իւր մտնիչներէն զատ օտարազգի չունէր իր ծոցը, իսկ այս օր Բաղդատու Արաբացւոց Ամիրապետը իւր իշխանութեան հզօր թեւերը կը տարածէ ո՛չ Ասիոյ վրայ միայն, այլ և բոլոր Ափրիկոյ և մինչև Եւրոպա կը դողացնէ, և օտար թշնամին մեր Հայաստան երկրին մէջտեղ իրեն բոյներ կը շինէ. Դուին՝ Նախջեւան՝ Բաղէշ՝

Տփխիս և Գանձակ Տաճկաբնակ քաղաքներ են դարձած, ոչ մեր հնաղանդութիւնը՝ ոչ մեր հաւատարմութիւնը՝ ոչ մեր վճարած հարկաց ծանրութիւնը, մեր կրօնից՝ մեր կենաց՝ մեր ստացուածոց՝ մեր ազգութեան ապահովութիւն չ'ունին. այս տիրապետող տէրութեան ձեռքէն՝ որ կը խոստանայ՝ խաբելու համար, կ'երդնու՝ ստելու համար, ապահովութեան ձեռագիր կու տայ կողոպտելու՝ դերելու՝ քանդելու՝ այրելու և հիմնայատակ ընելու համար. քաղաքներն աւերակ, գեղերն անշէն, դաշտերն անապատ, ժողովուրդ տարագիր և փախստական լեռներու՝ ժայռերու՝ ծործորներու դատապարտուած — այս է մեր Հայաստանի վիճակը: Երբ այս վիճակին վրայ մեր հայրերը՝ մեր մեծերը՝ մեր իշխանները կը մտածեն և ճար ու հնար չ'են գտներ՝ մեզ բնական է յուսահատիլ. բայց յուսահատութիւնը՝ լքումը վերջապէս ոչ մարդու վայել է ոչ Քրիստոնէի. եթէ մենք խելքով՝ խոհեմութեամբ և քաջութեամբ վարուինք ես այնպէս կը հաւատամ որ Աստուած մեզ կ'օգնէ, և Քրիստոսի զօրութիւնը մեծ է՝ կրնայ այս դառն վիճակէն մեզ ազատել: Աստուածաշունչ գիրք և մեր Հայոց պատմութիւն և մեր օրերու պատմութիւն նաև մեզի ցոյց կու տան, որ մեր սոյն թշնամեաց դէմ նոյն իսկ մեր հայրերը

քաջութեամբ պատերազմեր են. Դաւիթ Սահառունի, Աշոտ Մսակեր իմ պապս, և դեռ շատ սոցա նմաններ ահագին հարուածներ տուեր են այս Արաբացւոց, և դեռ երեկ մեր քաջ Սամնեցիք Ոստիկան մը իւր բոլոր բանակով բնաջինջ ըրին: Ուրեմն ի՛նչ որ պէտք է ընել, ի՛նչ որ կարելի է ընել մտածենք և եթէ ընելիք բան մը կայ ջանանք 'ի գործ դնել: Խնդրեմ, հոս ազատ համարձակ խօսինք, ես զձեզ ամէնքդ կը ճանչեմ և գիտեմ և ամեն վստահութիւն ունիմ ձեր վրայ և ամենուդ երաշխաւոր եմ որ մեր գաղտնիքը գաղտնիք կը մնայ, և գործելու համար միայն կը յայտնուի:»

Երբ նա վերջացուց իր խօսքը, քրթմնջիւն մը ելաւ բոլոր սրահին մէջ, ամեն ոք իւր ընկերին հետ կը խօսէր, բայց բարձրաձայն խօսող՝ կարծիք յայտնելու համարձակող ոչ ոք չ'էր երևէր:

Ցոփեան և Գուրգէն լուռ կը կենային և բերան չ'էին բանար: Իսկ Աշոտ տեսնելով վիճակը՝ դարձաւ յանկարծ այս երկուքին «դուք, ըսաւ, ամենևին բան՝ առաջարկութիւն չ'ունի՞ք ընելու:»

— Իմ առաջարկութիւնս երկու օր առաջ լսեցիք այդ մեծ ժողովքին մէջ. ես կը յուսայի որ Եկեղեցական իշխանութիւն գլուխ կանգնելով ազգին կրնար հրաշքներ գործել. նա չ'ու-

զէր շարժիլ. դուք էլ կարելի է իրաւունք ունիք այս իշխանազուն երիտասարդութեան վրայ յոյս դնելու և փրկութեան նշոյլ մը փնտռելու։ Ես այստեղ այս ժողովքիս մէջ, անյարմար անձ մը կը գտնեմ ինքզինքս, ո՛չ իշխանազն եմ և ոչ երիտասարդ. լռութիւնը իմ բաժինս ուրեմն պէտք է լինի։

— Յովհա՛ն եղբայր, երկու օր առաջ այն ժողովքին մէջ ուր ատենաբանեցիք, կարծեմ թէ նոյնպէս իշխանազն չէիք, և ժողովքը կաթողիկոսի ու մեծ նախարարաց ժողովք էր։

Առանց այս խօսքերուն հեգնական մասին ուշադրութիւն ընելու, միամիտ հանդարտութեամբ պատասխանեց Յովհան.

— Կարելի է ես խաբուեցայ և համարձակեցայ խօսելու սոսկական ռամիկ մը, վասն զի ալեզարդ կաթողիկոս մը հոն նախագահ կը տեսնէի ժողովքին, և այդ կրօնական գլուխը կարծէի թէ ինձի պէս կը հասկնար լուսաւորչայ ժողովուրդը՝ ինչպէս առաքեալը կը կարծէ՝ որուն առջև «ոչ ազատ կայ և ոչ ծառայ՝ այլ ամենայն ոք մի 'ի Քրիստոս Յիսուս» Եւ ես այդ հաւասարութիւնը ոչ իշխանութեան և ոչ մեծութեան առջև կը փափաքէի, այլ ահա որ վտանգին ուր կը գտնուի այս խեղճ հայրենիք։

— Վտանգը դարձեալ նոյն է. եթէ ոմանք

ծերութեամբ, ոմանք անձնական շահերով, ոմանք քէնով կը մոռնան հայրենեաց վիճակը հաւասարապէս յանցաւոր են։

Այս խօսքերուն վրայ Գուրգէն թէպէտ կամաց՝ բայց 'ի բնէ որոտաձայն պատասխանեց.

— Իշխան քաջ, դուք երբ այս ժողովքը հրաւիրեցիք՝ անշուշտ այս վիճակին դարման մը ունէիք ձեր մտաց մէջ, անշուշտ առաջարկութիւն մը պատրաստած էիք, ինչո՞ւ ժամավաճառ լինինք, խօսեցէ՛ք համարձակ։

Գուրգէնի հեզիկ ձայնը՝ որ առիւծի լռիկ մռնչիւնի կը նմանէր, բոլոր դահլճին ուշադրութիւնը դէպ՝ այն կողմը դարձուց ուր մեր, այս խօսակցաց հետ քանի մը անձինք նաև ունկնդիր էին, շրջանակը մեծցաւ, և այս խօսքերուն վրայ Աշոտ խորագէտ, ինչ որ կ՚ուզէր որ ուրիշները զրուցեն, ինք պարտաւորեցաւ զրուցելու։

— Այսպիսի վիճակի մը մէջ, Գուրգէն իշխան, ըսաւ նա, իբրև թէ միայն Գուրգէն կը տեսնէր, ազգի մը պարտաւորութիւն ինքզինք զօրացնելն է, և այս զօրութեան համար միութիւն մը կազմել պէտք է անքակտելի. մեր բոլոր թշուառութեանց աղբիւրը զօրաւոր կամք մը չ՚ունենալնէս կը ծնանի. Արաբացին զօրաւոր է վասն զի Ամիրապետ մը ունի որուն ամենքը

կը հնազանդին, Ցոյնը զօրաւոր է որովհետեւ կայսր մը ունի որուն ամէնքը կը հնազանդին, և այն ամէն ազգք և ազինք որ իշխանութիւն մը չ'ունին ամուր և զօրաւոր՝ այս երկուքին գերի են և ծառայ։ Ուրեմն խնդիրն հոն է իմ կարծիքովս որ մենք ալ պէտք է իշխանութիւն մը հաստատենք և այդ իշխանութեան պէտք է յարուինք ամէն սրտով, - պէտք է յանձն առնունք հնազանդիլ այդ իշխանութեան հրամանաց։ Հարկ չէ իշխանութիւնը մէկ անձի միայն յանձնել, կրնայ երկու երեք անձի ալ յանձնուիլ, միայն թէ այդ իշխանութիւնը գիտնայ կառավարել և ամենայն ոք գիտնայ նոյնպէս հնազանդիլ և ուրիշները հնազանդեցնել։ Պէտք է համոզուինք որ Հայաստան ուտող՝ սպառող ցեցը անիշխանութիւնն է, միմիայն պատճառ իւր կործանման, աւերակաց և գերութեան։

Երբ ինք լռեց՝ քանի մը երիտասարդք մօտենալով ըսին.

— Աշոտ իշխան, մենք զքեզ արժանաւոր կը տեսնենք այդ իշխանութեան, դու յանձն առ և գործէ և մենք պատրաստ ենք քեզ հնազանդելու և օգնելու։ — Նոյնը կրկնեցին մեծ մասը ժողովականաց. երբ Աշոտ լուռ կեցած կը մտածէր, և երբ ամէնքը նոյնը կը կրկնէին և կը բռնադատէին պատասխանել, նա վերջապէս

համեստ ծանրութեամբ սկսաւ այդ իշխանութեան դժուարութիւնքը ցոյց տալ, իւր երիտասարդութիւնն առջև դնել, և խնդրեց որ «միթէ՞ կարելի չէ՞ր այսպիսի իշխանութիւն մը իւր հօր Սպարապետին յանձնել, որուն քաջութիւնը՝ խոհեմութիւնը՝ փորձառութիւնը յայտնի էին բոլոր Հայաստանի։»

— Կեցցէ՜ Սմբատ Սպարապետ, ըսաւ, գրեթէ միաբերան բոլոր ժողովքը, յիրաւի նա է միայն արժանաւոր՝ նա կրնայ փրկութեան հասնել Հայաստան։

Եւ երբ ձայները հանդարտեցան, Աշոտ խոստացաւ հօրը իմացնել այդ ժողովքին որոշմունքը և խնդրեց որ երբ իւրաքանչիւրին իմաց տրուի՝ սահմանեալ տեղին ամէնքը գտնուին։

Արդէն արշալոյսն հասած էր, ժողովքը սկսաւ ցրուիլ, ամէն մարդ իւր տեղը կ'երթար։ Երբ դռնէն դուրս ելան, Գուրգէն Ցովեանի երեսը նայելով, «Եղբա՛յր, դու ի՞նչ կըսես այս եղածին, ես Սպարապետը ոչ տեսած եմ և ոչ կը ճանչեմ, կրնա՞յ ազգը փրկել։

— Ազգը փրկելու կարողութիւն մարդ մը միայն ունէր, իմ կարծիքովս, Հայոց կաթողիկոսը. բայց նա ոչ կամեցաւ. դատաստանը Աստուած ինք տեսնէ։

— Բայց Սմբատ կրնա՞յ բան մ'ընել։

— Ո՜ գիտէ, տեսնենք, ես բանի մը յոյս չ՚ունիմ, կ՚երթամ մեր լեռները ինչ որ կրնամ կը ջանամ ընելու. իմ պարտքս մահուընէ չի վախել և չի փախչիլ է, այդ Աստուծոյ շնորհ-քովը կրնամ կատարել: Մնաս բարով, Գուրգէն իշխան, եթէ Աստուած ուզէ դարձեալ կը տես-նուինք:»

Յովհան Երուանդակերտի ճամբան բռնեց, իսկ իշխանը կ՚ուղղուէր դէպ-՚ի Բլուր, և չ՚էր կըր-նար չի դարձնել գլուխը երբեմն այդ լեռնցի մարդուն ետևէն որ առանց ետին նայելու կ՚եր-թար անսասան ուր որ պարտքը զինքը կը տա-նէր. վասն զի ինք միակ մարդն էր նոյն օրը բոլոր Հայաստանի մէջ որ գիտէր թէ ի՛նչ պի-տի ընէր:

ԳԼՈՒԽ ԺԱ.

ԽՈՒԹԵՑԻ ԶՕՐԱՎԱՐԸ ԵՒ ՀԱՅՈՑ ՍՊԱՐԱՊԵՏԸ.

Ապրիլի ամիսն եկաւ, բայց ո՞վ իմացաւ գա-րունը այդ սոսկալի տարին, ո՞վ տեսաւ գար-նանաբեր թռչունը. գուժաբերք Բաղէշու կող-մէն իրարու վրայ կը հասնէին և լուր կը բե-րէին ՚ի Սասուն թէ Արաբացի ահագին բանա-կը ուղղակի կուգար նախ Խութեցիք բնաջինջ

ընելու՝ Ապուսէթի որդւոյն վրէժն հանելու համար: Եւ իրօք չափազանցութիւն չէ կար այդ պատմութեան մէջ, վասն զի Ամիրապետը բոլոր Մահմետական զօրութիւնը ոտք հաներ էր հա-րուածելու՝ պատժելու և բնաջինջ ընելու համար Հայաստան: Ասորիք, Բաբելացիք, Թուրքաստան, Խուժաստան, Մարք, Իսլամոյք, Եգիպտացիք և Տաճկաստանի խորերը մինչև Սակաստան իրենց զօրաց ընտիրները ղրկեր էին Հայոց եր-կիրը անապատացնելու համար: Ամիրապետը բոլոր զօրաց առջև իւր Բուղայ Սպարապետին խստիւ հրաման էր տուած սովով և սրով և գերութեամբ ելնել Հայոց աշխարհին վրայ՝ ա-զատքը և ազատորդիքը իրեն ղրկել, գեղեցիկ-ներն ուրացնել, ռամիկն ՚ի չիք դարձնել և եր-կիրը ժառանգել». այսպիսի հրամաններով կու-գային Հայաստան այդ խուժադուժ ժողովրդոց արիւնախանձ ամբոխը:

Իսկ Սասուն ի՞նչ կ՚ընէր այն միջոցին:

Սասուն միայն՝ անխռով մարդու մը վրայ աչքերը յառեալ կ՚սպասէր թէ նա ի՞նչ պիտի հրամայէր. և այդ մարդը գիտենք թէ Յովհանն էր, որ բոլոր կիրճերը ամրացնել տուեր էր, պահապաններ բաժներ լեռներուն անառիկ կող-մերը, կանայք աղջիկք և ծերերը ապահովել էր իրենց բոլոր աղքատին սատցուածով և պաշա-

րով, և ինք քանի մը հազար հոգւոյ ընտիր խումբով Խութի ստորոտը բանակեալ՝ դարանամուտ կ՚սպասէր անսասան որ թշնամին գայ։ Եւ թշնամին կուգար բազմութեամբ երեք առաջ բաժնած իւր բանակը, իբրև թէ Խութայ լեռներն անհետացնելու՝ և շնչաւոր կենդանի մարդ չէր թողլու համար հոն։

Երբ իմացաւ Յովհան թէ թշնամեաց մէջ առաջ մը մտաւ Բռնաշէն գաւառ, առաւ իր ընտիրները, և զանխուլ ճամբաներէ հասաւ մութուն նոյս դիմաց. այդ խիտ առ խիտ լեռները ծածկուած կաղնի ծառերով, այդ անդնդախոր ձորերը որոնց ամեն մէկ խորշը իւր լեռնականք լաւ կը ճանչէին՝ իրեն մեծ վստահութիւն էին։ Ուստի քիչ մը դադար և հաց ուտելու ժամանակ տալէն վերջ իր գունդին՝ բաժնեց զանոնք երեք խումբի, և երբ թշնամին ամենևին անկասկած և ապահով քունի էր թաղուած երեք խումբը երեք զանազան կողմէ ահագին աղաղակաւ, սուրերը՝ վահանները շկահնելով յարձակեցան թշնամւոյն վրայ և սկսան կոտորել անխնայ։

Յովհան իւր Խութեցւոց նշան պատուիրած էր իւրաքանչիւր հարուածի Սուրբ Առաքեալ գոչել 'ի յիշատակ Սրբոյն Թադէոսի. մէկ ձայնի՝ հազար և բիւր ձայն արձագանք կ՚ուտային այդ

լեռներուն մէջ Ս. Առաքելոյ բառերուն. թշնամին որ փախչիլ կ՚ուզէր ճամբայ չ՚էր գտներ, այդ սոսկալի բաւիղին մէջ և մութուն սուրի փայլիւն և նիզակի հարուած կը գտնէր. վիրաւորեալներուն ձայնը՝ փախչողներուն աղաղակը՝ Ս. Առաքելներու գոռումն ու գոչումը անիմանալի վիճակ մը զգալ կուտային նաև Յովհանու։ Ուստի երբ գործողութիւնն լմնցաւ, օտար և խուժական ձայները դադրեցան և միայն Հայ Խութեցի լեզուն մնաց, փառք տուաւ Յովհան Աստուծոյ և օրհնութեան սաղմոսներ սկսան երգել միաբերան բոլոր լեռնականք և երբ արշալոյսը ծագեցաւ և տեսան թշնամւոյն դիակներով ծածկուած գետինը, երբ տեսան թէ գահավէժ ժայռերէն վար գլորածներուն թիւը աւելի շատ էր քան սուրէն ինկածները, երբ բաղդատեցին իրենց եղբարց կորստեան ոչնչութիւնը և թշնամւոյն թողած աւարին հարըստութիւնը և ճանչցան թէ այս ամենքը իրենց զօրավարին հնարիմացութեան արդիւնքն էր, իրենց համարմունքը Յովհանի վրայ բազմապատկեցաւ, և չ՚էին գիտէր թէ ի՞նչպէս յայտնէին իրենց երախտագիտութիւնը։ Մտածեցին իրենց մէջ գաղտնի որ կողոպուտին մէջ գտնուած արծաթն ու ոսկին բոլոր իրեն ընծայեն. վերակու մի Յովհանի առջև տարածած ամեն ոք

գտած դրամ՝ մենակ՝ ապարանջան կը բերէին մէջ կը ձգէին. իսկ նա երկար ժամանակ առանց ուշադրութեան կը նայէր եղածը, և երբ իմացաւ իրենց դիտաւորութիւնքը՝ հրաւիրեց զամենքը և սկսաւ այսպէս խօսիլ.

«Ո՜ իմ սիրելի եղբարք, իմ սիրելի Խութեցիքս, միթէ՞ այս չնչին ոսկին և արծաթը ձեր սիրոյն նշա՞նն է ինձ, միթէ՞ ես առանց այս նուէրին չե՞մ ճանչեր ձեզ: Ձեր քաջութիւնը, ձեր ցոյց տուած հնազանդութիւնը այս պատերազմին մէջ ձեր գլուխ ընտրած եղբօր՝ ինձ ամեն վարձքէ վեր է, գնացէ՛ք, բաժնեցէք ամեն աւարը, միայն ի՛նչ որ պաշար գտնէք բանակին մէջ պահեցէք զգուշութեամբ որ յանձնէք ամբարապետին: Լաւ համոզուեցէք որ մեր առջև դեռ խիստ աշխատութիւն կայ, վասն զի Թըշնամւոյն բանակը շատ մեծ է և բազմաթիւ պէտք չէ յուսահատիլ և վախել՝ այլ դիմանալ քաջ լինիլ և յարատևել: Իսկ զիս թող տուէք, ես գոհ եմ իմ վիճակէս, իմ ունեցածս շատ է ինձ համար, վասն զի ինձ պատառ մը հաց՝ իմ դրգլեակս և իմ զէնքերս բաւական են: Գնացէ՛ք, որդեակք իմ, գնացէ՛ք, եղբարք իմ, ջանացէք որ ձեր սակաւապետութենէն չի բաժնուիք:»

Երբ իմացաւ Բուղա իր կորուստը, հաղե-

թէ Հայաստան ոտք կոխած այդպիսի անակնունելի հարուած մը, նա որ կարծէր թէ առանց դիմադրութեան երկիրն պիտի ոչնչացնէր, ապշեցաւ, բայց խոտիւ արգիլեց այդ նիւթին վրայ ամենևին խօսիլ, որպէս զի մի՛ գուցէ Հայք քաջալերուին և իր Տաճիկք լքանին, և ամեն իր զօրութեամբ և ամեն կողմերէն յարձակեցաւ Սասնոյ վրայ. ամեն հաղորդակցութիւն կտրեց պաշարելով բոլոր ճանապարհները: Իսկ Յովնան իր քաջ խումբով կը գտնէր ճամբայ՝ երբ չէ կար կը հնարէր, յանկարծուստ կը հասնէր այդ բազմագլի և բազմալեզու ամբոխին ցան ու ցիր խումբերուն վրայ, կոտորած կը հասցնէր նոցա, և երբ կը տեսնէր թէ օգնութիւն կը հասնի թշնամւոյն՝ կը քաշուէր կ'ելնէր իւր բարձանց վրայ, հոն իբրև ամպ մը կը ժողվուէր՝ կը թանձրանար՝ գալարեալ յանկարծ որոտմունքով իջնելու փայլակ՝ կայծակ՝ կարկուտ լինելու այդ բարբարոս թշնամեաց խումբին վրայ: Երկու կողմէն ալ շնորհք գթութիւն չի կար այդ պատերազմին մէջ, գերին իբրև վրէժխնդրութեան գործիք կը պահէին փոխխակի զոհելու համար: Արաբը Սասունցի մը կը բերէր տանջանօք կը սպաննէր իւր լեռնականաց առջև, շուտ մը Սասունցին տասն անգամ վրէժ կը հատուցանէր, և տասն Արաբացի գլուխ

Բուղայի բանակին մէջ կը նետուէր փոխարէն։

Զօրքը կը քրթմնչէին, վասն զի ի՛նչ օգուտ կար այդպիսի աղքատ լեռնականաց հետ պատերազմելէն, որ եթէ բոլոր լերան էլ տիրէին՝ ոչինչ շահ չ՚ունէին այդ ժայռերէն։ Պէտք էր ուրեմն որ Բուղա փոխէր զէնքը, գործածէր այն որ շատ անգամ յաջողէր էր Արաբաց ընդդէմ Հայոց, պատգամաւոր մը կը հանէր առ Յովհան՝ քաջ զօրավար Խութեցւոց որ գայ ՚ի հնազանդութիւն օրինաւոր իշխանութեան մեծ թագաւորին, իր հաւատքին սրբութեան վրայ երդմունքով կը հաստատէր թէ վնաս ամենևին պիտի չի տեսնէր ոչ ինք և ոչ իւր լեռնականք, և թէ իրենց կրօնական ազատութեան ոչ ոք պիտի վնասէր՝ միայն թէ յանձն առնուին ապստամբութեան զէնքը թողուլ։

Երբ պատգամաւորը բերին և աչքերուն կապը վար առին, և նա տեսաւ սովորական մարդ մը՝ հագուած Խութեցի ստէ կապան, ժայռի մը վրայ նստած անշուք, նիզակը և վահանը ոտքին քով դրած՝ չ՚էր կրնար հաւտալ թէ Յովհան էր այդ մարդը, վասն զի իւր անունը Բաղդատ մինչև Ամիրապետին ականջը հասած էր, և հիմա Բոնաշէնի կատարածէն վերջ բոլոր Տաճկաց բանակը գիտէր և կը ճանչէր Յովհանի անունը։ Իսկ Խութեցի զօրավարը և ոչ գլուխ

վերուց պատգամաւորին՝ երբ նա իւր բոլոր ճարտարախօսութիւնն ՚ի գործ ածեց, այլ մինչև վերջը մտիկ ընելով՝ երբ վերջացուց խօսքը, գլուխը վեր առաւ և երկու կրակէ աչքեր պատգամաւորին վրայ բանալով, որ գնա քանի մը քայլ ընկրկեցին, «Գնա՛, զրուցէ քու զօրավարիդ թէ Խութեցիք թէպէտ միամիտ լեռնականք են, բայց Տաճկաց խաբէութեանց և ստերդումնութեանց հաւտալու չափ յիմար չ՚են։ Թէ բոլոր Բագարատ և բոլոր Հայ նախարարք և իշխանք մեր պարզամիտ խորհրդոց մտիկ ըրած լինէին և փոխանակ ձեր ստութեանց լսելու զէնքով պատերազմէին քաջութեամբ, ոչ անարգ կապանաց՝ ոչ տանջանաց՝ ոչ ուրացութեան չ՚էին մատնուեր, և Հայաստան երկիր այդ ձեր անզգամ խուժանին ոտնակոխ չ՚էր լինէր, և այդ ողորմելի աւերակաց կերպարանքը չ՚էր ունենար։ Դժբաղդութիւն մ՚է որ մեր իշխանք յիմարաբար ձեր գիրկը դիմեն կուրօրէն՝ երբ նոցա ուսը կը շոյէք կեղծաւորաբար, բայց հօս այս լեռներուն մէջ պէտք է լաւ գիտնայ Բուղա որ ոչ իշխան կայ ոչ նախարար՝ ոչ ազնուական՝ ոչ ազատ, բայց և ոչ մի ծառայ և մի գերի. ուստի խաբուելու մարդ ամենևին չի կայ և մեռնելու պատրաստ ամեն ոք։ Մենք այն ատեն միայն զէնքերը կը թողունք երբ տեսնենք մեր

երկիրն ազատ ձեր սիրելի ներկայութենէն. իսկ ձեր խոստումները Կաշմերու՝ Սրբլաններու խոստմունք են որոց չ՚ենք կրնար հաւատ ընծայել։ Միայն մէկ սխալ ըրեր են մեր տղայք որ քու աչքերդ կապեր և այնպէս բերեր են իմ քովս. ո՛չ այդպէս, ես քեզի ցոյց տամ թէ ի՛նչպէս կրնայք ելնել մեր լեռները և մեզի հասնիլ, որպէս զի գիտնաս Բուղայի քաջութիւնը և Ամիրապետին վրէժխնդրութիւնը»

Եւ այս խօսքերը զրուցելով ելաւ և տարաւ պատգամաւորը աչքերը բաց հանեց սարին 'ի վեր այնպիսի ահաւոր բարձրութիւն մը ուսկից կ՚երևար պատսպարանը կանանց և տղայոց անե-լանելի բարձրութեան մէջ, կը տանէր՝ ցոյց կուտար իրեն ժայռերու ահագին բեկորներ բարձրաւանդակներու վրայ դիզուած՝ ուսկից տղու մը ձեռք կրնար գլորութեամբ վեր ել-նող զօրաց բազմութիւն ոչնչացնել, վերջապէս կը ցնէր այն ամեն ամրութիւնքը որ ամիսնե-րով Սասնոյ ժողովուրդը պատրաստել էր իւր անառիկ լեռները անմատոյց ընելու համար թշնամեաց, և երբ այս ամեն բան ցցուց Յով-նան պատգամաւորին, «Հիմա գնա՛, մեզմէ բարև զրուցէ՛ տիրոջդ» ըսաւ և ճամբեց։

Երբ պատգամաւորը պատմեց Բուղայի թէ ի՛նչ ընդունելութիւն գտաւ Յովհանէ, դիմակը

վար առաւ և ակռաները կրճտելով կատաղու-թեամբ հրամայեց անզգամութիւնն աւելցնել և խեղճ ու թշուառ բնակիչք որ միամտաբար իրենց հնազանդութեան վրայ վստահացեալ մնացեր էին սրոյ ճարակ՝ կամ գերութեան շղթայներու մատնուեցան կամ ուրացութեամբ իրենց կեանքը և ազատութիւնը գնեցին։

Ծանր էր Յովհաննու առաքինի և հայրենասէր սրտին այս սոսկալի անգթութիւնքը տեսնել անկարեկիր և համբերել։ Փախստականներ ամեն օր կուգային մանրամասն տեղեկութիւններ կու-տային, և նա կեցած ժայռերու գլուխը արծուի աչերով կը դիտէր թշնամւոյն շարժմունքը և երբ տեսաւ առաւօտ մը որ ահագին բանակը կը դղրդէր՝ կը թողուր Սասնոյ շրջակայքը՝ կը պարպէր Տարօնոյ դաշտը և կ՚ուղղուէր Ապա-հունեաց գաւառը. ձայն տուաւ իւր քաջերուն՝ իջաւ յարձակեցաւ վերջապահ բանակին վրայ՝ կը կոտրէր՝ կը ջարդէր ինչ որ ցան ու ցիր կը գտնէր դաշտին երեսը, և երբ թշնամին իւր վրայ դարձնէր զօրութիւնը՝ դարձեալ կ՚ամրա-նար իւր լեռները։

Տեսնելով Բուղա որ խաղալիք եղած էր այս վայրենի լեռնցւոյն, ինչ որ ամրութիւն՝ բերդ և վանք կար այդ շրջանին մէջ ամրացուց ա-մենքը և բազմաթիւ զօրքերով ցուց որպէս զի

Յովնանու ոտքը կապէ: Եւ այսու թէպէտ Յովնան իւր առջի ազատութիւնը կորոյս, այլ ոչ երբէք դադարեցաւ և օր չ՚էր անցնէր որ յանկարծ չի լսուէր թէ Յովնան որ Տարօն կը կարծուէր փոքրիկ խումբով մը Բաղէշի քովերը տեսնուած էր և Արաբացի ասպատակներ ջարդած, և երբ Բաղէշի վրայ զօրք կը շարժէր զինք բռնելու, կը լսուէր թէ ինք Ռշտունեաց գաւառը մտեր՝ թշնամեաց խումբեր բնաջինջ կ՚ընէր և Հայ գերիները կ՚ազատէր: Զարմանալի էր իւր շարժմունքներուն արագութիւնը և իւր յանդգնութիւնը. քանի երսուն հոգւոյ փոքրիկ գնդով մը կը յարձակէր հարիւրաւոր մարդկանց վրայ, և այն աստիճանի հասած էր իւր անուան ահը, որ միայն երբ զրուցուէր թէ Յովնան կամ Սասնցիք եկան, Արաբը խոհեմութիւն կը համարէր հեռանալ:

Իւր բոլոր արշաւանաց մէջ Յովնան կը յիշէր երբեմն այն Բագարանի ժողովը և կը սպասէր թէ ի՞նչ պիտի ընէր Սմբատ Սպարապետ, թէ ե՞րբ կենաց նշան պիտի երևէր Հայ իշխանաց շարժմունքով. ուստի թէպէտ շատ քիչ վստահութիւն ունեցեր էր, այլ դարձեալ շատ հետաքրքիր էր իմանալու ամեն բան, և գերիներէ՝ փախստականներէ կը տեղեկանար թէ Աշոտ և Սմբատ ամենևին շարժմունք մը չ՚էին

ըներ, միայն թէ հայրը Մոկաց գաւառը կը նստէր անշարժ, իսկ որդին Արարատայ և Վանանդայ կողմերը կը շրջագայէր. ոմանք կ՚ըսէին թէ զօրք կը ժողվէր, ուրիշները կ՚ըսէին թէ զամենքը խաղաղութեան և հնազանդութեան կը յորդորէր, այսպիսի հակասական լուրերէ որոշ բան իմանալ անկարելի էր, ուստի Աստուծոյ յանձնելով ամեն ինչ՝ դարձաւ տեսնելու իւր Սասնոյ լեռները, և կարգի կանոնի մէջ գտնելով, հանգիստ սրտով առաւ դարձեալ ընտիր և փոքրիկ խումբ մը իր լեռնցիներէն, ելաւ ճամբայ երթալու դարձեալ Վասպուրական, գտնելու Աշոտ Տէրն Արծրունեաց, վասնզի կը լսէր թէ նա կը պատրաստուի իւր բոլոր զօրութեամբ մաքառելու ընդդէմ թշնամեաց, ուստի իւր սովորական արագութեամբ հասաւ Բզնունեաց երկիրը և քամնելով տեսաւ երկրին աւերմունքը, նորաշէն մեծ աւանը բոլորովին քար ու քանդ եղած, Հայ մարդ չ՚էր մնացեր և աւերակաց մէջ յետամնաց Արաբացի գունդեր մողէսի պէս աւերակներէն դուրս երբեմն կ՚երևային, զանոնք ջարդել՝ անհետացնել դիւրին գործ մը եղաւ Սասնցի գունդին, բայց ո՞ւմ համար էր այդ աշխատանքը, շէն աւանը բնակիչ մը չ՚էր մնացեր, կաթընկեր տղայոց անգամ չ՚էր խնայել Արաբացի սուրը, և Բուղայի

երկրորդը՝ ծիրակ զօրավարը հասեր Ռշտունեաց Ոստանը Հայ գերեաց բազմութիւն չուան 'ի վիզ քշելով առջևէն՝ իբրև անասնոց նախիր՝ և աճուրդով ծախելու կը հանէր:

Նորաշէնի աւերակաց վրայ նստեր էր Յովնան գիշերելու իր խմբովը, երբ գիշերապահ տղայքը եկան իմացնելու իրեն թէ ձիաւորաց մեծ գունդ մը կը դիմէր Նորաշէն՝ Հողցի կողմէն: Արդէն Յովնանու սովորութիւնն էր գիշերելու տեղը միշտ ամրացնել խառն 'ի խուռն պատնէշներով, ուստի խիստ լռութիւն հրամայեց իւրայնոց և բոլոր կրակները մարել և պատրաստ հսկել և ինք ընկեր մը միայն առած՝ գնաց աւանին մուտքը դիտելու և իմանալու թէ ո՞յք էին որ կուգային: Հոն կիսակործան աւերակաց մէջ սմքած երբ քանի մը խօսք լըսեց, յայտնի եղաւ իրեն թէ Հայ էր այրուձին և թէ Մոկացի էին զօրքն որ կուգային: Մութուն մէջ նաև դիւրին եղաւ նշմարել Սմբատ Սպարապետ որ շրջապատեալ 'ի թիկնապահաց կը յառաջանար: Առանց դանդաղելու վազեց ելաւ Յովնան կիսակործան պատին վրայ, և մեծ ձայնով՝ որ ձիերուն սալասմբակ շառաչմանը յաղթանակեց, գոչեց յանկարծ և ամէն արշաւանք կարկամեցաւ.

«Սմբատ Սպարապետ Հայոց. ո՞ւր այսպէս

կ'երթաս, սխալ է այդ քու ճամբան, թշնամեաց դիրկը դէպ կը տանի, ինչպէս տարաւ Բագարատ քու եղբայրդ: Ո՜վ նախարարք, ո՜վ ազատագունդք Հայոց, մինչև ե՞րբ այսպէս միամտութեան և վատութեան ձեր անձը՝ ձեր ազգը՝ ձեր երկիրը՝ ձեր հաւատը պիտի զոհէք, մինչև ե՞րբ այդ իմաստութիւն կարծուած յիմարութեան պիտի հետևիք: Ափսո՜ս, հազար ափսոս, դուք անձամբ կ'երթաք զձեզ մատնելու անօրինաց ձեռքը. եթէ միայն զձեզ մատնէիք, գիտէ՞ք ուր կը տանի զձեզ ձեր անձանց մատնութիւնը՝ կը տանի մինչև դաւաճանութեան ձեր ազգին, կ'ընէ զձեզ անարգ ստրուկ և գործակից Բուղայի, և ձեզի վարձք փոխարէն վաստակոց շղթայներ կ'սպասեն և բանտ, երբ մայրն Հայաստան բոլորովին ճնշեալ՝ վատթարացեալ և չքացեալ լայնատարած գերեզման մը պիտի կազմէ և ողբայ ոչ միայն իւր զաւկներու դիականց և շղթայներու վրայ, այլ նաև մանաւանդ այն զաւկներուն վրայ որ արբանեակ եղան իւր դահիճներուն և մատնիչ իրենց եղբարց:»

Այդ մեծ ձայնը գիշերուան լռութեան մէջ՝ այդ աւերակաց վրայէն սասանեցուց Սմբատ.

— Ո՞վ ես դու, մա՛րդ, ըսաւ, չարագուշակ մարգարէ, որ ամէն բարի փափաքները 'ի չար

փոխարկեալ կը տեսնես, ամեն քայլափոխ վատ կը մեկնես, իբրև թէ դու միայն քու ազգդ սիրէիր, և ամեն Հայ մատնիչ լինէր և դաւաճան իւր ազգին, միայն դու տեսար նորա թշուառութիւնը և ցաւեցար և Սմբատայ սրտէն արիւն չի՞ հոսիր միթէ՞ այդ սոսկալի պատուհասին որ մեր վրայ հասեալ է։

— Եթէ ճշմարտապէս ազգդ կը սիրես, մ՚երթար Խլաթ, մ՚երթա՛ր Բուղայի. հոն կայ մահ բունեալ ոչ քու անձիդ՝ ոչ քու տոհմիդ միայն այլ բոլոր Հայ ազգին, դարձու այս քաջերը, զինէ սոցա ձեռքը պատերազմի և ոչ շղթայից։ Վատութեան անունը խոհեմութեան հետ մի խառնէր, խոհեմութիւնը ուխտադրուժներէ՝ սուտերդումներէ հեռի կենալն է։ Մինչև ե՞րբ և քանի՞ անգամ պիտի փորձեն Հայք այդ թշնամին։

— Բայց ո՛վ և ի՛նչ մարդ որ լինիս այսպէս մութուն և խաւարի մէջ կարելի չ՚է խօսիլ և վիճաբանիլ. օթեւան մը մեզի գտնենք և հոն տեսնուինք։

— Ո՞ւր է ասկից վերջ Հայուն օթեւան և բնակարան, Սմբատ Սպարապետ, ես լոյս աչօք Նորաշէն աւանը փնտռեցի և աւերակներ գտայ, մարդ փնտռեցի և երկոտանի գազաններ գտայ. դու խաւարի մէջ ի՞նչ կը յուսաս գտնել։

— Իջնենք, աղա՛ք, ըսաւ Սպարապետը. ամենը իջան ձիերնէն, և ինք ուղղուելով Յովնանու կողմը, ե՞ս քեզի գամ թէ դու ինձ կուգաս հարցուց։

Իսկ Յովնան շուտ մը ցատկելով իւր բարձրաւանդակէն ճամբուն վրայ, և մօտենալով,

— Ես միշտ պատրաստ եմ գնալու և հնազանդելու նոցա որ Աստուած ազգին գլուխը դրեր է, միայն թէ սրբազան պարտք կայ իմ վզին որ զիրենք վտանգէ զգուշացնեմ, մանաւանդ երբ վտանգն ակներև և յայտնի է։

Իսկ Սմբատ երբ մերձեցաւ և նշմարեց ամառուան գեղեցիկ և աստղազարդ գիշերուան մը աղօտ լուսով Յովնանու աչքերուն փայլը, որուն արդէն ձայնը մտքին մէջ ծանօթ յիշատակ մը կ՚արթնցնէր, կանգ առաւ և ձեռքէն բռնելով,

— Ո՞ւր կրնամ քեզ հետ երկար և առանձին խօսիլ, Յովնան, ըսաւ։

— Ո՛ւր և երբ կամենաս ես միշտ պատրաստ եմ։

— Երթանք ուրեմն և տեղ մը ճարենք. դու անշուշտ տեղ մը գտար քեզի և քու մարդիկներուդ. յուսամ թէ միայն չ՚ես։

— Բոլոր աւանը աւերակ է դարձեր, իշխան. ես իմ ընկերներովս աւերակներու մէջ զետեղեցայ ինչպէս որ կրցայ. մենք մեր կորեկի հա-

ցով կը շատանանք, բայց դուք ի՞նչպէս կ՚ընէք. միատեղ պաշար ունի՞ք, ձիոց համար գարի ունի՞ք:

— Մենք ալ զինուոր ենք, Յովհան, ըսաւ Սմբատ հառաչելով, մեր ձիերն ալ կրնան երբեմն շատանալ խոտով. և շատ անգամ քսան չորս ժամ անօթի կռուած ունինք. իրաւ արժանի ենք նախատանաց վասն զի շատ յանցանքներ ունինք, բայց վատութեան նախատինքը Բագրատունի զօրավարի մը շփել, որու մազն ու մօրուքը զէնքերու տակ ճերմկեր է, ծանր է, և դու պէտք չէիր ընել:

— Ներէ իշխան մեծ, պատասխանեց Յովհան և նոյն միջոցին զգաց որ ծեր Սպարապետին ձեռքը կրքէն կը դողար՝ ինչպէս խօսելու ատեն ձայնը դողացեր էր. ես մտքէս անգամ չեմ կրնար անցնել այսպիսի նախատինք մը, և եթէ իմ խօսքերուս մէջ այնպիսի նշմար մը կար քու անձիդ վրայ ինձ դառնայ. քու կեանքդ պէտք է Հայաստանի, նորա պահպանութիւնը միայն ինձ չափազանցութեան տարած կրնայ լինիլ:

— Մոռնանք այդ դիպուածը, Յովհան, վասն զի ժամանակը կարճ է, և պէտք է ես քեզի հետ խօսիմ:

Վերջապէս յառաջ գնալով Հասան եկեղեցոյ

մը առջև. «Գոնէ հոս այս գիշեր սա Աստուծոյ տան մէջ կրնանք պատսպարիլ» ըսաւ իշխանը, նոյն միջոցին Թիկնապահները լապտեր մը բերին վառած և հազիւ թէ քանի մը քայլ առին՝ արանց, կանանց, տղայոց դիակներ տեսան որ գետինը դիզուած էին և թանձրացած արիւնը ոտքերնին կը սահեցնէր: Սոսկալով ետ քաշուեցան, Սմբատ հառաչանքով հրամայեց Թիկնապահաց ուրիշ տեղ մը ճարել և ինք Յովհանու միշտ ձեռքէն բռնած կը շրջագայէր, երբ Թիկնապահք եկան իմացուցին թէ պատրաստ տեղ մը յարմարցուցին: Այն ատեն քանի մը գորգ փռած սենեակ մը մտան, ուր Հայաստանի առաջին մեծ նախարարը և Սասունի լեռնականը դիմացէ դիմաց նստած ժամերով խօսեցան, և այդ խօսակցութեան վերջի արգասիքն այդ եղաւ որ Յովհան կատարեալ համոզուեցաւ թէ նախարարութիւնը՝ բազմագլխեան վիշապ՝ 'ի կորուստ պիտի տանէր Հայաստան, վասն զի այն նաև իմացաւ Սպարապետէն թէ Աշոտ Արծրունի որ պատերազմելու կը պատրաստուէր՝ կը վարանի, վասն զի իւր նախարարքն իրեն հետ միաբան չէին:

ԳԼՈՒԽ ԺԲ.

ԱՇՈՏ ԱՐԾՐՈՒՆԻ ԵՒ ԴԱՒԱՃԱՆՔ.

Առաւօտուն երկու խումբերն իրարու հակառակ ճամբով կը բաժնուէին. Սպարապետին ձիաւորաց շքեղ խումբը կ'երթար Խլաթ թշնամւոյն երկրպագելու, իսկ Յովնանու լեռնականաց հետեւակ և աղքատին խումբը կ'երթար Ռշտունեաց Ոստանը թշնամին փնտռելու և հարուածելու: Եւ թշնամին գտնելու համար ոչինչ դժուարութիւն չի կար, միայն պէտք էր աւերակաց և կոտորածոց հետեւիլ. այսպէս հասաւ Ոստանի վաճառատեղին որ դիակօք և գերեօք լեցուն էր, վասն զի անողորմ Արաբացիք մարդկանց գեղեցիկները և կորովիները միայն գերութեան արժանի կը համարէին, իսկ տգեղները և տկարները սրոյ կը մատնէին:

Այս դառն վիճակին մէջ, երբ խեղճ ժողովրդեան մնացորդը գազանաց ձեռքը մատնեալ յուսահատ կ'սպասէր մահուան, յանկարծ հրեշտակաց փրկիչ խումբ երեւցաւ Յովնան իւր Սասունցիներով: Դահիճները փախչելու ծակ կը փնտռէին, գերիները ազատութիւն կը գտնէին, և Յովնան վայրկենին՝ ինկած թշնամեաց զէն-

քերով կորիճները կը զինէր և իր գունդը այսպէս ստուարացեալ՝ չի համարձակելով դիմել ծիրակայ վրայ 'ի Վանդոսպ, կը յարձակէր Ածանայ ձորը ուր իմաց տուին իրեն թէ Արաբացի մեծ գունդ մը փախստականներու ետեւէն էր դիմեր: Հոն աչուըները վեր առաւ Յովնան և առաջին անգամ իւր սիրտը մեծ ուրախութեամբ լցուեցաւ տեսնելով որ Արաբացի խումբը կիրճի մը բերան կը կռուէր Հայկական խումբի մը հետ որ նիզակ՝ մանգաղ՝ պարսատիկ և աղեղն զէնք ըրած՝ քաջութեամբ կը դիմադրէր, և երբ Սասունցիք իրենց սոսկալի աղաղակը ձգեցին և Արաբացւոց ճամբան փակեցին, արեան գետեր սկսան վազել և հազիւ քանի մը հոգի կրցան փախչիլ երթալ Արտամետ իրենց զօրավարին իմացնել պատահարը:

Այն ատեն ծիրակ առած զօրքերը ամենայն արագութեամբ Յովնան փնտռելու ելան: Իսկ սա հազիւ թէ մտաւ Ոստան՝ իմացուցին իրեն թէ Արաբը հասաւ: Նահանջի ժամանակ չի կար, ուստի շուտ մը ամրոցը քաշուեցաւ և հողէ պատնէշներով ամրացուց ինչ որ խախտարեալ էր պարիսպներէն. դռներն ամրացնել տուաւ, և հրամայեց որ փնտռեն բերդին մէջ եթէ կար ոք որ տեղեկութիւն ունենար ելից և մտից: Եւ ահա գտան և բերին բերդապահը որ մեղէ

Ճանօթ Խուրէնն էր։ Որ Արաբացւոց կոտորածը լսելով եկեր իջեր էր Արտոս լերան ծործորներէն և մտեր բերդը միայն թաղած և ծածկածները գննելու, և որ հիմա սոսկումով կ'իմանար բերդին պաշարումը և շատ գոհ էր որ գոնէ ընտանիքը լեռնէն չ'էր բերած։

Ցօմեան տեսնելով այս մարդը սկսաւ հարցնել և իմանալ թէ բերդը ի՛նչ տկար տեղ ունէր պաշտպանելու, միթէ՜ կարելի՞ էր ծովէն նաւակ կամ լաստ գտնել և փախչիլ։ Խուրէն այս հարցմունքներուն ուշադրութեամբ մտիկ դնելով և տեսնելով թէ այդ հասարակ մարդը շատ կը յարգէին իր ընկերները ըստ իր սովորութեան, ըսաւ,

— Իշխան . . .

— Լռէ՛, անպիտան շողոքորթ, ես ալ քեզի պէս սոսկական մարդ եմ, եղբայր չ'ե՞ս կրնար զիս անուանել. զրուցէ միայն թէ այս քու բերդը գաղտնի ճամբայ մը՝ փախչելու տեղ մը ունի՞։

— Ի՜նչպէս չ'ունի, եղբայր, ստորերկրեայ ճանապարհ մը կայ որ բերդէն դուրս վարը կը հանէ։

— Ո՞ւր վարը։

— Ահա՛, սա հին եկեղեցին կը տեսնե՞ս, ճիշտ դորա մէջէն է ելքը, խորանին տակը. Սուրբ Ստեփաննոսի եկեղեցին է դա։

— Այս մօտերս անկից մարդ անցած ունի՞։

— Ինչպէ՞ս չ'ունի, ես այս առաւօտ անկից ներս եմ մտեր։

— Շատ բարի՛, եղբայր, ապրի՛ս, Աստուած բանդ յաջողէ. ըսաւ Ցօմեան և հրամայեց երկու ճարպիկ երիտասարդներու երթալ տեսնել ճամբան իր բոլոր երկայնութեան մէջ և երբ կարելի է զգուշութեամբ դուրս ելնել և բարբարոսաց դիրքն իմանալ։

Եւ ինքն այն միջոցին կը դիտէր թէ ի՞նչպէս թշնամին կը գեղանէր՝ կը տարածէր որպէս զի ամէն կողմէն բերդը պաշարէ, և իր սուր աչքերը չ'էին բաժնուէր այդ Ս. Ստեփաննոսի եկեղեցիէն որու դրան առջև քանի մը Արաբացի զինւոր միայն կ'երևային և որ վերջը թողին եկեղեցին և եկան խառնուելու ամբոխին հետ։ Վերջապէս մեծ հաճութեամբ տեսաւ իր երկու խութեցիքը որ աչալուրջ գողի պէս գլուխնին կը հանէին եկեղեցւոյն դրունէն դուրս զգուշութեամբ և ներս կը քաշուէին, վերջը՝ քանի մը վայրկեանէն կը տեսնէր որ նոյն Խութեցիներէն մէկը եկեղեցւոյն տանեաց վրայ գառացեալ կը շրջէր սողալով և ամէն կողմ կը դիտէր ու կաներևութանար. «Ապրի՛ք տղաք, այսպէս պէտք է լինիլ միշտ» կ'ըսէր Ցօմեան ինքնիրեն և կը սպասէր նոցա գալ-

տեան, ու սաստիկ կը ցաւէր թէ ինչպէս այդպիսի փոքրիկ խմբով ելեր էր իւր լեռներէն: «Ա՜հ, եթէ հազար հոգի մը իմ գլուխս ունենայի փոխանակ այս հարիւր քաջերու, այդ երեսուն հազար աւազակաց խումբը կաքաւներու պէս կը ցրուէի հիմա: Տեսնենք, ո՛ գիտէ թերեւս Աշոտ Արծրունին բան մը յաջողի ընելու. փոքրիկ յաջողութիւն մը բաւական է ինձ և ես շաբաթէ մը կուգամ երկու հազար հոգւով իրեն օգնելու:

Այսպէս կը խորհրդածէր, երբ տղաքը եկան և պատմեցին իրենց ստորերկրեայ արշաւանքը և նա զիրենք վարձատրեց «Շա՜տ բարի, ապրի՛ք, որդեա՛կք» ըսելով, այս բառերը Յովհաննու ժլատ բերնէն մեր լեռնցիները այնչափ ուրախացուց ինչչափ որ Բիւզանդիոնի կայսերաց պալատականք կ՚ուրախանային երբ ինքնակալ Տէրը բազմականգուն տիտղոսներ շնորհէր իրենց:

Ժամանակն սկսեր էր մթնել երբ ինք առջեւէն մտաւ գետնուղին և ամենքը ետեւէն հասան եկեղեցին, զգուշութեամբ ելան դուրս և առանց անմնուելու սկսան յետադարձը ու բոլոր գիշեր քալելով հասան Մոխրաբերդ, այդ բերդը թէպէտ կիսաւեր՝ բայց լաւ պատսպարան մ՚էր Խութեցի գունդին՝ որ տարածուեցաւ քնոյ հանգիստ առնուլ և կ՚ազդուրիլ: Իսկ Յովհան ըստ իւր անխոնջ բնութեան և պարտուց, ա-

մէն կողմ լաւ քննելէն վերջ՝ իջաւ ծովեզերեայ կողմը բերդին նստաւ և կը դիտէր ծովը որ շարունակ բարձրանալով կ՚ընդարձակէր իւր սահմանը՝ կ՚ողողէր ցամաքը՝ կը կլանէր շէն և անշէն. իւր հայրենասէր աչաց Հայաստանի պատկերն էր այդ տեսարանն որ թշնամին կ՚ողողէր, և այդ Մոխրաբերդ որուն պարիսպներուն բարձրութեան սկսեր էր հասնիլ օր աւուր առատացեալ ծովը:

Այդ խորհրդածութեանց մէջ յանկարծ երկու նաւ տեսաւ որ տկար հողմով հանդարտ կ՚անցնէին Աղթամար կղզւոյ քովէն դէպ՝ Արեմուտք դիմելով, վազեց գնաց առաւ իւր Սաընցի դրօշակը որ սպիտակ լաթի վրայ կարմիր խաչ մ՚էր, և սկսաւ ծածանել օդին մէջ. ուրախութեամբ տեսաւ որ նաւերը դէպ՝ ծովեզրը ուղղեցին իրենց ընթացքը, և երբ դեռ բաւական հեռու էին, Յովհաննու սուր աչքերը նշմարեցին Հայ քանի մը իշխանազունք և ընտանիք էին որ կ՚երթային և հաւանական թէ կը փախչէին: Երբ աւելի մօտեցան, տեսաւ որ միջահասակ մարդ մը ոտքի վրայ կեցած ղեկը ձեռին նաւը կը կառավարէր, տասնի չափ կանայք և տղայք նաւուն խորը նստած տխուր՝ լռիկ արցունք կը թափէին. ութը՝ տասը ազատորդի երիտասարդք վտանգեալ վահանները ձախ և

աջով սուրերու վրայ յեցեալ իրեն կը նայէին, իրենց արիւնլուայ և պատառոտի զգեստներու վիճակը կը ցցնէր թէ կռուէ նոր կ'ելնէին։ Երկրորդ նաւը առաջնոյն յար և նման կերպարանք ունէր.

— Փա՜ռք ազատողին, Խոսրով իշխան, ըսաւ Յովհան ճանչելով Ակէացին որ ղեկին վրայ կանգնած էր. իսկ նա լի տխրութեամբ աչքերը երկինք վեր առած,

— Փառք քեզ Տէր, փառք քեզ, յաղագս ամենայնի Տէր փառք քեզ, պատասխանեց և իւր լայն կուրծքէն մեծ հառաչանք մ'արձակեց։

Մէկ երկու նաւավար առագաստ իջուցին, մէկ երկուքն ալ պարսպին վրայ ցատկեցին ելան և նաւը մերձեցաւ. նոյնպէս միւս նաւն ալ անոր օրինակին հետևեցաւ։

— Եղբայր, ըսաւ Խոսրով, ապահով տեղ ենք յուսամ այս խաչի դրօշակին տակ.

— Օրուան մը ապահովութիւն կրնամ տալ քեզ, պատասխանեց Յովհան, և այսպիսի ժաման ալ՝ այս վայրկենիս չգիտեմ թէ Արծրունեաց Տէրը կրնա՞յ այսչափ խոստանալ։

— Շղթայներու մէջ ի՛նչ կարելի է որ խոստանայ ։

— Շղթայներու՛ մէջ, այսքա՞ն շուտով . . .

— Ինքն ալ և իւր որդին Գրիգոր, Վահան Արծրունի և՝ նորա որդին Գադիկ։ Մուշեղ և Հրանոյշ Տիկին և մեծ Տիկինն Հռիփսիմէ և ուրիշ շատ ազատ տանէ մարդիկ կապեալ և ուղտերու վրայ բարձեալ Ատրպատականէ Բաղդատու ճամբան յուղարկուեցան։

— Բայց դուք պատերազմով կ'երևայ թէ ազատած էք, ձեր վիճակը յայտնի ցոյց կուտայ։

— Մենք մեր ազատութիւնը Աստուծոյ օգնութեան և մեր սուրերուն պարտիմք. իսկ նոքա իրենց շղթայները՝ մատնիչներու անարգ վատութեան։

— Որո՞նք էին մատնիչները։

— Ի՛նչ պէտք յիշել անօրինաց անունները։

— Ոչ միայն պէտք է յիշել, այլ նաև կրակով գրել, ժայռերու վրայ փորագրել, մանր և փոքրիկ տղայոց ուսուցանել որ նոցա անունը նզովեն և նոցա օրինակէն քստմնել սովրին և մեծ հասակաւոր մարդիկ առաջին առթիւ զանոնք պատուհասեն. որո՛նք են այդ անօրէնները։

— Մուշեղ՝ Վահեւունեաց ցեղէն, Վահրամ՝ Տրունեաց ցեղէն, և միւս Վահրամ Թիկնապահ իշխանին, միաբանելով իրենց հետ ազատաց գունդը, գաղտնի պատգամաւոր ղրկեցին Բու-

ղայի կապել և մաննել իւր ձեռքը։ Աշոտ և իւր հաւատարիմները՝ որ բոլոր բազմութեամբ ապաստանեալ էինք Նկանի բերդը։ Այս վիճակը տեսնելով իշխանը՝ գնաց և անձնատուր եղաւ թշնամւոյն. մենք էլ պարտաւորեալ իւր օրինակին հետևեցանք, բայց երբ տեսանք երկրորդ կարաւան մը ուր մեր կանայք և զաւակունք գերի կը վարէին 'ի Բաղդատ, և որովհետև զարմանալի յիմարութեամբ թշնամիք մեր զէնքերը չ'էին առած մեզմէ, ձայն տուինք իրարու՝ զարկինք ցրուեցինք խումբը և կարաւանն ազատեցինք. բայց ո՞ւր փախչիլ կրնայինք, Ամիկայ ամրոցին կողմը դէպ 'ի ծով զմեզ թշնամին կը վարէր երբ մենք պատնէշ եղած մեր ընտանեաց՝ կռուելով կ'ընկրկէինք մաքերնիս դրած ծովակուլ լինիլ քան թէ գերութեան մատնուիլ. և իրօք ծովեզրը ետևնիս և թշնամւոյն բազմութիւնն առաջնիս, «քա՛ջ եղէք» նաւ գտանք» ձայնը մեր զօրութիւնը բազմապատկեց, յուսահատ վերջին յարձակմամբ թշնամին ետ մղեցինք, կանայք և որդիք մտան նաւերը և ես ու սա ութը տղաքը միատեղ ինքզինքնիս նաւերը նետեցինք և բացուեցանք։ Բայց ի՞նչ սոսկալի փրկութիւն է այս. ահա սոքա կուլան փոքրիկ աղջկանս կորստեան վրայ, նոյնպէս ամէնքը կամ հայր ունէին՝ կամ եղ-

բայր՝ կամ քոյր որուն վրայ պիտի ողբան յաւիտեան. և չ'ենք գիտեր ո՞րն է աւելի ողբալի, հոգւոյ կորուստը թէ մարմնոյ։

— Աստուած ողորմած է և արդար, Մերուժաններ ու Վասակներ չ'են ազատիր իր բարկութենէն, հիմա մենք տեսնենք թէ ի՞նչ բանի պէտք ունին այս Տիկինները, և մենք ի՞նչ ծառայութիւն կրնանք ընել իրենց և ձեզի։

— Ցիրաւի ես էլ չ'գիտեմ թէ ո՞վ ինչ բանի պէտք ունի. միայն այն գիտեմ որ երեք օր է հացը բերնէս վար չ'երթար։

Գլուխը ետ դարձուց Յօվլեան և տեսաւ որ քանի մը Խութեցի տղայք եկեր կը նայէին, ուստի իրենց հրամայեց և նոքա շուտ մը բերդին ամենէն լաւ սենեակներուն մէկը խոտի դէզեր բերին և փռեցին, իրենց դարի հացէն և չոր պանիրէն նոյնպէս բերին, սափորով մ'էլ ջուր դրին, որ փախստականք հանդչէին ու կ'ազդուրին։

Երբ այս Սասնական հիւրընկալութիւնը վայելեցին մեր ազնուատոհմք, Խօսրով Յօվլեանու հետ առանձնացաւ և հարցուց թէ ի՞նչ էր միտքը, մինչև ե՞րբ այդ աւերակ բերդին մէջ կենալ էր, իսկ Յօվլեան յայտնեց թէ իրեն այդ երկրին մէջ երկայն կենալ անկարելի էր, մանաւանդ երբ բուն երկրին բնակիչք ոչ յոյս՝ ոչ

կարողութիւն և ոչ գլուխ ունէին դիմադրելու, և Ծիրակ Ռոստոմի բերդին առջև երկայն չ՚էր կրնար կենալ և անտարակոյս Խութեցի գունդին ետևէն պիտի արշաւէր, վրէժխնդիր լինելու այն չարեաց որ հասուցեր էին իւր զօրաց, ուստի իրեն պարտք էր դառնալ Սասուն և մտածել թէ ինչ պէտք էր ընել:

— Ի՞նչչափ են քու զօրքերդ, հարցուց Խոսրով:

— Գրեթէ հարիւր հոգի:

— Ուրեմն մեր նաւերը զձեզ կրնան առնուլ և տանիլ ուր որ կ՚ուզէք:

— Լա՛ւ, ուրեմն այս գիշեր ճամբայ կ՚ելնենք, և երբ քամին յաջող է կը հասնինք Դատվան: Եթէ դուք յանձն կ՚առնուք մեզի հիւր լինիլ Սասուն մինչև որ այս պատուհասը անցնի՝ մենք շատ գոհ կը լինինք:

— Արդէն մենք տարագիր փախստական մարդիկ ենք, ապահովութիւն ո՛ւր որ գտնենք հոն կը դիմենք:

Նաւարարներին բերել տուին և հարցին. նոքա ապահովեցին թէ կէս գիշերուն հանդարտ քամի մը որ կ՚ելնէր սովորաբար՝ զերենք առաւօտուն կանուխ Դատվան կրնար հանել: Նոյնպէս նաւավարներու ըսած խաղաղութեամբ և հանգիստ Դատվան հասան Յովնան ու Խոսրով և նոցա ընկերքը. կանանց համար գրաստներ և Արա-

բացի նժոյգներ նաև կը ճարէին մեր Սասնցիք և կ՚ելնէին իրենց լեռները որ արդէն փախըստականներով լեցուն էր և որ շրջակայից միմիայն ապահովութիւն մնացեր էր:

Բայց Յովնանու սիրտը հանգիստ չ՚էր, գիշեր ցերեկ զինքը խորհուրդ մը կը տանջէր, ճանապարհաց կիրճերը նստած քանի մը հոգւով և շարունակ տեղափոխուելով հարուած հարուածի վրայ կը բերէր թշնամեաց և զարմանալի հետաքրքրութեամբ կը տեղեկանար թէ ինչ կ՚ընէ թշնամեաց զօրավարը, թէ որո՞նք են որ միշտ իւր քով կը գտնուին, թէ ի՞նչ կ՚ընէ Սմբատ Սպարապետ, թէ ի՞նչ կ՚ընէ իւր որդին Աշոտ, ի՞նչ կ՚ընեն և ո՞ւր են մատնիչ նախարարք և ազատք որ Արծրունեաց Տէրը մատնեցին. և այս ամեն նիւթերուն վրայ լաւ՝ ճիշտ և մանրամասն տեղեկութիւններ կ՚առնուր: Ականատես վկայներէ կ՚իմանար թէ Սմբատ սաստիկ դառնացեր էր Աշոտոյ մատնութեան վրայ, և հաճոյանալով Բուղայի Վասպուրականի բոլոր գերիքն՝ բաց ՚ի մեծամեծաց՝ յաջողեր էր ազատել և իւրաքանչիւր իր տեղը դարձնել: Եւ թէ այս հայրենասիրական գործողութիւնն ամենայն ճշտութեամբ կատարելու հսկեր էր: Եւ թէ նորա որդին Աշոտ միշտ կը ջանար թշնամւոյն ներկայութենէն հեռու կենալ: Միւս կողմէն կ՚ի-

մանար թէ Մուշեղ Վահեւունի և միւս երկու մատնիչ Վահրամներ Բուղայի բանակին մէջ իբրև բարեգործք և հաւատարիմք բարձրավեղ կը պտտէին:

Իր արշաւանքները անհանգիստ ըրին վերջապէս Տաճկաց զօրավարը. և խիստ պահպանութիւն հրամայեց ընել Խոյթի լեռներուն վրայ, բայց Յովնան նաև կը փոխէր իւր պատերազմի կերպը և շատ անգամ կը տեսնուէր Արաբացի հագուստներով՝ նոցա դրօշակով կոտորած հասցնելու համար նոցա վրայ:

Բայց ի՞նչ էր Յովնանու ջանքը եղած ապականութեան հետ բաղդատեալ. գոյժ կը հասնէր դարձեալ թէ Գուրգէն Արծրունի՝ եղբայր Աշոտոյ մեծ իշխանին թէպէտ մեծ յաղթութիւն կանգնելով ընդդէմ Բուղայի զօրավարաց Որսերանք գաւառին մէջ և հազար ութ հարիւր հոգի ջարդելով 'ի թշնամեաց, խաբուելով յիմարաբար անձնատուր եղեր էր յուսահատելով և հաւատալով նորա երդմանցը որ եղբօրը տեղ կը խոստանար զինքն իշխան կացուցանել Վասպուրականի:

Քաջութիւն՝ վատութիւն՝ մատնութիւն և յիմար վստահութիւն այնպիսի խառնաշփոթ ազդեցութիւն կ'ընէին խեղճ մարդուն գլխուն որ Հայ նախարարեանը արհամարհել իրեն սո-

վորութիւն ըրած էր, բայց իւր անխօս բնութիւնը կ'օգնէր իրեն և ժողովրդեան առջև չ'էր ուզեր յայտնել իւր մտածութիւնը. ուստի կը համբերէր: Երբ իմացուցին իրեն թէ Բուղա վերցուց բանակը և ելաւ 'ի Խլաթայ երթալու ձմեռելու Դուին, ինքն էլ պատրաստութիւն տեսաւ իրեն հետևելու և երթալու Խլաթ իր առաջադրութիւնը 'ի գլուխ հանելու:

Խլաթ այն ժամանակ Վասպուրականի գեղեցիկ մէկ քաղաքն էր. Ծառախիտ պարտէզներէ շրջապատեալ, իւր պտուղները միշտ անուշահամ, միշտ գեղեցիկ, հռչակաւոր էր բոլոր Հայաստան. իւր դիրքը Վանայ ծովուն վրայ էր տարածեալ վերուստ 'ի վայր, իւր ամուր բերդը, աշտարակօք ամրացեալ, եկեղեցիներուն գմբեթները բարձրաբերձ, վաճառանոցներն հարուստ, դարձեալ նոյն վայրկենին երբ ամբողջ Հայաստան տնանկոխ կը լինէր, նա միայն նիւթական կորուստ չ'ունենալով, բաց 'ի մայր եկեղեցւոյն որ մզկիթ էր դարձեր, չէն և փարթամ կերպարանք ունէր. Տաճիկը Տարօնոյ և Վասպուրականի աւարը հոն էր լցուցեր, և առուտուրը լաւ վիճակի մէջ էր: Ուստի երբ բանակը վերցուց Բուղա Դուին երթալու, բնակիչքը շատ գոհ չ'եղան, ոչ միայն որ մեծ բռնաւորին և զօրաց հեռանալով առևտուրը

պիտի պակսէր, այլ մանաւանդ որ նորա հեռանալով անհամար փոքրիկ բռնաւորք մէջտեղ պիտի ելնէին ինչպէս միշտ սովորութիւն է, և այս՝ փորձով գիտէին Խլաթեցիք. ուստի քանի որ զօրաց թիւը կը պակսէր՝ վաճառական մարդն էլ իւր կրպակը կանուխ կը գոցէր և իր պարտէզներու մէջ ծածկուած տունը կը հեռանար:

Ինչպէս սովորութիւն եղած է միշտ արևելքի մէջ, թագաւոր կամ զօրավար երբ կ'ելնէ ճանապարհ, նշան է երթալու ամենուն, այնպէս և Բուղայի ելնելէն վերջ՝ դիւանապետը նաև իւր թղթերը կաշեայ պարկերու մէջ կը զետեղէր և կը պատրաստուէր իւր տիրոջ ետևէն ելնելու երկրորդ օրը։ Ինք Խլաթ քաղաքէն դուրս պարտէզներու մէջ ամառանոց մը կը բնակէր, բնակարան իշխանազուն Հայու որ պատերազմի իրաւունք իրեն վիճակեցուցեր էր, ուստի դիւանապետը որուն Միրզա Հասան անուն կուտային, իւր բոլոր պատրաստութիւնքը տեսած առաջին քաղցր քունը կը քնէր, իմացաւ որ մէկը զինքը կը դրդէր զգուշութեամբ. կարծելով թէ ծառան զինք կ'արթնցնէ սկսաւ սաստել որ հեռանայ և թողու հանգիստ քնել: Բայց տեսնելով որ ապատում չի կայ, աչքերը բացաւ և զարմանքով նայեցաւ որ ծառային տեղ միջահասակ լայնա-

լանջ՝ մեծագլուխ մարդ մը գլխուն վերևը կեցեր էր, որուն սև և փայլուն մազերը ուսը կը հասնէին, և երկու աչք ունէր սլաքի նման, և որուն ժպիտը հեգնութեան կերպարանք ունէր քան թէ ծիծաղի. այս օտար մարդը երբ գըլխուն վրայ տեսաւ Միրզա Հասան, սոսկալով ձեռքը երկնցուց դէպ 'ի դաշոյնը որ բարձին քովն էր, որպէս զի ինքզինք պաշտպանէ. իսկ մարդը առանց խօսելու ձեռքը նորա դաստակին վրայ դրաւ և այնպէս սղմեց որ ոչ միայն ձեռքը կարկամեցաւ՝ այլ ցաւին չի դիմանալով սկսաւ աղաղակել: Իսկ անծանօթը իւր լայն ձեռքը բերնին վրայ դնելով կամաց և հանդարտ ձայնով,

— Ամօթ է, Միրզա Հասան, քեզի այդպէս տղու նման կանչուըռտել ըսաւ. դու գրագէտ և ուսումնական մարդ ես, ի՞նչ կ'ըսեն քու ծառայներդ երբ պատմեն թէ ձեռքդ փոքր մը սղմելուն չի դիմանալուն այդպէս ողորմուկ ձայն կը հանես։

Իսկ Միրզա Հասան տեսնելով թէ մարդն անուշ կերպով կը խօսի և իւր ծառայներուն խօսքը կ'ընէ, որ դուրսն են, սկսաւ ձայնը բարձրացնել.

— Անհաւա՛տ շուն՝ որ աւազակ Հայու մը կը նմանիս, չե՞ս վախեր որ ետքը ի՞նչ կը լի-

նի քու վիճակդ, դու չե՞ս մտածեր թէ ես ո՞վ եմ, թէ իմ տէրս Բուղա ի՜նչ մարդ է։

— Նախ՝ պէտք է գիտնաս որ նախատական բառ պէտք չէ գործածես և թէ քու ծառաներէդ նոքա միայն կենդանի են որ խելօք վարուեցան և անձնատուր եղան․ ուստի դու ալ պէտք է խելօք լինիս, երկրորդ՝ պէտք է գիտնաս թէ Հայ աւազակ միշտ քիչ հանդիպած է աշխարհքիս վրայ քան թէ իրեն դըրացի ազգաց մէջ, երրորդ՝ թէ ես կենացս մէջ երկիւղ ըսուած բանը չ'եմ գիտեր թէ ի՜նչ է և նոյն քու Բուղայէդ նաև չեմ վախեր։

— Բայց ի՞նչ կ'ուզես դու ինձմէ, զի՞ս ալ սպաննել կուզես ծառայներուս պէս։

— Ո՛չ երբէք, ես անզէն մարդ չ'եմ սպաններ ։

— Ոսկի՞ կ'ուզես, ահա՛, ըսաւ և բարձին տակէն քսակ մը հանեց երկնցուց Միրզա Հասան ձեռքերը դողալով ։

— Ոչ ոսկի և ոչ արծաթ, իմ ուզածս ուրիշ բան է։

— Ի՜նչ կուզես, զրուցէ՛ մարդ, ըսաւ դիւանապետը բոլոր անձամբ դողալով և աչքերը խփելով որ դիմացինին սլաքային աչքերը չի տեսնէ, վասն զի նորա հայուածքը՝ ծանրու

հանդարտ խօսուածքը սոսկալի ազդեցութիւն մը կ'ընէին իւր վրայ։

— Բոլոր դիւանի թուղթերը քու քովդ են, այնպէս չ'է՞։

— Այո՛ անոնք կ'ուզե՞ս, ահա սա պարկերուն մէջ են։

— Ո՛չ, ամենքը չեմ ուզեր, մէկ թուղթ մը միայն կ'ուզեմ։

— Ո՞ր թուղթը, զրուցէ՛ տամ։

— Դու կը յիշես թէ երբ Աշոտ Արծրունեաց Տէր Նկանի բերդին մէջ պաշարած էր, քանի մը Հայ իշխանք գաղտնի նամակ գրած էին Բուղային։

—Այո՛ գիտեմ, կը յիշեմ։

— Այդ թուղթը պէտք է ինձ գտնես և տաս, ահա բոլոր իմ պահանջմունքս։

— Այդչա՛փ միայն, և այս ոչինչ թղթին համար զիս սարսափեցուցիր։

Այս խօսքերն ըսելէն վերջ ելաւ տեղէն, և պարկերուն մէկը բացաւ դողդոջուն ձեռօք և Հայերէն թուղթ մը գտնելով,

— Ահա թուղթը, ըսաւ։

— Ճշմարիտ ա՞յս է, հարցուց մարդը կանթեղին մօտենալով աչք մը պտտցնելէն և ծոցը դնելէն վերջ, լա՛ւ է Միրզա Հասան, հիմա պէտք է ինձի շիտակը խոստովանիս թէ ի՞նչ

է Ջաֆր Ամիրապետին հրամանը առ Բուղա Հայաստանի համար։

— Արդէն կը տեսնես թէ ինչ է. կամ պէտք է Հայաստան իւր անհաւատութիւնը թողու և ուղիղ հաւատքն ընդունի, կամ պէտք է բոլորովին կորչի և իւր յիշատակը աշխարհքէս վերնայ։

— Ուրեմն մնաս բարև, կը տեսնես թէ ես խելօք և խօսք հասկցող մարդոց վնաս չ'ունիմ, ըսաւ և առանց ետին դարձնելու գլուխը՝ հանդարտ քայլելով ելաւ դուրս. Երթա՜նք տղաք զրուցեց և անհետ եղաւ։

Միրզա Հասան դուրս ելաւ և իրօք տեսաւ իւր քանի չափ ծառայներէ մէկ քանի հատը փոշոտեալ՝ միւսները չուաններով կապկպած. Ծառայներուն և ինքնիրեն կը հարցնէր թէ ո՞վ էր այդ սոսկալի մարդը կամ երևոյթը։

Մենք գիտենք թէ Խութեցի Յովնանն էր նա։

ԳԼՈՒԽ ԺԳ.

Վ Ր Է՜ Ժ.

Ձմեռը հասաւ և ձիւնն ու սառը պատեցին Հայաստան. Բուղայի կոտորածը դադարեցաւ, միայն թէ իւր անուան սոսկումն ամեն սրտի կը

տիրէր, և ինք ցրուած ժամանակ իւր արիւնախանձ զօրավարքը, խստութեամբ պատուիրել էր ամենուն որ գարնան սկիզբը անդանդաղ պէտք էին հասնիլ Դուին։ Սոցա մէջ էին մեզ ծանօթ երեք մատնիչ Հայ նախարարք որ Խլաթ քաղաքէն մէկ երկու օրուան ճամբայ յուղարկաւոր երթալէն վերջ՝ հրաժարական ողջոյնը տուին բարբարոս իշխանին և բաժնուեցան դառնալու իրենց տուները։

Մուշեղ Վահեւունի երբ իւր երկու մատնութեան ընկերները՝ երկու Վահրամք բաժնուեցան իրմէ, գնաց բնակելու Նազուկ լճին վրայ իւր Հերեթի ամրոցը, ուր հանդիստ նստած կ'սպասէր գարնան մեծամեծ վարձքերու Բուղայէ՝ որ խոստացեր էր գրել Ամիրապետին նոցա ամենամեծ ծառայութիւնքը և արժանաւոր փոխարէնը։ Նազուկ փոքրիկ և գեղեցիկ լիճը զարդն էր Կորի գաւառին, և ձմեռ ժամանակ ամբողջ սառելով գեղեցիկ հայլի մը կը կազմէր, բայց լճին շրջակայ բազմամարդ գեղերը մեծաւ մասամբ անապատացեալ էին, և Մուշեղ չորս կողմ լուր կը ղրկէր որ բնակիչք չի վախեն դառնան իրենց բնակարանները, ապահովութիւն և պաշտպանութիւն իրենց խոստանալով։ Իսկ գիւղացիք որ արդէն իւր անիրաւութիւններէն ձանձրացեր էին շատ դժուարութեամբ և ակամայ կը դառ-

նային իրենց բնակարանները, և մեծ մասը գիւղերուն անապատ մնացել էր։

Ձմեռուան մէջ Տարօնոյ կողմէն երիտասարդ խումբեր կուգային իրենց պաշարներով, այդ լքեալ գիւղերուն մէջ բնակութիւն կը հաստատէին, նոյնպէս Տարօնեցիք ոմանք հինգ վեց հոգի Կոբայ վանքը եկած հիւրընկալութիւն խնդրելով ուխտաւորաց սենեակները կը բնակէին, և վանահայրը թէպէտ սկիզբները հիւրընկալութեան երկայնութենէն ձանձրացած՝ կ՚ուզէր զիրենք ճամբայ դնել, բայց նոցա գըլխաւորին համեստ և առաքինի վարմունքը, իւր ջերմեռանդութիւնը որ միշտ երկար սաղմոսերգութեանց ներկայ էր եկեղեցին, իւր աշխատասիրութիւնը որ պարապ ժամ անցնել չ՚էր գիտէր, այլ միշտ ծառայութիւն մը՝ գործ մը կը գտնէր և կը կատարէր՝ վանահօր կարծիքը փոխեցին. մանաւանդ որ այդ ձմեռուան միջոցին այս Տարօնեցի տղայք կ՚երթային որսի և իրենց յաջող նետաձգութենէն ոչ թռչուն՝ ոչ կենդանի չ՚էր ազատեր դիւրութեամբ և կրօնաւորաց սեղանատունը ուտիք օրեր պատուական և համով կերակուրներով կը զարդարուէր։ Վերջապէս ութ տաս օրուան մէջ այս օտարականները այնպէս ընտանի եղան որ վանքին փայտակիր՝ փայտահատ՝ ջրկիր՝ աւելածու՝

դռնապան այս մարդիկն էին. և օր աւուր հարկաւոր անձինք դարձեր էին վանքին մէջ։ Պէտք է գիտնալ նաև որ Կոբայ վանքը Բլրոյ մը վրայ շինուած, մինչև այս օր դեռ ունի իր բարձրաբերձ պարիսպները, և եթէ եկեղեցւոյն գմբէթը չ՚լինէր վրան բարձրացեալ՝ աւելի բերդ մը կը կարծուէր քան թէ վանք։ Ս. Դանիէլի ծերունւոյն էր նուիրեալ և իւր մարմինը եկեղեցւոյն մէջ է թաղեալ մինչև այսօր։ Տարօնացւոց կիրակի օրեր եկեղեցին բազմաթիւ երևիլը չ՚էր զարմացներ մեր վանականքը, վասն զի աշխարհք գիտէր թէ Տարօն շատ չարչարուեր էր այդ մէկ երկու տարուան միջոցին մէջ։

Մուշեղ իշխանին գլխաւոր ձմեռուան զուարճութիւն որսն էր. յաճախ որսական բարակներ և ութ տասը թիկնապահներ հետ առած կ՚երթար շրջակայքը որսալու։ Ուստի նոյնպէս երբ օր մը որսէ դառնալով Կոբայ վանուց առջևէն կ՚անցնէր՝ յանկարծ քանի մը հետևակ Տարօնեցի դիմացն ելան, և մէկը լայնաքլէճ աղեղէն այնպիսի հարուած մը տուաւ ձիուն փորին, որ կենդանին ցաւէն յիմարեալ ու կատաղեալ զարկաւ Մուշեղ 'ի գետին և ինք գնաց ինկաւ քանի մը մղոն հեռու և հոգին փչեց։ Իսկ Մուշեղի թիկնապահները երբ իրենց տէրը տեսան ինկած և օգնելու դիմեցին՝ այնպիսի նե-

տանջութիւն մը իրենց դէմ սկսաւ և թշնամի խումբը այնպէս շատցաւ և իրենց դէմ յարձակեցաւ որ թողլին փախան, և քանի մը հոգի նոյն միջոցին Մուշեղի ժամանակ չի տալով գետնէն ելնելու, ոտքերը ձեռքերը կապելով առին վանքը տարին ուր իրենցմէ շատեր արդէն տանտէր դարձեր էին:

Մուշեղ նախ ջանաց այս Տարօնցւոց խօսք հասկցնել իմացնելով թէ ինք Բուլղայի բարեկամն էր և թէ մեծ թագաւորին շատ ծառայութիւններ ըրած և թէ իրենց յանդգնութիւնը մեծ պատիժներու արժանի էր, և թէ զէնքը եթէ թող տային անվիշաւար կը լինէր և կը ներէր՝ նաև վարձ էլ կ'ուտար: Բայց այդ կոշտ գիւղացիքը խօսք մը չ'էին պատասխաներ, մինչև որ այդ ընդարձակ վանքին սենեակներուն մէկը զինք տարին: Հոն իրեն կապերը քակեցին և թողլին որ նստի. քիչ մը բան բերին որ ուտէ և քիչ մը գինի որ զօրանայ: Այս միջոցիս վանահայրն իմանալով եղածը կ'ուզէր ներս մտնել իշխանին քով, իսկ երբ Տարօնեցի պահապանք զինքն արգիլեցին՝ սկսաւ գանգտիլ և ձայնը բարձրացնել, մինչև որ այս աղաղակը լսելով դուրս ելաւ նոյն գլխաւորը:

— Աս ի՞նչ է, եղբա՛յր, կ'ըսէր վանահայրը. «Տուն իմ տուն աղօթից կոչեսցի, և դուք արա-

րէք զդա այրս աւազակաց» Քրիստոսի խօսքը իմ վանքիս վրայ պիտի՞ ճշդրտէք: Աս ի՞նչ ապերախտութիւն է. ա՞յս է իմ հիւրընկալութեանս փոխարէն ձեր ըրածը, որ գաւառին առաջին՝ մեծ և պատուաւոր իշխանը կը յափշտակէք և հոս իմ վանքս ձեր աւազակութեան ապաստանարան կ'ընէք, և ինձ՝ վանահօրս կ'արգիլէք մտնելու այն սենեակը ուր իշխանը կը պահէք. ո՞վ է ուրեմն Տէր վանուցս, դո՞ւք թէ ես:

— Հայր Սուրբ, սիրտդ հանգիստ բռնէ՛, մի՛ վրդովիր, մեր Տարօնցիքը անիրաւ գործ չ'են ըներ, և եթէ քեզ այսօր արգիլեր են ներս մտնել կալանաւոր իշխանին քով՝ վաղը միւս օր ապահով եղիր որ պիտի հրաւիրեն քեզ իրեն քով, և մենք Տարօնացիքս ոչ ապերախտ ենք ոչ երախտամոռաց, մանաւանդ թէ շնորհակալ ենք ձեր հիւրընկալութեան, միայն մենք դատաստան ունինք իշխանին հետ և դու, Հայր Սուրբ, առաջին դատաւորը պիտի լինիս, սիրտդ հանգիստ բռնէ:

— Ուրեմն ինչո՞ւ կ'արգիլէք զիս ներս մտնելու:

— Եթէ այդչափ կը փափաքիս, լա՛ւ, մտի՛ր, ըսաւ գլխաւորը և աչք ըրաւ պահապանաց որ թողլին որ մտնէ:

Իսկ Մուշեղ Վահեւունի հազիւ թէ տեսաւ

վանահայրը, սկսաւ. գանգատիլ այս իրեն եղած անիրաւութեան վրայ, և այդ վանքին ապերախտութիւնը սկսաւ երեսին զարնել, թէ ինք ի՛նչչափ չարիք կրնար հասցնել և չ՚էր հասուցած և թէ ինք այն մարդն էր միշտ՝ որուն շատ դիւրին էր հիմնայատակ ընել այդպիսի վանք մը՝ որ բոյն կը դառնար դաւաճանութեան ընդդէմ իւր անձին։

Այս խօսքերուն ամենայն քաղաքավարութեամբ և խոնարհութեամբ կը պատասխանէր վանահայրը, իմացնելով թէ եղածը բոլորովին դիպուածական էր, և թէ ինք խեղճ Տարօնեցւոց հիւրընկալութիւն ընելով չ՚էր կարծեր երբէք որ նոքա կրնային այդպիսի անզգամութիւն մի կատարել։ Այս միջոցին յանկարծ իշխանը խելաբրեց տեսնելով որ մատանին չի կար մատը, և վեր ցատկելով,

— Ահա, ըսաւ, այդ անպիտան աւազակաց չարագործութեան մէկ նշանն էլ, մատնիս նաև գողցեր առեր են մատէս։

Իսկ Տարօնեցւոց գլխաւորը որ աս խօսակցութեան ներկայ մէկ կողմ նստած էր, գլուխը վեր վերցնելով և մօտենալով Վահևունի իշխանին, ծանր՝ հանդարտ և կամաց ձայնով՝ բայց այնպիսի ձայնով որ առիւծի մռնչման կը նմանէր, ըսաւ.

— Հոգ մի՛ ըներ, Մուշեղ, այդ մատնին կը գտնենք և քեզի կը դարձնենք մենք։

— Բաւական չ՚է որ ինձ պէս աղնուատոհմ իշխանի դէմ ամեն բռնութիւն գործածէք, պէտք է նաև որ զիս նախատէք իմ անունս միայն ինձի տալով իբրև գռեհիկ մարդու։

— Մենք շինական մարդիկ ենք և քաղաքացւոց պէս չ՚ենք գիտեր արժանաւոր յարգանքը տալ ձեզ նման մեծ մարդկանց, պատասխանեց Տարօնեցին հեգնական ծիծաղով։

— Շատ չ՚անցնիր ես կը սորվեցնեմ ձեզի պէս մարդկանց թէ ի՞նչպէս պէտք է վարուիլ իշխանի մը հետ։

— Կրնա՞նք իմանալ թէ ի՞նչ տեսակ բան է մեզի սորվեցնելիքդ։

Իսկ վանահայրը նոյն միջոցին յիշելով սենեկին դուռն առաջ եղած խօսակցութիւնը, դարձաւ և ըսաւ Տարօնացւոյն որուն անունը մինչև այն օր չ՚էր հարցուցեր և չ՚էր գիտէր և գիտնալու էլ փափաք չ՚ունէր։

— Բայց Տարօնացի՛, դու քիչ առաջ կ՚ըսէիր թէ մենք դատաստան ունինք իշխանին հետ, դատաստանդ ի՞նչ է։

— Մինչև որ վկայները չի ժողվուին՝ դատաստանը չի կրնար սկսիլ և այդ նիւթին վրայ հիմա խօսիլ աւելորդ է, մանաւանդ թէ ժա-

մանակ էլ չի կայ և հիմա պէտք է երթանք։

— Ո՞ւր, հարցուց Մուշեղ հրամայական ձեւով և կիրքով։

— Դատարանը ուր դատ պիտի վարենք քեզի դէմ, և ուր եթէ արդարանաս կը թողունք որ երթաս։

— Եւ եթէ՞ չարդարանամ։

— Դատաստանը ինչ որ վճռէ՝ ի գործ դնել պարտաւոր ենք։

— Ձեզի պէս աւազակներու՝ գռեհիկներու՝ սինլքորներու հետ դատաստանի մտնելն էր պակա՜ս։ Ես որ զձեզ չեմ ճանչեր՝ ես որ զձեզ չեմ տեսեր՝ ես որ ոտքիս տակ երբէք չ'եմ նայեր որ կարենայի ձեր նմանները նշմարել, և դուք կը համարձակի՞ք ինձի հետ դատաստանի խօսք ընել։

— Երկայն և նախատական խօսքերու պէտք չի կայ։ Տղա՛ք, մութը կոխեց, դէ՛, ջորին պատրաստեցէ՛ք։ Հայր Սուրբին ջորին էլ պատրաստեցէ՛ք, դուք էլ պատրաստ եղէ՛ք որ երթանք։

— Իմ ջորիս ո՞ւր կը տանիք, ըսաւ Հայր Սուրբը։

— Քու ջորին քեզ համար պիտի պատրաստեն, Հայր Սուրբ։

— Բայց հիմա աս ցուրտին՝ աս սառին՝ գի-

շերով ես քայլ մը չ'եմ փոխեր։ Դուք խելքերնիդ թռուցեր էք։

— Կարելի է որ քու կամքիդ քեզ թողուն տեղէդ չ'ես շարժիր, բայց որովհետև քահանայ Աստուծոյ ես, արդարութիւնը կը սիրես և պարտք է սիրել, պէտք է մեզի հետ գաս, և եթէ չ'ուզես սիրել՝ մենք քեզի սիրցնել կ'ուտանք։

— Բռնութեա՞մբ գիս պիտի տանիք, ըսաւ խոժոռելով և չփոթելով վանահայրը։

— Միթէ՞։ Իշխանն էլ պիտի գայ. միթէ՞ բռնութիւն կը գործածենք մարդու որ մեր բարեկամական խորհրդոց կը հետևի։

Աս միջոցին տղաքն եկան և իմացուցին թէ ամեն բան պատրաստ է։

— Երթանք իշխան, ըսաւ Տարօնացին։

— Ես իմ կամօքս քայլ մը չ'եմ առնուր, պատասխանեց Մուշեղ։

— Դու լաւ մարդ ես. ոչ մէկ՝ այլ շատ քայլեր էլ կ'առնուս։ Միայն պէտք է որ քեզի օգնեմ, վասն զի իշխան մարդ ես և պէտք է թեւերդ մտնել։

Եւ այս ըսելով Տարօնեցին, (որ Յովհան ինքն էր ինչպէս ընթերցողը կրցաւ երևակայել), թեւէն բռնեց, և իբրև թէ մեքենայէ մը ցընցուելով Մուշեղ ցատկեց երկու ոտից վրայ։

— Ա՜ անօրէն գռեհիկ, թևս կոտրեցիր, թո՛ղ, կ'աղաղակէր և կը ցնցուէր:

Իսկ նա երեսին վրայ առանց փոքրիկ շարժմունք յայտնելու, և ամենայն հանդարտութեամբ,

— Քալէ՛, իշխան, քալէ՛ ըսելով սենեկին դուռը բերաւ, և հոն երկու հոգի իւր ընկերներէն զինքը պատրաստ ջորիի վրայ պարկի մը պէս նստեցին, առանց իւր աղաղակներուն ականջ դնելու:

Եւ նոյն միջոցին ուրիշ երկու հոգի ալ երկու ոտքերը ամուր՝ կենդանւոյն ոտքին տակէն իրար կը կապէին:

Մուշեղ աչքերը ան ատեն չորս կողմ դարձուց և տեսաւ որ բակը լեցուն է զինեալ մարդերով, յուսահատութիւն զինքը պաշարեց և իմացաւ որ դիմադրութիւնն անկարելի էր. ուստի այն սկսաւ մտքէն չափել թէ այդ աւազակաց ի՞նչ փրկանք տալով կրնար ազատիլ:

Իսկ Հայր Սուրբը, աւելի խոհեմ՝ իւր վերարկուն խնդրեց և հեծաւ իւր ջորւոյն վրայ ու տեսնելով թէ աւազակները՝ (նա ալ մտքէն ուրիշ անուն չ'էր կրնար տալ իւր հիւրերուն)՝ ամենքը հետևակ էին, առջի ազատ քալափոխին փախչել և վանք դառնալ և դռներն ամուր փակել և հիւրընկալութեան ողորմութեան ա-

նուն չի տալ կեանքին մէջ որոշեց մտքէն:

Ուստի երբ քիչ մը տեղ գնացին և դեռ վանքին պարիսպները անյայտ չ'էին եղեր և Հայր Սուրբը լեռնականաց շրջանակէն ինքզինքը դուրս գտաւ, ջորւոյն գլուխը դարձուց, մտրակեց երկու ոտից ամենայն զօրութեամբ, և դառնալով լեռնականաց, «Մնաք բարով, Աստուած ձեզի բարի յաջողութիւն տայ» գոչեց և սկսաւ կրակի պէս երթալ: Իսկ Յովհան «Տղա՛ք, ձեզ տեսնեմ, Հայր Սուրբը ճամբան շփոթեց, դարձուցէ՛ք,» աղաղակեց և քսան հոգի սրացան ետևէն և վանքին պարիսպներուն չի հասած շրջապատեցին ջորին, և կենդանւոյն գլխէն բռնելով հասուցին խմբին որ ամենևին իւր ընթացքէն չ'էր կասել և կը շարունակէր ճամբան:

Մեր խումբը երեք ժամու չափ Սասունցւոյ ընթացքով քալելով, հասաւ շամբի մը առջև և մտաւ եղէգներու անտառին մէջ սառած ջուրին վրայ ապահով քալելով, և ահա այդ անտառին մէջ կար քաղաք մը իւր օձապտոյտ ճամբաներով ուր մեր Սասնցիք մտան իբրև իրենց տուն, և վերջապէս կանգնեցան բերդանման՝ ընդարձակ՝ կիսաւեր շէնքի մը առաջ, որ հաւանական թէ հռչակաւոր Մամիկոնեանց Մուշեղի և Գայլ Վահանայ բնակութիւն եղած էր: Անուանի Օձ քաղաքն էր այդ:

Մուշեղի կապերը քակեցին և որովհետև չ'էր կրնար քալել կապերէն ու ցուրտէն ոտքերը բռնուած լինելուն, գրկեցին զինքը և բերին գեղեցիկ ճարճատող կրակէն հեռու նստեցուցին: Ամօթապարտ Հայր Սուրբն էլ քաղաքավարաբար իջուցին ջորիէն և առաջնորդեցին նոյն սենեակը որ փառաւոր էր տաքութեամբ և խոտէ նստարաններով: Բերին առատութեամբ իրենց լեռներուն գարւոյ հացը, իրենց քարի պէս պանիրը, իրենց պատուական մեղրը և Մեղրագետի ցուրտ ջուրը: Եւ Ցօլեան դառնալով իր երկու հիւրերուն, «լեռնցւոյ հիւրասիրութիւնը՝ թէպէտ Մամիկոնեան քաջ իշխանաց պալատին մէջ՝ այսչափ կրնայ լինիլ. մի՛ նայիք մեր աղքատին կերակուրներուն, այլ հաշուեցէք որ ո՛չ մեր յաւելուածէն այլ բոլոր ունեցածէն ձեզ կը մեծարենք» կ'ըսէր:

Իսկ Հայր Սուրբը տխուր՝ բայց տեսնելով թէ զօրաւոր մագիլներու մէջ էր և ազատում չէ կար, ակամայ պարտաւորեցաւ զինքը զուարթ ցոյց տալու: Թշուառական իշխանը միայն խոժոռադէմ՝ տխուր կը մտածէր. այս հանելուկը որ իր գլխուն վրայ կը պտտէր չ'էր կարող կատարեալ մեկնել, միայն երբ ոտքերուն կապած տեղուանքը կը շօշափէր և ուռեցները կ'զգար միտքը կուգար թէ Աշոտ Արծրունին որ

ինք մատներ էր՝ նոյնպէս ոտքերը ձեռքերը շղթայներով տեսել էր որ ընտանեօք այնպէս կապած ուղտերու վրայ բարձած տարին Բաղդատ: Այն միջոցին խղճմտանքը զինքը կը դըրդէր, բայց վայրկենին մէկդի կը վարէր այդ մտածութիւնը:

Ակամայ կը նայէր այդ սենեակին առաստաղներուն որ ահագին գերաններ իրարու յեցեալ լուսամուտ էին կազմել, կը նայէր այդ եղէգներով բորբոքեալ ճարճատող վառարանին և բոցոյն որ զանազան ձև ու գոյն կ'առնուր, որ երկայն ժամանակ ամենուն աչքը և ուշադրութիւն կը գրաւէր, ուշադրութիւն անհաստատ և անկայուն. վասն զի կայուն միայն իր մտքին մէջ իր վիճակին դառն փոփոխութիւնն էր. կ'երևակայէր թէ նոյն գիշերը իր կինն ու զաւակները ի՜նչ մտատանջութեան մէջ էին, և յանկարծ միտքը կուգար Արծրունեաց մեծ Տիկինը Հռիփսիմէ՝ այդ ծանրագլուխ և փսեմ կինը իբրև թէ յիմարացեալ՝ մազերը փետտելով՝ առանց վերարկուի՝ առանց քօղի, իր երկու զաւակներուն ետևէն իր կամօք դիմելով աքսոր և ՚ի բանտ:

Բայց ձեռքը ճակտին և աչքերուն տանելով՝ մէկդի վարեց այս մտածութիւնն ալ, շուրջը աչքը պտտցնելով տեսաւ Ցօլեանու երկու սայ-

րասուր աչքերն որ իրեն կը նայէին, և կշռելով թէ այդ մարդէն կախուած էր իրեն բաղդը, վասն զի աւազակները իր բերնին կը նայէին,

— Մա՜րդ, ո՞վ ես դու, ըսաւ ոչ իշխանաբար՝ այլ յուսահատաբար։

— Դու որ գիտես ինչո՞ւ կը հարցնես, դու չէ՞իր որ քիչ առաջ [illegible] կ՚անուանէիր զիս։ Ահա ես այդ երեքն ալ եմ՝ եթէ հաճիս։

— Ա՛յո, ես այդ խօսքերէս բառ մը ետ չ՚եմ առնուր, միայն այդ կը հարցնեմ քեզ թէ դու կի՛ն՝ զաւակ ունեցե՞ր ես. եթէ ունեցեր ես՝ միտքդ բե՛ր թէ այս գիշեր իմ կինս՝ իմ զաւակներս՝ իմ տունս ի՜նչ վիճակի մէջ են. ի՜նչ ողբայ և արտասուաց տուն ըրիր դու, դո՛ւ իմ տունս, անօրէ՜ն անաստուած։

Եւ այս խօսքերը գրուցելով աչքերէն հեղեղի պէս այրող արտասուք կը վազէին։ Վարդապետը և բոլոր Խութեցիք մէկ մը Յովնանու, մէկ մը այս մարդուն կը նայէին, և երիտասարդ լեռնցիք որոնց սիրտը իրենց ժայռերուն խստութիւնը չ՚ունէր, գլուխնին մէկդի կը դարձնէին, իբրև թէ Մուշեղի տան տեսարանը տեսած լինէին։ Իսկ Յովնան աս խօսքերէն իբրև թէ ցնցուած երկու ծունկի վրայ գալով՝ ընքուի-

ները ցցուած՝ աչուըները սոսկալի փայլ մը առած՝

— Մուշե՜ղ, Մուշե՜ղ, գոռաց, ես քու տանդ վիճակը ո՛չ այսօր՝ ոչ երեկ՝ ոչ ամիս մը առաջ այլ վեց ամիս առաջ երևակայեցի և ողբացի։ Բայց դեռ ի՞նչեր տեսայ, ի՜նչ անմեղ կանայք՝ ի՜նչ անմեղ տղայք տեսայ որ ոչ իրենց կորուստը միայն կ՚ողբային՝ այլ գազանաբարոյ Արաբայւոց սուրերու և շղթայներու տակ կը հեծէին. իմ աչքերս թափուած անմեղ արեանց վրայ լալիրծ սահեցան. քաղաքներ՝ աւաններ՝ գիւղեր որ շէն և ուրախ տեսեր էի, ագռաւներու՝ բուերու և գիշակեր գազանաց բնակարան տեսայ։ Հարցո՛ւ քու խղճմտանքիդ, միթէ՜ քու այդ ձեռքդ մաքուր է այդ արիւններէն, քու միտքդ մասնակից և պատճառ եղած չէ՞ կանանց և որդւոց դառն արտասուաց։ Բայց կ՚ուզես իմանալ թէ ո՞վ եմ. իմացի՛ր. ես և իմ ընկերներս Սասունցիք եմք. Խութեցի Յովնան կ՚ըսեն ինձ։

— Սակայն ինձմէ ի՜նչ կ՚ուզես դու, մա՛րդ, ես ի՞նչ ըրած եմ քեզ, ես ի՜նչ ըրած եմ քու Խութեցւոցդ, ի՜նչ է որ դատաստան ունիմ կ՚ըսես. եթէ դատաստան ունիս ո՞ւր են դատաւորներդ, ո՞ւր վկաներդ, ո՞ւր դատախազքդ։

— Մինչև որ քու ընկերներդ չի հասնին,

մինչև որ դատախազներդ չի հանին՝ կարելի չ՚է
որ դատաստանի սկսինք։ Բայց նոքա էլ չ՚են
ուշանար, հիմա սուրհանդակներ կը հանենք
մենք զամենքն ըստ կարի ժողվելու, և այսպէս
արդարութիւնը պէտք է տեղը երթայ։ Արդա-
րութիւնը դժուժնէ առաջ։ . . .

Այս միջոցիս երիտասարդ աբեղայ մը ներս
մտաւ ձեռքը երկու թուղթ մաքուր գրուած
և Յովնանու տուաւ. իսկ նա զգուշութեամբ
կարդալէն վերջ, «Շատ բարի» ըսաւ և ծոցէն
ոսկի մատանի մը հանեց, թուղթերը նոյն-
պէս նամակի ձևով ծալեց և վրայները նոյն
կնիքով կնքեց։ Երբ այս գործողութիւնները
լմնցուց՝ ելաւ և մօտենալով Մուշեղայ որ ամեն
բան կասկածոտ աչօք կը դիտէր՝

— Ահա՛ քու մատանիդ որ կարծէիր թէ
աւազակներն յափշտակեր են, նոքա լաւ տղաք
էին և ինձի բերին որ քեզ դարձնեմ, միայն
որպէս զի արդարութիւնը տեղը գտնէ պէտք էր
այս մատանին այս երկու թղթերը կնքէր։

— Իմ անունովս երկու թուղթ կնքել կը հա-
մարձակի՞ս, և չ՚ե՞ս ամաչեր և ինձ հետ ար-
դարութեան վրայ կը խօսիս։ Ի՞նչ են այդ նա-
մակները։

— Այդ նամակները քու երկու բարեկամացդ
են գրուած որ գան քեզի օգնեն այս միայնու-

թեանդ մէջ, և թերևս քու արդարանալդ դիւ-
րացնեն. և ես գաղտնիք մը չ՚եմ համարիր և
չ՚եմ ուզեր ծածկել քենէ. ահա կարդամ հաս-
ցէները. «Հասցէ գիրս Աստուծով ՚ի քաղաքն
Արճէշ առ Վահրամ քաջ իշխան յազգէն Տրու-
նեաց ամենայն յաջողութեամբ։» Ահա միւսն էլ.
«Հասցէ գիրս Աստուծով ՚ի քաղաքն Արճէշ առ
քաջ իշխանն Վահրամ յազգէն Գնունեաց թիկ-
նապահ Արծրունեաց նահապետին ամենայն յա-
ջողութեամբ։»

Այս երկու անուններն ու հասցէները լսելով
Մուշեղ՝ իւր կարմրած երեսները թալկացան՝
կանաչցան և ցուրտ քրտինք մը ճակատն եկաւ.
բայց իմանալու փափաքը թէ ի՞նչ կար այն
նամակներուն մէջ զօրանալով,

— Բա՛ց սա նամակները իմանամ ի՞նչ է
գրուած, ըսաւ։

— Նամակները կնքուած են, չ՚են բացուիր,
պատասխանեց Յովնան ծանրութեամբ, բայց
օրինակները կան, գնա՛, հայր, ըսաւ աբե-
ղային, բեր օրինակները որ իշխանը գոհ
ըլլենք։

Խոր լռութիւն մը տիրեց սենեկին մէջ, և
ամեն աչք այս երկու մարդկանց կը նայէին.
Մուշեղի որ դալկահար նստած դժուարութեամբ
շունչ կուտար կ՚առնուր և Յովնանու որ խիստ

և անաչառ արդարութեան արձանի պէս կանգուն իրեն կը նայէր։

Հազիւ թէ քանի մը րոպէ անցաւ և ահա աբեղայն եկաւ թղթին օրինակաւ և Յովնանու հրաւիրելովն սկսաւ կարդալ բարձրաձայն.

«Ես Մուշեղ Վահեւունի, իշխան Կոգ գաւառի, կ'իմացնեմ քեզ քաջազն իշխանիդ Վահրամայ Տրունւոյ որ կարևոր գործի համար հասնել կամ Արճէշու վերևը Մծոփայ վանք. մեզ համար այնպիսի խնդիր կայ՝ որ կամ կեանքերնիս կորսնցնենք և կամ ամենամեծ իշխանութեանց հասնինք. աճապարէ՛, ե՛կ, վասն զի քեզ և Վահրամ Գնունւոյ կ'սպասեմ՝ որ միատեղ և համաձայն շարժինք։ Քաղաք և չէն տեղ մեր տեսութիւնը խօսքի և կասկածի առիթ կրնայ լինել, այսպիսի առանձին տեղ յարմարագոյն դատեցի. ուստի մ'ուշանար, վասն զի դանդաղելու ժամանակ չ'է։ Ողջ լեր։»

— Կը տեսնես, իշխան, ըսաւ որ քու կնիքդ՝ համախոհ և համակամ բարեկամներդ քովդ ժողվելու համար գործածեցի. ես չ'եմ ուզեր որ այսպիսի բարեկենդանի օրեր տխուր և միայնակ անցնես։

Բայց այս խօսքերը չ'իմացաւ անգամ Մուշեղ, վասն զի խոր մտածութեան մէջ էր թաղուեր։ Ուստի զինք այն սենեկին մէջ թողլով,

Յովնան ուրիշ սենեակ մը մտաւ, ուր առանձին մարդ մը միայն նստած էր և մեզ քաջածանօթ Խոսրով Ակէացի։

— Եղբա՛յր, այս ի՞նչպէս տեղ բերել տուիր զիս գիշերով, ըսաւ ծիծաղելով. ուսկի՞ց գտար այս գաղանայ բոյնը և կիսակործան քաղաքը այս եղեգնուտին մէջ։

— Չ'ե՞ս գիտեր, եղբայր, յիշատակարանաց երևելի Ոձ քաղաքն է այս։ Բայց հիմա թողունք անցեալը, նայինք ներկային. իմացա՞ր թէ ո՛վ հիւր ունիմ այս տեղ։

— Ո՛չ, հիմա եկայ Սասնոյ. ամիսն անցաւ որ զ.քեզ չ'եմ տեսեր. և անգործութենէ սկսել էի ձանձրանալ։

— Մուշեղ Վահեւունին կալանաւոր ներսն է։

— Այդ չարագործը՞, այդ արիւնարբու գազանը որ բոլոր Վասպուրական արեան և սուգի համակեց։

— Նա ինքն. բայց երկու ուրիշ ընկեր էլ ունի։

— Երկու Վահրամները։

— Այո՛. նոքա էլ պէտք է ձեռք բերենք։

— Ի՞նչպէս, ո՞ւր են։

— Արճէշ են երկուքն էլ։ Բայց այդ հոգ մի՛ ընել, միայն դու պէտք է մեզի ընկերանաս, և այդ բանին համար քեզ ուզեցի։

— Ես պատրաստ եմ ուր որ գնաս, քեզ հետ գնալու.

— Բայց պէտք է քիչ մը զգեստներդ նայինք։

Եւ այս ըսելով Յովնան՝ բացաւ դարան մը որ պատին թանձրութեան մէջ շինուած էր եւ դուրս քաշեց կաշի մաքուր պարկ մը, ուր մէկ քանի իշխան զարդարելու չափ մաքուր զգեստներ կային։

— Ահա անխիղճ կրնաս գործածել ասոնք, Բունաշէնի աւարէն են. զատէ՝ ջոկէ՝ յարմար եկածն ընտրէ և հագիր։

Երբ այս գործողութիւնն էլ կատարուեցաւ,

— Դու այս գիշեր հանգիստ քուն եղիր, միայն վաղն առաւօտ կանուխ կ՚ելնենք ճամբայ, հոգ մ՚ընէ՛ր, քեզ համար պատուական և զարդարուն ձի էլ ունիմ, ըսաւ Յովնան։

— Ձիու պէտք չի կայ, եղբայր. ամեն տեսակի կրնամ յարմարիլ։

— Բայց դու պէտք է մեր իշխանը լինիս և Մուշեղ Վահեւունի անուանիս, մենք էլ պէտք է մեր Խութեցի զգեստները թողունք և իշխանի թիկնապահի կերպարանք առնունք։ Ես երթամ տղոց զգեստները կարգի դնեմ՝ պատրաստեմ, բարեկենդանի շաբաթ է, տղաքը մեղք են, պէտք չ՚է որ այդչափ յոգնին և ծոմ պահեն։

Պէտք է նաև ընտրեմ որոնք մեզի հետ պիտի գան՝ որոնք այստեղ կալանաւորը պիտի պահպանեն։

— Բայց աւելի լաւ և ապահով չ՚է՞ Սասուն ղրկել այդ անզգամը։

— Այո՛ որ ժողովուրդը վայրկենին պատառ պատառ ընէ։ Գիշեր բարի, Խոսրով իշխան։

ԳԼՈՒԽ ԺԴ.

Դ Ա Տ Ա Ս Տ Ա Ն.

Այդ ձմեռ ժամանակին դժուար էր ճամբան ո՛ և իցէ մարդու համար, բայց մեր Սասնցւոց համար ի՞նչ էր ձիւն՝ սառ՝ ցուրտ. մանաւանդ որ Յովնան իւր խիստ սովորութեան դէմ բարեկենդանի ճանապարհորդութիւն մ՚ընել կ՚ուտար. միս՝ հաւ՝ ձուկ անպակաս էին ճաշին կամ ընթրեաց, և որպէս զի խեղճ Հայ գիւղացին չի նեղի ու գաղանիքը լաւ պահուի ըստ կարելւոյն կը ջանար աւերակաց մէջ գիշերել։ Ամեն տեղ Մուշեղ Վահեւունին էր որ կը ճանապարհորդէր հարիւրի չափ թիկնապահով։ Երբ գունդը Բաջբերունեաց սահմանը հասաւ, երկու երագոտն սուրհանդակ որոշեց Յովնան որ երթան իջնեն Արճէշ և տան նամակները

տէրերնուն՝ նախ" գիրենք լաւ կարգացնելով թէ ի՛նչ պիտի պատասխանեն երբ իրենց հարցաքննութիւն լինի։

Ուստի ամենայն զգուշութեամբ առանց կասկած տալու՝ Վահեւունեաց իշխանը հասաւ Մեծոփայ հռչակաւոր վանքը։ Յովհան առաջ անցնելով մտաւ ներս հիւրընկալութիւն խընդրելու իշխանին կողմէն և տեղեկացաւ որ ոչ ոք չ՚էր ճանչեր անձամբ Մուշեղ Վահեւունի, դարձաւ քանի մը կրօնաւորներով ՚ի դիմաց վանահօր հրաւիրելու իշխանը. և Խոսրով արդէն և ՚ի բնէ իշխանազուն՝ լաւ կը կատարէր իւր պաշտօնը։ Իսկ Յովհան քանի մը բեռնակիր գրաստներ առած և քանի չափ իւր կողմիներէն՝ կ՚անցնէր այն լեռները որ Քաջբերունեաց գաւառը Արճէշի դաշտէն կը բաժնեն և այդ լերանց հարաւային ստորոտը Յարութիւն գիւղ կը թողէր կէսը իւր մարդկանց և միւսով կ՚իջնէր Արճէշ՝ կը բեռնաւորէր իւր գրաստները պաշարով՝ պարէնով, ու գտնելով իւր երկու սուրհանդակները որ իրենց պաշտօնը կատարած էին՝ նամակները տուած և խոստում առած թէ նոյն երեկոյին պիտի ճամբայ ելնէին իշխանները երթալու համար Մեծոփ։

Յովհաննու փափաքն այն էր որ փախստեան ճամբայ չի թողու այս երկու Վահրամեներու,

ուստի շուտ մը դարձաւ Յարութիւն գիւղ և կ՚սպասէր. երբ տեսաւ թէ նոքա ութ տասն թիկնապահով մեծ գիւղն անցան, ինք իւր գրաստներով և մարդիկներով հեռուէն իրենց հետևեցաւ, և լեռներու կիրճերը իր տղոցմէն քանի մը հոգի թողուց որ Վահրամեանց գընդէն մարդ չի կարենայ ետ դառնալ Արճէշ։ Եւ ինք լեռներու կարճ և անցնալի ճամբայներէ առաջ անցնելով դարձաւ՝ հասաւ և մտաւ Մեծոփ եկաւորաց ընդունելութիւնը պատրաստելու։

Խոսրով և Յովհան միախորհուրդ որոշած էին թէ ի՛նչպէս պիտի ընդունին իշխանները. հայ արիւն չի թափել իրենց գլխաւոր պայմանն էր. ուստի կասկած չի տալու համար՝ Խոսրով գրեթէ անզէն և երկու ծառայիւք գիրենք դիմաւորեց վանքի դրան առաջ փոխանակ Մուշեղայ որ տկարութեան պատճառաւ քանի մը ժամ կրնար ուշանալ։ Խոսրովու կերպարանքը մեր երկու իշխանաց թէպէտ կասկածելի, որովհետև գիտէին թէ ինչպէս Հռիփսիմէ մեծ Տիկնոջ հաւատարիմն էր, բայց տեսնելով զինքն անզէն երկու իրեն պէս անզէն ծառայիւք, մտան ներս և իրենց պատրաստուած վանքի ամենէն փառաւոր սենեակը նստան։ Ցուրտ եղանակին՝ ուղևորութեան յոգնութեան փոխարէն լաւ տաւ-

քուկ սենեակը՝ իրենց՝ համեղ ճաշիկը ուր զանազան ընտիր ըմպելիք առատօրէն շարուած էին և ախորժ կը բերէին, Խոսրովու օրինակը՝ իրեն ուրախ զուարթութիւնը՝ իւր կեղծաւորութենէ հեռու լայն ճակատը՝ իւր բարձրաձայն ծիծաղը՝ և՝ Մուշեղի միջնորդութեամբ Բուղայէ ընդունած ներողութեան կեղծ հրովարտակը որ Արաբացի լեզուաւ գրուած ծոցէն զգուշութեամբ և երկիւղածութեամբ կը հանէր և զոր ոչ ոք կարդալ կարող չէր. բոլորովին ապահովեցին մեր երկու Վահրամները, և ամեն երկբայութիւն մէկդի Թողած սկսան ուտել և խմել ամենայն վստահութեամբ սպասելով Վահևունւոյն:

Երբ գինին ամեն կասկած փարատեց՝ գլուխները տաքցան և աչքերը զուարթութեան փայլ առին, Վահևունին մօտեցաւ և Ակէացին հին բարեկամ դարձաւ: Վահրամ գինակիր ըսաւ Խոսրովու.

— Վերջապէս դու էլ մեզի հետ յուսահատեցար և այս վիճակն ընդունեցար. խելօք մարդը իւր գործն առաջ կարգի դնելու է, ես քեզի համար շատ կը կասկածէի թէ Արծրունեաց հոգւով մարմնով անձնատուր ես, բայց կը տեսնեմ թէ այդչափ յիմար չ՚ես եղեր:

— Ես ճշմարիտն ըսեմ որ այդ երիտասարդներուն երբէք յարեալ չէի, վասն զի կը տեսնէի թէ յիմար և մոլի իրենց զուարճութեանց ու մոլութեանց միայն կը հետևէին, և խորհուրդ մտիկ ընել ամենևին չունէին: Իրենց մայրը մեծ Տիկինը ես կը յարգէի իբրև առաքինի և խելօք կին, բայց իր զաւկները երբէք նորա խրատներուն ուշ չ՚էին դնէր, ուստի յուսահատած էի իրենցմէ, և կործանմունքը յայտնի կը տեսնէի:

— Դու տեղեկութիւն ունի՞ս մեզի գրուած նամակին նիւթին վրայ, հարցուց Վահրամ Տրունի.

— Գիտեմ որ Բուղայէ իրեն հրովարտակ մը եկաւ, և Մուշեղ շատ ուրախացաւ, բայց մէջի պարունակութիւնը ինք չի զրուցեց. ես էլ, (դառնալով գինակրին), գիտես, բնութեամբ հետաքրքիր չ՚եմ, չի հարցուցի, այն բանը որ յայտնի պիտի լինի՝ օր մը ժամանակին կ՚իմանամ ըսի ու անցայ: Հիմա գործի ատեն չ՚է, զուարճութեան նայինք, ըսաւ և բաժակները լցուց:

Էլ կարողութիւն չ՚էր մնացել մեր իշխանաց ոչ խմելու և ոչ շարժելու. իրենց Թիկնապահները նոյն վիճակին մէջ էին արդէն դուրսը՝ երբ ներսը կը գտնուէին իրենց տեարքը. յանկարծ ներս խուժեցին Յովհաննու առաջնորդու-

թեամբ Սասունցի խումբը, որ եկեղեցւոյն մէջ ծածկուած էին մինչև այն րոպէ, և առանց շարժման ժամանակ թողլու՝ վայրկենին մեր երկու Վահրամները կապեցին. առանց դիմադրութեան նոյնն ըրին նաև իրենց թիկնապահաց։ Երբ Ցօմէնու փափաքը ուզածին պէս կատարուեցաւ, տեսնելով որ կէս գիշեր դեռ չի կայ, հրաման ըրաւ ժողվուելու, և մօտենալով Խօսրովու որ ընկողմանեալ էր բայց արթուն, ըսաւ.

— Խօսրով իշխան, կարծեմ ժամանակ է գնալու։

— Այո՛ երբ մէկը իմ վիճակիս մէջ չի գըտնուի և ձի հեծնելու կարողութիւն ունենայ։

— Բայց դու լաւ վարուեցար, Խօսրով, և գործը իմ ուզածէս լաւ կատարեցիր։ Երթանք ուրեմն։

— Երթանք եղբայր, ըսաւ Խօսրով և թեթևելով ելաւ տեղաց Ցօմէնի օգնութեամբ, կը տեսնեմ որ դեռ կարողութիւն կայ՝ դուրսի ցուրտ օդը զիս կը կազդուրէ։

Ձին պատրաստ էր և հեծաւ Խօսրով, իսկ մեր երկու Վահրամները կէս քուն կէս արթուն նետեցին գրաստներուն վրայ լաւ կապկըպած ոչ միայն չի փախչելու համար այլ մա-

նաւանդ ոլպէս զի չ՚ընկնին։ Սոյա այս վիճակը տեսնելով Խօսրով,

— Եղբա՛յր, այդ մարդկանց չափ ես ալ խմեցի. տես թէ ի՞նչ վիճակի մէջ են հասեր։

— Այս կը նշանակէ որ, պատասխանեց Ցօմնան, դու քանի մը տեսակ գինի միայն խմեցիր, անոնք ափիօն ալ խմեցին. և լաւ է իրենց համար և մեզ համար որ Վահևունւոյն պէս գլխացաւ չ՚են տար յիմար գանգատներով, և անուշ անուշ կը քնեն այս օր ալ՝ վաղն ալ։

— Մի՛ գուցէ յաւիտենական քունն ալ քնեն։

— Աստուած չ՚ընէ, պէտք է դատաստանով դատուին դատապարտուին բարի օրինակի համար։

Հազիւ թէ ձիուն վրայ հեծաւ Խօսրով և սպատակներուն վրայ կը կշռուէր, քանի մը տղաք որ ճամբաներուն պահպանութեան համար դրած էր Ցօմէնն, վազելով եկան թէ ձիաւորաց խումբ մը կը հանէր Կերմանից կողմէն և ուղղակի վանք կուգար։

— Կերմանից կողմէն վտանգ չի կայ, բայց դարձեալ դռները գոցեցէք և մեծ պարան մը իջուցէք պարիսպն ՚ի վար սա դրան հակառակ կողմէն, ես եթէ ձայն տամ դռները բացէք, եթէ ոչ ես պարանն ՚ի վեր կ՚ելնեմ և կը մտածենք։

Այս խօսքերն արտօրնօք ըսաւ և ինք դռնէն դուրս ելաւ և դռները գոցեցին։

Եւ իրօք տեսաւ որ տաս տասներկու ձիաւոր համակ սպառազէն կուգային դէպ 'ի Մեծոփ. ձիւնի ճերմկութեան մէջ գիշերով նաև կ'երեւար իրենց սաղաւարտներուն՝ վահաններուն՝ նիզակներուն փայլը, և թէ առջևէն հսկայ մը իրենց կ'առաջնորդէր։

Իսկ Յովնան նոյն միջոցին վանքին դրան մօտ ժայռերու խոռոչներուն մէջ ծածկուած կ'ուզէր ստուգել թէ ի՛նչ մարդիկ էին որ կուգային։ Եւ այս ստուգութիւնը շուտ յայտնի եղաւ, վասն զի առջևէն գնացողը մեծ և ուժով ձայնով գոռաց.

— Վահրի՛ճ, շուտ իջիր, ձայն տուր որ դուռը բանան, տե՛ս, սառեցանք՝ շո՛ւտ ըրէ։

— Աստուած քեզ բարին տայ, Գուրգէն իշխան, դո՞ւ ես, ըսաւ Յովնան ժայռերուն մէջէն դուրս ցատկելով։

— Յովնանու ձայնն է. կեցցե՜ս Յովնան. և Գուրգէն իջաւ ձիէն։ Այս ի՜նչ սքանչելի ժայռեր են որ քեզի պէս հրաշք կը ծնանին. այս ցուրտին՝ այս սառին ի՜նչ կ'ընես հոս, եղբայր, գիշերով։

— Քեզ կ'սպասեմ, բայց ժամանակ չէ կորսնցնենք, Վահրիճ տասը տարի էլ դուռը

զարնէ, չ'են բանար։ Դու մէկդի, Վահրիճ, տղա՛ք, բացէ՛ք, ես եմ։ Եւ դուռը վայրկենին բացուեցաւ։

— Աս ի՞նչ կը նշանակէ, եղբայր, կ'ըսէր Գուրգէն տեսնելով հարիւրի չափ մարդիկ, Սասուն հոս պարպուեր է կարծեմ։

— Հիմա դու այն ինձ գրուցէ թէ ո՞ր կողմ կ'երթաս։

— Յունաց կողմ կ'երթամ։

— Ո՞ր կողմէն։

— Մուշի վրայէն։

— Շատ բարի, միատեղ կ'երթանք ուրեմն։ Ելնենք ճամբայ։

— Հիմա՞, Աստուած պահէ. մենք տաս ժամ է որ ձիու վրայ ենք։ Դու որ դռներ բանալ գիտես մեզ քիչ մը ուտելիք՝ քիչ մը կրակ և հանգստեան խշտի պէտք է ճարես։

— Իմացայ ըսաւ Յովնան, և դառնալով՝ տղա՛ք, այս գիշեր հանգչինք և վաղը ճամբայ կ'ելնենք. կալանաւորները վար առէք և ներս բերէք։

Շուտ մը սենեակը մաքրեցին, կրակը փայլեցուցին, և Գուրգէն ու Խօսրով իրար բարևեցին։ Յովնան դուրս ելաւ ոչ միայն կերակուր հոգալու իւր նոր հիւրերուն՝ այլ նաև կալանաւորներուն վիճակը տեսնելու, որպէս զի յան-

կարծակի հրաշք մը իրենց փախստի դուռ չի բանայ։ Վերջապէս ամէն բան ապահովելէն և կարգի դնելէն ետքը երկու իշխանաց քով եկաւ՝ նստաւ։

— Եղբա՛յր, դու կալանաւորներու խօսք ըրիր, Խօսրով իշխանի երբ հարցնեմ՝ կը ծիծաղի և կ՚ըսէ թէ Յովհաննու վերաբերեալ խնդիր մ՚է, նա՛ միայն կրնայ պատասխանը տալ։ Կ՚երևի թէ քանի մը Արաբ աւազակներ բռներ կապեր ես, այդ անպիտանները կապել մեղք է, առջի հանդիպած ծառէն պէտք է կախել։

— Եթէ այդպիսի սովորական աւազակներ լինէին, այնպէս կ՚ընէի և ժամանակ չէի կորսնցներ, ինչպէս շատերուն ըրի. բայց սոքա Հայ իշխաններ են և ես ուրախ եմ որ դատաւոր մը աւելի ձեռք բերի։

— Յայտնի խօսէ, Յովհան, դու միտքդ լաւ գիտես բացատրել։

— Վահրամ Տրունի և Վահրամ Գնունի՝ Արծրունեաց Աշոտոյ մատնիչներն են իմ կալանաւորներս, և ես ուրախ եմ որ անկողմնասէր և արդարակորով մարդ մ՚էլ աւելցաւ զանոնք դատելու համար։

— Այդպէս շուները դատելն ի՞նչ է։ Վանքին պարսպէն կախել տուր երթայ։

— Նախ յանցաւոր լինիլը պէտք է քննուի և

վճռուի, վերջը կախելու տեղը գիտեմ ես։ Հիմա թողունք այս խնդիրը։ Զրուցէ թէ Յունաց երկիր կ՚անցնիս ի՛նչ ընելու համար։

— Ազգին այս վիճակին մէջ տեսնելով ես թէ հայութիւնը կ՚ոչնչանայ՝ երկիրը կը քանդուի, սպասեցի որ Աշոտ Բագրատունի շարժում մը ընէ, և ես էլ ձեռքէս եկածը ընելու աշխատիմ, բայց իմանալով թէ նա և իւր հայրը Բուղայի հետ եթէ գործակից և արբանեակ էլ չ՚են, տեսակ մը հանելուկ են ինձ համար անբացատրելի, որոշեցի որ Յունաց երթամ և տեսնեմ թէ կարելի՞ է օգնութիւն մը՝ յոյս մը ճարել այս խեղճ ազգին համար. ահա իմ նպատակս. իսկ եթէ այն էլ չի յաջողի՝ այն ժամանակ կը մտածեմ թէ ի՞նչ պէտք է ընեմ։ Դու որ խելօք մարդ ես, զրուցէ՛, գիտե՞ս բան մը որ դարման լինի այս վիճակին։

— Եթէ գիտնայի՝ կը հաւատա՞ս թէ լեռներ՝ ձորեր՝ գետառներ կ՚անցնէի երեք դաւաճան պատժելու համար։

— Լա՛ւ, ուրեմն ուտենք և քնենք, վաղն առաւօտ ճամբայ ելնելու համար։

Եւ այնպէս էլ ըրին. վանահայրը որ հանդարտ ծերուկ մ՚էր, ամենայն սիրով Երթաք բարով, Աստուած հետերնիդ ըլլի, ըսաւ։ Ինչպէս անարգել գնացին՝ իրենց նպատակին հասան,

Նոյնպէս անարգել դարձան և մտան մեզ ծանօթ քաղաքը։ Բաց 'ի երկու կալանաւորներէ որ շփոթած իրենց գլուխն եկածին վրայ չէին գիտեր թէ ինչ էր և ո՛ւր պիտի հանգէր այս վիճակը, ոչ ոք տժգոհ չէր։ Վահրիճ անգամ որ Յովհան տեսնելուն մեծ կասկածի մէջ էր իր ձիուն համար, երբ տեսաւ որ նա գլուխն առած՝ հետեւակ առջևէն կ'երթար միշտ, շատ գոհ էր, և Յովհաննու հետ հաշտ բոլոր սրտանց։

Մուշեղ և երկու Վահրամները մի և նոյն սենեկին մէջ բանտարկուեցան և երկրորդ օրը Սասնոյ լեռը ապաստանեալ ութ տասը իշխանաւոր մարդիկ, նոյնչափ մ'ալ երևելի գիւղապետք, շրջակայ Վանաց առաջնորդ.ք և մեզ ծանօթ Գուրգէն և Խոսրով ամէնքն ատեան կազմեցին ու նստան։

Հոն բերուեցան Մուշեղ Վահեւունի՝ Վահրամ Տրունի և Վահրամ Գնունի թիկնապահ մէկ կողմէն, և Յովհան Խուլթեցի իբրև դատախազ ամբաստանեց այս երեքն ալ թէ ինչպէս առքա Նկանի բերդին պաշարման ժամանակ գաղտնի պատգամաւոր և նամակ ղրկեցին Բուղայի խոստանալով մատնել զԱշոտ Արծրունի և բերդը նորա ձեռքը յանձնել և թէ ինչպէս նոյն նամակին մէջ մատնութիւնը յետին ծայր վատութեան հասցնելով իմաց կուտային թէ

Գուրգէն Աշոտոյ եղբայրը ո՞ւր կը գտնուէր և ի՛նչչափ զօրք՝ զօրութիւն և ինչ բերդեր ունէր։ Կ'աւելցնէր նաև Յովհան իւր ամբաստանութեան մէջ և երկայն ու տեղն 'ի տեղ կը պատմէր թէ ի՛նչպէս պաշարման ատեն Աշոտոյ հրամանները կը խարդախէին և չ'էին կատարեր, և թէ երբ Աշոտ իմանալով իրենց կեղծաւորութիւնն ու նենգութիւնը և ուզելով հեռացնել զիրենք ամրոցէն հրամայեց երթալ թշնամի զօրավարին հետ խօսիլ և կամքն իմանալ, նոքա յայտնելով իրենց դաւաճանութիւնը և կեղծաւորութեան դիմակը վար առնլով՝ «Դու պէտք է երթաս և խօսիս իրեն հետ որպէս զի ամբաստանութեան կասկածը վերնայ վրայէդ» պատասխանեցին. և երբ Աշոտ ամենայն քաղցրութեամբ իւր բարիքները՝ պարգևները՝ սէրը կը յիշեցնէր, իւր առատաձեռնութիւնքը յուշ կը բերէր՝ որ իւր գանձին աղքատութեան մինչև պատճառ եղած էին, երբ՝ այսպիսի տարաձայնութեան հետևանք ցոյց կուտար թէ իւր բոլոր ընտանեաց և երկրին սրոյ և գերութեան պատճառ պիտի լինէին, դոքա՝ այդ երեքը՝ իրենց քանի մը միաբանելովքը՝ ամենայն խստասրտութեամբ կը պատասխանէին. «Չ'ենք կարող թագաւորական ահագին զօրութեան դէմ դնել. մեր բերդերը ամրացեալ չ'են բաւականին ինչ-

պէս կարծէինք, բաւական պաշար չ՚ունինք և ոչ պէտք եղածին չափ պահապան. և այս պատճառներուն համար պէտք է որ դու երթաս անձամբ Բուլղայի, որ ապստամբութեան կարծիքը վրայէդ վերնայ, և խեղճ ժողովուրդը որ գաղթականութեամբ եկել հոս ամրացել է իւր տեղ կարենայ դառնալ և երկրիս ասպատակութիւնը դադրի. վասն զի աշխարհքս ահա կործանեցաւ։ Եւ եթէ քու կամօքդ երթաս՝ թերևս շատերու և քու անձիդ օգտակար լինիս, վասն զի կարելի է որ գուցէ ակամայ երթալովդ քեզի էլ ուրիշներուն էլ վնաս հասցնես։» Դոցա այս սպառնալիքներէն ու դաւաճանութենէն պարտաւորեալ Աշոտ, մահը աչքն առնելով գնաց վիրապին, սոցա մատնութեամբ և առաջնորդութեամբ դարձեալ Գուրգէն նորա եղբայրն անձնատուր եղաւ։ Բոլոր Հայաստան գիտէ թէ ի՛նչ հետևանք ունեցաւ Վասպուրական աշխարհի համար այս երկու եղբարց գերութիւնը, ի՛նչչափ անմեղներ սրոյ և գերութեան մատնեցան, ի՛նչչափ ողորմելիներ ուրացութեամբ և հոգւոյ կորստեամբ իրենց կեանքն ազատեցին, և այս ամենքը՝ որովհետև այս երեք իշխանաւորնք գինւորական օրինաց մատնիչ եղան վատութեամբ, տիրադաւ եղան իրենց տէրը մատնեցին, իրենց բարերարներու երախ-

տեաց ապերախտութեամբ պատասխանեցին։ —

Մշոյ փախստականներէն ծեր դատաւոր մը որ ամենուն յայտնի էր իր արդարակորով բնութեամբ և ուղղութեամբ՝ հարցուց աս մեր երեք ամբաստանելոց թէ ի՞նչ պատասխան ունէին։ Իսկ նոքա երեքը միաբերան ուրացան իրենց Բուլղայի մատնութեան նամակ գրելը. իսկ միւս խօսակցութիւններն Աշոտի հետ՝ յայտնի չարակամութեան նշան համարեցան և կը պնդէին թէ Նկանի բերդը իրօք կարողութիւն չ՚ունէր դիմանալու։ Եւ քաջալերեալ, որովհետև օտար ու պատկառելի կերպարաններ կը տեսնէին դատաւորաց մէջ, սկսան ամբաստանել զՅովհան իբրև խարդախ և դաւաճան որ իրենց կենաց դէմ թշնամութեամբ գրգռուած՝ ո՜ գիտէ ուստի, զիրենք կապանաց և բանտի մատներ էր ամենայն գիւական նենգութեամբ, և իրենց ձեռաց և ոտից կապերու տեղուանքը ցոյց կուտային. իրենք իշխանազուն և նախարարական մարդիկ, այսպիսի նախատանաց մատնեալ։

Իսկ Յովհան՝ «Այո, կ՚ըսէր, երբ Արաբին կրօնական և քաղաքական բռնութիւնն իմ ազգիս վրայ կը ծանրանան, մարդկային և Աստուածային օրէնք այսպիսի մատնիչներու ձեռք խաղալիք կը դառնան, տիրասիրութեան տեղ

տիրանենգութիւն մեր հոգեւոր գլուխներէն նաեւ աւելի կը վերադասի, Քրիստոսատեաց՝ արիւնարբու եւ ուխտադրուժ Մահմետականին ու օտարին լուծը Քրիստոսի եւ ազգային պարտաւորութեանց լուծէն աւելի ընտրելի կը քարոզուի այսպիսի ժամանակ ուր Հայոց հոգեւոր Տէրն ու կաթողիկոսն անգամ Սասնցւոց քաջագործութիւնքը՝ Յուսուֆ ոստիկանին որ զԲագարատ դաւեց հոգւով եւ մարմնով՝ որ Մուշ եւ բոլոր Տարօն 'ի հուր եւ 'ի սուր մատնեց՝ որ Ս. Կարապետ նոյն վիճակին պիտի բերէր՝ Յուսուֆին արժանաւոր մահը եւ պատիժը յիմարութիւն կը վճռէր, այսպիսի ժամանակ դաւաճաններու դէմ դաւաճանութիւն՝ նենգաւորներու դէմ նենգութիւն ամեն Հայու իրաւունքն էր եւ ես՝ այո՝ ամեն ջանք 'ի գործ դրի զիրենք ձեռք բերելու համար: Կրնայի զիրենք կախել առաջին փայտէն՝ ես որ համոզուած էի իրենց եղեռանց ստուգութեան վրայ, բայց չ'ուզեցի վասն զի կը փափաքիմ որ իմ ազգս մարդկային կեանքը խաղալիք չի համարի որովհետեւ գրուած է. Մի՛ սպանաներ այլ դատէ եւ դատապարտէ: Այս իշխանները կ'ուրանան թէ գրած չ'են Բուղայի, բայց ի՞նչ պիտի ընեն եթէ ցցնեմ իրենց եւ այս ժողովքին նոյն մատնութեան նամակը իրենց կնիքներով՝ որով մատ-

նեցին Աշոտ եւ Գուրգէն եւ Վասպուրական արեամբ ողողեցին: Ահա՛ նամակը»

Եւ այս ըսելով տարաւ թուղթ մը տուաւ ծեր դատաւորին ձեռքը, որ սկսաւ բարձր եւ դողդոջուն ձայնով կարդալ նամակը՝ որուն օրինակը այսպէս էր.

«Հայոց աշխարհիս վերակացութիւնը Քեզ
«յանձնուած լինելով ինքնակալ Թագաւորէն,
«ամենքը իշխանք եւ Տեարք, կողմնակալք եւ
«կուսակալք, Քաղաքապետք եւ Մարզպետք բո-
«լոր Հայաստան երկրիս Քեզ պարտական են հնա-
«զանդութեան: Իրաւունք ունիս ապստամբները
«եւ դիմադրողները զանի՝ բանտի եւ զանազան
«տանջանօք պատժելու, որպէս զի անհետ ընես
«աշխարհէս շփոթ եւ խռովութիւն, ինչպէս
«պարտք է գործել Թագաւորաց եւ Թագաւո-
«րազանց որ Աստուծոյ կամքը կը կատարեն իր-
«րեւ հաւատարիմ ու տիրասէր ծառայք:—
«Ուստի մենք Վասպուրական աշխարհի իշխանք՝
«նախարարք ազատաց, Մուշեղ Վահեւունեաց
«ցեղէն, Վահրամ Տրունեաց ազգէն եւ Վահրամ
«Թիկնապահ իշխանին, եւ ուրիշ ազատաց գունդք
«եւ զօրականք, որ մեր ձեռքն է երկրիս հոգա-
«բարձութիւնը, գրեցինք քեզի Բուղա՝ գլուխ
«Տաճկաց զօրավարաց եւ բարձակից մեծ Թա-
«գաւորին, միայն թէ մեզ եւ մեր տոհմին եւ մեր

«երկրին բնակչաց ազատ մնալ և խաղաղու-
«թեամբ իւրաքանչիւրս իւր տան մէջ բնակիլ.
«մենք կուտանք քու ձեռքդ Աշոտ առանց քեզ
«փոքրիկ աշխատութիւն տալու. միայն թէ զմեզ
«ապստամբ չի կարծես ինքնակալ թագաւորէն
«ու քու ձոխութենէդ: Բայց պէտք է գիտել
«քեզ նաև որ իշխանիս եղբայրը Գուրգէն և
«Արծրունեաց տոհմէն շատ ուրիշներ և շատ
«բազմութիւն ազատաց՝ ազատորդեաց և քաջ
«զօրականաց Վասպուրական Տէրութեան՝ Ատր-
«պատականի սահմանը գնացին և հոն ժողվուած
«են աշխարհիս քաջերն ու կորովիքը որ սուրէ
«չ՚են վերադառնար, որ եթէ աս պաշարմունքը
«երկարի գիշերով կրնան գալ քու վրադ և մեծ
«կոտորած ու վնաս արքունի զօրաց վրայ
«հասցնեն, վասն զի նա քաջ մարդ է և պա-
«տերազմող, և իրեն հետ միաբանած զօրքը կը
«մեռնին իրենց տան՝ աշխարհքին՝ ազգին և
«տոհմին վրայ: Ունին ձեռըննին ամուր բերդեր
«ինչպէս են Ջլմար և Սրինգ և Ճախուկ, և եթէ
«բոլոր իրենց զօրութիւնը միացնեն, կրնան
«քեզի մեծ աշխատութիւն հասցնել և քու բո-
«լոր խորհուրդներդ արգիլել, և մինչև ամօթով
«ու կորանօք զքեզ ետ դարձնել: Ինչպէս քեզմէ
«առաջ եկած արքունի հազարապետին ըրին,
«վասն զի չի կրցաւ ասոնց դէմ կենալ, վասն զի

«այս Հայոց զօրաց տասն հատին հարիւր մարդ
«դէմ չ՚է կարող դնել:»

— Ահա՛ ըսաւ, ծերունի դատաւորը, այս երեք իշխանաց կնիքները. Մուշեղ Վահեւունի, Վահրամ Տրունի և Վահրամ Թիկնապահ: Տեսէք ու դատեցէք:

— Առէք ասոնց մատանիները՝ բաղդատեցէք ատ կնիքներուն հետ և տեսէք թէ կա՞յ խարդախութիւն, գոչեց Յովհան:

Երբ մատանիներն առնուեցան՝ կնիքները բաղդատուեցան և քննող աչքեր ճշգրիտ՝ յար և նման գտան, ցոյց տուին նաև ամբաստանելոց՝ որ աւելի մեռեալ էին քան կենդանի և խօսք չի կար բերաննին: Ան ատեն Յովհան կրկնեց:

— Սոքա ամբաստանեալ են և ես դատախազ, մենք այս տեղ գործ չ՚ունինք, ձեզ կը մնայ դատել, հարք և վանահայրք Հայաստանեայց Եկեղեցւոյ, իշխանք, դատաւորք և գիւղապետք Հայաստան աշխարհի, եթէ արժան կը դատիք և արդար համարիք այս երեք մարդիկը, մենք Սամցիքս, թէպէտ արիւն քրտինք թափեցինք զիրենք և այս վկայաթուղթը ձեռք բերելու, դարձեալ զիրենք կը թողունք արձակ երթալ ՚ի խաղաղութիւն, իսկ եթէ ուրիշ կերպով վճռէք, դարձեալ մեզի պարտք կը համա-

րինք ձեր վճիռը ամենայն ճշգրտութեամբ մինչև վերջին կէտը 'ի գործ դնել։

Եւ ակնարկի վրայ, դուրս ելան երեք իշխանք և ինք իւր Սասնցիններով միատեղ։

Տարօնոյ առաջնորդ և նախագահ ժողովքին նստեալ Արքեպիսկոպոսը, որ մինչև այն րոպէ բերան չ՛էր բացեր.

— Ո՞հ, սարսափելի մարդ է այդ Յովհան ըսաւ։

Իսկ ծեր դատաւորը առանց այս բացագանչութեան ուշ դնելու, համառօտեց դատաստանական եղելութիւնքը և մէկիկ մէկիկ հարցուց թէ «Այս երեք անձինքը՝ Մուշեղ Վահեւունի՝ Վահրամ Տրունի և Վահրամ Գնունի թիկնապահը՝ Աստուծոյ առաջ և արդար խղճիւ յանցաւոր և մահու կը համարէին իրենց իշխանին և դաւաճան հայրենի երկրին ու պատճառ կոտորածի և աւերման Վասպուրական աշխարհին.» և ամէնքը երդումով աջերնին Աւետարանին վրայ դրած՝ ձախը սրտերնուն վրայ խոստովանեցան թէ «յանցաւոր և մահու էին՝ հաւասար ուրացելոցն Մերուժանայ Արծրունւոյ և Վասակայ Սիւնւոյ և Յուդայի Իսկարիովտացւոյ։» Ան ատեն ծերը դարձեալ հարցուց. «Ի՞նչ պատժոյ արժանի կը համարէք այս յանցաւորները։» Դարձեալ նոյն ձևով պատասխանեցին միաբան

«Մահու»։ Բերել տուին ատենադպիրը՝ երիտասարդ աբեղայ մը և ծերը տուն կուտար և նա կը գրէր վճիռը, երբ վճարուեցաւ ամէն բան և ստորագրութիւնք, ու մեծաւ մասամբ ստորագրութեանց տեղ խաչանիշք դրուեցան, հրաման եղաւ որ ամբաստանեալք և բոլոր ժողովուրդը ներս մտնէ։ Եւ ծեր դատաւորը կարդաց վճիռը.

«Մեք, ներքոյ ստորագրեալքս, յամի Տեառն ութ հարիւր յիսուն և երկու և Հայոց թուականին երեք հարիւր մի, և Մեհեկի ամսոյ երեք, ժողովեալ 'ի Տարօն 'ի քաղաքն Ոձ, քննեցինք առաջի Աստուծոյ Մուշեղ Վահեւունի, Վահրամ Տրունի և Վահրամ Գնունի թիկնապահ, և ակներև՝ անսխալ ապացոյցներով յայտնի եղաւ մեզ թէ սոքա երեքը միաբան գրեալ և կնքեալ նամակաւ առ Բուղա մատնեցին իրենց իշխանը Աշոտ Արծրունի 'ի կապանս և 'ի գերութիւն, և Վասպուրական երկիրն 'ի հուր և 'ի սուր. վասն այնորիկ մենք զիրենք արժանի դատեցինք մահու և այս վճիռն ու նորա գործադրութիւնը յանձնեցինք Յովհաննու Խութեցւոյ, ընտրեալ զօրավար Սասնոյ գաւառին՝ որ ո՛ւր տեղ և որ կողմ արժան և յարմար դատի՝ այս մեր պատժոյ վճիռն 'ի գործ դնէ յօրինակ և 'ի զգուշութիւն չարագործաց և միամտաց։»

Երբ ամենքը սիսան ցրուիլ, Գուրգէն որ խոր մտածութեան մէջ էր, մէկ կողմ առաւ ծեր դատաւորը առանձին և ծոցէն փոքրիկ նամակ մը հանելով, «Հա՛յրիկ, ըսաւ, սա նամակին գիրը՝ և այդ դաւաճան մահապարտաց առ Բուղա ղրկուած գիրը թէպէտ փոխուած՝ իրարու չ'ե՞ն նմանիր. խնդրեմ, մէկ մը քննէ, վասն զի դու փորձ մարդ ես։» Ծերը երկու թղթերը քով քով դնելով՝ երկար քննութենէ մը վերջ. «Որդեակ, հարիւրին իննսուն և ինն հաւանութիւն կայ՝ թէ սա երկու նամակին գրողն մի և նոյն մարդն լինի, թէպէտ ջանացեր է որ գիրը ծամածռէ։ — Շնորհ ունիմ քեզ, հայրիկ, ըսաւ Գուրգէն և դուրս ելաւ. Վահրիճի աչք ըրաւ որ գայ, և առանձին սենեակ մը քաշուելով.

— Վահրիճ, դու պէտք է որ ճարպիկութեամբ սա մահապարտներէն իմանաս թէ որո՞ն գրել տուին այս Բուղայի նամակը։ Քե՞զ տեսնեմ։

— Շատ բարի, իմ պարտքս լինի այդ, միայն թէ Յովնանու պէտքէ իմացնես որ հրաման տայ ինձ ազատ թողնել մտնելու նոցա քով, վասն զի այդ Սասունցիք՝ բաց այդ մարդէն ուրիշ ոչ ոք չ'են ճանչցեր։

— Հա՛, ըսաւ Գուրգէն։

ԳԼՈՒԽ ԺԵ.

ԱՐՏԱՆՈՒՇԻ ՎԱՆՔԸ.

Այս մեր պատմութեան ժամանակները, Հայաստանի արևմտեան ծայրերը, Յունաց բաժնին Ճորոխ գետի ափանց վրայ ուր Արտանուշի վտակը անոր կը խառնուի, կուսանաց վանք մի կար Բագրատունի իշխանաց շինութիւն։ Վանք՝ այսինքն բերդ իւր բարձր պարիսպներով՝ իւր աշտարակներով՝ բուրգերով, բլրոյ մը վրայ շինուած որ երկու ջրերու միացած տեղը թերակղզի եղած արդէն զօրաւոր դիրք ունէր։ Պարանոցը որ ցամաքի հաղորդակցութեան կապն էր՝ բերդի երկաթապատ դուռն էր դրուած, որուն շրջապատը շինութիւնք կային ուր բազմութիւն զինեալ սպասաւորաց և զօրականաց վանքին ծառայութեան և պաշտպանութեան պաշտօնն ունէին։ Վանքը հարուստ էր վասն զի Բագրատունի իշխանք շրջակայ երկրին եկամուտը իրեն սահմաներ էին, և մեծ Մայրապետը գրեթէ բացարձակ իշխանութիւն մը կը վարէր նաև Սմբատաւանի և նորա գիւղօրէից վրայ որ քանի մը մղոն միայն հեռաւորութի՛

ունէր վանքէն: Մեծ մայրապետը գրեթէ միշտ Բագրատունեաց ցեղէն օրիորդ մը կամ այրի տիկին մը կը լինէր, որ կամ իր ազատ կամօք կամ ակամայ պարագաներէն բռնադատեալ, հոն հանգիստ՝ և թէպէտ առանձնացեալ կեանքի դատապարտուած՝ բայց միշտ մեծ յարգանք և ակնածութիւն կը վայելէր թէ Հայ՝ թէ Վրացի և թէ Յոյն մերձակայ իշխանաց և ժողովրդոց:

Վանքի կեդրոնը շինուած էր եկեղեցին՝ բաւական ընդարձակ՝ փառաւոր և սիւնազարդ, ուր ժամերգութիւնք և սաղմոսերգութիւնք սահմանեալ ժամերու միշտ կը կատարուէին ըստ առուր պատշաճի: Սեղանատունը նորաշէն՝ քանդակներով զարդարեալ իշխանական պալատի յարկ կը կարծուէր, քան թէ մենաստանի տխուր կերանոց, նոյնպէս գեղեցիկ էին ժողովարանք կուսանաց և դահլիճք, պարկեշտ՝ բայց վայելուչ նոցա մենարանք, պարկեշտ մանաւանդ նոցա կենցաղավարութիւնը և առաքինութեան համբաւը:

Քանի տարի էր որ Վասկանուշ Բագրատունի Օրիորդը Մայրապետ եղած էր կուսանաց. իր իմաստուն կառավարութեամբ խաղաղութիւն և երջանկութիւն կը տիրէին ոչ միայն վանքին մէջ՝ այլ բոլոր փոքր շրջակայքը ուր իւր ձեռքը կը

հասնէր: Ինչպէս վանքին մէջ հարստահարութիւն չի կար՝ նոյնպէս հարկատու գիւղօրէից մէջ արդարութիւն կը տիրէր վասն զի ամենքը կոյս իշխանուհւոյն աղերսագիր կրնային հասցնել: Վա՜յ էր այն անձին որ խեղճի մը բողոքը խզդէր և իր աղերսը արգիլէր:

Հարուստ հայրենի ժառանգութեամբ և միշտ չափաւոր և խնայող իւր ծախուց մէջ, գեղեցկացուցեր էր վանքը շինութեամբ, բարեկեց ըրեր էր նոցա կեանքը որ իւր իշխանութեան տակն էին, և ոչ ոք կար կուսանաց մէջ որ ակամայ կրօնաւորութեան լուծը տանէր. և կ՚արձակէր կուսանքը իրենց հայրենական տները, կամ սխալմանց կը ներէր որ աններելի կը համարէին շատ կրօնաւորք, մեղադրողաց նա կը պատասխանէր թէ Քրիստոսի «լուծը քաղցր և բեռն փոքրոգի» պիտի լինի և թէ հրամայած է «կարողին միայն տանել:»

Վասկանուշ իւր պարզ և սև հագուստներուն մէջ և իւր սպիտակ քողին տակ վայելուչ կերպարանքով և հասակաւ՝ թէպէտ քառսունը հինգն գտած՝ եռեսուն և հինգ կ՚երևէր: Իւր գեղեցիկ աչքերուն վսեմ նայուածքը պատկառանք կ՚ազդէին և մեծ ու փոքր ակնածութեամբ իրեն կը մերձենային: Թէպէտ միշտ զբաղած՝ ոչ երբէք իւր կրօնական պարտքերէն

կը պակսէր, այլ կոչնակին ձայնին հնազանդ՝ միշտ եկեղեցին կը գտնուէր ներկայ սաղմոսերգութեանց, և միշտ սեղանատունը հասարակաց սեղանը կը ճաշէր հաւասար ամենուն։ Իր ծանր և ազնիւ վարմունքը և առաքինի օրինակը պաշտելի էակ մը ըրած էին զինք իւր կուսանաց։

Այն ձմեռուան մէջ որ Հայաստանի կէս մասը Արաբական բարբարոսութեան ոտնակոխ եղած կ'ողբար և միւս մասը ամառուան համար կը սարսէր, Վասկանուշ Տարօնոյ և Վասպուրականի փախստականներէ կ'իմանար իր հայրենի երկրին վիճակը և աւերածը. և երբ այն մտածութեամբ իւր պատուհաններէն Արտանուշի և Ճորոխի փրփրալից խառնուրդը կը դիտէր, ոտքի ձայն լսեց և դարձնելով գլուխը տեսաւ որ վերակացու կոյս մը մեծ կնիքով նամակ մը խոնարհաբար իրեն ներկայացուց։ Կնիքը զննեց, նամակը բացաւ և աչք մը ձգելով գրութեան վրայ՝ կամարաձև յօնքերը շարժեց.

— Հոգևոր Տէրը մեզ շնորհք կ'ընէ՝ Սիւնեաց երկրէն կոյս մը մեզ կ'ուղարկէ։ Տեսա՞ր զնա, քոյր իմ, հարցուց. և այս պարզ խօսքերուն իւրաքանչիւրն հեգնութիւն մ'էր, և որ կնոջ միայն տրուած է ձևակերպել և յայտնել։

— Ոչ, մեծ իշխանուհի, եթէ հրաման ընես բանալ դռները դեսպակը ներս կ'առնունք։

— Շուտով ներս առէք։ Ո՜ գիտէ խեղճը այս եղանակիս կէս սառած է թերևս, տաք սենեակ մը տարէք, բայց առանձին, կերակուր հանեցէք և ինձ լուր բերէք։ Այսպիսի եղանակի մէջ Սիւնեաց երկրէն մինչև հոս ի՜նչպէս զրկեր են, ի՜նչ խղճմտանք է կամ ի՞նչ պարագայ է, չ'եմ հասկնար։

Այս վերջին խօսքերը այնպիսի ձայնով մը գրուցեց որ ինք միայն լսեց։ Եւ երբ դուրս ելաւ կոյսը. «զիս գոնէ գարնան քաղցր եղանակին մէջ աքսորեցին և այս բանտը զրկեցին։ Բայց ո՜վ է այս աղջիկը. «բարձր և ազատ ազգէ» կ'անուանէ զնա կաթողիկոսը և «խստիւ պահպանել» կը հրամայէ։ Ի՜նչ է արդեօք յանցանքը, ո՜ գիտէ ինչ ոճիրներ գործեր է տասնեօթ տարեկան աղջիկ, մի՛ գուցէ սա էլ նոյնպիսի ոճրագործ մի լինի ինչպէս ես էի. ես էլ բարձր և ազատ ազգէ էի. մի՛ գուցէ սա ևս Սևանայ գեղեցիկ կապոյտ ծովակին եզերքը սիրոյ բաժակին իւր շրթունքը հպեցուց և իմացուեցաւ։ — Տեսնենք։»

Եւ այս մտածութեամբ Ճորոխի ալեաց վրայ աչքերը յառեալ կը նայէր։

Ի՞նչ է գետի մը ընթացքը՝ ծովու մը, ափունքին տուած հարուածները՝ որոց իւրաքանչիւր ալիք մի և նոյն շարժմունքն ու խաղն

ընելով մեր աչքը և մեր միտքը կը գրաւեն առանց մեր մտքին տիրապետող խորհուրդը խախտելու։ Վասկանուշ այդ ծորոխին յախուռն ջրերուն մէջ կը տեսնէր իւր Տարօնոյ հայրենի պալատին ոսկեձեղուն և նկարէն սենեակները, կը տեսնէր զինք իւր ոսկեթել բեհեզներուն մէջ, կը տեսնէր Յովնան Սասնոյ առիւծակորիւնը իւր քսան տարիներուն մէջ՝ նորա լայն ճակատը և մեծ գլուխը սև մազերով պսակեալ որ ուսերուն վրայ կ՚իջնէին՝ նորա կայծակնափայլ աչքերը որ իւր ակնարկին առաջ կը խոնարհէին և կը քաղցրանային, կը տեսնէր լուսնի հանդարտ լուսով իւր վարդենեաց պարտէզը ինք նստած և առիւծը ոտքերուն քով ՚ի դուճս, կը տեսնէր յանկարծ իւր գլխուն վրայ կանգնած իւր հօր Վասակայ բարկաճայթ աչքերը . . . և ահա ոսկեձեղուն պալատ, բեհեզներ, Յովնան, վարդենիք, լուսին և ամէն բան ծորոխի ալիք կը յափշտակէին՝ կը տանէին, և կը մնար ինք իւր տխուր սենեկին մէջ միայնակ՝ որուն լռութիւնը կ՚ընդհատէր կրակարանին հրոյն ճարճատմունքը։

Գիշերն հասեր էր երբ բերին աղջիկը մայրապետ Իշխանուհւոյն առջև, և ամենքը քաշուեցան. ակնարկ մը ձգեց սա աղջկան վրայ. այն քնքուշ կազմուածքներէն էր որոնց թա-

փանցիկ մորթը շուշանի սպիտակութիւնն ունի՝ որոնց մազերուն գոյնը արծաթի փայլն ունի՝ և որոնց էութիւնը կարելի չէ իրենց տեղէն հեռացնել վասն զի երբէք չունին զօրութիւն կեանք քաղելու օտար հողէ և արմատէ։

Հազիւ թէ անունը՝ ո՛վ լինելն հարցուց, արտասուաց հեղեղ մը և սաստկեալ հեկեկանաց ձայն մը եղաւ բոլոր պատասխան։ Վասկանուշ ելաւ, իւր գթած մայր առաւ ձեռքէն՝ նստեցուց քովը և սպասեց մինչև որ հանդարտեց հեկեկանքը։

— Հիմա, որդեակ իմ, ըսաւ, գրուցէ ինձ ամէն բան և միայն ճշմարիտը, ո՞ գիտէ կարելի է որ ես ճար մը՝ հնարք մը գտնեմ քու թշուառութեանցդ, գրուցէ՛ ո՛վ ես դու, ո՞ւմ աղջիկն ես, ինչո՞ւ քեզ այստեղ կ՚ուղարկեն. եթէ կ՚ուզես որ քու վրադ գութ ունենան՝ գրուցէ յայտնէ ամէն ինչ ճշմարտութեամբ։

— Զարուհի է իմ անունս, ես դուստր եմ Գրիգոր Սուփան Սիւնեաց իշխանին, որ այս ամառ սպանուեցաւ Բաբկէն Սիսականէ։

— Գիտեմ այդ թշուառ դիպուածը, որդեակ, գրուցէ՛ հիմա թէ ինչո՞ւ զքեզ այստեղ ուղարկեցին։

— Հայրս երկու տարի առաջ գիս Բաբկէնի

որդւոյն Աշոտի հետ նշանած էր, հիմա եղբայրս Վասակ գիս ուզեց ամուսնացնել Գարդմանաց Կորիճ իշխանին, և որովհետև ես յանձն չ'առի հնազանդիլ՝ գիս այստեղ բանտել յուղարկեց . . .

— Մի՛ լար, որդեակ, այստեղ բանտ չ'է, և ես քիչ ժամանակէն կը դարձնեմ քեզ քու տունդ, դու ապահով կաց: Բայց մայրդ ի՞նչ կ'ընէր այս պարագային մէջ:

— Մա՜յրս. ո՜հ, մայրս եթէ կենդանի լինէ՜ր . . .

— Մի՛ լար, Զարուհի, հանդարտէ, ըսաւ Վասականոյշ բայց իւր աչքերն էլ լցուեցան այդ պարզ և միամիտ աղջկան կատարեալ որբութիւնն իմանալով, և քանի մը շրջան ընելէն վերջ դարձաւ հարցուց:

— Բայց դու Աշոտի հետ ամուսնանալ կ'ուզէի՞ր, և ա՞յդ բանին համար քեզ Կորիճին պիտի տային:

— Աշոտ իմ նշանածս էր և ես զինք կը սիրէի, բայց երբ իմ հայրս նորա հօր ձեռքէն մեռաւ, իւր տղուն հետ ինձ ամուսնանալ անկարելի է ըսին, և ես հաւանեցայ. սակայն Կորիճը չար մարդ է, ես այդ մարդէն կը սոսկամ. Թողուին գիս և ես տունը կը նստէի. Թո՛ղ մեզ մօտ վանք կայ՝ հոն դնէին, յանձն կ'առնուի, գիս այսպէս հեռու տարագիր ըրին, այդչափ մեծ իշխաններ՝ վարդապետներ՝ եպիս-

կոպոսներ ինձի՝ տկար աղջկան մը դէմ միաբանեցան. այս ցուրտին, ձիւնին . . .

— Շատ բարի ըրաւ, դու հանգիստ բռնէ սիրտդ, գարնան իմ պարտքս լինի քեզ Սիւնեաց երկիրը դարձնել: Հիմա դու գնա՛, քեզ համար պատրաստեալ սենեակը: Հանգի՛ր: Ես կը մտածեմ և ինչ պէտք է ընել կը հոգամ: Գնա դու հիմա, գարունը՝ քեզի ըսի՝ պէտք է սպասես:

Այս յուսատու խօսքերն լսելով Սիւնեաց աղջկան արտասուաթոր աչուից վրայ ծիծաղ ծագեցաւ և երկիւղը՝ կասկածը պարզ վստահութեան փոխարկեալ՝ Վասականուշին ձեռքերը համբոյրներով ծածկելով,

— Գարնան քանի՞ օր կայ, սիրուն Տիկին, ըսաւ:

— Ձմեռուան դեռ կէսն ենք, աղջիկս, երբ գարունը գայ դու էլ կը տեսնես՝ ես էլ:

— Շատ բարի, ես կ'երթամ պառկելու, շատ յոգնած եմ:

Եւ երբ դուրս ելաւ աղջիկը, մայրապետ տիկինն սկսաւ մտածել, և առած տեղեկութիւններէն այնպէս գտեց որ Աշոտի յանդուգն ձեռնարկութիւնք կամ սպառնալիք պատճառ տուած էին այս տարաժամ աքսորանաց: Իւր գատմունքն այնչափ ուղիղ էր որ հազիւ երկու երեք

որ անցաւ այս դիպուածիս վրայ, և ահա առաւօտ մը կանուխ լուր տուին թէ Սմբատեանի պետը եկեր էր կարևոր լուր մը հաղորդելու: Երբ հրամայեց իրեն բերել, տարիքն առած համեստ մարդ մը ներկայացաւ, որ ամենայն յարգանօք ողջունելէն վերջ սպասեց որ հրամայէ խօսիլ:

— Բարի եկիր, Թադոս հայրիկ, ըսաւ Վասկանուշ, կարևոր լուր ունիս եղեր հաղորդելու, ի՛նչ է ըսէ տեսնեմ:

— Պատրաստ եմ ծառայ քո հրամանին հնազանդիլ, մայր իշխանուհի . . . . .

— Կ՚իմանամ: Կոյսեր, մեզ միայն թողէք վայրկեան մը: Խօսէ՛ ուրեմն:

— Այս կէս գիշերուան մօտ, քանի չափ ձիաւոր աւանը մտան և օթևան ուզեցին, ես իրենց գլխաւորը քսան՝ քսան հինգ տարու երիտասարդ մը՝ իմ տունս ընդունեցայ իւր քանի մը ընկերով, միւսներն ալ զանազան տեղուանք օթևանեցան: Երիտասարդը, իբրև թէ հնարագիտութեամբ հարցմունքներ ընել սկսաւ թէ դեսպակով եկած օրիորդ մը ո՞ւր իջեր էր, և թէ վանքը ի՞նչ դիրքով՝ ի՞նչ զօրութեամբ տեղ էր, և թէ ինք Կոստանդնուպոլիս երթալու միտք ունէր, սպարապետին կողմէն իբրև պատգամաւոր և թէ միայն քիչ մը տկար լի-

նելուն քանի մը օր հանգիստ կ՚ուզէր ընել Սմբատեան, և թէ ինք Շիրակեցի էր՝ նոյնպէս իւր հեծեալները: Այս խօսքերը ես միամտաբար մտիկ ըրի, բայց իր հնչմունքը՝ իր լեզուն՝ մանաւանդ իւր ընկերաց լեզուն յայտնի կ՚ընէին թէ ինք Սիւնեցի է, և իր անհանդարտ կերպէն իմացայ թէ այդ աղջկան համար է եկած, և կարելի է յիմար ձեռնարկութիւն մ՚ընելու համարձակի, ուստի պարտք համարեցայ քեզ իմաց տալ, մայր իշխանուհի:

— Տկարութեան նշան կա՞յ իւր վրայ:

— Ամենևին, բայց շատ տխուր է, երկայն կը մտածէ և յանկարծ հարցմունքներ կ՚ընէ:

— Քովի մարդիկը ի՞նչպէս կը վարուին իրեն հետ:

— Իբրև իրենց իշխանին հետ:

— Անունը իմացա՞ր:

— Ներսէհ է անունը:

— Ի՞նչ կարծես թէ կը մտածէ այդ երիտասարդը:

— Իմ կարծիքս այն է թէ յարձակում կ՚ուզէ ընել վանքին վրայ և այդ աղջիկը յափշտակել:

— Բայց աղջկան այստեղ մտնելը ո՞վ կրնայ իրեն իմացուցած լինիլ . . . . անշուշտ Սիւնեցիքը որ ետ կը դառնային. աղջիկը յանձ-

նելէ վերջ հանդիպած են իրարու և տեղեկութիւն տուած:

— Շատ կարելի է:

— Հոգ չ'է, դու հիմա կ'երթաս տուն, և որովհետև հիւր իշխանն անհանգիստ է՝ դեռ տունէն դուրս ելած չ'լինիր. կուսանաց վանքի մայր իշխանուհւոյն կողմէն կ'ողջունես և կ'իմացնես թէ կը փափաքիմ իւր հետ տեսութիւն ընել:

Ծերը զարմանալով մնաց այս խօսքերը լսելով, վասն զի առաջին անգամն էր որ իշխանուհին, անծանօթ հիւրի մը այսպիսի հրաւէր կ'ուղարկէր, մանաւանդ որ ինք այս լուրը տալուն այնպէս կարծէր թէ հրաման պիտի տրուէր պահապանները կրկնապատկելու, դռներն ամրացնելու, բայց որովհետև հնազանդել էր իւր պարտքը՝ ձեռքը կուրծքին դրաւ խոնարհութեամբ և պատրաստուեցաւ դուրս ելնելու:

— Բայց Թադոս հայրիկ, պէտք է նաև իրեն իմացնել թէ այդ տեսութիւնը կարելի է երբ ինք առանձին՝ միայնակ՝ քեզի հետ ընկերացեալ ուզէ յանձն առնուլ:

— Շատ բարի, իշխանուհի:

Եւ ծերը դուրս ելաւ առանց գայթակղութեան և գնաց ուղղակի իւր պատգամաւորութիւնը կատարելու. Ճիշտ ժամանակին հասաւ,

վասն զի հիւրը արդէն պատրաստուեր էր հեծնելու և դուրս ելնելու: Երբ իմացաւ լուրը՝ շուտ մը յանձնառու եղաւ յօժարութեամբ և երկուքը միատեղ ելան վանք. մեծ երկաթապատ դռնէն երբ ներս մտան՝ դուռը փակեցաւ և անմիջապէս իշխանը միայն հրաւիրեցին դրան քով սենեակ մը, ուր իշխանուհին կեցած իրեն կը սպասէր:

Բաբկէն Սիսականի որդին Աշոտ՝ որ լի համարձակութեամբ՝ մանաւանդ թէ յանդգնութեամբ ներս մտաւ սենեակէն, երբ այդ սևեր հագուած ծանր և վսեմ կնոջ կերպարանքը տեսաւ, որու գեղեցիկ՝ տխուր՝ հանդարտ և քննիչ աչքերը իր վրայ կ'իյնային և իբրև թէ իւր միտքը՝ դիտաւորութիւնը՝ իւր կեղծ պաշտօնն և անունը արդէն գուշակած էին, շփոթեցաւ, հազիւ թէ ձեռքը կուրծքին դրաւ և լեզուն անշարժ մնաց, և դրան քով կանգ առաւ: Իսկ Վասկանուշ միշտ անխռով,

— Բարի է, իշխան, գալուստդ այս մեր կողմերը, լսեցի քու երթը Թագաւորական քաղաքը, փափաքեցայ տեսնելու, վասն զի ես էլ բարեկամներ ունիմ և թերևս օգտակար կարենամ լինիլ, վասն զի Սպարապետը ինձ էլ օտար չ'է, մանաւանդ թէ շատ մօտիկ ազգական է: Ի՞նչպէս է, ի՞նչ վիճակի մէջ է, զարմանք որ

այս կողմերէ անցնելով ինձ նամակ մը չ՚է տուեր:

Այս խօսքերը թէպէտ իբրև շատ պարզութեամբ գրուցուած, այնպիսի ձև մը ունէին և այնպիսի եղանակ իւրաքանչիւր բառի վրայ ծանր ծանր շեշտուելով, որ Աշոտ բոլորովին շփոթեցաւ և թոթովելով այսչափ միայն կրցաւ պատասխանել.

— Կը ներէք, իշխանուհի, ես նաև չ՚էի գիտեր թէ ի՛նչ ճամբայ պիտի բռնեմ իմ ճամբորդութեանս նպատակին հասնելու համար, և ինձ այնպէս հրաման կայ որ առանց դանդաղելու ուղևորիմ:

— Լա՛ւ, բայց միւս հարցմունքներուս չ՚ես պատասխաներ, իշխան, Սպարապետին վիճակը հարցուցի:

Լռութիւն մը տիրեց դարձեալ, իբրև թէ աշակերտ մը վարժապետին առջև անպատասխանի մնացած չ՚էր գիտէր թէ ի՛նչ գրուցէր և չ՚էր համարձակէր գլուխը նաև վեր վերցնել. բայց վերջապէս իւր բոլոր զօրութիւնը ժողվելով և ինչպէս երկչոտներու սովորութիւնն է՝ անհամարձակութիւնը յանդգնութեան տանելով՝ գլուխը վեր առաւ:

— Կը ներես, իշխանուհի, ես ոչ դեսպան եմ, ոչ թագաւորական քաղաք կ՚երթամ, և ոչ

Սպարապետէն եմ յուղարկուած, և ոչ էլ Ներսէհ է իմ անունս:

— Զարմանք չ՚է, ըսաւ իշխանուհին անխռով միշտ՝ աչքերը իշխանին վրայ ունենալով, այսպիսի ժամանակ ուղևորաց սովորութիւնն է իրենց անձանց կարևորութիւն տալ, ապահովութիւն ունենալու համար 'ի վտանգաց, միայն զարմանալին հոն է որ դու իշխանազուն երիտասարդ, ձևդ՝ կերպարանքդ նաև կը վկայեն, այսպիսի քօղերու տակ ջանաս ծածկել անձդ և անունդ: Կարծեմ թէ կը վայլէ և պէտք է որ քու պատւոյդ համար ազգով և անունով ներկայանաս:

— Ի՞նչ բանի համար ծածկեմ անունս, ես Բաբկէն Սիսականի որդին Աշոտն եմ:

— Շատ բարի, ահա՛ ինչպէս կը վայլէ Սիւնեաց ազնուական ազգին որդւոց խօսիլ և համարձակ իրենց ճակատը բանալ ինչպէս արժան է քաջազանց:

Դարձեալ երկայն լռութիւն յաջորդեց, և իշխանուհին իւր բազմոցը նստելով, ձեռքով հրաւիրեց իշխանը նստելու: Աշոտ կ՚ուզէր ելնել՝ բայց ճամբան անել էր, և Վասկանուշ ցաւելով աս անխոհեմ երիտասարդին վրայ, հարկ իմացաւ ձեռք կարկառել և զինքն այդ երկդիմի վիճակէն ազատել:.

— Դու, իշխան, կարելի է այս կողմերս եկար

իմանալու համար ազնուատոհմ օրիորդի մը վիճակը որ ձեր կողմերէն մեզի ղրկուեր էր բարձրագոյն հրամանաւ։ Եթէ այդ կ՚ուզէիր իմանալ կրնամ տեղեկութիւն տալ քեզ թէ օրիորդը լաւ է՝ հանգիստ և գոհ։

— Այդ կարելի չէ՞, գոչեց Աշոտ յուզեալ և փրփրեալ, ես լաւ տեղեկութիւն ունիմ, որ իր դահիճները թշուառ աղջիկը այս ձմեռուան ցուրտերուն ու սառերուն լեռնէ լեռ ձգեցին՝ ձգձգեցին այս բանտը բերելով հասցնելու համար. և ես նա ազատելու կուգամ հոս։

— Այդ ամէն խօսքերը, պատասխանեց իշխանուհին ծանր և մեղմ ձայնով, կրնայիր յայտնել կամաց և հանդարտ կերպիւ. ի՞նչ պէտք է որ դուրսը ստորին վիճակի մարդիկ իմանան թէ ի՞նչ նիւթի վրայ կը դառնայ մեր այս խօսակցութիւնը։ Բայց խնդրեմ, այդ օրիորդը ազատելու համար ի՛նչ միջոցներ միտքդ դըրեր ես։

— Ամէն կարելի և անկարելի միջոցներ ձեռք պիտի առնում որպէս զի այդ գերութենէն զինքն ազատեմ, ըսաւ երիտասարդը կամաց՝ բայց դողացող ձայնիւ։

— Աշոտ իշխան, քու այդ խօսքերդ երիտասարդութեան անխոհեմութիւն և կիրք ունին, ես այնպէս կը յուսայի որ մեր խօսակցութիւնը

քեզի էլ օգտակար լինի և այն անձին էլ որուն պաշտպանութեան ելեր ես օգտակար վախճան մը ունենար։ Բայց կը տեսնեմ թէ երբ մէկը «կարելի և անկարելի միջոցներ» ՚ի գործ դնելու սպառնալիք կ՚ընէ, լաւ ելք մը չի խօստանար ո՛ և իցէ գործողութեան։

— Եթէ ես էլ քեզի պէս այդ սև հագուստներու տակ սառէ սիրտ մը ունենայի, եթէ ես էլ այդ հանդարտ և անխռով նայուածքը ունենայի որ դիմացինը կը կարկամեցնէ՝ կը սառեցնէ և կը ծաղրէ, իրօք երջանիկ իմ անձս կը համարէի։ Միթէ՞ ես գոհ եմ այս թշուառ վիճակէս, երկու տարի է որ մոռցել եմ քուն և հանգստութիւն. իմ հօրս և աներոջս մէջ գըրգռութիւն տեսած օրէս երևակայեցի լինելիք ամէն դժբաղդութիւն. ես՝ որ երկուքին առջև էլ խօսելու նաև համարձակութիւն չ՚ունէի, ամէն կողմ դիմեցի, կաթողիկոսը գնացի գտայ անապատներու մէջ քաշուած խնդրելու որ յանձն առնու միջնորդել և թափուելիք արիւնն արգիլել։ Նա գրպարտութիւններէ դառնացած՝ «Ես կաթողիկոս չ՚եմ» պատասխանեց, և ամէն խընդիրք մերժեց։ Եպիսկոպոսաց ժողովք կար, նոցա դիմեցի, տարտամ պատասխաններ առի. Բագրատունի և Արծրունի Տեարց դիմեցի, վերջինները զուարճութեանց և անառակութեանց մէջ

թաթախեալ ժամանակ չ'ունէին ինձ ուշ դնելու, իսկ միւսները թէպէտ չ'էին յայտներ իրենց միտքը՝ բայց լաւ կը համարէին Սիւնեաց ներքին պատերազմը որպէս զի նոցա տկարութենէն օգուտ քաղեն։ Պատերազմը սկսաւ, ես դասալիք զօրական վատաբար հիւանդ ձևացայ որ այդ դժբաղդ գործողութեան մէջ ձեռք չ'ունենամ. և երբ այդ սոսկալի վերջն ունեցաւ պատերազմը, իմացայ որ իմ նշանածս գաղանի մը հետ պիտի ամուսնացնեն եղբայրները, և երբ նա դիմադրեց կուսանաց վանքի որոշումն տուեր էին, դիմեցի Սիւնեաց Մետրապօլիտին, դիմեցի դարձեալ կաթողիկոսին, զիս գնացուցին։ Նոքա էլ հանդարտ՝ ծանր՝ կամաց խօսեցան հետս, զիս խոհեմութեան՝ և համբերութեան՝ և Աստուածային կամաց հնազանդութեան յորդորեցին, երիտասարդութեան եռանդ է ըսին, սատանայի գրգիռ սրտիս մէջ նշմարեցին, աղօթք ընել և բժշկութիւն ինձ խոստացան իբրև թէ իմ Զարուհւոյ համար զգացած սէրս դիւահարութիւն էր, և այն միջոցին յանկարծ իմացայ նոյն կաթողիկոսին շրջակայից թէ իր հրամանաւ Օրիորդը հեռաւոր վանք մը Յունաց սահմանագլուխը յուղարկեր էին։ Եւ հիմա դու, իշխանուհի, իբր բանտապետը, ինձ կ'ըսես թէ նա լաւ է, հանգիստ և գոհ է, այո՛, այս բարձ-

րաբերձ պարիսպներուն՝ այս երկաթապատ դըռներուն՝ այս զինեալ պահապանաց և սպասաւորաց մէջ անշուշտ կամաւ ցոյց տալու համար զիս բերել տուիր. նա էլ՝ ինչպէս դիակը գերեզմանին մէջ լաւ է՝ հանգիստ է և գոհ է. և այդ խեղճ աղջկան որ կենդանի մեռել կ'ընեն, քեզ պէս գեղեցիկ և քարասիրտ կափարիչ մը պակաս էր։

— Քու այս խօսքերդ թէպէտ ուշ՝ բայց դարձեալ ժամանակին են, հոգ չ'է թէ ես բանտապետ՝ կամ գերեզմանի կափարիչ լինիմ, խնդիրը հոն է թէ դու ի՞նչ պիտի ընես, ի՞նչ է քու միտքդ։

— Իմ միտքս, ազատել Զարուհին կամ մեռնիլ։

— Ամեն կը մեռնիմ ըսողները չ'են մեռած, Աշոտ իշխան, ես շատեր կը ճանչեմ որ կարծեր են թէ մահը վերահաս է և դեռ երկար տարիներ կ'ապրին, նոցա սիրտը նաև որ մեռած կը կարծուի յանկարծ երբեմն մանչիւններ կուտայ, ես իմ պաշտօնիս պատճառաւ շատերուն խոստովանանքը լսած եմ, և աշխարհ.քս իւր թշուառութեամբք կը ճանչեմ, և իմ քարի պէս սիրտս կարծածէդ աւելի ձեզի պէս թշուառներու համար գութ և կարեկցութիւն ունի, և թերևս . . . օգնութիւն մը նաև իմ կանացի տկար ձեռօքս ընեմ ձեզ, եթէ միայն խելօք

վարուելու խոստմունք մը ընես և համբերել գիտնաս:

— Միշտ նոյն երգը կը լսեմ, խելօք վարուիլ և համբերութիւն գիտնալ, ըսաւ Աշոտ հեգնութեամբ և ակռայները կրճտելով և ոտք ելաւ: Իսկ իշխանուհին երկու սուր և հրամայական աչք վրան դարձնելով և սաստելով,

— Նստէ՛, անմիտ երիտասարդ, ըսաւ խիստ ձայնով, ձեր տարիքին միշտ յատուկ է կրքով շարժիլ և 'ի կորուստ դիմել. եթէ ես քեզմէ ամենափոքր երկիւղ ունենայի և վնասել ուզէի, ակնարկութիւն մը բաւական էր ինձ քեզ կապել տալ և մինչև Պօլիս ղրկել. բայց իմ միտքս քեզ և այդ թշուառ աղջիկն էլ ազատել է: Խօսք տո՛ւր ինձի համբերել մինչև գարուն, դառնալ քու երկիրդ, և ժամանակ տալ որ բանակցիմ կաթողիկոսին հետ, և գարնան ե՛կ և Զարուհին քուկդ է:

Աշոտ որ նախ այդ կնոջ հրամայող ձայնին տղու մը պէս հնազանդեցաւ և նստաւ՝ երբ վերջի յուսադիր խօսքերն լսեց՝ տխուր երեսին փայլակի զուարթութիւն մը ծագեցաւ, բայց շատ կարճ տևեց այդ զուարթութիւնը, վասն զի նշանուած օրէն անյաջողութիւն անյաջողութեան վրայ հասել էր, հիմա ինչ որ մէկը չէր կրցել կին մը պիտի կրնա՞ր ընել:

Իսկ Վասկանուշ որ նորա երեսին ամէն շարժմունքը կը տեսնէր գուշակելով մտածութիւնը, աւելցուց.

— Այո՛, շատ զօրաւոր ձեռաց անկարելին՝ տկարներու կարելի կ'ընէ Աստուած, միայն դու ինձ խօսք տուր հնազանդելու:

— Շատ բարի, ես խօսք էլ կուտամ, կ'երդնում նաև ինչ սրբութիւն որ կայ երկրիս և երկնքին վրայ՝ քու ամէն հրամաններուդ հնազանդելու, բայց դու էլ ինձ խօսք կուտա՞ս որ Զարուհին ձեռացդ պիտի չի հանես և իրեն վտանգ մը պիտի չի հանդիպի:

— Թշուա՜ռ երիտասարդ, դու իմ վրաս կը կասկածիս վասն զի չ'ես ճանչեր զիս. քանի որ այս պարիսպները իրենց հիմանց վրայ հաստատ կեցեր են, քանի որ ես կենդանի եմ՝ մէկը չէ կրնար այդ աղջիկը իմ բազկաց մէջէն յափշտակել. և թէ Աստուած իմ փափաքս կատարեց՝ աս ձեռօքս ես նորա սեղանին առջև քու քովդ կը բերեմ նշանածդ:

Այս խօսքերը ազնուական վսեմութեամբ և վստահութեամբ զրուցուած՝ այնպէս ազդեցին երիտասարդ իշխանին վրայ, և այնպիսի ուրախութեամբ լցուցին իր սիրտը որ ցնծութեան արցունքով, ծունկի վրայ եկած,

— Դու գթած մայր մ'ես, դու թագուհի

լինելու արժանի կին ես, դու պաշտելի էակ մ՚ես, տուր որ ձեռքդ անգամ մը պագնեմ։

— Միայն թէ այս մեր խօսակցութիւնը խոստովանութեան գաղտնիք մնայ։

— Հրամայէ՛ ինչ որ կ՚ուզես, հրամայէ՛ կրակի և ջուրի մէջէն անցնիմ, միայն թէ խոստմունքդ մի մոռնար։

Եւ երկու ձեռաց մէջ իբրև թէ գրկած այդ քնքուշ ձեռքը համբոյրներով ծածկեց և արցունքով լուաց. երբ իշխանուհին ձեռքը քաշեց ու

— Բաւական է, չափաւորէ ուրախութիւնդ ըսաւ և ոտք ելաւ։

Իշխանն ալ նոյնպէս ելաւ, և դէպ ՚ի դուռը գնալով՝ ետ դարձաւ.

— Մայր իշխանուհի, կարելի է՞ որ ինձ շնորհք մ՚ալ ընես։

— Եթէ Զարուհին պիտի խնդրես տեսնել, անկարելի է. Աստուծոյ սեղանին առջև միայն այդ կարելի է, և գարնան։ — Եւ քիչ մը մտածելէն վերջ, Աշոտ իշխան, դուրսի սենեակը հանգչէ, ես կաթողիկոսին նամակ մը գրել տամ, և որովհետև ձեր կողմերը կը գանուի՝ իրեն կը հասցնես։

— Շատ բարի, մայր իշխանուհի։

— Աստուած բարի ճանապարհ տայ։

Եւ իշխանուհին գաղտնի դուռ մը բացաւ և անյայտ եղաւ։ Հազիւ կէս ժամ վերջ պառաւ կոյս մը բերաւ կնքեալ նամակ մը իշխանին տուաւ։

ԳԼՈՒԽ ԺԶ.

ԱՐՄԱՆԵԱԿԻ ԲԵՐԴԸ.

Ինչպէս լուռ եկած էին մեր երկու ընկերները, նոյնպէս լուռ կը դառնային, բայց ծերը իր ջորւոյն վրայ կորացեալ կը դիտէր շարունակ որ երիտասարդ իշխանին ճակատը պարզեալ էր, այն դառնութիւնը և անհանդարտ հոգը որ քիչ առաջ իւր երեսին վրայ նկարեալ էր՝ անհետ եղած էր բոլորովին։ Երբեմն ձեռօք իւր նժոյգին պարանոցը կը շոյէր, երբեմն զուարթ դէմքով գլուխը շուրջ դարձնելով բնութեան ծիծաղն իբրև թէ կը փնտռէր, և յանկարծ գլուխը ետին դարձնելով,

— Հայրի՛կ, այս ձեր մայր իշխանուհին սովորական կին չ՚է, ես նորա նման ոչ ոք չ՚եմ տեսեր կեանքիս մէջ, ըսաւ.

— Այո՛ իշխան, բոլոր շրջակայքը՝ ամենքը ազգայինք և օտարք իւր իմաստութեան և առաքինութեան գովութիւնը կ՚ընեն և կը յար-

գին։ Իսկ մենք իւր ժողովուրդը և մեր ամենէն յետինը՝ Աստուծմէ եղքը, մեղա՜յ, մեղա՜յ, Աստուածամօր պէս զինքն կը պաշտէինք պիտի ըսէի։

Ծերուն այս վկայութիւնն ալ, խոր մտածութեան մէջ թաղեց իշխանը և հազիւ թէ Սմբատաւան հասան, առանց ձիէն իջնելու հրամայեց իւր փոքրիկ գունդին որ հեծնեն, և աւանապետին քսակ մը տալով խնդրեց քաղցրութեամբ որ գոհ ընէ իւր մարդիկը և փոխանակ Արտահանի ճամբան բռնելու, Կարուց ճամբան բռնեց որովհետև այնպէս իմացեր էր թէ կաթողիկոսը Բագարան երթալու միտք ունէր Բուղայի երկիւղէն, և անկից Յունաց սահման անցնիլ. Կայնոյ քաղաք, ինք կը յուսար թէ Բագարան իւր նամակը կրնար իրեն հասցնել։

Ուստի երբ Բագրատունեաց քաղաքը մտաւ և միջնաբերդը գնաց իւր անուանակից Աշոտ Բագրատունին տեսնելու, նա շատ այլայլած գտաւ, վասն զի երկու լուր մէկտեղ առած էր, նախ Յովհաննէս կաթողիկոսին մահը, իսկ երկրորդ Բուղայէ հասած հրաման մը որ ստիպաւ՝ հայրը՝ Սմբատ Սպարապետը կ'ուզէր որ Մոկաց երկիրն էր։ Ուստի այս լուրերը հաղորդելու համար հօրը սուրհանդակ մը ղրկելէն վերջ, Բագ-

րատունին սկսաւ զանգտիլ ժամանակին դժուարութեան վրայ, մանաւանդ որ Սասնեցիք բոլոր իւր և հօրը այնչափ խնամքը՝ յարդարեալ պատրաստութիւնքը հիմնայատակ ըրեր էին։ Եւ երբ իրենք կը յուսային այդ ճիւաղին՝ Բուղայի սիրտը կակղացնել ամէն օր նոր նոր և անհաւատալի յանդգնութեամբ ամէն խորհուրդ վեր ՚ի վայր կը շրջէին։

— Զի՞ լսեցի՞ր այդ Սասնեցւոց նոր քաջագործութիւնը։

— Ո՛չ, նո՞ր բան կայ։

— Խումբ մը այս լեռնականներէն իրենց սարերուն գագաթներէն կ'իջնէին, կուգան մինչև Դուին, և հոն համարեա Բուղայի աչաց առջև երեք Հայ նախարար որք Նկան բերդին և Աշոտ Արծրունւոյ անձնատուր լինելուն պատճառ եղան Մուշեղ Վահեւունի՝ Վահրամ Տրունի և Վահրամ Թիկնապահ, մահապարտաց սահմանեալ կախաղանը կը հանեն և բոլոր Դուին՝ Հայ ու Տաճիկ զարմանքով կը տեսնեն այս երեք իշխանաց դիակները կուրծքերնէն իրենց մատնութեան յանցանքը և օրինաւորապէս դատաւորաց տուեալ դատակնիքը, որուն հնազանդելով Յովնան Խութեցւոց զօրավարը կը գործադրէ նոյն վճիռը։ Կրնաս երևակայել Հայ ժողովրդեան լռիկ և անձայն ուրախութիւնը, բայց նոյնպէս

երեւակայէ այդ անիծեալ Բուղայի կատաղութիւնը եւ միանգամայն սարսափը, որուն առջի հրամանը եղեր է երեք չորս մեծամեծ զօրաց գունդեր ղրկել այս Սասնցւոց վրայ, ուր որ հանդիպին ողջ կամ մեռած իրեն բերել: Այս առաւօտ մասնաւոր սուրհանդակ մը այս լուրը ինծի կը բերէ, քիչ մը վերջը բռնաւորին սուրհանդակը ինծ հրաման կը բերէ որ զհայրս սպարապետը կ՚ուզէ այս անօրէնը: Ահա բոլոր վիճակը ուր հիմա կը գտնուինք: Աստուած ինք հասնի, այս գարնան դուռները՝ տեսնենք մեզ ի՜նչ դառնութեան աղբիւր պիտի բանան:

Աշոտ Սիւնի, կաթողիկոսին մահը լսելով հարկ համարեցաւ երթալ Սիւնիք, ուստի իր հրաժարական ողջոյնը տալով Բագրատունւոյն, ելաւ ճամբայ եւ սառած Ախուրեանին վրայէն անցաւ դիմացի դաշտավայրը, հազիւ մէկ քանի ժամուան ճամբայ առաւ Սիւնեցի հեծելազունդը՝ եւ ահա բարձանց վրայէն տեսնուեցաւ Արագածի ստորոտը երկու խումբ որ դիմացէ դիմաց կանգնած զիրար կը դիտէին, փոքրիկ խումբը որ ամուր դիրք մը առած էր բլրոյ մը վրայ յայտնի Հայոց գունդ մ՚էր, իսկ միւսը Արաբացի էր իր ճերմակ փաթթոցներով: Աշոտ առանց դանդաղելու, «Երթանք, տղաք, մեր եղբարց օգնենք» գոչեց եւ ձիերը մտրակեցին դէպ ՚ի բլուրը:

Աշոտ առջինին սուրը խաչաձեւ կը փայլեցնէր եւ ահա բոլոր խումբը շարժեցաւ ընդունելու փոքրիկ օգնութիւնը: Ինչպէս դատեր էր հեռուանց ճիշտ նոյնպէս սակաւաթիւ էր խումբը, հարիւր յիսունի չափ հետեւակ Սասունցիք էին, եւ եռեսունի չափ հեծեալք գրեթէ ամէնքը ազնուատոհմք՝ քաջ եւ կորովի մարդիկ. երեք հոգի առանձին կեցած այս նորեկ ընկերաց կը նայէին դիտող աչօք, եւ այս երեք անձինք մեզ քաջածանօթ Յովհան՝ Գուրգէն եւ Խոսրով էին: Երբ Աշոտ մօտեցաւ այս խմբակին սիրալիր ընդունելութիւն գտաւ եւ Գուրգէն յայտնեց թէ իրենք յարձակելու որոշմունքն ըրած էին արդէն, բայց քիչ մը պիտի սպասէին որ նոր եկող եղբարց ձիանքը յոգնութիւն առնեն: Սիրով ընդունեցաւ Աշոտ այս պատիւը եւ կէս ժամու չափ ժամանակ ուրախ զուարթ խօսակցելէն վերջ այս երկու հարիւր հոգին՝ հետեւակները մէջտեղնին՝ ձիաւորները երկու կողմէն բլուրն ՚ի վար յարձակեցան սաստկութեամբ: Թշնամիք որ հազար հոգիէ աւելի էին, ուրախութեան ձայներով դիմաւորեցին զերենք, յաղթութիւնն ապահով համարելով, բայց երբ իրենց բոլոր յարձակումները անօգուտ տեսան այդ փոքրիկ հետեւակախումբին դէմ որուն նիզակներու անտառը կը քալէր եւ ամէն բան կը խորտակէր

իր առաջ, երբ աջ թեւին վրայ Գուրգէն հսկայ
հասակաւ իր ահագին սուրը կը շարժէր տըր-
դատաբար, և ամեն ընդդիմակաց կը կործանէր
և կը տապալէր, ձախ կողմը Սիւնեցիք առիւծի
պէս կը պատերազմէին և Աշոտ «Տղաք, Սիւնե-
ցիք, ձեզ տեսնեմ, ամօթով չ՚ընենք մեր եղ-
բարց քով» ըսելով, թշնամեաց վրայ կոտորած
կոտորածի կը հասցնէր։ Եւ վերջապէս գոհու-
թեամբ տեսան Հայք որ Արաբացի գունդը
տկարացած սկսաւ քաշուիլ և նահանջել. ան
ատեն իրենք ալ դադրեցան հալածելէն և տես-
նելով թէ երկու միայն անկեալ ունէին և քանի
մը թեթեւ վիրաւոր ու թշնամին երեք հա-
րիւրի չափ մարդ կորուսած էր, փառք տուին
Աստուծոյ և քաշուեցան դէպ՚ Ախուրեան։ Աշոտ
կ՚ուզէր իր ճամբան շարունակել, բայց Գուր-
գէն և Յովհան զինք համոզեցին որ իրենց ըն-
կերանայ և չի բաժնուի, ոչ միայն որ առջեւը
վտանգը մեծ էր, այլ նաև որ իրենք որոշած
էին վրէժխնդիր գունդ մը կազմուիլ Հայ ազգի և
հաւատքի նախատինքը քաւել, թշնամի և
մատնիչ պատուհասել, և թէ արժան էր որ
Աշոտոյ պէս քաջ երիտասարդ մը Սիւնեաց նա-
հանգը Տարօնոյ և Վասպուրականի հետ իրենց
մէջ ներկայացնէր։ Իսկ Սիւնեցի իշխանը ինք-
նիրեն հաշիւ մ՚ըրաւ որ մինչև գարնան ոչինչ

գործ չ՚ունէր, սիրով յանձն առաւ այդ ընկե-
րութիւնը և բռնեցին Կարսի ճամբան. անցան
Ախուրեան որ առած իր բոլոր երկայնութեան
մէջ ահագին կամուրջ մ՚էր ճանապարհորդաց,
և գիշերով հասան Արգինայի աւանը։

Ուրախ զուարթ գիշեր մը անցուցին, թըշ-
նամւոյն աւարէն բաժին հանեցին Արգինացւոց,
ամեն կողմ պահապաններ դնելով լաւ մը հան-
գըստացան, և դեռ արշալոյս չ՚եղած լուր հա-
սաւ թէ թշնամի մեծ խումբ դէպ ՚ի Կարս կը
դիմէր, իրենց ճամբայն արգիլելու համար։ Որո-
շեցին որ Արտահանու ճամբով Յունաց սահմա-
նագլխէն շարունակեն ճամբայնին, իսկ եթէ
թշնամին հանի և համարձակի պատերազմիլ՝
ջախջախեն և անցնին առաջ։ Այսպէս բոլոր
երկու օր ճանապարհորդելով առանց արգելքի
հասան Արտահան. հոն անկարծելի արգելք մը
դարձեալ զիրենք կասեցուց։

Գուրգէն իբրև յառաջապահ իր փոքրիկ
գնդով կ՚երթար ժամու մը ճանապարհ հեռա-
ւորութեամբ, հարիւր ձիաւոր զօրաց Յունական
խումբ մը յանկարծ յանդուգն յարձակմամբ շըր-
ջապատելով զինք հրամայեց անձնատուր լինիլ։
Գուրգէնի պէս մարդու այսպիսի առաջարկու-
թիւն անտանելի էր, բայց խոհեմութիւն նաև
իրեն պարտք համարելով և չ՚ուզելով Տաճկաց

թշնամութեան վրայ աւելցնել Յունաց թշնամութիւնը՝ ջանաց համոզել քաղցր խօսքերով Յոյն գնդին զօրավարը թէ՝ «Անհաւատից ձեռքէն հալածեալ կայսեր սահմաններուն մէջ՝ նորա պաշտպանութեան կը դիմէին, և երբէք թշնամութեան գործ ընել չէին կրնար մտքէ անցնել և ոչ Յունական իշխանութեանց ծանրանալ և թէ ինք ևս Յունական իշխան և հպատակ էր կայսեր և թէ գաւառի մը ամբողջ տէրն էր նոյն կայսեր շնորհիւ։» Բայց երբ տեսաւ թէ Յոյնք իւր քաջութիւնը երկիւղի նշան համարելով սկսան բռնանալ և իր մարդիկը զինաթափ ընել ջանալ, և նոցա գլխաւորը համարձակեցաւ զէն 'ի ձեռին իր վրայ յարձակելով սուրն ուզելու, ան ատեն,

— Սո՛ւր կ՚ուզէք, առէք ձեզի սուր, հապա՛ տղաք ձեզ տեսնեմ, սո՛ւր սոցա վրայ, գոչեց Գուրգէն։

Եւ նախ գլխաւորն ինք զոհ գնաց իւր ահագին սրոյն, և քանի մը վայրկենի մէջ, այդ Յունական խումբը ցիր ու ցան դաշտին վրան քսանէ աւելի մեռել կը թողուր և մնացորդը վայրավատին կը փախչէին։

Իսկ երբ Յոհան և մեծ խումբը հասան տեսան եղածը և Գուրգէն որ քանի մը կալանաւոր կը հարցաքննէր, յայտնի եղաւ այս գործողութեան բուն պատճառն: — Գրիգոր, Բագրա-

տունեաց ցեղէն մէկը, իշխանիկ մականուանեալ, Արամանեակ և Աշխարհաբերդ ամրոցներու կը տիրէր ժառանգութեամբ ճիշտ Յունաց սահմանագլուխն վրայ։ Եւ այսպիսի անորոշ դիրքի մէջ ոչ կայսեր հարկ կուտար և ոչ Ամիրապետին։ Յունաց Կարնոյ զօրավարն այսպիսի անկարգութեան վերջ տալ ուզելով եկեր պաշարեր էր Արմանեակ բերդը։ Իր զօրքերէն հարիւրի չափ պահապանաց խումբ մը հանդիպելով Գուրգէնի և ջարդ ու բուրդ փախստական, պիտի տանէին լուրը բանակը և պիտի գրգռէին Գուրգէնեանց ու Յոհանեանց դէմ նոցա բոլոր զօրութիւնը։ Եւ այսպէս մեր փոքրիկ գունդը որ Հայկական արդարութեան և վրէժխնդրութեան պաշտօն էր ստանձնել ձախ թեւին վրայ Արաբացիքն ունէր և աջ թեւին վրայ Յոյներն։ Խորհուրդի նստան մեր չորս զօրավարները, որոց թիւը զօրաց թւոյն հետ բաղդատեալ շատ էր և չափազանց, բայց չորսն էլ իրենց օրինակաւ կը վարէին զօրքը՝ որք անմռունչ և սիրով կ՚երթային ու՛ր որ սոքա զիրենք տանէին։

Գուրգէն համառօտ մը եղածը և առած տեղեկութիւնքը պատմելէն վերջ,

— Հիմա, իմ կարծիքս էլ զրուցեմ և դուք էլ ձեր որոշմունքը յայտնեցէք, վասն զի ժամանակ չունինք կորսնցնելու, եւ դառնալ ինձ

անկարելի կը թուի, ուստի պէտք է առաջ անցնիլ և եթէ հարկ լինի մեր ճամբան արգիլողներուն վրայէն կոխելով անցնիլ։ Ես այս Յոյները կը ճանչեմ, ինչպէս դու էլ Յովեան. ոչ երբէք ամուր զինուոր են, ինչպէս խօսելու նոյնպէս փախչելու մէջ վարպետ են, իսկ յաջողութեան մէջ յիմար և ամբարտաւան, իրենք մեր վրայ չի յարձակած մենք յարձակինք նոցա վրայ Արամանեակի և մեր մէջ զիրենք պաշարենք և յաղթութիւնն ապահով է։

— Բայց ի՞նչչափ է այս Յունաց գնդին թիւը, հարցուց Խոսրով Ակէացի, գոնէ այդ իմանայինք։

— Կալանաւորներէ առած տեղեկութեանց նայելով՝ շատ չ՚են, երեք հազարէ մինչև հինգ հազար առ առաւելն, Յունաց մեծաբանութեան էլ եթէ բաժինն հանենք՝ երեք հազար նաև չ՚կարծեմ թէ լինին, վասն զի այս ազգը միշտ մեծ և բարձրէն կը խօսի։

— Իշխանիկի զօրքն ի՛նչչափ կը կարծես, հարցուց դարձեալ Խոսրով։

— Հարիւր, շատ շատ երկու հարիւր հոգի, բայց ընտիր տղայմարդիկ են, ես զիրենք կը ճանչեմ։

— Ի՞նչ կեցեր ենք ուրեմն, գոչեց Աշոտ, երթա՞նք, ժամանակ չի կորանցնենք։

— Բայց Յովեան, դու բան չ՚ես խօսիր, ըսաւ Գուրգէն։

— Տղոց քիչ մը կերակուր հրամայենք և յարձակինք, ըսաւ Յովեան և ելաւ երթալու զօրաց քով։

— Միամի՜տ և միաբա՜ն, այսպէս միշտ պէտք է լինիլ, գոչեց Գուրգէն։

— Արամանեակի բերդին մէջ լաւ ընթրիք մը կ՚ընենք այս գիշեր, ըսաւ Աշոտ ուրախութեամբ և ձեռքերը շփելով։

— Ապրի՜ս տղայ, պատասխանեց Գուրգէն աջ և ահագին բազուկը տարածելով և ձգելով իւր լայն կուրծքին վրայ զԱշոտ, մեր փոքրիկ բանակին ուրախութիւն ղրկեց քեզ Աստուած, նայէ՛ Յովեանու անգամ փոքր ժպիտ բերիր դու երեսին և այս մեծ շնորհք է։ Ի՞նչ պէս պէտք էին լինիլ Հայ իշխանազունք։ Միշտ դու ուրախ ես այսպէս և միշտ քաջ, այնպէս չ՚է՞։

— Սիւնիք միշտ քաջ են։ Իսկ իմ ուրախութիւնս երկայն ամիսներէ ՚ի վեր կորել էր և փախել. Աստուած երկար կեանք և երջանկութիւն տա՛յ այն կնոջ՝ այն հրեշտակին որ իմ սրտիս նորէն զուարթութիւն և յոյս բերաւ։ Խմե՜նք նորա կենաց։ Եւ այս ըսելով թիկնապահին ձեռքէն առաւ արծթէ մեծ բաժակը և պարպեց։

Այս խօսքին վրայ փոքր լռութիւն յաջորդեց, Յովհան և Գուրգէն երիտասարդին երեսը՝ և ետքը առաջնին նայեցան, վասն զի երկուքն ալ իրենց սրտին մէջ թշուառ սիրոյ վէրքն զգացին, Խորով միայն անշփոթ և պատառը բերանը՝ բաժակը ձեռքն առաւ:

— Այդ կնոջ կենա՜ցն ըսաւ, որովհետև հրեշտակ զինքն անուանեցիր:

— Աստուա՜ծ վկայ որ հրեշտակ է նա, ես այդպիսի կին չ՚էի տեսել կենացս մէջ. ես զինքը ժամ մը միայն տեսայ, բայց բոլոր շրջակայք՝ մեծն ու պզտիկ՝ զինք կ՚օրհնեն ու կը գովաբանեն. մայր թշուառներու և ծերուն պէս խօսելով՝ «Մեղա՛յ, մեղա՛յ, Աստուածամայր» կ՚անուանեն զնա գիւղացիք:

— Տօ՛ւր, տղայ, սա բաժակը, ըսաւ Գուրգէն թիկնապահին որ կը մատռուակէր, այդ կնոջ՝ այդ հրեշտակին անգին կենաց որ մայր է թշուառներու և ուրախութիւն կը բերէ տխուր երիտասարդ սրտերու:

— Հրեշտակին կենաց, ըսաւ Յովհան և ըստ իւր սովորութեան գաւաթ մը ջուր խմեց:

— Ջո՞ւր կը խմես, հարցուց Աշոտ զարմացեալ:

— Քանի մը տարի կայ որ ես ջուր կը խմեմ: Բայց երթանք, ահա տղաքը պատրաստ են, ըսաւ և ելաւ:

Հազիւ թէ մեր փոքրիկ խումբը կէս ժամու չափ քալեցին, և ահա երեւցաւ բազմաթիւ՝ հազարի չափ Յունական գունդը որ կուգար. և ահա Գուրգէնի մեծ ձայնը որ առջևէն գոչեց լսեցնելով ամենուն.

— Փա՜ռք տանք Աստուծոյ, Հայու տղա՛ք, թշնամին քիչ քիչ մեր վրայ կ՚ուղարկէ:

Իսկ Յովհան դառնալով իր Խութեցւոց կ՚ըսէր.

— Նետերը նախ՝ նիզակներն յետոյ՝ և վերջը վերջը սուրերը, ձեզ տեսնեմ, քաջ Սասնայք, պարապ նետ մը պէտք չ՚է ելնէ ձեր աղեղներէն՝ և ոչ հարուած մը անօգուտ:

Իրօք երբ թշնամին մօտեցաւ, սաստիկ նետաձգութիւն հարիւր յիսուն վիրաւոր յիմարեցուց, և գռոհ մը փոքրիկ Հայ խումբին՝ ժամանակ չի տուաւ նոցա ոգի առնլու և գործին սկիզբն ու վերջը՝ կոտորած և փախուստ եղաւ. աւելորդ է պատմել թէ ինչ ըրին Գուրգէն, Յովհան, Խորով և Աշոտ. իրենց քրտինքը թշնամւոյն արիւնին հետ խառնուեցաւ և ձիւնապատ երկիրը չորս հարիւրի չափ դիականք ծածկուեցաւ ու կարմիր ներկուեցաւ: Եւ երբ կռիւը որ կէս ժամ տևեց՝ վերջացաւ և Հայք իրենց կորուստը քննելու ելան՝ տեսան որ քանի մը վիրաւոր միայն ունէին և մեռած ոք չի կար. փառք տուին Աստուծոյ՝ տուողին յաղթութեան,

և շարունակեցին իրենց ընթացքը որպէս զի ժամանակ չի տան թշնամւոյն սթափելու:

Եւ իրօք Յունաց փախստական զօրքերը իրենց բանակը գնացին պարտութեան լուրը տանելու, ահով և վախով լցուցին ամենուն սիրտը, ոչ միայն Հայ խումբին զօրութիւնն անպարտելի էր, այլ նաև ամէն մէկուն հասակն ահագին, ոչ միայն իրենց երեսին գոյնը ճերմակ չ'էր այլ նաև սև էր սատանայի երեսի պէս, և որ մեծն էր ոչ թէ հարիւր՝ երկու հարիւր էր իրենց թիւը, այլ ահագին բազմութիւն էին: Այս չափազանց լուրը զօրավարին և բոլոր զօրաց երբ հաղորդեցին փախստականք, վհատութիւնը տիրեց և հրաման եղաւ շուտ մը բանակը վերցնելու և Կարնոյ ճամբան բռնելու. և այնպիսի արագութեամբ շարժեցան Յոյնք որ հազիւ թէ կարևորը տանելով՝ շատ աւար թողին Արմանեակի առջև, Հայք քանի մը յետամնաց կալանաւորեցին և Գուրգէն հրամայեց արձակել:

Բերդականք չի կարենալով մեկնել թշնամւոյն փախուստը և նոր եկող փոքրիկ խումբը, կը զարմանային, և երբ մարդ հանել ու եղածն իմանալ կը մտածէին, Գուրգէն իր թիկնապահներէն մէկը ղրկեց բերդը իմացնելու իշխանիկին բոլոր պատահարը, որ մեծ ուրախութեամբ իջաւ եկաւ և հրաւիրեց ներս իր քաջ

ազգակիցքն ու ազատարարքը: Գիշերն սկսել էր վրայ հասնիլ, երբ ձիոց և մարդկանց ոտքերու թոփիւնը հնչեց բերդին կամարներուն տակ, և Աշոտ ուրախ զուարթ կը դոչէր.

— Ես ձեզի չ'ըսի՞ որ այս գիշեր Արմանեակի իշխանին հիւրն ենք մենք: Ահա իմ գուշակութիւնս կատարեցաւ:

— Ո՞վ է այս երիտասարդ իշխանը, հարցուց իշխանիկ Գուրգէնին:

— Մեր փոքր բանակին մեծ ուրախութիւնն է, պատասխանեց Գուրգէն:

— Եթէ արդիւնքը կը ցցնէ իրի մը մեծութիւնը, ես ձեր բանակին չափ մեծ բանակ չ'եմ տեսեր մինչև այս օր, ձեր ուրախութիւնն էլ ըստ այնմ կը չափեմ:

— Սա Բաբկէն Միսակեանի որդի Աշոտն է: Քաջ՝ զուարթ՝ սիրուն երիտասարդ մ'է, իւր կերպարանքին գեղեցկութեան վրայ չ'եմ խօսիր, միայն լաւ նայէ՛ երեսին և աչքերուն՝ գործդ միշտ յաջող կերթայ:

— Զ'ըսե՞ս որ դուք ոչ միայն ուրախութիւն գտեր էք այս տղուն հետ, այլ և բարեբաղդութիւն:

— Հայաստանի այս վիճակին մէջ, բարեբաղդութիւն բառը Հայու մը չի յարմարիր: Բայց այս օր յաջողութեան օր է, հանգչինք և ու-

րախ լինինք. վաղուան միւս հոգ ու մտածմունք:

Տանտէրը ջուր բերել տուաւ, լուացուեցան մաքրուեցան հիւրերը, բերդին դահլիճները լուսաւորուեցան, վառարանին մէջ հուրը կը փայլէր ու կը ճարճատէր, գուսանք և երաժշտական ձայներ կը հնչէին, սեղանն ամէն տեսակ խորտիկներով՝ ընտիր գինիներով և ազնիւ պտուղներով ճոխ էր ու զարդարուն:

Իշխանիկն ամէն տեղ էր. վար կ՚իջնէր նոյն միջոյին իւր մատակարարին նաև չի վստահանալով, աչքով կ՚ուզէր տեսնել թէ զօրականաց առատապէս ինչպէս հրամայած էր ամէն կերակուր և ըմպելիք և հանգստեան խշտիք պատրաստուած էին, պակաս աւելով կը լեցնէր և կրկին կրկին կը պատուիրէր, որ այս քաջ և աշխատարար ազգայնոց բան մը չի խնայուի:

Երբ սեղանի նստան և տանտէրը հրամայեցէք ըսելով ձեռքը երկնցուց կերակուրի, Գուրգէն թևէն բռնելով և արգիլելով ձեռք մեկնել.

— Վահրիճ, գոչեց, ո՞ւր է Յովհան եղբայր:

— Վարն է, Սասնցւոց հետ հաց կ՚ուտէ:

— Եթէ նա հոս չ՚է ես հաց կրնա՞մ ուտել այս օր:

— Ո՞վ է նա, երթամ զինք բերելու, ըսաւ

իշխանիկ և ելաւ: Գուրգէն նոյնպէս ելաւ ետեւէն, և երբ տեսաւ որ Յովհան կը դժկամակէր գալու, վասն զի հոն վարը աւելի հանգիստ էր:

— Իմ սիրոյս համար, Յովհան, սա այս գիշերուան հանգստութիւնդ աւրէ՛, ըսելով Գուրգէն Յովհանի թևէն առաւ:

— Քու սիրոյդ կարելի չ՚է դէմ դնել, ինչպէս քու բազկիդ զօրութեան, ո՜վ Գուրգէն, պատասխանեց Յովհան. և տարին չի կատարած կը յուսամ թէ բոլոր Հայաստան զքեզ պիտի ճանչէ:

— Ուրախ եմ գուշակութեանդ վրայ, երթանք զուարճանանք. ձմեռուան մէջ նաև երկինք զուարթ օրեր ունի, մեր սրտերն ինչո՞ւ չ՚ունենան, Յովհան:

Եւ այսպէս սեղանին քով նստան բոլորուեյան ամէնքը, կերան՝ խմեցին՝ զուարճացան: Յովհան նաև զուարթ կ՚երևէր, իր տխուր երեսին վրայ ժպիտ մը կար. իսկ երբ երաժիշտք կը հնչեցնէին իրենց նուագարանները և երգիչը հին երգ մը կ՚երգէր սրտի վերջի տողերը կը կրկնուէին.

Անցեալ աւուրց քաղցր յիշատակք մեզ
դարձէ՛ք.
Քնած վարդեր, գարուն եկաւ, ծաղկեցէ՛ք,
Սէր և հրճուանք անգամ մի ևս արթընցէ՛ք,

աչքերը խփեց, վասն զի կը յիշէր սրտի արտասուօք քան եօթ տարի առաջ հրեշտակային գեղեցիկ և յստակ ձայն մը վարդենեաց պարտիզի մը մէջ այդ երգը մրմնջեր էր: Մի՞թէ անցեալ աւուրք կրնային դառնալ, գարունը մեռած վարդին համար կրնա՞ր կեանք տալ, սէր և հրճուանք միթէ գերեզմանէն կրնայի՞ն յարութիւն առնել: Այս էին իր խորհրդածութիւնքը երբ աչքերը գոց՝ քուն ձեւացաւ, և մարդ մը միայն կար որ իր ամեն շարժմունքը կը դիտէր՝ կը տեսնէր, վասն զի նա միայն գիտէր իր գաղտնիքը. այդ մարդը Խոսրով Ակէացին էր, որ զնա ճանչցած վայրկենէն համարմունքն օր աւուր կ'աւելնար, տեսնելով նորա անշահասիրութիւնը, հայրենեաց և արդարութեան անձնուիրութիւնը և փառաց և անձնդիւրութեան արհամարհանքը:

Խնջոյքը կ'երկարէին, Յոհան ակնարկի ըրաւ Գուրգէնի որ զինք թողու և գնաց իր Սանեցւոց քով իր խշտին ընկողմանելու: Իսկ Խոսրով՝ Սիւնի իշխանին կը զուարճաբանէր, կ'ընտանենար, որպէս զի իմանար գաղտնիքը այն հրեշտակին որուն կենաց այնչափ եռանդով՝ փափաքով գինի խմած էին նոյն օրը իրենց աղքատին և ձիւնեղէն սեղանին վրայ:

ԳԼՈՒԽ ԺԷ.

ՔՍԱՆ ԵՕԹ ՏԱՐԻ՞

Բայց այդ Յոհան ո՞վ է, այդ Սանեցւոց զօրավարը. տեսայ զինք պատերազմի մէջ քաջ, բայց երբ ընկերութեան մէջ է՝ դա զամենքը կը սառեցնէ, եթէ խօսի ակամայ կը խօսի, ծիծաղը նաև կարծես թէ հեզնութիւն մ'է. գինի բերանը չի դնէր. նուագարան՝ երգ օրօրի ձայն են իրեն համար: Բայց պէտք է խոստովանիլ որ մեծ տարբերութիւն կայ իր՝ և իր լեռնականաց մէջ, խօսքը՝ կերպը՝ մտածութեանց խելօքութիւնը՝ շարժմանց զգուշաւորութիւնը՝ վերջապէս իր ամեն վարմունքն յայտնի կ'ընեն թէ բարձր մարդ է, և ես կ'ընդունիմ այս մարդը գործքի՝ պատերազմի գլուխ լաւ՝ բայց խնջոյից զուարճութեանց մէջ բան մը չ'արժէր. լա՛ւ ըրաւ որ գնաց:

Այսպէս կը խօսէր Աշոտ կամաց ձայնով Խոսրովու հետ. և նա պատասխանեց.

— Դու այդ մարդը լաւ կը դատես, այդ մարդը զուարճութեան մարդ չ'է, միայն գործի մարդ է. բայց տե՛ս, եթէ նա ուզէր մեր նա-

խարարաց կարգը կ՚անցնէր և շատերէն էլ կը գերաղանցէր, վասն զի իւր լեռնցիք այնպէս իրեն կը հնազանդէին և զինք կը սիրեն որ եթէ մեռնիլ հրամայէ կը մեռնին։ Տե՛ս, Սասուն ո՞ւր, մենք ո՞ւր, Դուխն ո՞ւր, բայց երեք չարագործ կախելու համար ամեն վտանգ յանձն կ՚առնուն այդ Սասնի տղայք և իրեն հետ կ՚երթան այդ անծանօթ երկիրներ, ձիւնին՝ ցուրտին՝ սառին, որպէս զի Յովհաննու կամքը կատարուի։

— Բայց ի՞նչ հասկնամ Դուխնի դուռը այդ մարդիկը կախելէն, առջի ծառը միթէ՞ յարմար չ՚է մատնիչ մը՝ չարագործ մը կախելու համար։

— Մեծ տարբերութիւն կայ Բուղայի աչաց առջև տանիլ կախել դաւաճան Հայը՝ որ նորա անզգամութեանց գործիք եղաւ՝ անապատի մը մէջ կախելէն։ Դաւաճաններու իմաց տալ է թէ կայ այդ մեռեալ կարծուած Հայաստանի մէջ դատաստան մը որ կը հսկէ՝ կը դատէ՝ կը վճռէ և կը գործադրէ։

— Ինչո՞ւ ուրեմն Աշոտ Բագրատունի այդ բանին համար գանգատեցաւ։

— Աշոտ և իւր հայրն Սպարապետը հանելուկ մ՚են, ի՞նչ կ՚ուզեն, ի՞նչ կը մտածեն, Աստուած միայն գիտէ. մեր ճամբուն և նոցա ճամբուն մէջ ահագին հեռաւորութիւն կայ։ Բայց այսպէս դարձեալ, Յովհան միշտ կ՚ըսէ թէ

եղածէն՝ երևոյթէն մարդ դատապարտել պէտք չ՚է, այլ յանցանքի ապացոյցը ձեռք ունենալու և այնպէս պատժելու է։ Եւ այդ բանին համար Բուղայի դիւանէն՝ այդ երեք յանցաւորներուն կնքեալ թուղթը ձեռք անցնելով դատապարտել տուաւ Աշոտ Արծրունւոյ մատնիչները։ — Բայց դու ինձ այն զրուցէ թէ այսպէս երիտասարդ Սիւնեաց երկիրը թողել ո՞ւր ելեր ես, ի՞նչ է որ զքեզ այսպէս կը շրջագայէ։ Ո՞վ է այն կինը որ այսօր մեզ այնչափ գովեցիր։

— Այդ կինը կուսանաց վանքի մայրապետ մ՚է։

— Վասկանուշ է իւր անունը։

— Դու ուսկի՞ց գիտես։

— Բագրատունեաց ցեղէն է։

— Դու կը ճանչե՞ս զինք ուրեմն։

— Այո՛ շատերէն լաւ կը ճանչեմ։

— Իրաւունք չ՚ունէի՞ զինք այնչափ գովելու։

— Բայց դու ի՞նչ տեսար։

— Ի՞նչ տեսայ. կին մը տեսայ որ իր իշխանութեան տակ գտնուող ամենքը իր իմաստութիւնը՝ իր առաքինութիւնը՝ իր արդարութիւնը կը գովէին. բոլոր Արտանուշի գաւառը և շրջակայքը իբրև թագուհի զինք կը յարգեն։ Կայ բան մ՚էլ որ հիմա չ՚եմ կրնար զրուցել։

Խորով այս միայն կ՚ուզէր իմանալ, ուստի լռեց, և իր ուշադրութիւնը դարձուց Գուրգէնի և իշխանիկի ուշադրութեան:

— Ի՜նչ անամօթ մարդիկ են այդ Յոյները, կ՚ըսէր Գուրգէն, որովհետև ես տարի մը չ՚երևցայ, կայսեր հրովարտակաւ իմ արեանց և քրտանց տրիտուր պարգևեալ Թորթում կ՚ելնեն կը յափշտակե՜ն. բայց Աստուած ինձ տուած է այս բազուկը որ գիտէ ջախջախել՝ և այս սուրը որ գիտէ յօշոտել. այս յիմարները այսչա՜փ շուտով մոռցան Գուրգէնը: Վաղը ես Թորթում եմ:

— Ե՛րբ և ո՛ւր կ՚ուզես քեզի հետ եմ, կ՚ըսէր իշխանիկը, միայն իմ ղրկած ձիաւորքս Յունաց բանակին ետևէն դեռ չի դարձան:

— Այդ կը նշանակէ որ վատ Յոյները մինչև Կարին կը փախչին, հազարաւորք՝ երկու հարիւր մարդու առջևէն: Ա՜խ, Հայոց ազգ, այս ի՜նչ անէծք է քու վրադ որ այսպիսի անարգ ու վատթար պետութեան ստրուկ և գերի ես դարձեր: . . . Վաղն ուրեմն կը կարգադրենք թէ ի՞նչ պիտի ընենք, ըսաւ Գուրգէն և ելաւ, և ամենքը գնացին ննջելու:

Գուրգէնի գուշակութիւնը ճիշտ էր, Յոյները Կարինի ճամբան առեր կ՚երթային. այս լուրը հազիւ թէ իմացաւ Բագրատունի իշխանիկը և

գնաց հաղորդելու Գուրգէնի, ահա հետևակ գրաբեր մը կը հասնէր Արտանուշ գաւառէն նամակաւ, որ արտօրնօք օգնութիւն կը խնդրէր Արաբացի աւազակաց դէմ որ յանկարծ մտեր երկիրը իրենց սովորական բարբարոսութեամբ ամեն չարիք կը հասցնէին գիւղացւոց, և Սմբատաւան պաշարել էին:

Նոյն միջոցին երբ նամակը կը կարդար իշխանիկը, Յովհան՝ Խորով և Աշոտ Գուրգէնի սենեակը կը մտնէին. Յունաց փախուստը ամենն էլ գիտէին:

Եւ ահա իշխանիկը նամակը բարձրաձայն իրենց կարդաց, և աւելցուց.

Ահա վիճակը, պատուական բարեկամներ, ես չ՚եմ կրնար անօգնական թողուլ դրացի գաւառ մը որուն բոլոր բնակիչքը Հայ են և ինձի կը դիմեն, ոչ միայն իբրև Հայու այլ և Բագրատունւոյ, վասն զի ինչպէս ձեզ յայտնի է՝ այս գաւառը անյիշատակ ժամանակներէ 'ի վեր Բագրատունեաց առաջին սեփհականութիւնն է:

— Ո՞վ է տէր երկրին, ո՞վ գրեր է այդ, ո՞վ է ստորագրեր այդ նամակին, հարցուց Գուրգէն:

— Ստորագրողը «Վասկանոյշ Բագրատունի, Մայրապետ Աստուածամայր վանուց Արտանուշի» Այս կինը հօրեղբօր զաւակ է Սպարապետին, հռչակաւոր իմաստութեամբ և առաքինու-

թեամբ, Տայոց և Թէ բարձր Հայոց նահանգներու մէջ։

— Ի՞նչ կեցեր կը դանդաղինք, երթա՛նք ըսաւ Աշոտ և ոտք ելաւ։

— Կեցցե՛ս Աշոտ, կ՚ըսէր Գուրգէն ծիծաղելով, այս կինն էլ գի՛ր քու միւս կնոջ քով որուկենաց մեզ երեկ գինի խմուցիր։

— Նոյն կինն է՞, պէտք չէ ժամանակ կորսնցնել, կ՚ըսէր։

Այս բոլոր խօսակցութեանց մէջ Խոսրով որ բերան չի բացաւ, զՅովհան կը դիտէր, որ Վասականոյշ անունին փոքրիկ աննշմարելի ցնցում մը միայն ունեցաւ. իսկ անկից վերջ անխռով էր քարէ արձանի պէս։

— Երթա՞նք ուրեմն, կ՚ըսէր Գուրգէն ծիծաղելով բարձրաձայն. ի՞նչ կ՚ըսես Յովհան, մե՛ղք է այս տղան, տեսէ՛ք, զէնքերն արդէն առաւ և սաղաւարտը կը դնէ։

— Երթա՞նք, ըսաւ Յովհան և դուրս ելաւ։

Ժամ մը չ՚եղած չորս հարիւրի չափ հետեւակ և ձիաւոր Սրամաննեակ բերդէն կ՚ելնէին երկուօրուան պաշար առած և Արտանուշի վրայ կ՚արշաւէին արագութեամբ։ Գիշեր մը հանգիստ առած երկրորդ օրը այս կորովի գունդը կը հասնէր Սմբատաւանի առջև ճիշտ այն ժամանակին որ Արաբացիք հողապարսպին հետ կռուելով

ներս խուժելու մօտ էին, Գուրգէն չ՚էր այս անգամ խումբին դիւցազնը. Աշոտ մոլեգին կոտորածի մը սկիզբը տուաւ և Գուրգէն աչքը միշտ նորա վրայ երկու երեք անգամ՝ զինքն ազատեց վտանգներէ։ Արաբացիք երկու սուրի մէջ ճնշուած սաստիկ ջարդուեցան և հազիւ քանի մը հոգի փախստական կրցան Կարս դառնալ։ Աւանին շուրջը իրենց մեռեալներով ծածկուեցաւ և քանի մը օր Ճորոխ դիակներ Սև ծով կը տանէր։ Նոյն գիշերը աւանին բնակիչքը այս օգնական զօրքն իբրև եղբայր հիւրընկալեցին, որք իրենց թողին թշնամւոյն աւարը, որպէս զի վնաս կրեալ գիւղացւոց բաժնուի։ Այս առաջարկութիւնը որ Յովհան ըրած էր, իբրև պատգամ ընդունելի եղաւ զինուորներէն, և այն խեղճերը որոնց գիւղերն Արաբացի կրակէն կը մխար և ամէն բանէ զրկուած էին և իրենց անձինքը միայն ազատած՝ յուսահատ ապագայն կը մտածէին, հիմա առջինէն աւելի զիրենք հարուստ գտնելով՝ ուրախութեան հանդէս կը տօնէին։

Երբ առաւօտուն իշխանին՝ զօրավարաց կը յայտնէր թէ վայել էր իրենց այցելութիւն ընել վանքը իշխանուհւոյն, Աշոտ անձայն կը մտածէր, իսկ Յովհան

— Ձեզ երթալ կարծեմ պէտք է, բայց ինձ

համար կարևորութիւն չ'եմ տեսներ. մանաւանդ թէ ժամ առաջ պէտք է որ ես Սասուն դառնամ, ըսաւ վճռողական ձայնիւ:

Հազիւ թէ Լինք այս խօսքերը լռուցեց, մեզ ծանօթ Թադոս հայրիկ ներս մտաւ և ողջունելով զամենքը,

— Տէ՛ր, Վասկանուշ իշխանուհին ձեզ իւր շնորհակալութեան այցելութիւնը կուգայ ընելու ըսաւ, և հազիւ թէ խօսքը լմնցուց ահա իշխանուհին ինքն ներս մտաւ, շրջապատեալ չորս հինգ պառաւ կոյսերէ, ողջունեց զամենքը և նստաւ.

Ճար չէ կար, Յովհաննու փախստեան տեղի չէ մնաց. իւր սրտին տրոփիւնն՝ Խօսրով որ քովը կեցեր էր կը լսէր որոշ և յայտնի, և այդ զօրաւոր մարմինը բաբախման հետ կը շարժէր:

Տեսարան մ՛էլ Աշոտի վիճակն էր որ Գուրգէնի կռնակը պատսպարան գտեր էր ինքզինքը ծածկելու իշխանուհւոյն աչքերէն:

Իսկ սա՝ համառօտ և քաղցր շնորհակալութիւններ ըրաւ ամենուն իւրեանց քաջութեան և ազնուասրտութեան համար, և խնդրեց որ նոյն շնորհակալութեանց թարգման լինին այն պատուական զօրաց որ այնչափ գութ և եղբայրսիրութիւն ցոյց տուեր էին իւր ժողովրդեան, և խօսքը վերջացուց ըսելով թէ՝ «Հայ

ազգին այսպիսի թշուառ վիճակին մէջ մեծ մխիթարութիւն էր տեսնել այնպիսի դիւցազուններ՝ որոնց զինուորական քաջութեան հաւասար էր պատերազմէն վերջ առաքինութիւնն և անշահասիրութիւնը:»

Այս խօսքերը լռուցելէն ետքը իշխանուհին ոտք ելաւ, արդէն բաց՝ իրմէ ոչ ոք չ'էր նստած. «կը յուսամ, զօրավար Տէարք, որ այս երեկոյ մեր վանքի շնորհակալութիւնն ուզէք պատուել ընթրել յանձն առնլով» ըսաւ: Եւ քանի մը քայլ առաջ անցնելով, Աշոտի առջև կեցաւ.

— Քաջ պատսպարան մը գտեր ես ինքզինքդ ծածկելու համար, Աշոտ իշխան, բայց դարձեալ քու քաջութիւնդ յայտնի ըրած է քեզ ամենուն, քու երեկուան համբաւդ ինձ հասաւ և ուրախացուց և ես գոհ եմ, ու խոստմունքիդ դրժող զքեզ չ'եմ կրնար համարիլ:

Աշոտ քանի մը խօսք թոթովեց շփոթած, և իշխանուհին անցաւ Յովհաննու առջև կանգնեցաւ. Իր լուսալից հայեցուածքը վսեմ և քաղցր այդ մարդուն կրակէ աչքերուն վրայ ուղղեցան, որ կարծես թէ դալկացեր էին նոյն միջոցին. հազիւ թէ այդ անխոնջ ծունգերը զինք կը վերցնէին:

— Յովհան զօրավար, զիս չ'ես ճանչեր,

— Ես ո՞վ եմ որ զքեզ ճանչեմ, իշխա-

նուհի, պատասխանեց Յովնան խեղդուկ ձայնով։

— Ես Վասակ Բագրատունւոյ դուստր Վասկանոյշն եմ . . . . յիշեցիր զիս, այնպէ՞ս չ՚է։

— Այո՛ իշխանուհի, ըսաւ Յովնան նոյն ձայնով։

— Այս երեկոյ ուրեմն կը տեսնուինք, այնպէ՞ս չ՚է։

— Հրամանը քուկդ է, իշխանուհի։

— Շա՛տ բարի ըսաւ Վասկանոյշ և դառնալով իշխանաց հրաժարական ողջոյն մը տուաւ և ելաւ։ Ամենքը յուղարկաւոր գնացին ետևէն մինչև որ հեծաւ ձորին և վանքին ճամբան բռնեց։ Իսկ Յովնան անհետացաւ։

Ան ատեն Գուրգէն Աշոտի ըսաւ.

— Իրաւո՛ւնք ունիս դու տղայ, այդ կինը սովորական կին չ՚է. իրա՛ւ թագուհու կը նմանի. իւր ամեն շարժմունքին՝ ձայնին՝ խօսքերուն մէջ վսեմութիւն մը կայ որ ակնածութիւն կը հրամայէ։

— Դո՛ւ որ այնչափ կը ծիծաղէիր իմ վրա՛ս։

— Ճշմարիտ է որ չի համարձակեցայ անգամ իւր առաջ նստելու։ — Եւ դառնալով Խոսրովու, — բայց տեսա՞ր Յովնանու վիճակը. այդ առիւծը ապուշ ոչխար էր դարձել, աչքերը մինչև իրենց փայլը կորուսել էին, ես հիւանդ կարծեցի։

— Այո՛ կ՚երևայ թէ փոքրիկ տկարութիւն մը ունէր։

— Քանի՞ տարեկան կարծես այս կինը, Խոսրով։

— Կարծեմ թէ հիմա քառսուն և հինգ պէտք է լինի։

— Շատ պակաս կը ցցնէ. վանքի՛ կեանք, աղօթել, ուտել, խմել, հանգիստ ընել, զաւակ չ՚ունենալ զինք երիտասարդ են պահել։

— Այսպէս շուտ դատաստան ընել՝ անխոհեմութիւն է, Գուրգէն, ո՛ գիտէ մարդկանց կեանքը՝ անցեալը ի՛նչ գաղտնիքներ ունի։ Բագրատունի Օրիորդ մը, սիրուն՝ հանճարեղ՝ գեղեցիկ ի՛նչ դիպուած տեսնենք զինք բերեր ձգեր է Եփրատի ափանց վրայէն այս Ճորոխի ափանց վրայ։ «Մարդկային սրտի խորը ծովու անդունդներուն կը նմանի» ըսեր են. — մենք կը խօսինք՝ կը ծիծաղինք՝ կը կատակաբանենք՝ կ՚ուտենք՝ կը խմենք՝ կ՚երգենք. ամբոխը որ մեր սրտին վէրքերը չի ճանչէր՝ չի տեսնէր և կարողութիւն չ՚ունի մեր ճակտին վրայ կարդալու մեզ երանի կուտայ։ Ինչո՞ւ հեռուն երթանք. Գուրգէն, քեզ տեսնողը Աստուածին շնորհիւք, զուարթ՝ գեղեցիկ՝ կորովի՝ հսկայ՝ արքայազարմ՝ խելօք երիտասարդ, ի՛նչ կը զրուցէ՝ ի՛նչպէս կը դատէ. միթէ՞ չի զրուցեր «Ահա

աշխարհիս ամենէն երջանիկ մարդը»։ Բայց ես առանց Սողոմոն իմաստուն լինելու կը տեսնեմ թէ կայ որդ մը որ քու սիրտդ կը կրծէ. կը տեսնեմ որ կայ այդ պարզ ճակտիդ վրայ հոգ մը՝ ամպ մը որ պայծառ արեւուդ ստուեր կը ձգէ. և ի՞նչպէս գրուցեմ թէ Գուրգէն երջանիկ է՝ բարեբաղդ է։ Այսպէս իմացիր նաև այդ սեւերով ծածկեալ կնոջ համար որ բեհեզներու և ծիրանիներու կեանքի համար էր ստեղծեալ։

—Իրաւունք ունիս, Խոսրով, դու ինձմէ խելօք ես։

—Բա՜ լեցի, բայց քեզմէ աւելի փորձառու եմ, վասն զի քու կրկին տարիքդ ունիմ, և տեսածէս օգուտ քաղել ջանացեր եմ միշտ։

Բարեբաղդաբար Գուրգէնի համար, որ Խոսրովու գուշակութիւններէն գոհ չ՚եղաւ, թէպէտ մեծ համարմունք առաւ նորա սրատեսութեան վրայ, իշխանիկը եկաւ որ իբրև աւելի ընտանի՝ իշխանուհւոյն ընկերացեր էր քիչ մը տեղ։

— Ուրեմն կամայ ակամայ այսօր և այս գիշեր էլ մենք դեռ հոս պէտք է անցնենք, երբ Յովհան զօրավար նաև մնալու խօսք տուաւ իշխանուհւոյն։ Վաղը կ՚ուղեւորինք Արամանեակ և անկից Թորթում ՚ի միասին։

— Շատ բարի, ըսաւ Գուրգէն, բայց իմ դղեակս գրաւողը ի՞նչ տեսակ մարդ է։

— Անպիտան Յոյն իշխան մը։ Ես Յունաց Սպարապետին քանի անգամ գնացի իմացնելու թէ եղածը մեծ անիրաւութիւն էր, թէ Գուրգէն կայսեր բանակին մէջ ծանօթ անձ մ՚էր . . . բայց նա իմ խօսքերս ընդհատելով, քու խընդրանաց համար, կը հրամայեմ որ հիմա ոչ ոք դղեակը չի գրաւէ և տարի մ՚էլ ժամանակ կ՚ուտամ. բայց այդ պայմանաժամն որ անցաւ և Գուրգէն չ՚երևցաւ՝ ամենևին մ՚աշխատիր, վասն զի ո՞ գիտէ նա ի՞նչ վիճակներու՝ ի՞նչ վտանգներու մէջ կը գտնուի իւր յանդուգն բնաւորութեամբ՝ եթէ ողջ է։ Եւ որովհետև տարին չի լրացեալ Յոյնք ինձ թշնամացան, նոյն միջոցին երբ իմ վրաս յարձակեցան Արամանեակ յափշտակելու, լսեցի թէ Թորթումի դղեակն էլ գրաւեր են։ Ի՞նչ ընես, որդեակ, անտէրունջ ազգ ենք, ամեն մարդ իրաւունք կը կարծէ մեզ համար անիրաւութիւն և յափշտակութիւն։ Մենք էլ ազգովին շփոթած և յուսահատ՝ հացի մէկ պատառը շունին բերանը կը նետենք միւսն ազատելու համար. ես քանի որ աչքս բացեր եմ, այս եմ տեսեր. վա՜յ նոցա որ մեր ետևէն պիտի գան։

— Ո՛չ իշխանիկ, այդպէս պէտք չ՚է լինի, աւելի լա՜ւ է անժառանգ աշխարհէս երթալ քան թէ այդպիսի վիճակ մը մեր զաւակներուն թողուլ։

Նոյն երեկոյին վանքին նախապարսպի սենեակներուն մէջ լաւ ընթրիք մ'ըրին իշխանուհւոյն կոչնականք, որ վայրկեան մը երեցաւ և իբրև իրեն փոխանորդ թողլով վանքին քահանան՝ քաշուեցաւ։ Ընթրիքը երբ վերջացաւ և ամենքը կը պատրաստուէին Սմբատաւան դառնալու՝ դարձեալ երեցաւ իշխանուհին, և ամենուն բարի ճանապարհ մաղթելէ վերջը դարձաւ Յովհաննու ըսաւ.

— Քեզ և քու Սանուցուդ դեռ բարի ճանապարհ չ'եմ կարող մաղթել և կը փափաքիմ որ քանի մը օր աւելի ինձ հիւր լինիք, վասն զի ինչպէս կրնաք երևակայել կարելի է որ այդ անգամ Արաբացիք դառնան վրէժ խնդրելու իրենց պարտութեան. և որովհետև ես էլ Տարօնոյ գաւառէն ձեզ հետ մերձաւոր հայրենակից եմ, կը յուսամ թէ իմ խնդիրքս չ'էք մերժեր։

Իսկ Յովհան որ բոլորովին կազդուրեալ մարդ մ'էր, և առջի շփոթութենէն ազատ՝ անխռով, բայց ամենայն խոնարհութեամբ պատասխանեց.

— Քու փափաք և խնդիրը մեզ Սանուցոց համար սուրբ հրաման է, իշխանուհի, և զմեզ երջանիկ կը սեպենք եթէ քեզ և քուկիններուդ համար կենաց վտանգաւ անգամ կարենանք ծառայել։ Այս ոչ իմ միայն՝ այլ բոլոր մեր Սանուցոց ամենուն փափաքն է։

Այս խօսքերն այնպիսի միամտութեամբ զրուցուեցան, որ մէկուն կասկածի տեղիք չ'էին կրնար տալ, և Խօսրով նաև ամենևին չ'էր կասկածեր՝ եթէ Հռիփսիմէ Տիկնոջ պատմութեան տեղեակ չ'լինէր։

Առաւօտուն իշխանաց հեծելագունդը կը բաժնուէր Սանուցոց և Գուրգէն խօսք առնլով Յովհանէ որ պիտի գայ զինք Թորթում տեսնելու, իւր միւս ընկերներով կ'երթար իր նպատակին։

Այս վիճակին մէջն էր ահա խեղճ Յովհաննու անձը երբ ամեն ընկերները գնացին, և ինք մինակ մնաց իր Սանուցիններուն հետ, մանաւանդ թէ իւր քսան եօթ տարուան տենչանաց հետ. իրա՛ւ, տեսաւ, և ոչ միայն տեսաւ այլ և խօսեցաւ իրեն, այլ ոչ տեսնելը տեսնել էր՝ ոչ խօսիլը խօսիլ, այնպիսի սիրոյ մը համար որոյ մէջ ոչ յանցանաց այլ ստգտանաց նաև նշմարանք չ'էր մներ, որուն մարդկային և երկրաւոր ամեն բիծերն ու ժանգը (եթէ այսպէս լեզու մը կըրնայ գործածուիլ սիրոյ համար) թշուառութեան կրակը և հառաչանաց բոցը մաքրեր և զտեր էր, և ուր նիւթական ամեն բան հատեր աննիւթականն էր միայն մնացեր։ — Ի՜նչ բաներ ունէր Յովհան զրուցելու այդ կնոջ, ի՜նչչափ բաներ ունէր իմանալու իրմէ. քսան եօթ եր-

կայն անհամնում տարիներու և նոցա աւելի երկայն գիշերներու պատմութիւնն իւր աչաց առաջ կը հոլովէին: — Կը յիշէր այն դառնացեալ՝ անջատեալ սիրոյն գիշերները երբ մարդկային ամեն ձայներ կը լռէին, ամեն աղմուկներ կը դադրէին, երկու տարուան բանտարկութենէ վերջ նաև այն օրերը որ ինք միայնակ՝ օտար՝ պանդուխտ և կամաւոր տարագիր՝ իւր գերեզմանական սենեակին դուռը կը գոցէր, իւր կրակէ գլուխը երկու ձեռքերուն մէջ առած, թևերը ծունգերուն յեցուցած՝ երկու անուն միայն շրթունքները կը մրմնջէին. «Աստուած և Վասկանուշ:» . . . Եւ հիմա ականջին կը խօսէր այն ձայնը՝ այն մարգարէական ձայնը որ գետնափոր տաճարին մէջ իրեն զրուցեր էր. «Կուգայ տարին, կուգայ օրը, և թերևս հեռու էլ չ'է, որ դարձեալ զինք պիտի տեսնես, դարձեալ արցունքներովդ իւր ոտքերը պիտի թրջես . . . .» Ո՞ւր է այն ժամն, ո՞ւր էր այն վայրկեանն. և ի՞նչ պիտի ընէր Յովհան անկից վերջ կեանք ըսուած բանը, որ չարչարանք եղեր էր իրեն համար և բոլ տանջանաց այնչափ տարիներ:

Այս մտածութիւնք զինքը կը տարուբերէին և վայրկեանները ժամեր կ'երևէին, երբ Թադոս հայրիկ ներս մտաւ և իր հանդարտ կերպով,

— Յովհան զօրավար, մայր իշխանուհին քեզ կ'ուզէ տեսնել, ըսաւ:

Արքայութեան աւետաբեր հրեշտակն էր այդ ծերը: Թռաւ Յովհան, հասաւ վանք, մտուցին զինք այն սենեակը ուր Աշոտ Սիւնի և Վասկանուշ տեսութիւն մը ունեցեր էին և ուր ինք Յովհան ուրիշներուն հետ տեսած էր Վասկանուշ. բայց հիմա . . . ոչ ոք չէ կար սենեկին մէջ, դուռը գոցուեցաւ վրայէն: Իւր սիրտը այնպէս կը տրոփէր որ պայթելու մօտ էր և ձեռքը հոն կը դնէր՝ իբրև թէ այդ խեղճ գործարանին սանձ մը դնել կը ջանար. երբ գաղտնի դուռ մը բացուեցաւ և Վասկանուշ երևցաւ. Թալկահար՝ ծանր և հանդարտ երկու քայլ առնելով՝ «Յովհա՜ն» ըսաւ և ձեռքը երկնցուց. լեռնականը սրացաւ ծունգի վրայ եկաւ և այդ գեղեցիկ փոքրիկ ձեռքը իւր երկու ափերուն մէջ գրկելով՝ շրթանց և աչաց վրայ դնելով՝ արտասուաց հեղեղներով կը լուանար և կը հեկեկէր ու նոյն դիրքին մէջ մնաց բաւական ժամանակ, մինչև որ հեկեկանաց ձայնը դադրեցաւ, և իշխանուհին «բա՛ւ է, Յովհան» ըսաւ: Իսկ Յովհան գլուխը վեր առնելով. «Ո՜հ իմ Տիրուհիս, ո՞ւր էր թէ հիմա հոս մահը հասնէր:»

ԳԼՈՒԽ ԺԲ.

ՎԵՐՋԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.

Այդ խօսքէն վերջը՝ այդ դիրքին մէջ ո՞ գիտէ քանի վայրկեան մնացին այս տարիներով բաժնուած սիրահարքը, երբ Յովնան յանկարծ զգաց որ Վասկանուշի ծնգուրները կը թեթեւէին, և իյնալու վտանգը տեսնելով յափշտակեց զինքը և տղու մը պէս բերան բազմոցին վրայ դրաւ. բայց սոսկումը զինք առաւ երբ նշմարեց մահուան գոյնը երեսը պատած, շրթունքները ձերմկած՝ աչքերու բիբերը փայլը կորսուսած բոլորովին վեր յոնքերու կը դիմէին. «ո՞վ Աստուած իմ, կ՚ըսէր, այսպէս ուրեմն իմ խնդիրքս լսեցիր զիս պատուհասելու համար՝ մահը ես ինձ համար ուզեցի» Այդ պատերազմի և արիւններու մարդը նուաղման գաղափարը չ՚ունէր, կեանք և մահ միայն կը ճանչէր և տեսեր էր, այդ երկուքին մէջի վիճակը չէր գիտէր. ուստի սոսկումը զինք պատեց, իր սիրտը որ կը տրոփէր ձայն տուաւ իրեն և ձեռքը դրաւ նորա սիրելի սրտին վրայ՝ և այնպէս կարծեց թէ դա էլ կը տրոփէ, յոյս առաւ, թէպէտ իր

ձեռաց երակներուն տրոփիւնն էր այն. պատուհան բացաւ որ օդ մտնէ, և դողդոջուն ձեռօք այդ կուսական սուրբ և պաշտելի մարմնոյն կապերը թուլցուց և բաժակ մը ջուր գտնելով ուզեց խմցնել իւր տիրուհւոյն. ցուրտ ջուրը վար չ՚երթալով որովհետև շրթունք և ծնօտ կղպուած էին՝ թափեցաւ այդ ձեռնափայլ մարմնոյն վրայ, և փոքրիկ ցնցում մը յայտնի ըրաւ Յովնանու թէ կեանք կար. նորա սառած ոտքերը ձեռքերը կը շփէր իւր հրացայտ դողդոջուն ձեռքերով, փչեց իւր հրաշունչ ոգւով երեսին և նուիրական կուրծքին ուր ձեռք երկնցնել երբէք մտքէն չէր անցել և չէր համարձակել. և ահա ծնօտները թուլցան, շնչառութիւնն սկսաւ և բիբերը իրենց բնական դիրքն առին: «Աստուած իմ, Աստուած իմ, կ՚ըսէր Յովնան, այս ի՜նչ շնորհք է: Եւ ահա հառաչանաց ձայներ՝ մեծ մեծ շունչեր լսուեցան և Վասկանուշ շարժեցաւ շտկուեցաւ. «Ո՞ւր եմ ես» ըսաւ. «Ա՜հ Տիրուհիս հոս» . . . «Յովնան, դու՞ ես մ՚ե՛րթար, էլ մի՛ հեռանար, ոհ, շատ և երկայն էր այս միայնութիւնը» . . . ըսաւ և դարձեալ նոյն առջի վիճակը եկաւ: Իսկ սա կրկնեց իւր շփմունքը իւր շունչը, և վերջապէս գոհութեամբ տեսաւ որ ելաւ իւր տիրուհին ու նստաւ, երեսին գոյն սկսաւ գալ.

և կատարեալ դատելով վիճակը զգեստներուն դիրքը շտկեց, ծածկուեցաւ վերարկուն և հրամայեց ձեռքով Յովհաննու պատուհանը գոցել և ջուր տալ։ Փոթորիկն անցաւ. Իշխանուհին նստած էր բազմոցին վրայ և Յովհան ծունկ չոգած կը կենար բաւական հեռաւորութեամբ իբրև յանցաւոր՝ դողալով որ մի՛ գուցէ նոյն վիճակը վերադառնայ։

«Մօտ ե՛կ, Յովհան,» ըսաւ վերջապէս Վասկանուշ, իր տկար և դողդոջուն ձայնին մէջ մինչև վսեմութիւն կը տիրէր. Իսկ լեռնցին որուն աչքերը շլացեր էին այս արևէն, և որուն այնչափ տարիներ աշխարհք խաւար էր, հազիւ թէ կը համարձակէր իրեն նայիլ՝ ոտքերուն քով եկաւ չոքեցաւ։

— Զրուցէ՛ Յովհան, այսչափ տարիներ որ անցան քանի որ իրարմէ բաժնուեցանք ի՜նչ ըրիր, խօսք մը չունի՞ս ինձ։

— Ի՞նչ զրուցեմ Տիրուհիս, քսան եօթ տարի է և շա՛տ ապրեցայ. երկայն քշեց այս կեանքը, ի՜նչչափ կարճ էին օրերը՝ անցին օրերը՝ և երկար, տարիները։ Ես կը խոստովանիմ թէ մեղաւոր եմ, թէ մեծ յանցանք գործեցի, ես թշուառ ողորմելի արարած, քեզ՝ աննման հրեշտակիդ աչքս բարձրացուցի և յանդգնեցայ քու ոտիցդ իմ աչքերս քսել. Բայց միթէ՞ կարելի

էր զքեզ տեսնել, զքեզ ճանչել և զքեզ չ՚սիրել։ Իմ խեղճ սիրտս կ՚ըսէր ինձ. «Աստուած տեսնել չ՚է շնորհեալ մարդու, բայց գնա սիրել յամենայն անձնէ՝ յամենայն սրտէ և յամենայն մտաց Աստուածային պատուիրան է. եթէ դու այդ գերբնական էակին վրայ՝ Աստուածային շնորհք կը տեսնես՝ կրնա՞ս՝ մի՛ սիրել, բայց որովհետև չ՚ես կրնար, սիրէ՛ և անյոյս սիրէ։» Ես գոհ էի իմ վիճակէս երբ անխօս զքեզ կը պաշտէի, գոհ էի երբ Բագրատունեաց պալատէն կը հեռանայի քու ձայնդ միայն լսելով, քու մէկ հրամանդ կատարելով, քու մէկ «Յովհա՛ն» ձայն արձակելովդ, քու երեսդ մէկ մը տեսնելով, նաև քղանցիցդ ստուերը միայն նշմարելովս։ Կ՚երթայի իմ լեռներուս գլուխը և առանձնութեան մէջ ժամերով օրերով այդ յիշատակներէն կը յափրանայի և հրեշտակային արբեցութեամբ յերկինս կ՚ամբառնայի և ինձ այնպէս կը թուէր թէ մարդկանց ամենէն երջանիկը ես եմ։ Բայց իմ այս յանդգնութիւնս, իմ չափէս վեր բարձրանալս անհաճոյ թուեցան Աստուծոյ՝ և զիս պատժեց. Ես արժանի էի իւր պատուհասին, բայց իմ պատճառաւս երբ կը մտածէի թէ դու աննման հրեշտակ՝ դու նաև կը քաշէիր. դու՝ թագուհի լինելու՝ ծիրանիներու և բեհեզներու համար ստեղծուած, սուգի և բանտի էիր դա-

տապարտեալ և իմ մեղացս համար, այս էր ահա որ ես իմ անձիս չէի կրնար ներել, և քու աչացդ երևիլ ու թողութիւն նաև խնդրել չէի համարձակիլ:

— Գիտէի՞ր, Յովնան, իմ հոս լինիլս:

— Առջի տաս տարին չէի գիտեր. երկու տարի գողի պէս կը պտտէի բոլոր Հայաստան, առանց համարձակելու անունդ բերնէս հանել, բաղդէն սպասելով որ իմանամ թէ ու՞ր ես: Վերջը յուսահատ թողի գնացի Յունաստան և զինուոր եղայ և տեսայ որ օտար հող զիս չուզէր ընդունիլ. դարձայ եկայ Տարօն, և մեր լեռնցիք զիս պարտաւորեցին՝ և ես անօգուտ կեանք մը օգտակար ընելու համար կ'երթայի Բագարատ իշխանին Սահնոյ գործերը կարգի դնելու: Հոն դիպուածով իմացայ թէ Արտանուշի վանքն է իշխանուհին:

— Եւ անգամ մը գալ միտքէդ չ'անցա՞ւ:

— Պէտք է խոստովանիմ ճշմարիտը. ամէն տարի կուգայի ձորոխի դիմացի ափը թուփերու մէջ օրերով կ'սպասէի ինչպէս կը վայլէր ինձ պէս յանցաւորի մը, և երբ զքեզ կը տեսնէի որ կը ճեմէիր առանձին, ես այսպէս ծունգի վրայ կը խնդրէի յԱստուծոյ որ Տիրուհիս երջանիկ ընէ: Կը փափաքէի որ ձայնդ լսեմ, բայց անիրաւ ձորոխ այնչափ շառաչանք ունէր, որ

կարելի չէր լսել: Բայց դարձեալ այն տեսութեամբ ծարաւս կ'անցնէի և գոհ ու երջանիկ կը դառնայի Սասուն: Այս ամառ միայն չը կրցի գալ:

— Ե՛լ Յովնան, նստէ քովս, և մտիկ ըրէ թէ ի՛նչ պիտի լսեմ:

— Ներէ՛ Տիրուհիս, ես այս դիրքիս մէջ աշխարհիս ամէնէն երջանիկ մարդն եմ, և յաւիտենականութեան մէջ եթէ քու ոտիցդ առջև այսպէս կենայի, արքայութիւն կը դառնար այն ինձ համար:

— Բայց ես կը հրամայեմ, Յովնան, և դու չե՞ս հնազանդիր, ըսաւ Վասկանուշ քաղցրութեամբ, և ձեռքէն բռնելով նստեցուց քովը: . . — Ես չեմ ուզեր որ իմ վրաս զգացած սէրդ յանցանք համարիս. ես չեմ ուզեր որ դու աշխարհիս լիմար օրէնքները Աստուծոյ բնութեան հրամայած օրէնքներէն վեր դնես: Ես քեզ սիրեցի և դարձեալ կը սիրեմ և միշտ պիտի սիրեմ: Ես գոհ եմ քեզմէ, դու ինչ որ կ'ընէիր, և մանաւանդ ինչ որ այս վերջի տարեներս ըրիր ամէնն էլ գիտեմ. միայն քու թուփերու մէջ գաղտնի զիս դիտելդ չէի գիտեր: Քեզմով ես երջանիկ կրնայի լինիլ աշխարհիս վրայ՝ իմ այս միայնութեան կեանքով, Աստուած այս վերջինը միայն կամեցաւ, որովհետև մար-

զիկ նորա օրէնքները ծամածռել յանդգներ են․ ծնողք յիմար սովորութեանց և գոռոզութեան իրենց զաւկները և իրենց ծնելական գութը զոհել օրէնք ըրեր են. և ազնուատոհմութիւնը երբ բարձրէն արհամարհոտ աչք կը ձգէ ռամկին վրայ և կը կարծէ թէ այդ անարգ արարածն իրեն համար է ստեղծեալ, ահա այսպէս կը պատժուի և գերութեան շղթայներու դառն ճաշակը կ՚առնէ։ Ո՞ր նախարարական ցեղն է որ չ՚ունենայ մէկը Բաղդատ, և ի՞նչ ըրին որ արժանի չ՚ըլլային այդ անարգանաց և երկրին կործանման։ Այս վանքին՝ զոր դու բանտ կ՚անուանես՝ դռները բացուեցան ինձ համար և ինձ դիւրին էր դառնալ ծիրանիներու և բեհեզներու պլլուիլ և ես չ՚ուզեցի։ Անոր համար չ՚ուզեցի՝ վասն զի գիտէի թէ Ցոփեան զիս կը սիրէր և ես զինք կը սիրէի. անոր համար չ՚ուզեցի՝ որ զիս այս տեղէն հանելով՝ պիտի խնդրէին այնպիսի մարդու մը մատնել որ ո՛չ սիրտ ունէր՝ ոչ զգացմունք և որ մոլութեանց մէջ թաթախեալ էր։ Վասն զի շատ հազուադէպ են այդ նախարարաց մէջ ազնիւ զգացմունք և առաքինութիւնք։ — Բուղա դռներնին կը ծեծէր… իսկ նոքա իրենց գիններբուաց և մեղկ անառակ երաժշտութեանց ձայներէն խլացած չէին լսեր թէ ո՞վ կուգար։ Նոյնը ահա կը

տեսնեմ որ արևելեան և հիւսիսային Հայաստանի կ՚սպառնայ և ամեն ոք ապշութեամբ թմբրեալ կը քնէ։ Այո՛ Ցոփեան, այս աշխարհքիս մէջ իջնել չ՚ուզեցի, աւելի լաւ համարեցայ հոս այս վանքիս մէջ իմ կենացս մնացորդն անցնել խաղաղութեամբ Աստուծոյ հետ, ջանալով օգտակար լինիլ Քրիստոսի ժողովրդեան ինչչափ որ տրուած էր իմ տկար կանացի ձեռքերուս կարողութիւն, քան թէ երթալ անիրաւութեանց և կեղեքմանց մասնակցիլ։ Լաւ համարեցայ քեզի պէս առանց յուսոյ սիրել, սէրը նիւթականութեան չ՚իջեցնել երբէք իւր բարձրութենէն, և այսպէս այս կարճ կեանքն անցնել, անդին միշտ միասին ապրելու համար յաւիտենական կենաց մէջ։

Այս խօսքերը զրուցելուն՝ Վասկանուշի քընքուշ ձիւնափայլ ձեռքը Ցոփեանու առիւծաթաթ ձեռքին վրայ էր, իր աչքերը երկինքն էին, սէրը իւր բնական գեղեցկութեան աւելի փայլ մը տուել էր. իսկ Ցոփեան գլխիկոր հազիւ թէ կը համարձակէր աչքերը վերցնել նայիլ այն հրեշտակին՝ որ զինքն առջի օրէն յափշտակած էր՝ այն անձին որուն հետ բաղդատելու բան մը աշխարհքիս վրայ չէր տեսած, և նորա աչաց մէկ ակնարկին առջև իբրև տղայ կը սառէր։

Շարժեցաւ Վասկանուշ ելաւ, Ցոփեանու նա-

յեցաւ և հասկցաւ որ այդ շարժմունքը հրաժարական կը կարծէր. ըսաւ ծիծաղելով.

— Ո՛չ Յոհան, դեռ երթալու ժամանակ չ՚է, այսօր քեզի հետ միատեղ պիտի ճաշեմ. աշխարհքէս և անոր հաճոյից հրաժարեալ՝ այս զուարճութիւնն անգամ մը կ՚ուզեմ ունենալ. Եգիպտոսի մենակեաց անապատականք նաև երկու արմաւ և հացի մը պատառիկ միասին կ՚ուտէին և այդ ճաշը «էր» կ՚անուանէին։

Այս լսելով ձեռքէն բռնեց և դէպ՝ անյայտ դուռը տարաւ և Յոհան փոքրիկ սենեակ մը տեսաւ՝ անպաճոյճ սեղան մը և երկու աթոռ դիմացէ դիմաց դրուած։ Իշխանուհին նստաւ, Յոհան ևս նստաւ իբրև փուշի վրայ և հնազանդելու համար նորա ակնարկին. իսկ Վասկանուշ բաժակը լցուց և Յոհանու դառնալով «Մեր յաւիտենական կենաց հարսանեաց» ըսաւ, և պուտ մը խմելով տուաւ նորա՝ որ առաւ քամեց բաժակը մինչև վերջին կաթիլը. Վասկանուշ որ իրեն կը նայէր՝ հարցուց.

— Ի՞նչչափ ժամանակ է, Յոհան, որ բերանդ գինի դրած չ՚ունէիր։

— Քսան եօթ տարի, Տիրուհիս։

— Խե՜ղճ Յոհան, ամեն բանէ ինքզինքդ զրկեր էիր։

— Ի՜նչ էր իմ զրկանքս, երբ զքեզ միտքս

բերէի, դու՝ Բագրատունեաց Օրիորդ, ոսկեձեղուն պալատներուն մէջ ծնած, ինձի համար դատապարտուած, ես խեղճ լեռնցի՝ ամեն տեսակ խիստ կեանքի ընտանի էի 'ի ծննդենէ, ինձ համար հաւասար էր արդէն ջուրն ու գինին, մանաւանդ որ միտքս դրեր էի անզին՝ արքայութեան մէջ խմել երկնային գինին. բայց Աստուած արքայութեան երկնային գինւոյն ճաշակն այսօր ինձ տուաւ. երկրպագու եմ իւր շնորհաց և իւր հրեշտակին։ Բայց դու ուսկի՞ իմացար, Տիրուհիս, թէ ես գինի չ՚եմ խմեր։

— Արդէն գիտէի, բայց անցեալ երեկոյ երբ իշխանաց հետ եկած էիր ընթրելու, տեսայ զքեզ այս գունէն և քու ամեն շարժմունքդ։

Գինին թէպէտ բաժակ մը՝ բայց Վասկանուշի շրթունքներն հպեալ և նորա ձեռքէն՝ համարձակութիւն և զուարթութիւն տուին Յոհանու. տխրութիւնը հալածեցաւ իւր ձեռքէն, աչքերն իրենց բնական փայլն առին, բայց փոխանակ սովորական հրոյն՝ քաղցր լոյս կը ցոլար. կնոջ մը դիւթիչ զօրութեան ազդեցութիւնն էր, որ այդ հզօր պղնձէ էակը մոմի պէս կակղցուցին, առիւծէ 'ի գառն կը փոխարկէր։ Հիմա ծիծաղը հեգնութիւն չ՚էր իւր երեսին վրայ, այլ սրտին կերպարանքն էր որուն դառնութիւնը ար-

տասուայ հեղհեղը լուացել ու մաքրել էր։

Այդ ճաշը երկայն տեւեց, և երկու անձինք իրենց այնչափ տարուան քաշածները՝ զգացածները՝ ըրածները պատմեցին իրարու, երբեմն հեշտ արտասուք՝ երբեմն ծիծաղ փոփոխակի կը փայլէին իրենց երեսին վրայ, մինչև որ Վասիլանուշ իր լուրջ կերպարանքն առաւ և ելաւ սեղանէն, է՛լ ժամ էր բաժանման. երբ մտան դարձեալ առջի ընդարձակ սենեակը հարցուց.

— Գո՞հ ես, Յովնան, իմ հիւրընկալութենէս։

— Մինչև երկինք, Տիրուհիս։

— Կը փափաքիմ որ այս օրուան ուրախութիւնը պահես մինչև որ զիրար տեսնենք հոս կամ հոն, ըսաւ իշխանուհին և մատը երկիր ու երկինք ցցուց։

— Գիտես թէ մէկ խօսքդ՝ մէկ ակնարկդ ինձ համար ի՛նչ են, Տիրուհիս։

— Աստուած հետդ ըլլի, սիրելի Յովնանս։

Եւ ձեռքը երկնցուց. Յովնան ծունկի վրայ համբոյրներով ծածկեց այն սիրելի ձեռքը և իշխանուհին ծռեցաւ՝ իր ձեռաց մէջ առաւ այդ առիւծի գլուխը և ճակտին վրայ համբոյր մը դրաւ, և հոն թողլով Յովնան գնաց փոքրիկ սենեակին դուռը և այս վերջին խօսքերն ըսաւ.

— Վաղն առաւօտ արևագալէն՝ պարսպին վրայ զիս տե՛ս վերջին անգամ։ — Եւ դուռը գոցեց անհետացաւ։

Ելաւ Յովնան, սրբեց ուրախութեան արցունքները առաւ զէնքերը և երբ դուրս ելաւ սենեակէն կը վախէր որ իր ուրախութիւնն ուրիշները չի կարդան իր դէմքին վրայ։ Այսպէս գնաց նա թեթևեալ ոտիւք Սմբատաւանի մօտ, և ամենքը կրնային տեսնել իր ճակատը պարզեալ կնճիռներէն։

Աւելորդ է զրուցել թէ երբ Վասիլանուշ երկրորդ առաւօտուն ելաւ վանքին պարսպին վրայ, նշմարեց ձորոյն հանդիպակաց կողմը մարդ մը ծունկի վրայ որ կ'սպասէր և որ զինքը տեսնելուն թևերը դէպ՝ իրեն տարածեց։ Երկու պտոյտ մ'ըրաւ իշխանուհին, գլխով այդ վարի մարդն ողջունեց և քաշուեցաւ։

Նոյն երեկոյ Մայր իշխանուհւոյն խնդրակներն եկան և իմացուցին թէ Արաբացւոց ոչ հետք և ոչ նշմարանք մնացեր էին Կարսի շրջակայք. ուստի երկրորդ առաւօտուն շնորհակալութիւն կը յայտնէր Յովնանու և իր Սասնայց Թադոս աւանապետ և իշխանուհւոյն ևթէ խումբը կ'ելնէր ճամբայ Արտանուշի փոքրիկ գաւառին երախտագէտ ժողովրդեան երկայն տեղ ընկերակցութեամբ, որ զերենք կ'օրհնէին, իրենց

ըրած բարութեանց փոխարէն հազար և բիւր մաղթելով յԱստուծոյ:

Իսկ Յովհաննէսեանք ուրախ և անարգել շարունակելով իրենց ճանապարհը հասան Թորթում ուր սիրալիր ընդունելութիւն Գուրգէնի կ'սպասէր իրենց:

ԳԼՈՒԽ ԺԹ.

ԹՈՐԹՈՒՄ.

Թէպէտ ձիւնը ամէն տեղ նստած էր և հազիւ սկսած էր հալիլ բարձր Հայոց աշխարհին մէջ, բայց Թորթումի գաւառը գարնան հոտերը սկսած էին. երբ Գուրգէն իջաւ լեռներէն իւր գունդով՝ ինչպէս սովորութիւնն էր միշտ առջեւէն, բլրոց և դաշտաց կանաչը՝ ծառերուն ձիւնափայլ ծաղիկը իր սիրտը չ'ուրախացուցին: Հեղինէի դառն յիշատակը որու հետ ինք միտքը դրած էր դառնալ և բնակիլ հոն, ամէն գեղեցկութիւն ոչինչ կ'ընէր աչքին:

Բայց Գուրգէնի քով կիրք կար այդ Յոյն իշխանաց անիրաւութեան դէմ՝ որ օգուտ քաղելով իր հեռաւորութենէն տիրացեր էին իւր բերդին և կարասեաց, իրենց կայսեր հրամանը նաև արհամարհելով. ուստի լի բարկութեամբ

կը քշէր Յոլակ, մինչև որ Բագրատունի իշխանիկը մօտենալով իրեն ձայնեց.

— Գուրգէն իշխան, Գուրգէն իշխան, տէ՛ր, ձիանքը պիտի սպաննես, տղա՜յ. քիչ մը ծանր գնա:

— Իրաւունք ունիս, իշխանիկ, ըսաւ Գուրգէն, բայց շատ բան չի մնաց, և ես կ'ուզեմ նախ միայն մտնել ներս բերդը:

— Բայց եթէ միայն մտնես շատ վտանգաւոր գործողութիւն մը կ'ընես, վասն զի Յոյն իշխանը երկու ծառայով առանձին չի բնակիր հոն:

— Քանի՞ հոգի կրնայ ունենալ այդ աւազակը:

— Ո՜վ գիտէ, գոնէ եռսուն քառասուն զինեալ մարդիկ պէտք է ունենայ:

— Մի՞թէ ես մինակ բաւական չե՞մ այդ կնամարդիկը պարսպէն վար թափելու:

— Բայց որդեակ, ինչո՞ւ վտանգաւոր գործ ընել երբ կարելի է խոհեմութեամբ և դիւրութեամբ գործին յաջող ելք տալ. ա՛ռ քեզ հետ ութ տասն հոգի ընտրանօք:

— Այդ լաւ չէ. ութ տասը հոգի շատ են քառասուն հոգւոյ դէմ, ես և չորս հոգի շատ շատ: Այդ Յոյները ես քեզմէ լաւ կը ճանչեմ, իշխանիկ, խորամանկ են սատանայի չափ, տասը զինեալ Հայ հեռուէն բաւական են որ դռները

դոցել տան և բերդին բոլոր պատերազմական պատրաստութիւնները երևան հանեն. ես անգամ մը ոտք ներս դնեմ, Յունարէնի բոլոր գիտութեամբս իրենց վստահութիւն տամ, ինձի դժուար չէ այն ատեն բերդին տիրանալ։ Քեզ կը ճանչեն, դու մի՛ գար. Արամ՝ Խոսրով և Վահրիճ բաւական են ինձի հետ ընկերանալու։ Դուք կէս ժամ վերջը երևցէ՛ք։

Իշխանիկ թէպէտ չի համոզուեցաւ, բայց Գուրգէնի դէմ տալ կարելի չէր, ուստի լռեց. չորս հոգի այդ խորթուպտոյտ ճամբայներէ անցան առաջ և միւսներն ետ մնացին։ Եւ ահա երևցաւ Թորթումի բերդը իւր ահաւոր կերպարանօք. քարեղէն բլուր մը կործանեալ մօտակայ բարձրաբերձ լեռներէն, պատուած ամենէն ինք միայնակ սեպաձև սահած իջած էր հովտին մէջ, գետը և վտակ մը զինք կը շրջապատէին, և այդ ժայռին չորս կողմը ամուր պարիսպ մը կար։ Միջնաբերդը դարձեալ իւր ամրակառոյց պարիսպներն ունէր։ Գուրգէն իւր ընկերաց հետ դէպ ՚ի մեծ դուռն ուղղեցաւ, և պահապանք տեսնելով չորս հոգի միայն դռները չի փակեցին. մանաւանդ երբ Գուրգէն զուարթ երեսով և Յունական հնչմամբ իրենց բարև տալով՝ հարցուց թէ Թէոփիլոս իշխանը հո՞ն էր և ի՞նչպէս էր, և թէ լաւ առողջացե՞լ էր, և

թէ դո՞հ էր իւր նոր բնակութենէն։ Այսպիսի քաղցր հարցմունքներով հասաւ միջնաբերդը և ծիծաղելով ապսպրեց պահապանաց որ լաւ խնամք տանին իր և իր ընկերաց ձիաններուն եթէ Կարնոյ զօրավարին հետ չ՚են ուզեր թշնամանալ, վասն զի ինք անոր կողմէն կուգայ։

Երբ ներքնաբերդին դահլիճին մէջ առաջնորդեցան մեր երեք բարեկամները, և Գուրգէն որոշեց իրեն պատուհանի մը քով տեղ մը ուսկից կրնար տեսնել Հայկական դաշտին երևալը, և Վահրիճ դրան քով կանգնեցաւ՝ ինչպէս իրեն պատուիրել էր Գուրգէն, Յոյն իշխանը երևցաւ իւր բոլոր թատերական ծանրութեամբ և քաղաքավարութեամբ ուր տասը ծառայներով. Բիւզանդական կտրատուքներով ու ձևերով պատասխանեց Գուրգէն, և Կոստանդնուպօլսոյ վրայ խօսակցութիւններ բացաւ որպէս զի ժամանակն անցնի, և աչքը շարունակ ճամբուն վրայ էր։ Յոյն իշխանը տեսնելով Գուրգէնի ուշադրութիւնը,

— Կարծեմ այս տեսարանը քեզի շատ գեղեցիկ երևցաւ, վասն զի միշտ այն կողմը կը նայիս ըսաւ։

— Այո՛, պատասխանեց Գուրգէն, տեսնելով Հայ դաշտին ծայրը և յանկարծ ձևը՝ կերպը և ձայնը փոխելով, այս տեսարանը՝ այս բերդը՝

այս կարասիքը, ամէնն ալ իմս են և կը զարմանամ թէ ո՞րու թոյլտուութեամբ դու եկեր՝ տիրացեր և նստեր ես:

— Սորա տէրը Հայ մ՚է, որ Արաբաց դէմ պատերազմելով մեռած է և ես բարձրագոյն հրամանաւ տիրացեր եմ։

— Այդ սորա տէր Հայը ես եմ, և դու եթէ կարդալ գիտես՝ ահա նորա հրովարտակը:

— Այդ հրովարտակը շատ հին է, ըսաւ Յոյն իշխանը արհամարհոտ աչք մը ձգելով հրովարտակին վրայ. դու եթէ ո՛չ հրովարտակ՝ այլ փոքրիկ թուղթ մը բերէիր Կարնոյ կուսակալէն աւելի ազդեցութիւն կարելի է ունենար:

— Եթէ դու չ՚ես հնազանդիր կայսեր, ես գիտեմ հնազանդեցնել իրեն ապստամբները:

— Իմ տանս մէջ ինձի սպառնալիք ընելու նաև կը համարձակի՞ս. և չե՞ս իմանար, անմի՛տ Հայ, թէ իմ ձեռաց մէջն ես և թէ ակնարկ մը միայն բաւական է քեզ և քու ընկերներդ կապել ու պարիսպներուն բարձրութենէն վա՛ր նետել:

— Դու ոչ զիս կը ճանչես և ոչ իմ ընկերներս, և տղու մը պէս կը խօսիս. վախեմ որ ետքը շատ պիտի զղջաս:

Հազիւ թէ այս խօսքերը գրուցեց Գուրգէն՝

ահա երկու երեք սպասաւոր ներս վազեցին լուր տալով թէ երկու հարիւրի չափ ձիաւոր կը յարձակէին բերդին վրայ և մեծ աղաղակներով կ՚ուզէին իրենց ընկերները որ ներսն էին։

Իսկ Յոյն իշխանը ոտք ելաւ և աչքերը բանալով հարցուց թէ դռները լաւ գոցեր ամրացուցե՞ր էին. և երբ գոհացուցիչ պատասխան առաւ, այն ատեն հեգնական և գոռոզ ծիծաղով մը դարձաւ Գուրգէնին,

— Դուք դաւաճանութեամբ եկեր մեր վրայ՝ առանց իմանալու ծուղակն ինկեր էք, թէ որ ձեր կեանքը կ՚ուզէք ազատել՝ ձգեցէք այդ զէնքերը և անձնատուր եղէք, ըսաւ։

Իսկ Գուրգէն ոտք ելնելով հանդարտութեամբ և ահագին սուրը մերկանալով,

— Անձնատուր ըլլալու եթէ մարդ կայ այստեղ մենք չ՚ենք այլ դուք էք, փուճ կենդանիք, գոչեց և ձախ ձեռօք Յոյն իշխանին թեւէն յափշտակելով տղու մը պէս գետին զարկաւ և ոտքը վրան դնելով, թո՛ղ գայ ո՛վ որ համարձակի զքեզ ազատելու այս վիճակէն:

Խոսրով և Աշոտ մերկ սուրերը ձեռուընին ոտքի վրայ էին, նոյնպէս Յոյն պահապանք սուրերը մերկացեր անշարժ մնացեր էին ապշեալ, և չ՚էին գիտեր թէ ի՛նչ ընեն: Իսկ Թէոփիլոս այդ սոսկալի ոտքին տակ ճնշեալ՝

— Ազատեցէ՛ք զիս, ազատեցէ՛ք կը գոչէր խեղդուկ և ողորմուկ ձայնով:

— Թէ որ ոտք մը առաջ առնուք կ՚ըսէր Գուրգէն պահապանաց, իր պատերազմական ձայնը հանելով, ձեր տէրը ոչխարի մը պէս կը ճմլեմ աս ոտքիս տակ և իր գլուխը դարձեալ ձեզի պէս անպիտաններու չեմ տար, եթէ տասնապատիկ նաև աւելի լինին:

Սրահը ընդարձակ էր բաւական. մէկ կողմը տաս տասներկու Յոյնք կանգնած էին սուսերամերկ, և միւս կողմը Գուրգէն իր երկու բարեկամներով ու Վահրիճ նոյնպէս սուսերամերկ, Թէոփիլոս երեսի վրայ պառկած հսկային ոտքին տակ որ կռնակին վրայ կոխեր էր, հազիւ թէ շունչ կ՚առնուր և երեսները կապտեր էին ու քունքերուն և վզին երակները ուռած խեղդուելու մօտ էր:

— Մեռա՜յ, մեռա՜յ, ազատեցէ՛ք զիս կ՚ըսէր:

— Եթէ ազատիլ կ՚ուզես, հրամայէ՛ քու մարդոցդ զէնքերը ձգեն և դուրս ելնեն:

— Պահապա՛նք, դուրս ելէ՛ք:

— Խարդա՜խ Յոյն, զէնքերը ձգել, մի՛ մոռնար:

Այս միջոցիս պահապաններէն մէկը սիրտ ըրաւ և սուրը ձեռքը յանկարծ յարձակեցաւ Գուրգէնի վրայ, իսկ սա՝ որուն աչքը շարժ-

մունք մը չէր կորուսած, դեռ մարդը իրեն չի հասած՝ այնպիսի ոտքի հարուած մը տուաւ փորին, որ խեղճը իր սուրը ձեռքը վեր թռաւ մարդաչափ բարձրութեամբ և պտոյտ մը ընելով օդին մէջ՝ գնդակի մը պէս ինկաւ մնաց: Իսկ Թէոփիլոս իր խեղդուկ՝ ձայնով,

— Ձգեցէ՛ք զէնքերը, դուրս ելէ՛ք, մեռա՜յ, ո՜հ. . .

Սուրերը թողին պահապանք և դուրս ելան, դրան քով լցուեցան:

— Վահրիճ, սուրերը ժողվէ, աս յիմար դիակն ալ դուրս քաշել տուր ընկերներուն, ըսաւ Գուրգէն և ոտքը վերուց Թէոփիլոսի վրայէն, որ

— Մեռա՜յ, մեռայ կ՚ըսէր մարած ձայնով.

— Մի՛ մեռնիր, դու մեզի դեռ հարկաւոր ես, վասն զի թէ որ կ՚ուզես ապրիլ պէտք է հրամայես որ բերդին դռները բանան, և ամէն բան առանց կաթիլ մը արիւն թափելու վերջանայ:

— Այդ անկարելի բան է, կը մեռնիմ, ազատեցէ՛ք զիս, ես այդպիսի հրաման չեմ տար.

Գուրգէնի ոտքը դարձեալ ծանրացաւ Յոյնին վրայ որ ձայն չի հանեց և տոկաց քիչ մը ատեն. բայց երբ ոսկորներն սկսան ճարճատիլ,

— Ո՜հ, ո՜հ, անգութ գազան, սպաննեցիր զիս . . .

— Քու ձեռքդ է ազատութիւն, քու ձեռքդ

է մահ, կ՚ըսէր Գուրգէն և կը ծանրացնէր իր ոտքը։

— Բացէ՛ք, բացէ՛ք դռները, թո՛ղ գան մտնեն շուները, կը գոչէր խեղդուկ ձայնը։

Վազեցին ան ատեն պահապանք, և քանի մը վայրկեան հազիւ անցաւ՝ ահա իշխանիկը երկու հարիւրի չափ ձիաւորներով կը փութար ներս, և երբ տեսաւ Թէոփիլոս գետին տարածեալ Գուրգէնի ոտից առջև, արիւնախառն փրփուր բերանը՝ մարած ինկած և որ հազիւ թէ կը շնչէր. սուրերը արձակ անկիւն մը որ Վահրիճ կը պահպանէր, Ատոմ և Խոսրով որ սուրեր ձեռուըննին ծիծաղելով կը խօսէին։

— Այս ի՞նչ տեսարան է, բոլոր այս ի՞նչ կը նշանակէ, կըսէր նա։

— Այս այն կը նշանակէ, պատասխանեց Գուրգէն, որ մենք հեռուանց կարծեցինք թէ իմ բերդիս տէր կանգնող աւազակները մարդ են, մօտ եկանք՝ լաւ դիտեցինք և տեսանք որ մարդու կերպարանքով կապիկներ են, որ և ոչ իրենց կայսեր հրովարտակը գիտեն յարգել. ուստի այսպիսի կենդանիներու հարկ համարեցինք վրանին ձեռք չի վերցնել՝ այլ ոտքի տակ ճզմել։ Բայց որովհետև սա մեզ սպառնացաւ ոտք ձեռք կապած ժայռերն ՚ի վար գլորել, մեզ կը պատկանի հիմա որոշել թէ նոյնը այս

անպիտանին պէ՞տք է ընել թէ ոչ. ժամանակ ունինք՝ կը մտածենք։ Հիմա տղա՛ք, ինչ որ Յոյն կայ՝ ամենն ալ կապեցէ՛ք։ Դու ալ Վահրիճ, այս Թէոփիլոսի քով սպասէ որ հոգին չի փչէ, ջուր տո՛ւր, խնամէ՛, ծածկէ՛, վերջապէս ինչ կ՚ընես ըրէ՛, ջանա՛ որ չի սատկի՝ և կենդանանայ, մինչև որ ժամանակը հասնի և որոշուի թէ ի՞նչ կայ սորա բաժնէն մեզի և ի՞նչ սատանային։

Սուրը պատեանը դրաւ Գուրգէն և սկսան իշխանները պատիլ իրեն հետ բոլոր սենեակները։ Ամեն բան նոյն վիճակին մէջն էր ինչպէս թողեր էր Գուրգէն, բաց ՚ի փոքրիկ սենեակէ մը ուր Յոյնը զետեղուեր էր առժամանակեայ կերպիւ մինչև որ ընտանիքն հասնէին։

— Թուի թէ այս բերդին բաղդին մէջ չի կայ որ ընտանիք ոտք կարենան դնել, կ՚ըսէր Գուրգէն դառն հեգնութեամբ։

Իսկ Վահրիճ այն միջոցին զբաղած էր իւր կալանաւորին հետ, և իւր անձուանի Յունարէնով և սատանայական ծաղրածութեամբ ջուր կուտար՝ կուրծքը կը շփէր իւր փափուկ ձեռքերով՝ և մխիթարելով խեղճ Յոյնը կ՚ըսէր.

— Ես փորձով գիտեմ, ո՜վ մեծ իշխան, այդ մարդուն ուժը, ո՛չ թէ քեզ պէս թեթև կապիկ մը՝ այլ արջ մը նաև ըլնի դիմացինը՝ խնձորի պէս գետին կը զարնէ, դեռ տղայ էր երբ զիս կա-

կուղ բամպակ դարձուց, հիմա որ ահագին մարդ եղաւ կ'իմանամ քու վիճակդ, քեզի պէս Յոյն իշխանի՝ ազնուական իշխանի ու ձեռք՝ այլ ոտք վերցնելը շատ անվայել բան է, բայց ի՞նչ ընես, բաց 'ի համբերութենէ ճար չի կայ։ Վա՜խ, իմ Յոյն իշխանս. իմ Քրիստոնեայ իշխանս. իմ պառաւս գոնէ հոս լինէր հիմա քեզի ան իր պատուական դեղը կ'ընէր, ցաւէն կ'առողջանայիր՝ կը կանգնէիր դիւահարի պէս։ Հոգ չ'է, եթէ մեռնիս քեզ կը բռնենք ոտքերէդ ձեռքերէդ առօք փառօք շիտակ Թորթումի գետը կը նետենք, անկից դու կ'իջնես ծորոխ, անկից Սև ծով, հոն բարեկամ շա՜տ, քանի մը օր առաջ Ճերմակ ու սև Արաբացիք ղրկեցինք, անոնց հետ կ'երթաս մինչև Կոստանդնուպօլիս, կայսեր կը պատմես թէ Գուրգէն Ապուպելճ Արծրունի . . . .

Երբ հոս հասաւ իւր ողբերգակ ճառը, բարձրաձայն քրքիջ մը կռնկէն իւր զաւեշտաբանութիւնը դադրեցուց և զարմանքով տեսաւ որ Գուրգէն իշխանիկ՝ Խոսրով՝ Աշոտ առանց ոտից ձայն հանելու մտեր շարուեր՝ իւր մխիթարիչ խօսքերը մտիկ կ'ընէին, և վերջապէս չի կրցնալով ծիծաղ սանձել քրքիջ բարձրացեր էր, երբ խեղճ Թէոփիլոս կը տքար և հազիւ թէ շունչ կ'սկսէր առնուլ։

— Տէ՛, ըսաւ Գուրգէն, ես քեզի յանձնեցի որ սա խեղճ մարդը խնամես, դու ի՞նչ կ'երգես սորա գլխուն։

— Ի՛նչ որ բժշկութիւն գիտէի ամենն էլ գործադրեցի, Տէր, հիմա էլ կը մխիթարէի, վասն զի լսեր եմ թէ մխիթարութիւնը հիւանդի մեծ դեղն է։ Միայն քու ոտքդ թեթև չ'է, ես գիտեմ, խեղճ մարդուն սիրտն ու փորը իրար խառնած պիտի լինի, վասն զի բերնէն շատ արիւն եկաւ, տեսէ՛ք սա Ճերմակ Թաշկինակը բոլոր ներկուեցաւ, կարծեմ թէ բարի նշան չ'է, և շատ ցաւալի բան կը համարիմ եթէ վաղն առաւօտ իւր դիակը Թորթումի գետը . . . .

— Լաւ, իմացանք, բաւական է. դու գնա նայէ, մեզի կերակուր պատրաստել տուր, այդ իշխանին ծառայներէն ամենէն շնորհքովը բեր քովը դիր որ իրեն խնամք տանի։ — Բայց լաւ նայէ՛, սա անպիտան Յոյները մեզի խաղ մը չի խաղան, մեր կերակուրին մէջ բան չի խառնեն, մեզ չի թունաւորեն։

— Շատ շնորհակալ եմ, Տէր, այդ բաներէն աւելի լաւ կը հասկնամ քան թէ հիւանդ խնամելէն, ըսաւ Վահրիճ և գնաց։

— Այդ անպիտանը ամենևին գութ ըսուած բանը չ'ունի, կ'ըսէր Գուրգէն։

— Տարբերութիւնը հոն է կը պատասխանէր

Խոսրով կատակով որ Գուրգէնի գուլթը այն ատեն կը հանի երբ մարդ վերջին շունչը կուտայ:

— Աստուած գիտէ որ մարդու կաթիլ մը արիւն չ'եմ սիրեր թափել, բայց այնպիսի անիծեալ արհեստ է զինուորութիւնը, և այնպիսի դառնութեան ժամանակի մէջ կ'ապրինք որ կատարեալ գթութիւն ունենալ անկարելի է: Սա դրան առջև կեցած այդ տաս տասերկու պահապաններն ջախջախել մեր երեքին համար ի՞նչ էր, փչէինք կը սատկէին, բայց յանցանքը իրենց սա խեղճ իշխանին էր: Այս ի՞նչ ժամանակ է, եղբայրք, երբ մտածեմ քննել կուգայ վրաս. աւազակութիւն՝ յափշտակութիւն՝ ուխտադրժութիւն՝ ապերախտութիւն՝ մատնութիւն՝ դաւաճանութիւն ներսէն դուրսէն ճարակեր պատեր են Հայաստան. Աստուած ինք ողորմի հասնի իւր խեղճ ժողովրդեան:

— Դժբաղդութիւնը հոն է որ մէկ յուսոյ նշոյլ մը անգամ չ'երևար, ըսաւ Խոսրով:

— Խե՜ղճ Յովնան, բոլոր յոյսը կաթողիկոսին վրայ դրեր էր, անցեալ ձմեռ էր գնաց խընդրելու որ գլուխ կենայ ժողովրդեան՝ ամենը գիտէ . . .

— Ես հոն էի երբ եկաւ ատեանին մէջ այս խնդիրը առաջարկեց, և բանտ ղրկեցին, որպէս զի Գարդմանաց կորիճը գոհ ընեն, ըսաւ Աշոտ:

— Ամենքն ալ անպիտա՜ն, կաթողիկոսն ալ, իշխաններն ալ, նախարարներն ալ . . . Ահա ահագին Հայաստանին մէջ Աստուած մէկ Յովնան մը ստեղծեր է, և այն ալ Սասունի լերան գլուխը դրեր է . . .

— Ճշմարիտ է, ըսաւ Խոսրով:

— Դու անկից ի՞նչ պակաս ունիս, հարցուց իշխանիկ Գուրգէնին, նա քու զօրութիւնդ ալ չ'ունի:

— Ես իմ սրտիս ձայնին ուշ կը դնեմ, նա իւր մտքին կը հնազանդի: Այդ սակաւախօս էակը մեզ ամենքս ալ լաւ կը ճանչէ, մենք . . . ես իմ վրաս պիտի խօսիմ, ի՛նչ ուրիշները կը խառնեմ: Ես, ի՛նչ մեղքս պահեմ, երբ իմացայ՝ տեսայ որ Վասպուրական և Արծրունիք վտանգի մէջ են և ժամանակ կար և կրնայի երթալ իրենց օգնել, արիւնս կ'եռար երակներուս մէջ, ծարաւի էի պատերազմի, սիրտս եփ կուգար երբ կը լսէի այդ անօրէն Արաբներու հասուցած չարիքը խեղճ ժողովրդոց. չի շարժեցայ Բագրևանդայ և չի գնացի, երեկոյին կ'ուխտէի երթալ, առաւօտուն քանի որ միտքս կուգար և կը յիշէի անցեալ ինձ եղած անիրաւութիւնքը՝ կը սառէի և չ'էի կրնար շարժիլ: Բայց Յովնան լաւ համոզուած թէ Նախարարք Հայոց մոլի՝ անպիտան՝ փառասէր մարդիկ են, և իւր լեռն

ապահով՝ ոչ ուրուք օգնութեան կարօտ է, դարձեալ իւր փոքրիկ գնդով օգնութեան կ'երթար Արծրունեաց, և ես կը հաւատամ թէ նա ժամանակին հանէր Վասպուրական, այդ վիճակը չ'էր ունենար և Աշոտ չ'էր մատնուէր, վասն զի Յովնան անտարակոյս՝ Աշոտ քուն եղած ժամանակին՝ կ'իմանար դաւաճանութիւնը, և մատնութիւնը վրայ չի հասած կայծակը կ'իջեցնէր անզգամաց գլխուն։ Ահա տարբերութիւնը, իշխանիկ, իմ և Յովնանու մէջ. ես քեզի պէս՝ Խոսրովի պէս՝ Աշոտի պէս մեր զուարճութիւնը՝ մեր հանգստութիւնը՝ մեր քէնը՝ մեր նախարարական անունը կը նայիմ, իսկ Յովնան բոլոր ազգին վիճակը կը մտածէ, ազգին թշուառութեան ճար՝ դարման կ'երևակայէ, և այդ բանին համար հետի միայնակ տեսայ զինք օր մը որ կ'երթար ազգին հոգևոր գլխուն՝ կաթողիկոսին . . . .

— Տեսնենք հիմա ո՞վ պիտի դնեն կաթողիկոս, ըսաւ Աշոտ։

— Ի՞նչ, կաթողիկոսը վախճանե՞ր է։

— Այո՝ վախճաներ է։

— Շատ լաւ բան ըրեր է, ըսաւ Գուրգէն, ո՜վ գիտէ, թերևս իրմէ լաւը տեղը դնեն դիպուածով։

— Բայց դու խօսքդ շարունակէ, ըսաւ Խոսրով։

— Ի՜նչ շարունակեմ, ամենուն գիտցած բանն է։ Ըսել կ'ուզէի թէ այդ լեռնցին բոլոր քաղաքացիներէ՝ ազնուականներէ՝ իշխաններէ՝ նախարարներէ՝ կաթողիկոսներէ վեր և բարձր է։

— Շատ ստոյգ է, ես էլ այդպէս եմ ճանչեր զինքը, ըսաւ Խոսրով։

— Ես զինքը հրաւիրեցի, բայց ե՛կ տես որ Յովնանու պէս խստակեաց մարդու ի՞նչ պատիւ կայ աշխարհիս վրայ որ հաճոյական կարենայ լինել. ոչ համադամք՝ ոչ անուշահոտ գինիք՝ ոչ նուագարանք՝ ոչ որսք՝ ոչ գեղեցիկ չէնք ոչ ինչ ազդեցութիւն չ'ունին այդ անման մարդոյն վրայ. անփոփոխ միևնոյնն է ամեն զուարճութեանց առջև։

— Գուրգէն, կը սխալիս, ըսաւ Խոսրով, երբ երեք դաւաճանները կախաղանին վրայ բարձրացան, կրնա՞ս զրուցել թէ զուարճութիւն չ'զգաց այդ մարդը որ այնչափ աշխատեր էր զանոնք հոն բարձրացնելու համար։

— Երբ այդ անզգամները հոն այդ կախաղանին տակ իրենց պատիժը պիտի ընդունէին, երբ մենք անտարբեր էինք և գրեթէ ականատես, ես տեսայ այդ մարդը տարուբերեալ անխօս կը մտածէր. ինքն էր որ Կողբաց վանահայրը քաշկռտելով և բռնի բերեր էր մեզի հետ, որով առաջ խրատեց թէ իւր պարտաւո-

րութիւնն էր այս մահապարտներու հոգևոր պիտոյքը հոգալ, և վերջին վայրկեանին իրենց պարզաբար ըսել թէ ի՛նչ յանձնարարութիւն որ ունէին կրնային հայր սուրբին զրուցել։ Եւ երբ Մուշեղ հանելով իւր մատնին և քսակը յանձնեց, իր կինը և զաւկները յիշեց, ես տեսայ որ հեռացաւ ծածկելու արտասուքը։ Անոր համար ըսի թէ այդ մարդը մտքին միայն կը հնազանդի. բայց պէտք է գիտնանք թէ սիրտ էլ ունի։ Նոյն միջոցին ես մօտեցայ իրեն և ըսի. «Յո՛հան, եթէ այսչափ կը ցաւիս այդ մարդոց վրայ՝ քու ձեռքդ է թողուլ որ երթան։» Ի՞նչ պատասխան տուաւ ինձ գիտէ՞ք։ «Դու տղայ ես, Գուրգէն, իմ ձեռքս բան մը չի կայ, ես դատաստանի վճիռն 'ի գործ կը դնեմ, ես կը ցաւիմ՝ այդ մարդոց վրայ որ արժանի եղեր են մահու, բայց շատ աւելի կը ցաւիմ իրենց այրիներուն և որբերուն վրայ. բայց եթէ արդարութեան չի հսկեն նոքա որոց վերուստ ամենափոքր կարողութիւն տրուած է, յանցաւոր կը մնան առաջի Աստուծոյ։» Զարմացայ իւր այս խորհրդածութեանց վրայ և իրաւունք տուի։

Բայց այս բոլոր խօսակցութիւնները դադրեցան երբ Վահրիճ եկաւ վերենք կերակուրի հրաւիրելու։

Ան գիշերը հանգչեցան, երկրորդ օրը ելան

այդ փոքրիկ և գեղեցիկ գաւառը շրջագայելու, տեսնելու մանր առուներն ու վտակները որ երբեմն սիրուն բլրակներէ կ՚իջնեն, երբեմն ահաւոր լերանց պատառուածներէ և կ՚երթան Թորթումի գետը թափելու. տեղ տեղ թուփեր և մայրեաց անտառներ, տեղ տեղ խոտաւէտ ձորակներ որ շարունակ կը փոխուէին։ Յետոյ ահագին ապառաժներ ոմանք կամար կամար ձևացեալ՝ ոմանք անձոռնի սեպացեալ մէկ կողմէն, և միւսէն ծառերու՝ պարտէզներու և մարգագետիններու կանաչութիւն սոսկում և զուարճութիւն աչաց կը պատճառէին։ Վերջապէս կը հասնէին՝ կը տեսնէին գետը որ գեղեցիկ լիճ մը կը ձևանար՝ և այդ լիճը որ դարձեալ 'ի գետ կը փոխարկէր, և կը դիմէր՝ կը թափէր քարափանց վրայէն ահագին բարձրութենէ սոսկալի շառաչմամբ փրփուր՝ և ցնցուղ՝ և փոշի դառնալով։ Ճիշտ այդ գեղեցիկ և միանգամայն ահաւոր տեսարանին մօտ գեղեցիկ ամարանոց մը կար միայարկ, որ Աստղկան տաճար կը նմանէր, և որու դրան առջև կանգնած էր Վահրիճ քանի մը սպասաւորներով։ —

Այն օրերէն մինչև այսօր հազար և աւելի տարիներ անցան. գետը՝ լիճը՝ ջրվէժը՝ փրփուրը՝ ցնցուղը ամենն էլ անփոփոխ մնացած են և այսօր. ուղևորը հեռու աշխարհներէ կ՚եր-

թայ՝ կը տեսնէ՝ կը հիմնայ. բայց այդ տաճարանման ամարանոցը ո՞ւր է, հետքը անգամ չ՚է մնացեր. ո՞ւր են գաւառին Հայ բնակիչք, իրենց եկեղեցեաց աւերակներ մնացեր են՝ իրենք անհետ բոլորովին. «Ազգ գայ, և ազգ երթայ, և աշխարհ յաւիտեան կայ։»

Մեծ էր ուրախութիւնը շրջակայ գիւղերու բնակչաց, երբ Գուրգէնը տեսան հասած, և բազմութիւն ժողովրդեան գիւղապետներ և քահանայներ առջևէն բարով եկարի կուգային. և նա կը ջանար զուարթ երես ցցնել այս պատուական գիւղացւոց երբ իր սիրտը դառնութեամբ լի էր, վասնզի ինք կը յիշէր օրերը որ ինչպիսի փափաքով ամարանոցը շինել էր։ Եւ հիմա նորա սեմոց վրայ իրեն սպասող Վահրիճի կերպարանքը կը տեսնէր։

Ամէն բան կը ծիծաղէր բլուրին վրայ, ծառերը ծաղկած էին, մանուշակ իր քաղցր հոտը կ՚արձակէր, կանաչը գարնան աւետաբեր կը ծածկէր շրջակայքը, բայց Գուրգէն առանց իւր միտքը յայտնելու, սրտին հառաչանօք կ՚երդնուր թէ անգամ մ՚ էլ չ՚պիտի դառնար ո՛չ այդ շէնքը և ո՛չ այդ բնութեան գեղեցկութիւնը տեսնելու։

ԳԼՈՒԽ Ի.

ԵՐՋԱՆԻԿ ՄԱՐԴ.

Գարուն եկաւ, բնութիւն բոլոր զուարթացաւ, բայց դարձեալ Հայաստան կուլար։ Թշնամին որ որջացեալ էր Հայոց մայրաքաղաքը Դուին, կը պատրաստուէր ելնել դէպ՝ հիւսիս և Արևելք, որպէս զի երկիր մը՝ թիզ մը հող չի մնայ անթաց արցունքէ և արիւնէ։ ՚Ի զուր երկրագործը կը պատրաստէր իր աշխատանքը, ՚ի զուր վաճառականը կը կապէր իր կարաւանը, դարձեալ ամէն սիրտ ահ ու դողի մէջ էր, ոչ ոք վաղուին վստահութիւն ունէր, ինչպէս ամառուան օր մը պայծառ արև և երկինք՝ տերև չի շարժիլ, բնութիւնը բոլոր լռութեան մէջ կ՚սպասէ՝ կը գուշակէ փոթորիկը, որ կը հասնի որոտալով, փայլակ՝ կայծակ՝ հողմ՝ հեղեղ թափելով ամէն կողմէ, նոյնպէս ամէն ոք կ՚սպասէր փոթորկին։

Թէպէտ ամբողջ երկիրը կ՚զգար այս ամէնը, բայց քան զամէն ոք՝ աւելի կ՚զգար մարդ մը որ ամէն բան կը տեսնէր՝ ամէն բան կ՚իմանար՝ երկրին ո՛ր կողմը ինչ անցք որ անցնէր

կը տուղեկանար, որ կ՚զգար նաև թէ սոսկալի պատասխանատուութիւն մը իւր վրայ կը ծանրանայր։ Այս մարդը Սմբատ Սպարապետն էր, քաջ՝ խելօք պատերազմի մէջ վտանգը տեսնելու համար՝ ագահ իր եղբարց և ազգին արեան՝ վախցող անիրաւութենէ՝ վասն զի կը վախնար յԱստուծոյ, և սոսկումով կը տեսնէր թէ մտեր էր այնպիսի ճամբու մէջ որուն ելքը զէնք գահավէժներէ յանդուգնոս կը տանէր։ Ինք, ստեղծուած պատերազմելու օտարին և Բուղայի դէմ, կը տեսնէր զէնք դատապարտուած Նորա անգութ ձեռքին մէջ անիրաւութեան և մատնութեան գործիք մը լինելու։ Կը լսէր՝ կ՚իմանար թէ Բաղդատ Հայոց իշխանաց մեծ մասը Բագարատայ իւր եղբօր օրինակին հետևելով կ՚ուրանային հայրենի հաւատքը ազատելու համար բանտէ՝ տանջանքէ և մահուանէ։ Կ՚իմանար թէ պակսած զօրաց տեղ Բուղայի նոր օգնութիւն կը հասնէր յԱսորեստանէ։ Որդւոյն նամակը որ կաթողիկոսին մահը և Բուղայի զէնքն ուզելը կ՚իմացնէր՝ դառնութեամբ լցուցեր էր սիրտը։ Մահուան երկիւղը հազար անգամ աւելի սիրելի էր իրեն քան թէ այդ բռնաւորին երեսը տեսնել, բայց այն առջի օրուան յուսով թէ թերևս հայրենեաց ցաւերը մեղմացնէ, թշուառ ժողովրդեան օգտակար կարենայ լինել,

կը հնազանդէր։ Բայց ի՜նչ տխուր աչօք կը տեսնէր այդ Վասպուրականի երկիրը՝ որ իրեն յանձնուեր էր, Աշոտի գերութենէն վերջ, ուր ինք բոլոր ձեռ անդուլ աշխատեր էր Հայ ժողովրդեան լուծը քաղցրացնել, առանց տիրող ազգին բռնութիւնքը և յափշտակութիւնքը սանձելու։ Անպիտան՝ անարգ և հասարակ ծառայութենէ իշխանութեան հասած ամիրայներ կը տեսնէր որ տէր եղած բռնացել էին Արծրունեաց՝ Ռշտունեաց՝ Բաջբերունեաց՝ Բզնունեաց անառիկ բերդերուն, և աւազակաբար կ՚իջնէին հարստահարելու իւր ազգին ժողովուրդը, որ կը տքար՝ որ կը մռնչէր՝ որ կ՚ուզէր շղթայները կոտրտել և այդ անարգ բռնաւորաց գլուխը ջախջախել, եթէ Ամիրապետին երկիւղը չ՚լինէր։

Ուստի համբերութեան յորդորելով ժողովուրդը, ելաւ ճամբայ երթալու Երազգաւորս, ուր հրաման ղրկեր էր որդւոյն Աշոտոյ ժողովել Հայոց Եպիսկոպոսներն ու իշխանները կաթողիկոսի ընտրութեան համար։ Ժամանակ չ՚էր դանդաղելու. ամէն իշխան և Եպիսկոպոս գլուխն ազատելու կը ջանար. ուստի միաբան ընտրեցին Զաքարիայ անուն աշխարհական անձ մը որուն առաքինութիւնը և անձնուրացութիւնը յայտնի էր ամենուն. վասն զի Հայաստան ձանձրացեր էր այդ անտարբեր՝ թուլամորթ հայրապետնե-

րէն, որ իրենց հանգստութիւնը միայն կը ճանչէին և կը փնտռէին: Եւ այս Զաքարիայ ձեռնադրեցին մի և նոյն օրուան մէջ ՚ի սարկաւագութիւն՝ ՚ի քահանայութիւն՝ յեպիսկոպոսութիւն և ՚ի կաթողիկոսութիւն: Առաջինի անձի մը ընտրութեան համբաւը տարածեցաւ ամեն երկիր, և ժողովուրդը յոյս համարեց նաև այս ընտրութիւնը:

Բայց ի՞նչ կրնար ընել կաթողիկոս մը ինչչափ որ բարի կամք էլ ունենար: Իւր նախորդին օրով դեռ ժամանակ կար, բայց հիմա երբ թշնամին Հայաստանի կեդրոնը կը բնակէր հարիւր յիսուն հազար զօրքով և դեռ օգնութեան կ՚սպասէր, անօգուտ կրնար համարուիլ ամեն ջանք, ուստի երբ հայրապետը այս խօսքը բացաւ Սպարապետին, նա յայտնի խոստովանեցաւ թէ ամեն բան և ջանք ուշ էր, մի միայն ճամբայ խոհեմութեամբ թշնամւոյն հետ վարուիլն էր և նորա չարութիւնն քաղցրացնել: Եւ այսպէս զինքն հայրապետին աղօթից յանձնելով՝ Դուին գնաց Բուղայի հրամանին հնազանդելով:

Դուին քաղաքը այն ժամանակ Հայաստանի մայրաքաղաք՝ գրեթէ 200,000 և աւելի բնակիչ ունէր, երևելի իւր ոստիկանաց պալատով՝ կաթողիկոսարանով և մայր Եկեղեցիով. թէպէտ կաթողիկոսը հոն բնակելու չ՚էր համարձակեր

Արարացի իշխանին երկիւղէն: Նոյն միջոցին քաղաքը բաւական չ՚էր այդ զինուորները պարփակելու, ուստի մէկ մեծ մասը շուրջը վրաններով կը բնակէին: Հայոց Սպարապետը ուղղակի ոստիկանին պալատն իջաւ:

Բուղա որ Թուրք էր ազգաւ, իւր սերնդին գծագրութիւնն ունէր. խոշոր գլուխ՝ մանր և խոր աչքեր՝ ցցուած այտեր՝ ցանցառ և կարմիր մօրուք: Երբ տեսաւ զՍմբատ, իր դաժան երեսին վրայ ծիծաղ մը եկաւ, բայց մէկը չ՚էր կրնար զրուցել թէ հեգնութեա՞ն էր ծիծաղը թէ հաճութեան. իր մանր աչքերը փայլ մը առին, այդ փայլը յովազի արիւնածարաւ աչքերուն փայլն էր: Ոտք ելնելու պէս շարժմունք մ՚ըրաւ, բայց չ՚ելաւ. վասնզի անհաւատի մը ոտք ելնել յակամայս և ծանր դիպուածներու մէջ ներելի էր Միւսիւլմանին, թէպէտ երբ դեռ Արծրունեաց իշխանը չ՚էր մտնեալ, այն ատեն միշտ քաղաքավարութեան ամեն պարտքեր կը կատարէր, վասն զի դեռ Հայաստան զօրութիւն ունէր: Իսկ հիմա երկրին կէսն իրենն էր, և ինք միւսը նուաճելու համար բաւական զօրաւոր:

Երբ ամենքը քաշուեցան, և այս երկու անձինք միայն մնացին, Բուղա յայտնեց իւր գոհութիւնը նորա հաւատարմութեան համար, և թէ ինք միշտ գովութեամբ գրեր էր Ամիրապետ-

տէին, բայց թէ պէտք էր որ իրեն օգնէ մինչև վերջը երկրին կատարեալ նուաճման համար. և գլխական խաբէութեամբ կը յայտնէր թէ նախ Տփխիսի վրայ էր յարձակելու, որուն իշխանը Մահմէտական էր. և կը տեղեկանար թէ ի՞նչ էր նորա զօրութիւնը, և ի՞նչ դիմադրութիւն կարող էր ընել իրեն դէմ։ Նոյնպէս կը հարցնէր կ'իմանար թէ ի՛նչ էին Կովկասեան ազգաց՝ Ծանարաց և Աւրհաղաց զօրութիւնքը։ Բայց այս օտարներու վրայ հարցմունքները վերջանալէ ետքը, իր գաղանային զննող աչքերը ուղղելով դիմացինին աչքերուն մէջ, Հայ իշխանաց բերելով կարգը, սկսաւ հարցնել Արտներսեհ Արցախի իշխանի՝ Վասակայ և Բաբկէնի Սիւնեաց իշխանաց՝ Գարդմանաց կորիճի և Աղուանից Եսայի իշխանին վրայ։ Իսկ Սմբատ թէպէտ մեծ յուզմունք մը իմացաւ, բայց առանց յայտնելու հանդարտութեամբ կը պատասխանէր հարցմունքներուն. խղճմտանքը զինք կը տագնապէր, վասն զի ի՞նչ էր ըրածը, եթէ ոչ մատնութիւն. այնպէս կը թուէր իրեն թէ դահլիճին դրան քով կեցած Մերուժան՝ Վասակ և սոյա նմանները մատնանիշ զինք կը ցցնէին հեգնական ծիծաղով. բայց դարձեալ զգուշութեամբ իր անվայել պաշտօնը կատարելով, ելաւ երբ գոհ ըրաւ բռնաւորը, և հրաժարական

ողջոյնը տուաւ երթալու իր բնակարանը հանգչելու։

Կորովի ծերը այնչափ յոգնած և բեկեալ եղաւ բռնաւորին քովէն, որչափ երկայն ճամբորդութեամբ Մոկաց երկրէն մինչև Դուին չէր վաստակել։ Ցուրտ քրտինք մը կուգար վրան երբ կը մտածէր թէ ինք բարեմտութեամբ ազգին դաւաճանութեան առաջին գործիքն եղած էր. այս մտատանջութեամբ երբ իր իջևանին առջևն հասաւ շրջապատեալ իր թիկնապահաց և դեռ ձիէն չ'իջած, իւր զօրաց մէջ խառնեալ տեսաւ կերպարանք մը որ զինքն արձանացուց։ Այն վայրկենին հոն իր առջև՝ այն մտածութեանց մէջ Յովհան տեսնել իր դատապարտութեան վճիռն որոտաձայն լսել էր. այն գիշերը միտքն եկաւ յորում նա իրեն խորհուրդ կուտար չ'երթալ առ Բուղա։ Բայց մարդկային միտքն արագ է. միթէ՞ կարելի է, կ'ըսէր, որ Յովհան ինքն լինի, ինչպէս կրնայ համարձակիլ Դուին մտնել։ Բայց ահա նա էր, սլաքային աչքերովն իրեն կը նայէր անշարժ՝ անխռով և անթարթափ։ Արդեօք լա՞ծ էր իւր Բուղայի հետ խօսակցութիւնը։— Ինչչա՞փ զօրաւոր է խղճմտանքի ձայնը, ի՞նչչափ սուր իւր խայթը։

Սակայն, առանց ձայնի ձեռքը կուրծքին տա-

նելով բարև մը տուաւ և ակնարկ ըրաւ որ իրեն հետ գայ. և երբ սենեակ մը մտան առանձին եղան,

— Հիմայ որ միայն մնացինք, զրուցէ Յովնան, ի՞նչ բանի համար այս կողմերս և մանաւանդ թէ այս քաղաքս կը գտնուիս։ Մի՛ գուցէ, աւելցուց Սմբատ բանի ժպիտով, որ դարձեալ դաւաճաններ՝ մատնիչներ ունենաս պատժելու և ինձմէ սկսիս։

— Քա՜ւ լիցի։ Ես զքեզ, Հայոց սպարապետ, լաւ կը ճանչեմ, դու կրնաս մոլորիլ և Հայաստան ընդ քեզ մոլորցնել և 'ի կորուստ տանիլ. բայց դաւաճանել չ'ես կարող, վասն զի քու Քրիստոսդ ուրանալ՝ քու ազգդ ոտնկոխ առնել չ'ես կրնար։

— Ի՞նչէն գիտես որ այդպէս կը խօսիս։

— Ամեն մարդ իւր անցեալէն կը դատեմ, և զքեզ ու քու անցեալդ լաւ կը ճանչեմ։ Ես տեսայ քու ժողովուրդդ թէ՛ Մոկաց երկիրը թէ՛ Շիրակայ գաւառը որ ամենէն երջանիկն էին։ Տեսայ վերջն զքեզ որ Աշոտայ գերութենէ ետքը ամեն ջանք ըրիր Վասպուրականի ժողովրդեան անտանելի վիճակը տանելի ընելու համար։

— Նոյնպէս լաւ ճանչէ՞ր էիր այդ Մուշեղ Վահեւունին և իր ընկերները։

— Ի՞նչպէս կրնաս տարակուսիլ. միթէ ես

Յովնան, չարագործ՝ մարդասպան՝ դահի՞ճ էի որ առանց ձեռքս նոյն դաւաճանութեան ապացոյցն ունենալու զիրենք կախաղան հանէի։

— Ի՞նչ էր այդ մարդկանց յանցանքը։

— Վատ մատնութեամբ իրենց տիրոջ՝ դաւաճանեցին իրենց ազգը և անբաւ անմեղ արեանց և երկրին կործանման պատճառ եղան։

— Իրաւունք ունիս, Յովնան, . . . ըսաւ ծեր Սպարապետը և գլուխը կուրծքին վրայ խոնարհեցաւ, աչքերը գոցեց և երկար լռութենէ մը վերջ, լի բարկութեամբ գլուխը վեր առնլով, — Այո՛ դու միայն իրաւունք ունիս և ես և ամենքս Բագարանի ժողովքին մէջ անպիտան և անարգ դաւաճաններ եղանք, և ազգն զմեզ ամենքս իրաւունք ունի կախելու, որովհետև կործանմունքէ կործանմունք տարինք զինքը։ . . . Ո՜հ, Աստուած իմ, Աստուած, ի՜նչ է աս վիճակը։ Եթէ մենք քու խորհրդոցդ հետեւէինք՝ կարելի է շատ լաւ վիճակի մը մէջ չ'էինք գտնուեր, բայց ոչ երբէք այսպիսի գազանի մը՝ այսպիսի անարգ բռնաւորի մը կամքին խաղալիք կը լինէինք։ Այո՛ դու միայն մէկ մարդ մը գտնուեցար որ աչք ունեցար տեսնելու. ինչո՞ւ Աստուած զքեզ այդ լեռներուն գլուխը դրաւ և զիս նախարարական գահին վրայ, ես որ արժանի չ'էի՝ և դու որ արժանի էիր։

— Եթէ կ՚ընդունիս թէ սխալ ճամբու մէջ ես, ի՞նչ կ՚արգիլէ զքեզ. սթափէ՛, ե՛լ, ետ դարձի՛ր. ես՝ խեղճ սինլքոր Սասնցի՝ խօսք կու տամ քեզ քանի հազար երկաթի մարդ իջեցնել իմ լեռներէս, քանի հազար յուսահատ մարդ էլ այդ ոտնկոխ հնձան Վասպուրական կընայ տալ մեզի, քու Մոկաց և Շիրակայ գաւառները քանի հազար մարդ կընան յարուցանել. եթէ քառասուն հազար էլ միւս նախարարութիւնները տան՝ հարիւր հազար զօրքով մենք այդ Բուղայի երկու հարիւր հազար այլասեռ և այլալեզու աւազակները բնաջինջ կ՚ընենք, մենք որ «՚ի վերայ կանանց և որդւոց» պիտի կռուինք մեր նախահօր բացատրութեամբ: Հիմա մանաւանդ որ առաքինի կաթողիկոս մը ևս ունինք, որ յանձն կ՚առնու իր կեանքը տալ ազգին համար, և որ ես անձամբ կը ճանչեմ:

— Ուսկի՞ց կը ճանչես զինքն. . .

— Երբ հօրեղբօրդ բանտէն փախստական՝ անոք՝ անօգնական կը պտտէի, այդ Զաքարիան իր տունը ամիսի մը չափ զիս պահեց, տեսայ և ճանչեցի ան ատեն որ առաքինի և պատուական մարդ էր, և ուրախացայ որ Հայոց Եպիսկոպոսունք և իշխանք եկած պատուհասէն զարհուրեալք՝ արժանաւոր ընտրութիւն մը ընելու համար գնացին փնտռեցին և եկեղեցական տա-

ռիճաններէ դուրս արժանաւորը գտան Թադէոսի և Գրիգորի աթոռին վրայ նստեցնելու համար: Բայց մեր խօսքէն հեռացանք, Հայոց Սպարապետ, կրնա՞ս երկրորդ Վարդան մը լինիլ Հայաստանի համար, Վարդան աւելի խելօք՝ աւելի հանդարտ, վասն զի ես չ՚եմ ուզեր անօգուտ մարտիրոսներու թիւն աւելցնել: Ինձ աւելի սիրելի է այդ անարգ՝ մոլի և անպիտան նախարարաց գլուխը կործանել իրենց գահոյքը՝ այդ դարաւոր բազմագլխեան վիշապը որ նախարարութիւն կ՚անուանեն ջնջել անհետ ընել, որ Հայաստան գլուխ մը միայն ունենայ և ժողովուրդ մը, և լինի մի հօտ և մի հովիւ: Միթէ՞ մեր ամեն թշուառութեանց պատճառ անիշխանութիւնը չ՚է՞, որու առանց խելահաս լինելու անմիաբանութիւն անուն տուեր են և պիտի տան դարուց ՚ի դարս: Հիմա ինձ այն զրուցէ, թէ դու կուզա՞ս քու ազգիդ փրկիչ և գլուխ լինիլ. Եթէ յանձն կ՚առնուս՝ երկու գեղեցիկ ճամբայ կայ առաջդ. եթէ մեռնիս՝ երկնի թագաւորութիւն, եթէ ապրիս՝ երկրիս թագաւորութիւն: Երկուքն էլ խոտելի չ՚են:

— Անցեալ տարի պէտք էր քու խորհրդոյդ հետեւիլ, այս տարի շատ ուշ է:

— Շատ կը վախեմ որ գալ տարի նաև երբ ես այս աշխարհէս թողած լինիմ, դու ըսես

իմ եռեէս «Ափսո՜ս, պէտք էր այն մարդուն խօսքին հետեւիլ:»

— Դու որ այդ խօսքը կ՚ըսես՝ ի՞նչ վիճակ կը տեսնես Հայաստանի համար:

— Յայտնի է վիճակը. դու որ Հայոց Սպարապետն ես, Բագրատունեաց գահագլուխ՝ չ՚ե՞ս տեսներ թէ ամառ մը բաւական եղաւ Մահմետականին Հայաստանու կէսը ոտնակոխ ջախջախել. չ՚ե՞ս տեսներ այս ամառ միւս կէսն ալ նոյն վիճակը պիտի գտնէ՝ եթէ շարժմունք և դիմադրութիւն չ՚լինի: Անկից վերջ թող սպասէ Հայը ստրուկ՝ անզէն և շղթայակապ որ իւր բարբարոս տէրը՝ իբրև ողորմութիւն թողու իրեն հացին այն պատառիկը որ թշուառ գերութեան կեանքը շարունակէ, թողու իրեն կին և որդիք երբ շղթայ և թշուառութիւն նոքա կը տգեղցնեն, թողու իրեն հող՝ մորթ և ոսկոր միայն ծածկելու համար:

— Բայց դու չ՚ես գիտեր մեր վիճակը, Յովհան, դու չ՚ես գիտեր թէ այս նախարարները՝ եթէ ես վաղը ոտք ելնեմ՝ ամենքը կը միաբանին Բուղայի հետ զիս ջախջախելու համար:

— Ինչպէս դու ուրեմն կը միաբանիս Բուղայի հետ ջախջախելու համար զերենք, ըսաւ Յովհան իւր աչքերուն սոսկալի փայլով և ոտք ելաւ դէպ 'ի դուռը:

— Կա՛ց, ո՞ւր կ՚երթաս. այսպէս շուտով կը դատապարտես մարդը, դու որ քիչ առաջ դորա հակառակը կը պնդէիր:

— Կը ներես, իշխան, ես ոչ իշխանազուն եմ և ոչ ազնուատոհմ. ես քիչ առաջ ըսի թէ ի՛նչ եմ:

— Կ՚իմանամ ինչ ըսել կ՚ուզես. դու այդ արհամարհութեամբ ընդդէմ նախարարական ցեղին՝ վեր կը համարիս քու շինական ծագումդ:

— Կրնա՞ս տարակուսիլ այդ բանին վրայ, երբ դու կը խոստովանիս թէ այդ նախարարք՝ երբ դու ոտք ելնես ազգդ կանգնեցնելու՝ ամենքը Բուղայի հետ կը միաբանին զանի կործանելու:

— Թո՛ղ ուրեմն որ իմ ազգիս հետ լինիմ, վասն զի նա ալ ինձ պէս շինական՝ սինլքոր՝ սոսկական լեռնական է:

— Բայց կա՛ց:

— Ի՞նչ կենամ երբ իմ առաջարկութիւնս ընդունելու չափ քաջութիւն չ՚ունիս:

— Դու ի՞նչչափ ժամանակ է այս մտածութիւնը յղացար, գոնէ այն զրուցէ:

— Համարեա թէ ամիս մը:

— Ի՞նչպէս կ՚ուզես որ ես վայրկենի մը մէջ՝ առանց մտածելու՝ այդպիսի ծանր որոշողութիւն մը յանձն առնում:

— Ահա այդ բանին համար իմ հոս ուշանալս

անօգուտ կը տեսնեմ, վասն զի դու իմ այս խորհրդեանս վրայ պէտք էր շատոնց մտածած լինէիր ինքն իրենդ. դու էիր որ քիչ առաջ իրաւունք կուտայիր իմ անցեալ տարուան առաջարկութեանս, դարձեալ կարելի է վայրկեան մը նաև ունինք, մի՛ գանդաղիր, կարելի է ժամ մը չ՚անցած ամէն բան անօգուտ լինի, կարելի է որ հիմա նաև շատ ուշ մնացեր ենք, Հայոց Սպարապետ . . . .

Այս խօսքերն ըսած ժամանակ Յովհան մեծ ուշադրութեամբ ձիերու ոտնաձայնին ականջ դրաւ, գողի մը պէս նայելով պատուհանին մօտեցաւ, իր սուր-աչքերուն արտաքոյ կարգի արթնութիւն մը եկաւ և դառնալով Սմբատայ՝

— Ինձի համար պէտք է լինի այդ Արաբ ձիաւորաց խումբը, ըսաւ անխռով։

— Ի՞նչ կ՚ըսես, ի՞նչէն գիտես։

— Ես տեսայ քանի մը կասկածելի մարդիկ որ դիտող աչքով ինձ կը նայէին՝ երբ ես քեզ կ՚սպասէի. անշուշտ Բուղայի իմաց տուած են։

— Բայց իմ տունս ո՞վ կրնայ համարձակիլ. .

— Մոկաց երկիրը քու տունդ չ՚ես, իշխան, Բուղայի ափին մէջն ես։

— Ի՞նչ պիտի ընես ուրեմն, ըսաւ Սմբատ այլայլած և երեսները կարմրելով։

— Ես իմ փախստեանս ճամբան ունիմ, ափ-

սո՜ս որ դու իմ ուզած մարդս չ՚ես։ Ես ուզեցի Սմբատներու առաջինն ընել քեզ, աւելի մեծ քան զԲիւրատեանն, աւելի մեծ քան զՎարդան Մամիկոնեան, բայց դու չուզեցիր. վա՜յ Հայաստանի։

Եւ այս խօսքերը զրուցելով՝ յափշտակեց իւր կաշեայ վահանը և նիզակը, ցատկեց դուրս, բացաւ դուռ մը որ տանիքը կը հանէր, և ամենայն արագութեամբ տանիքէ տանիք անցնելով՝ անհետացաւ։

Իսկ Սմբատ որ ակար մարդկանց սրտի ազնուութիւնն ունէր, մեծ զայրոյթ իմացեր էր արդէն իրեն եղած նախատինքէն, ուստի երբ Արաբ խմբին զօրավարը ներկայացաւ և խընդրեց խոյզ ընել վասն զի կասկածելի թշնամի մը պահուըտած էր իւր տան մէջ՝ յուզուեցաւ և հեգնութեամբ հրամայեց որ նային փնտռեն. և երբ նոքա գնացին, սկսաւ մտածել իւր թըշուառ վիճակին վրայ որ խաղալիք եղած էր արինարբու գազանին, և իրօք միմիայն փըրկութեան ճանապարհը այդ լեռնականին ցոյց տուածն էր. բայց ի՜նչ օգուտ, որ այդ մարդն նաև արհամարհանաց նայուածքին և ծանր խօսքերու տակ զինք ճնշեր և այնպէս մեկներ էր։ — «Ի՜նչ երանելի մարդ է դա, ի՜նչ բա-
«րեբաղդ մարդ. խղճմտանքը մաքուր՝ երկիւղ

«չի կայ իրեն համար ոչ մարգիկներէն և ոչ
«Աստուծոյ դատաստանէն: Աստուած այդ մարդը
«յատուկ ինձի ղրկած էր, որ այս կեղակարծ և
«անարգ դիրքէն զիս ազատէ: Եւ ես թշուառ և
«յիմար՝ յանձն չ՚առի. ի՞նչ գեղեցիկ մտա-
«ծութիւն, ի՞նչ փառաւոր առաջարկութիւն
«ազատիլ և ազատել Հայաստան կամ մեռնիլ
«հաւասար Վարդանայ և իւր քաջ նմանեաց.
«իսկ ես Վասակի և Մերուժանի նմանիլ կը ջա-
«նամ, և այս օր սկիզբն ըրի մատնելով այն
«մարդիկը որոնց հետ անցեալ տարի խորհուրդի
«նստած էի թէ ի՞նչ պէտք էր ընել հաւատքի
«և ազգի թշնամւոյն հետ: . . . Բայց միթէ՞
«հնար չի կա՞յ, միթէ՞ կարելի չ՚է՞ դեռ ետ
«դառնալ, գտնել Ցօփեան և ըսել. «Հրամայէ՛,
«և ես քեզ կուրօրէն կը հնազանդիմ ու կը
«հետևիմ:» . . . Ահա ուրիշ տկարամտութիւն
«մ՚էլ, որ նստեր կը մտածեմ իմ վրաս երբ այդ
«մարդը միայնակ Դուին կը մտնէ, կ՚արհամարհէ
«երկու հարիւր հազար հոգւոյ սոսկալի զօրա-
«վարը՝ գրեթէ բարձակից մեծ Ամիրապետին, և
«յանդուգն՝ աներկիւղ՝ նոյնչափ որչափ ար-
«թուն և խոհեմ, իմ վրաս ամենափոքր յոյս մը
«նաև չի դնէր, այլ իւր փախստեան տեղին կը
«պատրաստէ ու կ՚ապահովէ, և այսպիսի
«մարդու ես յուսահատ՝ և կոյր՝ և ողոր-

«մելի Սպարապետս կը դանդաղիմ հետևելու:»
Այսպէս կը խօսէր Սմբատ և կը հառաչէր,
երբ յանկարծ խառնաձայն աղաղակ մը լսուե-
ցաւ. ցատկեց դէպ 'ի պատուհանը, տեսաւ
բազմաթիւ խումբ մը Արաբ զօրականաց որ
մարդ մը վերամբարձ կը տանէին, մարդ մը
գլխաբաց՝ զինաթափ, և հարիւր ձեռք այդ
մարդը կը քաշկռտէին ու հազար ուրախու-
թեան ձայն երկինք կը բարձրանային. իսկ մարդը
արիւնլուայ էր բոլորովին, և մօտ եղողները
կրնային տեսնել որ անխռով՝ աներկիւղ և ար-
համարհոտ աչքեր կը պտտցնէր ամբոխին վրայ.
այդ մարդը Ցօփեանն էր:
Նոյն միջոցին կը հասնէր Բուղայի թիկնա-
պահաց խումբ մը, կը ցրուէր այդ զօրականաց
խառնաղանճը, և կալանաւորը յափշտակելով
կատաղեաց ձեռքէն կ՚առնէր կը տանէր դէպ՝
ոստիկանին պալատը:
Իսկ Սմբատ ետ քաշուեցաւ, և ձեռքը յու-
սահատութեամբ ճակտին զարնելով կ՚ըսէր.
«Ափսո՜ս այդ քաջ մարդուն. և երբ կը մտածեմ
«թէ սորա կորստեան պատճառ ես ինքս եմ, և ես
«որ անունով Հայոց Սպարապետ՝ չ՚եմ կրնար
«բան մ՚ընել իրեն ազատութեան համար, յի-
«րաւի կը գտնեմ որ այդ մարդը ինձմէ երջա-
«նիկ է:»

ԳԼՈՒԽ ԻԱ.

ԵՐԿՈՒ ՇԻՐԻՄՔ.

Մենք տեսանք Յովնան որ տանիքէ 'ի տանիս ցատկելով՝ ելնելով և իջնելով անհետացեր էր, բայց վերջապէս հասնելով անկեան գլուխ և հոն իւր նեղակին վրայ յեցեալ պտոյտ մ'ընելով իջաւ փողոց և տեսաւ խումբ հեծելազօր որ կուգար. Հակառակ կողմը դառնալով սկսաւ խուսափել, բայց հազիւ թէ քանի մը քայլ առաւ և ահա դիմացէն նաև խումբ մը Արաբացի խառնաղանձ զէնք դիմաւորեց. երկու սուրի մէջ մնալով Յովնան՝ էլ չի դարձաւ, իւր ընթացքը շարունակեց: Արաբացի խումբը նախ ուշադրութիւն չ'ըրաւ իրեն, բայց վերջը մէկը յանկարծ սոսկմամբ ետ քաշուելով աղաղակեց թէ «Ահա՛ թշնամեաց գլուխը.» սա Տիրակայ դաշտին մէջ տեսեր էր զՅովնան մօտէն և նորա երկաթի զօրութեան փորձն առած էր. ուստի հարիւրաւոր սուսերք վայրկենին մերկացան և շրջապատեցին «թշնամեաց գլուխը.» որ նոյնպէս սուրը ձեռքը յարձակեցաւ ճամբայ բա-

նալու իրեն, իւր կաշեայ վահանաւ քառասուն հարուած 'ի դերև հանելով և աջ ու ձախ կոտորելով կը յառաջէր անվեհեր: Եւ ահա սուրը խորտակեցաւ, Արաբացի խմբին գլխաւորը որ մինչև այն ատեն խոհեմութեամբ դիտեր էր, առաջ անցաւ և մուրճի հարուած մը տուաւ գլխուն որ սաղաւարտը ջախջախեց և գետին գլորեց զՅովնան. փախստականները դարձան՝— վատերուն քաջութեան վայրկեանն էր այդ ինկած թշնամին սպաննել. — բայց Իպրահիմ զօրագլուխը իւր ահագին մուրճը ձեռքը կ'ըսպառնար փշրել այն մարդուն գլուխը որ մօտենար վնասելու թշնամւոյն, վասն զի իմացաւ թէ մրցանակը ողջ առողջ զնա Բուղայի հասցնելու վրայ էր: Ուստի սաստիկ մաքառելով հազիւ կրցաւ ողջ պահել, մինչև ձիաւորաց օգնութիւն հասաւ: Հարուածին թմրութենէն սթափել էր Յովնան, երբ թշնամի ուսոց վրայ հասաւ ոստիկանին պալատը, և երբ հանեցին զէնք Բուղայի առջև, և նա իւր խոր և մանր աչքերն ուղղեց նորա վրայ որուն «թշնամեաց գլխաւոր» անունն կ'ուտային,

— Ո՞վ ես դու, ի՞նչ է անունդ, հարցուց:

— Յովնան է իմ անունս, պատասխանեց նա անխռով:

— Դո՞ւ ես Յովնան Խութեցին:

— Այո, ես ինքս եմ:

— Եւ ի՞նչպէս կը համարձակիս դու, անարգ՝ վատ և անհաւատ շուն, այս քաղաքը մտնել. չէ՞ս գիտեր թէ ես Բուղա հոս կը նստիմ, ես ամենակարող փոխանորդ Մարգարէի յաջորդին:

Իսկ Յովնան, այս նախատական և պարծանաց խօսքերուն՝ գլուխն և յօնքերը վեր առնելով արհամարհանաց աչք մը նետել բաւական համարեցաւ:

— Ի՞նչ, ինձի պատասխան չե՞ս տար, դու չե՞ս գիտեր արդեօք թէ ո՞ւր կը հասնի իմ կարողութիւնս: Այս խօսքերը գոչելով՝ վագրը ակռաները կը կրճտէր և թունաւոր աչքերը կը փայլեցնէր դիմացինին. բայց դարձեալ պարտաւորեցաւ Յովնանու անխռով և սայրասուր հայեցուածքին առջև խոնարհիլ և այլուր շրջել աչքերը, և լռել: Ան ատեն Յովնան սկսաւ հանդարտ ձայնով խօսիլ.

— Նախ, դու եթէ քու մարգարէիդ խօսքը յարգէիր՝ զիս ոչ երբէք անհաւատ պիտի անուանէիր. վասն զի պէտք էիր գիտնալ թէ ես միայն Աստուած մը կը պաշտեմ՝ արարիչ երկնի և երկրի. իսկ իմ համարձակութեանս յայտնի նշանն է թէ վատութիւնը շատ հեռու բան է ինձմէ, և դու եթէ յիշողութիւն և միտք ու-

նենայիր պէտք էիր յիշել թէ այդ Խութեցի Յովնանն է որ քու նախորդ Ապուսէթի որդի Եուսուֆ իւր զօրքերով բնաջինջ ըրաւ ՚ի Մուշ. նոյն Յովնանն է որ Բռնաշէն քու յիսուն հազար հոգւոյ մէկ բանակդ զարկաւ ջարդեց և փախուց, նոյն Յովնանն է որ քու զօրավարդ Ժիրակ փոքր գնդով հարուածեց և ծաղրեց, նոյն Յովնանն է որ սոյն այս Դունայ դրան մօտ՝ քու աչացդ առջև իւր ազգին դաւաճանները ու մատնիչները կախաղան հանեց, և երկու հարիւր հոգւով քու հազարաւոր խումբերդ Շիրակ՝ Արտահան և Արտանուշ զարկաւ և կորակոր հալածեց: Եւ հիմա որ Աստուած այդ Յովնան քու ձեռքդ մատնեց, կրնաս զնա տանջել և սպաննել, այդ քու և քեզ նման գազանաց գործն է և բնութիւն. բայց նախատել՝ սրտիդ անարգութիւնը և մտքիդ տկարութիւնը յայտնել է:

— Դեռ այդ վիճակիդ մէջ զիս նախատել կը համարձակիս և չես իմանար թէ ես ի՞նչ կրնամ ընել: Եւ քեզ պէս անօրէնի մը կրնամ ներել, բայց միմիայն պայման ունի իմ ներողութիւնս. ուրացիր քու հաւատքդ, ընդունէ՛ ճշմարիտ կրօնքը, ընդունէ՛ փառք՝ պատիւ և մեծութիւն, ճանչէ Աստուծոյ կարողութիւնը հոն ուր կայ զօրութիւն, տե՛ս թէ ուսկից ուր

կը տարածի մեր Մարգարէին իշխանութիւնը, և ամեն դիմադրութիւն անապատի խռիւ է դորա առաջ։ Օ՜ն, մօտիկ ըրէ՛ իմ խօսքերս, զղջա՛ և ես կը ներեմ քեզ ու կը շնորհեմ ոչ միայն կեանք այլ և մեծութիւն։ Մտածէ որ դու քու այս վիճակիդ մէջ եղեռնաւոր մը իմ աչաց առջև կը կենաս ներկուած Արաբաց արեամբ, և քու ապստամբ սուրդ դեռ նոր տաս երկու հոգիէ աւելի զոհ կորած է իմ զօրքերէս, ապստամբին պատիժը մահ է, և ես քեզի կը շնորհեմ քու կեանքդ։

Հեգնական ծիծաղով մը միայն պատասխանեց Ցոլեան այս խօսքերուն, և երբ Բուղա այս ծիծաղին վրայ շփոթած իր փոքրիկ աչքերը կը ջանար մեծ մեծ բանալու, Ցոլեան դարձաւ այն մարդուն որ Բուղայի մօտ նստած եղէգը ձեռքը շարունակ կը գրէր եղած խօսակցութեանց համառօտութիւնը,

—Միրզա՛ Հասան, դու գրուցէ՛ թէ ես քու կեանքդ չ'ե՞մ շնորհած, ըսաւ շեշտակի ձայնով։

Իսկ նա շուարած աչքերը բացած երեսը կը նայէր, և յանկարծ մտաբերելով նետեց եղէգը՝ ցատկեց տեղաց և ետ ետ քաշուելով աղաղակեց.

—Այո՛ Այո՛ աւազակ, երբ գիշերը Խլաթ

իմ տունս կոխեցիր, իմ ծառայներս կապեցիր՝ սպաննեցի՜ր, իմ թեւս կտրեցիր, ի՜նչպէս կարելի է չ'յիշել. կրկնապատիկ՝ հազարապատիկ մահապարտ ես դու։

—Այո՛ ես որ քեզ գտայ Հայոց երկրին մէջ, որ ստերգութեան՝ խաբեբայ տիրոջ մը կը ծառայէիր, և այդ տէրդ որ մատնութիւն և դաւաճանութիւն կը դրդէր ու կը քաջալերէր, և որ երկու հարիւր հազար աւազակներով իմ հայրենի երկիրս կը մտնէր՝ կը սպաննէր և կը քանդէր, նա աւազակ չէ՞ր և ես աւազակ էի։ Եթէ աւազակ ես էի՝ առանց քու կրօնքիդ ուրացութիւնը պահանջելու թուղթ մը միայն առի քեզմէ, քու քսակդ քեզի դարձուցի, ես որ կրնայի զքեզ՝ քու ծառայներդ՝ քու այդ յիմարական թղթերդ և բնակեալ տունդ 'ի միասին կրակի տալ և մոխիր դարձնել. ո՞վ զիս կ'արգիլէր եթէ բռնութիւնն օրէնք էր։ Եւ դու Բուղայ՝ դու կը համարձակի՞ս աւազակ զիս անուանել, որ ելեր եմ պաշտպանելու համար իմ հայրցս երկիրը՝ իմ ազգիս և իմ կրօնիս սրբութիւնը որոնց համար ոչ մէկ՝ այլ հազար մահ՝ հազար անգամ մեռնիլ շատոնց աչքս առած եմ, և դու կը հաւատա՞ս թէ կրնամ ես փոխել՝ ուրանալ զայն որ երբեք չի ներեր սուտերգութեան լինիլ և դաւաճանել։ Աղէ՛ հրամայէ,

թո՛ղ գան քու դահիճներդ, այս մարմինը քուկդ է, բայց հոն միայն կը հասնի և կը դադրի քու իշխանութիւնդ, չի կայ տանջանք մը որ զիս զարհուրեցնէ։

Եւ իր աչքերը այնպէս բոցավառ էին և շանթաձիգ որ Բուղա վագրն անգամ ակամայ սարսուռ մը զգաց, և հրամայեց հանել իր երեսէն այդ մարդը՝ բանտ տանիլ և կրկին շղթայներով ամրացնել. մահ սպառնալով ամենուն՝ եթէ յանկարծ փախչէր ազատէր։ Նոյն միջոցին բերել կուտար այն Իպրահիմը որ զՅովնան բռնել էր, իրեն անձնապահապետ կ՚անուանէր ու պարգևներ կը հրամայէր։

Ի՞նչ էին Յովնանու համար այդ շղթայներու ծանրութիւնն ու խաւարաչին բանտը, ինք որ ամեն տանջանք կ՚արհամարհէր, և այդ աւազակներէ եկած ամեն նախատինք պատիւ կը սեպէր։ Բոլոր իւր բանտարգելութեան օրերը որ քանի չափ տևեցին, ամեն Արաբացւոց գլխաւորները Ծիրակէ սկսեալ կուգային տեսնելու այդ մարդը, որուն քաջութեան համբաւը և երկիւղը իրենց մէջ տարածուեր էր։ «Սանոյ լերանց գայլը» կուգային տեսնելու, ինչպէս զինք կ՚անուանէին, և տեսնելէն վերջ այդ երկայն մազերով մեծ գլուխը՝ այդ հրավառ աչերը ուր ահեղ զօրութիւն կը փայլատակէր

«Սանոյ լերանց առիւծը» տեսանք կ՚ըսէին։

Բայց Բուղայ պէտք էր երթալ և չէր կրնար ուշացնել իւր գազանային արշաւանքը, ուստի վերջին փորձ մ՚էլ ուզեց փորձել և իւր կրօնքին պաշտօնէից գիտուն մէկը ղրկեց որ թերևս կարենայ համոզել զՅովնան որ թողու իւր հայրենի կրօնքը և ընդունի Մահմէտականութիւնը։ Սակայն այդ մարդը շուտով եկաւ և յայտնեց իւր տիրոջ թէ համոզել անկարելի էր, և թէ կրօնին օգուտը կը պահանջէր ժամ առաջ վերցնել չարն 'ի միջոյ։

Երկրորդ օրը մեծ զօրաց բազմութենէ և դահիճներէ շրջապատեալ հանեցին բանտէն Յովնան անխռով և անսասան, և սպանման տեղը բերին։ Շղթայներէ ծանրացեալ թևերը վեր վերցուց՝ աղօթեց և տուաւ վիզը մահուան. սուրը փայլակեց՝ գլուխը գլորեցաւ՝ ժողովուրդը ցրուեցաւ, և հազիւ թէ քիչ մը ժամանակ անցաւ, Սմբատ Սպարապետ կը մտնէր բռնաւորին քով և նա կը շնորհէր իրեն առնուլ նահատակին մարմինը։

Քիչ վերջը, առաւօտ մը կանուխ՝ կառք մը կ՚ելնէր Դուին քաղքէն խումբ մը ձիաւորաց պահպանութեամբ. այդ խումբին գլուխն էր երիտասարդ Մուշեղ՝ Սպարապետին երկրորդ որդին, և որուն առջևէն սևեր հագած՝ սև

քօղով ծածկեալ բարձրահասակ կին մը կը ձիավարէր երկու իրեն պէս հագուած կանանց հետ։ Լռութիւն և սուգ կը տիրէին այս կարաւանին մէջ, մինչև որ Հասան Բագարան, հոն աւանը չի մտած քիչ մը յոգնութիւն առին, և երբ աւանին մօտեցան տեսնուեցաւ բազմութիւն մը եկեղեցական դասու որ խնկօք և մոմօք մարտիրոսաց շարականներ երգելով բերին կառքը որ Յովնանու մարմինը կը կրէր՝ մինչև եկեղեցւոյ դուռը։

Օրերով այս կարաւանը շարունակեց իր ընթացքը մինչև Արտանուշի գաւառը հասաւ. Սմբատաւանի մայր եկեղեցին մարմինը դրուեցաւ յարգանօք ինչպէս կը վայլէր մարտիրոսի մը և ազատարարի, և ժողովուրդը կը յիշէր այդ Սանիցւոյ զօրավարը որ վտանգի օր հասել էր իւր օգնութեան և այնչափ ազնուական մարդասիրութիւն ցոյց էր տուել։

Տարի մը վերջ Մայր Իշխանուհին վանքին դիմացը՝ Ճորոխի հանդիպակաց ափին վրայ փոքրիկ վկայարան մը շինել տուաւ և հոն փոխադրեց երանելոյն մարմինը, սեղանին առջևը մարմարէ պարզ կափարիչ մը դրուեցաւ որուն վրան այս խօսքերը կային փորագրեալ.

ԱՍՏ ԴՆԻ ՅՈՎՆԱՆ ԽՈՒԹԵՑԻ
ՆԱՀԱՏԱԿԵԱԼ 'Ի ՎԵՐԱՅ ՀԱՒԱՏՈՅ
ՔՐԻՍՏՈՍԻ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԲԱԶՄԱՉԱՐՉԱՐ
ԱԶԳԻՍ ՀԱՅՈՑ.

Քանի մը տարի վերջ Ճորոխի ափանց վրայ պտտող անցաւորը նոյն վկայարանին մէջ ուրիշ գերեզման մը կը տեսնէր յար և նման առջևինին՝ անկից վար զետեղեալ և որուն այս էր արձանագրութիւնը.

ԱՍՏ ԴՆԻ ՅՈՏՍ ԵՐԱՆԵԼԻ ՆԱՀԱՏԱԿԻՍ
ԱՂԱԽԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ ՎԱՍԿԱՆՈՒՇ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ.

Եթէ մարդկանց սրտին գաղտնիքը շատ անգամ մարմին և ոսկր կը ծածկեն, ո՜ւր կը մնայ ցուրտ քարին տակ ծածկուած գաղտնիքը որ յաւիտենականութեան ովկիանոսին մէջ կ'երթայ կը խորասուզի։

Երախտագիտութենէ շարժեալ ամէն տարի գարնան գեղեցիկ օր մը Արտանուշի ժողովուրդը կուգային այդ վկայարանին շուրջը, քանի մը ծաղիկներ կը բերէին կը ձգէին այդ գերեզմաններուն վրայ, ծերերը կը պատմէին թէ ի՛նչ մարդ էր Յովնան՝ թէ ի՛նչպէս քաջ խմբի մը ընկերակցութեամբ եկեր անթիւ Արաբացի աւազակներ ջնջեր էր և թշնամոյն աւարը ժողովրդեան շնորհեր էր. և պանծանօք կը ցնէին սուր մը՝ նիզակ մը՝ վահան մը Արաբացի աւարէն։ Կանայք կը պատմէին թէ ինչպէս աննման գեղեցիկ կին մ'էր Վասկանուշ, թէ ինչչափ մեծ էր իր ողորմութիւնը ժողովրդեան

համար, և թէ ի՛նչչափ երջանիկ էին նորա օրով ամենքը:

Բայց ո՞վ գիտէր և ո՞վ էր համրեր այն անթիւ արցունքներն ու հառաչանքները այդ երկու անձանց, որ տարիներով բաժնուած՝ վերջապէս գերեզմանին քով իրարու մօտ կը հանգչէին. . .

ԳԼՈՒԽ ԻԲ.

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ԵՂԲԱՐՑ ԳԵՐԵԼՈՑ.»

Գերութիւն կ՚ըսենք այս օր և կ՚անցնինք բառին վրայ թեթևութեամբ, բայց մեր այս խողութիւնքը անցած ժամանակներուն՝ մեր հարք լաւ զգացեր էին բառին նշանակութիւնը իրենց սրտին ցաւերով՝ թէ ի՛նչ էր գերութիւն: Երբ սարկաւագը «Ազատութիւն եղբարց մերոց գերելոց» կ՚երգէր սեղանին վրայ, հազար հեկեկանաց ձայնք և ձեռ.ք կը բարձրանային երկինք խնդրելով «Գերելոց ազատութիւն:» Ոմանք հարք՝ ոմանք զաւակունք՝ ոմանք ամուսինք, վերջապէս շատերն սիրելի կորուստ մը կը փրնտռէին, որ շատ քիչ անգամ կը գտնար:

Գերութեան բարեբաղդութիւնն էր նաև երբ մէկը գթասիրտ տիրոջ մը վիճակէր, և դառն

ծառայութեան ու տանջանաց չ՚էր ենթարկեալ. վասն զի բաւական չ՚էր ծնողաց՝ զաւակաց բարեբաղդ վիճակի մը կորուստը, այլ նաև շղթայներու՝ ծեծի՝ նախատինքի՝ ուրացութեան հրաւիրանաց և բռնադատութեան մէջ էր տոկալ:

Բնութեան օրէնք, բնութեան կարծեցեալ և ընդունեալ օրէնք այս խառնակութեան խիստ ժամանակներուն վեր 'ի վայր էին եղած բոլորովին, մանաւանդ խեղճ Հայուն համար: Քրիստոնէութիւնն ուրացեալ զաւակը՝ արհամարհ աչօք կը նայէր իր ծնողաց վրայ՝ եթէ գերութիւնն իրեն մեծութիւն և վայելք բերած էր: Երիտասարդ կրօնափոխ այրը Մահմէտականի ամուսնացեալ՝ պատուհաս մ՚էր իր աչքի ընտանեաց վրայ: Գերեվարեալ գեղեցիկ աղջիկ մը. երբեմն մեծութեան կը հասնէր կին դառնալով երևելի մարդու մը և տիկին կը լինէր, երբեմն յետին և ամենաթշուառ աղախին կը դառնար անգութ տիկնոջ մը՝ որու ծագումը և բաղդը բարձր էր երկնէն և որուն նախանձը սոսկալի ու մահաբեր:

Այս տեսակ գերութեան վիճակը կար նաև բուն Հայաստանի ոչ շրջակայքը միայն՝ այլ և կեդրոնը ուր Արարատին արմատ կը ձգէր, և ուր գրեթէ ամբողջ գաւառ մը եթէ ոչ ժո-

ղովրդեամբ՝ գոնէ իւր ամրոցներով Մահմէտականին յափշտակութիւն և ստացուածք եղած էր։

Ապահունեաց գաւառը այս բանիս օրինակ մը կրնար լինիլ, և այս մեր պատմութեան ժամանակին գրեթէ բոլոր բերդ և ամրոց Մահմէտականաց կը վերաբերէին, որք իբրև բացարձակ տէրք բռնանալով շրջակայ գիւղօրէից վրայ երկիրը կանապատացնէին։ Եւ այս վիճակը աւելի զգալի էր երբ Բուղայի ձեռքը կը ծանրանար Հայոց վրայ։

Այս ժամանակներն էր, և Գուրգէն արիաբար կը կռուէր Յունաց հետ, քառասուն հոգւով հազար մարդոց դէմ կ'ելնէր, ընտիրները կ'ըսպաննէր՝ կը կողոպտէր կը մերկացնէր, մնացածը կը փախցնէր. այսպէս ոչ անգամ մի՝ այլ շատ անգամներ. մինչև Յունաց զօրավարք մէկ կողմէն Միքայէլ կայսեր կը գրէին իմացնելով այս արտաքոյ կարգի մարդուն զօրութիւնը, և միւս կողմէն Տաճկաց օգնութիւն կը խնդրէին և նոցա օգնութեամբ դարձեալ կը յարձակէին իր վրայ։ Իսկ սա կրկնապատկելով իւր քաջութիւնը այս անպիտան դաշնակցաց կոտորած կոտորածի վրայ հասցնելով զամէնքը ահարեկ կ'ընէր։ Մինչև կայսեր հրաւէրը կ'իմացնէր Յունաց զօրավարը խաղաղութեան խօսքերով,

թէ ինչպէս կայսրը կը փափաքէր զինք թագաւորական քաղաքը մեծամեծ պարգևներ և գահ և պատիւ իրեն խոստանալով։ Իսկ Գուրգէն որ Յունաց բարեկամութենէն աւելի կը կասկածէր՝ քան թէ նոցա զօրութենէն կը վախէր՝ յանձն չ'առաւ երթալ, այլ խաղաղութեան կապ մը հաստատելով իշխանիկին և Յունաց զօրավարին մէջ որոշեց երթալ առ Սմբատ Սպարապետ։

Գուրգէն իր պատերազմական զբաղմանց մէջ չ'էր իմացեր Յովհանու նահատակութիւնը, և կարծէր թէ նա Տարօն և Վասպուրական կը գտնուի, իսկ հիմա այս որոշմունքէն վերջ, դժուար կուգար Խոսրովէն բաժնուիլ, որ բոլոր իւր քաջութեանց մասնակից եղած էր, իւր տարիքէն վեր, և որու վրայ Գուրգէն միշտ կը հակէր։ Եւ վերջի երեկոյին երբ երկրորդ օրը պիտի թողուր Յունաց սահմանը՝ մտնելու համար Մեծ Հայոց երկիրը յանկարծ դարձաւ Գուրգէն և ըսաւ իւր բարեկամին.

— Եթէ բան մը կայ որ զիս կը զարմացնէ՝ այն է որ դու յիսունը անցած այդպէս յանդըգնութեամբ պատերազմեցար ինձ հետ նիզակակցութեամբ, որ սուրէ չ'եմ վախեր, վասն զի ինքզինքս խնայելու պէտք չ'եմ զգար. բան մը չ'ունիմ այս աշխարհքիս վրայ կորսնցնելու, և

բան մը չ՚ունիմ ստանալու. իսկ դու որ կին և զաւկներ ունիս և Անկեռ գաւառը՝ ուր օր մը յոյս ունիս մտնելու. ինչո՞ւ մահ կը փընտռէիր շատ անգամ պատերազմի մէջ յանդգնութեամբ.

— Դու Գուրգէն՝ որ երիտասարդ ես, երիտասարդի պէս կը խօսիս։ Միթէ՞ մարդուս սրտին ցաւերը մէկ տեսակ են. դու՝ ինչպէս կ՚երևակայեմ քաջ երիտասարդ մը՝ սրտիդ մէջ կը հեղձնես սիրոյ ծանր վէրք մը և հառաչանքներ և վեր չ՚ես յայտներ ոչ ոքի։ Ես ալ նոյնպէս ծանր վէրք մը ունիմ հայրենի սրտիս խորը. իմ Արիգայիս կորուստը. չ՚եմ խօսիր՝ չ՚եմ գանգտիր կարկաջ պառաւներու պէս, բայց մտնել տուն՝ տեսնել նորա մօր արցունքները, չի կրնալ խեղճ կինը մխիթարել՝ որ ինձի պէս մահը անհաւատից գերութենէն վեր կը համարի. այս ալ անտանելի ցաւ է, Գուրգէն։ Հազար Անկեռ գաւառ կուտայի և այս ծերացեալ գլուխս զոհ՝ եթէ Արիգաս կարենայի դարձեալ անգամ մը գգուել և մօրը գիրկը նորէն դարձնել։ Բայց ո՞ գիտէ ո՛ւր է, ո՞ գիտէ ի՞նչ վիճակի մէջ է, ո՞ գիտէ ո՞ղջ է թէ մեռած. ո՜հ իմ վերջին զաւակս։ Անստուգութի՞ւն սոսկալի բան է, Գուրգէն։ Ներէ՛ իմ արցունքներուս, սոքա իմ առանձնութեան և իմ անկողնիս մխիթարութիւնն

էին և գաղտնիքը, դու ուզեցիր՝ ես չ՚էի ուզեր յայտնել։

— Խե՜ղճ հայր, ըսաւ Գուրգէն լցուած աչքերը անդին դարձնելով, վասն զի ճշմարիտ քաջ մարդիկ կզգայուն սիրտ ունին և գիտեն ցաւ զգալ։ —

— Ինձի կրկնակի հիմա դժուար պիտի լինի քեզմէ բաժնուիլ, միթէ՞ . . .

— Ի՞նչ, միտքդ դրած էիր թէ ես տուն պիտի դառնայի. ոչ երբէք. եթէ դու Յունաց սահմանները մնայիր՝ ես միտքս դրած էի պանդխտութեան ցուպը ձեռքս ուղևորիլ, փնտռել զաւակս և այս սոսկալի անստուգութենէ ազատիլ։

— Լաւ, ի՞նչ ճամբայ պիտի բռնէիր ազատելու համար աղջիկդ։

— Ապահունեաց երկիրը քննելէ վերջ՝ միտքս Դուին երթալ էր, վասն զի հոն եղաւ գերեվաճառութիւնը. և պէտք եղած տեղեկութիւնքն առնլով մինչև Պաղտատ երթալ։

— Վաղը ուրեմն Ապահունեաց ճամբան կը բռնենք, հոն խոյզ և խնդիր ընելէ վերջ կ՚ուղևորինք Դուին, և այնտեղ կ՚որոշենք թէ ինչ պէտք է ընել։

— Աստուած քեզ օրհնէ, Գուրգէն, և երջանիկ հայր ընէ զքեզ։

— Աստուած մեր բարի ձեռնարկութիւնն յաջողէ, այն ինծի մեծ վարձք է։

Ցատկեց ծերը, փաթթուեցաւ երիտասարդին վզին, և երեսները պագաւ։

Երկրորդ օրը տասը ձիաւոր սպառազէնք Ճամբայ կ'ելնէին դէպ' Ապահունեաց երկիրը։ Քաջ և արթուն մարդիկ էին այս մեր երկու իշխանաց հաւատարիմքը, ուստի իրենց պէտք եղած տեղեկութիւններ տրուեցան թէ ի՛նչ կերպ հետազօտութիւն պիտի ընէին և ի՛նչ պիտի հարցնէին իւրաքանչիւր գիւղ և բերդ ուր հասնէին. և այսպէս օրը հազիւ թէ երեք չորս ժամ Ճամբայ կ'ընէին. ծանր կ'երթային որպէս զի իրենց փնտռածը կարենան գտնել։ Միշտ կը ջանային այն բերդերն աւելի իջևանել որոց տէրքը Տաճիկ էին, և Վահրիճ որ բերդապահ ծառայից բարեկամութիւն և ընտանութիւն կը ցնէր՝ գրեթէ միշտ անօգուտ և ունայն լուրեր կը բերէր իշխանաց, որ երբեմն ծիծաղ նաև կը պատճառէին։

Արևելեան հիւրընկալութիւնը թէպէտ հըռչակաւոր եղած է ամեն երկիր, բայց միշտ Տաճիկը հաճութեամբ չ'ընդունիր Քրիստոնեայ հիւր, ինչպէս Քրիստոնեայն զՏաճիկը։ Խօսրով և Գուրգէն որպէս զի հեռուէն գալ կարծուին, մութուն երեք ժամ մնացած սովորութիւն ու-

նէին Ճամբայ ելնելու. նոյնպէս երեկոյ մ'էլ տեղեկութիւն առած մօտաւոր Տաճիկ բերդի մը որ ծաղկեայ լերան ստորոտը կը գտնուէր, մութը իյնալէն գրեթէ ժամ մը վերջ հոն հասան, և դուռը ի՛նչչափ որ զարկին անկարելի եղաւ բանալ տալ. ան ատեն Գուրգէն տղոց մէկուն հրամայեց որ իր ուսերուն վրայ ելնէ և ուրիշ մը աւելի թեթև նոյնպէս նորա վրայ մինչև պարսպին վրայ մէկը կրցաւ ելնել, և պարանաւ ամենքը ներս իջան առանց դրան պէտք ունենալու։ Ոչ դիմադրութիւն՝ ոչ ձայն կար բերդականաց կողմէն. կարելի չ'էր իմանալ թէ մարդ կա՞ր թէ ոչ, բայց բլրոյն ստորոտը լոյս տեսնուած էր, ուստի Գուրգէն կ'ըսէր կամաց ձայնով. «Դուք հիմա դռները կը բանաք եթէ ոչ կամաւ այլ ակամայ։» Եւ իրօք էլ այնպէս եղաւ. երբ քանի մը անգամ Վահրիճ խնդրեց որ բանան և պատասխան չ'ընդունեցաւ, ան ատեն. «Մէկդի, տղա՛ք, գոռաց Գուրգէնի ահագին և բարկաճայթ ձայնը և տեսան մութ տեղը որ ահագին քար մը առած կ'ուգար վազելով, և երբ այդ քարը դրան բախեց ուժգնութեամբ՝ դուռը խախտեցաւ, տունը թնդաց և ներսէն մարդկանց և կանանց աղաղակներ լսուեցան։ Իսկ Գուրգէն առանց ուշ դնելու հեռացաւ դարձեալ և երկրորդ յարձա-

կուփն և հարուած մ՚էլ տուաւ. դրան երկու փեղկերը միատեղ գետինն ինկան: Ան ատեն ձեռքերը շփեց, վահանը ձեռքն առած մտաւ ներս և ուղղուեցաւ սենեակները հանդարտութեամբ և հրամայեց թիկնապահաց որ ձայն տան բնակչաց լոյս բերել, և շնորհքով հիւրընկալել եթէ չ՚են ուզեր որ տուներնին հիմն ՚ի վեր տապալի:

Եւ ահա քանի մը վայրկեան վերջը խռուած կնճռոտած ալեւոր Տաճիկ մը ձեռքը ճրագ ներկայացաւ և «բարի երեկոյ» մաղթեց մեր հիւրերուն. իր կերպին մէջ դժկամակութիւն և երկիւղ յայտնի կ՚երեւէին: Իսկ Գուրգէն առանց նորա վիճակին ուշադրութիւն ընելու, հարցուց ծերուն ահագին ձայնով.

— Ծե՜ր դու, քեզ կ՚ըսեմ, ինձ մտիկ ըրէ, այս տան մէջ քեզմէ զատ մարդ չի՞ կայ:

— Կայ, իշխան:

— Ինչո՞ւ քեզ կ՚ուղարկեն ուրեմն որ ծեր մարդ ես, հանգստեան պէտք ունիս, և ուրիշ երիտասարդ մարդիկ երեսնին կը ծածկեն: Ի՞նչ է քու տիրոջդ անունը:

— Ալի Էրմէնի:

— Շատ բարի, Ալին լաւ է, Էրմէնին ալ լաւ է, երբ այս երկու անուններն իրարմէ հեռու լինին. ինձմէ բարև ըրէ և ըսէ իրեն որ հիւրընկալու-

թեան օրէնքը զինք կը պարտաւորէ որ գայ մեզի ընկերութիւն ընէ, և ոչ թէ փախուստ տայ:

— Բայց երբ հարցնէ թէ ո՞վ է բարև ընողը, ի՞նչ անուն տամ:

— Զրուցէ թէ բարեկամաց բարեկամ՝ թըշնամեաց թշնամի՝ բուն, անխառն, ճշմարիտ Էրմէնի մի է:

Մեր բարեկամները թողունք քիչ մը այս երկու երեք սենեակներուն մէջ որ արանց և հիւրոց բնակարան կը կազմեն, և ծերուն հետ մտնենք կանանոցը ուր նոյն վայրկենին ամենը այր և կին պատսպարեալ էին: Հինգ վեց սպառազէն մարդիկ կանանոցին դրան առաջ կանգնեալ էին. արձան կարելի էր կարծել զիրենք եթէ չի դողային: Չորս հինգ հատ մը խաբշիկ Եթովպացի գերիք իրենց ապուշ դէմքով բոլորովին շփոթած կը տարտամէին: Իսկ ներքին սենեակներուն մէջ ահարեկ և յուսահատ տասն հինգի չափ ամեն հասակի և ամեն տեսակի կանայք շարուած կեցեր էին՝ փառաւոր ոսկեթել բեհեզներով հագուած կնոջ մը առաջ որ միայն բազմոցին վրայ ծնկուըները ծալած նըստած էր, և որուն գլուխը կանաչ լաչակ մի կապուած կար ՚ի նշան Մարգարէին ցեղէն իջնելուն: Կինը թխամորթ՝ չոր՝ երկայնահասակ՝ սև աչքեր և հաստ յօնքեր ունէր որ իր նա-

յուածքին աւելի խստութիւն մը կուտային. մէջքի ականակապ գօտիէն կախուած էր ոսկեպատեան դաշոյն մը, և քօղի բարձին վրայ արջառաջիլ մը կար ահարկութիւն աղախնայց և սարկաց, վասն զի այդ դաժան՝ արհամարհոտ և ամբարտաւան աչքերը կը ցցնէին թէ ամենափոքր սխալմունք և յանցանք քաւութիւն չ'էին գտներ առանց այդ խարազանին հարուածներէն անցնելու։

Ընդարձակ սենեակին մէջ ուր այնչափ կանայք և աղջկունք կանգնած էին շնչառութեան ձայն անգամ չի կար, թէպէտ երեք՝ չորս հատը տասն տասներկու տարու աղջիկներ էին. և միայն հանըմին շարժմունքին իր բեհեզեայ և մետաքսեայ հագուստներուն ձայնը կը լսուէր։ Բարկութիւն և երկիւղ իւր բնական տգեղ դէմքը աւելի տգեղ կը ցցնէին. և անհամբերութիւնն արդէն վերջի սահմանը գտած էր, երբ Հասան պապա ներս մտաւ և գրան առջև կեցաւ։

— Մօ՛տ եկ, Հասան, գոչեց Տիկինը, ո՞վ են, ի՞նչ մարդիկ են այդ աւազակները.

— Տիկին, Հայ են, երկուքը իշխանաւոր են, տասնի չափ ալ զինուորք։

— Ի՞նչ խօսեցան, ի՞նչ ըսին. իմ ըսածներուս ի՞նչ պատասխան տուին։

— Տիկին, ձեր ըսածները զրուցելու ժամանակ չի տուած՝ այդ գլխաւորներուն մէկը երկայն ահագին մարդ մը՝ սոսկալի ձայնով ինձ հրամայեց որ մէկ մ'էլ աչքին չ'երևամ և Տէրը տուեց։

— Չի զրուցեցի՞ր թէ այս բերդին տէրը Տիկին մ'է։

— Ոչ, Տիկին, ըսաւ ծերը ահով մէկ երկու ոտք ետ քաշուելով՝ վասն զի կնոջ աչքերը կատաղի փայլ մը առին և ձեռքը արջառաջիլէն երկնցաւ։

— Անպիտա՛ն ծառայ, այսպէ՞ս իմ հրամանները կը կատարես. չ'ըսիր այդ անհաւատներուն թէ Տիկինը Մարգարէին ցեղէն կ'իջնէ և Ամիրապետին մօտ ազգականն է։

— Այդ խօսքերը զրուցելու ժամանակ չի մնաց, Տիկին, ո՞վ և ինչչափ քաջասիրտ մարդ լինի այդ հսկային առաջ կը շփոթի ըսելիքը. ես ծեր՝ տկար մարդ եմ, Տիկին, փառք Աստուծոյ, այսչափ ինձմէ լաւ ծառայներ ունիս. . .

— Լռէ՛, անպիտան ծեր, խորհուրդ տալը միայն կը պակսէր. կորի՛ր, աչքիս մ'երևի՛ր, կերած հացդ լեղի դառնայ։ — Եւ ծերը ուրախութեամբ դուրս ելաւ դիւրազին ազատելուն համար։

Տիկինը երեք անգամ ծափ զարկաւ, և ան-

միջապէս քսանը հինգ՝ եռեսուն տարու երիտասարդ մը քովի սենեակի մը դուռ բացաւ և դահլիճը մտաւ. Տիկնոջ մօտեցաւ համարձակ ձևով, բայց առանց աչք դարձնելու այդ աղախնայց բազմութեան վրայ որ ձեռնամած՝ գըլուխնին ծուռ՝ արձանի պէս շարուած կեցեր էին:

— Գնա՛, Ալի, նայէ՛ թէ ի՞նչ կ՚ուզեն այդ աւազակները. ըսաւ Տիկինը կատաղի աչքեր փայլեցնելով երիտասարդին վրայ:

Իսկ երիտասարդը իբրև թէ չ՚իմանալով այդ նայուածքին սպառնալից նշանակութիւնը ելաւ կանանոցէն դուրս և մտաւ հիւրանոցը ուր Գուրգէն և Խոսրով նստած էին: Քաղցրութեամբ բարև մը տալէն վերջ նստաւ:

— Այս բերդին տէրը դո՞ւ ես, հարցուց Խոսրով ծանրութեամբ, առանց Գուրգէնի ժամանակ տալու որ խօսի:

— Այո՛ եթէ Աստուած ուզէ, պատասխանեց Ալի:

— Ա՞յս է ընդունելութիւնը որ սովոր ես ընել Աստուծոյ հիւրերուն՝ որ կուգան քու դուռդ կը զարնեն գիշերով, պատառ մը հաց և անկողին մը խնդրելու. քու կերպարանքդ այդպէս չի վկայեր:

— Արտաքոյ կարգի ընտանեկան դիպուածներ

սխալմունք մը մեզի ընել տուին, ո՛ գիտէ թերևս ձեր կողմէն էլ չափազանց սպառազինութիւն երկիւղ պատճառեց պահապանաց, ես էլ քիչ մը տկար և քուն էի. անխոհեմութիւն մը եղած համարինք, դուք հիւր և մենք հիւրընկալ, խաղաղութեամբ կ՚ուղղենք սխալմունքը: Արդէն ապսպրուած է ձեր ընթրիքը, քիչ մը խնդրեմ համբերել:

Երիտասարդին այս քաղցր եղանակը և խօսքերը Գուրգէնի բարկութիւնը իջուցին և իր յօնից բնական պարզութիւնը բերին, երբ Վահրիճ դրան քով երևցաւ և ակնարկի ըրաւ իւր տիրոջ: Եւ Գուրգէն թողլով երկու խօսակիցքը, դուրս ելաւ իւր սպասաւորին հետ որ երբ առանձին մնացին,

— Այս անգամ, լաւ լուր ունիմ ըսաւ ուրախութեամբ:

— Զրուցէ՛, շուտ ըրէ, միւս լաւ լուրերուդ պէս չ՚լինի:

— Խոսրով իշխանին աղջիկը հոս է:

— Ի՛նչպէս, ըսաւ Գուրգէն աչքերը բանալով:

— Աստուած վկա՛յ՝ հոս է:

— Ի՞նչպէս գիտես . . . .

— Ինչպէս ինձ հրամայեցիր տան չորս կողմը կը շրջագայէի, ուրպէս զի մարդ մը չի փախցնեմ և չ՚երթայ դուրսէն օգնութիւն փնտռե-

լու: Վերջապէս յոգնած՝ երկաթապատ նեղ պատուհանի մը առջև նստայ և կը դիտէի, երբ փոքրիկ նուաղ ձայն մը ինձ «Հա՞յ ես, Հա՞յ ես» ըսաւ պատուհանէն. «Փառք Աստուծոյ, Հայ եմ» պատասխանեցի. «խնդրեմ, կամաց խօսէ, չ'իմանան, 'ի սէր Աստուծոյ, ազատէ զիս այս տեղաց, հանըմը զիս պիտի սպաննէ, ես էլ Հայ եմ քեզի պէս. իմ անունս Արիգա է, Խօսրով Ակէացիին աղջիկն եմ,» ըսաւ լալագին և այնպիսի կամաց ձայնով որ հազիւ կը լսուէր:

— Տէ՛, քալէ, ցցուր ինձի սա պատուհանը: Մարդ կրնա՞յ անցնիլ պատուհանէն:

— Քեզի պէս մարդ չի կրնար անցնիլ, բայց փոքր մարդ կրնայ անցնիլ:

— Շատ բա՞րձր է պատուհանը:

— Մարդաչափ բարձրութիւն ունի, ահա՛:

Գուրգէնի ուսերուն չափ էր բարձրութիւնը պատուհանին. առանց ուրիշ հարցմունք ընելու մեր հսկան երկաթները փորձեց, ծունկը պատին կրթնցուց, և երբ ուժ մը տուաւ ու ցնցեց ձեռքը մնացին երկաթները և պատուհանին շրջանակը կազմող քարերը թափեցան:

— Ե՛կ աղջիկս, ահա ազատ ես, ըսաւ Գուրգէն ձայնն ըստ կարելւոյն քաղցրացնելով և գլուխը ներս երկնցնելով. իսկ աղջիկը որ այդ ցնցմունքէն դէպ 'ի դուռը փախեր էր՝ պատու-

հանին մօտեցաւ և ձեռքը երկնցուց ազատաբարին որ զինքն յափշտակեց և տղու մը պէս գրկելով. — Իրա՞ւ, քու անունդ Արիգա՞ է, դու Խօսրովի աղջի՞կն ես, հարցուց:

— Այո՛ ըսաւ աղջիկը և չ'էր գիտեր թէ վախնա՞յ կամ չի վախնայ այդ մարդէն:

— Կ'ուզե՞ս հայրդ տեսնել. վաղը առտու ես քեզ իրեն կը տանիմ:

— Այս երեկոյ միթէ կարելի՞ չ'է:

— Տեսնենք, կը ջանամ, աղջիկս:

Եւ այսպէս գրկած, տարաւ փոքրիկ սենեակ մը աղջիկը նստեցուց, Վահրիճ իրեն պահապան դնելով և լռութիւն հրամայելով: Ինք մտաւ Խօսրովու քով, երբ Ալի Փասա բարով ըսելով կը հեռանար:

— Խօսրով, կարծեմ թէ աղջիկդ աս բերդին մէջն է:

— Ի՞նչպէս, ըսաւ ծերը աչքերուն կենդանութեան փայլ մը գալով. ի՞նչէն գիտես . . .

— Որոշ չ'եմ գիտեր, բայց պատուհաններէն գերի աղջիկներ մեր թիկնապահաց հետ խօսեր են, ազատութիւն խնդրեր են:

Իսկ Խօսրով լաւ մը Գուրգէնի երեսը նայելով, և գոհութեան ու զուարթութեան ամենամեծ նշաններ տեսնելով,

— Իմ աղջիկս ազատեր ես դու, Գուրգէ՛ն,

օրհնեալ լինիս, ըսաւ, ցատկեց և նորա վիզը փաթթուելով, — Զրուցէ՛, ո՞ւր է Արիգաս:

— Մ՚այլայլիր, Խոսրով, աղջիկ մը ազատած կայ, բայց նա է թէ ոչ կրնանք իմանալ:

— Երթանք, երթանք ըսաւ Խոսրով, և երբ քովի սենեակը մտան, Արիգա նստած էր մարած աչքերով, նիհար, և գունաթափ պատառոտի զգեստներով, հազիւ թէ զինք ճանչեց հայրը, իսկ նա զայն տեսնելուն վազեց տեղացը և երկուքը իրարու գիրկ ինկած՝ երկար ուրախութեան հեկեկանք մը անվերջանալի պիտի լինէր, եթէ Գուրգէն երկուքն էլ իրարմէ չի զատէր, որպէս զի ուրախութիւնը տրտմութեան չի դառնայ: Ուստի ջանաց Խոսրովու միտքը բերել թէ իրենց գիրքին մէջ շատ հարկաւոր բաներ կար տեղեկանալու Արիգայէն, ուստի սկսաւ հարցաքննութիւն մը, և իմացաւ թէ ինչչափ զինեալ մարդիկ կային ներսը. իսկ երբ տանտիկնոջ նկարագրին հասաւ և այդ վտանգաւոր կնոջ պատմութիւնը լսեց որ ահուդողն էր ծառայներու՝ գերեաց՝ աղախնայց և իր ամուսնոյն, երբ իմացաւ թէ սաստիկ նախանձոտ ոչինչ կասկածի մը համար ծեծ՝ բանտ՝ տանջանք և թոյն կը գործածէր այդ կինը եթէ ամուսինը փոքրիկ նշան մը քաղցրութեան ցըցնէր աղջկանց մէկուն՝ կամ ջուր մը ուզէր, և

թէ պարտիզին մէկ կողմը «գերեզման աղախնայց» կ՚անուանէին սոսկմամբ գերիները:

— Ես այստեղ բերանս հաց չ՚եմ կրնար դնել, ըսաւ Գուրգէն, և մէկուն պատառ մը հաց ուտել թող չ՚եմ տալ: Երթանք:

— Բայց ի՛նչ կ՚շտապես, ըսաւ Խոսրով, մենք մեր աղջիկը ազատեցինք, բայց հոն պէտք է ուրիշ Հայ աղջիկներ ալ գտնուին, որ կարելի չ՚է այդ կատաղի կնոջ ձեռք ձգել, ազատենք նոքա էլ: Զրուցէ, Արիգա, դեռ ուրիշ Հայ աղջիկ կա՞ն ներսը:

— Զորս հատ փոքր աղջիկներ կան, մէկը իմ տարիքովս հազիւ կը լինի.

— Մեծերուն մէջ Հայ չի կա՞ն ամենևին:

— Երկու հատ կային, բայց հանըմը այնչափ չարչարեց որ յուսահատեցան՝ խաչին վրայ կոխեցին և Քրիստոս ուրացան:

— Դու ի՞նչ բանի համար բանտն էիր, հարցուց Խոսրով:

— Ես էլ չ՚գիտեմ, ամիս մը կայ որ հանըմը ամուսնոյն հետ վէճ մը ունեցաւ, զիս անոր առջև սաստիկ ծեծեց, և անկից ՚ի վեր բանտն եմ. դեռ վէրքերս նոր առողջացան:

— Շա՛տ բարի. դուք հայր ու աղջիկ իրարու հետ տեսնուեցէք, ես պէտք եղածը հոգամ: Երբ ելաւ, տեսաւ որ կանանոցին դռները

թացուեցան և սեղան մը կերակուրներով զարդարեալ դուրս կը հանէին երկու սև ստրուկք, երկու ուրիշ ստրուկք էլ պարկերով ձիաններուն գարի կը բերէին: Գարին առնուլ հրամայեց, իսկ կերակուրները ետ դարձնել. նոյնպէս լուր ղրկեց որ Տանտէրը շուտով դուրս գայ, վասն զի հարկաւոր բան ունէր զրուցելու:

Երբ Ալի եկաւ, Գուրգէն զինք մէկ կողմն առաւ և ըսաւ.

— Այստեղ չորս փոքրիկ Հայ աղջկունք կան, և երկու էլ չափահաս որ նոր ուրացեր են իրենց կրօնքը, այդ վեց աղջիկները հիմա մեզի պէտք է յանձնուին:

— Բայց անկարելին կ՚ուզէք, ի՞նչպէս կրնամ ձեր այդ պահանջմունքը Տիկնոջ հաղորդել, այդ աղջիկներն իրեն արծաթագին աղախիններն են, ինք կենաց և մահու իրաւունք ունի նոցա վրայ, եթէ ես այս խօսքերը իրեն զրուցեմ, շատ վատ հետևանք կ՚ունենայ նոյն իսկ աղջկանց համար:

— Այսինքն այդ Տիկինը աղջիկները խղդել կ՚ուտայ և մեր ձեռքը չի յանձներ. այնպէ՞ս չ՚է:

— Այս խօսքերուն Ալի պատասխան չի տուաւ և գետինը կը նայէր.

— Զ՚ըսե՞ս, զրուցեց Գուրգէն, դու էլ որ իբրև Տէր մեզ ներկայացար՝ նորա առաջին ստրուկն ես:

— Այո՝ պատասխանեց Ալի կարմրելով, ես չ՚եմ ուրանար իմ վիճակս, այս աշխարհքիս վրայ աչքս բացի՝ նա ճանչցայ ինձի տիրուհի՝ մայր՝ դաստիարակ և ամեն ինչ. չ՚եմ կրնար ապերախտ լինիլ:

— Կ՚իմանամ, շատ առաքինութիւն ունիս, ըսաւ Գուրգէն խստութեամբ, ուրեմն ես պէտք է խօսիմ իրեն հետ:

— Անկարելի է. ինք մարդու չ՚երևար, կրօնասէր կին է, Մարգարէին ցեղէն իջած է:

— Ես իր կրօնքին արգելք չ՚եմ, բայց երբ իմ ազգիս զաւկները կը տանջէ և կրօնափոխ կ՚ընէ, Մարգարէին ցեղէն լինելը չ՚արգիլեր՝ որ ես աս բերդը քար ու քանդ ընեմ և մէջիններն ամենքը սրէ անցնեմ: Եթէ զօրաւորին ներեալ է ամեն անիրաւութիւն՝ ես հիմա աս վայրկենիս ձեզմէ զօրաւոր եմ. Զրուցէ՛ իրեն թէ կամայ և թէ ակամայ ես հիմա ներս պիտի մտնեմ և իրեն պիտի խօսիմ:

— Խնդրեմ, իշխան, ե՛կ դու մի՛ խօսիր, այդ միւս ծերը իրեն խօսի:

— Լա՛ւ, կ՚իմանամ քու միտքդ, այնպէս թող լինի, բայց եթէ յանկարծ վտանգ մը իրեն հանդիպի՝ գիտե՞ս ի՞նչ կ՚ընեմ. . . ,

— Կ՚երևակայեմ. ուստի երթամ ես ներս և հիմա կուգամ:

Խեղճ երիտասարդը մտաւ ներս և նոյն դիրքին մէջ՝ նոյն բազմոցին վրայ գտաւ իւր Տիկինը՝ և նոյն կրքով դառնացեալ. դարձեալ աղախիններուն մէկ մասը՝ առջևը կեցած ձեռածալ, միւս մասը գնացեր էին զանազան ծառայութիւնք կատարել: Երբ տեսաւ իր ամուսինը, առջի հարցմունքն եղաւ,

— Ի՞նչ բանի համար այդ աւազակները ետ դարձուցեր են իրենց ղրկուած կերակուրները:

— Պատճառը չ՚եմ գիտեր, Տիկին. միայն այս չափը գիտեմ թէ մենք այդ աւազակներուն ձեռքն ենք, և ի՛նչ չարիք որ ուզեն կրնան մեր գլուխը բերել:

— Ի՜նչ զարմանք, երբ այս տեղ վեց եօթը հոգի զինեալ մարդ ունինք, և սա անարգ աղախիններուն չափ արժէք չ՚ունին և աւելի անպիտան են: Բերդ մը տասը հոգւոյ դէմ չի կրցաք պաշտպանել, դռները կոտրեցին ներս մտան, շան պէս դողացիք և դիմադրութիւն մը չի կրցաք ընել. ես եմ յանցաւորը որ ձեզի պէս թշուառականներու հաց կը կերցնեմ:

— Տիկին, հիմա յանդիմանութեանց ժամանակ չ՚է, վասն զի այդ մարդիկը եթէ քիչ մը ուշանանք ներս կը խուժեն և քու հանդստութիւնդ կ՚աւրեն. հիմա իրենք կը խնդրեն որ իրենց մէջէն խելօք մէկը ուղարկեն՝ վասն զի

առաջարկութիւն մը ունինք հանըմին կ՚ըսեն:

— Ինձի՜ մարդ պիտի ուղարկեն այդ անհաւատները, Աստուա՜ծ չ՚ընէ որ ես ընդունիմ այդպիսի առաջարկութիւն, այս բազմոցիս վրայ մեռնիլ աւելի յանձն կ՚առնում քան թէ այդ շուներուն երեսը տեսնել:

— Բայց ի՜նչ օգուտ այսչափ խստութենէ, մենք կարելի է որ լաւ չի պաշտպանենք բերդը, բայց անգամ մը տեսնելու է թէ ի՜նչ մարդ է իրենց հսկայ գլուխը, քան՝ քառասուն մարդ կ՚արժէ:

— Երկար խօսք չ՚եմ ուզեր, գնա՛ իմացիր թէ ի՛նչ է առաջարկութիւննին:

— Երթամ . . . բայց . . .

— Գիտե՛ս ուրեմն և չ՚ես կրնար համարձակիլ զրուցելու, անհաւատի որդի: Եւ թևէն քաշելով, — Շո՛ւտ, զրուցէ՛ տեսնեմ ըսաւ:

— Չորս փոքր աղջիկները որք Հայու զաւակ են՝ կ՚ուզեն որ իրենց յանձնուի, և երկու էլ մեծերը որ դու Միւսիւլման ըրիր այս մօտերս . . .

— Ի՜նչ, աղջիկ տա՞մ իրենց, վեցն էլ հիմա ձեռօքս կը մորթեմ, գլխնին թող առնուն նատին, ըսաւ կինը կատաղութեամբ և ոտք ելնելով:

— Բայց գիտես, Տիկին, թէ այդպիսի գործի մը հետևանք ի՛նչ կը լինի:

— Ի՛նչ որ կ'ուզէ թող լինի . . . բայց դու մատնիչ, դու իրենց ըսիր թէ այսպիսի աղախիններ ունիմ ես, ըսաւ կատաղութեամբ յարձկելով երիտասարդին վրայ որ յարգանօք և հանդարտութեամբ քայլ քայլ ետ կը քաշուէր.

— Աստուա՜ծ վկայ որ ես էլ չ'եմ գիտեր թէ ուսկից են իմացեր:

Այս միջոցիս ներս մտաւ պառաւ աղախին մը և դրան մէջ կեցած՝

— Տիկին, Աստուած քեզ պահէ, այդ Հայու աղջիկը, որ ամիսէ մը 'ի վեր բանտն էր, չէ կայ, պատուհանին երկաթները կոտրտեր փախեր է:

— Ի՜նչ կ'ըսես. ողորմելի տկար աղջիկ մը երկաթները կոտրտէ՜, անկարելի բան է. Ալի, շո՛ւտ պատասխան տուր, այդ աղջիկը ո՞վ փախուց, եթէ ոչ՝ հիմա . . .

Եւ դաշոյնը մերկացած՝ երիտասարդին վրայ յարձակեցաւ, որ թևէն բռնելով միշտ համդարտութեամբ,

— Տիկին, նախանձը գքեզ կը կուրցնէ, կ'ըսէր, դու գիտես թէ առանց քու հրամանիդ սա սենեակէն դուրս ելած չ'ունիմ. ես ի՞նչպէս ե՞րբ կրնայի այդ աղջիկը փախցնել:

Իսկ սա՝

— Թո՛ղ տուր ձեռքս, կը գոչէր կատաղու-

թեամբ և աչքերն արիւնով լցուած՝ ամէն ուժը կը թափէր՝ ձեռքը կ'ուզէր ազատել:

Այս միջոցիս յանկարծ կանանոցին դուռը կռնկի վրայ պառկեցաւ շառաչմամբ, և Գուրգէնի որոտալից ձայնը լսուեցաւ որ «Մահ դիմադրողին» կը պոռար. զինեալ պահապանները ծակէ ծակ փախան, և սա երկու քայլ փոխելով՝ լուսաւոր սենեակը մտաւ ուր կատաղի կինը աչքերը դարձած՝ ոչ բան կը տեսնէր և ոչ խօսք կը լսէր:

Աղախինները այս ահագին սպառազէն մարդը՝ որ մերկ սուրը ձեռքը երբ տեսան, վայրուձայներ և ճիչեր ձգելով փախչող փախչողի եղան. իսկ Գուրգէն երբ տեսաւ կատաղի կինը որուն ձեռքը դաշոյնը կը փայլէր և «Թո՛ղ տուր» կը գոչէր, և երիտասարդը որ ամուր ձեռքը թող չ'էր տալ, բոլոր բարկութիւնը կորսնցուց և մեծաձայն ծիծաղով քրքիչ արձակեց այս կատակերգակ տեսարանին վրայ.

Այդ ահագին ծիծաղը և ձեռքին ուժաթափութիւնը պարտաւորեցին կինը որ դաշոյնը ձեռքէն նետեց, և երբ դարձաւ սպառազէն հսկայն տեսաւ՝ որուն ետեւը չորս հինգ նոյնպէս սպառազէն թիկնապահք կանգնած էին, շուտ մը քողը գլուխը քաշեց և իր բազմոցին վրայ սմքեցաւ:

Իսկ Գուրգէն միշտ ծիծաղելով ծռեցաւ՝ առաւ գետնէն դաշոյնը և լաւ մը զննելէն վերջ,

— Ի՞նչ գեղեցիկ խաղալիք, պէտք չէ Տիկինը այսպիսի զարդէ մը զրկել, ըսաւ և բերաւ կնոջը քով դրաւ. իսկ նա բարկութեամբ առաւ քովի բարձին տակ ծածկեց։

— Բարկութիւն լաւ բան չէ, շարունակեց հանդարտ ծիծաղով, և առանց ակնածութեան տիկնոջ բազմոցին վրայ՝ նորա քով նստելով։ Կը ներես, կ'ըսէր, եթէ երրորդ դուռն է որ այս գիշեր բռնի անցնելու կը պարտաւորուիմ. յանցանքը իմս չէ, վասն զի միշտ այնպէս սովրած եմ որ դուռները բանան. եթէ քու սովորութիւնդ է որ դուռ չի բանաս՝ պէտք է ամուր շինել տաս, և ոչ փտած ծխնեաց վրայ հաստատես դռներն՝ որ առջի հարուածին կը բացուին։

Իսկ կինը քաշուած բազմոցին մէկ անկիւնը, ոչ ձայն կը հանէր և ոչ պատասխան կուտար։

— Բայց վերջապէս, ըսաւ Գուրգէն, դու որ լեզու կը պահես, ազատ ես ինձ հետ խօսելու կամ չի խօսելու, այլ ոչ իմ պահանջմունքս չի կատարելու. ո՞ւր են այդ չորս փոքրիկ աղջիկները, և դառնալով աղջկանց, Ո՞վ որ Հայ է թող սա կողմն անցնի ըսաւ։

Փոխանակ վեց հոգւոյ ինը աղջիկ զատուեցան և մէկ կողմը շարուեցան։ Գուրգէն կը զարմանար, վասն զի վեց հոգի միայն գիտէր Հայ, իսկ հիմա երեք հոգի աւելի կը տեսնէր։ Դարձաւ այն ատեն կնոջը.

— Կ'երևայ որ եթէ ես ազատութիւն խոստանամ այս խեղճերուն՝ ոչ ոք քու քովդ պիտի մնայ գաւաթ մը ջուր տալու քեզի. և տեսնելով բարձին վրայ սոսկալի արջառաջիլ խարազանը՝ և ձեռքն առնելով ու շարժելով, Ի՞նչ գեղեցիկ գործիք կրթութեան և հաւատքի քարոզութեան. դու շատ կը գործածէիր այս, տիկին, այնպէս չէ՞ . . .

Իսկ կինը արժան էր լռութեան. ոչ կը խօսէր ոչ ձայն կը հանէր։

— Տղա՛ք, ըսաւ Գուրգէն, նայեցէք, ի՛նչ որ գտնէք ձի՝ էշ՝ ջորի տիկնոջ ախոռներուն մէջ պատրաստեցէք որ այս խեղճ աղջիկները իրենց տեղերը դարձնենք. շո՛ւտ ըրէք, շարժեցէք, անօթի ջարդուեցանք։ Շնորհակալ ենք, Տիկինը մեզի հաց՝ կերակուր զրկած էր, բայց ո՞վ գիտէ թէ իր օրհնած աղը մէջը խառնած չէր։

— Այս միջոցիս Վահրիճ ներս մտաւ.

— Տէր, դուրսը նժոյգ մը կայ, որուն նմանը ես կայսեր ախոռներուն մէջ չեմ տեսեր, Յովակին լաւ ընկեր մը կը լինի։

— Այդ նժոյգը, Տիկինը ընծայ կ՚ընէ Արիգային պատասխանեց Գուրգէն անխռով։

— Ի՜մ նժոյգս որ գի՜ն չ՚ունի։ Անհաւա՜տ, անօ՜րէն աւազակներ, մինչև ե՞րբ համբերելու է ձեզի . . . գոչելով կինը արագութեամբ յափշտակեց դաշոյնը բարձին տակէն և Գուրգէնի վրայ շողացուց՝ որ միշտ արթուն բռնեց ձեռքը և մատերուն մէջ քիչ մը ոլորելով պարտաւորեց թողլու դաշոյնը, բայց միանգամայն զարմացաւ նաև այդ կնկան կորովին վրայ որ աղաղակներ չէ ձգեց ուրիշ մարդկանց պէս՝ այլ միւս ձեռքով իր երեսը ծածկել կը ջանար քողով։

— Ո՜ւմ համար կը ծածկես այդ գեղեցիկ լաչակիդ պէս կանաչ երեսդ, ըսաւ Գուրգէն, և զննելով դաշոյնը՝ արհամարհոտ աչօք «այդ խաղալիքը օրուան մէջ քանի՞ անգամ կը գործածես» հարցուց հեգնութեամբ։ Եւ երկու կտոր ընելով գետինը նետեց։

Նոյն միջոցին եկան թիկնապահները և իմացուցին թէ ամէն բան պատրաստուած էր։

— Տարէք աղջիկները հեծուցէք, Արիգային համար նժոյգը, որ ոչինչ նշանակութիւն չ՚ունի, փոխանակ իւր այնչափ չարչարանաց և բանտերու այս գարշելի կնոջ ձեռքէն. ըսաւ և ելաւ։

Կարաւանը ուրախ զուարթ ուղևորեցաւ ՚ի

Տարօն գաւառ, և երբ Սասուն հասաւ, սիրալիր ընդունելութիւն գտաւ ամենէն։ Բայց կարելի չ՚էր ուրախութիւն ցցնել Յովնանու սուգին առջև որ բոլոր լեռը համակեր էր։ Սասուն իւր դիւցազնը կ՚ողբար և ամէն տուն հայր մը և եղբայր մը կորուսեր էր։

ԳԼՈՒԽ ԻԳ.

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ.

Պատմութիւնը երկայն կը նկարագրէ Բուղայի զիւրին քաջութիւնքը, որ խաբէութիւն՝ դաւաճանութիւն և ստորնութիւն աւելի լաւ կը գործածէր քան թէ զէնք, ինչպէս տեսանք Վասպուրականի նահանգը ուր Արծրունի Աշոտոյ և եղբօր Գուրգէնի իշխանութիւնը կործանեց՝ առանց պատերազմելու. Նոյնպէս կ՚ընէր ուր որ հասնէր, գիտէր աւրել՝ բայց ոչինչ շինել։

Գարնան իւր առաջին յարձակումը Հայաստանի հիւսիսային կողմը և Տփխիսի վրայ եղաւ։ Այս քաղաքը որ այն ժամանակ Կուր գետին ձախ ափանց վրայ շինուած էր և բոլորովին փայտաշէն, Իսաք անունով Մահմետականի մը սեփհականութիւն էր՝ որ չ՚ուզեց հնազանդիլ

Բուղայի և իւր քաղաքն ամբողջ մոխիր դարձնելէն վերջ ինք էլ սպանուեցաւ նորա հրամանաւ:

Անկէ յարձակեցաւ հիւսիս՝ Ծանարաց վրայ որ Կովկասեան քաջ ժողովուրդ մ'էին և երկայն պատերազմներով ոչինչ չի կարողացաւ ընել ու խայտառակաբար ետ դարձաւ և իր վրէժը թափեց Սիւնեաց երկրին վրայ. մեղ ծանօթ Աշոտ ամրացաւ իւր լերանց մէջ, իւր մեծ եղբայրը Վասակ քաջութեամբ պատերազմելով գնաց Գարդմանաց Կորիճ իշխանին ապաւինեցաւ, և նա կապած մատնեց զնա Բուղայի ձեռք, որ 'ի վարձ իւր մատնութեան զինքն ևս բռնեց խաբեբայ խոստմունքներով, և շղթայի զարկաւ:

Արշաւեց Բուղա Աղուանից երկիրը, բայց հոն Եսայի Ապումուսէ քաջութեամբ պատերազմեցաւ իրեն դէմ, խորտակեց նորա զօրութիւնը, ոչ խաբեբայ խոստմանցն հաւատաց և ոչ զէնքերէն վախցաւ, այլ Աստուծոյ ապաւինելով դէմ դրաւ անօրէնին և քաջալերութիւն եղաւ Քրիստոսի հաւատացելոց: — Վասպուրական լսելով Բուղայի պարտութիւնքը, սիրտ առաւ և ժողովուրդը զէնքի դիմելով, քանի մը իշխաններ գլուխն առած՝ սկսաւ իր բռնաւորաց դէմ պատերազմել և նոցա լուծը խորտակել. չորս հազարի չափ խումբ մը Ապուզափր Արծրունին

և նորա քեռորդին Սահակ Ապումքդեմ քաջ մարդը գլուխ իրենց դրած սկսան կռուիլ և կոտորեցին և աւար առին Ճուաշ և Թոռնաւան:

Այս ապստամբութիւնը ճնշելու համար զանազան Ամիրայք Տաճկաց խումբ խումբ կը դիմէին Վասպուրական հրամանաւ Բուղայի. Հայք երբեմն կը յաղթէին և երբեմն կը յաղթուէին, թշնամիք հոս կը զօրանային՝ հոն կը տկարանային: Վիճակն անիշխանութիւն էր: Եւ պէտք էր հնարք գտնել երկիրը կործանմանէ ազատելու համար:

Սմբատ Սպարապետ ան ատեն ներկայացուց Գուրգէն Բուղայի, պատմեց թէ ինչպէս սա Յունաց դէմ քաջութիւններ ըրեր էր, թէ ինչպէս կայսրը զինք Կոստանդնուպօլիս հրաւիրեր և նա նախամեծար համարել էր իրեն դիմել: Ուստի Բուղայի հրամանաւ Գուրգէն Արաբաց բանակը նստաւ առ ժամանակ մի սպասելով Աստուծոյ օգնականութեան:

Բայց քաջ Ապումքդեմի մահուանէն ետք Վասպուրականի վիճակը երբ վատթարացաւ և Վասակ մը Արծրունեաց ցեղէն երբ գնաց Ռշտունեաց Ոստանը նստաւ իբրև տէր աշխարհին առանց կարենալու սանձել Տաճկաց բռնութիւնքը, և փոքրիկ բռնաւոր մը՛ էլ ինք դարձաւ. Գուրգէն ոչ ևս կրցաւ համբերել, և հարկ հա-

մարկց Սմբատայ հետ առանձին տեսութիւն մ'ընել այս նիւթիս համար:

— Վասպուրականի երկիրը, Հայոց Սպարապետ, ըսաւ, քեզ յանձնուած է 'ի Բուղայէ, և հիմա քանի որ դու պարտաւորուած ես այդ մարդուն քովէն անբաժան մնալու, կ'իմանամ թէ անիշխանութեան մէջ կը թաւալի, և շատ մը փոքրիկ և տեսակ տեսակ բռնաւորաց տակ կը հեծէ. պէտք չէ՞ արդեօք այդ վիճակին դարման տանիլ:

— Ես այդ մասին նաև շատ կը մտածեմ, քու քաջութեանդ վրայ կասկած չ'ունիմ, և կը փափաքիմ նաև, պատասխանեց Սմբատ աչքերը շուրջ դարձնելով որ մի՛ գուցէ իր ըսածը ոք լսէ, կը փափաքիմ նաև այս վիճակին դարման գտնել: Կարելի է շատերը զիս բամբասեցին իբրև մատնիչ հայրենեաց, զիս երկրորդ Վասակ մը՝ Մերուժան մը համարեցին. եղաւ վայրկեան մը որ ես նաև իմ վրաս կասկածեցայ, բայց խղճմտանքս հիմա հանդարտ է, Գուրգէն: Վասն զի վայրկեան մը եղաւ որ ես Բուղայի վստահութիւնն ունենալու համար՝ իբրև առաջնորդ իրեն ծառայեցի, բայց ոչ երբէք իր չ'գիտցածը և յայտնի ճշմարտութենէն աւելի բան մը իրեն իմացուցի: Ինք Ծանարաց դէմ պատերազմելու կամք չ'ունէր, ես առանց երևելու զինք այդ

պատերազմին մղեցի, ուր իւր զօրաց քառորդ մասէն աւելին ոչնչացաւ: Եւ Աղուանից Եսայի Ապումուսէին գաղտնի քաջալերութիւն և դրամական օգնութիւն հասցնող դարձեալ ես եղայ: Եւ այդ պատերազմը նոյնչափ վնասակար եղաւ իրեն որչափ կորստական եղած էր Ծանարաց պատերազմը: Մի՛ կարծեր թէ այս խօսքերը յայտնելով ինքզինքս գովելու դիտաւորութիւն ունիմ, այլ խեղճ հայրենեաց վիճակին մէջ՝ գոնէ արժանաւոր անձանց առաջ ինք զինքս արդարացնել կ'ուզեմ. վասն զի սրտիս վրայ ծանր է այդ մարդուն յանդիմանութիւնը՝ որ մեր ժամանակի Հայոց մէջ առաջին կը համարիմ ես իր անշահասիրութեան՝ իր քաջութեան և հեռատեսութեան համար, և որ մարտիրոսական մահուամբ այդ կեանքը պսակեց: Հիմա՝ այսօր եթէ ինք ողջ լինէր երբ Բուղայի զօրքը կիսովկէս ջարդուեցան, ես իր խորհրդոց կը հետևէի և գլխակը վար առնլով ապստամբութեան դրօշը կը վերցնէի. բայց այդ աննման Յովհանը չի կայ. երկինքէն մեր վրայ կը ծիծաղի: Սակայն պէտք է ջանալ 'ի գործ դնել ինչ որ ինք կը մտածէր. եթէ դու հիմա կարենաս Վասպուրականը հաւաքել՝ քան երեսուն հազարի խումբ մը կազմել, եթէ կարենաս տասը հազար մը գոնէ Սասնցի իջեցնել իրենց լեռնե-

րէն, ապահո՛վ եղիր թէ նոյնչափ մ՚էլ ես կը հոգամ իմ Մոկաց և Շիրակաց երկրէն. և Կաթողիկոսն ու Եկեղեցական դասն ոտք հանելով՝ կ՚սկսինք սրբազան պատերազմը և Յովհաննու փափաքը կը կատարենք։ Քե՛զ տեսնեմ, գնա՛, Աստուած հետդ լինի՜, սուրդ հատու լինի՜։

Ուրիշ յանձնարարութիւն չունի՞ս ինձ ընելու, Հայոց Սպարապետ։

— Ոչ. եթէ պարագաները պահանջեն և ինծի պէտք ունենաս՝ գրէ որդւոյս Աշոտին և ապահով եղիր թէ ինչ որ կարելի է կը ջանամ 'ի գործ-դնել։

— Շա՛տ բարի, ողջ լեր։

— Աստուած հետդ լինի։

Եւ այսպէս բաժնուեցան իրարմէ այս երկու մարդիկը, և Գուրգէն իւր տասը թիկնապահներով մտաւ Վասպուրական, այն գործին ձեռնարկելու՝ որ երկրին բնիկ ժառանգաւոր իշխանք չէին կրցեր կատարել։ Բայց ճամբայ ելնելու ժամանակ և զանազան պարագայից մէջ յիշեց և պիտի յիշէր այդ Յովհաննու անունը որուն հետ քանի՛ պատերազմներու մէջ գտնուել էր և որու քաջութիւնը ինչչափ մեծ էր՝ աւելի մեծ էր հեռատեսութիւնն՝ զգուշաւորութիւնը և կառավարութեան ոգին։

Այնպիսի էր ժամանակը՝ այնպիսի էր երկրին

վիճակը, որ քանի մը օրուան մէջ այդ հսկային շուրջը՝ որ Գուրգէն Արծրունի Ապուպելճ կ՚անուանուէր՝ գունդագունդ ժողվուեցան պատերազմողք, և ինք մտնելով Աղբագ գաւառը՝ երկու երևելի բերդ Ջղմար և Սրինգ գրաւեց առժամայն։ Եւ առանց դանդաղելու յարձակեցաւ Ռշտունեաց Ոստանը ուր կը նստէր Վասակ Արծրունի Կոշաճէրն անուանեալ և որ ինքզինքը զօրավար Վասպուրականի կը հռչակէր. կալանաւորելով զնա՝ ազատութիւն տուաւ իրեն և իմացուց թէ զօրավարութեան պէտք էր արժանանալ՝ ո՛չ շուայտութիւն՝ զուարճութիւն և հանգստութիւն փնտռելով, այլ աշխատութեամբ և գործունէութեամբ։ Եւ խօսքը օրինակաւ հաստատելով՝ սկսաւ ընտիր խումբով շրջիլ բոլոր երկիրը «ուր որ բնակութիւն
«հաստատեր էին Տաճիկք Բուղայի հրամանաւ,
«սոսկալի հարուածներ վրանին կը հասցնէր,
«սրով և աղեղամբ կը սատակէր զերենք, և ան-
«հետ ըրաւ՝ բոլոր Տաճկաց ժողովուրդը՝ որ բնա-
«կած էին Վասպուրական Տէրութեան մէջ։»

Կը զարմանային Վասպուրականի ժողովուրդք այդ Արծրունի Գուրգէնին վրայ որ չէր նմաներ ամենևին այն միւս Արծրունեաց իւր մերձաւոր ազգականաց, այդ պատերազմի յաղթող առիւծը ոչ ամբարտաւանութիւն ունէր՝ ոչ յանձնապա-

տանութիւն և ոչ պահանջմունք 'ի ժողովրդոց։ Շատ անգամ կը տեսնէին զինք նստած հասարակ շինականին հետ ընտանեբար կը տեսակցէր, խրատներ կուտար, կը յորդորէր քաջ լինիլ՝ վարժուիլ զինաշարժութեան՝ ընկերին օգնել ընդդէմ օտարին՝ պաշար պահել նեղութեան օրերու համար։

Հասաւ վերջապէս Հայոց Զօրոյ գլուխը Որդօք գիւղը, չորս հարիւր քաջերով, և միտքը դրած էր Բերկրի հաստատուած Ութմանիկ բռնաւորները բնաջինջ ընել, և Արծրունեաց քաղաքը մաքրել այդ բարբարոսներու ճնացորդներէն։ Բայց կ'սպասէր գունդերուն որ պիտի հասնէին, ուստի կ'ելնէր շատ անգամ միայնակ՝ թողած Ցոլակին գլուխը՝ ծանր ծանր կը շրջէր գետին եզերքը որ այդ լայնատարած ձորը երկուքի կը բաժնէ, և որ հռչակաւոր էր և միշտ պէտք է լինի Հայուն համար, վասն զի հոն եղած է կռիւը՝ ուր Հայոց նախահայրը առաջին պատերազմը պատերազմեցաւ ազատութեան համար և զարկաւ սպաննեց զԲէլ։

Կ'ելնէր՝ այդ միւս լեռներէն շրջապատեալ բարձր սարին վրայ ուր ժողովուրդը մինչև այս օր բերդի մը ճնացորդ աւերակ կը նշմարէ և զոր Հայկայ Բերդ կ'անուանէ. կը դիտէր այդ Տիտանեանց արժանի ահեղ տաշածոյ քարանց

շարքերը, և նստած ժայռի մը վրայ կը մտածէր. ինք մեծասիրտ և կորովի հսկայ՝ այդ դիւցազն և վեհ յիշատակներու առջև ինքզինքը փոքրիկ և նկուն կը գտնէր։

Երբ այս մտածութեանց մէջ թաղուած՝ առաւօտ մը՝ միտքը անցեալին վրայ կը շրջագայէր, աչքը դարձուց դէպ 'ի Բերկրւոյ կողմը և տեսաւ սև ամպ մը որ կը քալէր՝ կը մտնէր Աբրահամու Անապատը։ Շուտ մը ցատկեց Ցոլակին վրայ, «Երթա՛նք իմ քաջ նժոյգս, ըսաւ, մենք պիտի երթայինք թշնամին գտնելու, նա կուգայ մեր առաջ որպէս զի մեր յոգնութիւնը պակաս լինի։» Եւ Ցոլակ որ կ'իմանար՝ փոթորկի պէս սլացաւ և ամպի փոշի հանեց։ Երբ Գուրգէն մտաւ Որդօք արդէն իւր չորս հարիւրքը իրեն կ'սպասէին։ «Ապրի՛ք տղաք, որ այսպէս կազմ և պատրաստ էք, քշենք երթանք, դուք ո՞ւսկից իմացաք թշնամւոյն գալը» հարցուց Գուրգէն.

— Ես որ Ճանապարհի պահապանն էի, ըսաւ երիտասարդ ձիաւոր մը, տեսայ իրենց գալը և իմաց տուի։

— Ի՞նչչափ կարծես թէ կան թշնամիք։

— Միայն Բուղայէ զրկուած արքունի զօրք երկու հազար են եղեր և զօրավարին անունը Բուտէլ է. կան իրենց հետ Ութմանիկք՝ և Վաս-

պուրականի ազատներէն նաև միաբաններ են
նոցա հետ և մեր վրայ կուգան եղեր:

— Այս տեղեկութիւնքը դու ո՞ւստի առիր,
տղայ:

— Ցառաջընթաց ձիաւոր մը տեսայ որ յան-
դուգն՝ կուգար. սեպաձև ժայռի մը ստորոտ
ծածկուեցայ. երբ նա անցաւ՝ յարձակեցայ վրան
և առաջի նիզակի հարուածին որ ձիուն դաւա-
կէն տուի, մարդ և ձի գետին գլորեցան. մարդը
ամա՜ն գոչեց. «քեզ չ՚եմ սպաններ, միայն շիտակ
զրուցէ՛ և առջևէս քալէ» ըսի. պատմելը պատ-
մեց, բայց ինչչափ որ աշխատեցայ և նիզակով
մորակեցի՝ անպիտանը չի կրցաւ հոս հասնիլ,
կէս ճամբան գետին ինկաւ և սկսաւ արիւն
թքել. «է՛լ կարող չ՚եմ, կ՚ուզես սպաննէ» ըսաւ:
ես որ խօսք տուի՝ չ՚ուզեցի խոստմունքս աւ-
րել, թողի կիսակենդան աւազին վրայ և եկայ:

— Ապրի՛ս, լա՛ւ ես ըրեր:

Երբ կէս ժամու ճամբայ յառաջացան Գուր-
գէնի զօրքը, և լաւ ու զօրաւոր դիրք մը գտաւ
իրենց զօրավարը՝ բլրակի մը վրայ ուր աջ
կողմէն գետը կը պատէր, և ձախը լեռներու
գոտիքը ուր դիրքը կը նեղուէր՝ հոն ճակատե-
ցուց իւր գունդը. վահանաւոր զօրքով պարփա-
կեց հետևակ աղեղնաւորաց խումբը. և երբ
թշնամիք հասան՝ երկայն ժամեր պատերազմե-

ցան Հայք և մեծամեծ հարուածներ հասուցին
նոցա վրայ: Իսկ մինչ նոքա քիչ մը կազդու-
րեալ՝ դարձեալ յարձակեցան Հայոց վրայ, «Գուր-
«գէն չի կարենալով այլ ևս համբերել, մորակեց
«իւր քաջ երիվարը, զարկաւ պատռեց թշնա-
«մեաց ձախ թևը և սկսան փախչիլ իր առջևէն,
«կը հալածէր զերենք և կը սատակէր զերենք
«այնչափ զօրութեամբ՝ որ աւելի էին անոնք որ
«մեռան Գուրգէնի սուրէն քան թէ անոնք որ
«մնացին: Իսկ աջ թևը Տաճկաց յարձակեցաւ
«Հայոց ձախ թևին վրայ և շարժեցին զայն, և
«դարձան որ պաշարեն Գուրգէն, բայց չի կրցան
«դիմանալ նորա զօրութեան և խորտակեցան
«նորա առաջ: Ու է՛լ չի համարձակեցան ընել
«և մտնել Վասպուրական աշխարհ. Տաճկաց
«զօրքը, վասն զի սաստիկ երկիւղ ինկաւ իրենց
«սիրտը:»

Բայց Գուրգէնի սրտին մեծ վէրք պատերազ-
մէն առաջ և պատերազմէն վերջ նաև երիտա-
սարդ պահապանին խօսքերն էին. «Վասպուրա-
կանի ազատներէն նաև միաբաններ են նոցա
հետ:» Ի՞նչ պիտի զրուցէր Յովհան հիմա այդ
մարդիկը ազգի և հաւատքի թշնամիներու հետ
տեսնէր, որ եկեր են իրենց ազգին դէմ պա-
տերազմելու, կ՚ըսէր ինքնիրեն, եթէ նա որ ե-
րեք մատնիչ կախելու համար այնչափ տաժան-

մունք յանձն կ՚առնուր, պէտք է որ ես էլ խիստ օրինակ մ՚ընեմ, որ այդ վատ սովորութիւնը վերնայ Հայ ազատաց մէջէն։

Երբ այս խորհրդածութեամբ երկու հարիւր ընտիրներով կը հալածէր թշնամին՝ որ մօտ էր Սև ջուր գետին՝ յանկարծ փախստական խումբը կանգ առաւ և քիչ մը վերջ ետ դարձաւ, վասն զի յայտնի մահը տեսաւ առաջը. Թշնամի մը ուսկից գթութիւն յուսալ անկարելի էր. Հազարի չափ Հայ գիւղացիք մանգաղներով ու կացիններով զինեալ՝ փախստական Տաճիկը կը ջարդէին անխնայ։ Ուստի զէնքերը ձգեցին և եկան Գուրգէնի, որ անզէն մարդիկ ջարդել չէր կրնար՝ թէպէտ այդ խաբեբայ և ստերդումն Արաբ ազգին բնութիւնը լաւ կը ճանչէր, և ըրած դաւաճանութիւնքը կը յիշէր, բայց դարձեալ հրամայեց զօրաց որ վնաս չի հասցնեն անձնատուր անզէններուն։ Բուղայի զօրավարը Բուտէլ սոցա մէջ էր. հրամայեց Գուրգէն այդ մարդուն սուրը իրեն դարձնել, նոյնպէս ազատութիւն խոստացաւ այն Տաճիկ գլխաւորաց որ եկեր էին իւր վրայ պատերազմելու. բայց երբ Հայոց ազատաց առջին կանգնեցաւ՝ և նոցա մէջ Վասակ Կովակերն տեսաւ, իւր ահագին ձայնը բարձրացուց և գոռաց.

— Դուք, անօրէն անզգամներ, դուք ձեր

ազգին դէմ՝ ձեր եղբարց դէմ ձեռք կը վերցնէք և ինձմէ գթութիւն կ՚սպասէ՞ք. Ճշմարիտ է որ ես զինաթափ մարդիկ չեմ կրնար սպաննել, իմ սուրս զինուորի է և ոչ դահճի, ուստի ձեզ ձեր եղբարց դատաստանին պիտի յանձնեմ։ Ահա ժողովուրդը՝ գեղացին կուգայ, ձեզ իրենց կուտամ, ինչպէս կ՚ուզեն թո՛ղ ընեն, կ՚ուզեն ձեզ սպաննեն, կ՚ուզեն ձեր կեանքը շնորհեն։ . . . Իսկ դու, Վասա՛կ, նախատինք Արծրունեաց, Մերուժաններու վիժեալ, որ և ոչ մատնիչ և դաւաճան լինելու չափ ուղեղ ունիս, քեզ կը շնորհեմ քու այդ անպիտան կեանքդ վասն զի ապուշ ես և ցնորեալ։ Գնա՛ Կայէնի թափառական կեանքը վարէ, խաղալիք և նշաւակ եղիր ամենուն. վասն զի զօրավար Վասպուրականի ինքզինքդ անուանելէն վերջ այդ միայն կը պակսէր որ Վասպուրականի արիւնարբու թըշնամեաց հետ միաբան՝ գայիր քու ազգիդ դէմ անպիտան զէնքերդ շարժէիր։

Նոյն միջոցին կը հասնէին Հայ գիւղացիք իրենց խառն ՚ի խուռն զինուորութեամբ և զէնուք. թէպէտ վրէժ և կատաղութիւն իրենց աչաց մէջ կը փայլէր՝ բայց երբ տեսան Գուրգէն որ արդէն ամեն բերան Վասպուրականի փրկիչ կ՚անուանէր, մոռցան իրենց դառնութիւնը և միաբերան սկսան աղաղակել. «Կեցցէ

Գուրգէն, կեցցէ՜ մեր ազատարարը։» Իսկ Վասպուրականի ազատաց խումբին դաւաճանք այն միջոցին Գուրգէնի մօտեցած իրեն գթութեան կ'ապաւինէին որ չի մատնէ զիրենք ժողովրդեան կատաղութեան։ Գուրգէնի սիրտը փափուկ էր նոյնչափ՝ ինչչափ խիստ էր բազուկը։ Ուստի ներեց և հրամայեց անվնաս արձակել։ Եւ դառնալով Բուղայի զօրավարին՝ ըսաւ.

— Գնա՛ զրուցէ քու տիրոջդ որ ես աւազակներէ և երկոտանի գազաններէ կը մաքրեմ երկիրը, օրինաւոր տէրանց հնազանդիլ գիտեմ, բայց բռնաւորաց և աւազակապետաց ո՛չ երբէք. ինք թող ընտրէ, և լինի ինձ հետ որն որ ուզէ։

Երբ թշնամի և դաւաճան, ամենքն անհետացան ինքնիրեն կ'ըսէր Գուրգէն։

— Ես այն մարդը չ'եմ՝ ինչ որ պէտք էր լինիլ. հիմա Յովնան եթէ լինէր այդ անպիտանները չ'էր արձակեր, վասն զի վաղը դոքա դարձեալ ազգին թշնամեաց հետ կրնան միանալ և վնասել։ Ոչ ոքէ լուր չի կայ. Սմբատ ձայն չի հաներ, իմ ղրկած Նուիրակս դեռ չի դարձաւ, Խոսրով չ'երևար, այդ խոհեմ և պատուական մարդը ինձի շատ հարկաւոր էր վասն զի իւր խորհրդոց պէտքը կ'զգամ։

ԳԼՈՒԽ ԻԴ.

Ա Ն Զ Գ Ա Մ   Կ Ի Ն.

Գուրգէնի անունը տարածուեցաւ բոլոր շրջակայքը, և թշնամի ու բարեկամ չ'էին կրնար առանց ակնածութեան նայիլ այդ մարդուն վրայ. և որ մեծ դժբաղդութիւն էր, նա աւելի նեղութիւն կը կրէր «ընտանի հարազատ ազգականներէ որ ուխտազանց լինիլ՝ ստերդում լինիլ՝ խոստմանց դրժել չ'էին ամաչեր,» վասն զի գիտէին թէ այդ դիւցազն և վսեմ բնութիւնը ներելով միայն վրէժ կը խնդրէր։ Թէպէտ Ռշտունեաց Ոստանը հանգչիլ սիրելի էր իրեն սրտին անցեալ յիշատակներով, բայց երբէք չի թուլացաւ, գործը կը շատցնէր՝ կը մարզէր՝ միշտ ուշադիր Բուղայի ամեն շարժմանց, և Վասպուրականի ժողովուրդը զինք փրկիչ և հայր կ'անուանէր։ Իսկ բռնաւորն արդէն յոգնած՝ երբ իմացաւ թէ մարդ մը կայ իր առաջը որ ամբողջ բանակ մը կ'արժէր, աւելի լաւ համարեց քաղցրութեամբ և խաղաղութեամբ գործը լմնցնել, իշխանական սուր և գօտի և պատե-

բազմական խրոխտալիր ձի և Վասպուրականի գլխապետութեան հրովարտակ կ'ուղարկէր, 'ի մեծ ուրախութիւն Հայ ժողովրդոց։ Եւ ինքն Բուղա ժողվելով բոլոր Հայոց մեծ նախարարքը և. նոյն ինքն Սմբատ Սպարապետ կ'առնուր կը տանէր 'ի Բաղդատ՝ նորա որդւոյն Աշոտոյ յանձնելով Հայաստան. իսկ Ամիրապետը անխտիր զամենքն 'ի Մահմէտականութիւն բռնադատեց, միայն Սմբատ և Տիկինն Հռիփսիմէ ամէն սպառնալիք արհամարհելով խոստովանաբար բանտի մէջ իրենց կեանքը կնքեցին։

Իսկ Աշոտ Բագրատունի խոհեմութեամբ և իմաստութեամբ երկիրը սկսաւ կառավարել և շինել. մինչև ամէն մնացող մարդ կրնար զարմանալ և մինչև այսօր կարող է զարմանալ երբ լաւ խորհրդածէ թէ այդ ոտնակոխ Հայաստանի ժողովրդոց մէջ ի՛նչ աստիճանի կենսական զօրութիւն կար որ այնչափ թշուառութեանց՝ այնչափ տառապանաց փոթորիկներէ վերջ երկիրը կը խլրտէր և կ'սկսէր շէննալ։

Բայց Վասպուրականի ժողովուրդք խաղաղութիւն վայելելու բաղդը չ'ունեցան. հազիւ թէ Գուրգէն երկիրը հանդարտեցուց, և ահա Գրիգոր Արծրունի որ Բուղայի երկիւղէն Ափխազաց երկիրը փախած էր՝ Վրացի զօրք կը հանէր Վասպուրական հալածելու համար

զԳուրգէն և տիրանալու աշխարհին։ Բայց իւր զօրքն իմացան և լսեցին թէ ի՞նչպիսի մարդ էր Գուրգէն, չ'ուզեցին պատերազմիլ և դարձան իրենց երկիրը։ Եւ Գրիգոր այս տեսնելով՝ ուզեց բանագնացութեան մտնել Գուրգէնի հետ, որ առանց դժարութեան յանձն առաւ երկիրը բաժնել իրենց մէջ։

Նոյն ժամանակները Արծրունի Աշոտ իշխանի որդի Վահան կուգար Բաղդատայ և զօրք ժողվելով կը յարձակէր Ռշտունեաց Ոստանին վրայ ուր կը նստէր Գուրգէն, և յաղթուած կորակոր կ'երթար պատմելու Բաղդատ ի՛նչ որ գլուխը եկաւ։

Իսկ Գուրգէն իւր ուշադրութիւնը միայն տուած օտարաց, զարմանալի առաքինութեամբ և անյիշաչարութեամբ իւր ազգայնոց յանցանաց, հարուած հարուածի վրայ կը հասցնէր Իսմայէլի որդւոց, ինչպէս կը պատմեն ժամանակին պատմիչք, և Յուդա Մակաբէ ու փրկիչ զնա կ'անուանեն։

Թէպէտ Գուրգէն շատ աւելի վեր էր ամէն գովութենէ՝ իւր ամբաւ քաջութեանց հետ ազնուական սիրտ մը պահելով, որ այդ ժամանակին մէջ անօրինակ էր, երբ ամէնքը եղբայր եղբօր դաւաճան կ'ընէին անխիղճ և անամօթ։

Աշոտ Արծրունի իւր որդւոյն Գրիգոր Դերե-

նիկի հետ Գուրգէն եղբայրը կ'ուղարկէր Ամիրապետի հրամանաւ տիրելու Վասպուրականի և 'ի բաց վարելու զԳուրգէն Ապուպելճ, որ իմանալով Թագաւորական հրովարտակը քաշուեցաւ Սրինգ և Ջլմար բերդերը թողլով ամեն իշխանութիւն. և երբ տեսաւ թէ այդ բերդերը նաև շատ կը տենչէին իրեն Արծրունիք՝ թողուց անոնք ալ որ ազգային արիւն չի թափի և ելաւ փոքրիկ գնդով երթալու Յունաց բաժինը: Իսկ Գուրգէն Արծրունի, առանց ամաչելու պատգամաւոր կ'ուղարկէր իւր անուանակցին առաջարկելով որ չ'երթայ՝ խոստանալով եղբօրմէն ապստամբիլ և բաժնել իրեն հետ երկիրը: Իսկ սա՝ երբ պատգամաւորն այս լուրը բերաւ, հեզնութեան ձայն ծիծաղով այսպէս պատասխանեց. «Գնա՛ զրուցէ քու տիրոջդ՝ որ ես իմ ազգիս արիւնը չի թափելու համար ամեն բան կը թողում կ'երթամ օտարութիւն, և կը զարմանամ թէ նա որ եղբօրը և եղբօրորդւոյն դաւաճան լինելու չ'ամաչէր՝ ի՞նչպէս կը համարձակի ինձ բարեկամական դաշինք առաջարկել:»

Այս խօսքերը զրուցելէն վերջ, լի դառնութեամբ հեծաւ ձին և քանի մը ձիաւոր միայն հետն առած ուղևորեցաւ և հասաւ Կարին, ուր իր համբաւը իրմէ առաջ հասել էր, և ուր Միքայէլ Յունաց Կայսրը զինք կը հրաւիրէր գալ

Կոստանդնուպօլիս. բայց հայրենեաց հողը, և սիրտ մը որ ինք միշտ կը հաւտար թէ իրեն էր, այդ հրաւէրն ընդունիլ կ'արգիլէին, և խորհրդածելով կը դանդաղէր:

Այս վիճակին մէջ ծանր հիւանդութեամբ հիւանդացաւ. Կարին և բժիշկները՝ երբ առողջութիւն գտաւ և դեռ տկար էր՝ հրամայեցին օդափոխութիւն Կարնոյ շրջակայքը Մանանաղեաց գաւառի երկիրը: Փոքրիկ ամարանոց մը բլրակի վրայ Յունաց սահմանագլուխը Կարնոյ զօրավարին ընտրութեամբ և խորհրդով իւր բնակութեան տեղն էր. վտակի մը եզրը և քանի մը դարաւոր կաղնիք իրենց ստուերներով իւր հանգստեան տեղն էին: Այդ հզօր բնութիւնը հազիւ սկսեր էր կազդուրել, երբ յանկարծ առտու մը խումբ մը Տաճիկ հեծելազօր շրջապատեցին զինք, կապեցին, հեծուցին ձիու մը վրայ և տարին առ Աշոտ Բագրատունի: Յունական մատն և Արաբական ձեռք պատրաստել էին այս դաւաճանութիւնը:

Աշոտ արդէն շատ վտանգաւոր դիրքի մէջ էր այն օրերը. ազատել զԳուրգէն վախցաւ Ամիրապետէն, վասն զի իր անձին դէմ նաև շատ ամբաստանութիւնք կային և հայրը Սպարապետը Բագրատ կալանաւոր բարբարոսաց ժանիքներու մէջ կը հեծէր. ուստի լաւ համարեց Տփխիսի

քաղաքապետին յուղարկել Գուրգէն որ ամենէն մարդասէր կը համարուէր շրջակայ Ամիրայից մէջ: Բայց սա նաև երբ շատ ջանաց սպառնալեօք և ողոքանօք Մահմէտականութեան բերել զնա և օգուտ չի տեսաւ, կրկին կապանօք և վիզը շղթայներ անցնելով յուղարկեց Ատրպատական Պարսից, և հոն դարձեալ ամեն հնարք 'ի գործ դրին սատանայի արբանեակները ուրացնելու դիւցազնը, որ ինչպէս պատերազմի դաշտին վրայ աներկիւղ էր մահուանէ՝ նոյնպէս անդրդուելի էր իր հայրենի և սուրբ հաւատքին վրայ։ Ամեն հնարք կը գործածէին: Ուրացեալ մը՝ Սողոմոն Բագրատունի՝ անարգ ապարած՝ գործիք եղել էր բռնաւորաց, և որ վերջապէս յուսահատեալ ետ կեցաւ իր վատ յորդորներէն:

Բայց այդպէս Գուրգէնի վիճակը աւելի վատթարացաւ, վասն զի Քրիստոսի թշնամիքը զինք կը տանջէին սովով և ծարաւով, և Որմեայ լճին քով Գմբէթ ըսուած բերդի մը խորագոյն բանտին մէջ զինք կը պահէին՝ զրկուած ամեն լուսոյ:

Երբ այս վիճակին մէջ անյոյս 'ի մարդկանէ մնացել էր Գուրգէն, երևցաւ իրեն «գեղեցկա-
«տեսիլ մարդ մը լուսոյ պէս փայլուն հագուած,
«և ըսաւ, — զգոյշ եղի՛ր. քաջութեամբ կռուիր,

«Քրիստոսի զինուոր եղիր. ճշմարտութենէ մոլո-
«րելոց նման՝ մի՛ մոլորիր որ հեռեւեցան Խամա-
«յէլի ազգին օրինաց, Հայոց միւս գերելոց պէս։»
Ու այս խօսքերն երբ ըսաւ, Գուրգէն նշմարեց այդ լուսազգեաց մարդը Յովնան ինքն էր՝ Յովնան հրեշտակամման. հազիւ թեւերը տարածեց և «Յովնա՜ն, Յովնա՜ն» գոչեց, ահա տեսիլն անհետ եղաւ: Բայց իւր շուրջ մնաց նորա զօրութիւնը և բանտեալը նոր կորով մը ստացաւ, միշտ յոյսը Աստուծոյ վրայ դնելով:

Բայց միթէ՞ կեանք կը խնդրէր Գուրգէն որ Վասպուրականի տէր եղած ժամանակ մը, իւր անձին՝ իւր օգտին համար վայրկեան մը չէր մտածել՝ հիմնաւոր գործ մը չէր ըրել՝ փոքրիկ վրէժխնդրութիւն մը 'ի գործ չէր դրել, այլ միշտ բարոյականը իւր քաջութեան հաւասարեցնել էր ջանացել: Աշխարհքիս վատութենէն ձանձրացեալ՝ շուրջը ստութիւն՝ խաբէութիւն՝ մատնութիւն շարունակ տեսնելով, սիրով խոր խոցեալ սիրտ մը միշտ կրելով, Հեղինէին պատկերը՝ ուրիշ զօհ մը իւր աչքին առջև միշտ ունելով, Աստուծմէ կը խնդրէր որ առնու իրմէ այդ կեանքը, վասն զի ծանր էր իրեն, և հիմա բանտի տխուր միայնութեան և անգործութեան մէջ աւելի կ'զգար այդ սիրոյն վէրքը քան թէ պատերազմաց շառաչմանց և զբաղմանց մէջ:

Այս դառն վիճակէն հալած՝ հիւանդութենէ և անօթութենէ փոխուած էր դիւցազն քաջին կերպարանքը. և գրեթէ մոռցուած՝ Գուրգէն մոռցուած երբ կը տքնէր, բանտապանը ներս մտաւ օր մը. «Երթանք, ըսաւ, քեզ Տիկին մը կ՚ուզէ տեսնել:

— Ի՞նչ Տիկին է այդ որ կ՚ուզէ զիս տեսնել:

— Հրաման ունի Ամիրապետէն զքեզ տեսնելու. քալէ՛ երթանք:»

Ծանրաբեռնեալ շղթայիւք հետեւեցաւ Գուրգէն և մտաւ մաքուր սենեակ մը ուր լայն վերարկուաւ և քօղով ծածկուած կին մը բազմոցի վրայ նստած էր. երկու սև ներքինիք աջն ու ձախ պատկառանօք կանգնած էին: Այդ կինը՝ այդ խաբշիկները լաւ ազդեցութիւն մը չ՚ըրին Գուրգէնի վրայ, և վտանգ մը զգաց, թէպէտ աներկիւղ էր ամեն բանէ՝ վասն զի մահուընէ երկիւղ չ՚ունէր: Ուստի անտարբեր աչօք նայեցաւ կնոջ վրայ, վերջը պատուհանէն նայեցաւ Որմեայ գեղեցիկ լճին, նայեցաւ երկինք, նայեցաւ արեւուն որու ճառագայթներէն զրկուած էր ամիսներով:

Երբ բանտապանը դուրս ելաւ, շարժեցաւ քօղերու տակ ծածկուած արձանը.

— Անհաւա՛տ շուն, կը ճանչես զիս, ըսաւ կերկեր և խիստ ձայն մը: Քօղը մէկդի ըրաւ և

Ապահունեաց Արաբ կինը իւր դեղնած և տգեղ կերպարանօք երեւցաւ յայտնի Գուրգէնի աչքին:

— Հարկ չէ կար, պատասխանեց սա անխռով, այդ ոսկեգոյն երեսիդ գեղեցկութիւնը ինծի ցցնելու, այդ անշնորհք նախատական խօսքերը՝ այդ անճոռնի ձայնը որ ոչ կնոջ է և ոչ մարդու՝ յայտնի ըրին ինծ թէ ամենէն անպգամ անձին ում կենացս մէջ հանդիպեր եմ, առջևը կը կենամ: Ծածկէ՛ երեսդ որ կրօնիդ անհնազանդ չի գտնուիս, և ես իմ խաւար բանտէս աւելի տգեղ բան մը չի տեսնեմ:

Այս ծանր խօսքերը լսելով՝ կատաղութեան սառսուռ մը եկաւ կնոջ վրայ և ակռաները կրճտելով կէս մը ոտքի վրայ գալով նստած տեղաց, գոչեց կատաղութեամբ.

— Անօրէ՜ն, դեռ այդ վիճակիդ մէջ զիս նախատել կը համարձակի՞ս. բայց գիտցի՛ր որ այդ ողորմելի մարմնոյդ տէրը ես եմ, իմ ձեռքէս պիտի չի կարենաս ազատիլ. քանի՜ տարի էր որ վրէժը սրտի մէջ անմեռ կենդանի էր, վերջապէս ահա իմ ձեռքս մատնեց զքեզ Աստուած: Քեզմէ երեսս ծածկելու պէտք չունիմ, դու արդէն մեռած ես, և մի՛ կարծեր թէ սովորական մահուամբ պիտի մեռնիս, այլ կտտամահ զքեզ պիտի սպաննեմ, մազմաղ կրակներու վրայ զքեզ պիտի խորովեմ. անօրէ՜ն

աւաղակ, իմ տունս կոխե՞ն իմ աղախիններս, իմ նժոյգս յափշտակե՞ն իմ Ալիս ինձմէ կորզե՞ն, երբէք գթութեան մի՛ յուսար . . . . ահա Ամիրապետին հրամանագիրը որ իմ խնդրանացս վերջապէս լսեց և ինձ զքեզ պարգևեց. միմիայն ճամբայ կայ քեզի մահուընէ ազատելու և իմ ներողութեանս հանդիպելու, անա՛րգ շուն. քու սուտ հաւատքդ կ՚ուրանաս և շղթայակապ ստրուկ՝ իմ դուռս կը ծառայես . . .

— Ի՞նչ բարեբաղդութիւն, քեզի պէս ջատուկի մը շղթայակապ ստրուկ դառնալու. համար ապրիլ. ես որ ամեն անցաւոր մեծութիւն և փառք արհամարհեցի իմ հաւատքիս համար։ Տէ՜ր, եթէ Աստուած այնպէս որոշեր է որ այս մարմինը այդպիսի դարշելի ձեռքերէ մեռնի, իւր կամքը օրհնեալ եղիցի։

— Խօսէ՛, հաչէ՛, անհաւատ շուն, այդ լեզուդ հրացեալ ասեղներով պիտի ծակոտեմ, ճանչցնեմ քեզ թէ ի՞նչ կին եմ ես . . . .

— Փո՜ւճ աշխատանք, ես քեզ լաւ կը ճանչեմ, և ուրախ եմ որ այդ խեղճ աղջիկները քու գազանային ձեռքէդ ազատեցի։ . . .

— Իմ Ալիս ի՞նչ ըրիր, անզգամ, խոստովանէ՛ շուտ։

— Քու Ալի՞դ. այն գիշերուընէ 'ի վեր զինքը տեսած չ՚եմ։

— Կ՚ուրանա՞ս, լա՛ւ. . . տանջանքները քեզի խոստովանել կուտան։ Բայց ես փուճ տեղ քեզի պէս անարգ գերւոյ մը հետ խօսիլ խոնարհեցայ. վաղը կ՚երթանք իմ ամրոցս, հոն ես քեզի փոխել կուտամ այդ ամբարտաւան արհամարհոտ ձեւդ էլ՝ լեզուդ էլ՝ կրօնքդ էլ. շատ ստրուկներ ես մոմի պէս կակղցուցեր եմ, դու էլ կը կակղնաս և կ՚իմանաս թէ ի՞նչ կը նշանակէ ինձ պէս կին մը։

— Լա՛ւ, շատ ինձ զզուանք պատճառեցիր, բաւական է այսչափ, ըսաւ Գուրգէն ամենայն արհամարհանօք, և բարձրացնելով ձայնը, — բանտապա՛ն, բանտ երթանք գոռաց։

Երբ բանտապանը ներս մտաւ, Գուրգէն դէպ 'ի դուռը շտկուեցաւ առանց խօսելու։ Իսկ կինը դառնալով բանտապանին իշխանաբար՝

— Եթէ գլուխդ ողջ պահել կ՚ուզես, լաւ պէտք է հսկես այս գերւոյն վրայ, վաղն առաւօտ ինձ պիտի յանձնուի դա, ըսաւ։

— Ո՞ւմ հրամանաւ կը խօսիս այդպէս, Տիկին։

— Եթէ այս Ամիրապետին հրամանագիրը դու չ՚ես ճանչեր, քու տէրդ և քու քաղաքապետդ լաւ կը ճանչեն։ Եւ հրովարտակ մը տարածեց բանտապանին առջև։

— Ես իմ իշխանացս հրամանին միշտ հնազանդեր եմ, Տիկին, ըսաւ մարդը շփոթելով այդ

կատաղի կնոջ կերպարանքէն, և գնաց Գուրգէնի ետևէն որ անտարբեր և անխռով դէպ՝ իր բանտը կ՚երթար սաղմոսելով։

Իսկ կինը որ այն մեզ ծանօթ դիպուածէն վերջ՝ Ապահունեաց երկիրը թողեր՝ փախեր Խոյի մօտ գիւղակ մը կը բնակէր՝ կ՚երթար հրամանները տալու իւր պահապանաց որ առաւօտուն կանուխ ճամբայ ելնեն տանելու համար Գուրգէն, և իւր մտքին մէջ դիւական տանջանքներ կը պատրաստէր։

ԳԼՈՒԽ ԻԵ.

ԱԶՆԻՒ ԿԻՆ.

Նոյն օրը դեռ արևը չ՚ելած մութն ու լուսուն, Որմեայ լճին արևմտեան եզերքին վրայ՝ կիսաւեր գիւղի մը քով երկու մշակի զգեստներով մարդիկ անշարժ կեցեր ծովուն կը նայէին. այդ մարդկանց մէկը գրեթէ վաթսնամեայ ալեւոր մ՚էր որու կերպէն և ձևէն կ՚երևար թէ կորովը բոլորովին չէր կորուսեր, և իւր լայն ճակտին վրայ յայտնի ծանր մտատանջութիւն մը զինք կը տագնապէր։ Իսկ միւսը քառասունն անցած կորովի սովորական մարդ մը կ՚երևար և պատկառանօք կ՚սպասէր ծերուն

առջև, որ անթարթափ դիմացի եզրը կարծես թէ կը չափէր մտքով։ Վերջապէս ծերը դարձաւ իւր ընկերոջ և կամաց ձայնով ըսաւ.

— Դու հիմա ապահո՞վ ես, Վահրի՛ճ, որ նաւավարք մութին հետ այս տեղ պիտի գտնուին։

— Այո՛ Տէր։

— Ամենքն ալ Վասպուրականի հաւատարիմ նաւավարք ե՞ն։

— Այո՛ Տէր։

— Նաւը լա՞ւ է և սրընթաց՝ ինչպէս ես քեզ հրամայել էի։

— Այս ծովուն վրայ անկից լաւը չի գտնուիր։

— Ի՞նչչափ ժամանակի մէջ անկից դիմացի ափը կրնայ հասնիլ՝ լաւ թիավարելով։

— Երեք ժամ, առագաստի օգնութեամբ աւելի շուտով։

Վայրկեան մը լուռ կենալէն վերջ ծերը հարցուց.

— Մեր զինուորները ո՞ւր են.

— Մէկ մասը սա բլուրին ետին թուփերուն մէջ կ՚սպասեն. միւսները այս աւերակ գիւղին մէջ զետեղուեցան։ Խումբ մ՚ալ ձկնորսի զգեստներով ուրիշ նաւակով մը ձկնորսութիւն կ՚ընեն։

— Իմ ձիս ո՞ւր զրկեցիր։

— Զիապանը և ձին, միւս երեք ձիերուն հետ մօտակայ Հայոց գիւղ մը կայ՝ հոն ապահովցուցի։

— Սանդուխները՝ չուանները՝ երկաթէ գործիքները և դարբինը ո՞ր են։

— Այս ժայռին ետին խորշ մը կայ հոն են ամէնքը։

Լուեց ծերը՝ որ Խօսրով Ակէացին ինքն էր, և սկսաւ ծանր ծանր քալել ծովեզրը, երբ յանկարծ ձիերու տրոփի ձայն լսուեցաւ և հինգ Արաբացի ձիաւոր տեսնուեցան որ սրընթաց կուգային։ Կանգնեցաւ Խօսրով և եկողները կը դիտէր. իր սուր աչքերը որ առաջ տժգոհութեան նշան տուին հանդարտեցան և իւր ճակատին կնճիռքը պարզեցան քանի որ սկսաւ զանոնք ճանչել։ Երկու տարիքն առած մարդ՝ երկու երիտասարդ և մէկ պատանի էին եկողները։

Խօսրով առանց խօսելու մօտեցաւ պատանւոյն որ երկու ծերերուն մէջէն կը ձիավարէր, և ձեռքը երբ կ'երկնցնէր որ օգնէ իջնելու համար ձիէն՝ նա արագութեամբ վար թռաւ ծիծաղելով։

— Անշուշտ, իշխան, ինծի չէիր սպասեր դու, ըսաւ։

— Դու ճանչեցիր զիս՝ և իմացար թէ ոչ իս տարիքիս և ոչ իմ բնաւորութեանս մէջ կայ այսպիսի անխոհեմութեանց սպասել, պատասխանեց ծերը քաղցր մեղադրանօք։

Եւ պատանւոյն թևէն բռնած շտկուեցաւ դէպ՝ աւերակ գիւղը՝ ակնարկելով Վահրիճի որ միատեղ դայ.

— Մեզի շուտ առանձին տեղ մը գտիր ըսաւ։

— Պատրաստ է ձեր տեղը։ Եւ Վահրիճ զերենք մաքուրկէկ՝ գորգերով շտկուած՝ գետնափոր և բաւական մութ նկուղ մը մտուց։

Երբ պատանին նստաւ, դարձաւ Խօսրով ըսաւ Վահրիճի.

— Հիմա դու գնա, այս իշխանին ընկերները տար Հայոց մօտակայ գիւղը որ հանգչին.

Եւ երբ Վահրիճ հեռացաւ, և մինակ մնացին ծեր իշխանն ու պատանին,

— Այսչափ անխոհեմութիւն քեզմէ չէի սպասեր, իշխանուհի, շարունակեց Խօսրով հայրական գթով։

— Այսչափ տարի խոհեմութեան մէկ անխոհեմութիւն պէտք էր, իշխան. եթէ կնոջ պատիւ պահել էր՝ պահեցի, եթէ հիւանդ նայել էր՝ նայեցայ, եթէ տկարամիտ մարդ մը գործածել էր՝ գործածեցի, եթէ ծանր պարագաներու մէջ խորհուրդ տալ էր՝ տուի. բայց Գուրգէնի պէս դիւցազնի մը անողորմ բանտի հալելուն տանիլ անկարելի էր ինձ. ուստի պէտք

էր զանի ազատելու համար զոհել կեանք՝ պատիւ . . . և ամէն բան. այո՛, ես յանձն առած եմ ամէն բան։

— Հանդարտէ, դուստր իմ, հանդարտէ։ Միայն ինձ այն զրուցէ թէ մեզի հետ պիտի գա՞ս բերդին յարձակման։

— Մինչև վերջին կէտը հոն պիտի գտնուիմ, և երբ տեսնեմ Գուրգէն ազատ շղթայներէ և բանտէ ան ատեն ես իմ շղթայներուս կ'երթամ՝ նա էլ իր բաղդին։

— Մուշեղ ի՞նչ կ'ընէ։

— Ի՜նչ պիտի ընէ խեղճը. արդէն տղայ էր երբ ամէնքը զինք հասուն մարդ կը կարծէին, հիմա այս հիւանդութիւնն էլ որ վրայ հասաւ, բոլորովին տղայ եղաւ. բժիշկը՝ որ Կարնոյ բերել տուի, և որ քու երթալէդ վերջ հասաւ, Դուինի բժիշկին կարծիքը հաստատեց թէ ուղեղի հիւանդութիւն էր իւր հիւանդութիւնը և հնար չէ կար բժշկութեան։

— Իմացա՞ւ քու հոս գալդ։

— Եթէ իմանա՜ր, երբ լսի թէ Գուրգէն որ զինք ազատեր էր գերութենէ հիմա բանտն էր, թէ մեզի էլ կը վայելէր նորա ազատութեան աշխատիլ, թէ ես որոշեր էի ամէն բան՝ ոսկի՝ արծաթ՝ մարգրիտ՝ կալուած տալ զնա ազատելու համար, նա՝ ամէն խօսքիս «Այո՛ լաւ՝

իրաւունք ունիս» ըսաւ. բայց եթէ այս ամենուն հակառակն ըսէի, դարձեալ «Այո՛ լաւ՝ իրաւունք ունիս» պիտի լսէի։ Ուստի պէտք եղածը առի, Մուշեղի մնաս բարով ըսի, Խուրէնն ու Վանահայրը հետս, այսպէս ծպտեալ ելայ ճամբայ և եկայ, վասն զի սիրտս անհանգիստ էր։ Հիմա դու, հայրիկ իշխան, ինձ այն զրուցէ թէ ինչ կարգաւորութիւնք որ մենք մտածեր էինք ամէնքը նոյն կերպով պատրա՞ստ են, թէ պէտք եղաւ փոփոխութիւններ ընել։

— Ոչինչ փոփոխութիւն չի կայ. քու ինձ տուած ծրագրիդ համեմատ ամէն բան կարգադրուած էր։ Ութ օր հոս անցուցի և գնացի Ակէ. մշակի հագուստով ներսէն զինեալ տասը հաւատարիմ քաջ զինուոր բերի այս առաւօտ։ Վահրիճ Գուրգէնի թիկնապահներէն բերել էր ընտրանօք, և տասուերկու էլ Վասպուրականի քաջ թիավար, երկաթի ձողեր, լախտեր, սանդուխներ, պարաններ, բրիչներ, ամէն ինչ պատրաստ է։

— Դարբինը՞։

— Նա էլ պատրաստ է։ Այդ ողորմելի կիսաւեր ամրոցին համար մեր պատրաստութիւնք շատ և չափազանց են։ Գիշերուան հասնելուն կ'սպասենք միայն։

— Բայց ես գիշերուընէ առաջ ուրիշ բա-

նի ալ կ՚սպասեմ . . . Կնոջ մը կ՚սպասեմ:

— Ի՞նչ տեսակ կնոջ:

— Բանտապանին կնոջ:

— Դեռ նոր բա՞ն կայ:

— Ինծի համար հին է, քեզ համար նոր: Մտիկ ըրէ՛: Արծաթսիրութիւնը մարդկանց առաջին մոլութիւն տեսայ ես. տեսայ քահանայ՝ աշխարհական՝ Եպիսկոպոս և Նախարար, ազնուական և ռամիկ, այդ անարգ մետաղին գերին են, ուստի գործը ապահովելու համար՝ իմացայ որ կումբէթի բանտապանին՝ որուն անունն Օմար է՝ երիտասարդ կինը Խոյ կը բնակի. բերել տուի Կանդուար, հետը խօսեցայ՝ տեսայ որ արծաթ՝ ոսկի և գոհարեղէն շատ կը սիրէ. շարք մը հարիւր Արաբացի ոսկւոյ և մանաւանդ ադամանդեայ մանեակ մը զինք դիւահար դարձուցին. աչքերը սկսան փայլիլ և մարմինը բոլոր ուրախութեան սարսուր առաւ երբ յայտնեցի թէ երկուքն ալ իրեն պիտի ըլլային եթէ Գուրգէն կարենար ազատել, և իմ մարդիկներուս յանձնել արևը մտած ժամանակ: Հիմա կինը գնացած է այրը դիւթելու. շատ կարելի է որ մեր միւս պատրաստութեանց պէտք չ՚ունենանք:

Խաչուլ ափ ՚ի բերան մնաց երբ այս բանը լսեց և այսչափ միայն զրուցեց.

— Բրա՛և, դու միայն արժանի կին էիր Գուրգէնի:

Լռութիւն մը յաջորդեց այս խօսքերուն, երկուքն ալ դիմացնին կը նայէին: Վերջապէս Հեղինէ գլուխը վեր առաւ և հարցուց.

— Մեծ լուրն իմացա՞ր:

— Ոչինչ, նո՞ր կայ:

— Ամիրապետին մահը:

— Ի՞նչ Ապու Ջաֆր մեռե՞լ է:

— Այո՛ որդին հայրը սպաննել և տեղը թագաւորել է:

— Իմ սիրուն աղջիկս, այս ի՞նչ լաւ լուր տուիր, ո՞ւր իմացար:

— Ես Խոյէ կուգամ. հոն այս լուրը տարածուեցաւ. քաղաքը վերջին յուզման մէջ էր. Օմարի կինը երեկ առտու ճամբայ հանեցի, երեկոյին ալ ես ճամբայ ելայ:

— Դու յոգնած պէտք է լինիս, ուրեմն քիչ մը հանգիր, ես երթամ նայիմ թէ ամեն բան կարգի՞ն է: . . . Միայն Իշխանուհի, այն զրուցէ թէ բանտապանին կինն իմացա՞ւ Ամիրապետին մահը:

— Ի՞նչպէս կարելի էր չ՚իմանալ. Տաճկաց շփոթութիւնը մեծ էր. ամենքը զէնքի կը դիմէին Հայոց վախէն: Ամիրան քարոզ կուտար կարդալ փողոցները որ ո՛ և իցէ անկարգութիւն խստիւ պատժել պիտի տար: Ճշմարիտն ըսե-

լով ես այս մեծ դիպուածին անտարբեր էի. վասնզի իմ նպատակս ինձ համար ամենամեծ էր:

Խօսրով եղաւ դուրս, իւր հաւատարիմներէն պարկեշտ մարդ մը պահապան դրաւ, որ ոչ ոք անհանգիստ չ՚ընէ պատանի իշխանը, և ինք խորհրդածելով կ՚երթար մեծ օգուտ նշմարելով Ապու Ջաֆրի մահուամբ Հայաստանի՝ ինչպէս նաև Գուրգէնի ազատութեան համար: Մանաւանդ երբ կը մտածէր թէ որդին զհայրն սպաննելով թագաւորել էր, երբ ընտանեկան կապերը այնչափ խզեալ էին՝ երբ սէրը որդւոց և ծնողաց մէջէն անհետացած՝ ապականութիւնը ուրեմն վարը և վերը հաւասար էր և անկումը մերձ, և Հայաստան պէտք էր ազատել, բայց Հայաստան ազատելու համար պէտք էր ունենալ իմաստուն գլուխ մը՝ կրօնքի քարոզականին ուսուցիչ եկեղեցական անշահասէր և առաքինի մարմին մը, վասն զի ժողովուրդը դիւրաւ կընար առնուլ բանի և գործոյ ուղղութեան դըրօշմը եթէ գտնուէր լաւ և արժանաւոր ձեռք և օրինակ:

Այս խորհրդածութեամբք կ՚երթար Խօսրով շինականի զգեստներու տակ տեսնելու եթէ ամեն ինչ լաւ կարգադրեալ էր. և գոհ սրտով դարձաւ ու գտաւ Հեղինէ քնոյ հանգիստն առած և կազդուրեալ:

ԳԼՈՒԽ ԻԶ.

ՏՈՒՐՆԻԱՌ.

Նոյն սենեկին մէջ ուր տեսանք մենք առաւօտուն Գուրգէն Արաբացի կատաղի կնոջ սպառնալեաց մատնեալ, երեկոյին նոյն բազմոցին վրայ Օմեր բանտապետին հետ նստած՝ դարձեալ Արաբացի կին մը կը խօսէր ընտանեբար: Գեղեցիկ և երիտասարդ էր սա, իր նշաձև աչքերը հրապուրիչ քաղցրութիւն ունէին, և այնպիսի նայուածքի նրբութիւն որ կարելի չէր խարդախութիւն չի համարել այդ քօղնոր և գաղտնի ակնարկին մէջ սուր դիտողութիւնը որով կը ջանար իմանալ թէ իւր խօսքերն ի՛նչ ազդեցութիւն կ՚ընէին իր էրկան վրայ, վասն զի այդ կինը Օմերի կինն էր:

— Բայց կի՛ն, դու ինձ ի՞նչ կ՚առաջարկես. յիսուն ոսկին ես էլ գիտեմ թէ լաւ բան է, բայց Ամիրապետին հետ դիւրի՞ն բան է խաղալ. այդ Տիկինը սովորական կին մը չէ, կ՚երևայ թէ մեծ ազդեցութիւն ունի նաև Բաղդատ:

— Ի՞նչ, Ամիրապետէ՞ն կը վախես, ամենևին

հոգ մ՚ընէր, գլուխդ ողջ մնայ, Ամիրապետը՝ քեզի օրեր, վախճաններ է։

— Սուտերով զիս խաբե՞լ կ՚ուզես, ջիմար կլին։ . . .

— Ի՜նչպէս սուտ. երեկ առաւօտ բոլոր Խոյի մէջ տարածուեցաւ համբաւը. եթէ ինձ չ՚ես հաւտար՝ հարցուր ջորեպանին և մեր սպասաւորին որ զիս բերին. եթէ այդ դիպուածը չ՚ըլնէր միթէ՞ ես թեթև կերպով յանձն կ՚առնուի զքեզ այսպիսի անխոհեմութեան յորդորելու։ Այսպիսի վիճակէ օգուտ քաղելու է, իմ սիրուն էրիկս, երկու երեք տարուան մէջ այդչափ գումար երբեք դու չ՚ես կրնար աւելցնել այսպիսի բանտապանութեամբ։ Եկ դու իմ խօսքս մտիկ ըրէ՛, միթէ՜ ես քու թշնամիդ եմ որ վտանգաւոր բան քեզ առաջարկեմ։

— Դու իմ թշնամիս չ՚ես, բայց երևելի առակ է, «կնոջ խելքը կարճ է և մազը երկայն». դու ալ կին ես, զարմանք չ՚է որ ինծի վտանգաւոր խորհուրդ կուտաս։ Քու խելքդ չի հասնիր։

Այս խօսքերն Օմար ամենայն ծանրութեամբ և լրջութեամբ կը զրուցէր իւր սիրական սեռին գերազանցութեան վրայ մեծ հաւատքով, երբ կինը որ հազար անգամ այդ իմաստուն մարդը կապկի պէս խաղցուցեր էր՝ հազիւ թէ քմծիծաղը կը զսպէր։ Դարձաւ ըսաւ իրեն.

— Հիմա դու ինչէ՞ կը վախես, ինձ այն ըսէ. ահա Ամիրապետ չի կայ իմացար, որդին որ իրեն յաջորդեր է հայրը սպաննելով՝ հօրը կամքը շարունակելու ամենևին միտք չ՚ունի. շատ կարելի է որ վաղը հրաման հանի որ Հայոց իշխանները բանտէ և շղթայէ ազատուին, այն ժամանակ քու շահդ ի՞նչ պիտի լինի։

— Բայց եթէ Ամիրապետ չի կայ, Դավրէժի Ամիրան, Խոյի Ամիրան՝ միթէ՜ ամենքն ալ անհետացա՜ն աշխարհքէս. գիտես այդ սոսկալի Ցիկլինը ինձ ի՞նչ սպառնացաւ։

— Կնոջ խօսքի թէ որ դու մտիկ կ՚ընես, իմ խօսքիս մտիկ ըրէ որ մեզի շահաւոր է։

— Բայց շատ վտանգաւոր է և գլուխս կրնայ մէջ խաղալ։

— Քիչ մը մտածէ՛, իմ սիրելի էրիկս, համարեա թէ այս գիշեր այդ մարդուն բարեկամները գային՝ բանտին պատը քակէին՝ և զինքն ազատէին, դու վաղն առաւօտ ի՞նչ պիտի ըսէիր այդ կնոջ, որ զքեզ այնպէս սարսափեցուցեր է իւր մազերուն բոլոր երկայնութեամբ։

— Իմ ճակատագիրս է կ՚ըսէի և բաղդին կը հնազանդէի։

— Ի՞նչ, կարծե՞ս թէ զքեզ այդ բանին համար կախաղան պիտի հանէին։

— Ո՜ գիտէ, կարելի է հանէին, և ես չ՚եմ ուզեր կախաղանի վրայ մեռնիլ։

— Կինը այս մարդուն տրամաբանութեան տեսնելով թէ չի կրնար յաղթել, սկսաւ լալ, ձեռքերը կուրծքին զարնել, ողբալ իր բաղդին վրայ. իսկ մարդը անշարժ և լուռ կը մտածէր: Վերջապէս կինը իբրև գիւտ մ'ըրած՝ յանկարծ արցունքները սրբեց, որ արդէն իր սիրելի ամուսնոյն սիրտն 'ի գութ շարժելու համար կը քամէր յարմար միջոցներու, և ըսաւ.

— Բայց համարինք թէ մէկը քեզ բռնութիւն ընէ, զքեզ կապէ, բանլիքներդ գրպանէդ առնու և յիսուն ոսկին էլ դարձեալ տայ, և այս՝ Հայ իշխանն ազատէ, դու այս բանին ի՞նչ ունիս հակառակելու:

— Այդ ըսածդ . . . ըսաւ մարդը ծանր ծանր մտածելով, կարելի բան է վասն զի ես այն առեն բանի պարտաւորեալ կ'երևամ Դավրէժի Ամիրային առջև. այո՝ այդ անկարելի չ'է, բայց այն ժամանակ պէտք է որ Հայ իշխանին մարդիկը ութ տասն հոգի գոնէ լինին, որ մեր պահապանաց թուին հաւասարի:

— Այդ բանին համար էլ հոգ մ'ըներ, արդէն ժամանակը հեռու չ'է և մութը պատեց, նոքա տասերկու թիավար նաւակով մը կուգան. ես հիմա պահապանաց մէկ երկուքը կը հեռացնեմ մօտակայ արուարձանն ուղարկելով,

քեզ էլ լաւ մը կապել կուտամ, յիսուն ոսկին դու կ'առնուս, ես էլ . . . .

Այս տեղ կինը՝ իր դիւական գեղեցիկ աչքերը փայլեցնելով և քմնտի երկանը նայելով դուարթ ծիծաղով դադրեցաւ խօսելէն:

— Ի՞նչ, ըսաւ մարդը, քե՞զ էլ բան կայ, զրուցէ՛:

— Այո՝ ինձ էլ գեղեցիկ ադամանդեայ մանեակ մը կայ: Է՛լ մի՛ խօսիր դու, տեղացդ մի՛ շարժիր, ես ամէն բան կը կարգադրեմ: Ու դէպ 'ի դուռը երկնցաւ:

Իսկ մարդը՝

— Կի՛ն, մտիկ ըրէ . . . անիծեալ կին. . . կորաւ գնաց, իմ գլուխս բան մը պիտի բերէ, գոնէ կ'ուզէի ապսպրել որ զիս սատիկ չի կապեն այդ անհաւատները . . . . բայց այդ յիսուն ոսկին, անշահ գումար մը չ'է. տեսնենք, Աստուծով յաջող ելք ունենայի՞նք:

Այս միջոցիս կինը սատանայի արագութեամբ վազեց, պահապաններուն երկուքը հեռացուց պատճառանօք, իջաւ ծովեզր ճիշտ նոյն վայրկենին երբ մէկին տեղ երկու նաւակ կը մերձենային և շփոթեցաւ տեսնելով թէ կին չ'կար, բայց երբ տեսաւ թէ միայն անմօրուս պատանի մը ցատկեց ցամաք և փայլուն ձայնով «կա՛ց, ես եմ, մի՛ վախէր» ըսաւ, սիրտ առաւ. Հե-

զինէ լինքն էր, որ կնոջ մօտենալով հարցուց․

— Ի՞նչպէս, մարդդ համոզուեցա՞ւ։

— Շատ դժուարութիւն կը ցցնէ։

— Եթէ դու զինք չես կարող համոզել, նայէ ի՛նչչափ զինեալ մարդկանց բազմութիւն կայ այստեղ, բանտեալը կ'ազատի և դու քու շահդ կը կորսնցնես։

— Դու այդ հոգ մի՛ ըներ, դու իմ քովս կաց, ես ի՛նչ որ ըսեմ այն հրամայէ, ա՛ռ հետդ տասը քսան մարդ միայն, այդ նաև շատ է։

Ան ատեն ծովեզրէն մօտենալով Հեղինէ՝

— Իշխա՛ն, խնդրեմ մօտ եկ․ և քանի մը խօսք ըսելով՝ ահա զինեալ մարդիկ դուրս թափեցան նաւերէն։

Կինը և իշխանուհին առջևէն կ'երթային խօսելով, և երբ հասան բանտին նախասենեակը ուր բանտապանը միայն նստած էր և քանի մը պահապան դրան առաջ շուարած միացեր կը նայէին, Հեղինէ դարձեալ քանի մը խօսք ըսաւ Խօսրովու, և նա մտնելով բանտապանին սենեակը և մերձենալով մարդուն հրամայական ձայնով՝

— Տո՛ւր բանտին բանալիքները, գոռաց, եթէ չ'ես ուզեր մեռնիլ։

— Ի՞նչպէս կարելի է որ ես յանձն առնում այդպիսի հրամանի մը հնազանդիլ․ միթէ՞ ես դաւաճան եմ։

— Ես է՛լ ժամանակ չ'ունիմ կորսնցնելու, տղաք, կապեցէ՛ք այդ մարդը և գտէ՛ք բանտին բանալիքը։

Ան ատեն Արաբ կինը իւր բոլոր հնարագիտութիւնն 'ի գործ դրաւ, սկսաւ լալ՝ ողբալ՝ աղաչել որ իր երկանը չի վնասեն․ և երբ մարդը կը կապէին ինք նորա գրպանէն կը հանէր բանալիքը՝ կուտար Խօսրովու՝ կ'աղաչէր որ նորա կենաց խնայեն՝ կը խոստանար որ բանտեալը ողջ առողջ իրենց յանձնէ և լապտեր ձեռքը ու պահապանաց ամենէն պարզամիտը առջևը ձգած կը մտնէր բազմութեամբ բանտին խորերը ուր կը գտնուէր Գուրգէն տխուր՝ քունի մէջ թաղուած։ Նա հոն դուռը բանալով՝

— Ահա՛ առէ՛ք ձեր մարդը, միայն 'ի սէր Աստուծոյ իմ երկանս և մեր մարդկանց մի՛ վնասէ՛ք կ'ըսէր։

Խօսրով ան ատեն լապտերն առած խաւարտչին բանտին մէջ մտաւ։

— Գուրգէ՛ն որդեակ, որդեակ Գուրգէն, ո՞ւր ես, կանչեց։

Շղթաներու զնգզիւն մը պատասխանեց այս ձայնին, վասն զի Գուրգէն քունէ զարթած շարժեցաւ և նստաւ։

— Գուրգէն, Խօսրովին ձայնը չե՞ս ճանչեր։

— Դո՞ւ էլ հոս կուգաս։

— Վե՛ր կաց, երթա՛նք, քեզ ազատելու եկանք, մի՛ շփոթիր։

Հազիւ թէ սթափեցաւ Գուրգէն, երբ Խոսրով երկաթասարդին երեսները համբոյրներով կը ծածկէր, և իր արտասուքը ճերմակ մօրուքին վրայ կը թափթփէին. առիւծը իր շղթայները կը ցնցէր, ելաւ կանգնեցաւ. Խոսրով ձեռքէն բռնած բերաւ բանտապանին սենեակը ուր խեղճ մարդը ոտքը ձեռքը ամուր կապած կը տքար, և կը խնդրէր որ կապերը թուլցնեն։ Հեղինէ միշտ լուրջ որ մէկ կողմ կեցեր Գուրգէնի նիհար և թալկացեալ երեսը կը նայէր ու մարած աչքերը կը դիտէր և իւր արտասուքը կը սրբէր՝ այդ մարդուն աղաչանաց ձայնին չի համբերեց, և քայլ մը առնելով երբ պիտի հրամայէր որ մարդը քակեն, Արաբ կինը ժամանակ չի տալով խօսելու, թևէն բռնեց և մէկդի առաւ։ —

— Ահա քու եղբայրդ ազատեցաւ, հիմա իմ երկիս դու մտցիր, և խոստմունքդ կատարէ՛։

— Իրաւունք ունիս, — Խուրէն, բեր այն ծրարը որ քեզի յանձնեցի։

Մտան առանձին փոքրիկ սենեակ մը, հոն իշխանուհին տուաւ կնոջ ադամանդեայ մանեակը և հարիւր ոսկիի շարքը։ Երբ դարբինը Գուրգէնի շղթայներու վերջին օղակը կը խոր-

տակէր՝ կինը ոսկիներն արագութեամբ կը համրէր և մանեակին փայլը իր աչքը կը շլացնէր. երբ յիսուն ըսաւ, իւր սուր աղբայններով կըտրեց ոսկւոյ թելը, կէսը մանեակին հետ մէկ գրպանը դրաւ, միւս կէսը միւս գրպանը։ Եւ ուրախութեամբ կ՚ըսէր ինքնիրեն՝ բայց լսելի ձայնիւ. «Այս ինձ՚ի, այս ալ թո՛ղ մարդուն լինի, անպիտանը, գոհ եմ որ լաւ կապեցին, թո՛ղ քիչ մը չարչարուի. ի՜նչչափ աշխատեցայ որ համոզեմ և խօսք հասկնալ չէր ուզեր, թո՛ղ ցաւի որ իմանայ։

Իսկ Հեղինէ արդէն միւս սենեակն էր և չ՚էր լսած այս առանձնախօսութիւնը. հազիւ թէ կրնար զսպել իր հառաչանքը և արտասուքը երբ կը նկատէր Գուրգէնի այդ խեղճ վիճակը ցնցոտիներու մէջ, և որ Հեղինէի ներկայութիւնը նաև չէր կարող երևակայել։

Ուստի երբ ազատ գտաւ ինք զինքը շղթայներէ, դարձաւ հարցուց Խոսրովի.

— Ես չ՚եմ իմանար թէ երա՞զ է այս ամէն բան, եթէ ոչ։

— Հիմա ամէն բան քեզ կը բացատրեմ, սիրելի Գուրգէն, մտնենք նաւ և հոն կը խօսինք։

— Բայց Խոսրով, ես անօթի եմ, դու չ՚ես գիտեր թէ այս անհաւատները զիս ի՛նչչափ անօթի և ծարաւ ապրելու վարժեցնել ջանացին։

— Հիմա՛ հիմա, ըսաւ Խոսրով, տղա՛ք, երթանք մտնենք նաւերը։

Եւ հազիւ հինգ վայրկեան եղաւ՝ Գուրգէն նստած էր Խոսրովու և Հեղինէի մէջտեղ՝ ղեկին քով որ Խոսրով կը կառավարէր, ձուկի և հաւու խորովածն առջեւ, և Հեղինէ որ գինի կը մատուցանէր իւր ձեռօք։

Լուսինը լուսաւորել էր այդ գեղեցիկ կապուտան ծովակը, գիշերուան լռութիւնը թիակներու կանոնաւորեալ հարուածը միայն կ'ընդհատէր, երբ Գուրգէն զօրացեալ և ինքզինք գտնելով հարցուց Հեղինէին նայելով.

— Այս լուռ պատանին ո՞վ է, Խոսրով, ես սա տեսած պէտք է ըլլիմ, այս կերպարանքն ինձ բոլորովին անծանօթ չէ։

— Սա իմ քեռորդիս է, պատասխանեց Խոսրով, ես չուզեցի որ մեր արշաւանաց ընկերանայ, բայց անկարելի եղաւ զինք համոզել։ Ետքը քեզի կը պատմեմ, դու հիմա հանգիստ նայէ, մէյ մը ցամաք ելնենք այն ժամանակ ամէն բան կ'իմանաս։

— Հանգիստ գտնելու համար պէտք է ապահով տեղ մը հասնինք, լուացուիմ, սա աղտեղի զգեստներէս ազատիմ։

— Այդ ամէնը հոգացուած է, ըսաւ Հեղինէ։

— Ա՜յ տղայ, ես գքեզ տեսել եմ, քու ձայնդ նաև ինձ անծանօթ չէ, պոռացեց Գուրգէն։

— Ինչպէս մարդկանց կերպարանքը՝ նոյնպէս իրենց ձայնը շատ կարելի է որ իրար նմանին, ըսաւ Խոսրով։

— Ճշմարիտ է, պատասխանեց Գուրգէն և լռութիւն դարձեալ տիրեց։

— Նաւակը իր ընթացքը գրեթէ առանց ընդհատման կը շարունակէր, և կէս գիշեր չեղած մեր բարեկամները ցամաք ելան։

Կիսաւեր գիւղին փոքրիկ սենեակը լուսաւորուեցաւ. պատանին՝ Խոսրովու քեռորդին՝ մկրատ մը ձեռքը Գուրգէնի մազերը խուզեց, մօրուքը փոքրեցուց թեթև ձեռօք և դրան քովէն Խուրէնի ձեռքէն առնելով մաքուր ծրար մը,

— Ահա իշխան, ըսաւ, ամէն բան պատրաստ է, սա քովի վտակին ջուրը քաղցր է, օճառ՝ սրբիչ և ամէն զգեստ կը գտնես այս ծրարին մէջ։ Քեռիս քեզ կ'օգնէ։

— Աս քու քեռորդիդ անգին տղայ է, Խոսրով։ Ապրի՜ս որդեակ, Աստուած քեզ երջանիկ ընէ։ Եւ Գուրգէն ելաւ, բայց յանկարծ դառնալով Խոսրովու, — Սակայն աս տղան որ զիս առաջին անգամ կը տեսնէ՝ չէր կրնար երևակայել թէ իմ հասակիս ամէն զգեստ չի յարմարիր։

— Հոգ մ'ընէր, Գուրգէն, նա քու վրադ լաւ

տեղեկութիւն առած է, այդ էլ մտածած պէտք է լինի։

Երբ լռացուեցաւ Գուրգէն՝ զգեստաւորեցաւ և դարձան սենեակը, շնորհակալ եղաւ պատանւոյն և Խոսրովու ըսաւ.

— Հիմա զրուցէ թէ ինչպէս եղաւ որ մէկ երկու տարի երբ յաջողութիւն ունեցայ և քեզ սուրհանդակ ուղարկեցի Վասպուրականի և Տարօնոյ գաւառներէն 'ի Սասուն, ոչ ոք տեղեկութիւն չունէր քեզի համար, դու ո՞ւր էիր, պատմէ՛։

— Երբ ես կը պատրաստուէի գալ զքեզ գտնելու Ռշտունեաց Ոստանը, սուրհանդակ մը ինձ եկաւ Հռիփսիմէ Տիկնոջէ՝ որ կը թախանձէր տեսնել զիս Բաղդատ. դու երջանիկ էիր և յաջողութեան մէջ, իսկ նա դժբաղդութեան և բանտի, ուստի ինքնիրենս ըսի. եթէ Գուրգէն իմ տեղս լինէր Բաղդատ կ'երթար, ուստի հոն գնացի, կարծէի թէ դիւրին և շուտ կ'ազատիմ, և առջի բերան գործին ընթացքը այնպէս ցոյց կուտար թէ պիտի կարենամ օգտակար լինիլ Արծրունի իշխանաց, բայց Ապու Ջափր կատաղի գազան մ'էր, որ վայրկեանէ 'ի վայրկեան կը փոխուէր. իր պաշտօնակալք ամէնքը շփոթած էին, հազիւ թէ գործ մը կարգադրել կարծէին՝ տէրը գլխէնք կը մերժէր, և նորեր կը յաջոր-

դէին, ուստի բոլոր մեր յոյսը դրինք Սմբատ Սպարապետի գալստեան վրայ, որ Բուղայի միջնորդութեամբ կարենայ օգուտ մ'ընել կապեալ նախարարաց։ Այդ գալուստը կ'երկարէր։ Վերջապէս երբ եկաւ, Սմբատ ո՞ւմ համար պիտի միջնորդէր, բռնաւորը առաջին վայրկեանին զնա շղթայի և բանտի մատնեց, որովհետև ուրացութիւն չէր ընդունէր. ուստի Տիկինն էլ յուսահատած՝ տեսնելով թէ ուրացեալ որդին Գուրգէն և թոռը Դերենիկ հրաման ունեցան դառնալու 'ի հայրենիս, զիս յորդորեց երթալ և նոցա խորհրդատու լինիլ. ես էլ կ'ուզէի դառնալ, բայց Բագարատայ չարութիւնը, որ անօրինաց աչքը մտնելու համար ամեն վատութիւն յանձն առած է, զիս զանազան խաբէութեամբ տարի մը նաև արգիլեց Բաղդատ, այն տեղ կ'իմանայի թէ ի՛նչ տեսակ ամբաստանութիւնք կը հանէին քեզ համար արքունի դուռը. ուստի գաղտնի փախստեամբ հազիւ ելայ Բաղդատէ, և երբ Վասպուրական եկայ, տեսայ որ դու քէն ըրած բաղդին և ամենուն Յունաց երկիրը գնացել ես. եթէ քիչ առաջ հասնէի՝ ես զքեզ չէի թողել, ուստի գնացի Սասուն ընտանիքս առած. ծանր ուղեգնացութեամբ անցայ բոլոր Տարօն և Վասպուրական, ամեն տեղ քու օրհնէնքդ և գովութիւնդ կը լսէի, ամեն տեղ քու-

քաջութիւնդ կը պատմէին, և քու հեռանալդ կ'ողբային։ Գիշեր մը Ռշտունեաց Ոստան կեցանք, խեղճ բերդապահ ծերը որ անմխիթար էր քու տղայութեանդ պատմութիւնն ըրաւ մեզի, քու առաջին դարձդ 'ի Յունաց յիշատակեց և քու վերջի փառքդ մեզինկարագրեց. Ինք քիչ պատմեց և ես շատ իմացայ։ — Ի՛նչ որ մութ կար քու կենացդ մէջ ինծի համար յայտնի եղաւ։

— Ի՞նչ մութ կար որ դու չէիր իմացեր, ըսաւ Գուրգէն դառնութեամբ և հառաչանք խղդելով։

— Ի՛նչ որ մնացեր էր։ Ուստի երբ առաւօտուն մեր կարաւանը ուղևորելու պատրաստուեցաւ, նայեցայ որ այդ ծերը . . . Խուրէն՝ իւր բոլոր ընտանեօք մեզ կ'ընկերանար. զարմացայ, իսկ նա ինծի յայտնեց, թէ Արծրունեաց անկարգ ծառայութենէն ձանձրացեր՝ կ'ուզէր երթալ իւր հին Տիկնոջ՝ Ռշտունեաց Օրիորդին՝ Անձևացեաց գաւառ՝ խնդրել որ զինք ընդունի։ Իւր պատճառաւ մենք նաև Կանգուառի բերդը լաւ հիւրընկալուեցանք և Անձևացեաց իշխանուհին որ Մուշեղ իշխանին հիւանդութեան պատճառաւ երկիրը կը կառավարէր, ամիսներով զմեզ պահեց մինչև որ Ակէոյ մէջ պէտք եղած նորոգութիւններն եղան. հոն նաև քու կալանաւորութեանդ լուրը մեզ հասաւ և սկսանք մտածել ու պատրաստուիլ զքեզ ազատելու։ Բայց շփոթած մնացել էինք, վասն զի ամեն ատեն անօրէնները քու բանտդ կը փոխէին. խեղճ Վահրիճ որ զիս եկաւ գտաւ Ակէ՝ ուր որ կը մնար, արևմուտքէ հիւսիս՝ հիւսիսէ արևելք քու բանտերուդ վրայ տեղեկութիւն կը բերէր. մինչև լուր բերաւ որ Դավրէժէ՝ Գմբէթի բերդը փոխադրուել ես։

Գուրգէն այս պատմութիւնը լուռ մտիկ ընելէն վերջ՝

— Հիմա ո՞ւր է Վահրիճ, հարցուց։

— Այս տեղ դուրսը պէտք է լինի։

— Ինչո՞ւ չ'երևար անպիտանը, ըսաւ Գուրգէն քմծիծաղով և իւր մեծ ձայնով գոչեց. — Վահրի՛ճ։

— Հրամայէ՛ Տէր, ըսաւ հաւատարիմ ծառան և եկաւ ձեռքը պագաւ։

— Ինչո՞ւ չ'ես երևար, Վահրիճ, դու որ այնչափ հոգ տարեր ես իմ վրաս, գերութեանս ժամանակ։

— Մի՞թէ քեզի ծառայողը կրնար ուրիշէ ծառայել որ անհոգ լինէր։

— Լա՛ւ, լա՛ւ, գնա՛ հանգչէ։

Եւ դառնալով Խորովու՝

— Հիմա մենք ի՞նչ պիտի ընենք, այն ինծի իմացուցէք։

— Մենք հիմա մէկ երկու ժամ հանգչելէ վերջ, կ՚ելնենք ճամբայ, երեկոյին Խոյի գիւղերէն մէկուն մէջ կ՚օթեւանինք. և երկրորդ օրը կը հասնինք Կանգուար։

— Լա՛ւ։

Նոյն միջոցին պատանին որ Վահրիճ մտած տունէն դուրս ելած էր, բերաւ սենեկին մէկ անկիւնը՝ ահագին սուր մը, վահան մը և նիզակ մը դրաւ։

— Այս քու քեռորդիդ զարմանալի տղայ է, Խոսրով, ամեն բան կը մտածէ, ըսաւ Գուրգէն ժպտելով։

— Այո՛ ամեն բան։

— Հիմա ո՞ւր գնաց։

— Ինք առանձին սենեակ մ՚ունի, այնտեղ գիշերը կ՚անցնէ, վաղն առաւօտ կուգայ՝ կը տեսնուինք։

— Աստուած զինք պահէ։

Եւ Գուրգէն ալ չի խօսեցաւ ու տարածուեցաւ քուն եղաւ։ Իսկ Խոսրով իւր վերջին պտոյտն ևս ըրաւ, պահապաններն որոշեց, և եկաւ Գուրգէնի սենեակը քնելու։

ԳԼՈՒԽ ԻԷ.

ԹԱՓԱՌԱԿԱՆ ԲԱՐԵՐԱՐ.

Երկու օր վերջ մեր այս բարեկամաց խումբը կը հասնէր Կանգուարի բերդը, ուր Հոգեաց վանքի Թէոդորոս վանահայրը՝ Խոսրով և Գուրգէն յոգնութիւն կ՚առնուին երբ Հեղինէ Տիկին եկաւ իրենց բարի գալուստ մաղթելու։ Նոյն այն սենեակն էր ուր երբեմն Գուրգէն տեսութիւն ունեցեր էր իւր սրտին սիրելոյն հետ։

Գուրգէն մինչև այն վայրկեանը որ վանահայրը գնաց՝ անտարբեր տեսնուեցաւ Հեղինէի հետ, իսկ երբ միայն Խոսրով և նա մնացին,

— Հեղինէ, քեզ շնորհակալութիւն չեմ կրնար ընել, ես գիտեմ և իմ սրտէս կը չափեմ քու արարքդ, որ կարող եմ քեզ համար կրակի մէջ նետել ինքզինքս։ Բայց քու բոլոր կարգադրութեանց մէջ այնչափ ուշմութիւն՝ այնչափ նախատեսութիւն կը գտնեմ, որ զիս շատ կը զարմացնէ և քու կորուստդ ինձ աւելի զգալի կրնար ըլլալ եթէ տեղի մնար աւելցոյն։ Ընդունէ՛ ո՛չ իմ շնորհակալութիւնքս՝ այլ շնորհաւորութիւնքս քու այդ նախատես իմաստութեանդ

համար, որ գիտէի՝ բայց այդ աստիճանի բարձր չ՚էի կարծեր, չ՚էի կարծեր որ իմ Հեղինէս Վասկանուշի հաւասար լինի։ Խե՜ղճ Յովնան, խե՜ղճ Գուրգէն։ . . .

Աս խօսքերուն քանի մը րոպէ խոր լռութիւն յաջորդեց. մտածութեան վայրկեան էր այդ։ Հեղինէ ընդհատեց լռութիւնը և հարցուց Խոսրովու։

— Ո՞ւր է Վասկանուշ։

— Բագրատունեաց Օրիորդ մը, պատասխանեց նա, ճաշէն վերջ պատմեմ քեզի Վասկանուշի և Յովնանու պատմութիւնը, վասն զի կարելի չէ այդ երկու անձը իրարմէ զատել, որ իրենց կենաց մէջ թէպէտ միշտ բաժնուած՝ միասիրտ և միահոգի ապրեցան, և հիմա Աստուծոյ սեղանին առջև իրենց մարմինները քովէ քով կը հանգչին։

Դարձեալ լռութիւն յաջորդեց՝ մինչև Հեղինէ ելաւ՝ իր թէ տնական թէ իշխանական գործերը տեսնելու, որ իր հիւանդութեամբ կրնային անտես մնացեալ լինիլ։

Այն ատեն Գուրգէն հարցուց.

— Վասկանուշ ե՞րբ մեռաւ, Խոսրով, ես ամենևին չ՚իմացայ.

— Հազիւ թէ տարի մը կամ երկու՝ Յովնանու նահատակութենէն վերջ ապրել էր։

— Զարմանալի՜ ճակատագիր, ըսաւ և հառաչեց Գուրգէն, յետոյ իր Յովնանու տեսիլքը պատմեց։

Երկու օր հիւր եղան մեր իշխանները Կանգուարի բերդը. երրորդ օրը Գուրգէնի խորհրդով Խոսրով յայտնեց Հեղինէի թէ ինք հրաւիրած էր իւր տկար բարեկամը Ակէոյ գաւառն ևս օդափոխութիւն ընելու. և այսպէս անգամ մ՚ էլ հրաժարեցան այս երկու սիրեցեալք՝ տխուր և լուռ սրտի արտասուօք։

Իսկ Խոսրով զարմանքով կը դիտէր սիրոյ այս ուրիշ կերպարանքն։ Կը բաղդատէր Հեղինէ Վասկանուշի հետ, որ ուրախ՝ զուարթ կը խօսէր՝ կը ծիծաղէր, և այդ ուրախութեան դիմակին տակ ցաւագին սիրտ մը անթափանցելի կը ծածկէր։ Իսկ հիմա զՀեղինէ կը տեսնէր աւելի երիտասարդ՝ նոյնպէս սրամիտ՝ հեռատես՝ կառավարութեան ոգի ունեցող, — բայց սա արձան էր մարմարեայ՝ հազիւ թէ ժպիտ մը իւր շրթանց վրայ կը նշմարուէր, իւր պարզ ճակատը ոչ կնճիռ ունէր և ոչ զուարթութիւն, իւր խոր և սուր աչքերը ծանր ակնարկ մ՚ ունէին անխռով ուրախութեան՝ տրտմութեան և երկիւղի համար։ Գիտէր Խոսրով որ եթէ Մուշեղ հիւանդ չ՚լինէր՝ և այդ կնոջ ձեռք չ՚լինէր երկրին կառավարութեան ղեկը՝ Կանգուար և Ան-

ձեւացեաց գաւառը թշնամեաց աւար և յափըշտակութիւն պիտի դառնային: Բայց մէկ կողմէն նախատեսութիւն՝ ժողովրդոց պիտոյքը հոգալ ժամանակին, միւս կողմէն խստութիւն որ ներել չէր գիտեր մատնութեան և դաւաճանութեան, այլ դատաստանական վճիռներ անդառնալի գործադրել կուտար, փրկարար զէնքեր եղել էին այդ կնոջ ձեռք: Բուլղարի Ամիրայից և զօրավարաց յափշտակութենէն պահելու համար երկիրը և ժողովուրդը՝ գաւառին գլխաւոր բերդերը՝ Նորաբերդ և Կանգուար ոչ միայն լաւ ամրացեալ էին, այլ նաև երկու երեք տարուան պաշար ու զէնք ունէին. վտանգի ժամանակ ժողովրդեան ոչ միայն իրաւունք տուած էր ամրանալու, այլ ամէն տեղ պահապաններ և սուրհանդակներ իմաց կուտային անպատճառ գիւղերու և աւանաց, որ վտանգը չի հասած փախչին ապաստին: Կանգուար և Նորաբերդ քանի քանի անգամ պաշարուեցան 'ի թշնամեաց, թշնամին սովեցաւ և գնաց, իսկ Անձեւացեաց ժողովուրդը պաշար ունէր մարդկանց համար, դարման ունէր կենդանեաց՝ 'ի շնորհս իշխանուհւոյն որ նախագահութեամբ խիստ բայց արդար ձեռքով կը կառավարէր: Իր ընտրած զօրավարներն քաջ էին և արթուն, իր դրած դատաւորներն ուղիղ էին և անաչառ: Խոսրով

ինք փորձել էր միջնորդել քանի մը յանցաւորներու շնորհք խնդրելով, և այդ անողոքելի երիտասարդ կնոջ պատասխանին առջև լռել էր:

«Այսպիսի վիճակի մէջ, ըսել էր Հեղինէ, ես «ուխտ ըրած եմ դատաստանական վճռոց մէկ «գիրը՝ մէկ կէտը չաւրել. երբ թշնամին զմեզ «կը պաշարէ՝ կ'ողողէ և կը ջնջէ, գթութիւն «մատնիչներու՝ դաւաճաններու և իրենց պարտքը «չի կատարողներու համար, մատնութիւն և դա«ւաճանութիւն է ազգին դէմ՝ կրօնքին դէմ: «Ներէ՛ իշխան, զքեզ հօրս պէս կը յարգեմ և «կը սիրեմ, բայց այդ խորհրդոցդ չ'եմ կրնար «հնազանդիլ: Ուխտ ըրած եմ Աստուծոյ, ուխ«տազանց չեմ կարող լինիլ:

Երբ իր այս խորհրդածութիւնքը յայտնեց Գուրգէնի, նա դառն ծիծաղով պատասխանեց:

— Ի՞նչ բարեբաղդ են եղեր Վասակ Կովակեր և իրեն նման անպիտան դաւաճաններ. և ես էլ ի՞նչ դժբաղդ եմ եղեր որ Հեղինէ իմ կինս չ'է. անտարակոյս Յովհաննու խիստ արդարութեան օրինակը ինձ կանոն պիտի ընել տար, և ես անզգամները կախաղան հանելու պիտի պարտաւորէի:

Ամիս մը ժամանակ հազիւ կրցաւ Խոսրով արգելուլ Գուրգէն Ակէոյ գաւառը որ կատարեալ առողջանայ և յինքն գայ: Ամէն ջանք անօգուտ

եղաւ, վասն զի նա լսելով թէ ինչ անիշխանութիւն կը տիրէր Բաղդատ, չի կրցաւ համբերել և գնաց Վասպուրական, մտաւ իւր հայրենի գաւառը Մարդաստան քանի մը հաւատարիմներով: —

Ժողովուրդը երբ իմացաւ Գուրգէնի դարձը՝ խուռն բազմութեամբ զէնք դիմաւորեց ուրախութեան և գոհութեան ցոյցերով, վասն զի Գրիգոր Դերենիկ՝ Աշոտոյ երիտասարդ անդրանիկը որ հօրը փոխանակ կը վարէր Վասպուրական երկիրը, մինչդեռ նա Բաղդատ էր, շատերու ատելի էր անձնահաճ գոռոզութեանը համար: Գուրգէնի գալուստը բոլոր փոքրիկ բռնաւորները զարհուրեցուց, որ կը տիրէին բերդերու և քաղաքաց. շուտ մը ժողվուեցան Դերենկի շուրջը, և եկան Գուրգէնի վրայ, որ իւր սակաւաթիւ զօրօք յարձակեցաւ, ցրուեց զամէնքը և դարձուց կորակոր 'ի փախուստ, թէպէտ աջ արմուկէն վիրաւորեցաւ. յայտնի էր թէ ժամանակի կարօտ էր բժշկութեան:

Դերենիկ և իւրայինք իմանալով այս վիճակը՝ դարձեալ յարձակեցան բազմութեամբ Գուրգէնի վրայ, որ վիրաւոր՝ ոչ կատարեալ կազդուրեալ հիւանդութենէ և բանտի նեղութեանց ու տառապանաց՝ բռնուեցաւ իւր թշնամիներէն որ տարին զինք և բանտեցին շղթայակապ Հադամակերտ քաղաքին՝ իւր հայրենի պալատին մէջ:

Հոն երբ գիշեր մը նստած էր տխուր և վիրաւոր, յանկարծ բանտին դուռը բացուեցաւ, և Դերենկին ծառայներէն մէկը մտաւ ներս՝ քակեց Գուրգէնի շղթաները և զէնքերն առջևը դնելով՝ «Դու միայն կրնաս իմ վրէժս այս յիմար և գոռոզ երիտասարդէն խնդրել, քալէ, եկ ինձ հետ և մէկ հարուածով տէր եղիր ո՛չ Մարդաստանի միայն, այլ բոլոր Վասպուրականի» ըսաւ: Մերկ սուրն ի ձեռին, մտաւ Գուրգէն Դերենկի սենեակը, և մեծ ու տխուր ձայնով,

— Որդեակ իմ Դերենիկ, ողջոյն քեզ՝ ողջոյն քեզ, գոչեց:

Երբ Դերենիկ աչքերը բացաւ այդ ահարկու հսկայն տեսաւ սուսերամերկ, որ բանակներու սարսափն էր,

— Հայր իմ, խնայէ՛ ինձ, միայն կրցաւ զրուցել, և լեզուն կապուեցաւ:

Իսկ Գուրգէն որու վեհ սիրտը ոչ հին հայրենական՝ և ոչ նոր անարգանաց վրէժխնդրութիւն կրնար տածել, առանց պատասխան տալու՝ թողուց և ելաւ քաղքէն. Նրազանի գիւղին մօտ վանք մը գնաց ապաստանեցաւ կրօնաւորի մը մօտ, որու բարերարն եղած էր երբեմն: Իսկ սա զարմանալի ապերախտութեամբ Գուրգէնն ապահովցնելով նեղ սենեակի մը մէջ,

մատնեց Դերենիկին, որ դարձեալ բանտ դնել տուաւ առանց ամենեւին վնաս հասցնելու։

Բայց այս միջոցիս երբ Խօսրով մէկ կողմէն Գուրգէնի այս դժբաղդութիւնը լսելով կուգար Վասպուրական, միւս կողմանէ Զաքարիա Հայոց կաթողիկոս՝ հետն առած Աշոտ Բագրատունի որ իշխանաց իշխան պատուանունն ունէր, կուգային Վասպուրականի քաջին ազատութիւնը խնդրելու։ Դերենիկ այս պատկառելի անձանց չի կրնալով դիմադրել՝ ազատութիւն տուաւ Գուրգէնի, և դարձուց իրեն Մարդաստան՝ իւր հայրենի ժառանգութիւնը։

Սակայն Գուրգէն որ գտեր էր առջի առողջութիւնն և առջի զօրութիւնը՝ զլուած էր աշխարհիս բանարկու մատնութիւններէն. նոյն իսկ Բագրատունի Աշոտոյ խոլիմաց քաղաքագիտութիւնն ու փառասիրութիւնը՝ իւր բարձր սրտին դառնութիւն կը պատճառէին. Հեղինէի անյոյս սէրն ու յիշատակը ամէն մեծութենէ և իշխանութենէ զինք պաղեցուցել էր. Մարդաստան կարգի դնելէն վերջ, իրեն զբաղմունք ընտրեց Տարօնոյ անտերունջ գաւառը մաքրել թշնամիներէ և խեղճ ժողովուրդը անդորրացնել։

Այս «շրջաբերական յեղափոխման» կենաց մէջ՝ «արիական քաջասրտութեամբ սիրեցեալ

ընդ բնաւ աշխարհաց»՝ ժամանակակից հեղինակին խօսքերը կը վկայեն թէ ինչ էր ժողովրդոց համակրութիւնն իրեն համար։

Նոյն միջոցներուն, Աշոտ իշխանաց իշխան Հայոց՝ Վրաց և Աղուանից իշխանները նուաճելու նպատակ դրած, մտաւ յանկարծ Վասպուրական՝ և Դերենիկ չի կրնալով դիմանալ բռնուեցաւ և կալանաւորեցաւ։ Գուրգէն Տարօն էր երբ այս անիրաւութիւնն իմացաւ։ Առանց վայրկեան մը կորսնցնելու, չորս հարիւր ընտիր սպառազէն զօրօք զԱշոտ փնտռելու ելաւ, և իմանալով թէ Ռշտունեաց Ոստանն բանակեր էր, առանց նորա զօրաց թիւը հարցնելու՝ եկաւ Ռշտունեաց Նորագեղ և գրեց իշխանաց իշխանին թողուլ Դերենիկ՝ «ապա թէ ոչ տեսից զքեզ ՚ի զէն՝ յասպազէն և ՚ի ճակատամարտ.» ու կը մտածէր գիշերային պատերազմաւ հանիլ Աշոտոյ վրայ։

Բայց սա խորագէտ և իմաստուն էր. այնպիսի մարդու հետ վտանգաւոր խաղ խաղալ չ՚էր ախորժեր. քաղցրութեամբ պատասխանեց Գուրգէնի, և ապահովեց թէ վնաս հասցնելու միտք չ՚ունէր Դերենիկին։ Այն ատեն պատասխան գրելով Գուրգէն Աշոտոյ առաւել քաղցրութեամբ և մեծ յարգանօք՝ առաջարկեց իւր աղջիկը տալ Դերենիկին ՚ի կնութիւն և ՚ի տիկնութիւն

Վասպուրականի: Յանձն առաւ Աշոտ, և տարաւ Դերենիկը Բագարան, ու մեծ հանդէս հարսանեաց կատարելով խաղաղութիւն հաստատուեցաւ բոլոր Հայաստանի մէջ:

ԳԼՈՒԽ ԻԲ.

ՀԻՆ ԴԱՒԱՃԱՆ ՄԸ.

Իսկ ինք Գուրգէն իբրև իւր վրայ առանձնեալ՝ օտարին հարստահարութեանց պատուհասը, Վասպուրական՝ Տարօն՝ Ապահունիք և Անձևացիք և մինչև յԱրղն 'ի սահմանս Յունաց կը շրջէր, սարսափ բռնաւորաց և մխիթարութիւն ժողովրդոց:

Երբ այս հեռաւոր շրջագայութեանց դարձած Մարդաստան՝ իւր հայրենի գաւառը կը հանգչէր, յանկարծ Խոսրովու գալուստն իրեն իմացուցին:

Մեծ ուրախութիւն էր Գուրգէնի հին և ազնիւ բարեկամին այցելութիւնը, և իւր ուրախութիւնը կրկնապատկեցաւ երբ Խոսրովու զուարթ երեսը տեսաւ: Ընթրեցին՝ խօսեցան զանազան նիւթերու վրայ, ուր մանաւանդ Բագրատունւոյն Աշոտոյ խորագէտ քաղաքականութիւնը քննութեան առիթ տուաւ իրենց: Եւ

երբ ամէնքը քաշուեցան, և միայն այս երկու բարեկամք մնացին, Խոսրով յանկարծ իբրև քունէ արթնցած,

— Բուն իմ գալստեանս գլխաւոր նպատակը քեզի յայտնելու չի մոռցայ՝ այլ դանդաղեցայ, Գուրգէն, ըսաւ Խոսրով և հանեց կնքեալ թուղթ մը տուաւ:

Գուրգէն նամակը ձեռքն առաւ և երեսին գոյնը դարձաւ.

— Հեղինէի գիրն է, ըսաւ, և փոխանակ բանալու Խոսրովի երեսը կը նայէր:

— Բա՛ց, կարդա՛, ո՞ւմ կ՚սպասես:

«Հեղինէ, Անձևացեաց Տիկին առ Գուրգէն «Արծրունի, իշխան Մարդաստանի:» Այս տողերը կարդալուն՝ կորովի մարդուն ձեռքերը կը դողային, առաջին անգամն էր որ տասն մէկ տարի վերջ Հեղինէ իրեն կը գրէր, և այնպիսի մարդու ձեռօք կ՚ուղարկէր իր նամակը:

— Ո՜հ, Գուրգէն, ըսաւ Խոսրով անհամբերութեամբ և աննշմարելի ծիծաղով, միթէ՞ դեռ տղայ ես, բաց՝ կարդա՛, վերջ տուր սա նամակիդ: . . .

— «Մուշեղ վախճանեցաւ, եթէ որբ և անկար տղու մը յանձն կ՚առնուս հայր լինիլ և տիրել «Անձևացեաց մի՛ դանդաղիր. արդէն ազդեցու«թիւնք և բանսարկուք մեր շուրջ պատած են,

«քու սիրտդ տես թէ ի՛նչ խորհուրդ կուտայ
«քեզ: Կշռէ և ըստ այնմ շարժէ: Հեղինէ:»

— Ո՜հ, ըսաւ Գուրգէն տեղաց ցատկելով, և այսպիսի նամակ մը կը դանդաղէիր ինձ տալու, և Հեղինէ իմ որոշմունքէս միթէ կը կասկածի: Երթա՛նք Խօսրով:

— Գուրգէն, կ՚երևայ որ դու մոռցար թէ քու բարեկամդ ծերացեր է արդէն, ես նոր ճամբէ կուգամ, մէկ գիշեր մը միթէ՞ կարելի չ՚է համբերել.

— Իրաւունք ունիս, բայց ես տասն ինը տարի է կը համբերեմ: Ամենքը զիս պատերազմի և արեանց ծարաւի կը կարծէին վասն զի ես ամիս մը՝ շաբաթ մը հանգիստ տեղ մը չ՚էի կըրնար նստել. ամենքը կարծէին թէ պատերազմը իմ զուարճութիւնս է, բայց դու, Խօսրով, զիս և իմ սիրտս կը ճանչէիր՝ թէ այդ սրտին կրակն էր որ զիս հանգիստ չ՚էր թողուր, ինչո՞ւ այդ նրբամիտ նամակն իրեն գրել տուիր. ինչո՞ւ Հեղինէ չի գրուցեր յայտնի թէ ամուսնանանք:

— Դու սխալ կը դատես զիս նոյնչափ՝ ինչչափ զՀեղինէ: Ես իրեն խորհուրդ ամենևին չի տուի, քեզ յայտնի է որ տասը մարդու գլուխը խելք դնելու կարողութիւն ունի այդ կինը. ինձ խնդրեր գրեր էր որ իրեն հասնիմ: Ես երբ Կանդուար մտայ, Մուշեղ նոր վախճանել էր. իւր

յուղարկաւորութեան հանդէսը ամենայն վայելչութեամբ կատարելէն վերջ՝ ինձ յայտնեց պարզութեամբ իր սիրտը, ինձ պատմեց ձեր սէրը, որ ես գիտէի բայց որ դուք երկուքդ էլ ինձ չ՚էիք խոստովաներ, — և լաւ կ՚ընէիք՝ վասն զի ձեր պարտքը լռելն էր և իմս գուշակել: Ինձ հարցուց թէ ինք՝ մայր և կին ի՜նչ պէտք էր ընել: Ինձ պատմեց թէ ի՞նչպէս Դերենիկ Արծրունի՝ Հոգեաց վանահօր ձեռօք կտակ մը ստորագրել տուեր էր Մուշեղի՝ նորա տկարամտութենէն և զառամութենէն օգուտ քաղելով. պատմեց այդ անյագ Արծրունեաց՝ Ռշտունեաց տիրանալը, որ քու ազնիւ սիրտդ կը փափաքի մոռնալ, բայց այդ կինը որ երկրին կորուստը կ՚արհամարհէր՝ Գուրգէն կորուսնելուն չ՚էր կրնար ներել, վասն զի յիշատակին միայն շըրթունքը կը դողային և աչքերը հուր կը փայլատակէին: «Զօրս տարի է ըսաւ, որ ես գիտեմ
«թէ այս երկիրը կառավարեցի Մուշեղի անուամբ.
«ապստամբ՝ խռովարար՝ բանսարկու, խստու-
«թեամբ սանձահարեցի և ոչ ոք չի համարձա-
«կիր խլրտելու, բայց հիմա կը տեսնեմ թէ Դե-
«րենիկ մը մէջ տեղ կ՚ելնէ՝ Տէր Արծրունեաց՝
«և շնորհիւ Գուրգէնի փեսայ իշխանաց իշխա-
«նին, և կ՚զգամ թէ ամեն հնարք՝ խաբէութիւն՝
«կաշառք և զէնու բռնութիւն 'ի գործ պիտի

«ղինէ այս տկար և թշուառ ժառանգը զրկելու «համար։ Ի՛նչ խորհուրդ կուտաս ինծի դու որ «սիրտ և գլուխ ունիս» Ես իրեն ըսի թէ ժամավաճառ պէտք չ՛է լինի, այլ շուտ մը նամակ գրէ քեզ և իմացնէ. Թէ ես ապահով էի և տարակոյս չ՛ունէի որ Գուրգէնի ազնիւ սրտին մէջ սէրն անշէջ է Հեղինէի համար, և թէ Գուրգէն ու Հեղինէ միացեալ ամուսնութեան կապերով՝ աշխարհիս բոլոր Աշոտներուն և Դերենիկներուն կրնային դիմադրել։

— Շատ լաւ և իմ սրտէս խօսել ես. Խոսրով։ Դու հանգչէ ուրեմն և վաղն առաւօտ կանուխ ճամբայ կ՛ելլենք։ Այո՛ եթէ Հեղինէ իմն է, ես կրնամ արհամարհել աշխարհքիս բոլոր զօրութիւնքը, դու չ՛ես կարող երևակայել իմ՝ Ռշտունեաց Ոստանն անցուցած մէկ գիշերս, երբ ութը տարի թափառելէ վերջ՝ իմացայ թէ Հեղինէ ուրիշինն եղել է։ Եթէ Արտոս լեռը գլուխս փլէր՝ աւելի գոհ կը լինէի։ Ի՜նչ կուգայ մարդկային տկար ձեռքերէն։ Ես էլ տկար մարդ էի, Աստուծմէ խնդրեցի որ սիրոյ կուրացեալ չ՛ընեմ այնպիսի անարժան գործ մը որ իմ կեանքիս մէջ խղճմտանքիս վրայ ծանրանայ. կրնայի Մուշեղ շղթայակապ թող տալ Քրդաց ձեռք, կրնայի այդ գոռոզ Դերենիկը երկու մասով խեղդել, կրնայի...

բայց ի՜նչ յիմար խօսքեր կ՛ընեմ... Աստուած իմ չարչարանացս վերջ տուաւ և ես ուրախ եմ որ իմ ամենէն աւելի սիրած բարեկամս ներկայ է այս վայրկենիս, որ սրտիս վրայէն այսչափ տարուան բեռը կը վերնայ։ Դու քուն եղիր, ես երթամ պատրաստեմ ամեն բան և պէտք եղած հրամանները տամ։

Նոյն գիշերը Գուրգէն Մարդաստանի համար իւր բոլոր կարգադրութիւնքն ըրաւ, բերդերու ամրութեան ամեն հրամաններ տուաւ, բերդակալներ որոշեց, և հազարի չափ ընտիրներով երկրորդ օրը Խոսրովի հետ կ՛ելնէր ուղևորելու Անձևացեաց գաւառը։

Բայց երբ իշխանը զբաղմանց և իր անհամբերութեանց մէջ Վահրիճ կը ձայնէր, սպասաւորը որ կարևոր անձ մը դարձեր էր նորա իւր բոլոր կատարելութեամբք և բոլոր պակասութեամբք, նոյն միջոցին Հադամակերտի մօտ նստած էր անխնամ պարտէզի մը մէջ՝ փառաւոր լուսնի գիշերով՝ սեղանի մը առջև ուր պատուական կաքաւներու և լորամարգներու խորոված՝ և Վասպուրականի գերագոյն գինին ու Խլաթի տանձը նաև պակաս չ՛էին։

Իւր դիմաց նստած էր երկար և խառն մօրուօք մարդ մը, ում քով սև վերարկուն և վեղար կը յայտնէին թէ վանքի վարդապետն էր. վան

գի այդ պարտէզը մենաստանին էր, որուն խուղճուկ եկեղեցին՝ փլփլած սենեակները կը վկայէին թէ թշուառ վիճակի մէջ կը գտնուէր շէնութիւնը։

Իսկ Վահրիճ որ յայտնի կ՚երեւար թէ զուարթութեան գեղեցիկ աստիճաններուն վրայ էր,

— Է՛հ, հայր սուրբ, կ՚ըսէր, քու վանքիդ ողորմելի կերպարանքը և գինւոյդ ու պտուղներուդ պատուականութիւնը իրարմէ շատ հեռու են, ես իմ որսերուս այսչափ լաւ ընկերներ տալ չ՚էի կարծեր երբ գքեզ դրան քով նստած տեսայ։

Հայր սուրբը որուն աչքերուն փայլը կը ցնէր թէ պակաս չ՚էր Վահրիճէ իւր զուարթութեան մէջ, և գինւոյն կուժը պարպելու համար մէկտեղ կը ձգնէր, ախորժեցաւ իւր գինւոյն գովասանքէն, պատասխանեց.

— Որսորդ եղբայր, ես քեզի պէս հիւրը կը սիրեմ, որ իւր ընտիր կերակուրը մէկտեղ կը բերէ. քու կաքաւներդ ու լորամարգիդ այս գինին սեղան հրաւիրեցին, եթէ ոչ քացխած գինի շա՜տ։

— Իշխանաց արժանի գինի է, ես այսպիսի գինի անգամ մ՚ էլ համդիպած եմ Տարօնոյ մէջ, համը դեռ բերանս է. Բագրատունեաց Մշոյ կարաններէն տիկս լցուցի, ո՜ գիտէ քանի տարուան գինի էր։

— Աս գինին էլ նորա խնամին է, որսորդ եղբայր, Արծրունեաց ապրանք է, Դերենիկ իշխանը ինձ յուղարկեց . . . անցեալ տարի . . . ոչ . . . առաջին տարի . . . միտքս չ՚է հիմա։

— Դու մեծ մարդկանց հետ գործ ունիս, հայր սուրբ, քու վանքդ պէտք էր նորէ նոր շինէին այդ մեծ իշխանները։

— Այն էլ կարելի է, խելօք մարդը պարագաներէ օգուտ քաղել գիտնալու է։ Ս. Կարապետ գնացել ես, որսորդ եղբայր, այնպէ՞ս չ՚է, ի՜նչ աբեղայներ կան այն տեղ որ խոտաճարակ կ՚ապրին. ես այդ կեանքը կը ճանչեմ, ես էլ այնպէս կը մնայի թէ որ արթուն չ՚լինէի . . . ի՛նչ որ է, այսչափ միայն յաջողեցաւ, եթէ քիչ մը ժամանակ տեւէր, ես եպիսկոպոս եղած էի։

— Քու եպիսկոպոսութեանդ յաջողելո՜ւն, ըսաւ Վահրիճ և բաժակը պարպեց։

— Քու միշտ յաջո՜ղ որսորդութեանդ, պատասխանեց հայր սուրբը ետ չի կենալով. բայց քանի անգամ է որ եպիսկոպոսութիւն կը մօտենայ, հա՛ բռնեցի կ՚ըսեմ՝ դարձեալ ձեռացս կը փախչի։

— Այսչափ դժա՞ր բան է եպիսկոպոսանալը։

— Ի՜նչ, դիւրին բան գիտցա՞ր, բայց դարձեալ քանի անգամ դիւրացաւ. ես որ մէկ քանի ամիս այս Դերենկի հօր Աշոտ իշխանին առե-

նազպիրն էր. նա գերի գնաց . . . մնաց, միայն այս աւերակ վանքը ձեռք բերի վերջը, այս Դերենիկն ինձ խօսք տուաւ որ զիս Մարդաստան գաւառին եպիսկոպոս ձեռնադրել տայ. գաւառը նորա ձեռաց գնաց, եպիսկոպոսութիւնն էլ իմ ձեռացս թռաւ:

— Այս բաժակը կը քամեմ մինչև վերջին կաթիլը Եպիսկոպոսութեան դառնալուդ վրայ:

Եւ Վահրիճ լցուց ու քամեց: Հայր սուրբը շուտ մը նորա օրինակին հետևեցաւ առիթն ամենևին չի կորսնցնելով: Վահրիճ հետաքրքրութիւն ունեցաւ այս առանց միաբանի վանահօր ամեն գաղտնիքն իմանալու, վասն զի տեսաւ որ շարունակ այդ Արծրունեաց հետ գործ ունեցել էր, վասն զի ինքզինքը Գուրգէնէ չէր կարող բաժնել, և իր սիրոյ հետ բարեկամ կամ թշնամի կը դառնար անդադար, և հիմա Հազամակերտի դրան առաջ Երադանի գիւղեն քով գտնելով Դերենկի բարեկամ մը՝ իր կէս գինեհարեալ վիճակին մէջ օգուտ քաղել մտածեց, ուստի մէկ մը գինին գովելով՝ մէկ մը հայր սուրբին եպիսկոպոսութիւնը առաջ քշելով կուժին տակը հասաւ սեղանակցին հետ և տեսաւ որ մտերմութեան դուռ բացուեցաւ:

— Քեզի պէս արթուն վարդապետ մը դըժբաղդութիւն է որ այսպիսի անապատի մը վա-

նահայր մնայ. բայց իշխանները երախտամոռաց եակներ են, դու հօրը ծառայեր ես, որդւոյն ծառայեր ես՝ կուժ մը գինով ի՞նչպէս կարելի է զքեզ վարձատրել և գաղրել. իրաւ ես չեմ գիտեր ինչ տեսակ ծառայութիւն ըրած ես սոցա, բայց վերջապէս իշխան մը այսպիսի ծանր և դժուար ժամանակի մէջ՝ քեզի պէս արթուն մարդու պէտք էր որ աս պատուական ըմպելիքէն ուրիշ վարձատրութիւն մ՚ընէր:

— Իմ ըրած ծառայութիւնս Դերենկին սովորական բան չէր . . . հիմա թող մնայ . . .

Իսկ Վահրիճ թէպէտ լաւ գիտէր թէ կուժը իր վերջին կարողութիւնը թափել էր, բայց կամաւ ուժով մը վեր առաւ ամանը որ իւր պարապութեան համար վարդապետին գլխէն աւելի բարձրացաւ. հայր սուրբը հիւրընկալութեան պարտաւորութիւնն կատարեալ ընելով ձայնեց ծառային և հրամայեց ուրիշ լեցուն աման մը բերել: Արդէն վարդապետին լեզուն ծանրացել էր, և իշխանաց ապերախտութեան յիշատակն էլ գլխուն վրայ նոյնպէս ծանրանալով՝ աչքերն սկսեր էին պղտիկնալ. Վահրիճ մխիթարութիւն մատռուակելով բաժակ բաժակի վրայ դարձեալ լցուց. վասն զի աս հաւատարիմ ծառան Գուրգէնի համամիտ չէր ամեն նիւթի մէջ, և նորա անոխակալ ներողամտութեան եր-

բէք կամակից չ՚էր. բայց բերան բանալ՝ խորհուրդ տալ չ՚էր համարձակեր, և հազիւ երբեմն Խոսրովու զուարթ վայրկեաններուն՝ միավանկ բառերով իւր իշխանին՝ Դերենկի ըրած բարեբարութիւնքը «չափազանց բարերարութիւն» անուանել համարձակած էր: Ուստի հիմա գըտնելով Մարդաստանի մէջ վարդապետ մը որ իւր տիրոջ թշնամեաց բարեկամն էր, միտքը դրաւ թէ դա Դերենկի լրտեսն է, և ամէն ջանք սկսաւ ՚ի գործ դնել այդ մարդուն լեզուն արձակել:

— Հայր սուրբ, կը տեսնեմ թէ դու էլ ինձի պէս անբաղդ մարդ ես, խելօք մարդու չ՚ես հանդիպեր, ես էլ իշխանի մը ծառայեցի տարիներով, ապերախտը երբ մեծութեան և փառքի հասաւ զիս վռնտեց. ես էլ հիմա որ ապրուստ ունիմ փա՛ռք Աստուծոյ և մարդու կարօտ չ՚եմ շնորհիւ խելօք վարմունքիս՝ որսորդութեամբ ժամանակս կ՚անցնեմ:

— Ո՞վ էր քու ծառայած իշխանդ:

— Նա էլ Արծրունի մի էր. այս ցեղը ապերախտութեան համար ծնած է:

— Ի՞նչ Արծրունի էր, հոգիդ սիրես:

— Գուրգէն Ապուպելճ, շատ քաջ, բայց կատարեալ յիմարին մէկը:

— Հը՞ . . . Գուրգէ՞ն . . . լաւ կը ճանչեմ:

— Ուստի՞ կը ճանչես:

— Այնպէս լաւ կը ճանչեմ, և այնպէս ափիս մէջ ունեցեր եմ վայրկեան մը՝ ինչպէս սա բաժակը:

— Մի՞թէ կարելի է այդ հսկան՝ որ Բուղա ափին մէջ չի կրցաւ սղմեցնել՝ քու ափիդ մէջ սղմէր. յիրաւի զարմանք բաներ կը պատմես, հայր սուրբ:

— Կ՚ուզես հաւտա՛՝ կ՚ուզես մի՛ հաւտար. եթէ հիմա նա տիրացաւ Մարդաստանի Դերենիկի յիմարութեան պտուղն է, Մարտիրոս վարդապետ յանցանք չ՚ունի. ես այդ տեղ մը չի սղմող հսկան՝ սա փոքրիկ ծակին մէջ սղմեցուցի՝ նորա ձեռքը տուի . . . ի՞նչ էր յանցանքը եթէ կաթողիկոս՝ իշխանաց իշխան Հազար կտոր եղան, սապէս ըսին՝ նապէս ըսին, ձեռքէն առին, էլան գնացին:

Վարդապետը երբ այս խօսքերն կը զրուցէր, լեզուն բերնին մէջ կը պլորէր, լուսին իւր աչաց բազմապատկեալ էր, և Վահրիճ իւր գինւոյն գրեթէ բոլորովին սթափած նոյն միջոցին՝ այդ Մարտիրոս անուան մտքին ամբողջ զօրութիւնը գտեր էր: Ուստի զուարթ դէմքով՝ ջանալով իր վիճակը ծածկել, ըսաւ.

— Իմ պատուական հայր սուրբ, դու շատ խելօք և հնարագէտ մարդ ես, դու լաւ գիր

նաև գիտես, վասն զի Աշոտ Արծրունւոյ պէտ մեծ իշխանի ատենադպիր եղեր ես. այդ անպիտանն ալ քեզ մոռցեր է։

— Իրեն այնպիսի ծառայութիւն ըրի, որ սատանան չի կրնար ընել, մէկ թուղթ մը գրեցի, թուղթ մը գրեցի՝ որ գաւառ մը իրեն օժիտ բերաւ . . . ի՞նչ աչքերդ կը բանաս . . . մե՞ղք աշխատանացս . . . այնչափ լաւութիւն, հը՛, բոլոր սա փլփլած վանքին համար, տարե մ'էր որ թափառական կը շրջէի այդ քու Գուրգէնի երկիւղէն . . . վերջը իմացայ որ դա մոռացկոտ մարդ է, ոչ բարեկամը գիտէ ոչ թըշնամին . . . ալ չեմ կարող . . . գլուխս կը շը . . . կը դառնայ, ես այս տեղ լաւ մը քընեմ . . . .

Եւ իրօք մարդը երկնցաւ. Վահրիճ ալ դիմացը վերարկուն քաշեց՝ կէս քուն կէս արթուն կը քնէր՝ նորա խորդալուն ձայնը երբ յանկարծ դադրէր աչքերը կը բանար որ մարդը չի փախչնէ։ Երբ արշալոյսն սկսաւ, ժողվուեցաւ և շխտակ քաղաքը շունչն առաւ։

ԳԼՈՒԽ ԻԹ.

ԳԵՂԵՑԻԿ ՕՐ.

Կանգուարի բերդին դուները բացուեցան ընդունելու համար ամենայն պատւով և փառօք Գուրգէն Ապուպելճ և Հեղինէ Տիկին երկրորդ օրը բերդին եկեղեցւոյն մէջ պսակուեցաւ Գուրգէնի հետ 'ի մեծ ուրախութիւն Անձևացեաց ժողովրդեան՝ որ հզօր պաշտպան մը կը գտնէր այսպիսի աննման քաջ իշխանի մը հովանաւորութեամբ։ Բայց եթէ մէկ կողմէ ամուսնացեալք երջանիկ և ժողովուրդը գոհ էին՝ միւսէն շատ մը բանտարկուներ վերջին յուսահատութեան մէջ էին։ Մուշեղ իշխանի կտակը պատրաստող Թէոդորոս վարդապետ՝ առաջնորդ Հոգեաց վանից, որ Դերենկի խորհրդով և նորա յօգուտ ծածուկ Հեղինէի որբ տղան ջանացել էր զրկելու, հիմա անճար և շփոթ մնացել էր, իւր բոլոր յոյսերը տեսնելով ոչնչացեալ։

Իսկ Դերենիկ մեծամեծ պատրաստութիւնք կ'ընէր պատերազմի, և նոյն միջոցին՝ նոյն Թէոդորոս վանահայրը դեսպան կ'ուղարկէր Գուրգէնի՝ սպառնալեօք որ Անձևացեաց կէսը Նո-

րաբերդի հետ ըստ կտակին զօրութեան իւրեն յանձնէ։

Չ'ենք ուզեր երկայն պատերազմներու վրայ խօսիլ, ուր Գուրգէն վերջապէս յաղթութեամբ պսակուեցաւ, և ամբողջ Անձևացեաց գաւառին տիրացաւ. հանդարտեցուց երկիրը, ապահովեց 'ի թշնամեաց, եկեղեցիներ շինեց և խաղաղութեան տօն կատարեց նաւակատեաց։

Բայց այս խաղաղութիւնը նաև երկայն չի տևեց, վասն զի Դերենիկի հայրը Աշոտ իշխան գերութենէ ազատելով եկաւ Բաղդատէ, և հրամայական պատգամ ղրկելով Գուրգէնի կը պահանջէր Անձևացեաց գաւառին մասը Դերենիկի համար։ Իսկ Գուրգէն հանդարտ պատասխան կ'ուղարկէր և կ'ըսէր. «Հայրենի «ժառանգութենէ զիս զրկեցիք, եղբայրական «բաժինը յափշտակեցիք, հիմա ինչ որ ինձ Աս«տուած ժառանգեցուց, այն էլ կ'ուզէք առ«նուլ բռնութեամբ։ Մի՞թէ դու միայն պիտի «բնակիս երկրիս վրայ։ Տեսնէ Տէր և դատէ իւր «արդարութեամբ ինչպէս ես կը յուսամ։»

Եւ իմանալով թէ հայրը մէկ կողմանէ՝ և միւս կողմանէ Դերենիկ Անձևացեաց գաւառին վրայ կը յարձակէին, իւր եղբօրորդին Գրիգոր՝ քաջ երիտասարդը ղրկեց Աշոտի դէմ երկու հարիւր հոգւոյ ընտիր սպառազէն գնդով. իսկ

սա՝ տեղեկանալով Գրիգորի զօրաց սակաւութիւնը արհամարհեց և անպգոյշ կը նստէր անհոգ, երբ գիշերով յանկարծ Անձևացի խումբը յարձակեցաւ իւր վրայ, զարկաւ՝ ցիր ու ցան ըրաւ զօրքը և աւար առաւ բոլոր բանակը մինչ ինք Աշոտ միաձի փախստական կ'իջնէր Ոշտունեաց Ոստանը։

Իսկ Դերենիկ իմանալով հօրը պարտութիւնը և թէ Գուրգէն իւր վրայ կուգար յարձակմամբ՝ խոհեմաբար ետ քաշուեցաւ և դարձաւ Վասպուրական։

Կրկին և կրկին Արծրունիք նոր զօրք ժողվելով և Բագրատունեաց օգնութեամբ զօրացեալ՝ չի կարենալով բան մը գլուխ հանել, խաղաղութեան դաշինք դրին. Աշոտ և Գուրգէն առանձին իրարու հետ տեսնուեցան, զիրար ողջունեցին և բարեկամութեան սէր հաստատելով բաժնուեցան իրարմէ։

Գուրգէնի ամուսնութեան տարին լրացեր էր, Հեղինէ կայտառ՝ նորածին՝ նորակնունք երեխայ մը գիրկը՝ մխիթարուած էր իւր Մուշեղէ ունեցած խեղճ և տկար տղուն մահուան վրայ. Խօսրով Ակէացի՝ որ նոցա կնքահայրն էր և նոյն օրն այդ պաշտօնը կատարելու համար եկեր էր 'ի Կանգուար, երեքին վրայ կը նայէր զուարճութեամբ. իսկ Գուրգէն ոտքի վրայ կան-

գնած՝ ուրախ՝ բոլոր նեղութիւնները և բաղդին հարուածները գրեթէ մոռցել էր ներկայ երջանկութեամբ. մէկ մը կնոջը և մէկ մը զաւկին ակնարկ ձգելով աչքերը երկինք կը վերցնէր շնորհակալ կը լինէր Աստուծոյ տուողին ամէն բարութեանց, երբ յանկարծ գլուխը դարձնելով տեսաւ Վահրիճ որ լռիկ ներս մտած դրան առջև կեցել էր:

— Ի՞նչ է Վահրիճ, դու բան մը ունիս զրուցելու, հարցուց Գուրգէն:

— Այո, Տէր:

— Զրուցէ՛, ի՞նչ խնդիրք ունիս:

— Ոչինչ Տէր, քու ողջութիւնդ. միայն կ'ուզեմ յիշեցնել որ՝ Օձ քաղաքին մէջ երբեմն շատ տարիներ առաջ ինձ յանձնեցիր իմանալ թէ ո՛վ էր այդ երեք դաւաճան իշխանաց մատնութեան թուղթը գրողը առ Բուղա, ես այն ատեն իմացայ թէ Մարտիրոս անուն վարդապետ մի էր, և դու ինձ ապսպրեցիր չի մոռնալ այդ անունը և երբեմն յիշեցնել և ջանալ գտնել. ես գտայ այդ մարդը և տարի կայ որ այս տեղ վարը բանտը կ'սպասէ: Ես ժամանակ չ'ունեցայ զինք յիշելու վասն զի քու հրամանաւդ Նորաբերդ էիր, և ոչ դու էլ ժամանակ ունէիր նորա գործով զբաղելու: Ուրեմն այս առաւօտ ինձ յիշեցուց և ըսաւ թէ իշխանուհին եթէ իմա-

նայ որ այդ մարդը տարին ամբողջ առանց դատաստանի շղթայակապ մնացել է՝ բանտը մեր գլխուն կը կործանէ:

Իսկ Գուրգէն խոժոռ նայեցաւ Վահրիճի այս յայտնութեան վրայ և քմծոտի ակնարկ մը ձգեց Հեղինէի, որ ուշադրութեամբ անխռով և խիստ կը նայէր սպասաւորին, որ տեսնելով թէ ախորժ չ'եղաւ իւր յայտնութիւնը, վրայ բերաւ ուրիշ պարագայ մը նաև:

— Ես այնպէս իմացայ այդ վարդապետին խոստովանութենէն, որ դա ասկից երկու երեք տարի առաջ Երազգածի գիւղին քով կիսափուլ վանքի մէջ երբ դու իրեն ապաւիներ ես՝ Դերենկին բանտէն ազատելով՝ գէրգ նկուղի մը մէջ փակեր և Դերենկին մատներ էր: Ես այս պարագան չ'գիտէի՝ իրմէ իմացայ:

— Անպիտա՛ն, ըսաւ Գուրգէն բարձրաձայն քրքիջ արձակելով, այդ ի՞նչ յիմար է եղել որ քեզի պէս առաջինի մարդ փնտռել ընտրել է խոստովանահայր: Գնա՛, արձակէ այդ մարդը, արդէն տարի մը բանտ քաշել ապաշխարել է:

Վահրիճ քայլ մը ետ առաւ դուրս ելնելու, երբ Հեղինէ՝ ձեռօք նշան ըրաւ կանգնելու, և դարձաւ լուրջ հանդարտութեամբ ըսաւ Գուրգէնի:

— Եթէ անմեղ կամ յիմար մէկն է այդ մարդը

և անիրաւ տեղ մեր բանտերուն մէջ տարիով կեցեր է, պէտք է իրեն շնորհք մ'ընել և այնպէս արձակել: Իսկ եթէ դաւաճան և մատնիչ է՝ և կարող պատուհաս լինիլ ուրիշներու, ի՞նչ խղճմտանքով զինք կ'արձակես:

— Ոչ, անմեղ անձ ըսել կարելի չ'է այդ անզգամին համար, բայց այնչափ տարի անցել է իր գործոց վրայ . . .

— Միթէ՞ տարիներ և ժամանակ բաւակա՞ն են քաւել չարագործութիւնքը; ըսաւ Հեղինէ, և դառնալով Խօսրովու՝ դու ի՞նչ կ'ըսես, հայրիկ . . .

Այս խօսքին Գուրգէն երկու երեք քայլ առաջ՝ դրան մօտեցաւ և Վահրիճի թևէն ուժով բռնելով, բերաւ սենեակին մէջ տեղ կեցուց երեսը Հեղինէի դարձնելով.

— Զիս թող, իշխանուհւոյն հետ խօսէ և նորա պատասխանէ:

— Բայց տէր, կ'ըսէր Վահրիճ քիթը բերանը թթուած և թևը շփելով, ես զքեզ չ'եմ կարող բռնել, դու զիս պէտք է թողուս:

Իսկ Գուրգէն նոյն միջոցին հեռացաւ դէպ 'ի պատշգամը և հորիզոնը կը նկատէր առանց բառ մը կորսնցնելու. Վահրիճի խօսքերէն՝ որ միշտ թևը շփելով մէկիկ մէկիկ կը պատմէր իր որսորդութեան՝ Մարտիրոս վարդապետի հետ սե-

ղանակցութեան՝ զինովութեան՝ խոստովանութեան պատմութիւնը. Գուրգէն քթին տակէն երբեմն ծիծաղելով, «Անպիտա՞ն ծառայ, տարիներն զքեզ ամենևին չ'եմ փոխեր, միշտ նոյնն ես և նոյն մնացել ես» կ'ըսէր կամաց ձայնով. Հեղինէ առանց փոքր ժպիտ մը ցոյց տալու, ուշադրութեամբ մինչև վերջը մտիկ ընելէն ետքը, ըսաւ Վահրիճի խիստ ձայնով.

— Բայց ի՞նչ կը նշանակեն այդ խօսքերը որ դա գրուցեր է. «Թուղթ մը գրեցի որ գաւառ մը իրեն օժիտ բերաւ:»

— Չ'գիտեմ իշխանուհի, որովհետև երբ այդ խօսքերն ըսաւ հայր սուրբը . . .

— Ի՞նչ Հայր Սուրբը, ընդհատեց Հեղինէ խստութեամբ, այդ էր պակաս որ այսպիսի անզգամներ «Հայր Սուրբ» անուանէինք:

— Կը ներես իշխանուհի, բերնի վարժութիւն է այն գիշերուընէ մնացած:

Գուրգէն կը ծիծաղէր բարձրաձայն. Խօսրով որ ուշադիր էր միայն և ամենևին նշան մը չ'էր տուած մինչև այն վայրկեան՝ փոքրիկ մը ժպտեցաւ, իսկ Հեղինէ բարկացայտ աչքերով՝ կամաց և դողդոջուն ձայնով ըսաւ սպասաւորին.

— Գնա՛, այդ մարդն առանց շղթայի՝ առանց պահապանի ներսի մեծ սենեակը տար, և սպասէ մինչև որ մենք գանք:

Եւ երբ Վահրիճ գնաց, ելաւ ձայնեց նաժիշտներուն, տղան դայեկին յանձնեց, և Գուրգէնի թեւէն բռնելով ու Խոսրովու քով բերելով՝ լուրջ և մեղադրական ձեւով ըսաւ.

— Գուրգէն, ես հիմա անոր կը զարմանամ թէ այնչափ տարիներ զես ի՞նչպէս չի մոռցար. միթէ՞ կարելի է այդ անզգամ չարագործը մոռնալ՝ իւր ըրածը չյիշել, և թողուլ որ երթայ իւր անարդ շահասիրութեամբ, անխիղճ և անպատկառ շարունակէ իւր անզգամութիւնը, անմեղ արտասուաց և ո՜ գիտէ արեանց պատճառ լինի. այս իշխանութիւն չ՚է, այս տէրութիւն չ՚է, իշխանաց պարտքը ես այսպէս չ՚եմ հասկնար։ Շատ ուրախ եմ որ Խոսրով իշխանն էլ այստեղ է և դատաւոր կրնայ լինիլ մեր մէջ։

— Բայց ո՞վ քեզի ըսաւ, սիրելի Հեղինէ, թէ իրաւունք չ՚ունիս. ես տարի մի է այնչափ զբաղած եմ պատերազմներով որ ամեն կառավարութիւն քեզի յանձնեցի, և հիմա էլ, քու գործիդ խառնուելու ոչ կամք ունիմ և ոչ փափաք. կ՚ուզես կախել տուր այդ մարդը, կուզես ձեռքը կտրել տուր, ես կ՚ընդունիմ՝ թէ արժանի է ամեն տեսակ պատժոց, միայն պատերազմէ դուրս՝ ցուրտ արիւնով չ՚եմ կարող մէկը հարուածել և պատժել. առիւծը՝ վագրը գա-

ռազմին մէջ սպաննել չ՚եմ կրնար, պէտք է արձակեմ և այնպէս վրան յարձկիմ։

— Այո՛, առիւծին՝ վագրին այնպէս պէտք է ընես, բայց գետնաքարշ սողունին՝ որ կրունկդ կ՚ուզէ խածնել և թունաւորել՝ պէտք է գլուխը ճզմել ու ջախջախել։ . . . Է՜հ հայրիկ, չ՚ես խօսիր . . . եթէ այդպէս է ես էլ բերանս չ՚եմ բանար։ . .

—Ոչ դուստր իմ, ոչ, դու իրաւունք ունիս, ըսաւ Խոսրով ձեռքէն բռնելով և քովը նստեցնելով, բայց Գուրգէնի բնաւորութիւնն այնպէս է, տասն անգամ նոյն թշնամին բռնած և թողած է, միշտ վերջը զղջալով։ Հիմա այդ մարդը պէտք է շղթայակապ կաթողիկոսին յուղարկել. Հոգեւոր Տէրը արդար՝ առաքինի իմաստուն մարդ է, երբ իմանայ անարժան քահանային ըրած անզգամութիւնքը փակել կուտայ զինք վանք մը, ուստից անկարելի կը լինի ելնել մինչև կենաց վերջի օրը, և առատ ժամանակ կ՚ունենայ ապաշխարելու իւր չարութեանց վրայ։ Երթանք ուրեմն ներսի սենեակը, հարցաքննենք մարդը։

Մարտիրոս վարդապետ ամեն բան խոստովանեցաւ, պատմեց թէ ինչպէս ինք Գուրգէնի առ Հեղինէ գրուած նամակը խարդախել էր, ինչպէս ինք Աշոտի դիւանագէտ մատնութեան

գործիք և խորհրդակից եղեր էր երեք դաւաճանաց հետ, և թէ ինչպէս ետքը Գուրգէն մատներ էր եպիսկոպոսանալու յուսով:

Երկրորդ առաւօտ Վահրիճ քանի մը հոգւով իւր այս չնչաւոր աւարը բարձեալ ձիու մը վրայ փոքրիկ զօրաց գունդի մը ընկերութեամբ կը տանէր կաթողիկոսին, որ Սևանայ անապատը հրամայեց զնա ուղղել դատապարտելով ապաշխարութեան իւր անզգամութեանց համար: Ծերունի Խօսրովու խօսքը կատարուեցաւ ինչպէս զրուցել էր Հեղինէի:

ԳԼՈՒԽ Լ.

ԵՐԿՈՒՆՔ.

Գուրգէնի կեանքը մանրանկար պատկեր կըրնայ համարուիլ Հայաստանի այն ժամանակաց տաժանելի վիճակին, հալածանք՝ մատնութիւն՝ դաւ՝ բանտ՝ շղթայներ՝ պատերազմ՝ վէրք՝ հիւանդութիւն՝ յաղթութիւն՝ պարտութիւն՝ սիրելեաց բաժանումն, և վերջապէս հանգստութիւն՝ երջանկութիւն սրտին սիրելւոյն հետ միաւորութեամբ:

Ուրախ տարիներ անցուցին այս ամուսինք, ունեցան զաւակներ, ծնելական գթով և արդա-

րութեամբ կառավարեցին թէ իրենց տունը՝ թէ երկիրը. երջանկութիւն՝ եթէ բոլորովին չ'էր կրնար մոռցնել այն դժնդակ օրերը ուր մարմին և հոգի տառապանաց և յուսահատութեան մէջ կը տատանէին՝ կը ծփային, այլ իբրև հին յիշատակք միգամած ամպէ մը ծածկեալ հեռաւոր առարկայք եղան գրեթէ աննշմարելիք:

Մայրն Հայաստան՝ այդ բազմաչարչար մարտիրոսը որ երկայն տասը տարիներու մէջ անլուր թշուառութեամբք տքնեցաւ, ոտնակոխ բազմատեսակ բարբարոսաց, աւար անգութ հրոսակաց, ստրուկ մերձաւորաց և օտարաց, հարուածեալ թշնամեաց և իւր հարազատ որդեկաց,—վերջապէս անգամ մ'էլ կրցաւ սրբել թաց արտասուքը, ցնցեց՝ նետեց արիւնաշաղախ մոխրամած ցնցոտիները, թողուց այդ ցաւոց անկողինը և իւր դառն Սըէ՜ոյ յաջորդեցին երջանիկ ու ղուարթագին աւուրք. զգեցաւ վայրկեան մ'էլ իւր ծիրանիները և պսակեցաւ թագադիր Բագրատունեաց շառաւիղ Աշոտի անձին վրայ: Սև օրերու պայծառ արև յաջորդեց և տեսաւ Մայրն Հայաստան իւր որդւոց գերեդարձը, երբ անարգ ուրացութեան նախատինքը մերկացան եղան լուսազգեստք. Քրիստոսի անունը դարձեալ սկսաւ փառաւորիլ,

գործիք և խորհրդակից եղել էր երեք դաւաճանաց հետ, և թէ ինչպէս ետքը Գուրգէն մատներ էր եպիսկոպոսանալու յուսով:

Երկրորդ առաւօտ Վահրիճ քանի մը հոգւով իւր այս շնչաւոր աւարը բարձեալ ձիու մը վրայ փոքրիկ զօրաց գունդի մը ընկերութեամբ կը տանէր կաթողիկոսին, որ Սևանայ անապատը հրամայեց զնա ուղղել դատապարտելով ապաշխարութեան իւր անզգամութեանց համար: Ծերունի Խօսրովու խօսքը կատարուեցաւ ինչպէս զրուցել էր Հեղինէի:

ԳԼՈՒԽ Լ.

ԵՐԿՈՒՆՔ.

Գուրգէնի կեանքը մանրանկար պատկեր կըրնայ համարուիլ Հայաստանի այն ժամանակաց տաժանելի վիճակին, հալածանք՝ մատնութիւն՝ դաւ՝ բանտ՝ շղթայներ՝ պատերազմ՝ վէրք՝ հիւանդութիւն՝ յաղթութիւն՝ պարտութիւն՝ սիրելեաց բաժանումն, և վերջապէս հանգստութիւն՝ երջանկութիւն սրտին սիրելոյն հետ միաւորութեամբ:

Ուրախ տարիներ անցուցին այս ամուսինք, ունեցան զաւկներ, ծնելական գթով և արդա-

րութեամբ կառավարեցին թէ իրենց տունը՝ թէ երկիրը. երջանկութիւն՝ եթէ բոլորովին չ՚էր կրնար մոռցնել այն դժնդակ օրերը ուր մարմին և հոգի տառապանաց և յուսահատութեան մէջ կը տատանէին՝ կը ծփային, այլ իբրև հին յիշատակք միգամած ամպէ մը ծածկեալ հեռաւոր առարկայք եղան գրեթէ աննշմարելիք:

Մայրն Հայաստան՝ այդ բազմաչարչար մարտիրոսը որ երկայն տասը տարիներու մէջ անլուր թշուառութեամբք տքնեցաւ, ոտնակոխ բազմատեսակ բարբարոսաց, աւար անգութ հրոսակաց, ստրուկ մերձաւորաց և օտարաց, հարուածեալ թշնամեաց և իւր հարազատ որդեկաց,—վերջապէս անգամ մ՚էլ կրցաւ սրբել թաց արտասուքը, ցնցեց՝ նետեց արիւնաշաղախ մոխրամած ցնցոտիները, թողուց այդ ցաւոց անկողինը և իւր դառն Երկնից յաջորդեցին երջանիկ ու ղուարթագին աւուրք. զգեցաւ վայրկեան մ՚էլ իւր ծիրանիները և պսակեցաւ թագադիր Բագրատունեաց շառաւիղ Աշոտի անձին վրայ: Սև օրերու պայծառ արև յաջորդեց և տեսաւ Մայրն Հայաստան իւր որդւոց գերեդարձը, որք անարգ ուրացութեան նախատինքը մերկացան եղան լուսազգեստք. Քրիստոսի անունը դարձեալ սկսաւ փառաւորիլ,

Եկեղեցւոյ լքեալ ու կործանեալ գմբեթները
իրենց աւերակներուն մէջէն կանգնեցան՝ յա-
ղթութիւն առին. քաղաքներ նորոգուեցան, գիւ-
ղեր շէնցան, «Հերկեցին հերկս, և ոչ 'ի վերայ
«փշոց, և առա ձայն խրախճանաց ցնծացելոց
«'ի յարկս նոցա լինէր և ձայն հարսին և փե-
«սայի. Ծնան որդիս և արարին պտուղ, և բը-
«նակեցան իւրաքանչիւրոք 'ի ժառանգութեան
«իւրեանց և այց արար Տէր նոցա՝ և յաջո-
«ղեաց 'ի բարութիւնս:»

ՎԵՐՋ.

ՑԱՆԿ ԳԼԽՈՑ

ԳԼՈՒԽ	Ա.	Սասուն	1
»	Բ.	Ժողովուրդը	10
»	Գ.	Մոգական հայելի	25
»	Դ.	Արծրունի իշխան մը	45
»	Ե.	Ռշտունեաց Օրիորդը	55
»	Զ.	Գիւղացին	71
»	Է.	Հուփսիմէ տիկին	88
»	Ը.	Կանգուարի բերդը	106
»	Թ.	Ղեւոնդ Ղեւոնդ	125
»	Ժ.	Իշխանազանց ժողով մը	144
»	ԺԱ.	Խուլթեցի զօրավարը և Հայոց Սպարապետը	164
»	ԺԲ.	Աշոտ Արծրունի և դաւաճանք	182
»	ԺԳ.	Վրէժ	200
»	ԺԴ.	Դատաստան	221
»	ԺԵ.	Արտանուշի վանքը	243
»	ԺԶ.	Սրմանեակի բերդը	265
»	ԺԷ.	Քսան եօթ տարի	283
»	ԺԸ.	Վերջին տեսութիւն	300
»	ԺԹ.	Թորթում	312
»	Ի.	Երջանիկ մարդ	331
»	ԻԱ.	Երկու չիրիմք	348
»	ԻԲ.	«Ազատութիւն եղբարց գերելոց»	358
»	ԻԳ.	Վասպուրականի ժողովուրդը	385
»	ԻԴ.	Անզգամ կին	399
»	ԻԵ.	Ազնիւ կին	410

»	ԻԶ.	Տուրեւառ	419
»	ԻԷ.	Թափառական բարերար	435
»	ԻԸ.	Հին դաւաճան մը	444
»	ԻԹ.	Գեղեցիկ Օր	457
»	Լ.	Երկունք	466

Гос. Библиотека ... ССР им. А. Мясникяна

ՎՐԻՊԱԿՔ

Էջ	Տող	Վրիպակ	Ուղիղ
2	4	միմիեանց	միմեանց
2	7	կը համարուէր , 'ի շրջակայից՝	կը համարուէր 'ի շրջակայից՝
5	7	եղրարք	եղբարք
5	20	չ՛լինէր՝	չլինէր՝
6	4	կրթնի	կռթնի
8	1	մի սաստէր	մի սաստեր
10	7	չ՛է ճր	չէ՞ որ
10	17	դոնեն	դունէն
11	14	չ՛էր գիտէր	չէր գիտեր
12	7	որ ամեն մարդ	և ամեն մարդ
13	7	մաւանդ	մանաւանդ
14	10	որ ծիով	որ ծիոց
14	16	աքչերը	աչքերը
14	23	դէպ , արեւմտեան	դէպ արեւմտեան
16	1	օրուան	օրերուն
16	12	Եուսուֆի՝ արա-բացի	Եուսուֆի արաբա-ցի
18	1	դիսացնին	դիմացնին
18	6	չէր երեւէր	չէր երեւեր
19	20	յիմար նաէ	յիմար նա է
19	22	մարդ ես այլ	մարդ ես , այլ
21	19	ազատէր	ազատէի
22	21	միթէ՞ կատարէր է	միթէ կատարեր է
23	19	վասպուրական	Վասպուրական
23	24	բաքկէն	Բաքկէն

Էջ	Տող	Վրիպակ	Ուղիղ
25	23	իրաւամր	իրաւամբ
26	2	գրգռել ժողովուրդը	գրգռել ժողովուր-դը
26	4	և այսպիսի ժամա-նակ	և այսպիսի ժամա-նակ
26	10	չեն արգիլէր	չեն արգիլեր
27	18	վասպուրականի	Վասպուրականի
29	1	ունէնին	ունէին
29	26	յօգնութիւն	յոգնութիւն
30	2	թէ կ՚զգամ Քրիս-տուի	թէ կ՚զգամ Քրիս-տոսի
31	11	Գուրդէնի	Գուրգէնի
33	22	պափարներու	փապարներու
35	2	վահագնի	Վահագնի
36	17	նկարեն	նկարէն
37	1	փայրկենին երգերն	վայրկենին երբ երգերն
39	13	պանտխղութեան	պանդխտութեան
43	19	րթանաս	թանաս
46	17	յաջաղկոտ	յաչաղկոտ
46	25	քոռոտ	քոսոտ
47	14	խոխոնջներով	խոխոջներով
49	16	քերիս	քեռիս
50	13	վաքն	վանքն
50	23	վահրիճ	Վահրիճ
51	20	Արծրունի չեն	Արծրունի չէն
52	25	նորաչէն	Նորաշէն
52	26	միծութեամբ	մեծութեամբ
53	5	՚ի մեք ցաւ	՚ի մեծ ցաւ

Էջ	Տող	Վրիպակ	Ուղիղ
53	7	ամենուն	ամենքը
53	17	երր	երբ
53	18	մրրմռար	մրմռար
55	17	ձիաւորղով	ձիաւորելով
55	23	յուսահատցող	յուսահատող
57	17	գործերու	գործերու
58	8	հանձնուած	յանձնուած
60	6	սեւերեալ	սեւեռեալ
60	18	օնհնութեան	օրհնութեան
62	24	մխիթարմութիւն	մխիթարութիւն
63	19	ձաները	ձայները
64	11	մեջի	մէջի
65	17	դաւաճաներ	դաւաճանէր
65	18	կալուացիդ	կալուածքդ
72	2	ձին է ալ	ձին էլ
77	3	մարդ	մարդ
78	20	եռեսունը	երեսունը
83	7	գունտի	գունդի
86	26	ամինքն	ամենքն
88	18	Աոբերունի	Աոբերանի
88	18	քաղաղը	քաղաքը
88	19	ժամանակներս	ժամանակները
88	20	զօրաց	զօրաւոր
89	3	ինջ	ինչ
89	23	քոյր բագրատունի	քոյր էր Բագրա-տունի
90	6	վիճակը և	վիճակը իմանալու և
90	13	այս մարդիկ	այր մարդիկ

Էջ	Տող	Վրիպակ	Ուղիղ
90	13	շէկը	շեկը
94	19	մամնաւոր	մարմնաւոր
95	24	արիւծ	առիւծ
96	4	հնազանդուելու	հնազանդելու
96	14	վորջը	վերջը
97	13	մէկտեղ	մէջտեղ
99	14	անգամ	անզգամ
99	21	եղբորս	եղբօրս
101	24	Կոստանդնու Պօլիս	Կոստանդնուպօլիս
103	23	ժամանակից	ժամանակակից
103	24	մուցմը՝ Բագրա-տունի	մուցմը որ Բագ-րատունի
104	12	պատկարանք	պատկառանք
105	4	մօտ	մօր
105	14	Արաբաբացւոց	Արաբացւոց
105	16	խոյթի	Խոյթի
106	14	կը պագտուէր՝	կը պագտուէր :
113	9	դարձնողին	դարձողին
115	12	Թէ Աստուած	Թէ Աստուած
116	16	հետաքրքրութեան	հետաքրքրութիւն
119	8	սաուսուր	սարսուռ
120	25	դաւար	դաւառ
121	7	գրողը	գիրը
121	8	նմանացնել	նմանցնել
123	15	մօտս	մօրս
124	4	վիրալիր	վիրալից
124	10	աւազանն	աւազան
126	3	կանդուն	կանգուն
126	9	ձեռին	քեռին

Էջ	Տող	Վրիպակ	Ուղիղ
126	15	իր կը յիշեցնէր	իրեն կը յիշեցնէր
127	18	ո՛ր հաց	որ հաց
131	24	կորիճ	Կորիճ
148	22	Դունէն	Դուինէն
150	12	բագրանու	Բագարանու
151	10	և խանք	և իշխանք
152	3	բլուր	Բլուր
153	18	փոթոթեալ	փաթոթեալ
158	25	մեզի ցոյց	մեզի յոյս
159	14	քրթմնչիւն	քրթմնջիւն
168	24	սակաւապետութե-նէն	սակաւապիտութե-նէն
171	9	Թէ բոլոր Բագարատ	Թէ Բագարատ
203	3	Բլրոյ մը	բլրոյ մը
203	20	լայնաքլիճ	լայնալիճ
203	21	այնպիսի հարուած	այնպիսի նետի հարուած
214	16	ողբայ	ողբոյ
218	9	Մոծոփայ	Մեծոփայ
218	22	րարեկենդանի	բարեկենդանի
220	17	ձի էշ ունիմ	ձի էլ ունիմ
221	15	ձիուն	ձիւն
227	16	ապատակներուն	ապանդակնե-րուն
266	15	Կայնոյ	Կարնոյ
267	13	կ'իջնէին	կ'իջնեն
271	3	որ առած	որ սառած
273	1	իշխանիկ	Իշխանիկ
279	3	թոփինը	դոփինը

Ը

Էջ	Տող	Վրիպակ	Ուղիղ
286	10	յուշատել	յօշոտել
291	22	դալկացեր	թալկացեր
295	16	անտէրունջ	անտէրունչ
307	25	կը սառսրէր	կը սարսռէր
309	19	ձեռքէն	ճակտէն
309	23	կակղցուցին	կակղցնելով
310	1	հեղհեղը	հեղեղը
311	23	և իշխանուհւոյն եթէ	իշխանուհւոյն կողմանէ, և
320	11	սուրերը արձակ	սուրերու արձակ
339	13	Բագարանի	Դունայ
345	3	ղբիւրատեանն	ղԲիւրատեանն
351	21	Եւ	Ես
379	8	չի պաշտպանենք	չի պաշտպանեցինք
390	2	Շիրակաց	Շիրակայ
400	20	շիննալ	շեննալ
416	11	կումբէթի	Գումբէթի
422	12	յիսսուն	յիսուն
424	15	առջեւին	առջեւէն
425	18	խաւարտչին	խաւարչտին
436	20	հիւանդութեամբ	հեռաւորութեամբ
448	11	խոսրով	Խոսրով
461	12	Երագածի	Երագանի
461	20	խօստովանահայր	խոստովանահայր
463	4	չ'եմ փոխեր	չեն փոխեր
465	4	գետնաքարշ	գետնաքարշ
467	14	հարուածեալ թըշնամեաց	հարուածեալ 'ի թշնամեաց

Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР
им. А. Мясникяна

ՀՀ Ազգային գրադարան
NL0793674